Բանբեր Հայագիտության


ՀԱՍՏՂ 35 - 2000 - VOLUME 35

ایران نامه

Armenian Journal of Oriental Studies

Այս համարում

- *Iran & Caucasus, vol.-s III-IV: Բովանդակություն* 1
- *Նախիջեւան (Քաղաքագիտական վերլուծություն)* 2
- *Վահիաբականություն (Համառոտ ակնարկ)* 7
- *Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոն* 14
- *Հայաստանի զիւրնականները եւ սպասիկյան բռնաճնշումները* 17
- *Փաստաթղթեր բռնադատված Գրիգոր Չուբարյանի «Գործերից»* 24
- *Լուրեր Իրանագիտական Կովկասյան Կենտրոնից* 37
- *Սեմյոն Հախումյան - 70* 39
- *Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի նամակները Հայաստանի Հանրապետության կառավարությանը (1919 թվական)* 40
- *Խլաման եւ արդիականացումը (Թուրքիայի օրինակով)* 55
- *Բաքվի անկումը եւ հայերի գաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ)* 58
- *Վահագն Ղուկասյանի հիշատակին* 65
- *Հայ-օսականք* 66
- *Ուշագրավ վավերագիր* 67
- *Աշխարհագրական տեղեկությունները Բաֆֆու "Երկու ամիս Աղվանից եւ Սյունյաց աշխարհներում" ուղեգրության մեջ* 68
- *Մովսես Խորենացու "Պատմութիւն Հայոցը" արաբերեն* 70
- *Ղաջարներ* 72
- *Հայրապետ Մարգարյան - 50* 83
- *Սպեր գավառի բնակավայրերն ու ժողովրդագրությունը 16-րդ դարի Օսմանյան թահրիր-դաֆթարներում* 86
- *Անիի կաթողիկե եկեղեցու հիջրայի տարեթիվը* 101
- *Մուհամմադի գիշերային ճամփորդությունը* 104
- *Իրանահայերի մասնակցությունը օլիմպիական խաղերին* 108
- *Հայաստանի արվեստագետները 30-ական թվականների հետապնդումների զոհ* 110
- *Շահմատրի անվան, նրա ծագման ու պատմության հարցի շուրջ* 116
- *Տիգրանակերտի տեղադրության հարցի շուրջ* 118
- *Նահջ ուլ-բալաղա 165 գլուխ (Միրամարգի արարումը)* 123
- *Շան պաշտամունքը իրանական ժողովուրդների բաղման ծեսերում* 126
- *Ֆորուղ Ֆարրոխզադը՝ հայերեն* 131
- *Նոր գրքեր* 38, 54, 57, 63, 67, 69, 85, 100, 103, 117, 122, 128, 135



Ղաջարական շրջանի գեղանկար

Գիտական Հանդես

ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Իրան-Նամէ

Գլխ. խմբագիր
Գառնիկ Ասատրեան

Խմբագրի տեղակալ
Լաւրա Շէհոյեան

ԳԻՏԱ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Իրան
Մարի Այվազեան-Թերզեան
Աշա Պապեան
Վահէ Բոյեաջեան

Արտաքին Էջմիածին, Թուրքիա
Ալեքսանդր Խաչատրեան
Սամուէլ Կարապետեան
Յակոբ Չարխեան
Ալեքսանդր Սաֆարեան

Մշակոյթ եւ Կենսաբանական Գիտութիւններ, Կանադա
Հայրապետ Մարգարեան
Սարգիս Յարութիւնեան
Վարդան Ոսկանեան

Հին Արեւելք, Հայագիտութիւն, Մշակոյթ
Ռուբէն Անգալադեան
Մարկօ Գրեգորեան
Ջուպօ Թրախիա

ՉԵՒԱՒՈՐՈՒՄԸ՝
Եկատերինա Խաչատրեանի

Иран-Намэ
Армянский востоковедческий журнал

Гл. редактор
Гарник Асатрян
доктор филол. наук, проф.

Irān-Nāmeh
Armenian Journal of Oriental Studies

Editor
Garnik Asatrian
Prof. Dr. Sc.



Դաջարական շրջանի գեղանկար

© 1998, **IRAN-NAMEH**

IRAN & CAUCASUS, volume III-IV

Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies

Լույս տեսավ Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի միջազգային տարեգրքի հերթական միացյալ համարը՝ խմբագրությամբ պրոֆ. Գառնիկ Ասատրյանի. Ֆորմատ՝ U4, էջերի քանակը՝ 446. - անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ռուսերեն: Հրատարակիչ՝ BRILL, Leiden, Netherlands

Բովանդակություն՝

■**Firoze M. Kotwal**. (Bombay) *Select Ritual Aspects of the Gathas and their Continuity in Later Tradition.*

■**David L. Martin**. (Washington) *The Vision of Zoroaster: An Essay on the Mystical Origins of the "Good Vision".*

■**Jahanshah Derakhshani**. (Tehran) *Materialen und Industrien aus dem Iranischen Hochland in den nahoestlichen Maerkten des 4. bis 2. Jahrtausends v.Chr.*

■**Giusto Traina**. (Perugia) *Episodes de la rencontre avec Rome (IIe siécle av. J.-C. - IIIe siécle ap. J.-C.).*

■**Garnik Asatrian**. (Yerevan) *The Holy Brotherhood: The Yezidi Religious Institution of the "Brother" and the "Sister" of the "Next World".*

■**B.G. Aliev** (Makhachkala). *Theocracy in Dagestan.*

■**Sekandar Amanolahi**» (Shiraz) *The Gypsies of Iran: A Brief Introduction.*

■**Zoya Ramazanova** (Makhachkala). *Agricultural Customs and Rites among the Laks.*

■**Ruslan Seferbekov**. (Makhachkala) *Gods and Demons of the Dagestanian Peoples (A Tentative Typology and Classification).*

■**Victoria Arakelova.** (Yerevan) *Bayt'a Gilaviye - A Lament for a Noble Woman.*

■**Dan Shapira**. (Jerusalem) *Pahlavi References to Armenia.*

■**Elena Inozemtseva** (Makhachkla). *From the History of the Slave-Trade in Dagestan.*

■**Tork Dalalian**. (Yerevan) *The Earliest Attestation of the Toponym Afghanistan and the Legend of the Origin of the Afghans.*

■**Hayrapet Margarian.** (Yerevan) *Khoshak-khatun: An Armenian Princess in Iran.*

■**Vardan Voskanian.** (Yerevan) *Dewresh E'rd: The Yezidi Lord of The Earth.*

■**Tea Chkheidze** (Tbilisi). *A Note on Iranian-Georgian Relations.*

■**Garnik Asatrian, Tork Dalalian.** (Yerevan) *"The Mothers of Night": An Armenian - East Iranian Parallel.*

■**Virgil Strohmeyer**. (Yerevan) *The Vuandalic Alphabet According to Teseo Ambrogio.*

■**Virgil Strohmeyer**. (Yerevan) *Ambrogio Teseo's Intentions for the Learner: the Aesthetic and Epistomology Entailed in the Presentation of Multilingual Excercises.*

■**Dan Shapira.** (Jerusalem) *A Note on the Garni Inscription.*

■**Elena Molchanova** (Moscow). *Nominal Word-Formation in Yazdi and Kermani.*

■**Garnik Asatrian.** (Yerevan) *Iranian Miscellanea.*

■**Garnik Asatrian.** (Yerevan) *Kurdish Etymologies - I.*

■**Garnik Asatrian.** (Yerevan) *The Origin of the -ng Suffix in Kurmandji.*

■**Gourgen Melikian.** (Yerevan) *Lexical Gleanings from Machkalashen.*

■**Rachel Goldenweiser**. (Yerevan) *The Miniature Paintings of the Barzu-nama: An Illustrated Interpolation to a Qajar Shahnama from Matenadaran Collection.*

■**Raya Amirbekian**. (Yerevan). *Le Cycle illustratif d'un Manuscrit Afghan du XVIII siecle (Collection du Matenadaran).*

■**Garnik Asatrian, Victoria Arakelova**. (Yerevan) *A Manual of Iranian Folk Magic in the Archive of the Caucasian Centre for Iranian Studies in Yerevan.*

■**Ravshan Rahmonov** (Dushanbe). *Folklore and Traditional Culture in Narshahi's "History of Bukhara".*

■**Manfred Backhausen**. (Düsseldorf) *Nur Baba: Ein Bektaschitischer Tatsachenroman (Der Alevismus-Bektaschismus).*

■**Ekaterina Khachatrian** (Yerevan). *Miracles of the Saints in Islamic Tradition.*

■**Fereydun Vahman.** (Copenhagen) *Twelve Rubayis Ascribed to Baba Taher in the Bakhtiari Dialect From the Collection of D.L. Lorimer.*

■**Haik Avetisian.** (Yerevan) *Urartian Ceramics from the Ararat Valley as a Cultural Phenomenon (A Tentative Representation).*

■**Mariam Dandamaeva** (St. Petersburg). *The Ethnic Name Chaldaioi in Classic Sources.*

■**Burchard Brentjes.** (Berlin) *Hirsche und Andere Tiere in den Grabritualen der Armenischen Bronzezeit.*

■**Alla Ter-Sarkissiants** (Moscow). *The History of the Armenian Diaspora in Russia.*

■**Igor Mouradian** (Yerevan). *The Intelligence System of Turkey and Panturkic Organizations.*

■**Boris Belyakov.** (Moscow) *The Caucasus: Marginal Notes from a Diary.*

■**Bella Ovsepian** (Yerevan). *To the Formation of the Political Culture of India,*

■**Josephine Reardon** (Cleveland) *The Superiority of a Political Lottery in Third Millennium.*

■**Vahe Boyajian.** (Yerevan) *On Baluchi Separatism.*

■**Victoria Arakelova.** (Yerevan) *The Zaza People as a New Enthno-Political Factor in the Region.*

REPRINTED:

A. Mkrtchian. *The Delmiks. (English translation of the travel-notes of an Armenian intellectual, pubished in 1899, with intro-duction and comprehensive commentaries by G.A.).*

RESEARCH NOTE:

Maria Ayvazian-Terzian. (Tehran). *Persian Proper Names: Compiling a Persian Glossary for Practical Use (A Brief Report).*

BOOK REVIEWS & NOTES

Նախիջեւան

(Քաղաքագիտական վերլուծություն)

Լեւոն Ճիրիճյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

"Եւ եղավ անխուսափելին՝
Հայ քաղաքական խնդիրը հրապարակ դրվեց 1878-ին":
Մ. Վարանդյան

Թերեւս ճիշտ է Ռուբեն Տեր-Մինասյանի այն եզրահանգումը, որ Մերձավոր Արեւելքի, նաեւ Հայաստանի ճակատագիրը, ավելի շատ կախված է միջազգային ուժերի հակադրությունից ու համագրումից, քան որեւէ երկրի կամքից: Հայկական հարցի ողջ էվոլյուցիան տվյալ եզրահանգման արտացոլումն ու ապացույցն է: (Տե՛ս Ռուբէն. Շարուր Նախիջեւան եւ թուրք-թաթարական քաղաքականությունը.- "Դրօշակ", թիվ 3, 1925, էջ 72-77, նույնի՝ Նախկրայը եւ անոր նչանակութիւնը Հայաստանի համար. - "Դրօշակ", թիվ 4, 1925, էջ 111-115):

Ճիշտ է նաեւ այն պնդումը, որ Ռուսաստանն է վճռական դեր խաղացել հայ ժողովրդի նորագույն շրջանի ազգային ազատագրական պայքարի եւ պետականության ստեղծման գործում: Ընդ որում, նրա քաղաքականությունը Հայկական հարցում միանշանակ ու ուղղագիծ չի եղել: Ռուսաստանի համար Հայկական հարցը օժտված է եղել էնթակայության հատկանիշով: Այն գլխավորապես պայմանավորվել է՝ ա) Արեւմուտք-Ռուսաստան եւ՝ բ) Նեղուցներ (Թուրքիա)-Ռուսաստան երկընտրանքով:

Այսպիսով, Հայկական հարցը, դառնալով ավելի ընդգրկուն Արեւելյան հարցի մասը, ենթակայվել է հիշյալ երկու միտումներին՝ մեծապես տուժելով եւ անընդհատ փոխանցվելով մշուշոտ գալիքին: Այդ տեսանկյունից հատկանշական է Հեթհոկտեմբերյան (1917 թ.) Ռուսաստանի արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձը, երբ նա խորը ցնցումով հակադրվեց Արեւմուքին (Անտանտին) եւ կողմնորոշվեց դեպի իսլամական Արեւելք՝ այնտեղ որոնելով "համաշխարհային հեղափոխության" տարածման ու կայսրության վերածննդի հնարավորությունը:

Ռուսաստանի այդ շրջադարձը ոչ միայն աշխարհը բաժանեց հակադիր ու անհաշտ երկու ճամբարի, դանդաղեցրեց քաղաքակրթության առաջընթացն առհասարակ, այլեւ իր ողբերգական հետեւանքներով մեծապես ազդեց հայոց բովանդակ կյանքի վրա: Նրա իրական զոհը դարձան ցեղասպանության ծանր հետեւանքները վերապրող հայ ժողովուրդն ու Հայաստանի նորանկախ հանրապետությունը: "Ռուսական հեղափոխությունը փոխեց Հայկական հարցի ողջ տեսանկյունը" (Հարոլդ Նիկոլսոն): Ակնթարթորեն ի չիք դարձան ժամանակավոր կառավարության հայանպաստ ու արդարացի որոշումները:

Դեպի մահմեդական Արեւելք Ռուսաստանի ռազմավարական կողմնորոշումը առաջին անգամ ձեւակերպվեց խորհրդային երկրառազմավարական (գեոստրատեգիական) հիմնարար փաստաթղթերից մեկում Լենինի ու Ստալինի ստորագրած "Ռուսաստանի եւ Արեւելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին" (20.11-3.12.1917 թ.) դիմումում: Այնտեղ ուղղակի ասված էր. "Մենք հայտարարում ենք, որ Թուրքիայի բաժանման ու նրանից Հայաստանի խլման պայմանագիրը պատառոտված է ու ոչնչացված: Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, կապահովվի հայերի՝ իրենց քաղաքական ճակատագիրը ազատորեն տնօրինելու իրավունքը" (ԽՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերը, Մ., 1957, հ. 1, էջ 35, ռուս.): Տրամաբանության առումով ներքին հակասականությամբ կառուցված փաստաթղթում առաջին նախադասությունը այլ բան չէր նշանակում, քան Թուրքիայի տարածքային ամբողջականության երաշխավորություն (Հայաստանի հետ բաղդատմամբ), իսկ հայերին վերապահվող մշուշոտ խոստումը Թուրքիային Ռուսաստանի գիրկը մղող հզոր խթան էր: Այն նաեւ խորհրդահայ պատմագրությանը նեռված տասնամյակների անպտուղ քննարկումների "ատաղձ" էր Հայաստանի հանդեպ Ռուսաստանի "բարի", սակայն չիրականացված, մտացածին մտադրությունների շուրջ: Խորհրդահայ պատմագրությունն (առանց բացառության) եւ նրան համակիր շրջանակները Սփյուռքում՝ Գ. Ահարոնյան, Զ. Մսրլյան, ցարդ անտեսել են այս վավերագիրը եւ նույնիսկ այնպիսի արժեքավոր ժողովածուում, ինչպիսին է "Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում՝ 1828-1923 թթ., եր. 1972", տեղ չի գտնվել նրա համար: Պատահական վրիպո՞ւմ է: Կարծում ենք՝ ոչ: Քանզի նրա առկայությամբ բոլշեւիկյան կեղծգիտական հայեցակարգն առհասարակ իմաստազրկվում էր:

Անկասկած է, որ բոլշեւիզմի արտաքին քաղաքական վարդապետության երկրառազմավարական հիշյալ

հիմնադրույթի կողքին ժողկոմխորհի "Թուրքահայաստանի մասին" դեկրետը (29.12.1917 թ./ 11.1. 1918 թ.), որը համաձայնեցված էր Գերմանիայի հետ, "հայասերը" չիչերինների ու կիրովների սրտահույզ հեռագրերը դիվանագիտական ծխածածկույթից ավելին չէին, երբ, մասնավորապես Թուրքահայաստանի "ապահովությունն ու ինքնորոշումը՝ ընդհուպ լիակատար անկախություն" երաշխավորվում էր... միայն "ռուսական զորքերի հեռացումից հետո": Ուշագրավ է տվյալ դեկրետին Կ. Սասունու տված գնահատականը. "Այդ օրերուն, այդ պայմաններու մեջ, եւ ռուսական զորքի փախուստով, պարզապես մեֆիստոֆելյան ծաղրանք մըն էր, ավելին կեղծիքի մըն էր" (Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա. աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Բեյրութ, 1966, էջ 170): Եվ Հայաստանի Հանրապետության գոյության երկու եւ կես տարիների ընթացքում Խորհրդային Ռուսաստանը նման "հայանպաստ" ակտերից եւ նրա թիկունքում ու նրա հաշվին Թուրքիայի հետ մերձեցման մուրճ խաղերից առաջ չգնաց: Հայկական հարցի հմուտ գիտակ՝ Բագրատ Բորյանը, գնահատելով "Թուրքահայաստանի մասին" դեկրետի քաղաքական ու միջազգային-իրավական արժեքը Հայության համար, նկատում է. 1915-ից հետո "հայերի ինքնորոշումը" Արեւմտյան Հայաստանում "ձեւական բնույթի միջազգային ակտ էր" եւ ըստ էության իրական եւ իրավական արժեքներից զուրկ, մինչդեռ "թուրքերի համար ուներ իրական նշանակություն", քանզի նվաճված երկիրը՝ Թուրքահայաստանը, տրվում էր Թուրքիային: Այստեղ ազգերի ինքնորոշման իրավունքը պահպանված էր, սակայն միայն այդքանը: "Հայերի համար ձեւական իրավունքը հռչակագրի ոգով իրականացված էր": (Բորյան Բ., Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը եւ ԽՍՀՄ-ը, Մ., 1929, մաս 2, էջ 257, ռուս.): Բոլշեւիզմը, նույնիսկ Ռուսաստանի ազգային շահերին դավաճանելու գնով, կնքեց Բրեստ-Լիտովսկի (1918 թ., 3 մարտ) սեպարատ հաշտության դաշնագիրը, իսկ ապա դավեց ու գործեց Գերմանիայի հետ ընդդեմ Անտանտի, Թուրքիայի հետ ընդդեմ Հայաստանի եռպատեբազյան միջազգային համաձայնագրերի՝ Վերսալյան (1919 թ., 28 հունիս) գործընթացի ու Սեւրի (1920 թ. 10 օգոստոս) դաշնագրերի վիժեցման ուղղությամբ:

Տխրահռչակ Կարլ Ռադեկը գրում էր. "Եվրոպայի արեւելքում ու Հարավ-արեւելքում եւ Առաջավոր Ասիայում Վերսալյան խաղաղությունը ոչնչացվում է Կարմիր բանակի ու թուրքական ազգային բանակի զենքով" (Ռադեկ Կ., Վերսալյան խաղաղության ոչնչացումը: Զեկույց Կոմինտերնի IV կոնգրեսին, Պետրոգրադ, 1922, էջ 3, ռուս.): Սեւրի դաշնագիրը, ըստ Ռադեկի, կոչված էր իրականություն դարձնելու անգլիական լիբերալիզմի (Գլադստոնի) հին ծրագիրը՝ Թուրքիայի արտաքսումը Եվրոպայից ու որպես խոշոր տերության, նրա ոչնչացման ծրագիր, որի չրջանակներում էլ "ստեղծվում էր անկախ Հայաստանը..." (նույն տեղում, էջ 31):


Մինչդեռ բոլշեւիկյան Ռուսաստանը մի հոգս ուներ՝ անշրջելիորեն իրեն կապել Թուրքիան, իսկ նրա գլխավորությամբ մահմեդական Արեւելքն՝ ընդդեմ Արեւմուտքի: Այս առնչությամբ առավել պարզորոշ է արտահայտվել Ստալինը. "Թուրքիան մահմեդական ժողովուրդների մեջ պետական տեսակետից առավել զարգացած երկիրը է, որը պայքարի դրոշը պարզեց եւ իր շուրջ համախմբեց Արեւելքի ժողովուրդներին՝ ընդդեմ իմպերիալիզմի" (Ստալին Ի., Երկեր, Եր., 1948, հ. 5, էջ 41): Խանգարում էր Հայաստանը: Ուստիեւ ռուս-թուրքական նախաձեռնությամբ, որի ուղղությամբ առաջին քայլերը կատարված էին դեռեւս 1919 թ. սեպտեմբերին Բեռլինում, Հայաստանը պետք է չեզոքանար, դառնար "խորհրդային": Դա Ռուսաստանին թույլ կտար Հայաստանի մարմնի վրայով (Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւան) ուղղակի կապվել Թուրքիայի հետ՝ վերջինիս "ամբողջական օգնություն ցույց տալու համար" (Ռադեկ): Եվ Հայաստանը հարկադրված էր զիջումներ անել, գրում է ոչ անհայտ Պ. Միլյուկովը, - "Թուրքիայի եւ բոլշեւիկների միջեւ ուղղակի հաղորդակցության ուղիղ միջանցք բացելու համար" (տե՛ս Միլյուկով Պ., Ռուսաստանը չրջադարձի վրա, Փարիզ, 1927, հ. 1, էջ 227, ռուս.):

Վարշավայի պատերի տակ Կարմիր բանակի աղետալի պարտությունից հետո (1920 թ. օգոստոս) ռուս-թուրքական մերձեցումը նոր փուլ թեւակոխեց: Հայաստանի Հանրապետության ճակատագիրը կանխորոշված էր վերջնականորեն, բոլշեւիզմը հարկադրված էր հրաժարվել Եվրոպա (Գերմանիա) հեղափոխության արտահանման ծրագրից, որից հետո սոցիալիստական հեղափոխության հիմնական հոգեպահուստը դիտվեց Արեւելքի ժողովուրդների, այսպես կոչված, հակագաղութատիրական, ազգային-ազատագրական պայքարը: Կոմինտերնի չրջանակներում սեպտեմբերի 1-7-ը Բաքվում հրավիրված Արեւելքի ժողովուրդների առաջին համագումարում, որին մասնակցում էին նաեւ ազգությամբ հայ 160 բոլշեւիկներ, ժամանակաշրջանի առաջավոր պետությունների բոլոր չափանիշներին համապատասխանող Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց իմպերիալիստական, Անտանտի "Սպիտակ շուն", իսկ սեպտեմբերի 23-ին սկսվեց հայ-թուրքական պատերազմը: Երկրաքաղաքական անելանելի կացության մեջ հայտնված Հայաստանը, որի ներքին կյանքը խաթարվել էր մայիսին Սարիղամիշ-Կարս-Ալեքսանդրապոլ (թուրքական հնարավոր հարձակման գլխա-

վոր ուղղությունը) ռազմավարական հատվածում հայ բոլշևիկների կազմակերպած դավաճանական խժդժությյան (անշուշտ, Մոսկվա-Անկարա հրահանգով) հետեւանքով, ի վերջո ստիպված էր կնքել Ալեքսանդրապոլի պայմանագիրը (դեկտեմբերի լույս 3-ի գիշերը, ժամը 2-ին) եւ միաժամանակ խորհրդայնանալ (դեկտեմբերի 2-ին)՝ կորցնելով իր տարածքների, Բ. Բորյանի վկայությամբ, երեք քառորդը:

Արեւմտյան խոշոր տերությունները, որոնք Սեւրի դաշնագրով փորձում էին Մերձավոր Արեւելքում նոր եւ արդարացի աշխարհակարգ սահմանել, հաստատելով նաեւ հայ ժողովրդի պատմական իրավունքները, նահանջեցին ռուս-թուրքական զինակցության առջեւ եւ, փորձելով Թուրքիային կտրել Ռուսաստանից, իրենց հերթին (առաջինը Ֆրանսիան) սկսեցին գաղտնի գործարքների մեջ մտնել վերջինիս հետ: Այսպիսով, Բրեստ-Լիտովսկից սկսած՝ Հայաստանն աստիճանաբար եւ տեւականորեն խճճվեց միջազգային դավադրությունների սարդոստայնում, որից դուրս գալը հայ ժողովրդի ուժերից վեր էր: Ըստ էության, 1920 թ. վերջերին Անդրկովկասում Ռուսաստանի եւ Թուրքիայի դավադիր ու փոխզիջողական համաձայնությամբ, որոշ "ճշգրտումներով", վերահաստատվեց մինչեւ 1878 թ. գոյություն ունեցող երկրաքաղաքական իրադրությունը, որն էլ վերջնականորեն ամրագրվեց Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով:

Խորհրդահայ պատմաբան-միջազգայնագետ Բ. Բորյանն արձանագրում է. "Ռուսաստանի արեւելյան քաղաքականությունը պահանջում է իր ամրողջության մեջ բավարարել թուրքական "երիտասարդ" կապիտալիզմի աշխարհակալական-զավթողական բնազդները ի հաշիվ հայ ազգի, հանուն Արեւելքի մեջ գաղութային պետությունների աշխարհակալության կործանման, եւ հետեւաբար, հանուն Արեւմուտքում բանվոր դասակարգի ազատագրության" (Բորյան Բ., նշված աշխ., էջ 299): Ավ. Ահարոնյանը, կարծես հաստատելով Բորյանի կարծիքը, գրում է. "Չենովայում (15. V. 1922) ՀՀ պատվիրակության (Ավ. Ահարոնյան, Մ. Վարանդյան, Ա. Գյուլխանդանյան) հետ հանդիպման ժամանակ Գ. Չիչերինն ընդգծեց. "Մենք չենք կարող



մեր արեւելյան քաղաքականությունը ենթարկել փորձության, որը հիմնված է Թուրքիայի հետ բարեկամության վրա" (Ահարոնյան Ավ., Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լօզան. Քաղաքական օրագիր, Պոսթըն, 1943, էջ 212): Ուստիեւ երկրաքաղաքական իրադրության գնահատման տեսանկյունից Վ. Նավասարյանն ուներ բոլոր հիմքերը պնդելու, որ "մեր Հայրենիքը Ռուսիո կողմե վաճառված էր... Հոկտեմբերյան հեղաշրջումեն անմիջապես հետո, երբ թուրք եւ ռուս սիրաբանության մեղրալուսինը սկսավ..." (Նավասարյան, Վ. Բոլշեւիզմը Նախիջեւանի հարցին մեջ. - "Հայրենիք", 1949 թ., սեպտեմբեր, էջ 21-22):

Տվյալ դաշնագիրն արտառոց էր ե՛ւ իր տեսակի մեջ (այն, փաստորեն, Ռիբենտրոպ-Մոլոտով գաղտնի պայմանագրի նախատիպն է՝ աշխարհի բաժանման առումով), ե՛ւ ըստ էության: Կնքված լինելով Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ որպես "ազգերի եղբայրության ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքից" բխած պայմանագիր, այն ոտնահարել է առաջին հերթին հենց ազգերի ինքնորոշման իրավունքը. ստորագրության պահին Հայաստանն անկախ պետություն էր եւ իր ստորագրությունը չի դրել դաշնագրի տակ: Հայ պատվիրակությունը, ինչպես Բեռլինի կոնգրեսում 1878 թ., չի մասնակցել բանակցություններին: Բնականաբար, այդ դաշնագրով հայկական կողմի վրա որեւէ պարտավորություն չի կարող դրվել: Նշանակում է, ինչպես նկատում է Շ. Թորիկյանը, "Հայաստանի հողամասերին վերաբերող դաշնագրային տրամադրությունները չեն կարող իրավական պարտավորություններ դառնալ Հայաստանի համար: Եվ սա՝ անկախ այն իրողությունից, որ դաշնագիրը բախվում է ազգերի ինքնորոշման սկզբունքին" (Toriquian Shavarsh. The Armenian Question and International Law. Second Edition, Beirut, 1988, p. 59): Դասական իմաստով այդ պայմանագիրը նույնիսկ միջազգային իրավունքի փաստաթուղթ չէ: Քանզի աշխարհում ոչ մեկի կողմից չճանաչված երկու պետություններ՝ Խորհրդային Ռուսաստանն ու Քեմալական Թուրքիան, պայմանագիր կնքեցին, որով որոշեցին երրորդ պետության՝ Հայաստանի սահմանները (տե՛ս Բարսեղով Յու., Հայ-թուրքական սահմանի հարցով ԱՄՆ նախագահի իրավանարական որոշումը. քաղաքական եւ միջազգային-իրավաբանական մեկնաբանություններ. - "Տեսակետ"(ռուս.), 1995, թիվ 31, էջ 12):

Նույնը վերաբերում է Կարսի (1921 թ. հոկտեմբերի 13) դաշնագրին, որն ուղղակիորեն բխում է Մոսկվայի դաշնագրի հարկադրանքից եւ գրեթե ամբողջապես կրկնում իր նախորդին: Այն ինքնուրույնության հատկությամբ չի օժտված: Կարսի դաշնագիրը, ընդգծում է Բ. Բոբյանը, "թե՛ ըստ էության, եւ թե՛ ձեւականորեն՝ քաղաքական տեսակետից, միջազգային իրավական ըմբռնումի ինքնուրույն ակտ չէ, այլ կրկնում եւ հաստատում է Մոսկվայում 1921 թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ եւ Թուրքիայի միջեւ կնքված պայմանագիրը" (Բոբյան Բ., նույն տեղում):

Սակայն, այդուհանդերձ, Կարսի դաշնագրում առկա է որոշակի "անհետեւողականություն": Խոսքը վերաբերում է Լեգրան-Դրո համաձայնությամբ (1920 թ., դեկտեմբերի 2) Հայաստանի անկապտելի մասը դիտված Նախիջեւանին (3-րդ հոդված): "Նախիջեւանի մարզը" Մոսկվայի դաշնագրով որպես "ինքնավար տարածք" դրվում է Ադրբեջանի խնամակալության տակ (под протекторатом Азербайджана)՝ պայմանով, որ նա իր խնամակալությունը չի պիջի "երրորդ պետության" (ԽՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերը, Մ., 1959, հ. 3, էջ 723, ռուս.): Այդ մասին է վկայում Նախիջեւանի հարցով Մոսկվայի 1921 թ. կոնֆերանսի արձանագրությունը, ինչպես նաեւ Մոսկվայի 1921 թ. մարտի 21-ի խորհրդա-թուրքական քաղաքական հանձնաժողովի նիստի արձանագրությունը (տե՛ս «Նախիջեւանի երկրամասի հայաթափման պատմությունից՝ 1920-1921 թթ.», "Լրաբեր հասարակական գիտությունների", 1990, թ. 9, էջ 88, 90): Սակայն Կարսի դաշնագրում այս պայմանը, "չքացել է". հավանաբար, Մոսկվայի ջանքերով եւ Թուրքիայի հարկադիր համաձայնությամբ: Քանզի նման "աննշան" ճշգրտումը, որը ռազմավարական նշանակություն ուներ (եւ ունի), թույլ տվեց Նախիջեւանի խնդիրը վերածել Ռուսաստանի երկրաքաղաքական ազդեցության, ըստ էության՝ Կրեմլի ներքին հարցի՝ ղրանով իսկ գալիքում բացառելով Թուրքիայի հնարավոր միջամտությունը Անդրկովկասի ներքին գործերին: Այն, որ Խորհրդային Ռուսաստանին էր վերապահված անդրկովկասյան երեք հանրապետությունների եւ Թուրքիայի միջեւ գոյություն ունեցող վիճելի հարցերի կարգավորումը, - գրում է ամերիկյան պատմաբան Թ.Է. Օ'Քոնորը, - նշանակում էր, որ Թուրքիան ընդունում է Անդրկովկասի նկատմամբ խորհրդային վերահսկողությունը" (Օ'Քոնոր Թ.Է., Գեորգի Չիչերինը եւ խորհրդային արտաքին քաղաքականությունը՝ 1918-1930, Մ., 1991, էջ 200, ռուս.):

Այո՛, Օ'Քոնորը ճիշտ է: Մոսկվան երկար ու համառ պայքարի չնորհիվ, նորից հայ ժողովրդի թիկունքում, մինչեւ 1921 թ. մարտը լուծեց Անդրկովկասն ազդեցության իր ոլորտն ընդգրկելու խնդիրը: Դիմենք վավերագրերին: Նախիջեւանի խնդրին նվիրված՝ Մոսկվայի կոնֆերանսում (12 մարտ, 1921 թ.) թուրքական պատվիրակությունը առաջարկում էր Նախիջեւանի «իր խնամակալությունը» (կարդա՝ իր օկուպացրած Հայաստանի տարածքի մի մասը) փոխանցել Ադրբեջանին՝ պայմանով, որ վերջինս

չի զիջի այդ խնամակալությունը «երրորդ երկրի»: Ռուսաստանն, իր հերթին, իբրեւ պատրվակ օգտագործելով Կարսում «ոչ մահմեդական ժողովուրդների ջարդի» թուրքական օրինակը, առաջարկում էր «Նախիջեւանի ինքնավարությունը պարզապես դնել Ադրբեջանի խնամակալության տակ» (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, թ. 9, էջ 88): Այսպիսով, եթե Մոսկվայի դաշնագրով հաղթել էր թուրք-ադրբեջանական տեսակետը, ապա Կարսի դաշնագրում Մոսկվան «սրբագրեց» թույլ տրված սխալը: Դրանով իսկ սահմանափակվեց Կարսի դաշնագրով Նախիջեւանի ճակատագիրն ինքնուրույնաբար տնօրինելու՝ թուրք-ադրբեջանական կողմի բաղձալի հնարավորությունը: Չէ՞ որ Նախիջեւանի «ինքնավար մարզը» Ադրբեջանի սոսկ պրոտեկտորատն է (խնամակալությունը), այսինքն՝ գաղութային կախվածության այն ձեւը, երբ որեւէ երկիր «վերահսկվում է եւ հովանավորվում մեկ ուրիշ՝ ավելի զորեղ պետության կողմից» (տե՛ս «Webster's Dictionary», հոդված՝ «Protectorate»): Նախիջեւանը Ադրբեջանի մասը չէ, այլ նրա այնպիսի «խնամակալությունը», ինչպիսին էր, օրինակ, Պաղեստինը՝ Անգլիայի համար, Չեխիան եւ Մորավիան 1939-1945 թթ.՝ ֆաշիստական Գերմանիայի համար (որպես ֆաշիստական բռնազավթման օրինակներ): Պարզ է, որ երրորդ հազարամյակ թեւակոխող քաղաքակրթության տեսանկյունից խնամակալությունը պատմական անախրոնիզմ է: Ավելին, այն ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված միջազգային հանրաճանաչ սկզբունքների եւ նորմերի, առաջին հերթին՝ ինքնորոշման իրավունքի խախտում է: Խնամակալությունը պահպանելով «ինքնուրույնության պատրանք», հակասում է 1960 թ. ընդունված ՄԱԿ-ի՝ գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու հռչակագրի, ինչպես նաեւ մի շարք միջազգային այլ փաստաթղթերի դրույթներին (տե՛ս The International Law Dictionary by Robert L. Bledsoe and Boleslaw A. Boczek, California-England, 1987, էջ 43-44. տե՛ս նաեւ Հայդ Ջ., Միջազգային իրավունք, Մ., 1950, հ. 1, էջ 125-126, ռուս.):

Հասկանալի է, որ Պաղեստինը երբեք Անգլիայի մասը չի եղել, ինչպես Չեխիան ու Մորավիան՝ ֆաշիստական Գերմանիայինը: Նույնպես եւ Նախիջեւանը Ադրբեջանի մասը երբեք չի՛եղել եւ չէ: Ավելին, Նախիջեւանը Նիկոլայ Ա կայսեր Հրամանով ստեղծված (21 մարտ, 1828 թ.) «Հայկական մարզի» մի մասն է, Հայաստանի Առաջին Հանրապետության անբաժանելի ճանաչված տարածքը, որը սակայն՝ ա) այսօր նրանից բռնազավթված է (անեքսիայի ենթարկված), ընդ որում խնամակալության բռնազավթումը միջազգային իրավունքով անթույլատրելի է (տե՛ս Jack C. Plano, Roy Olton, The International Relations Dictionary. Fourth Edition, 1988, հոդված Protectorate), իսկ բնիկ ժողովուրդը՝ հայությունը, բ) արտաքսված է (դեպորտացիայի ենթարկված) իր հայրենիքից: Բայց, ինչպես չեշտում էր Քր. Միքայելյանը, միեւնույն հայրենիքի տարբեր մասերն իրարից բաժանող «աշխարհագրական ներկերը մշտական չեն»:

Թերեւս միջազգային իրավունքի շրջանակներում չատ անհարմարություններ «տեսնող» Ադրբեջանն ավելի է խրվում նույն իրավունքից բխող հակասությունների մեջ: Սահմանադրորեն իրեն հռչակելով ունիտար պետություն, նա «ստիպված» պահպանում է Նախիջեւանի «ինքնավար» հանրապետության կարգավիճակը: Մի կողմից՝ հենվելով Մոսկվայի եւ Կարսի ոչ համարժեք դաշնագրերի հոդվածների վրա, մյուս կողմից՝ նավթի եւ նրա փոխադրման ուղիների (Բաքու-Ջեյհան) խնդրի քաղաքական շահարկումներով նա փորձում է դուրս գալ Ռուսաստանի երկրաքաղաքական ազդեցության ոլորտից: Հավատարիմ պանթուրքիզմի իր իդեալին՝ Միլլի Մեջլիսի նիստում (9 փետրվարի, 1999 թ.) ընդունված հայտարարությամբ նա հռչակում է գործողությունների իր ծրագիրը՝ էլ ավելի սրելով պայթյունավտանգ իրավիճակը տարածաշրջանում:

Սակայն, առկա «նյութական իրագրության» (Ն. Ադոնց) պայմանները թույլ են տալիս առաջ գնալ Հայկական հարցի լուծման ճանապարհով, նրա շրջանակներում՝ Նախիջեւանի հայության հայրենի բնօրրան վերադարձի կազմակերպման ուղիով (մարդու անօտարելի իրավունքների շրջանակներում), իսկ որպես իրավա-քաղաքական խնդիր՝ Կարսի դաշնագրով Նախիջեւանին վերաբերող 5-րդ հոդվածի ու Նախիջեւանի կարգավիճակի արծարծումով, թեկուզեւ ՀՀ կազմում «ինքնավար մարզի» նախատեսումով: Ժամանակն է, որ հայ պատմաբաններն ու միջազգայնագետները նախապատրաստեն Նախիջեւանի համապարփակ թղթածրարը: Գիտակցել է պետք. ռազմավարական երկրաքաղաքական այն տարածքը (Ղարաբաղ-Զանգեզուր-Նախիջեւան), որը Հայաստանի հոշոտված մարմնի վրայով, լենինյան Ռուսաստանը կապեց քեմալական Թուրքիային, այսօր վերածվում է «մահմեդական անձեւ անկայունության աղեղը» (Զբ. Բզեժինսկի) տարանջատող «սանիտարական միջանցքի»: Դրանով իսկ ստեղծվում են չահագրգիռ տերությունների ու ժողովուրդների մեծ մասին չահավետ տարածաշրջանային կայունության ամուր հիմքեր: Առկա են առաջ նայելու ու նրբորեն գործելու նախադրյալները, առաջին հերթին՝ միջազգային-իրավական, երկրաքաղաքական: Ժամանակաշրջանն օժտված է Անդրկովկասում եւ Մերձավոր Արեւելքում տեւական հավասարակշռության ստեղծման մեծ լիցքով: ■

Վահհաբականություն

(Համառոտ ակնարկ)

Վիկտորյա Առաքելովա

Վերջին տարիների իրադարձությունների բերումով "վահհաբականություն" եզրույթը կայունապես մուտք է գործել քաղաքական բառապաշար՝ հասարակայնության ընկալումներում սերտորեն զուգորդվելով ահաբեկչության եւ տարածաշրջանային բազմաթիվ հակամարտությունների հետ:

Ո՞րն է Սաուդյան Արաբիայում ծնունդ առած այս հոսանքի էությունը, ինչպիսի՞ն է հետխորհրդային տարածքում իսլամի հետ նրա կապը, ի՞նչ է թաքնված նրա ետեւում, կրոնականից բացի ի՞նչ նպատակների են հետամուտ այն տարածողները: Վահհաբականությանն առնչվող այս եւ մի քանի այլ հարցերի է անդրադառնում ստորեւ տպագրվող Իրանագիտական Կովկասյան Կենտրոնի աշխատակցի հոդվածը:

Խմբ.

Սաուդյան Արաբիան մի չարք առումներով բացառիկ պետություն է: Այս երկրի վրա հեղված հսկայական նավթային կապիտալն անհնար է "յուրացնել" երկրի ներսում. սաուդյան թագավորական տոհմատունն իր հարստությամբ վաղուց գերազանցում է երկրագնդի ֆինանսական ամենաազդեցիկ մագնատներին (մանրամասն տե՛ս՝ А. Васильев. История Саудовской Аравии: 1745-конец 20 в. М., 1999): Ընդամին, պետք էր նկատի ունենալ, որ սաուդական հասարակության մեջ տոհմա-ցեղային հարաբերությունների քայքայումն սկսվել է ընդամենը մեր դարի 60-70-ական թվականներին: Հանկարծահաս հարստության պայմաններում տեղի էր ունենում բարոյա-էթիկական կողմնորոշիչների կտրուկ շրջադարձ դեպի բացահայտ օգտապաշտություն եւ սպառողական արժեքներ: Այդպիսի մի հասարակության մեջ, ուր յուրաքանչյուր ոք մեծ հնարավորություններ ուներ, այս շրջադարձը խոշոր խզվածքներ առաջացրեց մարդկային հոգեբանության մեջ: Ջնայած ՍԱ-ի թագավոր Ֆահդի ջանքերին՝ սոցիալական արդիականացում իրագործելիս նկատի առնել երկրի կրոնական յուրահատկությունը, բայց, ժամանակակից քաղաքակրթության բոլոր նվաճումներից այսօր գործնականում օգտվող սաուդացուն, այնուամենայնիվ, դեռեւս դժվար է փոխակերպել ավանդապաշտ արաբի իր նահապետական մենտալիտետը՝ դրսեկ նորամուծությունների նկատմամբ թերահավատությունը, առ կրոնական իր գաղափարների գերակայությունն ունեցած հավատը, ոչ ադեկվատ ինքնագնահատանքը:

Ժամանակակից աշխարհի վրա Արաբիայի մեծ ազդեցությունը չի սահմանափակվում սոսկ նրա ունեցած նավթային հարուստ պաշարների ընձեռած հնարավորություններով եւ հավակնություններով:

Երկրագնդի հսկայական մի տարածքի բնակչության համար Սաուդյան Արաբիան ամենից առաջ իսլամի հայրենիքն է. այստեղ են մուսուլմանական գլխավոր սրբավայրերը՝ Մեքքան, իսլամական ամբողջ աշխարհի հիմնական ուխտատեղին, Մեդինան՝ Մուհամմադ մարգարեի աճյունադամբանը: Սաուդյան Արաբիան նաեւ իսլամական ամենաարմատական հոսանքներից մեկի՝ վահհաբականության բնօրրանն է, հոսանք, որի անվամբ մերօրյա զանգվածային լրատվության միջոցները հաճախ ոչ ճիշտ պիտակավորում են արմատականության գաղափարակիր, "քաղաքականացած" դրեթե բոլոր իսլամականներին: Սաուդյան Արաբիայում, որտեղ այն դրված է պետական գաղափարախոսության հիմքում, վահհաբականությունը երկու ճյուղավորում ունի: Մեկը, որը դավանվում է Սաուդյան թագավորական տան կողմից, մյուսը՝ բնույթով ավելի արմատական բնույթ ունի եւ առնչակից է բացահայտ ահաբեկչությանը (մասնավորապես, վերջինիս հետ է կապվում 1979 թ. Մեքքայի ուխտավորների հանդեպ գործադրված ջարդը): Այս ճյուղը պայմանականորեն կարելի է "Հակա-Սաուդի վահհաբականություն" կոչել, քանի որ նրա առաջնորդների թվում կային դեռեւս 20-ական թվականների վերջերին հանդես եկած առաջին հակա-Սաուդի վահհաբականներից սերված անձինք (մանրամասն տե՛ս Mehdi Mozaffari, Autority in Islam, Armonk, N7, M.E. Sharpe, 1998, pp. 96-97):

Կրոնական յուրաքանչյուր համակարգում վաղ թե ուշ ծնվում են հետագա աղավաղումներից մաքրվելու, նրա նախաստեղծ ձեւին վերադառնալու կոչող հոսանքներ: Սակայն դրանցից քչերին է հաջողվել պատմության ընթացքի վրա այնպիսի ազդեցություն ունենալ, ինչպես՝ վահհաբականությանը:

Պատմական ակնարկ

Իսլամի գոյության առաջին դարերը (7-12) աշխարհին բերեցին քաղաքակրթական իսկական մի հորձանք, որի համապատկերի վրա էլ ավելի դրամատիկորեն է ընկալվում հաջորդ վեց դարերում՝ ընդհուպ մինչեւ 18 դ. իսլամական աշխարհը պարուրած "ներքը": Տասնութերորդ դարը իսկապես բեկումնային եղավ արաբների, ավելի լայն առումով՝ իսլամի, եւ, ինչպես ապագայում բազմիցս հավաստեց պատմությունը, ամբողջ մարդկության համար:

Օսմանյան Կայսրությունը, որն իրապես իր ձեռքում էր պահում իսլամական աշխարհի իշխանությունը, այդ ժամանակներում ինքն էլ այնպիսի անկման էր հասել, որ դադարել էր "գործուն" անհանգստություն պատճառել արաբներին. արաբա-թուրքական դիմակայությունը գրեթե սովորական էր դարձել, իսկ արաբների հեղինակությանը հասցված վնասները՝ նվազ ցա-

վոտ: Այդուամենայնիվ, հենց այդ "վաղեմիացած" դիմակայության ընդերքում էլ ծիլ տվեց այն նոր վարդապետությունը, որն ի զորու էր լինելու արաբներին դեմքով դեպի իրականությունը շրջել: Իրական հեռանկարը եվրոպական զաղութացումն էր, իրողությունը՝ սեփական ազգի դարավոր օսմանյան բռնատիրությունն ու բթախեղումը: Ընդ որում, վերջին, թող որ վերացական թվացող, այս իսկ գործոն-սպառնալիքին դիմագրավելը պետք է ընկալվեր որպես գերխնդիր, որի լուծումն արաբներին հնարավորություն կտար իսլամական աշխարհում պաշտպանել սեփական արժանապատվությունը եւ դիմակայել արեւմտյան ներթափանցմանը:

Նոր վարդապետությունը ինքնածանուցվում էր որպես "լավ մոռացված հին" ուսմունք (հիմքում՝ առանց որեւէ նորամուծության, վերադարձ "ճշմարիտ" իսլամին դրույթն էր ընկած), որի դաղափարները արաբական հասարակության էզոտերիկ շրջաններում վաղուց, անշուշտ, գոյություն ունեին՝ լճացումից դուրս գալու ուղիների ներզգացողական որոնման, նոր աշխարհ թափանցելու ձգտումների ձեւով: Իսկ աշխարհը 18-րդ դարամուտին, իսկապես, նորացել էր: Պատմական այդ փուլում, մինչ վահհաբականության հանդես գալը, ունեցած իր վիճակով իսլամական աշխարհը կատարյալ անճարակ կգտնվեր անչեղորեն դեպ իրեն չարժվող արեւմտյան քաղաքակրթության հանդիման:

Իսլամի վերածնությանը նպաստած գործոններից ավանդաբար առանձնացվում են երկուսը՝ վահհաբական չարժումն ու սուֆիական միաբանությունների նորացումը, որոնք կանխագծելով բարեփոխումների կարիքը, խախտել էին Օսմանների օրոք արաբական աշխարհին պատած "նիհյը" (Дж. Тримингем. Суфийские ордены в исламе, Москва, 1989, с. 93): Դրանցից, որպես գործոն, կարծում ենք, կարեւոր է հենց վահհաբականության առաջացումը. սուֆիական միաբանությունների բարեփոխումները կայացան վահհաբական չարժման հետեւանքով կամ, ավելի ճիշտ, նոր վարդապետության ծնունդի պատասխան արձագանքն էին, քանի որ դրանց երկուսի արմատներն էլ տանում են 18 դ.:

Այդ ժամանակներում արդեն բազմադարյա իրական եւ միստիկ պատմություն ունեցող եւ ուղղափառ իսլամի համակարգում իր դիրքերն ամրացրած եւ, ինչպես այլ ուսմունքները, նախ սուր ընդդիմության հանդիպած, ապա՝ դիմակայությունից ազատ զարձած սուֆիզմն աստիճանաբար սպառել էր իրեն: Սուֆիական փորձառության ոգին գործնականորեն թուլացած էր բոլոր թարիղաթներում: Բարեփոխումների անհրաժեշտությունն ակնհայտ էր, եւ սուֆիական միաբանությունների ու, ընդհանրապես, իսլամի չատ իրողությունների քննադատությամբ հանդես եկող, ավելին՝ քննադատությունից բացահայտ հարձակման անցած վահհաբականությունը, սուֆիզմը (ըստ էության, ողջ իսլամը) մղեց դեպի նորացում:

Անհրաժեշտ է ի նկատի առնել նաեւ այդ ժամանակների արաբական հասարակության հիմնախնդիրների ոչ-կրոնական ծիրերը՝ ցեղային կառուցվածքի անմիաբանությունը եւ այլն, որոնցում վահհաբականությանը վիճակված էր կարեւոր դեր խաղալ՝ Արաբիայի միավորում, ամբողջական պետության ստեղծում մի տարածքում, որտեղ այդպիսին պատմականորեն երբեւէ գոյություն չէր ունեցել: Նոր ուսմունքը ստեղծողի՝ Մուհամմադ Աբդ ալ-Վահհաբի (1703-1787) առջեւ իրապես դժվարին խնդիր էր ծառացած:

Արաբական հասարակության գոյատեւման, վերածնության, էլ ուր մնաց՝ հետագա ամրապնդման եւ զարգացման համար անհրաժեշտ էր ոչ ավել, ոչ պակաս՝ նրան հարկադրել ընդունելու այնպիսի մի ուսմունք, որը Բացարձակ Աստծո տրանսցենդենտությունը համատեղում էր սոցիալական փորձի որակապես նոր իրատեսության հետ:

Ըստ էության, ո՞րն է վահհաբական ուսմունքի էությունը: Նպատակ ունենալով վերջ դնել հիջրայի երրորդ դարից հետո (այսինքն՝ մ.թ. 9 դ.) սկսված նորամուծություններին (բիդ՝)՝ ալ-Վահհաբը առաջադրում էր հետեւյալ դրույթները.

1. Ալլահից բացի, երկրպագության բոլոր օբյեկտները կեղծ են, եւ դրանց բոլոր երկրպագողները՝ մահվան արժանի:
2. Սրբերի գերեզմաններին այցելելությունը՝ բազմաստվածություն է:
3. Աղոթքի մեջ Մարգարեի, սրբերի եւ հրեշտակների անունները հիշատակելը բազմաստվածություն է:
4. Ալլահից բացի որեւէ մեկի հովանավորությունն ակնկալելը բազմաստվածություն է:
5. Ալլահից բացի որեւէ մեկին ուխտ անելը բազմաստվածություն է:
6. Ղուրանի, Սուննայի կամ նրանցից բխող դրույթների վրա չհիմնված գիտելիք քարոզելն անաստվածություն է:
7. Արարքներում չափավորությունը ժխտելը հերձվածք է:
8. Ղուրանն այլաբանորեն մեկնաբանելն անաստվածություն է:

Իր նոր ուսմունքի համար Մուհամմադ Աբդ ալ-Վահհաբն օրինակելի հիմք էր ընդունել սուննիզմի իրավական դպրոցներից ամենաուղղափառը՝ Հանբալիական մազհաբը: Վերջինս չէր հանդուրժում մեկնաբանություններ եւ ենթադրում էր Աստծո առավել տրանսցենդենտալ դիտորոշումը: Իբն Հանբալի առանց այդ էլ բավականին խիստ սոցիալ-էթիկական համակարգին ալ-Վահհաբը հավելում էր առաջին հայացքից աննշանակալից, բայց էապես բնութագրական մի մանրամասնում՝ կամավոր հարկ (զաքաթ) գանձել ոչ միայն ազգաբարված (այսպես ասած՝ հայտագրված) մթերքից, այլեւ՝ թաքցրած (ստվերային) շահույթից եւ առեւտրից. ի՞նչ էր սա, եթե ոչ բանաղրային ֆիսկալ համակարգ: Սա այն ռացիոնալիզմն էր, տնտեսական աճի հիմքերի ստեղծումը, որ առաջին հայացքից ան-

համատեղելի էր մի այլ, հազվադեպ հիշատակվող սրբախորհուրդ դրույթի հետ՝ աղոթքները համբրել ոչ թե մեղեսիկի, այլ ալ ձեռքի մատնակոճերի վրա: Սրա, ինչպես եւ մյուս բոլոր վահհաբական դրույթների, հիմնավորումը նույնն է՝ այն երեւույթների բանադրանքը, որոնք թափանցել են իսլամի վարդապետության մեջ հիջրայի III դարից (IX դարից) հետո: Սակայն, հնարավոր է, որ դա եւս ամեն աստվածայինի աննախադեպ բացարձակեցման դրսեւորումներից մեկն է (չէ՞ որ, եթե սրբերի գերեզմաններին այցի գալը բազմաստվածություն համարվի, ապա աղոթքի ժամանակ յուրաքանչյուր հավելյալ իրի գործածումը կարելի է ֆետիշիզմի դրսեւորում դիտել):

Ամվածը մեկ անգամ եւս ցույց է տալիս, որ Մուհամմադ Աբդ ալ-Վահհաբը այնպիսի մի արտակարգ անձնավորություն է եղել, որ կարողացել է թափանցել մինչեւ արաբական հիմնախնդրի արմատները եւ շարժել արաբի գիտակցությունը: Ի դեպ, արդեն կրոնական իր "կարիերայի" սկզբում, Մեդինայում սովորելիս, նա իր ուսուցիչներ Սուլեյման ալ-Քուրդիից եւ Մուհամմադ Հայյաթ ալ-Սեյստանից մեղադրանքներ էր լսում հերձվածողական մաքերի համար: Հետագայում, դեգերումների երկար տարիներին (Բաղդադ, Համադան, Խաֆահան, Ղոմ...) նա իր աշխարհայացքի վրա "չափափորձում" էր շատ ուսմունքներ՝ դասական սուֆիզմից մինչեւ արիստոտելյան փիլիսոփայություն: Սակայն մինչեւ հայրենիք՝ Այաինա (Ույայնա) վերադառնալը, նա հանրալիսական սուննիզմի հաստատակամ հետեւորդը դարձավ: Այստեղ ալ-Վահհաբը հանդես է գալիս իր ուսմունքի բացահայտ քարոզով՝ ավելի ուշ այն չարաչարելով "Քիթաբ ալ-Թաուհիդում" ("Գիրք միաստվածության" երկում):

Հայրենի հողում նա մարգարե չդարձավ. հարազատ եղբայրը՝ Սուլեյմանը, նոր վարդապետության դեմ ջախջախիչ մի քննախոսություն գրեց, իսկ զարմիկը՝ Աբդալլահ Հուսեյնը, բացեիբաց հանդես եկավ նրա դեմ: Բանը ցեղային (կլանային) գժտություններ հասավ, որից հետո Վահհաբը զրկվեց ծանրակշիռ ունեցվածքից եւ վտարվեց քաղաքից: Նրան ընդունեցին ոչ մեծ՝ ավ-Դիրեի փոքրիկ գյուղում, որը նախախնամության բերումով վահհաբական նվաճողականության մեկնակետը պիտի դառնար: Տեղական առաջնորդ Մուհամմադ իբն Սաուդը (սաուդյան թագավորական տան ապագա հիմնադիրը) համակվեց նոր գաղափարներով եւ թույլատրեց դրանց քարոզչությունը՝ պայմանով, որ խոշոր հաջողության եւ հարեւան շրջաններում դրանց տարածման դեպքում պաշտոնական իշխանությունը ամբողջապես կլինի իր ձեռքում, իսկ հոգեւորը՝ Վահհաբին կպատկանի: Արդեն մեկ տարի անց, եկվորն իր հավատին էր բերել տեղի ամբողջ բնակչությանը՝ բացառությամբ չորս հոգու, որոնք հարկադրված էին հեռանալ բնակավայրից: Քարոզիչի ցուցումով կառուցվում է չափազանց ասկետական մի մզկիթ՝ առանց մինարեների, զարդահարդարման եւ նույնիսկ, հատակի, գորգերի: Համատեղ աղոթքներին քամահրանքով վերաբերվող յուրաքանչյուր ոք պատժվում էր: Միեւնույն ժամանակ Վահհաբը խրախուսում էր հրազեն գործածելը: Շուտով նոր աղանդն իբն Սաուդի եւ նրա որդի Աբդ ալ-Ազիզի զինվորական ղեկավարությամբ սկսում է առաջին երկարամյա պատերազմը՝ իր գաղափարների տարածման համար: Զավթված հողերում խանդակներով շրջափակված գլխավոր ամրոցից բացի վահհաբականները կառուցում են ամրոցներ, որոնցից յուրաքանչյուրում թողնում են խոպա՝ լավ վարձատրվող զինվորներ, ինչպես նաեւ ղադի եւ մուֆթի:

1773 թ. ընկնում է վահհաբականների ամենալուրջ հակառակորդ շեյխ Դիհհամը՝ նրանց զիջելով Ռիյադը: Այսպիսով, վահհաբականների հսկողության տակ է անցնում ամբողջ Նեջդը:

Վահհաբականների հաջողությունները ձեռք էին բերվում ինչպես հակառակորդի հետ բացահայտ մարտերում, այնպես էլ քաղաքական դավերով եւ կեղծ պայմանագրերով: 1799 թ. Բաղդադում կնքված հաշտության պայմանագիրը խախտելու համար վահհաբականներին ձեւական պատրվակ պետք չեղավ: Արդեն 1801 թ. նրանք մտան Քերբելա, պղծվեցին շիա իմամների գերեզմանները ("Սրբերին երկրպագելը բազմաստվածություն է"), քանդվեցին դամբարանները, իսկ բնակիչների մեծ մասը դաժանորեն սպանվեց: Իսկ ընդամենը մեկ տարի անց Մեքքայի կառավարիչ Ղալիբը, Աբդ ալ-Ազիզ Սաուդի՝ բազմաստվածությանը վերջ տալու սպառնալիքներից ահաբեկված, հարկադրված էր դուրս բերել քաղաքի բնակչությանը: Սակայն Ջիդդայի եւ Մեդինայի դեմ նման փորձերի ձախողումից հետո վահհաբականները ստիպված էին վերադառնալ Հիջազ, որտեղ նրանց զորամասը չխոչընդոտվեց տեղական աշխարհազորի կողմից, իսկ նրանց առաջնորդ Աբդ ալ-Ազիզին սպանեց նորադարձ վահհաբական ձեւացող մի շիա:

> Պատմականորեն վահհաբա-շիական հարաբերությունների անհաշտ-թշնամական բնույթը պայմանավորված է վահհաբականների ծայրահեղ ռազմատենչ դիրքորոշումով եւ ոչ երբեք նրանց ուսմունքներում առկա տեսական հակասություններով: Արդի շիա հոգեւոր առաջնորդները վահհաբականությունը միանշանակ բնորոշում են որպես "ամբողջովին անհիմն եւ մոլեռանդ հավատալիք", հակաղուրանական կրոն, որը "ամենաբարեգութ Ղուրանը չահարկում է իսլամն ու Ղուրանը ոչնչացնելու համար" նրա հետեւորդների մեղքը դիտելով ուխտավորների սպանությունը, սրբավայրերի անվտանգության խաթարումը եւ այլն:
>
> (امام خمینی وصیت‌نامه سیاسی. تهران ۱۹۹۷، صص ۵۲، ۱۴۳، ۱۴۴)

Իսկ Սաուդին հաջողվեց փրկվել եւ, նույնիսկ, հաջողությամբ վերսկսել իր գործունեությունը, արդյունքը 1804 թ.՝ Մեդինայի, 1806 թ.՝ Մեքքայի, ավելի ուշ՝ Ջիդդայի անձնատուր լինելն էր: Արժանի դիմադրություն ցույց տվեց միայն Դամասկոսը: Լրջորեն անհան-

գտաւցած Օսմանյան կառավարությունը Եգիպտոսի կառավարիչ Մուհամմադ Ալի Փաշային հրամայեց մեկընդմիշտ լուծել հիմնախնդիրը: Ալի Փաշան բանակի հրամանատարությունը ժամանակավորապես հանձնում է որդուն՝ Թուսունին, որին, թեեւ դժվարությամբ, հաջողվում է վահհաբականների նկատմամբ գերակայություն ձեռք բերել եւ 1812 թ. հետ դրավել Մեդինան:

Պարտվածներին դեռեւս փորձություններ էին սպասում: Վահհաբականությանը մեծ հարված եղավ 1814 թ. Սաուդի մահը, որից հետո նրա հաջորդը՝ Աբդ Ալլահը, հաշտության գնաց՝ համաձայնվելով ճանաչել Օսմանյան սուլթանի իշխանությունը: Սակայն հետագայում, հերթական անգամ խախտելով պայմանագրերն ու պայմանավորվածությունները, որոնք այդպես էլ չդարձան վահհաբական քաղաքական կյանքի երեւույթ, նա ձերբակալվեց եւ մահապատժի ենթարկվեց Կոնստանդնուպոլսում: (Efraim Karsh, Inari Karsh. Empires of the Saud: The Struggle for Mastery in the Middle East 1789-1923. Harward University Press, 1999, pp. 29-30):

Սակայն փայլուն զորավար իբն Սաուդի հսկայական ջանքերն իզուր չանցան. անհողդողդ կամքն ու իշխանության ձգտումը դինաստիային օգնեցին արդեն մի քանի տարի անց կենտրոնական Արաբիայում ոչ միայն ամրացնել իր ազդեցությունը, այլեւ նշանակալի չափով առաջ շարժվել դեպի "Բարեշնորհ կիսալուսինը", իսկ արդեն 1833 թ. ենթարկեցնել եւ հարկատու դարձնել Պարսից ծոցի ամբողջ ծովեզրը: Օսմանյան Կայսրության՝ նրանց դիմակայելու պարբերական փորձերը, թեեւ արդյունավետ, սակայն կարճատեւ էին:

Սաուդյան տան հետագա իրար հաջորդած ներկայացուցիչները մի քանի տասնամյակի ընթացքում տիրապետությունը զիջեցին Շամմար-Ռաշիդյան իշխանական տան տիրակալներին: Այնուամենայնիվ, վահհաբականության ազդեցությունն անչեզորեն ընդլայնվում էր: Այնպես որ 19-20 դդ. սահմանագծում իշխանության վերադարձած Սաուդի զարմը՝ Աբդ ալ-Ռահման բին Սաուդը, արդեն 1904 թ. տնօրինում էր այն ամենը, որի տերն իր պապն էր եղել (տես մանրամասն՝ H. St. John Philby. Arabia. London, 1930): Նա հաջողությամբ դիմակայում էր Ռաշիդյան տան իրավահաջորդին, Թուրքերին, արաբական ցրված ցեղերին եւ իշխանության հավակնորդ իր ազգականներին: 1921 թ. նա իրեն է ենթարկում Շամմարը, 1924 թ.՝ արդեն իշխում է Խայիլի վրա եւ տիրանում Մեքքային, 1925 թ.՝ Մեդինային եւ Ջիդդային: 1926 թ. հունվարին իբն Սաուդը հռչակվում է Հիջազի թագավոր, Նեջդի եւ վերջինիս կցված մարզերի սուլթան: Առաջինը ճանաչեց նոր պետությունը Խորհրդային Միությունը՝ 1926 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատելով նրա հետ: Իսկ 1927 թ. Մեծ Բրիտանիան եւս հարկադրված էր ճանաչել Սաուդյանների պետությունը:

20 դ. երկրորդ տասնամյակը կարեւոր էր նրանով, որ իբն Սաուդը, 1912 թ. հռչակելով "Կրոնական կապերն ավելին են, քան կլանայինները" կարգախոսը, հիմնում է "Իխվան" (Եղբայրներ) կազմակերպությունը: Քաշիմում երեւան է գալիս Արտավիյա գյուղատնտեսական առաջին համայնքը, որի անդամներն աշխատանքային գործիքներից առաջ սրբազան պատերազմի համար զենք են ստանում: Ջնայած համայնքի զինված միավորումները հիմնականում կոչված էին արձագանքելու ջիհադի առաջին իսկ կոչին, համայնքի մյուս անդամները նույնպես չէին ազատվում զինվորական ծառայությունից: Համայնքները սկզբում ծաղկում էին. տասը տարում նրանց թիվն աճեց հասավ 70-ի՝ մինչեւ 10000 բնակչությամբ: Սակայն այդ չափազանց պարզունակ տնտեսությունն աստիճանաբար անկում ապրեցին, ինչը, սակայն, չխոչընդոտեց կազմակերպության քաղաքական երկարակեցությանը (հենց իխվանները իրենց վրա վերցրին 1979 թ. Մեքքայում կատարված ահաբեկչական գործողության պատասխանատվությունը), իսկ նրանց քարոզիչները Միջին Ասիայի տարածքում գործում էին դեռեւս մինչեւ Խորհրդային Միության փլուզումը:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին էր, որ ամերիկյան նավթային մոնոպոլիստները Սաուդյան Արաբիայի տարածքում ձեռք բերեցին նավթի հետախուզման կոնցեսիաներ, որի արդյունահանումն սկսվեց 1938 թ.՝ դառնալով թագավորության ներկայիս տնտեսական ծաղկման հիմքը: Արժանին մատուցելով թագավորական տանը՝ պետք է նշել, որ նրա ներկայացուցիչները կարողացան չահեկանորեն տնօրինել երկրի բնական հարստությունը՝ իրենց ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելով որակական նոր աստիճանի:

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքում վահհաբականության տարածմանը, ապա հարկ է նշել, որ այդ շարժման "արտահանված" տարբերակը նշանակալիորեն զանազանվում է տեղական, դոնե պաշտոնական տարբերակից:

Այստեղ մենք միանշանակ գործ ունենք զուտ ազդային գաղափարախոսության արտահանման փորձերի հետ, որը չիրացված կապիտալի ներդրման ձեւերից է՝ միտված ազդեցության ոլորտների հետագա ընդլայնման: Այսպիսով, խոսք կարող է գնալ ոչ թե վահհաբիզմի՝ որպես ուսմունքի քննադատության, այլ հատկապես վերոհիշյալ փորձերի անթույլատրելիության, ինչպես նաեւ ընդհանրապես քաղաքական նպատակներով ցանկացած արմատական կրոնական գաղափարախոսության օգտագործման մասին:

Արմատական իսլամն առավելապես "հարվածում է" ամենից առաջ այն տարածաշրջաններին, որոնցում երկար ժամանակ իսլամը կամ կրոնն ընդհանրապես հա-

լածվել են, իսկ հիմնովին մոռացված կրոնական հիմունքները կամ չափից ավելի ջնջված են եղել ժողովրդի գիտակցությունից՝ լավագույն դեպքում վերածվելով պահպանված մի քանի սովորույթների եւ պարզապես հանգելով կրոնական բանաձեւերի կրկնության, կամ էլ երբեւէ չեն դարձել տվյալ ժողովրդի հոգեւոր մշակույթի մասը՝ այլ աշխարհայացքային հայեցակետերի գերակայության պատճառով: Դրա համար էլ հենց հետխորհրդային տարածաշրջանը՝ իր յուրահատուկ հոգեւոր վակուումով, որն առաջացել էր պաշտոնական գաղափարախոսության անկման հետեւանքով, ու դրան գումարած տասնամյակներով հետապնդված կրոնական (իրական կամ, ավելի շուտ, թվացյալ) գիտակցության ժայթքումը հույժ բարենպաստ հող դարձան վահհաբականության՝ հետխորհրդային տարածք ներթափանցման համար: Կրոնական եռանդուն քարոզչությունը (այդ թվում եւ հսկայական տպաքանակներով վահհաբական գրականության տարածումը), տեղական հոգեւորականության հաճախակի վարկաբեկումը, տեղի ղեկավարության հետ, ինչպես նաեւ հավատացյալների միջեւ ընդհարումների հրահրումը վկայում են, որ վահհաբականության արտահանումը կատարվում է որոշակի ծրագրով եւ "խաղի լավ մշակված կանոններով":

Մինչին Ասիայի իսլամական հիմնականում միասեռ համայնքները (բացառությամբ Բադախշանի) հանկարծ բաժանափեղկվեցին ավանդական մուսուլմաններ եւ, իբր, մաքուր իսլամ դավանողների: Գրեթե ամենուրեք քաղաքական ընդդիմության կորիզը կազմում էին հենց իսլամական արմատականները, որոնցից չատերին զանգվածային լրատվության միջոցները ինքնաբերաբար դասեցին վահհաբականների շարքը, ինչը միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը: Սակայն չի կարելի ժխտել, որ իսլամի այդ արմատական թեւին հաջողվեց որոշակի պահի առավել ազդեցություն ձեռք բերել տարածաշրջանում՝ թողնելով հույժ ողբերգական հետեւանքներ:

*Կրկին անդրադառնալով այն հարցին, թե որ տարածաշրջաններն են ամենից ավելի ենթարկվել արմատականության ներգործությանը, հարկ է նշել, որ դրանք փաստորեն ամբողջ Մինչին Ասիան եւ Ղազախստանն էին: Եվ դա այն պատճառով, որ բացառությամբ Տաջիկստանի եւ Ուզբեկստանի որոշ անկյունների (այսինքն՝ իրանական պատմական ազդեցության որոշ տարածքներ) իսլամն այստեղ լայն առումով երբեք բնակչության մենտալիտետը եւ մշակույթը դիմորոշող բաղկացուցիչ չի եղել՝ ներառյալ նախախորհրդային ժամանակաշրջանը: Սրան պետք է ավելացնել կրոնական "ժամանակազրկության" յոթանասունամյա շրջանը: Նաեւ չի կարելի ժխտել, որ բնակչության մի մասը, ավելի ստույգ՝ նրա առավել ունեզուրկ խավը, ինչ-որ չափով հրապուրվեց վահհաբական քարոզչության տարածած՝ զուսպակեցության գաղափարներով: Որքան էլ տարօրինակ է, վահհաբականության սեփական հետեւորդները դա բացատրում են տեղական հոգեւորականության հանդեպ հավատի կորուստով, ինչպես նաեւ ներկայիս իրադրությանը անհարիր փարթամ տոնակատարությունների ու դեպի սրբավայրերը ուխտագնացության մերժումով (մանրամասն տե՛ս՝ А. Алишаева. Религиозная ситуация в Кыргызстане. ЦАиК, 4 (5), Стокгольм, сс. 51-55): Իսլամի տվյալ աղանդի այսօրինակ միամիտ ընկալումը, հավանաբար, այնքան էլ մտահոգիչ չէր լինի եւ կամ թե, համենայն դեպս, սոսկ տեղական կղերական դասին սուր անհանգստություն պատճառող իրողություն կմնար, եթե նոր հոսանքը չվերաճեր քաղաքական արմատականության, որն ամենեւին էլ չի թաքցնում, որ շահագրգռված է ոչ թե հավատացյալների զանգված գրավելու, այլ քաղաքական իշխանության հասնելու խնդրով: Ավելի ուշ, Օշում դղրդացած պայթյունները շատերին հարկադրեցին վերանայել իրենց վերաբերմունքը վահհաբական քարոզիչների հանդեպ: Ու թեեւ նրանց ուղղակի հանցակցությունն այդ ահաբեկչությանը չապացուցվեց, սակայն երբեմնի միասնական մուսուլմանական համայնքի պառակտումն արդեն իրականություն էր դարձել արդեն:

90-ական թվականների կեսերին Ուզբեկստանում ի հայտ եկան մուսուլմանական եւ քրիստոնեական այնքան շատ կազմակերպություններ (այդ թվում եւ այնպիսիք, որոնք նախկինում արմատներ չեն ունեցել այդտեղ), որ սկզբնապես վահհաբականությունն ընկալվեց որպես ոչ ավելի, քան եւս մեկ "հով": Վահհաբականության մասին լրջորեն խոսեցին 1999 թ. նաեւ Տաջիկստանում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո: Այդ պահին վահհաբականության բացասական դեմքն արդեն վերջնականապես որոշակիացել էր Տաջիկստանում քաղաքացիական պատերազմի եւ չեչենական հակամարտության իրողություններով:

Մինչին Ասիայի տարածքում իր տարբեր դրսեւորումներով ռադիկալ իսլամի ազդեցության մասին խոսքը հարկ է ավելի մանրամասնել: Այստեղ դրան, անկասկած, ամենից ուժեղ ենթարկվեց Տաջիկստանը: Իր պաշտոնական ինստիտուտներն ունեցող (գրանցված մզկիթներ եւ այլն) ավանդական իսլամից եւ Բադախշանի համար ավանդական իսմայիլիզմից զատ (Հանրապետության քաղաքական դաշտում վերջինս ներկայացված է էթնո-դավանական բնույթի "Լա՛լի Բադախշան" կուսակցությամբ), գործում էին իսլամական վերածնության չարժումը (որը ներառնում էր Տաջիկստանի Իսլամական վերածնության կուսակցությունը), իսլամական "Թաքֆիր" կուսակցությունը, սուֆիական զանազան եղբայրակցություններ, իսլամի զանազան ուղղությունների բազմաթիվ քարոզիչներ (մանրամասն տե՛ս՝ С. Олимова. Политический ислам и конфликт в Таджикистане. ЦАИК 4 (5), Стокгольм, 1999, сс. 133-141): Վերջիններիս թվում կային նաեւ վահհաբականներ:

Արմատական իսլամի հետ են կապվում նաեւ այս Հանրապետության քաղաքական կյանքում վերջին տարիներս կատարված դրամատիկ իրադարձությունների չատերը: Այսուամենայնիվ, կլանային չահերի առաջնայնությունը, սուբ-էթնիկ անմիաբանությունը,

հասարակական գիտակցության մակարդակով աշխարհիկ եւ հոգեւոր իշխանության բաժանմանը հարմարված եւ ըստ էության հասարակության մեջ արմատականության հիմնական ընդդիմությունը դարձած, այսպես կոչված, "ժողովրդական" իսլամը (տաջիկների մենտալիտետի էական բաղադրիչը), ինչպես նաեւ իսլամի նորմերի անշեղ պահպանման հետ անհամատեղելի՝ խորհրդային աշխարհայացքի մնացուկային ազդեցությունը, այդպես էլ թույլ չտվեցին, որ ռադիկալ գաղափարներն այստեղ ամրակայվեն: Վերջինիս հստակ անդրադարձն է Տաջիկստանի Ղազի (Հոգեւոր առաջնորդ) Ալի Աքբար Թուրաջոնզոդայի այն արտահայտությունը, թե իսլամիստների գործադրած ամենահաջողակ չանքերի դեպքում անգամ երկիրն առնվազը հիսուն տարի պատրաստ չէր լինի ընդունել նրանց հոգեւոր կառավարումը (տե՛ս՝ *Кит Мартин. Куда идут исламские радикалы Центральной Азии. ЦАиК, 4 (5), Стокгольм, 1999, с. 89*): Ավելը վկայում է այն մասին, որ ներթափանցման փուլում ռադիկալ իսլամին ձեռնտու բարձր հավատացյալության բացակայությունը հետագայում կարող է չրջվել նրա դեմ, երբ անբավարար "կրոնական փոնը" կխանգարի արմատական իսլամի նորմերի ամրակայմանը:

> *Միջին Ասիայում, ինչպես նաեւ որոշ չափով Ադրբեջանում, կլանների մասին խոսելիս, բնավ չպետք է պատկերացնել Հայաստանում արժանագրված՝ կլաններ հորջորջվող ոչ պաշտոնական կառույցները: Ի տարբերություն մեր կլանների, որոնք հիմնականում բարեկամական-խնամիական ու դրանց հարող, այսպես կոչված "ընկերներով" համալրված կազմություններ են, միջինասիական կլանները գլխավորապես տեղային բնույթի ենթաէթնիկ միություններ, կամ, ավելի ճիշտ, տեղայնական մտածողության կրող մարդկանց պոտենցիալ համակցություններ են: Մեզանում կլանները բացառապես անձնավորված են՝ այսինչի կամ այնինչի կլանը՝ ինչ-որ մեկի բարեկամների ու ընկերության խումբը, որը հետապնդում է հիմնականում տնտեսական նպատակներ, նույնիսկ գրավելով քաղաքական բարձր դիրքեր: Տաջիկական կլաններն, օրինակ, նույնպես ներառնելով բարեկամական-խնամիական հարաբերություններ, հիմնականում տեղայնացված են՝ Լենինաբադի (Խոջանդի) կլանը, Դարվազի կլանը, Քուլյաբի կամ պամիրյան կլանը, եւլն: Սրանք երբեմն անգամ կաստայի բնույթ են ստանում՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով. օրինակ, նմանօրինակ կլանային մտածողություն ունեցող ընտանիքների միջեւ նույնիսկ ամուսնությունը ռեգլամենտավորվում է:*

*Կրոնական ավանդույթի ավանդաբար ուժեղ հիմքեր ունեցող տարածաշրջաններում վահհաբականության համեմատաբար թույլ լինելը հավաստվում է հարեւանդիր Ջեչնիայում եւ Դաղստանում այդ հոսանքի ազդեցության ոլորտները համեմատելիս: Ջեչենները, մեծի մասամբ, սուֆիական իսլամի ձեւական կրողներ են, որը նրանց կողմից ընդունվել է բավականին ուշ (16-18 դդ.) եւ այդպես էլ չի ամրացել ազգային գիտակցության մեջ: Վարվեցողական նորմերի յուրօրինակ "թեյփային" օրինակարգը Ջեչնիայում մինչ օրս դերակա է կրոնականի համեմատությամբ. չարիաթին այստեղ միշտ փոխարինել է ադաթը: Մյուս կողմից, իսլամի ընդունման հետ երեւան եկած կրոնական նոր ինստիտուտները՝ սուֆիական թարիղաթները (եղբայրակցությունները՝ օրդեններ), որոնք հասարակության կազմակերպման առումով գործում էին թեյփերին զուգահեռ, չնորհիվ իրենց ընդգրկունության, ժամանակի ընթացքում ձեռք բերեցին հասարակական-քաղաքական կարեւոր նշանակություն (մանրամասն տե՛ս՝ *И. М. Мурадян, С. А. Манукян. "Третий путь" Евразийских наций и ирано-шиитская революция. Ереван, 1997, сс. 159-170*): Ու թեեւ որպես կրոնական ուսմունք վահհաբականությունն ինքնին իրականում արմատներ չունի Հյուսիսային Կովկասում, այնուամենայնիվ, չի կարելի անտեսել սուֆիական նախչրանդի եւ ղադերի թարիղաթների առաջնորդների՝ չազդարարվող չփումները վահհաբականների հետ: Ջեչնիայի համար իսլամի ավանդական ուղղությունը հիմնականում նախչրանդի ուխտն է, որն ապահովել է նրա կապն ամբողջ աշխարհի եւ, հատկապես, Օսմանյան Կայսրության, ապա եւ՝ Թուրքիայի հետ: Այն իր ազդեցությունը՝ խորհրդային վարչական կառուցվածքներում ներգրավվելու չնորհիվ, որոշ չափով պահպանել է նաեւ ԽՍՀՄ գոյության տարիներին: Թուրքիայի քաղաքական եւ ֆինանսական վերնախավի հետ վահհաբականների ունեցած ընդհանուր, (այդ թվում եւ աշխարհաքաղաքական չահերի) առկայությամբ է, թերեւս, բացատրվում Թուրքիայի այդչափ կարեւորացատ դիրքորոշումը չեչենական հիմնախնդրում: Իսկ այդ վերնախավը հիմնականում պատկանում է նախչրանդի թարիղաթին: Ստամբուլում են բուժվում վիրավոր մարտիկները, այստեղ են հավաքագրվում նորերը: Այստեղ մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնադրամը կազմակերպում է հակառուսական ցույցեր, իսկ պաշտոնական իշխանությունները բազմիցս պատրաստակամություն են հայտնել օգնության ձեռք մեկնել եղբայրական ժողովրդին եւ ընդունել բոլոր ցանկացող փախստականներին:*

> *Հյուսիսկովկասյան ժողովուրդների վերաբնակեցումը Թուրքիայում վաղեմի պատմություն ունի (տե՛ս՝ А.М.Магомеддадаев, М.К. Мусаева. К истории переселения дагестанцев в Турцию - Iran & Caucasus: Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies. Vol. 1, pp. 55-64), որը քանիցս ապացուցել է, թե Ռուսաստանի հարավում ուզած իրադարձություն*

ձեռնտու է թուրքական իշխանություններին՝ նախ եւ առաջ այն պատճառով, որ դա բնակչության արտագաղթի պատճառ է դառնում Թուրքիա: Բնական է, որ հյուսիսկովկասյան մուհաջիրների (գաղթականների) հանդեպ այսպիսի "ըմբռնողական" վերաբերմունքի պատճառն հենց այն է, որ նրանց միջոցով կարելի է "նոսրացնել" առավել խնդրահարույց քրդաբնակ շրջանները՝ այդպիսով թուլացնելով տեւական քաղաքական բարձր լարվածությունն այդ տարածաշրջաններում (մանրամասն տե՛ս՝ V. Arakelova. The Zaza people as New Ethno-political Factor in the Region. - "Iran & Caucasus: Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies", Vol. 3-4, Wiesbaden, 2000, pp. 397-408):

Հանդես գալով դեռեւս Զեչնիայի եւ դաշնային կենտրոնի հակամարտության վաղ շրջանում, որպես հավատակից եղբայրներին աջակցող "իսլամի զինվորներ" եւ այստեղ հիմնական հենակետ ստեղծելով հետագա գործունեության համար, վահհաբականները քիչ չանքեր չգործադրեցին իրենց ազդեցությունը հարեւան Դաղստանում տարածելու գործում: Սակայն մինչ (նաեւ խորհրդային շրջանում) կրոնականության յուրօրինակ պատվար մնացած Դաղստանը ճիշտ ժամանակին գնահատեց արմատական գաղափարների վտանգավորությունն իր բազմազգ հանրապետության համար. վահհաբականներին այդպես էլ չհաջողվեց հանրալիական ուղղությունը չափափորձել տեղական հանաճիական եւ շաֆիական մազհաբների վրա: Դաղստանի հոգեւոր-կանոնությունը հանդես եկավ այդ հոսանքն օրենսդրորեն արգելելու նախաձեռնությամբ, որն ի վերջո, արժանացավ հանրապետության պետխորհրդի աջակցությանը:

Վահհաբականությունը, սակայն, հեռու է իր դիրքերը զիջելու մտադրությունից. հետխորհրդային միջավայրում այն այսօր տարածված է փաստորեն ամենուրեք, ուր սուննի մուսուլմաններ կան (Հյուսիսային Կովկաս, Միջին Ասիա, Թաթարստան, Բաշկորտոստան), իսկ ըստ վերջին տվյալների, շարժվում է արեւելք՝ դեպի Սիբիրի նավթաբեր շրջանները: Ժամանակակից ոչ արաբական վահհաբականության աշխարհագրությունը ցույց է տալիս, որ այդ շարժման ետեւում կանգնած են այն ուժերի (այդ թվում եւ արաբական ֆինանսական ընտրանու) աշխարհա-քաղաքական շահերը, որոնք ձգտում են իրենց հսկողությունը հաստատել հումքի հեռանկարային աղբյուրների եւ հաղորդակցության ուղիների վրա:

Հետխորհրդային տարածքից բացի, վահհաբականությունը տարբեր ժամանակներում որոշ տարածում է ունեցել նաեւ Աֆղանստանում, Հնդկաստանում, Պակիստանում, Աֆրիկայի մի շարք երկրներում: Այն զանազան "ցուցանակներով" սքողված՝ եռանդուն գործունեություն է ծավալում նաեւ Արեւմուտքում: Այդ շարժումը քանիցս բարդ խնդիրների առաջ է կանգնեցրել շատ երկրների կառավարությունների:

Այսպես՝ 1823 թ. թափանցելով Հնդկաստան, նրա կողմնակիցները արդեն մեկ տարի անց Փեշավարի սահմանում ջհադ (սրբազան պատերազմ) հայտարարեցին սիկխերի դեմ, իսկ պարտվելուց հետո, սրբազան պատերազմի դրոշի ներքո մուսուլմաններին պայքարի հանեցին անգլիացիների եւ ինդուիստների դեմ: Իրենց հրոսակապետի՝ Սայիդ Ահմադի (հնդկական վահհաբականության հիմնադիր), եւ նրա հաջորդ Տիտու Մայյանի զոհվելը ամենեւին էլ չմարեց վահհաբականների եռանդը. ջհադի նրանց չարունակական կոչերը (որոնք Հնդկաստանում վահհաբականության հիմնական գաղափարը դարձան), իշխանությունների հանդեպ տեւական զինված դիմակայումը, ահաբեկչական գործողությունները, անվերջանալի արյունահեղությունները, ի վերջո՝ հանգեցրին նրան, որ 1980-81 թթ. Հնդկաստանի մուսուլմանական՝ ե՛ւ չիա, ե՛ւ սուննի, համայնքներին ղրդեցին հանդես գալ պաշտոնական հռչակագրով՝ ջհադի վահհաբական վարդապետությունը մերժելու մասին (SEI, Leiden, 1953, p. 621):

Վահհաբական շարժման պատմությունը ցույց է տալիս, որ նրա հետեւորդներին երբեք չեն ընկճել ո՛չ պարտությունները, ո՛չ առաջնորդների մահապատիժները, նրանք չեն վարանել ո՛չ հոգեւորական գործիչների դեմ ղավեր նյութելիս, եւ ոչ էլ, ի դեպ, իրենց իսկ կնքած խաղաղության պայմանագրերը խախտելիս: Վերջիններս պահպանվում էին սոսկ այնքան, որքան ժամանակ էր պետք կորստներից ուշքի գալու եւ նոր ուժեր ժողովելու համար: Անհրաժեշտ է, որ այս հանգամանքն ի նկատի առնեն նրանք, ովքեր հաճախ են խոսում "վահհաբականների հետ պայմանավորվելու" հնարավորության մասին՝ վկայակոչելով Եգիպտոսի օրինակը, որին, թեեւ թանկ գնով, այդ հաջողվել էր իրականացնել: Ներկա իրադրությունում խոսքն, ամենեւին էլ, մեկանգամյա գործողության (պատանդներ հափշտակելու եւ այլն) մասին չէ, երբ մարդկանց փրկելու համար պաշտոնական իշխանությունները երբեմն հարկադրված են լինում բառացիորեն երկխոսության մեջ մտնել հանցագործների հետ (այսօր հենց այդպիսիք են դաշնային կենտրոնի դեմ ռազմական գործողություններ վարող՝ ուղղության իրական կամ կարծեցյալ հետեւորդները): Եվ երբ որ երեւույթը մեծ չափերի է հասնում, ապա եթե անգամ թույլատրելի է խոսել որեւէ "պայմանավորվածության" հնարավորության մասին, ապա դա պետք է կայանա միայն լեգիտիմ եւ լեգալ իշխանության հետ, ումից կարելի է պահանջել՝ չխախտել դրա դրույթները: Սակայն այս դեպքում չհաղթված բոլոր երկրների (իսկ դրանց թիվը կածի) քաղաքական շրջանակները դեռեւս ստիպված կլինեն միավորել իրենց ուժերն ու չանքերը՝ վահհաբականությունն իր պատմական հայրենիքը վերադարձնելու համար: ■

Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը՝ Անդրկովկասում ապակայունության գործոն

Հակոբ Չաքրյան

Պատմագիտության թեկնածու

Քանի դեռ Հայաստանը ԽՍՀՄ կազմում էր, խորհրդային բանակն ապահովում էր նրա ազգային անվտանգությունը: Սակայն, անկախություն ձեռք բերելուց հետո, նրա առջեւ ծառացավ իր անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու կենսական խնդիրը: Այդ առումով "բարիդրացիական հարաբերությունների կարգավորումն անխտիր բոլոր հարեւանների՝ այդ թվում Թուրքիայի հետ" սկզբունքորեն ճիշտ որոշում էր: Թվում էր, թե նորանկախ Հայաստանի ղեկավարությունը դրանով փորձում է քաղաքական ուղիով լուծել ազգային անվտանգության խնդիրը:

Մինչդեռ Թուրքիան Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու եւ Ադրբեջանը որպես ցատկահարթակ օգտագործելու միջոցով Միջին Ասիա ներթափանցելու խնդիրն ուներ՝ հնարավորության դեպքում թյուրքալեզու հանրապետությունների տնտեսական, քաղաքական եւ մշակութային միություն ձեւավորելու հեռահար նպատակով: Ուստի, Հայաստանն իր գոյությամբ նրա երկարաժամկետ շահերի խոչընդոտ համարվեց: Դրա վառ արտահայտությունը՝ Հայաստանին Սուլեյման Դեմիրելի տված բնութագրումն էր՝ "անիծյալ սեպ"[1]:

Հատկանշական է, որ պանթյուրքիզմի հիմնադիրներից Յուսուֆ Աքչուրան էլ Հայաստանը նույնացնում էր "թմբի" հետ: 1920 թ. հունվարի 29-ին Աքչուրան, Ստամբուլի համալսարանում ներկաներին դիմելիս, պատճառաբանելով, թե դաշնակիցները նրան ուզում են իբրեւ թումբ կանգնեցնել երկու եղբայր հատվածների՝ Անատոլիայի եւ Կովկասի թրքության միջեւ, հետեւյալ կոչն էր անում. "Պետք է ոչնչացնել Հայաստանը"[2]:

Երբ խոսքը "թրքության եղբայր հատվածներին" է վերաբերում, ապա "թումբը" չի կարող տարբերվել "անիծյալ սեպից": Ուրեմն, Հայաստանի հարցում Դեմիրելի դիրքորոշումը չպետք է տարբերվեր Աքչուրայի դիրքորոշումից: Հարցը, սակայն, սոսկ ադրբեջանցիներից թուրքերի անջրպետումը չէ, այլ Անդրկովկասը Ռուսաստանից տարանջատելու ամերիկյան ծրագրերն են ու դրանց ծառայելու Թուրքիայի պատրաստակամությունը: Քանի որ Հայաստանն իր գոյությամբ հակասում է թյուրքալեզու ժողովուրդների միավորման՝ Թուրքիայի տրամաբանությանը, նրա չեզոքացումը հրամայական էր դառնում Թուրքիայի համար, եւ այդ հրամայականը, որպես առաջնային խնդիր, ինքնաբերաբար հայտնվում էր պաշտոնական Անկարայի օրակարգում:

Այս ամենը, սակայն, անտեսվեց հայկական իշխանությունների կողմից, որոնք, տեղի տալով ԱՄՆ-ի տրամադրություններին՝ ակամա նպաստեցին տարածաշրջանում նրա լիազոր ներկայացուցիչ Թուրքիայի հետ Հայաստանի միջպետական կապերի նշանակության անտեղի գերագնահատմանը: Ավելին, կառավարող շրջանակների որոշ հայ գործիչներ սկսեցին հանդես գալ "Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու եւ գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշվելու" պահանջով[3]:

Թեեւ այս միտումը զարգացում չստացավ, սակայն նախադրյալներ ստեղծեց, որպեսզի Թուրքիան անտեսի Հայաստան-Ռուսաստան դաշինքի հավանականությունը եւ իր հերթին թերագնահատի հայկական գործոնի նշանակությունը Անդրկովկասում: Ահա թե ինչու թուրքական կառավարությունը, ճանաչելով հանդերձ Հայաստանի անկախությունը, հրաժարվեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել նրա հետ: Մերժման պատճառաբանությունը զուգակցվում էր այդպիսիք հաստատելու հետեւյալ նախապայմաններով. չհիշատակել 1915 թ. ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը եւ ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Միաժամանակ պահանջվում էր երաշխիքներով ամրակայված հավաստիացում, որ Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի ազգային արժանապատվությունը վիրավորող գործողություններից եւ ամեն կերպ կչեզոքացնի հայկական լոբբիի "հակաթուրքական" գործունեությունը Սփյուռքում:[4]

Դիվանագիտական հարաբերությունների համար նախապայմանների առաջադրումն անհարիր է միջազգային պրակտիկային: Սակայն Թուրքիան, ինչպես այդ մասին վկայում է Սեդաթ Էրգինը "Հյուրրիեթի" 1991 թ. նոյեմբերի 15-ի համարում, "Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու կարիքը" չուներ: Ըստ ամենայնի, նա այդ նախապայմաններով փորձում էր Հայաստանը դարձնել կամակատար, եւ նրա միջոցով իր կամքը թելադրել Ղարաբաղի հայությանն ու հայկական Սփյուռքին:

1992 թ. փետրվարին ղարաբաղյան ուժերը չեզոքացրին Լեռնային Ղարաբաղում ադրբեջանցիների կարեւոր հենակետերից Խոջալուն: Դրան հետեւեց Շուշիի ազատագրումն ու Լաչինի միջանցքի բացումը: Թուրքական կառավարությունն արձագանքեց՝ հրահրելով համատարած հակահայկական հիստերիա: 1992 թ. մարտին նախագահ Թուրգութ Օզալն իր կառավարությունից պահանջեց հայերի "ոճրագործություններ" դեմ վճռական քայլերի դիմել: Այնուհետեւ նա սպառնաց "թուրքական ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը"[5]: 1993-ին, Քելբաջարի գրավումից հետո, Օզալը, ակնարկելով 1915 թ. Ցեղասպանությունը, հայտարա-

րեց, թե հայերը "դասեր չեն քաղել Անատոլիայի փորձությունից եւ այնտեղ կրած պատժից"[6]: Նա նույնիսկ "Հայաստանի վրա մեկ-երկու ռումբ արձակելու" թույլտվության ակնկալիքով դիմեց ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնին[7]:

Օգալի ռազմաչունչ հայտարարություններին զուգընթաց Անկարայի պաշտոնական շրջանակները քննարկում էին Հայաստանի նկատմամբ "կիպրոսյան տարբերակի" կիրառումը: Այդ ընթացքում համալրվեցին Հայաստանի սահմանին տեղակայված եւ մարտական պատրաստականության բերված թուրքական զորքերը: Հայաստանը կանգնեց Թուրքիայի ռազմական ներխուժման լուրջ վտանգի հանդիման:[8] Միաժամանակ, երկրում աշխուժացան թուրք ազգայնամոլները: "Ազերի եղբայրներին օգնության ձեռք մեկնելու" կարգախոսով "գորշ գայլերը" զենքի կոչեցին "զգոն թուրքերին": "Գերչեք" շաբաթաթերթի տվյալներով՝ մինչեւ 1992 թ. հունիսը Նախիջեւանի եւ Ադրբեջանի տարածքում տեղակայված էր շուրջ 3 հազար թուրք կամավորական:[9] Ինչ վերաբերում է թուրքական կառավարությանը, ապա նա, դեղորայքի եւ պարենամթերքի քողի տակ, արդեն հասցրել էր ադրբեջանցիներին զենք եւ զինամթերք տրամադրել, այդ թվում՝ 5 հազար "Ստինգեր" տեսակի հրթիռներ, հրթիռային կայանք, ականներ եւ ականանետեր[10]: 1993-ին Թուրքիան պաշտոնապես Ադրբեջանին 30 մլն դոլարի վարկ հատկացրեց՝ զենք գնելու համար:[11] Փաստորեն, նա դարձավ ղարաբաղյան հակամարտության անմիջական մասնակիցը՝ նաեւ իր անուղղակի մասնակցությունը բերելով Լեռնային Ղարաբաղում ծավալվող ռազմական գործողություններին:

Հաշվի առնելով թուրքական ագրեսիայի հնարավոր հետեւանքները ոչ միայն Հայաստանի, այլեւ ամբողջ Անդրկովկասի համար՝ Ռուսաստանը ճնշում գործադրեց Թուրքիայի վրա: Ռուսական զինված ուժերի զինավոր շտաբի պետ մարշալ Շապոշնիկովը լրջորեն զգուշացրեց Թուրքիային, որից հետո վերջինս այլեւս չհամարձակվեց Հայաստան ներխուժել: Դրա շնորհիվ Հայաստանը ոչ միայն խուսափեց մոտալուտ ագրեսիայից, այլեւ Լեռնային Ղարաբաղին օգնության ձեռք մեկնելու հնարավորություն ստացավ: Ղարաբաղյան ուժերը տապավորիչ հաղթանակների հասան ադրբեջանցիների նկատմամբ: Այսպիսով, ի չիք դարձան հակամարտության գոտում Թուրքիայի աջակցությամբ ռազմական հավասարակշռությունը փոխելու Ադրբեջանի հույսերը: Ավելին, 1992-ին ազատագրված Լեռնային Ղարաբաղը հռչակվեց Հանրապետություն: 1993-ին ԼՂՀ պաշտպանության բանակը Ադրբեջանին պատճառելով տարածքային կորուստներ՝ իր վերահսկողության տակ առավ մինչեւ Հորադիզ ընկած տարածքը: Զանգեզուրի գոտին ամրապնդվեց: Դրանով իսկ, փաստորեն, տապալվեց Գոբլի տխրահռչակ ծրագիրը:[12]

Այս ամենը Ադրբեջանին ստիպեց Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում ստորագրել 1994 թ. մայիսի 12-ի հրադադարի պայմանագիրը: Հատկանշական է, որ եթե ԼՂՀ պաշտպանության բանակի հաղթական գործողությունները հանգեցրին Ադրբեջանում թուրքիայի դիրքերի թուլացմանը, ապա հրադադարի պայմանագիրը նպաստեց, որպեսզի Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման նախաձեռնությունն անցնի Ռուսաստանին: Փաստորեն, կասկածի տակ դրվեցին թուրքական գործոնի՝ Անդրկովկասում Ռուսաստանի ազդեցությունը հակակշռելու եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում որոշիչ դեր խաղալու հնարավորությունները:[13]

Ղարաբաղյան ճակատում Թուրքիայի քաղաքական ձախողումն ակնհայտ էր: Ինչ վերաբերում է Հայաստանյան ճակատին, ապա նա իր ագրեսիվ կեցվածքով նպաստեց ղարաբաղյան շարժման սկզբնական փուլում (1988-1991 թթ.) Խորհրդային Միության ղեկավարների կողմից Ադրբեջանին ցուցադրվող քաղաքական, դիտական եւ ռազմական աջակցության պայմաններում հայ հասարակության մեջ առաջացած հակառուսական տրամադրությունների վերացմանը: Թուրքական սպառնալիքը հայ ժողովրդի ենթագիտակցության մեջ վերստին ամրապնդեց առանց Ռուսաստանի հետ սերտ դաշինքի Թուրքիայի հարեւանության հետ գոյատեւելու անհնարինության գաղափարը: Վերջինիս նկատմամբ անվստահությունը Հայաստանում համատարած բնույթ ստացավ: Հայաստանին Թուրքիայով միջնորդավորված արեւմտյան կողմնորոշում պարտադրելու հավանականությունը հավասարվեց զրոյի:

Քանի որ Թուրքիայի ներխուժման կասեցումը դեռեւս թուրքական վտանգի չեզոքացում չէր, եւ վերջինս, միանալով Ադրբեջանին, շրջափակման էր ենթարկել Հայաստանը, ուստի հայկական իշխանությունները հարկադրված էին բոլոր հարեւանների հետ "բարիդրացիական հարաբերություններ" պահպանելուց զատ, ազգային անվտանգության ապահովման այլ լուծումներ գտնել: Ստեղծված ծանր վիճակում նրանք իրենց հայացքն ուղղեցին դեպի Ռուսաստան: Դա, հայ-ռուսական բարեկամության ավանդույթից բացի, թելադրված էր նաեւ երկու երկրների ռազմավարական շահերի ընդհանրության գիտակցությամբ: 1995 թ. մարտի 16-ին Հայաստանը Ռուսաստանի հետ ստորագրեց համատեղ պաշտպանության վերաբերյալ պայմանագիր եւ իր տարածքում նրան տրամադրեց ռազմական բազա: Դրան հետեւեց 1997 թ. օգոստոսի 27-ի երկու երկրների "Բարեկամության, համագործակցության եւ փոխօգնության" պայմանագրի ստորագրումը: Ինչպես եւ նախատեսվում էր այդ պայմանագրով, այդուհետեւ երկու կողմերը սկսեցին սերտորեն համագործակցել ռազմական եւ ռազմավարական բնագավառներում:

Ռուսաստանի հետ զինակցության շնորհիվ Հայաստանի ազգային անվտանգությունը դրվեց հուսալի հիմքերի վրա: Ռուսաստանն, իր հերթին, հանձինս Հայաստանի, Անդրկովկասում ռազմաքաղաքական հենարան ձեռք բերեց: Զախողվեցին նրան այդ տարածքից դուրս

մղելու ԱՄՆ-ի ծրագրերը, ինչպես նաեւ Թուրքիայի՝ այդ ծրագրերից բխող քաղաքական հաշվարկները: Այլ կերպ ասած, Հայաստանը դարձավ Անդրկովկասում Ռուսաստանի ներկայության ազդեցիկ գործոն: Ինչ վերաբերում է հայ-ռուսական համագործակցությանը, ապա դա, Հայաստանին թուրքական ճնշմանը դիմագրավելու հնարավորություն տալով, միաժամանակ նրան դարձնում էր գործոն նաեւ Թուրքիայի համար: Այն տարբերությամբ, որ եթե Ռուսաստանի պարագայում հայկական գործոնն ուներ կառուցողական գործառույթ, ապա Թուրքիայի համար այն ստանում էր կանխարգելիչ, զսպող նշանակություն: Ահա՛ թե ինչու Թուրքիան, ռազմական եւ ռազմավարական բնագավառներում համագործակցելով հանդերձ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Վրաստանի հետ, չի կարողանում Անդրկովկասում ազդեցիկ դիրքեր նվաճել, առավել եւս, այդ տարածքը վերածել իր ազդեցության ոլորտի:

Վատահաբար կարելի է ասել, որ Թուրքիան ձախողվեց նաեւ Հայաստանյան ճակատում: Չնայած նրա ընդգծված հակահայկական դիրքորոշմանը, ներխուժման սպառնալիքներին եւ մշտական ճնշումներին, Հայաստանը կարողացավ պահպանել իր ազգային անվտանգությունը եւ սատարել Ղարաբաղի հայությանը՝ Ադրբեջանի դեմ նրա ազգային-ազատագրական պայքարում: Կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ձեռք բերելով փաստացի անկախ կարգավիճակ: Ավելին, Հայաստանը շարունակում է հաջողությամբ պաշտպանել ԼՂՀ-ի, իսկ 1915 թ. Հայոց ցեղասպանության հարցը բարձրացրել է պետական քաղաքականության մակարդակի: Ամրապնդվում են նրա կապերը տարածաշրջանի երկրների՝ Սիրիայի, Լիբանանի, Իրանի, ինչու չէ, նաեւ Հեռավոր Չինաստանի հետ: Հայաստանը Իրանի համար եւս դարձել է լուրջ գործոն եւ մեծ նշանակություն է ձեռք բերել՝ նպաստելով Անդրկովկասում նրա ազդեցության պահպանմանը: Այս ամենը վկայում է, որ Թուրքիայի որդեգրած հակահայկական քաղաքականությունը չի նպաստում նաեւ Մերձավոր եւ Միջին Արեւելքում նրա դիրքերի ամրապնդմանը: Մինչդեռ Թուրքիան տարածաշրջանային ազդեցիկ քաղաքական ուժի հավակնություններ ունի: Բնականաբար այստեղ նրա դերն անհամեմատ մեծ է, քան Հայաստանինը, իսկ չահերը՝ ավելի քան բազմակողմանի:

Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը բխում է Թուրքիայի չահերից: Ուրեմն, առաջին հերթին դա Թուրքիային է անհրաժեշտ, եւ ոչ թե՝ Հայաստանին: Թուրքիան դրանով իր արեւելյան սահմանում ձեռք կբերի ոչ-անբարյացակամ հարեւան, միաժամանակ՝ նոր շուկա իր ապրանքների համար: Զգալի կնվազի նրա առճակատման հավանականությունը Հայաստանի ռազմաքաղաքական դաշնակցի՝ Ռուսաստանի հետ: Հայ-ռուսական զինակցությունը այլեւս նրան չի անհանգստացնի, իսկ Հայաստանը, որպես ազգային անվտանգության ապահովման միջոց, կձերբազատվի թուրքական սահմանի պաշտպանվածության մակարդակը մշտապես բարձրացնելու պարտադրությունից: Այսպիսով կվերանա Հայաստանի տարածքում տեղակայված ռուսական բազան արդիական ռազմական նոր տեխնիկայով հագեցնելու անհրաժեշտությունը: Բացի այդ, Թուրքիան հայկական գործոնին բախվելու փոխարեն կհամագործակցի Հայաստանի հետ: Արդյունքում երկու երկրների հարաբերությունները դուրս կբերվեն ազդեցության գոտիների համար Անդրկովկասում ծավալվող ռուս-ամերիկյան մրցապայքարի ոլորտից: Եվ վերջապես Թուրքիայի համար ոչ վաղ անցյալում Ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի՝ իր հանդեպ անվստահությունը մեղմելու նախադրյալներ կստեղծվեն:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումն ինքնաբերաբար Հայաստանի համար կնվազեցնի թուրքական վտանգը: Ուստի կփոքրանա նաեւ ռուս-հայկական դաշինքի դերը՝ թուրքական վտանգը չեզոքացնելու առումով: Այս պայմաններում Հայաստանն իր արտաքին քաղաքականության մեջ անկաշկանդ գործելու լայն հնարավորություններ ձեռք կբերի: Դրանով իսկ, թերեւս, Անդրկովկասում կթուլանա հանրապետությունների բեւեռացումը: Տարածաշրջանում կստեղծվեն երկարաժամկետ խաղաղության եւ կայունության անհրաժեշտ նախադրյալներ: Միայն թե անհրաժեշտ է, որ Թուրքիան առաջնորդվի տարածաշրջանի չահերով, բարի կամք դրսեւորի եւ հրաժարվի Հայաստանի նկատմամբ իր որդեգրած թշնամական քաղաքականությունից: ■

ՏԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Московские новости", 1992, N39, տես նաեւ "Ազգ", 26 սեպտեմբերի, 1992:
2. Զարեվանդ. Միացյալ անկախ Թուրանիա, Եր., 1993, էջ 119:
3. Ն. Հովհաննիսյան. Մերձավորարեւելյան տարածաշրջանը եւ Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը. - «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Եր., 1996, թիվ 16, էջ 14:
4. Հ. Զաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998, էջ 14-15:
5. «Hürriyet», 5 mart, 1992; 6. Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 16:
7. «Hürriyet», 23 kasım, 1993; 8. ibid, 2 Eylul, 1993.
9. «Gerçek», Haftalık Haber Dergisi, v/1, Sayı : 13, 14 Haziran 1992, s. 12; 10. ibid. s.10.
11. «Hürriyet», 23 aralık, 1993:
12. Հ. Զաքրյան, նշվ. աշխ., էջ 31-32:
13. Նույն տեղում, էջ 33:

ԵՊՀ - 80

ՆՎԻՐՎՈՒՄ Է ԵՊՀ ԲՈՒՆԱԴԱՏՎԱԾ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՌՆԱԽՆԴՈՒՄՆԵՐԸ

Արմենակ Մանուկյան
Պատմագիտության թեկնածու

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում "վերելք ապրող" ստալինյան բռնութիւններն իրենց շրջապտույտի մեջ առան նաեւ Հայաստանի մոտ 18 հազար բնակիչների, որոնց թվում էին ճանաչված մտավորականներ՝ գիտնականներ, ԲՈՒՀ-երի դասախոսներ, գրականության եւ մշակույթի գործիչներ:

Հարկ է նշել, որ Հայաստանում բռնադատվածների վերոնշյալ թվաքանակը համարում ենք առավել ստույգ, քանի որ այն ճշգրտվել է ՀՀ Ազգային անվտանգության նախարարության արխիվի՝ կարճված գործերի փոնդի ուսումնասիրության արդյունքների հիման վրա, իսկ ավելի հավաստի եւ ամփոփ տվյալներ մեր հանրապետության այլ արխիվներում չկան:

Որոշ մասնագետներ, իսկ առավել շատ՝ "սիրողներ" երբեմն կասկածի են առնում այդ տվյալը, թե բռնադատվածների թվաքանակը պետք է որ շատ ավելի մեծ եղած լինի: Դա առավելապես բացատրելի է զգացմունքային մոտեցումներով, քանի որ ժողովրդի մեջ տարածված ահ ու սարսափի ազդեցությունը պահպանվել է երկար տարիներ: Սակայն չմոռանանք, որ 1930 թ. Հայաստանի ազգաբնակչությունը կազմում էր 999,3 հազար մարդ[1], եւ նշված 18 հազար բռնադատվածները խիստ զգալի կորուստ էին նրա աշխատունակ բնակչության համար: Իմիջիայլոց, նշենք, որ վերջերս հրապարակված որոշ տվյալներով՝ բազմամիլիոնանոց ԽՍՀՄ-ում 1930-37 թթ. բռնադատվել է 1,4 մլն. մարդ[2]: Ընդ որում բռնութիւններն, այս կամ այն կերպ, իրենց բացասական հետեւանքներն էին ունենում բռնադատվածների հարազատների, ընկերների, հարեւանների, գործընկերների, մի խոսքով՝ շրջապատի վրա: Ուստի ակնհայտ է, թե ինչ զանգված էր ընդգրկում այդ տարիների ողբերգությունը: Կատարվածի հասարակական նշանակությունն ավելի էր ծանրանում, քանզի անմիջականորեն վերաբերում էր նաեւ հանրապետության մտավորականության սերուցքի զգալի մասին: Վերոնշյալ արխիվի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 30-ականներին բռնադատվածների մեջ մտավորականության թվաքանակն անցնում էր 500-ից (98 գիտնական եւ ստեղծագործող մտավորականության ներկայացուցիչ, 220 մանկավարժ, 77 բժիշկ եւ այլն):

Դեռ 1929 թ., երբ Մոսկվայում ձերբակալվեց պատմաբանների մի խումբ, ջարդ սկսվեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Համակարգում: 1933 թ. տեղի ունեցավ էներգետիկայի համակարգի "վնասարարների եւ լրտեսների" դատավարությունը, իսկ 1934 թ. դեկտեմբերի 1-ին, Կիրովի սպանությունից հետո, ծայր առան "մաքուր" քաղաքական դատավարությունները:

Հայտնի է, որ XIX դ. վերջի եւ XX-ի սկզբների պատմական դաժան հարվածներից հետո՝ 20-30-ական թվականներին որոշակի դրական տեղաշարժեր էին նկատվում Հայաստանի կրթության, գիտության, արվեստի եւ գրականության բնագավառներում: Այդ տարիներին դրվում է գիտության զարգացման, գիտական հիմնարկների կազմակերպման սկիզբը: Այսպես, 1929 թ-ից ստեղծվում են գիտահետազոտական ինքնուրույն հիմնարկներ, եւ արդեն 1933 թ. դրանց թիվը հասնում է 39-ի: Հիմնադրվել եւ հաջողությամբ գործում էին բարձրագույն ուսումնական մի քանի հաստատություններ եւ այլն[3]:

Ընդհանուր առաջընթացի այդ պատկերը չէին կարող չխաթարել 30-ականներին ավելի քան 500 մտավորականների նկատմամբ գործադրված բռնութիւնները:

Այստեղ տեղին է հիշել այն դրական դերը, որ ունեցել են Հայաստանի ղեկավարներ Ալ. Մյասնիկյանը եւ Ա. Խանջյանը Հայ մտավորականության նկատմամբ իրենց հոգածու վերաբերմունքով եւ իրական աջակցությամբ: Մասնավորապես, Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ 20-ականների սկզբներին Հայաստան էին հրավիրվել գիտության եւ արվեստի շատ գործիչներ, որոնք այդ բնագավառների հետագա զարգացման երախտավորները դարձան: Հատկանշական է, որ իշխանությունների կողմից Խանջյանին հետմահու ներկայացված մեղադրանքներում բազմիցս նշվում էր, որ նա հովանավորել է "ազգայնամոլ", այսինքն՝ ազգային նկարագիր ունեցող մտավորականներին:

Դա մի անգամ եւս հաստատվում է այն իրողությամբ, որ նրա ղեկավարության տարիներին Հայաստանում չեն եղել մտավորականության այնպիսի զանգվածային հալածանքներ, որոնք իրագործվում էին Ռուսաստանում եւ ԽՍՀՄ-ի մի շարք այլ Հանրապետություններում: Իր եղերական մահից առաջ (1936 թ. Հուլիսի 9-ին), չնայած ճնշումներին, Ա. Խանջյանը երկար ժամանակ համաձայնություն չի տվել Հայտնի Հասարակական-քաղաքական գործիչ, գիտնական Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությանը, որին, այնուամենայնիվ, ՆԳԺԿ մարմինները կալանավորեցին 1936 թ. մայիսի վերջերին:

Ն. Ստեփանյանի ձերբակալությունը եւ Ա. Խանջյանի "ինքնասպանությունը", ինչպես 1934 թ. դեկտեմբերին Կիրովի սպանությունը ամբողջ ԽՍՀՄ-ի համար, Հայաստանում զանգվածային հալածանքների ազդանշան դարձան, որոնք կլանեցին նաեւ Հայ մտավորականության ընտրանիի

զգալի թվով ներկայացուցիչների:

30-ական թվականների ստալինյան բռնությունների իրական պատկերը բացահայտելու առումով առանձնակի կարեւորություն ունեն Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, Երեւանի պետհամալսարանի եւ մանկավարժական ինստիտուտի դասախոս Ներսիկ Ստեփանյանի դեմ դատական բազմահատոր գործի նյութերը[4]: Դրա վկայությունն է հետեւյալ հանգամանքը. նրա հետ "Հանցագործ կապերի" մեջ լինելու մեղադրանքին հանդիպում ենք 1939-38 թթ. դատապարտված գրեթե բոլոր հասարակական-քաղաքական գործիչների, գիտության, գրականության եւ արվեստի ներկայացուցիչների գործերում: Դրանք, որպես կանոն, սկսվում են այսպիսի նախադասություններով. "...ՆԳԺԿ մարմինների կողմից Հայաստանում բացահայտվել եւ վերացվել է հակահեղափոխական, ազգայնամոլական կազմակերպություն, որը նպատակադրել էր Խորհրդային իշխանության զինված տապալումը, Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից եւ, այսպես անվանված "անկախ" ազգային-բուրժուական հայկական պետության ստեղծումը՝ կապիտալիստական պետություններից մեկի հովանավորության տակ:

Հակահեղափոխական գործունեություն ծավալելու համար, ազգայնամոլական կազմակերպությունը հակահեղափոխական խումբ է կազմակերպել Պետհամալսարանի դասախոսների եւ գրողների մեջ...", եւ այլն:

Պարզաբանենք, որ ըստ ՆԳԺԿ-ի "տվյալների", Ն. Ստեփանյանը վերոնշյալ "հակահեղափոխական, ազգայնամոլական" շարժման առաջնորդն էր համարվում: Նա, իբրեւ թե, իր "գործունեության" մեջ էր ներգրավել Ե. Զարենցին, Ա.Բակունցին, Դր. Տեր-Սիմոնյանին, Վ.Ալազանին եւ շատ ուրիշների:

Այնուհետեւ գիտնականների, գրականության եւ մշակույթի գործիչների մեղադրանքներում նշվում էին "հակահեղափոխական կոնկրետ գործունեության փաստերը", այն է՝ նախկինում դաշնակցություն, ռամկավար, հնչակյան կուսակցություններ անդամ կամ նրանց հարող լինելը, "լրտեսությամբ", "հակախորհրդային քարոզչությամբ" զբաղվելը եւ այլն: Վերջին մեղադրանքը, որպես կանոն, ուներ հետեւյալ ձեւակերպումը, թե մեղադրյալը չի հավատացել Ա. Խանջյանի ինքնասպանություն կատարելու պաշտոնական հայտարարությանը եւ սադրիչ լուրեր է տարածել նրա՝ Թբիլիսիում սպանված լինելու մասին: Հաճախադեպ էր նաեւ Ա. Խանջյանի եւ Ս. Տեր-Գաբրիելյանի գլխավորած "հակահեղափոխական, ազգայնամոլական" շարժմանը մասնակցելու մեղադրանքը: Իսկ, ինչպես վկայում են բազմաթիվ փաստաթղթերը, իշխանության մարմինները, Ա. Խանջյանին հետմահու վերագրված "Հանցագործությունների" գլխավորներից մեկը համարում էին Ն. Ստեփանյանին հովանավորելը եւ, դրանով իսկ, նրա եւ ուրիշ "հակահեղափոխականների" բացահայտմանը խանգարելը:

Այսպիսով, ակնհայտ է, թե ինչպես է ստացվել Ն. Ստեփանյանի ձերբակալության համաձայնությունը, որը տրվել է ՀԿ/բ/Կ բյուրոյի կողմից՝ 1936 թ. մայիսի 26-ին:

Հակիրճ ներկայացնենք 1898 թ. Դանձակում ծնված Ն. Ստեփանյանի կենսագրությունը: Նա 1917 թ-ից եղել է Համկ/բ/կ անդամ, ՀԿ/բ/Կ ԿԿ անդամ, 1920 թ. հուլիսին ձերբակալվել է դաշնակցական իշխանությունների կողմից եւ մահվան դատապարտվել, ինչը հետագայում փոխվել է 10 տարի ազատազրկման: Պրոֆեսոր Ն. Ստեփանյանն իր աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանը, դասավանդել Երեւանի պետհամալսարանում եւ մանկավարժական ինստիտուտում, 1933 թ-ից եղել է Հայաստանի լուսավորության նախարարը, միաժամանակ՝ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ռեկտորը[5]:

Այժմ ծանոթանանք Ն. Ստեփանյանի մեղադրական եզրակացության մեջ նրան վերագրված կոնկրետ մեղադրանքներին, որոնք, ըստ էության, որոշ խմբագրական փոփոխություններով, տրվել են Հայաստանի գիտության եւ մշակույթի 1936-38 թթ. բռնադատված գործիչներին: Այսպես.

"1. Եղել է հակահեղափոխական, տրոցկիստական, ահաբեկչական կազմակերպության մասնակից, որը 1934 թ. դեկտեմբերի 1-ին չարագործորեն իրագործել է ընկ. Ս.Մ. Կիրովի սպանությունը եւ ահաբեկչական ակտեր նախապատրաստել Համկ/բ/կ-ի եւ Խորհրդային իշխանության ղեկավարների դեմ:

2. Մտել է Հայաստանի տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության Կենտրոնի կազմի մեջ, որն իր առջեւ խնդիր էր դրել ահաբեկչություն իրագործել ընկ. Ստալինի նկատմամբ եւ ահաբեկչություն էր նախապատրաստում ընկ. Լ.Բերիայի նկատմամբ:

3. 1932 թ. Հայաստանում կազմակերպել է տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպություն, որի մեջ ընդգրկել է մի շարք մարդկանց, որոնք պատասխանատվության են կանչված այս եւ ուրիշ գործերով"[6]:

1937 թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիան Ն. Ստեփանյանին դատապարտում է գնդակահարության, իսկ նույն դատական մարմինը 1956 թ. օգոստոսի 25-ին նրան արդարացնում է՝ հանցակազմի բացակայության պատճառով կարճելով գործը:

Զարմանալի չէ, որ Ա. Խանջյանի թաղման օրը՝ 1936 թ. հուլիսի 12-ին կայացած Հայաստանի կուսակտիվի ժողովում, բացի Ա. Խանջյանի "դավաճանական արարքը" եւ "հակահեղափոխական, ազգայնամոլական վարքագիծը" քննադատելուց, բազմաթիվ հռետորներ, այդ թվում եւ հիմնական զեկուցող՝ Համկ/բ/Կ Անդրերկրկոմի քարտուղար Կուդրյավցեւը, հատուկ ուշադրություն էին դարձնում ձերբակալված Ներսիկ Ստեփանյանի անձի եւ "հակահեղափոխական, ազ-գայնամոլական գործու-

նեութեան" վրա[7]:

Այսպես, իր ծավալուն ելոյթում Կուդրյավցեւը նշում էր. "Ջերքակալութեան ընթացքում կատարված խուզարկութեան ժամանակ Ստեփանյանի մոտ հայտնաբերվել են նրա թունդ-հակահեղափոխական բովանդակութեան գրառումները: Թղթապանակում, որի վրա գրված էր "ազգային հարց" կան Ստեփանյանի հետեւյալ գրառումները. "Հայաստանը գտնվում է կախյալ երկրի վիճակում", "Ես ձեզ մեղադրում եմ հայ ժողովրդի սպանութեան եւ թալանի մեջ", "մերկացնել վրացական չովինիստական քաղաքականութեյունը, որը ճգճգում է Դիլիջանի եւ Օսեթական ճանապարհների շինարարութեյունը" եւ այլն: Այնուհետեւ, մեջ է բերվում նաեւ համարձակ եւ լայնախոհ մտավորականի հետեւյալ գրառումը. "Բուն կոմունիստական երիտասարդութեյան մեջ ահաբեկչութեյան առաջացման քաղաքական եւ բարոյական պատասխանատվութեյունն ընկած է Ստալինի վրա: Կոմունիստական երիտասարդութեյան մեջ ահաբեկչական միտումների առկայութեյունը դա այն առավել հիվանդագին նշաններից է, որ բոնապարտիզմը սպառել է իր քաղաքական հնարավորութեյունները, սկսվել է ամենադաժան պայքարը գոյութեյան համար" եւ այլն[8]:

Նույն ոգով էին ժողովում հնչած բոլոր ելոյթները, սակայն կառանձնացնենք Աբգար Մովսեսյանինը, որը տխուր մատնագիր է հիշեցնում: Ինչպես ակնհայտ է նրա ելոյթից, Ն. Ստեփանյանը Լուսժողկոմատը ղեկավարելիս "նեղել է" Աբգարյանին, մասնավորապես, խիստ քննադատել է "Կուլտ ֆրոնտում" տպագրված մի հոդվածի համար, որտեղ բացասական կարծիք էր հայտնվել "...աշխարհագրագետ, նախկին դաշնակցական Հնայրապետ Հովհաննիսյանի գրքի առթիվ": Շատ դիպուկ են հնչում Ներսիկ Ստեփանյանի՝ նրա երեսին շպրտած բառերը. "Դուք մարդակերներ եք, դուք չգիտեք ծնել, բայց մեռցնել կարող եք, Հայրապետ Հովհաննիսյանի նման քանի՞ մասնագետ ունեք, որ հարվածում եք նրան..."[9]:

Ավելացնենք, որ այդ "պատմական" ժողովի մասնակիցների ճնշող մեծամասնութեյունը եւս (106-ից՝ 71-ը), չնայած տիրահաճո ելոյթներին, մեկ տարի անց հնթարկվեց բռնութեյունների[10]:

Այս ամենն ակամա հիշեցնում է Համկ/բ/կ 17-րդ համագումարի 1225 մասնակիցների ճակատագիրը, որոնցից 1108-ը ձերբակալվեց, եւ շատերն էլ գնդակահարվեցին[11]:

Ահա, այսպիսին էր բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որ տիրում էր Հայաստանում, մասնավորապես, հասարակական-քաղաքական շերտերում եւ մտավորականութեյան շրջանում:

Իրավիճակն առավել ամբողջական պատկերացնելու համար ավելորդ չէ բերել հետեւյալ երկու օրինակները: Այսպես, 1931 թ. "Նոր ուղիում" կարդում ենք. "...Հայաստանի ինտելիգենցիայի որոշ մասը՝ հանձինս հին եւ նոր պրոֆեսուրայի մի քանի ներկայացուցիչների, ուղղակի ռեակցիոն, ըստ էութեյան կոնդրատեւյան, բացահայտ նացիոնալիստա-բուրժուական արշավ է սկսել մարքսիզմ-լենինիզմի դեմ: Այսպիսով, դասակարգային պայքարի սրումը, դասակարգային թշնամու իդեոլոգիայի դիմադրութեյունն իր անդրադարձումը գտնում է եւ չէր կարող չգտնել նաեւ ԲՈՒՀ-երում", ապա նշվում են գիտնականների կոնկրետ անուններ՝ Ա. Տերտերյան, Մ. Աբեղյան, Հր. Աճառյան եւ այլն[12]:

Իսկ 1937 թ. "Ավանգարդում" եւ այլ պարբերականներում արդեն հանդիպում ենք "Մինչեւ վերջ ոչնչացնել թունավոր խժերին", "Մաքրել Համալսարանը թշնամական տարրերից" եւ նման վերնագրերով հոդվածներ՝ գրված հայտնի եւ անհայտ մտավորականների կողմից: Հոդվածների հեղինակների անունը չենք տալիս, քանի որ, կամա թե ակամա, նրանց թիվը, ցավոք, մեծ էր: Անուններից ավելի, էականը այստեղ սարսափի այն տիրապետող մթնոլորտն էր, որ եղծում էր նրանց նկարագիրը: Հատկանշական է, որ իրադրութեյունը 1931-ին եւ 1937-ին նույնական էր եւ կրկնվում էր: 30-ական թվականներին Հայաստանի գիտական ներուժին մյուս զգալի հարվածը, այսպես կոչված, "պրոֆեսորների գործն" էր, որի նյութերով 1939 թ. սեպտեմբերի 7-ին Անդրկովկասի Զինվորական օկրուգի Զինվորական Տրիբունալի շրջիկ նստաշրջանը գնդակահարութեյան եւ տարբեր ժամկետներով ազատազրկման դատավճիռ կայացրեց 11 մարդու նկատմամբ[13]: Այս անգամ մեղադրանքը այն "հիմնավորումն" ուներ, թե 1937 թ. դեկտեմբերին ՀԽՍՀ ՆԳԺԿ մարմինները տեղեկութեյուններ են ստացել, որ Երեւանում "գոյութեյուն ունի ընդհատակյա հակախորհրդային, դաշնակցական, ապստամբական կազմակերպութեյուն, որի կազմի մեջ են մտնում պրոֆեսոր, հնագետ Աշխարհաբեկ Քալանթարյանը, խորհրդային ծառայողներ Ռուբեն Քալանթարյանը, Արտաշես Քալանթարյանը եւ ուրիշներ": Մեղադրական եզրակացութեյան մեջ հիշատակված էին 18 հոգի, որոնցից 14-ը՝ Երեւանի տարբեր բուհերի դասախոսներ: Եթե նրանց ավելացնենք այն 159-ին, որոնք որպես մեղադրյալներ եւ վկաներ քննվել էին այս գործի առնչութեյամբ, ապա ավելի ակնհայտ կդառնա, թե ինչ "լուրջ" վերաբերմունք էր դրսեւորվում գիտնականների նկատմամբ: Նշված դատապարտյալներին ներկայացված մեղադրանքների մասին պատկերացում տալու համար անդրադառնանք դրանցից մի քանիսին.

Այսպես, 1887 թ. Ալավերդու շրջանի Արդվի գյուղում ծնված, նախկին ազնվական, ցարական բանակի Հայկական կամավորական ջոկատի նախկին փոխգնդապետ, 1912-ից "Դաշնակցութեյուն" կուսակցութեյան անդամ, Պետհամալսարանի Հին Արեւելքի եւ Հնագիտութեյան պատմութեյան պրոֆեսոր Աշխարհաբեկ Քալանթարյանը մեղադրվում էր 10 կետում շարադրված "Հանցագործութեյուններում", մասնավորապես,

"1. 1922 թ-ին (տարեթիվը նշված է ինչպես գործում - Ա.Մ.) ակտիվ մասնակցութեյուն է ունեցել դաշնակցական արկածախնդրութեյունում, արտագաղթել է Իրան: Թավրիզի

դաշնակցական կոմիտեի հանձնարարությամբ վերադառնալով Հայաստան՝ 1923 թ. կազմակերպեց ընդհատակյա դաշնակցական ղեկավար "Կենտրոն" եւ մինչեւ ձերբակալությունը ղեկավարել է այն...

4. Անձամբ դաշնակցական կազմակերպության մեջ է հավաքագրել Պապա Քալանթարյանին, Ռուբեն Քալանթարյանին, Արտաշես Քալանթարյանին, Լեւոն Ռոտինյանին եւ ուրիշների:

5. Զինված ապստամբություն էր նախապատրաստում Խորհրդային իշխանության դեմ: 1930 թ. Հայաստանի Դարալագյազի եւ այլ շրջանների զինված ելույթների ոգեշնչողներից մեկն էր:

6. Որպես կազմակերպության ղեկավար՝ լրտեսություն էր կազմակերպել արտասահմանյան հետախուզություններ օգտին...

8. Ահաբեկչություն էր նախապատրաստում Քաղբյուրոյի եւ ԽՍՀՄ-ի կառավարության անդամների նկատմամբ..."[14]:

Ա. Քալանթարյանը վերոհիշյալ տրիբունալի կողմից դատապարտվում է գնդակահարության:

Քանի որ այդ փաստաթղթում "Հանցագործների" վրա բարդված են գրեթե նույն մեղադրանքները, ուստի բավարարվենք բերված օրինակով եւ ներկայացնենք այդ գործով անցած մյուսներին՝ առավել ուշադրություն դարձնելով նրանց կենսագրություններին: Նրանք էին՝

Սիմոն Հակոբյանը ծնվել է 1880 թ. Կիրովաբադում, բարձրագույն կրթությունը ստացել է Շվեյցարիայում, Պետհամալսարանի Արեւմտաեվրոպական գրականության ամբիոնի պրոֆեսոր: 1902 թ-ից "Դաշնակցություն" կուսակցության անդամ: 1909 թ. Լոզանում հավաքագրվել է մի պետության հետախուզական մարմինների կողմից՝ որպես գործակալ: 1911 թ. Ռուաչուկում (Բուլղարիա) հավաքագրվել է երկրորդ հետախուզական մարմնի կողմից: 1913-18 թթ. Բաքվում խմբագրում էր դաշնակցական "Արեւ", "Բաքվի ձայն", "Գորեց" թերթերը: 1919 թ. մեկնել է Ցրանսիա: եղել է Անգլիայում, Իտալիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Գերմանիայում: Դատապարտվել է գնդակահարության:

Հակոբ Զորյանը ծնվել է 1894 թ. Թուրքիայում: Բարձրագույն կրթությունը ստացել է Շվեյցարիայում եւ Գերմանիայում: 1920-25 թթ. ապրել է Բեռլինում: Խորհրդային Հայաստան է եկել 1926 թ.: Համկ/բ/կ-ի նախկին անդամ: "Դաշնակցություն" կուսակցության անդամ 1912 թ-ից: 1915-19 թթ. Շումլեյում (Բուլղարիա) եղել է դաշնակցության քաղաքային կոմիտեի քարտուղարը: 1920 թ. սովորելու նպատակով մեկնել է Գերմանիա, որտեղ բնակվել է մինչեւ 1925 թ.: Մասնակցել է Թուրքիայի նախկին կառավարության նախարար Թալեաթ Փաշայի ահաբեկչությանը: Մինչեւ 1923 թ. եղել է Գերմանիայի դաշնակցական ուսանողների միության նախագահը: Մինչեւ ձերբակալվելը Երեւանի Պետհամալսարանի պատմության ամբիոնի պրոֆեսոր էր: Դատապարտվել է գնդակահարության:

Արշակ Տոնյանը ծնվել է 1888 թ. Ադրբեջանի Բայան գյուղում: 1910-14 թթ. սովորել է Գերմանիայում: 1917 թ-ից "Դաշնակցություն" կուսակցության անդամ: 1921 թ. ձերբակալվել է Հայաստանի Արտակարգ Հանձնաժողովի (Չեկա) կողմից: Մաթեմատիկայի պրոֆեսոր: Դատապարտվել է 12 տարի ազատազրկման:

Հովհաննես Նավակատրիկյանը ծնվել է 1888 թ., Վրաստանի Ախալցխա քաղաքում: Բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայում: Ցեզիկայի պրոֆեսոր: Դատապարտվել է 10 տարի ազատազրկման:

Կարապետ Մելիք-Օհանջանյանը ծնվել է 1893 թ. Մեղրիի շրջանի Կալեր գյուղում: Ազնվական ծագում ունի: 1913-18 թթ. սովորել է Գերմանիայում: 1918-19 թթ. եղել է Հայաստանի դաշնակցական կառավարության միսիայի քարտուղարը Գերմանիայում: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման:

Ստեփան Ղամբարյանը ծնվել է 1879 թ. Թբիլիսիում: Ունի ազնվական ծագում: Մասնագիտական կրթությունը ստացել է Գերմանիայում: Նախքան ձերբակալվելը՝ օրգանական քիմիայի պրոֆեսոր: Դատապարտվել է 10 տարի ազատազրկման:

Լեւոն Ռոտինյանը ծնվել է 1879 թ. Թբիլիսիում: Ազնվական ծագում ունի: 1911 թ. եղել է Գերմանիայում եւ Հոլանդիայում: 1919 թ-ից "Դաշնակցություն" կուսակցության անդամ: Մինչեւ ձերբակալվելը՝ Պոլիտեխնիկ ինստիտուտի ֆիզիկական քիմիայի պրոֆեսոր: Դատապարտվել է 8 տարի ազատազրկման:

Հակոբ Իոնեսյանը ծնվել է 1875 թ., Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: Մինչեւ 1917 թ. ունեցել է մասնավոր քիմիկո-բակտերիոլոգիական կաբինետ, զբաղվել է մասնավոր բժշկական գործունեությամբ: Բարձրագույն կրթությունը ստացել է Գերմանիայում: Համկ/բ/կ նախկին անդամ: Մինչեւ ձերբակալվելը՝ Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր եւ բիոքիմիայի ամբիոնի վարիչ: Դատապարտվել է 5 տարի ազատազրկման:

Հովհաննես Ակունյանը ծնվել է 1869 թ., Ադրբեջանի Բեմախա քաղաքում: 1898-1913 թթ. մասնագիտացել է Գերմանիայում: Մինչեւ ձերբակալվելը՝ բժշկական եւ գյուղատնտեսական ինստիտուտների քիմիայի պրոֆեսոր: Դատապարտվել է 8 տարի ազատազրկման:

Ռուբեն Ղամբարյանը *ծնվել է 1905 թ., Կիրովականում: Մինչեւ ձերբակալվելն աշխատել է բժշկական ինստիտուտի անօրգանական քիմիայի ամբիոնում՝ որպես ասիստենտ: Դատապարտման չափը նշված չի:*

Արտաշես Քալանթարյանը *ծնվել է 1895 թ., Ալավերդու շրջանի Արդվի գյուղում: Ազնվական ծագում ունի: Դատապարտման չափը չի նշված:*

Պապա Քալանթարյանը *ծնվել է 1887 թ., Ալավերդու շրջանի Արդվի գյուղում: Ազնվական ծագում ունի: 1905-11 թթ. բարձրագույն կրթություն է ստացել Գերմանիայում: Համկ/բ/կ նախկին անդամ: Մինչեւ ձերբակալվելը՝ Գյուղատնտեսական ինստիտուտում ագրոքիմիայի պրոֆեսոր: Դատապարտվել է 6 տարի ազատազրկման:*

Գեորգի Գրցելյանը *ծնվել է Վրաստանի Սուրում քաղաքում: 1904-10 թթ. բարձրագույն կրթությունը ստացել է Ֆրանսիայում: Կապ է պաշտպանել եղբայրների հետ, որոնք բնակվում էին Ճապոնիայում եւ Կալիֆոռնիայում: Մինչեւ ձերբակալվելը՝ Գյուղինստիտուտի խաղողագործության ամբիոնի դոցենտ էր: Առանց դատապարտման՝ 4 տարի մնացել է Երեւանի բանտում, աքսորվել Վյատկա: Վերադարձել է եւ 1949 թ.՝ կրկին աքսորվել:*

Անաստասիա Վերմիշեւան *ծնվել է 1896 թ., Վրաստանի Ցինանդալի գյուղում: Սերում էր տոհմական ազնվականների ընտանիքից: Մինչեւ ձերբակալվելը՝ Գյուղինստիտուտի դասախոս, գյուղատնտես-պտղագործ: Դատապարտման չափը նշված չէ:*

Լեւոն Քեկ-Օսիպովը *ծնվել է1899 թ., Ղարսում: Գյուղատնտես-էքոնոմոլոգ: Դատապարտման չափը նշված չէ:*

Սահակ Թորոսյանը *ծնվել է 1884 թ., Աշտարակի շրջանի Փարբի գյուղում: 1907 թ-ից "Դաշնակցություն" կուսակցության անդամ: 1912 թ. եղել է Վաղարշապատի դաշնակցական կազմակերպության ղեկավարը: 1914 թ. ընտրվել է Թբիլիսիի "Դաշնակցություն" կուսակցության Կենտկոմի անդամ: 1918 թ. Հայաստանում դաշնակցական իշխանության հաստատումից հետո եղել է ներքին գործերի նախարար: 1920 թ. մարտից պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի նախագահն էր: 1921 թ. մայիսին նշանակվել է ներքին գործերի նախարարի տեղակալ: Հայաստանի խորհրդայնացումից հետո 3 անգամ բռնադատման է ենթարկվել: Աքսորից վերադարձել է 1937 թ.: Մինչեւ ձերբակալությունը որոշակի զբաղմունք չի ունեցել: Դատապարտվել է գնդակահարության:*

Ռուբեն Քալանթարյանը *ծնվել է 1896 թ., Ալավերդու շրջանի Արդվի գյուղում: Սերում էր ազնվական-կալվածատերերից: Մասնագիտությամբ գյուղատնտես-մեղվաբույծ: 1918 թ-ից "Դաշնակցություն" կուսակցության անդամ: 1920 թ. եղել է Ղարաքիլիսայի (Վանաձոր) դաշնակցական գավառային կոմիտեի անդամ: Դատապարտվել է 10 տարի ազատազրկման: Մահացել է բանտում*[15]*:*

Այսպիսով, Հայաստանի "պրոֆեսորների գործը", ինչպես արդեն նշեցինք, Ն. Ստեփանյանի խմբի բացահայտումից հետո դարձավ ձերբակալված ամենամեծաթիվ "խմբերից" մեկը, որին հարելու մեջ հետագայում մեղադրվեցին նաեւ այլ մտավորականներ:

Ըստ էության, արդեն 50-ական թթ. գործերը վերանայելիս, այս գործով անցնող գիտնականները եւս արդարացվեցին:

1936 թ. երկրորդ կեսին ձերբակալված գիտնականներից էին գրականագետներ, Պետհամալսարանի դասախոս Գուրգեն Վանանդեցին (Փորսուղյանը) եւ Թբիլիսիի Կովկասագիտության ինստիտուտի գիտաշխատող Պողոս Մակինցյանը: Գ. Վանանդեցին մահանում է 1938 թ. ապրիլին, բանտի հիվանդանոցում, իսկ Պ. Մակինցյանը 1938 թ. հուլիսի 18-ին դատապարտվում է գնդակահարության: Նշենք, որ նրանց նույնպես մեղադրում էին "ազ-տրոցկիստական, ազգայնամոլական" կազմակերպության անդամ լինելու եւ ՀՕԿ-ի միջոցով լրտեսությամբ զբաղվելու մեջ, ինչը հերքվել է նրանց գործերը վերանայելիս[16]*:*

1937-38 թթ. ձերբակալվում եւ գնդակահարվում են Պետհամալսարանի պրոֆեսոր, "բարեգործական բուրժուական" "Բարեգործական" ընկերության պատասխանատու քարտուղար, Հովհաննես Հակոբյանը, պրոֆեսոր, գրականագետ Թադեւոս Ավդալբեգյանը, Էջմիածնի Մատենադարանի տնօրեն Սեդեքերիմ Տեր-Հակոբյանը, լծորակատու դասախոսներ, Հայտնի քրդագետ Աստվածատուր Խաչատրյանը եւ Հայաստանի Առաջին Հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար, պատմաբան Սիրական Տիգրանյանը:

Մերձավոր Արեւելքի պատմության դասախոս Հ. Հակոբյանի մեղադրական եզրակացությունում ընդհանուր մեղադրանքից զատ նշված է, որ նա "1908 թ-ից լինելով հայկական հակահեղափոխական բուրժուական "Ռամկավար" կուսակցության անդամ եւ նրա առաջնորդներից մեկը՝ 1927 թ. անգլիական հետախուզության գործակալ Արշակ Սաֆարյանի հանձնարարությամբ արտասահմանից մշտական բնակության տեղափոխվեց Հայաստան, որպեսզի կատարի հակախորհրդային եւ լրտեսական աշխատանք...": Այնուհետեւ չեն մոռացել նշել նրա կապը "մի քանի արտասահմանյան հետախուզությունների աշխատակից" սփյուռքահայ անվանի մտավորական Արշակ Զոպանյանի հետ[17]*:*

Գրականագետ Թ. Ավդալբեգյանի մեղադրանքում առանձնանում է այն, որ նա 1905 թ-ից մենշեւիկ է եղել, իսկ Ս. Տեր-Հակոբյանի մեղադրանքներում՝ այն, որ 1911 թ. Բեռլինում ուսանելիս հավաքագրվել է գերմանացի պրոֆե-

սոր Ֆելիքս Ֆոն Լուշանի կողմից[18]: Քրդագիտության ճանաչված մասնագետ Ա.Խաչատրյանին (Ասատուր), ըստ գործի նյութերի, բացի անգլիական լրտես լինելուց, մեղադրում են նաեւ քուրդ-եզդիների մեջ հակահեղափոխական աշխատանք վարելու մեջ[19]: Ավելացնենք, որ նրա այդ, այսպես ասած, գործունեությանը մասնակցելու համար 1937 թ. գարնանը ձերբակալվում են մի խումբ քուրդ մտավորականներ ("Ռյա-Թազայի" խմբագիր Ջարդոե Գենջոն, գրականագետ Հաջիե Ջնդին եւ ուր.), որոնք 2 տարի բանտում գտնվելուց հետո՝ 1939 թ. մարտին դատարանում ազատ են արձակվում[20]:

Ակներեւ է, որ անհրաժեշտություն չկա ներկայացնելու, թե ինչպիսի "հանցագործություններ" են վերագրվել հայանի դաշնակցական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարար, պրոֆեսոր Ս. Տիգրանյանին, որը Եռյակի որոշմամբ գնդակահարվում է[21]:

Բարեբախտաբար, գնդակահարության դատավճիռներ չեն ստանում Պետհամալսարանի դասախոսներ Գուրգեն Ղիլյանը (10 տարի ազատազրկում), Հայկ Գյուլիքեւխյանը (5 տարի), Հրաչյա Աճառյանը (6 տարի) եւ գրականագետ, Գրականության ինստիտուտի տնօրեն Հենրի Գաբրիելյանը (12 տարի), որոնք բոլորն էլ հետագա տարիներին արդարացվում են[22]:

Նշենք նաեւ, որ 1936 թ. ձերբակալվում եւ 3 ամիս բանտում մնալուց հետո արդարացվում է Պատմության եւ գրականության ինստիտուտի պատմության բաժանմունքի գիտքարտուղար Վարդան Պարսամյանը, որի վերաբերյալ կայացված որոշման մեջ գրված է, թե "քննության կողմից հավաքված նյութերը բավարար չեն Պարսամյանին մեղադրելու համար[23]":

Գ. Էդիլյանի գործում կարդում ենք, որ նա "...1920 թ. որպես հոգեբան-մանկավարժ նշանակվելով Պետհամալսարանի դասախոս, վարում էր ակտիվ հակախորհրդային դաշնակցական քայքայիչ աշխատանք: Ուսուցման պլաններն ու ծրագրերը կազմում էր հակահեղափոխական, ազգայնամոլական ոգով եւ այդ հիմքի վրա դասախոսություններ էր կարդում...": Հ. Գյուլիքեւխյանին, իբր, հակախորհրդային գործունեության մեջ էր ներքաշել անձամբ Ն. Ստեփանյանը, իսկ "Թունդ ազգայնամոլ" Հր. Աճառյանը մտնում էր "գերմանական հետախուզության բացահայտված գործակալ, ֆաշիստ" Ակունյանի՝ "պրոֆեսորների չրջանակներում գործող ֆաշիստական խմբի մեջ"[24]:

Ավելորդ չէ ներկայացնել Հ. Գաբրիելյանի վերաբերյալ մեղադրական եզրակացության հետեւյալ հատվածը. "Գաբրիելյանի եւ Արիայանի կողմից 1936 թ. հաստատվել է դասախոս Շահնազարյանի ազգայնամոլական ծրագիրը, որով այդ առարկան անցնում էին Պետական համալսարանում եւ Մանկավարժական ինստիտուտում: Ծրագիրը սկզբից մինչեւ վերջ ներծծված էր դաշնակցական "Մեծ Հայաստան"-ի գաղափարով եւ, ըստ էության, ազգայնամոլ եղիազարյանի Հայաստանի ազգայնամոլական պատմական քարտեզի գաղափարի արտացոլումն էր...": Ավելացնենք, որ Հ. Գաբրիելյանին մեղադրում էին նաեւ ՀԿ/բ/Կ ԿԿ արդեն ձերբակալված եւ հակահեղափոխական հռչակված քարտուղար Ա. Ամատունու հետ "համագործակցելու" համար[25]:

Բռնություններից չխուսափեց նաեւ 1913 թ. Գրենոբլի համալսարանն ավարտած, ֆիզիկա-քիմիական գիտությունների դոկտոր, երկար ժամանակ պետական բարձր պաշտոններ վարած, Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրոթերմիկ տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Համայակ Մելիք-Աղամիրյանը, որին դատապարտեցին 5 տարի ազատազրկման: Պետական գործիչը, որը 30-ականներին ղեկավարել եւ մասնակցել էր Հայաստանում գործարանների չատերի կառուցմանը, մեղադրվում էր ՀԺԿԿ-ի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի ղեկավարությամբ հանրապետության տնտեսության մեջ վնասարարությամբ զբաղվելու մեջ եւ այլն[26]:

Հայաստանի մտավորականության նկատմամբ 30-ականներին գործադրված բռնությունների պատկերն ամբողջացնում են ստեղծագործող մտավորականների (64 մարդ), մանկավարժների (270 մարդ, որոնց մեջ բավականին մեծ թիվ են կազմում ուսուցիչները), բժիշկների (77 մարդ), իրավագետների եւ իրավաբանների, պետական-կուսակցական գործիչների վերաբերյալ եղած նյութերը: Նրանց մեջ քիչ չէին գրականության, գիտության ներկայացուցիչները, ԲՈՒՀ-երի դասախոսները:

Բժշկական ասպարեզից բռնադատվածների մեջ էին Բժշկական ինստիտուտի տնօրեն Արամ Շահվերդովը, նույն ինստիտուտի տարափոխիկ հիվանդությունների ամբիոնի վարիչ Սպանդարատ Կամսարականը, Հայոնի վիրաբույժ, պրոֆեսոր Հարություն Միրզա-Ավագովը, Երեւանի մաշկաբանական ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովսեփյանը եւ ուրիշներ[27]: Այս բնագավառի աշխատողներին, բացի ընդհանուր բնույթի մեղադրականներից, ներկայացվում էին նաեւ բժշկության ոլորտում կատարած "հանցագործությունների" մեղադրանքներ, օրինակ՝ մտադրություն "վնասվածքներ հասցնել Անդրկովկասի եւ Վրաստանի կուսակցական ղեկավարներին՝ Բերիայի ղեկավարությամբ", կամ 1918-19 թթ. ճակատից բերված վիրավոր կարմիրբանակայիններին առանց բժշկական օգնության թողնելը եւ այլն:

Բերենք նաեւ երկու օրինակ՝ իրավագիտության ոլորտի աշխատակիցների գործերից: Այդ ասպարեզում մեծ ճանաչում ունեցող, Հայաստանի դատապաշտպանների կոլեգիայի անդամ, երկարամյա դասախոս Գրիգորի Զուբարյանի գործն, անկասկած, բավականին հատկանշական է այն առումով, որ փորձառու իրավագետը չի ընդունում իրեն առաջադրված եւ ոչ մի մեղադրանք: Սակայն, դա չի օգնում, եւ իր "հակահեղափոխական, դաշնակցական" խմբի 4 անդամների հետ նա 1940 թ. դատապարտվում է 8 տարի ազատազրկման, իսկ 1949 թ.՝ կրկին աքսորվում: 1955 թ.

փետրվարին ԽՍՀՄ գլխավոր դատախազին ուղղված իր բողոքում Զուբարյանը գրում էր.

"1. 1940 թ. հոկտեմբերի 19-ին ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից Հատուկ Խորհրդակցության որոշումով ես դատապարտվեցի 8 տարի ազատազրկման: Այդ որոշումով օրինականացվեց իմ նախնական մարտիրոսությունը, որը սկսվել էր ձերբակալության օրվանից՝ 1937 թ. հուլիսի 15-ից: Իսկ այդ երկու թվականների միջեւ՝

1. 1939 թ. սեպտեմբերի 2-ի Անդրկովկասյան զինվորական օկրուգի Զինվորական տրիբունալի դատավճիռն է գնդակահարության մասին:

2. 1939 թ. սեպտեմբերի 2-ից մինչեւ 1940 թ. հունվարի 25-ը մահվան մահապատժի իրագործման վտանգի տակ միայնակ բանտախցում գտնվելը.

3. ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի Զինվորական Կոլեգիայի որոշումը Տրիբունալի այդ դատավճռի փոփոխման մասին եւ իմ գործը նոր քննության հանձնելու մասին...

4. Երկրորդ նախնական քննության ժամանակ իմ հակախորհրդային գործունեության մասին որեւէ օրինական հիմքեր եւ որեւէ ստուգված ապացույցների բացարձակ բացակայությունը" եւ այլն[28]:

Այնուհետեւ Գր. Զուբարյանը նկարագրում է իր ողբասականը՝ իրավական առումով փաստելով ձերբակալությունից հետո իր նկատմամբ թույլ տրված օրինականության խախտումները:

Ողբերգական ավարտ ունեցավ նախկինում Հնչակյան կուսակցության անդամ, Արդարադատության նախարարի տեղակալ, Պետհամալսարանի իրավագիտության պրոֆեսոր Հրանտ Գալիկյանի բանտարկությունը, որին "Հակախորհրդային վնասարարական գործունեության համար" եռյակը 1938 թ. փետրվարի 28-ին դատապարտեց գնդակահարության:

Գործում թվարկվում են իրավաբան-գիտնականի գրած մի շարք գրքեր՝ "Պրոլետարական դիկտատուրան" (1924 թ.), "Կանանց աշխատանքի պահպանությունը" (1930 թ.), "Հասարակական դատարանները" (1936 թ.), "Խորհրդային դատարանը" (1936 թ.) եւ այլն[29]:

Այսպիսով, 1930-40 թթ. ստալինյան բռնությունները մեծ հարված հասցրեցին նաեւ Հայաստանի գիտությանը եւ գիտնականներին:

Այդ իսկ պատճառով, մինչեւ "հալոցքի" խրուշչովյան տարիները, երկրի ռազմական զորացմանը նպաստող ճյուղերից բացի, գիտության մյուս բնագավառները, հատկապես հումանիտար գիտություններն ու մշակույթը, որոշակի նահանջ ապրեցին: Սակայն, անհատի պաշտամունքի վերացման ջանքերին զուգահեռ, ակնհայտ վերելք նկատվեց նաեւ այդ ոլորտներում:

Ողբերգական են 30-ական թվականների պատմության էջերը, սակայն դրանք խորազնին ուսումնասիրությամբ կրկին թերթելն անհրաժեշտ է ի սթափություն հասարակական մտքի եւ ի խոնարհում բանտարկվածների լուսավոր հիշատակին: ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Եր., 1975, էջ 35:
2. В.П. Дмитриенко и др., История Отечества- XX век, М., 1995, с.246.
3. ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 21, գ. 256, թ. 47; 4. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ.3036:
5. Մանրամասն՝ տե՛ս Ц. Агаян. Нерсик Степанян, Ер., 1967.
6. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ.3036, հ. 1, թ. 364; 7. Տե՛ս նույն տեղում, պատմ. ֆոնդ, գ. 136:
8. Նույն տեղում, գ. 186, էջ 5; 9. Նույն տեղում, գ. 186, էջ 21-24:
10. Հոդվածում բերված բոլոր թվական տվյալները ներկայացվում են ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվի ԿԳԲ-ի նյութերի՝ մեր ուսումնասիրության հիման վրա:
11. Տե՛ս Д. Волкогонов, Триумф и трагедия. Политический портрет И.В. Сталина, АПН, 1988, кн.1, 1.2, с.95;
12. Տե՛ս "Նոր ուղի", գ. 2, Եր., 1931, էջ 113-125; 13. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ.896:
14. Նույն տեղում, գ. 896, թ. 33, մանրամասն տես նաեւ "Հայություն", 1993, թ.13:
15. Այս գործով անցնող Ա. Հակոբյանի, Պ. Քալանթարյանի, Ա. Տոնյանի, Լ. Ռոտիկյանի, Ստ. Ղամբարյանի եւ Հ. Նավակատիկյանի մասին մանրամասն տե՛ս "Երկրապահ", 18-25 հունիսի 1998, 16-22 հուլիսի, 1998, 23-29 հուլիսի, 1998, 30 հուլիս-5 օգոստոսի 1998, 6-12 օգոստոսի 1998 թ. եւ 13-19 օգոստոսի 1998 թ.:
16. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ.գ. 909, 2805: Տե՛ս նաեւ Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Ջարենցը, Բակունցը եւ մյուսները, Եր., "Ապոլոն", 1994, էջ 124-135:
17. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 2533, թ. 68-70; 18. Նույն տեղում, գ.գ. 1132, 1504:
19. Նույն տեղում, գ. 12254, թ.106; 20. Տե՛ս նույն տեղում, գ.գ. 1186, 6940, 670, 9701:
23. Նույն տեղում, գ. 3050, թ. 29; 24. Մանրամասն տե՛ս "Իրան-նամէ", թ.4-5, 1996, էջ 10-14:
25. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 9701, թ. 45; 26. Նույն տեղում, գ. 2825, թ. 22:
27. Տե՛ս նույն տեղում, գ.գ. 1005, 2812, 1997, 1193; 28. Նույն տեղում, գ. 1893, հ. 3, թ. 131-132:
29. Նույն տեղում, գ. 2671:

Փաստաթղթեր բռնապատված Գրիգոր Զուբարյանի «Գործերից»

(Էջեր մեծ իրավագետի «դանթեականից»)

Ռուբեն Ավագյան
Իրավագիտության դոկտոր
Ալեքսանդր Սաֆարյան
Պատմագիտության թեկնածու, դոցենտ

ԵՊՀ հիմնադիր-դասախոս, անվանի հայ իրավաբան և հասարակական-քաղաքական գործիչ, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Զուբարյանի (1888-1962) կյանքն ու գործունեությունը վաղուց ի վեր ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են[1]: Այսուհանդերձ, կարծում ենք, բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես ՀՀ Ազգային անվտանգության նախարարության արխիվի՝ Գրիգոր Զուբարյանին վերաբերող երկու գործերում[2] պահվող մի շարք փաստաթղթեր, որոնք կարևորվում են ոչ միայն մեծ մտավորականի կենսագրության անհայտ էջերի, այլև ընդհանրապես հայաստանյան գիտակրթական համակարգի և մեր իրավական մտքի պատմության լուսաբանման տեսանկյուններից[3]:

Աշխատասիրողները խոր երախտագիտություն են հայտնում Գրիգոր Զուբարյանի որդուն՝ ակնառավոր քանդակագործ, ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ և ՌԴ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, պրոֆեսոր Ղուկաս Զուբարյանին՝ արժեքավոր խորհրդատվության, և ՀՀ ԱԱ նախարարությանը՝ արխիվային գործերը տրամադրելու համար: Սույն աշխատանքը հովանավորվել է Մոսկվայի Նոր իրավաբանական ինստիտուտի ռեկտորատի կողմից:

Ստորև հրապարակվող փաստաթղթերը ներկայացվում են թարգմանաբար և մասնակի կրճատումներով: Բնականաբար, ստալինյան բռնությունների «թեժ շրջաններում» անվտանգության մարմինների կազմած հարցաքննությունների արձանագրություններում կամ Գրիգոր Զուբարյանի կողմից գրված փաստաթղթերում առկա են ոչ միայն ժամանակի հասարակական գիտակցության, այլև բռնություններն իրականացնողների անմիջական ճնշման կնիքը կրող արտահայտություններ ու ձևակերպումներ (մասնավորապես՝ հակադաշնակցական ու հակաեկեղեցական ուղղվածության), բայց վերոհիշյալ փաստաթղթերը աներկբայորեն վկայում են Գրիգոր Զուբարյանի թե՛ մասնագիտական արտակարգ ունակությունների, թե՛ մարդկային բարձր նկարագրի մասին. ակնհայտ է նրա մղումը՝ բռնություններից ամեն գնով հեռու պահել «դրսում» մնացած մտավորականներին, անգամ տեսական դատողություններում չմեղանչել սեփական խղճի դեմ (այսպես, օրինակ, համոզված աթեիստ Զուբարյանն ընդգծում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայապահպան դերը, համարձակ պնդում է, որ նորնախիջևանյան դաշնակցական ուղղվածության «Դաղուխ» թերթը պարզապես գրական գործ չէր, այլ «մեծ և ազդեցիկ գաղութի դեմոկրատական մտավորականության համախմբող հասարակական գործոն»: Գ. Զուբարյանը նաև հստակ տարանջատում է քաղաքական համոզմունքները անձնական հարաբերություններից և, որ հատկապես ակնառու է, մշտապես հանդես է գալիս որպես օրենքի գերակայության ջատագով:

Փաստաթուղթ 1

Ինքնակենսագրություն[4]

Ես ծնվել եմ 1888 թվականին՝ նախկին Դոնի Զորքի մարզի (Область Войска Донского) Ռոստովի օկրուգի Ղրիմ (Թոփթի) գյուղում: Ծնողներս գյուղացիներ էին, ընդ որում հայրս մինչև իր մահը՝ 1895 թվականը, ծառայում էր Դոնի-Նախիջևանում: Մեր ընտանիքը մեծ էր, աշխատավոր: Հորս մահից հետո ես և չորս եղբայրներս մնացինք որբ՝ հորեղբայրներիս խնամքի տակ: 1895 թ. ես ընդունվեցի գյուղական եկեղեցական-ծխական դպրոց, իսկ 1897 թ. հնձ, որպես որբի, ուղարկեցին Սուրբ Խաչ վանքին առընթեր վանական դպրոցը[5], որտեղ սովորում էր նաև Հայաստանի ժողկոմխորհի ապագա նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը:

1897/1898 թթ. ուս. տարում, այդ դպրոցը ցարական հրամանագրով փակելուց հետո, ինձ տեղափոխեցին Նախիջևանյան հայկական սեմինարիա, որն ավարտեցի 1906 թվականին:

Որբ լինելով և չունենալով գոյության միջոցներ՝ ես և՛ վանական դպրոցում, և՛ սեմինարիայում սովորում էի բարեգործական միջոցների հաշվին:

Սեմինարիան ավարտելուց հետո, բարձրագույն կրթությունս շարունակելու համար միջոցներ չունենալով, ես 1906/1907ուս. տարում ընդունվեցի միամյա մանկավարժական դասընթացներ՝ հետագայում մանկավարժական գործունեությամբ զբաղվելու նպատակով:

Այդ դասընթացներն ավարտելուց հետո ես չհաստատվեցի ուսուցչի պաշտոնում, քանի որ դպրոցական տեսչությունը ինձ բնութագրեց որպես քաղաքականապես անբարեհույս: Դասընթացներից հետո ես բուհ ընդունվեցի Յարոսլավլում, իրավաբանական մասնագիտությամբ, ընդ որում միաժամանակ ես սովորել եմ Մոսկվայում՝ պատմա-բանասիրական ֆակուլտետում:

Բարձրագույն կրթություն ես ստացել եմ Հայկական բարեգործական ընկերության միջոցների հաշվին՝ հորս հորեղբոր (Եղիա Զուբարի) օգնությամբ, բայց գլխավո-

րապես ավագ եղբորս միջոցներով. եղբայրս ծառայում էր ոչխարաբույծ Ադաբաշևի, ապա՝ Բեզրիկի մոտ: 1913թ. բուհն ավարտելուց հետո Լուսավորության մինիստրությունը ինձ չհաստատեց պրոֆեսորության նախապատրաստվելու համար, նույն տարի ես վերադարձա Դոնի Ռոստով և ընդունվեցի երդվյալ հավատարմատարների դասը՝ որպես երդվյալ հավատարմատարի օգնական: Միևնույն ժամանակ ես սկսեցի որպես իրավախորհրդատու աշխատել Բեզրիկի մոտ, ուր մոտ աշխատում էին նաև Հորեղբայրս և եղբայրս:

Ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ պատերազմից հետո ոչ մի բանակում չեմ ծառայել, քանի որ երիկամների հիվանդության պատճառով ազատված էի:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, 1918թ. ես ծառայել եմ Ռոստով-Նախիջևանի Հայկական Համայնքում, որպես համայնքային վարչության անդամ՝ Աշխատավոր մտավորականության խմբի կողմից:

1919թ. Ռոստովում մնալու քաղաքական անհնարինության պատճառով, ես եկա Հայաստան և ծառայության անցա, կարծեմ, հոկտեմբերին, որպես պառլամենտի ընդունած ակտերի (օրինադրությունների) ժողովածուի հրատարակման բաժնի վարիչ: Ընդ որում, այդ պաշտոնում եղել եմ մինչև նոյեմբերի 20-23-ը: Այնուհետև ես էսեռական կուսակցության կենտրոնական կոմիտեի որոշմամբ նշանակվել եմ Վրացյանի գլխավորած դաշնակցական-էսեռական կոալիցիոն կառավարության Արդարադատության մինիստրի տեղակալ[6]:



Գ. Չուբարյան

Խորհրդային շրջանում զբաղեցրել եմ հետևյալ պաշտոնները.

ա) Խորհրդայնացման օրից մինչև 1922 թվականի աշունը, եղել եմ Օրինադրությունների ու դեկրետների ժողովածուի խմբագիրը, դրանք հրատարակվում էին գիտական ինստիտուտի[7] տպարանում,

բ) Խորհրդային համալսարանի բացման օրվանից, այսինքն՝ 1921թ. հունվարից[8] մինչև խորհրդային շինարարության - խորհրդային իրավունքի - հասարակական գիտությունների ֆակուլտետի լիկվիդացումը, այսինքն՝ մինչև 1929թ. եղել եմ դասախոս, ընդ որում համալսարանը առաջին տարիներին կոչվում էր ժողովրդական, հետո արդեն՝ պետական: 1935-1936 ուսումնական տարում ես կրկին հրավիրվեցի համալսարան, սակայն մնացի միայն մինչև ուսումնական տարվա վերջը՝ խորհրդային քրեական դատավարության դասախոսի թափուր պաշտոնը վարելու համար[9]:

գ) Աղվոկատուրա (փաստաբանների կազմակերպություն) ընդունվել եմ 1923թ. վերջին կամ, հնարավոր է, 1924թ. սկզբին և մնացել մինչև 1930թ., փաստաբանական գործունեությունս վերսկսել եմ 1936թ. աշնանը և աշխատել մինչև ձերբակալությանս օրը, այսինքն՝ 14.07.37թ.,[10]

դ) 1931-1932 եղել եմ Պետական արխիվի գիտաշխատող և Հայաստանի կենտգործկոմի նախագահության խորհրդատու՝ 1932թ. մարտից մինչև 1933թ. հոկտեմբեր (եթե միայն չեմ չփոթում ամիսները),

ե) Եղել եմ Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումի տնօրեն և ուսուցիչ, նաև տասնամյա դպրոցի ուսուցիչ՝ 1934-1935 ուսումնական տարում:

Բացի այդ պաշտոններից, դասախոսություններ եմ կարդացել ու դասավանդել բազմաթիվ կարճաժամկետ դասընթացներում, որտեղ պատրաստվել ու վերապատրաստվել են ուսուցիչներ, միլիցիոներներ, հաշվապահներ, գլխավորապես առաջին տարիներին, երբ դեռ չկային խորհրդային իրավունքի դասախոսներ, մասնագետներ: Հետագայում ինձ փոխարինեցին Գալիկյանը[11], Արամ (Մամո) Եսայանը և ուրիշներ:

Խորհրդայնացման օրից աշխատակցել եմ խորհրդային թերթերին, ամսագրերին՝ ինչպես սեփական ազգանվամբ, այնպես էլ բազմաթիվ կեղծանուններով (Իրավաբան, Politicus, Աթեիստ, Գեղջուկ, Արմենյան XX և այլն)[12]:

Հասարակական ծանրաբեռնվածության կարգով տասնյակ տարիներ ապասարկել եմ Լուսժողկոմատը, համալսարանը, գիտական աշխատողների սեկցիայի բյուրոն և իրավախորհրդատու եմ եղել կամավոր հիմունքներով:

1919թ. Հայաստան գալուս օրվանից ի վեր մշտապես բնակվել եմ ք. Երևանում: Այդ ընթացքում 2 անգամ ես եղել եմ Դոնի-Ռոստովում՝ 1920թ. ապրիլից-օգոստոս և 1923թ. ամռանը... Եղել եմ Սոչիում և Դոնի-Ռոստովում՝ փաստաբանական ու կենտգործկոմական գործերով: 1924 և 1932թթ. եղել եմ Թբիլիսիում...

Փաստաթուղթ II


ՅՈՒՅՄՈՒՆՔ[13]

Կալանավոր Գրիգոր Համբարձումի Զուբարյանի
1938 թ. նոյեմբերի 27-ի

Դաշնակցություն կուսակցության և դաշնակցականների ազգային-քաղաքական գործունեության մասին սկզբնական տեղեկությունները ես ստացել եմ պատանի հասակում, 1900-ական թվականներին, Նախիջևանի սեմինարիայի աշակերտ եղած ժամանակ: Դոնի-Նախիջևա-

նում դաշնակցականների կողմից ղեկավարվող աշակերտական կազմակերպություն կար, թեև այն անկուսակցական էր կոչվում: Եթե հիշողությունս չի դավաճանում, աշակերտական կազմակերպությունը ղեկավարում էին Մինաս Բերբերյանը[14] և Համազասպ Նոհրատյանը: Նրանցից առաջինը Դոնի-Նախիջևանի ծնունդ էր, հետագայում թողեց այդ կուսակցության շարքերը և անցավ ռուսական կադետների կողմը: Հետագայում նա դարձավ «ժողովրդականների» հայկական բուրժուական կուսակցության առաջնորդներից մեկը, իսկ երկրորդը՝ քաղաքսոցյալ Կովկասից, հետագայում դաշնակցական Հայաստանում Ղարսի քաղաքագլուխն էր: Այդ, փաստորեն դաշնակցական, կազմակերպության մեջ էին նաև սեմինարիայի իմ ընկերները՝ Ալեքսանդր Մյասնիկյանը՝ հետագայում Հայաստանի ԺԿՀ-ի նախագահ, Հովհաննես Պոպովը, Մկրտիչ Վանեցյանը՝ հետագայում դրամատուրգ... Ես այդ կազմակերպության մեջ չեմ մտել, բայց նրանց միջոցով դաշնակցական հրատարակություններ եմ ստացել: Կազմակերպության մեջ չլինելով, ես ամեն դեպքում հայկական մարտնչող ազգայնամոլության ոգով գաղափարական և քաղաքական լիցք էի ստանում, այդպիսի ընկալունակությունը նախապատրաստված էր համադպրոցական դաստիարակությամբ: Մինչև 1905թ. հեղափոխությունը մեզ էր հասնում էսէռական, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատական գրականություն: 1905 թ. հեղափոխությունն ամբողջությամբ կլանեց ինձ, և ես ամբողջովին տրվեցի հենց այդ գրականության ուսումնասիրմանը՝ առավելությունը տալով ժողովրդական հոսանքին, մասնավորապես էսէռական, ընդ որում 1904 թ. վերջից մինչև 1906 թ. ամառն ինձ հիմնականում հետաքրքրում էր հեղափոխությունը և համառուսական սոցիալիստական մամուլը:

Մեր բանվորների կողմից քաղաքային և վանքապատկան հողերը գրավելու համար պայքարի կապակցությամբ, ես 1906 թ. քաղաքական դաշինք կնքեցի այդ ժամանակ էսէռական ծրագիրը և քաղաքական տակտիկան ամբողջությամբ ընդունած երիտդաշնակների հետ: Այդ համատեղ աշխատանքում ես ոչ միայն անձամբ, այլև քաղաքականապես մոտիկից չվիճեցի հետագայում անվանի դաշնակցականների, կոնկրետ՝ Սիմոն Լազարի (Ղազարոսի) Վրացյանի (նրա պաշտոնական ազգանունը Գրուզինյան է), ծնունդով Մեծ Սալա գյուղից, 1906 թ. ավարտել է էջմիածնի հոգևոր ճեմարանը, և Համբարձում Էմանուիլի Տերտերյանի հետ՝ ծնունդով Թոփչի գյուղից, իմ համագյուղացի, 1906 թ. ավարտել է Վլադիկավկազի դիմնազիան: Անձամբ իմ աշխատանքը գյուղացիների շրջանում նշված հողերի հեղափոխական գրավման գաղափարները քարոզելն էր:



Выписка из протокола №. 11

Особого Совещания при Министре Государственной Безопасности Союза ССР

от 28 февраля 194 г.

СЛУШАЛИ | ПОСТАНОВИЛИ

Дело № 11884 МГБ Армянской ССР

ШАРАНЦ Григорий Амбарцумович

Об'явлено ст.67ч.1 УК Арм.ССР

194 г.

Нач. Секретариата Особого Совещания

ԽՍՀՄ Անվտանգության մինիստրին առընթեր Հատուկ Խորհրդակցության 23.03.49 թ.-ի որոշումը Գ. Չուբարյանին պատրելու մասին

1906 թ. աշնանը ես թողեցի Դոնի-Նախիջևանը և մեկնեցի Թբիլիսի՝ ժողովրդական ուսուցիչների պատրաստման մեկամյա բարձրագույն դասընթացներ: Բուհերում իմ կրթությունը շարունակելու համար նյութական միջոցներ չունենալով՝ ես մտադիր էի ժամանակավորապես զբաղվել մանկավարժական գործունեությամբ: Թբիլիսիում մնացի մինչև 1907 թ. ամառը և վերադարձա հայրենիք: Ընդ որում Թբիլիսիում ամբողջությամբ տրվեցի ուսմանը՝ հաճախ լինելով էսէռների և էսդեկների բաց ժողովներում և չատ քիչ՝ դաշնակցության ժողովներում:

Իմ գործունեության պատճառով, ես 1906թ. ուսուցիչ չհաստատվեցի՝ որպես քաղաքականապես անբարեհույս: 1907 թ. ամառը ես հանդիպեցի այդ նույն մարդկանց՝ Վրացյանին և Տերտերյանին, որոնց հետ ես ընդհանրապես երկար տարիներ բարեկամական հարաբերությունների մեջ էի, ընդ որում ոչ միայն անձնական, այլ որոշ տարիներ նաև՝ քաղաքական: Ռոստով-Նախիջևանյան դաշնակցականները ընդունեցին քաղաքական հայացքներ էսէռական համակարգը և էսէռական քաղաքականություն էին վարում ու պատկանում էին երիտդաշնակների կուսակցության, այսպես կոչված, ձախ թևին, ինչը ինձ մերձեցնում էր իրենց հետ: Չնայած այդ բոլորին, ես հրաժարվեցի պաշտոնապես կուսակցության մեջ մտնելուց՝ չհրաժարվելով որպես դասախոս, ռուսական հեղափոխական շարժման, ինչպես նաև բանվորների, արհեստավորների և գործակատարների (կառավարիչների) արհմիությունների պատմության դասընթացներում նրանց իրապես օգնելուց:

Ոչ թե պաշտոնական, այլ կազմակերպորեն ձևակերպված բնույթ ստացավ իմ մասնակցությունը «Նոր կյանք» շաբաթաթերթին, որը հրատարակվում էր Դոնի Նախիջևանում: Այդ շաբաթաթերթի հրատարակումն անցավ

երկու փուլով՝ 1906 թ. գարնանից մինչև 1907 թ. ամառը և 1907 թ. ամռանից մինչև աշուն, երբ չաբաթաթերթը չախչախվեց ցարական ժանդարմերիայի կողմից: Այդ թերթը նույնպես պաշտոնապես դաշնակցական չէր համարվում, բայց փաստացի, չաբաթաթերթին, այսպես կոչված, Նալբանդի կոմիտեի (այդպես էր անվանվում դաշնակցական կոմիտեն, որն ընդգրկում էր Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի Հարավի շրջանները)[15] կիսապաշտոնական օրգանն էր: Ընդ որում սկզբնական շրջանում թերթը ղեկավարում էին հին դաշնակցականները, իսկ երկրորդ շրջանում՝ երիտդաշնակները: Առաջին շրջանում, եթե միայն հիշողությունս չի դավաճանում, թերթը ղեկավարում էին Հովհաննես Խլեբնիկյան-Ղարագյոզյանը, Տեր-Մանվելյանը: Շաբաթաթերթի պաշտոնական խմբագիր-հրատարակիչներն էին բանաստեղծ Վոնապրիոս Հակոբյանը, նրա եղբայր Գրիգոր Հակոբյանը, Գրիգոր Պեդելյանը, Էմանուիլ Բախչիսարայցյանը, Վարդան Զուբարյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Խաչատուր Զարիխյանը և այլոք: Է. Բախչիսարայցյանը և Խ. Զարիխյանը էդեկներ էին: Այդ շրջանում ես թերթի հետ ոչ մի առնչություն չունեի: Երկրորդ շրջանում թերթը հեղափոխական բնույթ ընդունեց՝ այդ բառի պայմանական, նարոդնիկական ընկալմամբ, ես համաձայնվեցի ակտիվորեն մասնակցել թերթին: Այդ շրջանում ակտիվ աշխատակիցներ էին Շուշանիկ Կուրղինյանը՝ անկուսակցական, Սամսոն Գամալյանը, Իսահակ Ֆեոդորի Մյասնիկյանը (Ալ. Մյասնիկյանի եղբայրը)՝ անկուսակցական և այլոք: Նկարիչ Մարտիրոս Սարյանն իր ճամփորդական տպավորություններից մի շարքը տվեց: Հոկտեմբերին թերթը չախչախվեց ռոստովյան ժանդարմերիայի կողմից, ես բանտարկվեցի Ռոստովի բանտում և հետագայում արտաքսվեցի Դոնի զորքերի մարզի (Область Войска Донского) սահմաններից՝ առանց համապատասխան քաղաքներում ապրելու իրավունքի, բացառությամբ ք. Յարոսլավլի, որտեղ միայն իրավաբանական ֆակուլտետ կար, ուր ես հետագայում ընդունվեցի:


Համալսարանական բոլոր տարիներին դաշնակցության կուսակցության հետ ես բացարձակապես ոչ մի առնչություն չունեի, հրաժարվում էի դաշնակցական թերթերին աշխատակցելուց և այլ ձեռնարկումներից: Ընդհանրապես, ուսանողական տարիներին ես ամբողջությամբ տրվել էի գիտական աշխատանքին և ամեն կերպ խուսափում էի հեղափոխականորեն տրամադրված հայ ուսանողների հետ հանդիպելուց: Այդ տարիներին Յարոսլավլում ևս սովորում էին հայ ուսանողներ, որոնք ապագայում դարձան հայտնի դաշնակցականներ՝ Գյուլխանդյան Աբրահամը՝ հետագայում դաշնակցական պառլամենտի անդամ, Արմենակ Մամիկոնյանը, եթե չեմ սխալվում, նույնպես դաշնակցական է եղել: Դաշնակցական կառավարության ժամանակ Լոռու չեզոք գոտում պատասխանատու պաշտոններ էին զբաղեցնում Դոմբյան Արամը, Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա գյուղի ծնունդ, հետագայում «Գաղութ» թերթի պաշտոնական խմբագիր... Ալեքսանդր Զոհրաբյանը՝ նույն գյուղի ծնունդ: ...Իսահակ (նույն ինքը Սահակ) Մյասնիկյանը, Դոնի-Նախիջևանի ծնունդ (այժմ Դոնի-Ռոստովի Պրոլետարական շրջան), հետագայում «Գաղութ» թերթի պաշտոնական խմբագիր և ակտիվ աշխատակից-ֆելյետոնիստ... Այդ անձանց հետ քիչ էի հանդիպում, առավել ևս, որ ես 1909թ. ուրիշի անձնագրով ապրում և սովորում էի Մոսկվայում: Հիմնականում պատմա-փիլիսոփայական առարկաներ էի ուսումնասիրում՝ որպես Մոսկվայում անլեգալ ապրող պետք է խստիվ զգուշանալ: Բուհն ավարտելուց հետո 1913 թ. մնացի պրոֆեսորի պաշտոնի նախապատրաստվելու համար: Սակայն որպես քաղաքականապես անբարեհույս հետագվեցի նախարարության կողմից:

Ստիպված լինելով հայրենիք վերադառնալ՝ ես ոչ մի րոպե չէի հրաժարվում գիտական գործունեությամբ զբաղվելու մտքից: Հանգուցյալ եղբորս (Եղիա Զուբարի հոր) և քեռիներիս կողմից ես ապահովվեցի իրավախորհրդատուի թեթև աշխատանքով և ամուրի, նյութապես ապահովված լինելով՝ նորից տրվեցի գիտական աշխատանքին, իսկ 1914 թ.՝ նաև հասարակական աշխատանքին:

Դրանք, հայկական հասարակական լուսավորական հիմնարկներում ազդեցության համար, իշխող խոշորբուրժուական պահպանողական և լիբերալ մտավորականության դեմ պայքարելիների շարքից ելած հայկական մանր բուրժուական մտավորականության պայքարի տարիներն էին:

Խոշորբուրժուական մտավորականությունը գլխավորում էին Գ. Խ. Զալխուշաչյանը, Գ. Ի. Զուբարը, Ա. Ի. Սալտիկովը և այլոք: Մանրբուրժուական դեմոկրատական մտավորականությունը ներկայացված էր պայքարելիների շարքերից ժողովրդական ուսուցիչներով, երիտասարդ բժիշկներով, իրավաբաններով, «փախտական» մտավորականությամբ: Այդ խմբին հարում էր նաև քաղաքային (Ռոստով-Նախիջևանյան) մտավորականության դեմոկրատական մասը՝ երիտասարդներից: Հին բուրժուական, ազգային-կղերական մտավորականությունն ուներ իր «Լույս» օրգանը: Նոր երիտասարդական - բուրժուական մտավորականությունն, ի հակակշիռ «Լույսի», սկսեց հրատարակել իր «Գաղութ» օրաթերթը: Այն անկախ էր, բայց գերակշռող դեր էին խաղում դաշնակցականները: «Գաղութը» ոչ միայն հասարակ գրական գործ էր, այլև մեծ և ազդեցիկ գաղութի դեմոկրատական մտավորականությանը համախմբող հասարակական գործոն էր: Ես հարեցի այդ մտավորականությանը և «Գաղութի» ակտիվ աշխատակիցներից մեկն էի և ընդհանրապես գործուն մասնակիցը՝ ոչ միայն որպես հրապարակախոս, այլև զեկուցող-դասախոս: Այդ «երիտպյուղացիական» մտավորականությունն ուներ ոչ միայն իր քաղաքային խումբը, այլև իր զինակիցները մարզի պյուղերում (Զալթիր, Թոփթի, Մեծ Սալա): Որքան ես հիշում եմ, թերթին աշխատակցում էին Համբարձում Տերտերյանը, Խաչերես Փորքչյանը, Իսահակ Մյասնիկյանը, Սիմոն Գամալյանը և ուրիշներ: Թերթին աջակցում էին՝ այն համարելով իրենց գաղափարների արտահայտիչը, Հարություն Մահտեսյանը, Գրիգոր Լոդոչնիկյանը, Ալեքսանդր Զոհրաբյանը, Աբ-

սի Դեմիրճյանը, Ստեփան Զոհրաբյանը, Եղիա Աղայանը, Սարգիս Այդինյանը, Սերովբե Տիրացույանը, Եղիազար Խավրանյանը, Արտաշես Հովակիմյանը, Արաքսյա Առաքելյանը, Սարգիս Տիրացույանը, Հովհաննես Տերտերյանը, Օհան Զոհրաբյանը, Լուսպարոն Զոհրաբյանը և ուրիշներ: Թվարկված անձանց մեջ կան մի քանիսը, ովքեր դաշնակցական չեն եղել, օրինակ՝ Խ. Փորքչեյանը, Ա. Դեմիրճյանը, սակայն, այսուհանդերձ, այն տարիներին ըստ իրենց տեսակարար կշիռի հիմնական միջուկը կազմում էին դաշնակցականները: Շատ բաներում ես այդ խմբավորմանն աջակցում էի: Սակայն պատմական ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ Զալխուչյան-Զուբար ազգային-կղերական ավանդական վոտչինայի դեմ պայքարում ես պաշտպանում էի ոչ միայն առաջադեմ - դեմոկրատական պլատֆորմը, այլև 1914-1915թթ. կամավորական շարժումը, մասնակցությունը Ազգային խորհրդի տեղական բաժանմունքներին, մասնակցությունը Թբիլիսիում ստեղծված 1915թ. փետրվարի Ազգային խորհրդի: Սակայն ազգային տրամադրվածությանս հակառակ, ես չուտով պայքար ծավալեցի ցարական իմպերիալիզմի մերկացման ուղղությամբ: Ես թարգմանեցի և տպագրեցի ականավոր բոլշևիկ - միջազգայնագետ Մ. Պավլովիչի «Ռուսաստանը և հայկական հարցը» հայտնի հոդվածը, դուրս եկա Ազգային խորհրդից, դադարեցի աշխատակցել «Գաղութին» և այլն:



Տեղեկանքը վկայում է, որ անվտանգության լեյտենանտը այրել-ոչնչացրել է Գ. Չուբարյանից առգրավված արխիվի մի մասը, որպես "օպերատիվ եւ այլ արժեք չունեցող"

Մ. Պավլովիչի աշխատության թարգմանության և հրատարակման կապակցությամբ՝ 1916թ. վերջին իմ դեմ դատական - քաղաքական գործ սկսվեց, որն ինձ ստիպեց ժամանակավորապես թաքնվել Կովկասում, որտեղ և ինձ հասավ փետրվարյան հեղափոխության լուրը:

1917թ. ապրիլին ես արդեն Դոնի-Ռոստովում էի և միաժամանակ ընտրվեցի դաշնակցության և էսէռների նախիջևանյան քաղաքային կոմիտեի անդամ, ընդ որում կուսակցության բոլոր հարցերով նրանք այդ օրերին (հետագայում և շատ դեպքերում) գնում էին ձեռք-ձեռքի տված՝ տեղերում նույնիսկ կազմակերպորեն միավորվելով: Մինչև 1917թ. հուլիսը չարունակվում էր իմ երկակի գործունեությունը: Փետրվարյան հեղափոխության օրերին ես հիմնականում պաշտպանողական էի և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու քաղաքականության, այսինքն՝ միակ պրոլետարական-հեղափոխական քաղաքականության կողմնակիցը չէի:

Քաղաքային Դումայի ընտրություններում ես անցա «սոցիալիստական» բլոկի (էսէռներ, մենշևիկներ, դաշնակցականներ) ցուցակներով և Դումայի էսէռա-դաշնակցական խմբավորման ղեկավարներից մեկն էի:

Պրոլետարիատի հունիս-հուլիսյան ելույթներից հետո դաշնակցականները, ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրագավառում, ուժեղացրեցին իրենց աշխատանքն ընդդեմ համառուսաստանյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության: Այդ ամենը ինձ ստիպեց մեկընդմիշտ հրաժարվել ոչ միայն դաշնակցականների հետ ժամանակավոր կազմակերպական կապից, այլև քաղաքական չվում պահանջող աշխատանքից: Հուլիսին ես հեռացա դաշնակցական կուսակցության քաղաքային կոմիտեից, ինչին նրանք չհամակերպվեցին և նախընտրեցին, որպես դաշնակցության համար անընդունելի դործչի, ինձ ետ կանչել քաղաքային Դումայից:

Մի քանի ամիս անց Ռոստով-Նախիջևանյան համայնքի ընտրություններում ես արդեն մենակ հանդես չէի գալիս, այլ աշխատավորական մտավորականությանը կազմակերպեցի երկու ճակատով պայքարի՝ ինչպես Զալխուչյան-Զուբար-Սալտիկով ազգային-կղերական ճակատի, այնպես էլ դաշնակցության դեմ: Այդ խմբի մեջ մտնում էին բացառապես նոր դեմոկրատական մտավորականության ներկայացուցիչները, ինչպես, օրինակ՝ դոկտոր Ղևոնդ Քրիստափուրյանը, ուսուցիչ Զաքարե Խոչարյանը և Մարտիրոս Ալթոյանը...

[1938թ. նոյեմբերի 28:] Հայ-վրացական պատերազմի կապակցությամբ ես բացահայտ ելույթ ունեցա Հ. Տերտերյանի, Գ. Զալխուչյանի, Գ. Զուբարի և այլոց դեմ, ովքեր վիճախարի «Համաժողովրդական» միտինգի ժամանակ պահանջում էին «Հաղթական» հարձակում Թբիլիսիի վրա, «եպիպտացորենային» հանրապետության ոչնչացում՝ հայկական հակահեղափոխական բուրժուազիան այդպես էր անվանում Վրացական Հանրապետությունը:

Ես պահանջում էի կառավարությունների ղեկավարների միջոցով «եղբայրության, ավանդական խաղաղ համակեցության և այլ կոչով դիմել իրենց եղբայրակից ժողովուրդներին»:

Սակայն այդ իմ ելույթներն արդյո՞ք հեղափոխական բնույթի ելույթներ էին: Իհարկե, ոչ: Դրանք պրոլետարա-

կան հեղափոխականի եւլույթներ չէին: Սակայն դրանք պրոլետարական ինտերնացիոնալիզմի ակտեր էին: Հետեւաբար, սահմանազատվելով դաշնակցականներից, ես չանցա հեղափոխական-դասակարգային քաղաքականության դիրքերը: Հենց այդ դիրքորոշումը հեղափոխության և հակահեղափոխության միջև, որ հղի է քաղաքական տատանումներով, դեռևս երկար ժամանակ իրեն զգացնել էր տալիս իմ քաղաքական գործունեության մեջ:

Մինչև բուրժուական Հայաստան իմ տարագրվելու հանգամանքներին անցնելը՝ կնշեմ Ռոստով-Նախիջևանյան դաշնակցական կոմիտեի կազմը, վերապահելով, որ ամբողջականության համար չեմ երաշխավորում, քանի որ փաստաթղթեր չկան, շատ ժամանակ է անցել, և, որ կարևորն է՝ ընտրությունները պատահական էին: Ինձանից հետո ինչ է կատարվել՝ չգիտեմ: Տեսակարար կշիռի կարգով կոմիտեի անդամներն էին Համբարձում Տերտերյանը՝ իրավաբան, Արտաշես Հովակիմյանը՝ Վլադիկավկազի երկաթուղու քաղաքային կայարանի պետ, Արաքսի Աքաքսյանը՝ վաճառական, Ավագ Մելիք-Վարդանյանը՝ Գաբրիելյան եղբայրների կաշվի գործարանի ծառայողմասնագետ, Ստեփան Զոհրաբյանը՝ փոխադարձ վարկի ընկերության հաշվապահ, Իսահակ Մյասնիկյանը՝ իրավաբան, Հարություն Մահտեսյանը՝ ժողովրդական ուսուցիչ, Գրիգոր Լողչնիկյանը՝ ժողովրդական ուսուցիչ, Եղիա Զուբարը՝ ուսանող, Հովհաննես Տերտերյանը՝ սեմինարիայի նախկին ուսուցիչ, հետագայում՝ կոմունիստ, Սերոբ Տիրացույանը՝ ժողովրդական ուսուցիչ, Հարություն Գայբուրոյանը՝ Դոնի-Նախիջևանի սեմինարիայի ուսուցիչ, Վահագն Ավագյանը՝ ժողովրդական ուսուցիչ: Այլ ազգանուններ չեմ հիշում: Այդ անձանց թվից Հ. Տերտերյանը և Ա. Հովակիմյանը Ռոստովի քաղաքային Դումայի, ինչպես նաև Ռոստովի բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների խորհրդի գործկոմի անդամներ էին, իսկ Ս. Զոհրաբյանը, Ի. Մյասնիկյանը և Հ. Մահտեսյանը Դոնի-Նախիջևանի Դումայի անդամներ էին:

Ես ինչո՞ւ 1919 թ. ամռանը տարագրվեցի Ռոստովից և անցա դաշնակցական Հայաստան: «Ազատ եկեղեցականների» տխրահռչակ առաջնորդ Բենիկ վարդապետը «Խորհրդային Հայաստան» թերթի էջերում ցարական ոստիկանության հետ նրա կապերի և սադրիչ գործունեության մասին Politicus կեղծանվան տակ իմ տպագրած «Մերկացնել ազատ եկեղեցականներին» հոդվածում[16] իմ կողմից իբրեն մերկացնելուց հետո, համապատասխան հիմնարկներին, ինչպես նաև ականավոր կուսակցական-խորհրդային աշխատողներին (Ա. Խանջյան, Ա. Երզնկյան, Ա. Մանուչարյան, Պ. Թորոսյան և այլն) ուղարկեց սեփական արտագրության զրպարտչագիր, որտեղ ասված էր, որ ես նահանջել եմ դենիկինյան բանակի հետ և, արտասահման տարագրվելու հնարավորություն չունենալով՝ եկել եմ Հայաստան: Բենիկ վարդապետին, իհարկե, քաջ հայտնի էր, որ Խորհրդային իշխանությունից փախչող Գ. Զուբար(յան)ը Գրիգոր չէ, այլ Գևորգ Զուբար, նույնպես նախիջևանցի, իրավաբան, լրագրող և, որ գլխավորն է, զրպարտիչ Բենիկի սրտակից «ընկեր-եղբայրը», որի «Ինչո՞ւ հեռացանք» գրքում ի հայտ է գալիս այդ Գ. Զուբարի դիմանկարը: Եվ, ընդհանրապես, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երկու Գ. Զուբարներին այդպես խառնելը կատարվում է ոչ միայն սադրիչ նպատակով (նմանատիպ մի բան էլ արեց Սուրեն Երզնկյանն իր «Զղջացող ինտելիգենցիան» գրքում), այլ նաև լրիվ բարեխղճորեն: Չի բացառվում, որ ոչ միայն իմ, այլև Ե. Զուբարի դաշնակցական գործունեությունը և Գ. Զուբարի ակնհայտ դաշնակցական հեղափոխական գործունեությունը վերագրված է ինձ: Ես Ռոստովը թողեցի այն ժամանակ, երբ Դենիկինը «իր փառքի գագաթնակետին» էր, սպիտակ ձիու վրա: Երբ Դոնի մարզը գրավվեց Կարմիր Բանակի կողմից, ես անմիջապես մեկնեցի Ռոստով: Քանի որ չորրորդ բաժ. պետ Գր. Իլյինի կողմից առաջարկվել էր պատմել Դենիկինի նկատմամբ ունեցած իմ վերաբերմունքի մասին, ապա և անհրաժեշտ եմ համարում բացատրել. ես Դոնի մարզի՝ կազակական-գեներալական, բուրժուա-կալվածատիրական օջախի ծնունդ եմ: Հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը, բոլշևիկները, նույնիսկ էսէռա-մենշևիկյան ընդդիմությունն իր վրա զգաց «Դենիկին - Վրանգել - Շկուրո և ընկ.» ռազմա-քաղաքական դաշինքի մեքենայությունները - հմայքները:


...Լեզալ գործունեությունն արդեն բացառվում էր նույնիսկ մանր բուրժուական դեմոկրատների համար: Այդ աշխարհա-քաղաքական առանձնահատկություններով է բացատրվում մեր պայքարը Դենիկինի դեմ: Ես անձամբ նաև անհատական չարժառիթ ունեի. ալեքսեևո-դենիկինյան բանդիտների կողմից գազանաբար սպանվել էր իմ ավագ եղբայրը: Ես գյուղացիներին ուղղված՝ Դենիկինի թիկունքում ապստամբելու կոչի հեղինակն էի, որը գրված էր երկու լեզուներով՝ ռուսերեն և հայերեն: Այստեղ, ինչպես և ժողովներում ունեցած ճառերս, անգամ իմ չափավոր գործունեությունը, անհնարին էին դարձնում հետագա գտնվելս Ռոստովում: 1919 թ. ամռանից, ինչպես հայտնի է, կազակական մարզերը, Սև ծովի ափը և ծովային տրանսպորտը կապ ունեին Անդրկովկասի հետ: Պարզ կահպատակ հայ փախստականի անվան տակ, ամենայն զգուշություններով, ես եկա Բաթում՝ մտադրվելով մնալ Թբիլիսիում, սակայն երրորդ օրը, որպես «անցանկալի օտարերկրացի», ես արտաքսվեցի Վրաստանի սահմաններից և volens-nolens[17] մեկնեցի բուրժուական Հայաստան: Այդ ժամանակ Հայաստան ուղևորվեցին նաև շատ կոմունիստներ, էսէռներ, մենշևիկներ (Կասյան, Մռավյան, Ալավերդով, Զուրաբով, Ավդեև և այլոք): Երևան ժամանելու առաջին իսկ օրվանից, ինչպես կուսակցության «Սոցիալիստական հեղափոխություն» կիսապաշտոնական օրգանի էջերում («Կամավորական բանակը և բանվոր դասակարգը», «Կամավորական բանակը և գյուղացիությունը», «Դեպի հին Ռուսաստան» ընդհանուր վերնագրի տակ և այլն) ես պայքար սկսեցի «Կամավորական բանակի» դեմ, որն ի վերջո, առաջ բերեց գնդապետ Զինկևիչի՝ Դենիկինի ներկայացուցչի բողոքը՝ ուղղված դաշնակցական կառավարությանը...

Փաստաթուղթ III

Հարցաքննության արձանագրություն[18]
Ընդդեմ Գրիգոր Համբարձումի Զուբարյանի
3 հունվարի 1919 թ.
[Հարցաքննությանը սկսված է ժամը 12.45-ին]

Հարց. Աքսորից վերադառնալուց հետո Դուք ի՞նչ աշխատություն եք ունեցել Էջմիածնի հետ:

Պատասխան. Աքսորից վերադառնալուցս հետո Ամենայն Հայոց Գևորգ Ջ Կաթողիկոսը բազմիցս պահել է ինձ՝ խնդրելով իրեն օգնել կաթոլիկոսական հարցերով խորհրդաժողովների ու փաստաթղթեր կազմելու գործում: Մոտ երեք ամսից աքսորից վերադարձս մի քանի օր հետո ես հատուկ դրությամբ ատացա կաթողիկոս Զորեքյանի հրավերը, որում նա առաջին հերթին ինձ տեղեկացնում էր բարեհաջող վերադարձի կապակցությամբ և երկրորդ՝ խնդրում էր տեսակցել իրեն՝ հայ եկեղեցու Սահմանադրության հարցի վերաբերյալ խորհրդակցելու համար: Նա ինձ ընդունեց իր երևանյան բնակարանում, և նրա խնդրանքով ես իրեն խորհրդատվություններ մատուցեցի հայ եկեղեցու սահմանադրության ու Խանանուչյանի բազմամիլիոն ժառանգության հարցերի կապակցությամբ:


Գ. Չուբարյան

Հարց. Որքա՞ն հաճախ եք Դուք եղել կաթողիկոս Զորեքյանի մոտ:

Պատասխան. Կաթողիկոս Զորեքյանի հետ անձամբ հանդիպել եմ ոչ պակաս, քան տասն անգամ, բացի այդ, նա խնդրում էր նաև իմ գրավոր խորհրդատվությունները:

Պետք է ասեմ, որ այդ բոլոր հանդիպումները կայացել են Երևանում, կաթողիկոսի՝ Լենինի N49 հասցեում գտնվող բնակարանում:

Հարց. Ի՞նչ հաճախ եք գտնվել Էջմիածնում:

Պատասխան. Էջմիածնում ես եղել եմ ընդամենը մեկ անգամ, այն էլ ոչ թե կաթողիկոս Զորեքյանի մոտ, այլ հայրենադարձ հայերի համար կառուցվող տների[19] շինարարությանը և մայր տաճարի շենքի վիճակին ծանոթանալու համար:

Հարց. Այդ ժամանակ կաթողիկոս Զորեքյանն արդյո՞ք Էջմիածնի իր նստավայրում էր:

Պատասխան. Այո, նա Էջմիածնի իր նստավայրում էր, քանի որ այդ մասին ինձ հայտնեց նրա աշխատող Պաշան, կարծեմ Մելիք-Ղազարյան:

Հարց. Որտեղի՞ց էր կաթողիկոս Զորեքյանն իմացել աքսորից Ձեր վերադառնալու մասին:

Պատասխան. Ես չեմ կարող ճշգրիտ ասել, բայց ենթադրում եմ, որ այդ մասին նրան հայտնել են հոգևոր խորհրդի անդամներ, պատմական գիտությունների դոկտոր Շահ-Ազիզը և Եղիշե վարդապետը, որոնց մինչ այդ ես տեսել էի Երևանում:

Հարց. Ինչո՞վ կբացատրեք, որ կաթողիկոս Զորեքյանն իր եկեղեցական գործերի խորհրդատվությունների հարցով դիմել է հենց Ձեզ:

Պատասխան. Ես դա բացատրում եմ նրանով, որ կաթողիկոս Զորեքյանը երեւի նկատի է առել եկեղեցական-քաղաքական պատմության, եկեղեցա-կանոնական իրավունքի իմ հատուկ գիտելիքները և ինձ ճանաչել որպես խորհրդային իրավունքի մասնագետի: Իր դերն է խաղացել նաև այն, որ ես նրա նախկին աշակերտն եմ, և մեր միջև երկարամյա բարեկամական հարաբերություններ են եղել: Կաթողիկոսի կողմից այդպիսի վերաբերմունք ես տեսել եմ նրա հետ ունեցած առաջին իսկ հանդիպումների ժամանակ:

Հարց. Ստույգ պատմեք կաթողիկոսի՝ Ձեր հետ ունեցած զրույցների մասին:

Պատասխան. Առաջին իսկ հանդիպումների ժամանակ կաթողիկոս Զորեքյանն ինձ ասում էր, որ ինչպես իր նախաձեռնությամբ, այնպես էլ Խորհրդային կառավարության հանձնարարությամբ նա լուրջ աշխատանքներ է կատարում, բայց հաճախ դժվարություններ են առաջանում որակյալ աշխատողներ չունենալու պատճառով: Ըստ նրա հայտարարության, առանձին անձինք հրաժարվում են իր մոտ աշխատել և ընդհանրապես խուսափում են իրենից՝ վախենալով, որ դրա համար կհետապնդվեն Խորհրդային իշխանության կողմից: Այդ կապակցությամբ կաթողիկոսն ինձ հարցրեց, թե ես համաձա՞յն եմ դառնալ հոգևոր ճեմարանի ռեկտորը, աշխատակցել «Էջմիածին»[20] ամսագրին և միաժամանակ նրան առընթեր իրավախորհրդատու լինել:


Ես պատասխանեցի, որ գաղափարական և քաղաքական նկատառումներով նրա մոտ մշտական աշխատող լինել չեմ ցանկանում, բայց առանձին կոնկրետ հարցերով պատրաստ եմ աջակցել իրեն:

Իմ այդպիսի հայտարարության շնորհիվ Զորեքյանը համաձայնվեց ինձ հետ աշխատակցել առանձին հարցերի առիթով, մասնավորապես իրավական բնույթի խորհրդատվության և ինչպես իրավաբանական, այնպես էլ քաղաքական բնույթի կարևորագույն փաստաթղթեր կազմելիս: Պետք է նշել, որ Զորեքյանը քանիցս ինձ ասել է, որ եթե ես համաձայնեմ լինել նրա մշտական աշխատողը, նա Խորհրդային իշխանության առջև կմիջնորդի՝ ինձ Երևանում և Էջմիածնում բնակվելու իրավունք տալու մասին:

Հարց. Ըստ կաթողիկոս Զորեքյանի հետ ունեցած պայմանավորվածության, Դուք ի՞նչ փաստաթղթեր եք պատրաստել կաթողիկոսի համար:

Պատասխան. Կաթողիկոս Զորեքչյանի հանձնարարությամբ, երբեմն իմ նախաձեռնությամբ և նրա համաձայնությամբ ես շատ փաստաթղթեր եմ գրել, որոնցից հիշում եմ՝ Հայ Եկեղեցու սահմանադրությունը, որը ես հիմնավորապես խմբագրել եմ, կաթողիկոսի ողջույնը ԱՄՆ-ում անցկացվող Հայկական համաշխարհային կոնգրեսին, Թուրքահայաստանը Խորհրդայինին վերամիավորելու հարցով, կաթողիկոսի տարաբնույթ հրահանգչական և շրջաբերական նամակներն արտասահմանյան թեմական առաջնորդներին, պատրիարքություններին և Կիլիկիայի կաթողիկոսին, դիմումը ժողովուրդների առաջնորդին և նրա տեղակալներ Մոլոտովին և Վորոշիլովին՝ էջմիածնին նյութական օգնություն ցուցաբերելու, Հայկական հարցի վերաբերյալ հուշագիրը, Հայ Եկեղեցու հավաքի ենթադրվող օրվա, Հայ Եկեղեցու սահմանադրության, Երուսաղեմում հայերի վիճակի և ազգային-քաղաքական արխիվները Խորհրդային Հայաստան տեղափոխելու մասին և այլն:

Ինչպես նաև փաստաթղթեր եմ գրել Ռուս-ուղղափառ եկեղեցու ինքնուրույնության 500-ամյա հոբելյանի առթիվ Մոսկվայում այդ եկեղեցու հավաք գումարելու կապակցությամբ:



«Գործում» պահվող Գրիգոր Չուբարյանի ինքնագիր կենսագրության պատճենը:

Հարց. Այդ բոլոր աշխատանքների համար Դուք վարձատրություն ստացե՞լ եք:

Պատասխան. Դեպքից-դեպք կաթողիկոսն ինձ փող էր տալիս, ինչպես ինքն էր ասում՝ իր անձնական ռոճիկից, ընդամենը, մոտավորապես տասհինգ հազար ռուբլուց ոչ ավելի, ինչը, ելնելով իմ կատարած աշխատանքի որակից և քանակից, աննշան գումար է կազմում:

Հարց. Ի՞նչն էր Ձեզ այդպիսի զոհաբերության դրդում, մանավանդ, ինչպես Դուք վերևում ասեցիք, գաղափարական և քաղաքական նկատառումներով չեք ցանկացել կապվել կաթողիկոսարանի հետ:

Պատասխան. Միանգամայն ճիշտ է, իմ մեկուկեսամյա որակյալ աշխատանքը գնահատելիս ես շատ բան չստացա, բայց դրա փոխարեն ես բարոյապես բավարարված էի՝ լավ իմանալով, որ Հայ ժողովրդի համար օգտակար գործ եմ անում: Ընդ որում, ես ենթադրում էի, որ այդ փաստաթղթերը, անցնելով խորհրդային պաշտոնական կապուղիներով, Խորհրդային իշխանության ներկայացուցիչներին կհամոզեն Խորհրդային Հայրենիքին իմ նվիրվածությունը:

Հարց. Կաթողիկոս Զորեքչյանի համար Ձեր կողմից 1948թ. հոկտեմբերին գրված փաստաթղթում, որը հասցեագրված է ԽՍՀՄ Արտաքին գործերի նախարար ընկ. Վ. Մ. Մոլոտովին և ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ ընկ. Կ. Ե. Վորոշիլովին, որը Հայերի ղրության և Պաղեստինում Հայոց պատրիարքության արխիվային ձեռագրերի պահպանման մասին է, բառացի գրված է այսպես. «...Հայկական եկեղեցին նախկինում, ճիշտ է ոչ հաճախ, դեպքից-դեպք, սակայն օգտվում էր ռուսական կառավարության անուղղակի աջակցությունից...»:

Այդպես չէ՞:

Պատասխան. Այո, շատ ճիշտ է: Նշված փաստաթղթում այդպիսի բան կա, և բերված քաղվածքը համապատասխանում է իրականությանը:

Հարց. Հայկական Եկեղեցու նկատմամբ ցարական Ռուսաստանի վերաբերմունքի մասին հարցի այդպիսի մեկնաբանությունը հակահեղափոխական է, հետևաբար այդքանից հետո ինչպե՞ս եք համարձակվում հաստատել, որ կաթողիկոսի համար Ձեր կողմից գրված փաստաթղթերով Դուք հույս ունեիք Խորհրդային իշխանության մարմիններին համոզել Խորհրդային Հայրենիքին Ձեր նվիրվածությունը:

Պատասխան. Ես լիովին հաստատում եմ դրա պատմական ճշտությունը: Պատմականորեն կարելի է ապացուցել, որ Հայտնի պատմական փուլերում Ռուսաստանի ռուս-ցարական կառավարությունը Հայկական Եկեղեցուն լայն իրավունքներ էր տվել և պաշտպանում էր նրան: Ավելին, Հայկական Եկեղեցին ոչ միայն եկեղեցական կազմակերպություն, այլ նաև միաժամանակ ազգային ինստիտուտ էր համարվում:

Հարցաքննության արձանագրությունն իմ կողմից կարդացվել է և գրված է ըստ իմ խոսքերի

Գ. Չուբարյան:

Հարցաքննեցին՝
Հայկական ԽՍՀ ՊԱՆ բաժնի պետ,
փոխգնդապետ Հակոբյան

Հայկական ԽՍՀ ՊԱՆ օպերլիազոր,
լեյտենանտ Վասիլև

[Հարցաքննությունն ընդհատված է ժամը 12.10-ին:]

Փաստաթուղթ IV

Հարցաքննության արձանագրություն[21]
Մեղադրյալ Գրիգոր Համբարձումի Չուբարյանի
4 Հունվարի 1949թ.
[Հարցաքննությունը սկսված է ժամը 12.00-ին]

Հարց. Զորեքչյանի հետ հանդիպումների ժամանակ Ձեր միջև կայացած զրույցները սահմանափակվո՞ւմ էին

միայն Կաթողիկոսի կարևորագույն փաստաթղթերը կազմելու և խմբագրելու վերաբերյալ ստացվող առաջադրանքների շրջանակով:

Պատասխան. Իմ կողմից կազմվող փաստաթղթերի ընթերցման և քննարկման ընթացքում, բնականաբար, մեր միջև զրույցներ-խոսակցություններ են եղել այդ փաստաթղթերում չոչափվող հարցերի առիթով և կապակցությամբ, իսկ երբեմն՝ անկախ այդ հարցերից: Երբեմն նրա արտահայտություններում զգացվում էին տրամադրություններ, որոնք չի կարելի Խորհրդային իշխանությանը նրա անվերապահ նվիրվածության նշաններ համարել:

Հարց. Խոսեք ավելի կոնկրետ:

Պատասխան. Զորեքջյանը, հասնելով բարձր աստիճանի, հասկանալի է, որ Խորհրդային իշխանության նկատմամբ քաղաքականապես լոյալ է, բայց պնդել, որ նա լիովին և մինչև վերջ նվիրված է՝ չեմ կարող:

Զորեքջյանն ասում էր, որ Խորհրդային սահմանադրությունը երաշխավորում է կրոնի ազատությունը, իսկ տեղերում եկեղեցիներ բացելիս հաճախակի դժվարություններ են ստեղծում:

Կաթողիկոսության հիմնական աղբյուրներից մեկը Զորեքջյանը համարում է արտասահմանից դրամական մուտքն արտարժույթով՝ դոլարով և սթերլինգով, բայց Խորհրդային պաշտոնական պարիտետի պատճառով, ոտնահարվում են էջմիածնի նյութական շահերը:

Ըստ Զորեքջյանի հայտարարության, Խորհրդային իշխանության ներկայացուցիչները, հաճախ անբավականաչափ ստուգված տեղեկության հիման վրա, երբեմն անվստահություն են հայտնում հայ եկեղեցու արտասահմանյան հոգևոր հայրերի լոյալության նկատմամբ՝ հաշվի չառնելով այն յուրահատուկ քաղաքական պայմանները, որոնցում նրանք ստիպված են աշխատել:

Չնայած Միութենական կառավարության թույլտվությանը և Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդի նախագահ Ս. Կ. Կարապետյանի խոստումներին, տեղական իշխանությունը մինչ այսօր էջմիածնին չի հանձնում վանքապատկան շինությունները:

Կաթողիկոսության կարիքների համար, մասնավորապես հոգևոր ճեմարանի համար, որակյալ կադրեր են հարկավոր, սակայն այդ կադրերը հրաժարվում են աշխատել Զորեքջյանի մոտ՝ վախենալով, որ դրա համար Խորհրդային իշխանությունն իրենց կկասկածի գաղափարախոսական թշնամության և քաղաքական անբարեհուսության մեջ:

Զորեքջյանը համարում էր, որ հակախորհրդային ճամբարը համախմբվում է ոչ միայն դիվանագիտորեն, այլ նաև քաղաքականապես և ռազմավարորեն: Կաթողիկոսն անհանգստություն էր արտահայտում, որ Խորհրդային Միությանը և նրա դաշնակիցներին ծանր կլինի համակապիտալիստական ռազմաքաղաքական ճակատի առջև, ընդ որում չի բացառվում այն հնարավորությունը, որ անգլոսաքսոնյան դաշինքը Թուրքիային կտա «քարտ-բլանշ» Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ, ինչը կարող է հանգեցնել մեր երկրի բոլոր հայերի ոչնչացմանը:

Զորեքջյանը, արժեւորելով խորհրդային ժողովուրդների հերոսությունը, խորհրդային տեխնիկայի և ռազմավարության բարձր որակը, թերագնահատում էր կապիտալիստական երկրների թիկունքի սոցիալական ու քաղաքական թուլությունը և Խորհրդային Միության հանդեպ ամբողջ աշխարհի աշխատավորների համակրանքը: Ելնելով պացիֆիստական բարեպաշտության զգացմունքից՝ նա գերադասում էր Խորհրդային դիվանագիտության կողմից մասնակի զիջումները և փոխզիջումները՝ հանուն խաղաղության պահպանման:

Չնայած երկարատև բարեկամական հարաբերություններին և իմ նկատմամբ իր սիրո ու հարգանքի բազմաթիվ հավաստումներին, ես, միևնույն է, համոզված եմ, որ նա ինձ հետ ոչ միշտ և ամեն ինչում չէ, որ անկեղծ է եղել: Դաստիարակությունը, անձնական բնավորությունը և բարձր հոգևոր կոչումը մի կողմից՝ և այն, որ ես նախկին քաղբանտարկյալ եմ, Խորհրդային իշխանության կողմից բռնադատվել եմ հակախորհրդային գործունեության մեղադրանքով, որոշ պատնեշներ և սահմաններ էին առաջացնում մեր փոխհարաբերություններում:

Զորեքջյանը խոշոր գիտնական-կղերական և եկեղեցական քաղաքագետ Մաղաքիա Օրմանյանի նախկին աշակերտն է:

Բարձրագույն աստվածաբանական կրթությունը նա ստացել է Գերմանիայում, դոգմատիկ աստվածաբանության պրոֆեսոր, Հայանի բողոքական Գառնակի մոտ: Հենց Զորեքջյանի խոստովանությամբ, իր վրա ուժեղ ազդեցություն է ունեցել Մաղաքիա Օրմանյանը՝ հետագայում Կոնստանդնուպոլսի պատրիարքը:

Օրմանյանը հայտնի է որպես էրուդիտ և գործունեություն զգույշ մարդ: Այդ առումով Զորեքջյանն, իրոք, նման է իր ուսուցչին: Զգուշավորությունը, որևէ կտրուկ կարծիքներից և գործողություններից հրաժարվելը կազմում են նրա հայրապետական գործունեության բնորոշ գծերը:

Հարկավոր է նշել և այն, որ Զորեքջյանի գործունեության մեջ, որպես հայկական եկեղեցու ղեկավարի, վայրընթաց գիծ է զգացվում աշխատանքի տեմպում և բնույթում: Հայրապետական աթոռի տեղապահ եղած ժամանակ և կաթողիկոս ընտրվելու սկզբնական շրջանում նրա գործունեության տեմպերը ուժեղ էին, արտասահմանյան աթոռները և թեմերը ղեկավարելիս խորհրդամետ գիծն ավելի վառ էր արտահայտված: Ծերությունը, հոգնածությունը, կադրերի բացակայությունն, անշուշտ, նշանակություն ունեն, բայց չի բացառվում նաև քաղաքական շարժառիթների հնարավորությունը՝ միջազգային-քաղաքական իրավիճակի և հակախորհրդային քարոզչության սրվածությունը հայ բնակչություն ունեցող արտասահմանյան երկրներում, արտասահմանի հայերի ճակատագրի, արտասահմանից միջոցների մուտքից զրկվելու և էջմիածնի ներկայացուցիչներին քաղաքական դժվար կացության մեջ դնելու վախը:

Ինձ հետ զրուցելիս Զորեքջյանը կարծիք արտահայտեց, որ երբեմն Խորհրդային իշխանության ներկայացու-

ցիչներն իր արտասահմանյան եկեղեցական ներկայացուցիչներից այնպիսի ելույթներ են պահանջում, որոնք կարող են նրանց քաղաքականապես վարկաբեկել:

Չի բացառվում այն հնարավորությունը, որ նման պատճառաբանությամբ Զորեքչյանն արդարացնում էր իր պասիվությունը՝ ընդհուպ մինչև արտասահմանյան պատրիարքությունների և թեմերի անկախության դեմ պայքարում հենց իր իրավունքներից փաստացի հրաժարվելը:

Գրված է ըստ իմ խոսքերի՝ Գ. Զուբարյան:
Հարցաքննեցին՝
Հայկական ԽՍՀ ՊԱՆ
բաժնի պետ, փոխգնդապետ
Հակոբյան

Հայկական ԽՍՀ ՊԱՆ օպերլիազոր,
լեյտենանտ
Վասիլև

[Հարցաքննությունն ավարտվել է ժամը 17.00-ին]

Փաստաթուղթ V
Հարցաքննության արձանագրություն[22]
Մեղադրյալ Գրիգոր Համբարձումի Զուբարյանի
5 հունվարի 1949թ.
[Հրացաքննությունը սկսված է ժամը 11.05-ին]

Հարց. Քննչությանը հայտնի է, որ Դուք Երևանում անօրինականորեն եք ապրել, և Զորեքչյանի հետ Ձեր հանդիպումները գաղտնի բնույթ են կրել: Ցուցմունք տվեք ըստ էության:


Պատասխան. Ճամբարից իմ վերադառնալուց մոտավորապես 10-15 օր անց ես ստացա Կաթողիկոսի չնորհավորական նամակը: Մրարի մեջ նաև 1000 ռուբլի էր դրված: Միաժամանակ նա բաճկոն ու տաբատ էր ուղարկել՝ ափսոսանք հայտնելով, որ ձեռքի տակ լավ որակի կոստյում չունի: Այդ ամենը բերեց անասնաբուժական ինստիտուտի նախկին դեղեներ Գրիգոր Հարությունյանը՝ նույնպես Զորեքչյանի նախկին աշակերտը և իմ դպրոցական ընկերը, որն այդ ժամանակ Եղիշե անվան տակ վանական աստիճան էր ընդունել: Կաթողիկոսը խնդրում էր, որ այցելեմ իմ ծերունի-ուսուցչին: Ես բանավոր համաձայնություն տվեցի և մի քանի օր անց Լենինի փողոցի վրա գտնվող նրա երևանյան բնակարանում էի: Դրանից էլ սկսվում են մեր հանդիպումները, որոնք գաղտնի բնույթ չեն կրել: Այդ հանդիպումները գաղտնի պահելու մասին իմ և Կաթողիկոսի միջև ոչ մի պայմանավորվածություն չի եղել:

Ես Կաթողիկոսից թաքցրեցի, որ Երևանում եմ ապրում, այլ հավաստիացրի, որ երբեմն կիրակի օրերին այցելում եմ ընտանիքիս:

Դա արդեն իսկ յուրօրինակ գաղտնապահություն էր, բայց արդեն Կաթողիկոսի նկատմամբ:

Ես ձգտում էի հնարավորին չափով այդ հանդիպումները թաքցնել ընտանիքիցս, ինչն, իհարկե, գրեթե անհնարին էր: Ընտանիքս դժգոհ էր Զորեքչյանի հետ իմ հանդիպումներից և, ընդհանրապես, կապից:

Չի բացառվում, որ Զորեքչյանն ինքը հօդուտ ինձ թաքցնում էր հանդիպումները:



Ձերբալված Գ. Զուբարյանի հարցաթերթիկը

Հարց. Ձեր նախկին ցուցմունքի մեջ Դուք ասում եք, որ հենց առաջին հանդիպման ժամանակ Զորեքչյանը պատրաստակամություն է հայտնել միջնորդել կառավարությանը՝ Ձեզ Էջմիածնում բնակվելու իրավունք տալու մասին, եթե Դուք կհամաձայնվեք մշտապես աշխատել նրա մոտ, սակայն Դուք մերժմամբ եք պատասխանել: Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել, որ Զորեքչյանն, այսուհանդերձ, այդ մասին միջնորդել է Խորհրդային իշխանության մարմինների առջև:

Պատասխան. 1948թ. ապրիլին ես կաթողիկոսին գրեցի, որ Համամլու մեկնելու կապակցությամբ հրաժարվում եմ հետագա օգնությունից, բայց նույն թվականի հունիսի վերջին, Համամլուից վերադառնալուց հետո սկսվեց բնակարանային հարցի վերաբերյալ իմ ընտանիքի դատական գործի վարույթը: Ես Կաթողիկոսից 2 թե 3 նամակ ստացա, ընդ որում առաջին նամակի մեջ նա գրում էր ռուսական եկեղեցու հոբելյանը տոնելու կապակցությամբ Մոսկվա մեկնելու մասին: Դրա հետ մեկտեղ նա խնդրում էր իմ համաձայնությունը, որպեսզի իմ գործի կապակցությամբ Մոսկվայում խոսի ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի նախագահի տեղակալ Լ. Պ. Բերիայի հետ:

Վերը նշված առիթով ես հանդիպեցի Կաթողիկոսի հետ և համաձայնվեցի իմ լեգալացման դեպքում հոգևոր ճեմարանում դասախոսություններ կարդալ, եթե կթույլատրեն՝ Խորհրդային իրավունքի հիմունքներից, ինչպես նաև եկեղեցական իրավունքի վերաբերյալ:

Հարց. Դուք ինչպե՞ս արձագանքեցիք Ձեր կողմից սույն թվի հունվարի 4-ի հարցաքննության ժամանակ նշ-

ված Զորեքջյանի արտահայտություններին:

Պատասխան. Այդ արտահայտություններից բացի, կաթողիկոսն ինձ հետ զրույց ունեցավ նաև Կրեմլում իր ընդունելության մասին՝ հիացմունքով պատմելով, որ «Հայ Եկեղեցու վերածննդի նոր դարաշրջան է եկել», սակայն նա տխրությամբ նշեց, որ մեր մտավորականությունը չի հասկանում և հավուր պատշաճի չի գնահատում եկեղեցու նկատմամբ Խորհրդային կառավարության վերաբերմունքը, որ որակյալ ուժերը հետապնդման վախից հրաժարվում են աշխատել իր մոտ:

Դրանից բացի, Զորեքջյանը նշեց իր ծրագրի իրականացման համար ֆինանսական բազայի անկայունությունը:

Այդ կապակցությամբ նա հարցրեց իմ կարծիքը, որին ես պատասխանեցի.

«Ես մոտ տասը տարի գտնվել եմ բանտում և ճամբարում, որի հետևանքով շատ բաներում քաղաքականապես ապակողմնորոշված եմ: Այնուհանդերձ կասեմ հետևյալը.

ա) Ընդհանրապես ոչ մի բանի վրա հիմնված չէ այն ենթադրությունը, որ կրոնի և եկեղեցու ազատության հարցի վերաբերյալ Խորհրդային իշխանության քաղաքականության մեջ որևէ չրջադարձ է կատարվել: Խորհրդային իշխանության քաղաքականությունը եղել և մնում է սկզբունքային-միասնական և հետևողական: Այդ քաղաքականությունը Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ նախանշված էր կուսակցության ծրագրի մեջ, իսկ Խորհրդային իշխանության հաստատումից հետո ձևակերպվեց եկեղեցին պետությունից անջատելու մասին դեկրետում և ամրագրվեց Սահմանադրությամբ: Ընդհակառակը, քաղաքական տեսակետից չրջադարձ կատարվեց հենց եկեղեցում, որը խորհուրդների դեմ նախկին անընդունելի, բացահայտ կամ գաղտնի պայքարից անցել և անցնում է քաղաքական լոյալացման դիրքերը:

բ) Ինձ հայտնի չեն որակյալ ուժերի՝ էջմիածնում աշխատելուց և ծառայելուց հրաժարվելու դրդապատճառները: Ամեն դեպքում վախը նման բանական հիմք չի կարող ծառայել: Ավելին՝ Ստալինյան Սահմանադրությունը չեղյալ է համարել հոգևորականների ընտրական իրավունքի սահմանափակումները»:

Ինչ վերաբերում է Զորեքջյանի՝ իմ հարցաքննության արձանագրության մեջ գրանցված այդ արտահայտությունների առնչությամբ իմ վերաբերմունքին և արձագանքին, կասեմ հետևյալը.

Այն բանի վերաբերյալ, որ եկեղեցիներ բացելիս, տեղերում, հակառակ Սահմանադրության և խորհրդային ընդհանուր քաղաքականության, երբեմն դժվարություններ են ստեղծում, ես պատասխանեցի, որ կաթողիկոսի խոսքերով այդ դեպքերը բացառություններ են՝ մեկ կամ երկու, այնպես որ, դրանք որևէ հետևություններ և ընդհանրացումների հիմք չեն կարող տալ: Եթե այս կամ այն դժվարություններն անհրաժեշտ են, ապա դրանք ուղղելի են վարչական վարույթի կամ դատախազական հսկողության կարգով:

Սակայն էությունը դրանում չէ, այլ նրանում, որ Խորհրդային Միությունում չկան այն սոցիալական ուժերը, որոնց վրա նախկինում հենվում էր եկեղեցին. քաղաքացիական կացության գրանցման գործառույթներն անցել են պետությանը, դպրոցները և մնացած կուլտուր-լուսավորչական մյուս խնդիրները իրականացնում է ինքը՝ պետությունը, ծնվել և մեծացել է նոր, սոցիալիստական գաղափարախոսության հիման վրա դաստիարակված նոր սերունդ, հետևաբար այդ պատճառների մեջ պետք է փնտրել մեզանում եկեղեցիների սակավության բացատրությունը:

Պաշտոնական փոխարժեքի հետ տարաձրամի հավասարության հարցի վերաբերյալ կաթողիկոսն ասում էր, որ էջմիածնի ֆինանսական ծանր դժվարությունների և ամսագրի ու հոգևոր ճեմարանի փակման վտանգի կապակցությամբ նա ստիպված է օգնության համար դիմել Միութենական կառավարությանը:

Ես նշեցի, որ այդպիսի դիմումը քաղաքականապես և իրավաբանորեն ճիշտ չէ, քանի որ դա հակասում է, եկեղեցին պետությունից անջատելու սկզբունքին:

Ես անհարմար էի դիտում Միութենական կառավարությանը դիմելը. [illegible]-որ 500000 ռուբլու համար, նման նուրբ հարց, ինչը կարող է ոչ էջմիածնի օգտին մեկնաբանվել:

Կաթողիկոսի այն արտահայտության վերաբերյալ, որ Խորհրդային իշխանության ներկայացուցիչները երբեմն անբարեհաճ եզրակացություններ են անում Հայ Եկեղեցու արտասահմանյան հոգևոր պետերի առնչությամբ:

Ես նրան պատասխանեցի, որ Խորհրդային պետությունը նույնիսկ էջմիածնի արտասահմանյան ներկայացուցիչների մասին տեղեկանալու անչափ մեծ հնարավորություններ ունի, ուստի նա պետք է չնորհակալ լինի այդ ահազանգերի համար, քանի որ դրանք իր օգտին են:

Սկզբնական գործունեության համեմատ՝ Զորեքջյանի խորհրդամետ գործունեությունում տրամադրության որոշակի անկման վերաբերյալ ես դժվարանում եմ պատասխանել: Միաժամանակ, ըստ իս, դրան նպաստում է երկու ճամբարների միջազգային-քաղաքական հարաբերությունների սրումը և այստեղից՝ արտասահմանյան հայկական չրջանակների տրամադրվածությունների լարվածությունը և անկայունությունը, էջմիածնին նյութական օգնություն ցուցաբերելու գործում այդ չրջանակների վրա Զորեքջյանը մեծ հույսեր է դնում, և երկրորդ՝ կաթողիկոսի բնավորությունը, որը շատ զգուշավոր է և երկյուղում է «հանկարծ մի բան չպատահի»:

Արձանագրությունը գրված է ըստ իմ խոսքերի

Գ. Զուբարյան[23]

Հարցաքննեցին՝
Հայկական ԽՍՀ ՊԱՆ բաժնի պետ,
փոխգնդապետ Հակոբյան
Հայկական ԽՍՀ ՊԱՆ
օպերլիազոր, լեյտենանտ Վասիլև

[Հարցաքննությունն ավարտված է ժամը 17.45-ին:]

■

Ծանոթագրություններ

1. *Տե՛ս Լ.Ղարիբջանյան, Երևանի պետական համալսարանը, եր., 1965, էջ 24-27, Ա.Սոլախյան, Գրիգոր Զուբարյան, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973 թ., թիվ 3, էջ 285-286, Գ. Ղարախանյան, Գրիգոր Զուբարյան, եր. 1989 թ., Ար. Մանուկյան, Նա չխոնարհեց գլուխը (Գրիգոր Զուբարյան), «02» չաբաթաթերթ, 26 դեկտեմբերի 1998 թ:*

2. *Տե՛ս* Архивное уголовное дело МНБ РА N 1893 (ФПД) "По обвинению Чубаряна и др. ..." *այսուհետ՝ «Գործ N1» (1937) և «Գործ N 2» (1948):*

3. *Տե՛ս նաև* Рубен Авакян, Под угрозой смертной казни: Материалы из архива МНБ РА, ЕФ "МНЮИ - XXI ВЕК", *N13, 1999,* cc. *23-28, նշվ. հրապարակումը չարունակելի է և նախատեսվում է տպագրել նույն պարբերականի 14 -16-րդ համարներում: Այն պարունակում է Գր.Զուբարյանին վերաբերվող՝ 1937 և 1948 թվականներին հարուցված «գործերի» մանրամասն և ամփոփ իրավաբանական վերլուծությունը ու լուսաբանում է գիտնականի կենսագրության 1937-1955 թթ. ընդգրկող շրջանը (մինչև՝ արդարացումը)՝ վերոհիշյալ «գործերի» նյութերի հիման վրա:*

4. *Ինքնակենսագրությունը գրվել է քննիչի պահանջով, 1938 թ. նոյեմբերին: Տե՛ս «Գործ N1», հատ. 1, էջ 77-84:*

5. *Գ. Զուբարյանը սովորել է Նոր-Նախիջևանի երկու ուսումնական հաստատություններում, որոնք բացառիկ դեր են խաղացել հայոց կրթական գործի պատմության մեջ՝ Ս. Խաչ վանքի դպրոցում (Հայտնի է նաև Ս. Խաչի ժառանգավորաց գիշերօթիկ վարժարան անվամբ, գոյատևել է շուրջ 140 տարի) ու թեմական հոգևոր սեմինարիայում, որտեղ էլ աշակերտել է իր համերկրացի և ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գ. Զորեքյանին (1868-1954): Աշակերտական նստարանից էլ սկսվում է Գ. Զուբարյանի ընկերությունը Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի (1882-1969) և երկրորդ հանրապետության ժողկոմխորհի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի (1886-1925) հետ: Տարբեր ուղիներ են ընտրել երեք փայլուն մտավորականները, արժանացել տարբեր ճակատագրերի, սակայն մշտապես գործել՝ հայրենանվեր մղումներով:*

6. *Գ. Զուբարյանն արդարադատության ժողկոմի տեղակալ է եղել նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1920-1924 թթ., իրականում կատարելով նաև ժողկոմի պարտականությունները՝ մասնակցելով Հեղկոմի և ժողկոմխարհների աշխատակազմի կազմավորմանը:*

7. *Գրիգոր Զուբարյանը հանդիսացել է 1921 թ. փետրվարի 5-ի Հայհեղկոմի դեկրետով Էջմիածնում հիմնված Հայաստանի գիտական ինստիտուտի պատմահայագիտական բաժնի իսկական անդամներից մեկը և ինստիտուտում համագործակցել Հ. Մանանդյանի, Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Լեոյի, Աշ. Հովհաննիսյանի և այլոց հետ (տե՛ս ՀԽՍՀ ՀՀԽԾ ՊԿԱ Ֆ. 122, ց. 1. գ. 242, թ. 1., ինչպես նաև Գ. Ղարախանյան, նշվ. աշխ., էջ 18-19): Բռնադատված լինելու հանգամանքը, բնականաբար, պիտի անկարելի դարձներ Գ. Զուբարյանի ընդգրկումը Խորհրդային Հայաստանի ԳԱ հիմնադիր-անդամների ցուցակում:*

8. *Գրիգոր Զուբարյանը նկատի ունի հենց «Խորհրդային» կամ «Ժողովրդական» համալսարանում (Իմա՝ ԵՊՀ) դասավանդման գործընթացի սկիզբը, ինչն ազդարարվեց իր իսկ կարդացած «Խորհրդային իրավունքը և Երևանի ժողովրդական համալսարանը» թեմայով դասախոսությամբ: Այժմ պաշտոնապես ընդունվում է, որ ԵՊՀ-ն հիմնադրվել է 1919 թ.: Այսուհանդերձ անվիճելի է Զուբարյանի վաստակը Համալսարանի կայացման փուլում՝ որպես «նոր համալսարանի կազմակերպական հիմքերը, ծրագիրը, դասախոսական կազմը և հաստիքները» կազմող հատուկ հանձնաժողովի անդամ, հասարակագիտական ֆակուլտետի հաստիքային դասախոս, կոլեկտիվի առաջին նախագահ, համալսարանական գրադարանի կազմակերպման հանձնաժողովի նախագահ: Նա համալսարանին է նվիրաբերում իր անձնական գրադարանի զգալի մասը: Հետագայում Գրիգոր Զուբարյանը ցուցմունքներում գրել է. «Ես չեմ թաքցնում, որ խորհրդային համալսարանի անմիջական կազմակերպիչներն ենք եղել լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանն ու ես, ինչում կարելի է համոզվել Հայաստանի խորհրդային կառավարության «Դեկրետների ու որոշումների ժողովածուի առաջին թողարկումից» և որ ի ճանաչումն իմ ծառայությունների ինձ մեծ պատիվ է տրվել համալսարանի հանդիսավոր բացմանը հանդես գալ առաջին ակադեմիական դասախոսությամբ»: Տե՛ս «Գործ N 1», հատոր 3, թ.159 (Տե՛ս նաև Գ.Զուբարյանի՝ արդարացման նպատակով ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ռ.Ա.Ռուդենկոյին 1955 թ. փետրվարի 28-ի ուղղված բողոքը, էջ 29): ԵՊՀ պատմությանն առնչվող հետաքրքիր տեղեկատվություն է պարունակում «Գործ N 1» -ում ամփոփված, Գ.Զուբարյանի՝ ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ Վ.Խվորոստյանին ուղղված դիմումին կցված ծավալուն բացատրագրի «Հանդիպումներ ու զրույցներ Աղասի Խանջյանի հետ» բաժնի «Համալսարան» ենթաբաժինը (Տե՛ս «Գրագրություն» թ.125 - 149), որին աշխատասիրողները մտադիր են անդրադառնալ առանձին հրապարակմամբ:*

9. *Գ. Զուբարյանը ԵՊՀ -ում դասավանդել է նաև լրիվ արդարացվելուց հետո, 1957-62 թթ. (Տե՛ս ԵՊՀ պրոֆեսորա-դասախոսական անձնական գործեր N 564-565):*

10. Հետագայում ՀԽՍՀ փաստաբանների կոլեգիայի նախագահությունը սահմանեց Գրիգոր Զուբարյանի անվան մրցանակ: ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ Գ. Զուբարյանի անվամբ է կոչվել իրավաբանական ֆակուլտետի ընդհանուր քնույթի ուսումնամեթոդական կաբինետը, իսկ Մոսկվայի Նոր իրավաբանական ինստիտուտի Երեւանի մասնաճյուղի գիտխորհրդի որոշմամբ Գ. Զուբարյանի եւ Գրիգոր Զոհրապի դիմանկարները տեղադրվել են Անվանի իրավագետների, օրենսդիրների-հասարակական-քաղաքական գործիչների պատկերասրահում:

11. Իրավաբան, պետական գործիչ, լրագրող պրոֆ. Հրանտ Գալիկյանը (1889-1938) 1908-1912 թթ. սովորել է Կ.Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1912 թ.-ից հանդիսացել է հնչակյան կուսակցության անդամ: 1919-22 թթ. Կ. Պոլսում խմբագրել է «Երկիր» թերթը: 1922 թ. տեղափոխվել է Խորհրդային Հայաստան, եղել է Գերագույն դատարանի նախագահի, ՀԽՍՀ դատախազի տեղակալ: 1924 թ.-ից դասավանդել է ԵՊՀ-ում, 1934-36 թթ. եղել է իրավաբանական ֆակուլտետի դեկանը: Ձերբակալվել է 1937 թ. հուլիսի 29-ին, «Արզնի» առողջարանում: ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակի նիստի 1938 թ. փետրվարի 28-ի որոշմամբ գնդակահարվել է: Արդարացվել է 1956 թ.: Տե՛ս Ստ. Ղարիբջանյան, «Վնասարար» Հրանտ Գալիկյանը, - «02» չաբաթաթերթ, 12 դեկտեմբերի 1998 թ. (N49):

12. ՀՀ ԱԱՆ արխիվում պահվող «Գործին» կցված է Գ. Զուբարյանի թերթային հոդվածների մի քանի նմուշ պարունակող փաթեթը՝ «Իրեղեն ապացույցներ» մակագրությամբ: Գ.Զուբարյանի թերթային հրապարակումներից մասնավորապես տե՛ս. «Կրոնի խնդիրը և ՌՍՖԽՀ սահմանադրության նոր խմբագրությունը», «Խորհրդային Հայաստան», 1929 թ., հունիսի 30, N 149 (2412), «Ցարական «Հեղափոխականները», Վորոնցովի մանկլավիկները և չարաբաստիկ «Մանիֆեստը». «Խորհրդային Հայաստան», 1930 թ., հոկտեմբերի 15, N 242 (2800), «Աղանդավորները և նրանց քաղաքական դիմագիծը», «Խորհրդային Հայաստան», 1931 թ., մայիսի 19, N 114 (2977), «Կատվի խաղը մկան մահ է» (Ասորիների ողբերգությունը), «Խորհրդային Հայաստան», 1934 թ., հունիսի 1, N 124 (4123) և այլն:

13. Գրված է քննիչի հատուկ պահանջով (տե՛ս «Գործ N1», հատ. 1, թ. 85-90):

14. Նշանավոր գրականագետ, թարգմանիչ, իրավաբան Մինաս Բերբերյանը (1871-1919) 1883 թ. Յու. Վեսելովսկու հետ հրատարակել է «Հայ գրողներ» («Армянские беллетристы») ժողովածուի առաջին հատորը, իսկ երկրորդ հատորը 1894 թ. լույս տեսնելուց հետո, ցարական գրաքննության կողմից արգելվել է: «Արարատում» հրատարակել է հոդվածներ՝ նվիրված հայ և ռուս դասականներին: 1907 թ. նշանակվել է Գևորգյան ճեմարանի տեսուչ:

15. Հ.Յ.Դ. Նալբանդի կոմիտեի մասին իր հուշերում Սիմոն Վրացյանը գրում է. «Նալբանդի Կենտրոնական Կոմիտէութիւնը տարածութեամբ մի կայսրութիւն էր Դոն ու Դոնեց գետերի վարի աւազաններից սկսած մինչեւ Կուբան ու Տերեկ գետերը, Ռոստով, Եկատերինոդար, Արմաւիր ու Ստաւրոպոլ մեծ քաղաքներով եւ մի չարք ուրիշ հայաբնակ կենտրոններով»: Տե՛ս Ս. Վրացեան, Կեանքի ուղիներով (Դէպքեր, Դէմքեր, Ապրումներ), Ա հատոր (II տպ.), Պէյրութ, 1967, էջ 119-120: Նալբանդի կոմիտեի ու «Նոր կյանք» թերթի մասին տես նաեւ նույն տեղում, էջ 48-62, 121-129 եւ 139:

16. Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1931 թ., հունիսի 4, N 129 (2992):

17. volens-nolens (լատ.) - կամա-ակամա:

18. Գործ N 2 (1948), թ. 34-40:

19. 1945 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրված Գևորգ Զ Զորեքչյանն ակնառու ավանդ ունի նաև տարագիր Հայության Հայրենադարձության (1946-1948) կազմակերպման գործում:

20. Գևորգ Զ Կաթողիկոսի նախաձեռնությամբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանը վերաբացվել է 1945 թ. նոյեմբերի 1-ին՝ հանդիսանալով փակված Գևորգյան ճեմարանի յուրատեսակ հաջորդը: Մայր Աթոռի կողմից հրատարակվող «Էջմիածին» կրոնաբարոյագիտական հանդեսը լույս էր տեսնում 1944 թ.-ից, երբ Զորեքչյանը դեռ կաթողիկոսական տեղապահ էր (1941 թ.-ից): Աշխատասիրողները չնորհակալություն են հայտնում բանասիրության թեկնածու Վարդան Դեւրիկյանին՝ Մայր Աթոռի նորագույն պատմությանն առնչվող արժեքավոր խորհրդատվության համար:

21. «Գործ N 2» (1948), թ. 44-48:

22. «Գործ N 2» (1948), թ. 54-60:

23. Գրիգոր Զուբարյանը ուղղիչ-աշխատանքային ճամբարներում պահվել է 10 տարի, ինչին գումարվել է 1949-1954 թթ. աքսորը: 1956 թ. փետրվարի 26-ին Անդրկովկասյան զինվորական օկրուգի զինվորական տրիբունալի թիվ 233/Н որոշմամբ չեղյալ է հայտարարվում ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին առընթեր Հատուկ խորհրդակցության 1940 թ. հոկտեմբերի 19-ի որոշումը Գ. Զուբարյանի վերաբերյալ՝ հանցակազմի բացակայության պատճառով, իսկ 1956 թ. դեկտեմբերի 22-ի ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի որոշմամբ չեղյալ է հայտարարվում Գ. Զուբարյանի վերաբերյալ ԽՍՀՄ ՆԳՄ-ին առընթեր Հատուկ խորհրդակցության 1949 թ. փետրվարի 23-ին կայացրած որոշումը, եւ գործը կարճվում է՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Լուրեր
Իրանագիտական Կովկասյան Կենտրոնից

Մասնակցություն միջազգային գիտաժողովներին

■ **Եվրոպայի իրանագետների V համագումար, 1999թ. սեպտեմբերի 5-12, Փարիզ, Սորբոնի համալսարան.**

- **Գ. Ասատրյան**, ելույթը՝ «*Բախտիարների ցեղամիավորումը. էթնո-մշակութային գնահատական*»,
- **Վ. Առաքելովա,** ելույթը՝ «*Բուն՝ որպես պաշտամունքային թռչուն իրանական ժողովուրդների շրջանում*»:

■ **Քրդագիտական միջազգային սեմինար, 2000թ., մայիսի 11 -17, Քիլ (Գերմանիա).**

- **Վ. Բոյաջյան,** ելույթը՝ «*Հայկական վաղ փոխառությունները քրդերենում*»:

■ **Քրդագիտական միջազգային սեմինար, 2000թ., մայիսի 23, Վաշինգտոն (Կոնգրեսի գրադարան).**

- **Գ. Ասատրյան**, ելույթը՝ «*Քրդերի ծագումը, բափանցումը Հայաստան եւ հայ-քրդական փոխհարաբերությունների մի քանի խնդիրների շուրջ*»,
- **Վ. Առաքելովա**, ելույթը՝ «*Նոր էթնո-քաղաքական գործոնների առաջացումը տարածաշրջանում*»,
- **Ռ. Ամիրբեկյան,** ելույթը՝ «*Միրամարգը՝ պաշտամունքային կենդանի Առաջավոր Ասիայում*»:

■ **Ամերիկյան իրանագետների երրորդ միջազգային համագումար, 2000թ., մայիսի 24 - 30, Բեթեսդա.**

- **Գ. Ասատրյան,** ելույթը՝ «*Իրանական ժողովուրդների անասնապահական մոռացված մի տոն*»,
- **Վ. Առաքելովա,** ելույթը՝ «*Ժողովրդական բժշկությունը եւ մոգությունը եզդիների շրջանում*»,
- **Ռ. Ամիրբեկյան,** ելույթը՝ «*Ղաջարական արվեստի մի քանի խնդիրների շուրջ*»:

■ **Բելուջագիտական միջազգային կոնֆերանս, 2000թ., օգոստոսի 16 - 22, Ուպսալայի համալսարան (Շվեդիա).**

-**Վ. Բոյաջյան,** ելույթը՝ «*Բելուջա-աֆղանական լեզվական փոխառնչությունների շուրջ*»:

Գործուղումներ

- **Վ. Ոսկանյան,** Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպայի համալսարան, 1999թ. դեկտեմբերի 4 -11, նպատակը՝ մասնակցությունը գնչու փոքրամասնություններին վերաբերող կոնսուլտացիաներին՝ :
- **Վ. Բոյաջյան,** Բելուջիստան (Իրան եւ Աֆղանստան), 2000թ. մարտ - մայիս ամիսներին, նպատակը՝ Բելուջական Գոմշաձայ, ցեղամիավորման ուսումնասիրություն եւ նյութերի հավաք:
- **Վ. Առաքելովա,** Բուդապեշտ, Եվրախորհրդի գրասենյակ, 2000թ. 11 - 26 մարտի, նպատակը՝ մասնակցություն ազգային փոքրամասնութուններին նվիրված ծրագրի քննարկմանը:
- **Վ. Առաքելովա,** Բուդապեշտի համալսարան, 2000թ., հուլիսի 21 - օգոստոսի 4, նպատակը՝ մասնակցություն «Արեւելյան կրոնների ռենեսանսը. կրոնական մուլտիկուլտուրալիզմ» սեմինարին:
- **Ե. Խաչատրյան**, Տաշքենդ, Նախագահին կից Քաղաքացիական հասարակության ակադեմիա, 2000թ. հուլիսի 13 - 29, նպատակը՝ մասնակցությունը «Իսլամը եւ քաղաքացիական հասարակությունը» սեմինարին:
- **Մ. Ասատրյան,** Կահիրե, Ալ Ազհար համալսարան, 1999թ. սեպտեմբեր - 2000թ. հունիս, նպատակը՝ արաբերենի եգիպտական բարբառի յուրացում, իսլամի հիմունքների ու Ղուրանի ուսումնասիրում:
- **Մ. Ասատրյան,** Թեհրան, Իսֆահան, 2000թ. հուլիսի 1 - 30, նպատակը՝ պարսից լեզվի ու դասական գրականության խորացված ուսումնասիրում:

Այցելություններ

■ 2000թ. փետրվարի 14-ին ԻԿԿ այցելեց Հայաստանում Հնդկաստանի հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան պրն Բալ Անանդը: ԻԿԿ տնօրեն Գ. Ասատրյանի եւ դեսպանի զրույցում արծարծվեցին հայ-հնդկական պատմա-մշակութային կապերի, փոխհարաբերությունների, մասնավորապես՝ ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի համակարգում հնդկագիտական բաժանմունքի ստեղծմանը վերաբերող հարցեր: Հանդիպմանը ներկա էր ՀՀ ԱԳՆ խոսնակ Արա Պապյանը:

■ ԻԿԿ եւ ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի հրավերով 2000թ. հունիսին մեկ շաբաթով Երեւան այցելեց Ս. Պետերբուրգի համալսարանի Արեւելագիտության ֆակուլտետի դեկան եւ Իրանագիտության ամբիոնի վարիչ, ՌԴ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆեսոր Իվան Ստեբլին-Կամենսկին: Նա ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի, ուսանողության եւ ԻԿԿ աշխատակիցների համար կարդաց երեք դասախոսություն՝ նվիրված հնդիրանցիների գաղթին, արիական խնդրին եւ իրանական էթնոգենեզի հարցերին: Պրոֆ. Ստեբլին-Կամենսկու այցելությամբ եւ ելույթներով հիմք դրվեց «Yerevan Lectures on Iranian studies» օտար գիտնականների դասախոսությունների շարքին: Այս շարքի սահմաններում առաջիկայում ծրագրվում է հրավիրել մի շարք այլ օտարերկրյա հայտնի իրանագետների եւ հայագետների՝ պրոֆ. Վլադիմիր Լիվշից (Ս.-Պբ.), պրոֆ. Անջեյ Պիսովիչ (Կրակով) - սեպտեմբեր-հոկտեմբեր, պրոֆ. Ջուստո Տրաինա (Լեչե, Իտալիա) - հոկտեմբեր, պրոֆ. Ջեյմս Ռասել (Հարվարդ) - նոյեմբեր: 2001 թ.-ի ծրագիրը դեռեւս կազմման ընթացքում է: Ծրագիրը ֆինանսավորում է "Գուրգեն Մելիքյան" հիմնադրամը:

Նվիրատվություններ

■ 2000 թ. մարտի 14-ին Բուդապեշտի համալսարանի Իրանագիտության բաժնի վարիչ ակադեմիկոս Յանուշ Հարմատտան ԻԿԿ գրադարանին նվիրեց հունգարական արեւելագետների եւ հասարակագետների հանդես՝ Acta Antiqua (Academiae Scientiarum Hungaricae), 40 տարվա համարների հավաքածուն:



Алла Тер-Саркисяниц. *Армяне. История и этнокультурные традиции. М., 1998, 394 стр.*

Ալլա Տեր-Սարգսյանց. *Հայերը: Պատմություն եւ էթնոմշակութային ավանդույթներ: Մ., 1998, 394 էջ:*

Սույն մենագրությունը հայ ժողովրդի էթնոմշակութային ավանդույթների ոլորտում Ա. Տեր-Սարկիսյանցի կատարած 30-ամյա ուսումնասիրությունների եւ պրպտումների արդյունքն է: Հետազոտության համար հիմք են հանդիսացել ոչ միայն արխիվային եւ գեղարվեստա-փաստագրական, այլեւ Հայաստանի, Անդրկովկասի, ինչպես եւ Ռուսաստանի հարավային շրջաններից հեղինակի անձամբ հավաքած հարուստ ազգագրական դաշտային նյութերը:

Մենագրությունը բաղկացած է երկու մասից՝ առաջինում ուսումնասիրվում են պատմական հայրենիքի տարածքում ապրող հայերի կենցաղային մշակույթը, երկրորդում՝ Ռուսաստանում ապրող հայկական էթնոսի տարածաշրջանային խմբերը:

Գրքի չորս հիմնական գլուխներից առաջին՝ «Պատմության ուղենիշներ» բաժինը հայ ժողովրդի պատմության համառոտ շարադրանքն է, ուր Պատմական Հայաստանը ներկայում է որպես մարդկության կայացման պատմական բնօրրան: Առանձին քննության է առնվում հայկական հնագույն պանթեոնն իր գլխավոր աստվածներով, որոնք համեմատվում են անտիկ աստվածությունների հետ, ընդգծվում նրանց փոխադարձ առնչությունները:

Բաժինն ավարտվում է վերջին 30 տարիներին հայերի՝ Անդրկովկասում եւ Ռուսաստանում վերաբնակվելու վիճակագրական տվյալների հրապարակմամբ:

«Ազգագրական մշակութային սովորույթներ» գլուխը, ինչպես եւ կարելի էր եղրակացնել վերնագրից, գրքի առանցքային բաժինն է՝ առավել բազմաբնույթ: Նրա առաջին ենթաբաժինը նվիրված է հայ ժողովրդի տնտեսական հիմնական զբաղմունքներին առնչվող աշխատանքային գործիքներին եւ նրանց գործածության եղանակներին: Հայտնաբերված խեցեգործական իրերը վկայում են Հայ ժողովրդի կյանքում այս արհեստի վաղեմի արմատների, իսկ ոսկե եւ արծաթե իրերը՝ դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման հնագույն ավանդույթների մասին:

«Փոխադրական ժողովրդական միջոցներ» ենթաբաժինն անդրադառնում է Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմաններին համապատասխան փոխադրական ժողովրդական հատուկ միջոցների ստեղծմանը՝ սկսած սառույցի համար նախատեսված կոչիկներից, վերջացրած արբի (սայլ, սեկ) տարբեր տիպերով, սահնակներով, երկանիվ եւ քառանիվ սայլակառքերով, մարտակառքերով, որոնց մասին կարելի է պատկերացում կազմել գետեղված նկարների միջոցով:

Բնակեցման եւ կացարանի ավանդական տիպերը հայերի միջավայրում ձեւավորվել են դարերի ընթացքում՝ որոշակի պատմական, հասարակա-տնտեսական եւ բնաշխարհագրական պայմանների բերումով: Ժամանակակից հետազոտողներին հայտնի է հայկական ավանդական կացարանի երկու հիմնական տիպ. գլխատուն՝ կառուցված հատուկ սյուների վրա եւ առավել բարդ կառուցվածք ունեցող հազարաչենք՝ բազմաստիճան պսակաձեւ կամարով եւ կոնաձեւ տանիքով:

Հեղինակն անդրադարձել է նաեւ այն ծեսերի նկարագրությանը, որոնցով ուղեկցվում էր տան կառուցումը. տան հիմքը պետք է ներծծվեր մատաղ արված ոչխարի արյունով, իսկ ոսկորները՝ թաղվեին պատի տակ: Տան տարեց տղամարդը պետք է դրամ նետեր փորված հիմքի մեջ եւ այլն:

Հետաքրքիր է նաեւ տնային օջախի պաշտամունքը՝ կապված կրակի եւ պտղաբերության հետ: Կրակը ընտանիքի բարեկեցության խորհրդանիշն է, որին էլ առնչվում էր՝ հնում գոյություն ունեցած օջախի կրակը բաժանելու արգելքը:

Դունագեղ եւ բազմազան է հայկական ազգային տարազը: Ըստ հեղինակի՝ Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջանների բնակչության տարազում առկա զգալի տարբերությունները պայմանավորված են, առաջին հերթին, բնա-տնտեսական պայմանների ինքնատիպությամբ, ինչպես նաեւ Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանի պատմական զարգացման առանձնահատկություններով:

Հեղինակն առանձնահատուկ հետաքրքրությամբ է ներկայացրել հայկական ազգային խոհանոցը, որի գերակշռող մասը հացահատիկային մթերքներն են, իսկ գլխավորը՝ հացն ու լավաշը: Նկարագրված են նաեւ հացի եւ խմորի հետ կապված ծիսա-մոգական արգելքները՝ տղամարդու համար թոնրի կողքին նստելու, հացը դանակով կտրելու, գետնին գցելու եւ տրորելու անթույլատրելիությունը եւ այլն: Բաժինն ամփոփվում է ազգային որոշ ճաշատեսակների բաղադրատոմսերի շարադրանքով:

«Ընտանիք» ենթաբաժնում մի հայացք նետելով դարերի խորքը՝ ուրվագծվում է այն մեծ նահապետական ընտանեկան միությունը՝ գերդաստանը, որն իր մեջ էր միավորում տարբեր սերունդներին պատկանող ավելի քան հիսուն արյունակից անդամների՝ սեռա-տարիքային հստակ կանոնակարգված իրավունքներով ու պարտականություններով: Վերոհիշյալն իր վավերացումն է գտնում «ընտանիք» բառի ստուգաբանությամբ. այն է՝ «մի ընդհանուր տանիքի տակ ապրող»: Մեկ առ մեկ նշված են վարվեցողության այն բոլոր կանոնները, որոնք գոյություն ունեին ինչպես տան ավագ տղամարդու, այնպես էլ ընտանիքի մյուս անդամների միջեւ: Անդրադարձ կա նաեւ հայրական տան, հյուրընկալման, հարազատ-բարեկամական սերտ կապերի ավանդական ընկալումներին:

Ամուսնությունը՝ որպես հասարակական ինստիտուտներից առավել կարեւորներից մեկը, արտացոլում է տվյալ ժողովրդի էթնիկ պատմության հիմնական փուլերը, նրա ազգագրական մշակույթի առանձնահատկությունները, հատկապես գույքա-իրավական նորմերը, բարոյական պատկերացումներն ու ավանդույթները: Հեղինակն այս հիմնադրույթից ելնելով է դիտարկում ամուսնական եւ հարսանեկան բոլոր արարողակարգերն ու ծեսերը:

Գրքում հայերի ժողովրդա-ավանդական մշակույթում պատշաճ տեղ է հատկացված նաեւ մահվան հետ կապված ծեսերին: Զետեղված են տարբեր ժամանակներին բնորոշ հուշաքարերի, խաչքարերի, հին մահարձանների նկարներ, նկարագրված են թաղման արարողություններ:

Հայերի օրացուցային տոները հնուց ի վեր անցկացվել են ըստ ժողովրդական գյուղատնտեսական աշխատանքային օրացույցի: Հեղինակը հարկ է համարել նշել նաեւ այժմ ՀՀ-ում ընդունված պաշտոնական տոները:

«Գեղարվեստական եւ դիտա-կրթական մշակույթ» բաժնում, մենագրության խնդիրներով թելադրված ընդգրկումներով, հեղինակը լուսաբանում է հայ ժողովրդի մշակութային ժառանգության առավել բնութագրական եւ կարեւոր ձեռքբերումները՝ հին ժամանակներից մինչ XX դ.:

«Հայկական սփյուռքը Ռուսաստանում» բաժինը նվիրված է Ռուսաստանի տարբեր շրջանների առավել խոշոր հայկական համայնքների ձեւավորմանը: Հատուկ ուշադրություն է դարձված հայ էթնոսի առանձին խմբերի ազգագրա-մշակութային ժամանակակից բնութագրումներին:

Ա. Տեր-Սարկիսյանցը ամփոփելով իր վերլուծությունները՝ կատարում է մի շարք կարեւոր գիտական եզրահանգումներ եւ հարցադրումներ: Դրանք, մասնավորապես, վերաբերում են էթնիկական տարբեր միջավայրերում ապրող միեւնույն ժողովրդի ազգագրա-մշակութային այլաբնույթ սովորույթների համեմատական ուսումնասիրության արդիական խնդիրներին: Այս առումով հայ ազգագրագետների՝ առանց այն էլ լայն հետազոտական դաշտում կարող են հայտնվել նոր եզրեր ու չեշտադրումներ:

Լ. Դ



ՍԵՄՅՈՆ ՀԱԽՈՒՄՅԱՆ - 70

Տոհմիկ մտավորականը

Թե բացեք նրա անձնական թերթիկը, «սոցիալական ծագումը» և «սոցիալական դրությունը» հարցումների դիմաց կկարդաք՝ ծառայող: Այդպիսին է հարցախույզը. նրա խնդիրն անդեմ զանգվածից որոշակի խմբեր առանձնացնելն է, խմբեր, որոնց մեջ լուսանեգատիվի պատկերի նման դեմքից ու անհատականությունից զրկվում է մարդը՝ վերածվում սոսկ միավորի: Մինչդեռ նա ամենքից ավելի և՛ դիմավոր է, և՛ անհատականություն: Այն էլ մեր օրերում, ցավոք, այլևս հազվագյուտ անհատականություն:

Անձնական թերթիկում նա պիտի գրեր՝ մտավորական, ավելի ստույգ՝ տոհմիկ մտավորական: Նրա դեպքում և՛ տոհմիկ, և՛ մտավորական բնորոշումները անկարելիություն չափ վայելում են էությանն ու հոգեկերտվածքին: Քանզի դրանք որևէ թո՛ղ բարձրաստիճան պաշտոնավորի գրով արտոնված ազնվականական կոչում չեն, որի չնորհագիրը՝ տասնամյակներ ընկած-մնացած որևէ սնդուկում, այսօր հրապարակ է հանվել ժամանակի պատեհությամբ: Ո՛չ: Տոհմիկ մտավորականի պատվանունն այն կոչումն է, որ վկայվում է ոչ միայն դիպլոմներով, այլեւ արյունակից առնվազն երեք սերունդների չընդմիջարկված մտավոր նվիրանքի ժառանգակցությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր սերնդի ներկայացուցիչ սեփական կենսագրությամբ է ձեռք բերում իր նախնիների ժառանգորդը կոչվելու իրավունքը, իրավունք, որ տվյալ դեպքում և՛ բարոյական է, և՛ ինքնակերտ:

Տոհմիկ մտավորականի կոչումը կրելու ինքնակերտ, բայց անձեռնակերտ իրավունքը նվաճել է Սեմյոն Տիգրանի Հախումյանը: Նվաճել է մի քանի եզրագծերով: Դրանցից ամենակարևորը՝ նա մերօրյա ամրակայողներից մեկը եղավ այն կամրջի, որ չուչեցի քահանայի որդի, եվրոպական համալսարաններում ուսած նրա Սեմեոն պապը, չարունակելով իր ազգի նախորդ լուսամիտ զավակների գործ-հավատամքը, հաստատել էր հայ և ռուս ժողովուրդների մշակույթների, մասնավորապես՝ գրական մշակույթների միջև: Ով մի փոքր ծանոթ է նրա խմբագրած պարբերականներից «Գործ» ամսագրին, գիտե, թե ռուս գրականության ինչպիսի գոհարներ, նրա ճաշակավոր ընտրության չնորհիվ, հասու դարձան հայ ընթերցողին:

Սեմյոն-Հոր հիմնակայած այդ կամրջի թռիչքապահ այուներից մեկը եղավ նրա Տիգրան որդին: Նա ռուս դասականների, մասնավորապես՝ թատերգության մի ամբողջ գրադարան «Հայացրեց» մեզանում՝ դրա հետ մեկտեղ Հայաստանի բուհերում աճեցնելով այդ աշխարհահմա մշակույթը կրողների մի քանի սերունդ: Եւ ի թիվս նրանց՝ իր Սեմյոն անուն որդուն: Բայց որդու մասին քիչ է ասել՝ աճեցրեց: Նրա Սեմյոն որդին մեծացավ ռուս դասականների ոգեղեն շրջապատում. սկզբում ականջալուր, ապա խոհակիցը եղավ Տոլստոյի, Դոստոևսկու, Օստրովսկու, Չեխովի՝ մարդու համար տառապանքին, ապա դարասկզբի «արծաթեթ դարի» մարդորոնման ուխտավորների ուխտակիցը դարձավ: Ռուս մեծ մարդերգակների երգը նա իր Հոգու մեջ կրեց և բանավոր ու գրավոր, նրբազգա ու խորաթափանց չաղափումներով անկրկնելիացած փոխանցեց իր խոսքի ունկնդիրներին և ընթերցողներին: Եվ ռուս գրականության մասին նրա խոսքը՝ բանավոր թե գրավոր, լսողին ու ընթերցողին ձգում է միայն վարպետ երաժիշտ կատարողին մատչելի՝ խորագնա, անսպասելի, ներքնաչխարհի անտես չարժումների վերլուծումներով, հեղինակների գեղազգացողության և մարդընկալման նրբին, անակնկալ բացահայտումներով:

Հոգևոր արժեքների գերակայության հավատակիրը, մարդերգության երբևէ ստեղծած լավագույն արժեքների իմաստավորումն ու տարածումը կյանքի գործ դարձրած Սեմյոն Հախումյանը այն ամենափնտրված անհատականությունն էր, որն ըստ ամենայնի կոչված էր և կոչվեց ղեկավարելու մեր ժողովուրդի կրթության գործը: Ամենափնտրված և դժվարագյուտ, քանզի մշակույթի գործիչների երկու չարդ տեսած (1915, 1930թթ.) մեր միջավայրում ակնհայտ էր խզվածքը մտավորականի տիպարի և կոչումնակիրների միջև: Այս բնագավառում նա և՛ կոչված էր, և՛ ընտրյալ: Ասես ունկնդիր խորհնացիական խոհին՝ մեր օրերում բանաստեղծը վարանում էր. «Այն ե՞րբ է եղել, որ մեծավորը՝ մեծ ու մե՛ծը լինի մեծավոր»: Որպես իսկապես երջանկապատեհ բացառություն՝ Սեմյոն Տիգրանի Հախումյանը այդպիսի մեծավոր եղավ և է՝ լայնախոհ, լուսամիտ, հոգևոր արժեքների գերակայության հավատամքով ապրող և գործող մեծավոր:

Ջերմորեն չնորհավորում ենք սիրելի Սեմյոն Տիգրանիչին Հոբելյանի առթիվ՝ ցանկանալով նրան մնալ հայրենասերի, ճշմարիտ մտավորականի այն անկրկնելի առինքնաչքությամբ, որով նա, ինչպես չիաներն են ասում «մարդա՛է թաղլիդ» - ընդօրինակման տիպար է եղել համալսարանականների մի քանի սերունդների և հանրապետության մտավորականության համար:

ԵՊՀ Իրանագիտության ամբիոն
Իրանագիտության Կովկասյան Կենտրոն
«Իրան-Նամէ» արեւելագիտական հանդէսի խմբագրակազմ

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

(1919 թվական)

Հրանտ Ավետիսյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

1912 թվականից, չուրջ 36 տարի պաշտոնավարած՝ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի կյանքի եւ գործունեության մասին "Իրան-Նամէ" հանդեսում վերջերս լույս են տեսել մի քանի հետաքրքիր եւ արժեքավոր հոդվածներ: Համբավավոր հոգեւոր առաջնորդը աչքի էր ընկնում ոչ միայն որպես եկեղեցական ականավոր երեւելիներից մեկը, այլեւ որպես ճանաչված ազգային գործիչ:

Հայտնի է, որ ցարական իշխանությունների նյութած "դաշնակցության գործի" կապակցությամբ ճանաչված շատ մտավորականների եւ քաղաքական, հասարակական, կուսակցական գործիչների հետ միասին բանտ նետվեց եւ Ն. Մելիք-Թանգյանը: Ցարական հետապնդումները, սակայն, չկարողացան կոտրել նրա կամքը, հրաժարեցնել իր ազգային գաղափարներից, մարդասիրական սկզբունքներից, կոտրել ազատատենչ ոգին: Ազգի ցավով տառապող հոգեւորականը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին լծվեց պատերազմական արհավիրքներից եւ Օսմանյան Թուրքիայում երիտթուրքերի սանձազերծած՝ հայերի մեծ եղեռնից մազապուրծ, Արեւմտյան Հայաստանում տուն ու տեղը թողած եւ Կովկասում ծվարած գաղթականների սոսկալի վիճակի թեթեւացման գործին:

Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից եւ ինքնակալության տապալումից հետո, 1917 թ. գարնանը Մելիք-Թանգյանը մասնակցեց փախստական բոլոր մարմինների՝ Պետերբուրգում կայացած ժողովին, որի արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Երեւանում, 1917 թ. մայիսի 2-11-ը հրավիրված՝ արեւմտահայերի ազգային համագումարում:[1] Նա այստեղ միաժամանակ տեղեկացրեց, որ վեհափառի կողմից ինքը նշանակվել է Վանի, Մուշի, Բասենի շրջանի ժամանակավոր կառավարիչ: Համագումարի օրերին հանդիպումներ ունեցավ վերը նշված շրջանների պատգամավորների հետ՝ քննարկելով Հայրենիքի վերաշինության, գաղթականների տունդարձի հարցերը: Մելիք-Թանգյանը համագումարում ընտրվեց վերաշինության հանձնաժողովի անդամ, որի կազմում էին Փանոս Թերլեմեզյանը, Արամ Մանուկյանը, Հրանտ Գալիկյանը, Մուրադը, Կարո Սասունին եւ ուրիշներ:[2]

Մելիք-Թանգյանը շուտով նշանակվեց Հայ առաքելական եկեղեցու Ատրպատականի թեմի առաջնորդ: Թավրիզում, Սուլթանաբադում, Քերմանշահում, Համադանում այդ ժամանակ տարածված սովը, թուրքական յաթաղանից Պարսկաստանում ապաստանած հայ եւ ասորի գաղթականների հոծ բազմության վիճակը, անիշխանությունն ավելի էին սաստկանում ավազակապետ Սմկոյի, պարսկական խաների հետ բարեկամական-ազգակցական կապեր հաստատած թուրք զինվորականների ահաբեկչական գործողություններով, զանգվածային սպանություններով, ապստամբություններով ու թալանով: Հայերին լուրջ մտահոգություն էր պատճառում Պարսկաստանի այդ շրջաններից ռուսական զորքի հեռանալը եւ նրանց՝ Բաղդադից բերված անգլիական զորքով փոխարինելը՝ Խորասանից մինչեւ Բելուջիստան:[3]

Հայ գաղթականներին օգնության ձեռք մեկնելը Հայաստանի նորաստեղծ Հանրապետության առաջնահերթ խնդիրներից էր: Հայաստանի Հանրապետության հռչակումից անմիջապես հետո՝ 1918 թ. հունիսի 13-ին պարսից շահին տեղեկացվեց Հայոց Ազգային խորհրդի մայիսի 28-ի որոշման մասին, ցանկություն հայտնվեց "լավ հարաբերություններ պահպանել Պարսկաստանի կառավարության հետ": Փաստաթուղթը ստորագրել էին Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, վարչապետ Հովհաննես Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը:[4] 1918 թ. վերջերին տնտեսական, առեւտրական հարաբերություններ հաստատվեցին Մակուի խանության հետ:[5] Պարսկաստանի վարչապետ Վալիաթիին 1919 թ. հունվարի 9-ին գրած նամակում Ալ. Խատիսյանը դրվատանքով էր խոսում Թիֆլիսում գլխավոր հյուպատոս Շերիֆ-էդ-Դովլեի եւ նրան փոխարինած Թաղի-խանի բարենպաստ գործունեության մասին: "Շերիֆ-էդ-Դովլը նպաստել է եղբայրական հարաբերությունների ստեղծմանը, որոնք դարերով գոյություն են ունեցել պարսից եւ հայ ժողովուրդների միջեւ: Իր հաջորդը՝ վեհամափայլ Թաղի-խանը, հանդիսանում է նրա գործի շարունակողը", - գրում էր Խատիսյանը՝ ընդգծելով, որ հայերն օգտվում են "Պարսկաստանի հյուրընկալությունից" միշտ հանդիպելով այնտեղ "անհրաժեշտ փոխըմբռնման":[6]

Ստանալով պարսից շահի եւ վարչապետ Վալիաթիի պատասխան նամակները՝ "բարիդրացիական հարաբերությունները շարունակելու" ակնկալություններով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1919 թ. հունիսի 19-ի նամակում համոզմունք էր հայտնում, որ "այն դարավոր բարիդրացիական հարաբերությունները, որոնք կային Պարսկաստանի եւ հայ ժողովուրդի միջեւ, հիմք եւ հենարան կծառայեն հնագույն Իրանի եւ երիտասարդ ՀՀ համար":[7] Այս միտքը Հայաստանի վարչապետ Ալ. Խատիսյանը հայտնել էր, եւ 1919 թ. հունիսի 18-ին՝ Նախիջեւանի եւ Շարուրի գավառներ իր այցելության ժամանակ Պարսկաստանի վարչապետ Վալիաթիին հղած հեռագրում:[8]

Մի քանի հարցեր կարգավորելու համար Թեհրան մեկնեց ՀՀ կառավարության ներկայացուցիչը, որի լիազորությունների մասին պաշտոնապես հայտնվեց Պարսկաս-

տանի արտաքին գործերի նախարարին: Ա. Խատիսյանն այդ մասին տեղեկացրեց պարսկահայերի խորհրդի նախագահ Ալեքսան Խանթունյանցին՝ հորդորելով աշխատել "այդ խնդիրը լուծել դրական իմաստով" եւ "չտապեցնել պարսից կառավարության պատասխանը":[9]

Մինչ այդ՝ հունիսի 5-ին, ՀՀ կառավարությունն իր ներկայացուցչին էր ուղարկել Մակու՝ սարդարի մոտ՝ "մի շարք խնդիրներ լուծելու համար"[10], մասնավորապես, տեղում հայության վիճակն ուսումնասիրելու եւ սարդարի հետ որոշ խնդիրների շուրջ բանակցելու համար: Սարդարի մոտ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Ներսես Գեւորգյանը, որը, ծանոթանալով գաղթականության վիճակին՝ հանդիպումներ ունեցավ Սարդարի, մի քանի խաների եւ Թավրիզից Մակու ժամանած Պետրոս վարդապետ Ղազարյանի հետ: Սարդարի հետ հանդիպումների մասին վերջիններս հունիսի 16-ին հայտնեցին Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին: Սարդարը "մեզ երկու բան է առաջարկում. կամ այստեղ եղած հայերը մնան ցաք ու ցրիվ իրենց տեղերում եւ նպաստ ստանալով, կամ տեղափոխվեն Թավրիզ: Մենք տեսանք անհրաժեշտ վերջինը", - գրում էին նրանք՝ հորդորելով "չուտափույթ օգնություն ցույց տալ գաղթականներին":

1919 թ. հունիսի 19-ին Ա. Խատիսյանին գրած նամակում հայտնելով վերոհիշյալի մասին՝ Ն. Գեւորգյանը տեղեկացնում էր Հայաստանի կառավարությանը. Սարդարի կարծիքն է "բոլոր հայերին, բացի արհեստավորներից եւ պարսիկների հետ ամուսնացած կանանցից, հավաքել եւ ուղարկել Թավրիզ: Հայ ներկայացուցիչների կարծիքն է՝ ուղարկել բոլորին, առանց բացառության", քանզի "բոլոր հայերն առանց բացառության սեռի եւ հասակի, աղերսում էին, որ որքան կարելի է չուտ նրանց ազատել այդ գերությունից": Հենվելով սարդարից ստացած տեղեկությունների վրա՝ նրանք զեկուցում էին Բայազետի շրջանում մեծ քանակությամբ թուրքական զորքերի կուտակման, Մակու ժամանած երեք թուրք զինվորականների հակահայկական գործողությունների, նրանց կողմից գաղթականների փոխադրումը խոչընդոտելու, Շարուրում եւ Նախիջեւանում եւս խառնաշփոթություններ առաջ բերելու նոր ձեռնարկումների մասին:[10]

Առանձին նամակներից ակնհայտ է Պարսկաստանում եւ Կովկասում տեղակայված անգլիական եւ ամերիկյան հրամանատարության անտարբերությունը հայ գաղթականության հոգսերի ու ցավերի հանդեպ:

Ինչպես ցույց են տալիս փաստաթղթերը, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի նամակներում բարձրացված հարցերը անպատասխան չէին մնում: Վարչապետ Ա. Խատիսյանի կողմից ղրկանք հասցեագրվում էին խնամատարության եւ աշխատանքի, ներքին գործերի, ֆինանսների, պարենավորման, զորական եւ այլ նախարարությունների՝ բարձրացված հարցերին լուծում տալու համար:[11]

Այսպիսով, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանն, ըստ էության, կատարում էր նաեւ Պարսկաստանում Հայաստանի Հանրապետության հավատարմատարի պարտականություններ:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Պ. ՆԱԽԱԳԱՀԻՆ

Նո.77
24 Հունվար 1919 թ.

Ամենահարգելի պ. Քաջազնունի

Ձեր ուղարկած պատվիրակությունը ողջմամբ տեղս հասավ՝ բերելով իր հետ Թավրիզ ուղարկածներին, նաեւ Նախիջեւանից եւ Շարուրից կտրված երկու հոգու:

Նախ անհուն չնորհակալությունս եմ հայտնում Ձեզ՝ Թավրիզից եկած պատվիրակության սիրալիր ընդունելության համար ու այն բարիացակամ վերաբերմունքին դեպի օտարազգիք, որոնք ետ դառնալով Թավրիզ, մինչեւ իսկ քաղաքս չհասած՝ արդեն ամեն կերպ բարի լուրեր էին տարածում հայոց կառավարության վերաբերմամբ ու պահանջում էին բարձր կառավարությունից այստեղ եւս ցույց տալ հայոց ներկայացուցիչներին փոխադարձաբար հարգանք ու բարեկամություն:

Ձեր երկու ներկայացուցիչներ՝ պարոնայք Շահբազյան եւ Տեր-Ղուկասյան՝ փառավոր կերպով կատարեցին իրենց միսիան եւ արժանացան այն պատվին, որին արժանանում էին երբեմնի Ռուսաստանի ներկայացուցիչները ու այժմ Անգլիո, մանրամասնությունները նրանք կլրացնեն:

Անկասկած է, որ Պարսից ժողովրդի ու կառավարության վերաբերմունքը դեպի հայերը միշտ բարիացակամ է, Խոյի, Սալմաստ-Ուրմիո, Ղարադաղի ջարդերը ու թալանները արդյունք են կառավարության թուլության ու անզորության:

Ահ ու սարսափ ազդել էր Խոյ-Մակու-Նախիջեւան, երբ լսեցին, որ հայոց զորքը ու մյուս կողմից Անդրանիկը գալիս էին դեպի Ջուլֆա, հազարավոր փախստականներով լցվեցին Պարսից մասը. դժբախտաբար չիրականացան Ջուլֆայի ու այլ տեղերի գրավումները ժամանակին ու տեղիք տվին այս ձգձգումներին: Տարածել էին, որ հայերը գրավում են Մակու, Խոյ, Սալմաստ, Ուրմիո շրջանը, մեր կողմից հարկավ հերքվեց ժամանակին բերանացի պատճառաբանությամբ, բայց եւ այնպես շարունակվում է այդ խոսակցությունը ու անդրադառնում Թեհրանի շրջանը եւ ընդ հակառակը: Շնորհիվ Մակուի սարդարի հեռու մտքերին, մտածմունքներ եղան Շարուր-Նախիջեւան միացնել Ատրպատականի-Թավրիզի շրջանի հետ, հարկավ այս ցանկություններին երեւի վերջ կտրվի դաշնակից ներկայացուցիչների գալով, նրանց մասնակցությամբ՝ հօգուտ Հայոց Հանրապետության: Նախիջեւանը երեւանի գավառն է, շարունակությունը Զանգեզուր ու Շուշի, որոնք անպայման պիտի կցվեն Հանրապետության:

Պարսիկները միշտ զիջող են ու խաղաղ, կռվելու ոչ մի ցանկություն չունեին, աղմուկ հանողները դեզերտիր տաճիկներ են, որոնք պսակվելով խաների աղջիկների հետ օգտվում են հանգամանքից ու խլուրտումներ առաջ բերում:

Մանրամասնություններ զենքերի փոխադրության՝

այս ափից այն ափ ու այլ հարակից հանգամանքների մասին կպատմեն պատգամավորները:

Միանգամայն վստահ հանրապետության աչալրջության ու հաստատուն դրական վերաբերմունքին դեպի պարսից կառավարության՝ հույս ունեմ նա կանի այն, ինչ որ մոմենտը պահանջում է:

Ազոթող հանրապետության հարատեւության, նախագահի արեւշատության եւ կառավարության հաստատության

Ն. Մելիք-Թանգյան

Երեւանում ստացվել է 1919 թ. փետրվարի 14-ին, ուղարկվել է ազգային գործերի նախարարություն:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ. 1-2:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ Պ. ՆԱԽԱՐԱՐԻՆ

ԹԱՎՐԻԶ
Հմ.78
24 Հունվար 1919

Ամենահարգելի Պ.Ս. Տիգրանյան

Բախտ ունեցա ստանալու Ձեր գրությունը հայ-պարսկական դրացիական բարի հարաբերությունների եւ թե Հայոց Հանրապետության արտաքին քաղաքականության մասին դեպի հարեւան երկրները եւ մասնավորապես դեպի Պարսկաստան, որպիսի կարծիքը եւ ցանկությունները միանգամայն համապատասխան են բոլորիս սրտին եւ իղձերին, միայն չեչտելի է, եթե մեկ-մեկ հարկ է լինել վճռական եւ հաստատուն դեպի հարեւանները որոշ խնդիրների նկատմամբ, ապա առաջին տեղը այսպիսի վերաբերմունքի առումով բռնում է մեր խաղաղ Պարսկաստանը, որ միշտ բարեացակամաբար պատրաստ է զիջումներ անել հօգուտ պահանջողի: Հանրապետության ներկայացուցիչները ընդունվեցին մեծ փառավորությամբ կառավարության կողմից եւ նույն հարգանքով ճանապարհվեցին հետ, այս մասին պ. նախագահին ուղղած գրությանս մեջ մի քանի տողով ներկայացրել եմ:

Ամերիկացիք ժծբախտաբար մինչեւ այսօր 6000 ֆունտ ստեռլինգ չտվին, նրանք դիմել են Ամերիկա, իբր թե ֆոնդերը եւ գործող մարմինները այստեղ եւ Երեւան տարբեր են:

Ամերիկացիք օգնում են գաղթականներին, որոնցից հասել են այստեղ 700 հոգի, 3000 գտնվում են Ղազվին, 2000՝ Համադան, մնացածները՝ Բաղդադ, Բակուրե:

Ճանապարհները բացվելուն պես մշտապես թղթակցության մեջ կլինեմ Ձեր նախարարության հետ, խնդրելով մշտապես խորհուրդ եւ դարման, թեեւ Հանրապետությունը նոր է, բայց Աստվածային զորությամբ մեծ է նրա ազդեցությունը եւ պատճառած երկյուղը ու հարգանքը:

Աղոթքարար Ն. Մելիք-Թանգյան

Երեւանում ստացվել է 1919 թ. փետրվարի 22-ին, նո.704:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ. 3:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ Պ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Պատիվ ունեմ Պարսկաստանի Ատրպատական նահանգի հայոց առաջնորդս հետեւյալ խնդրովս Ձեզ նեղություն պատճառել, պ. Հրամանատար խնդրելով ներողամիտ գտնվել այս իմ Ձեզ տալիք անհանգստության համար: Պարսկաստանի Ատրպատականի Ուրմիա-Սալմաստ-Խոյ-Մակու շրջանում տաճիկների ներխուժումից առաջ գտնվում էին մոտ 90000 հայ ու ասորի քրիստոնյա ժողովուրդ: Ալիհասան փաշայի կարգադրությամբ կոտորվեցին Մակուի եւ Խոյի հայերը եւ ասորիները, մոտ՝ 4500 հոգի, անմեղ, անզեն մարդիկ, միայն այն պատճառով, ինչպես փաշան հայտարարեց, որ հայերը, Անդրանիկը անգլիացոց հետ կապ ունեն ու միացած գործում են: 1918-ի հուլիսին տաճիկները շրջապատելով Սալմաստ եւ Ուրմիա, ջարդեցին զինված քրիստոնյա ուժերը եւ ստիպեցին 85000 խաղաղ ազգաբնակչության գաղթել դեպի անգլիական ուժերը, այն է՝ Համադան, Բաղդադ: Ճանապարհին, տաճկի ու քրդի սրից, սովից ու հիվանդությունից կոտորվել են համարյա կեսը, բոլոր բնակչության մնացորդները Համադանից Ղազվինով, Զենջանով, միանալով եկել են ու գալիս են Թավրիզ, որ գնան իրենց ծննդավայր Սալմաստ եւ Ուրմիա: Դժբախտաբար եկող գաղթականները Թավրիզից Սալմաստ երկյուղ են անում գնալ, ավազակապետ քուրդ Սմկոյի պատճառով, որ մի քանի հարյուր քաղցած քրդեր ժողովելով իր շուրջը, պատուհաս է դարձել թե քրիստոնյա թե մահմեդական խաղաղ ազգաբնակչության համար: Պարսից Թավրիզի կառավարությունը զորք չունի, ուժ չունի, որ զսպի քուրդ ավազակապետին, որ ամեն օր պարսիկ գյուղերը թալանում է ու կողոպտում: Ես առաջարկեցի Մեծ Բրիտանիայի կոնսուլի միջոցով դաշնակից հյուպատոսներին, որոնք Թավրիզ են գտնվում, ուղարկել մի անգլիական օֆիցեր, 10 զինվորով՝ Սալմաստ նստելու ու զսպելու ավազակապետ Սմկոյին, ըստ որում Սմկոն չատ վախենում է դաշնակիցներից ու մանավորապես Մեծ Բրիտանիայից, նա չէր թույլ տա անգլիական փոքրաթիվ զորքի ներկայությամբ որեւէ մի անկարգություն անել: Անգլիական այդ ուժի գնալուց հետո, հնար կլիներ գաղթականներին ուղարկել Սալմաստ ու Ուրմիա:

Հյուպատոսները դիմում են իրենց կենտրոնական իշխանություններին: Պատասխան դեռեւս չեղավ: Բայց պ. Հրամանատար, գարունը մոտենում է. գյուղացուն, հարկավոր է ցանքս, վար, թեեւ մեծ մարդասեր Ամերիկան դրամական օգնություն ցույց է տալիս բոլորին անխտիր՝ եւ քրիստոնյային, եւ մահմեդականին, բայց այդ օգնությունը մշտապես խնդրել չենք կարող, պետք է գաղթականակությունը ինքը աշխատի, ինքը ապրի, բացի այդ քրդերը եւ առհասարակ, հարեւան պարսիկները՝ քաջալերվելով դեզերտիր տաճիկների հակաքրիստոնեական դիտավորյալ հորդորներով, քանդում են քրիստոնեից տները, կորում են խաղողի այգիները, որպեսզի քրիստոնյայք այլեւս հետ չդառնան: Ահա 85000 քրիստոնյաների՝ կորստից, տաճկի սրից ազատված մնացորդները պիտի այս պայմաններում ջնջվեն բոլոր աշխարհի առաջ, երբ դաշնակից հզոր պետությունները ամեն տեղ խաղաղություն ու հանգստութ-

յուն են սահմանում:

Այս նկարագիրը տալուց հետո, պ. Հրամանատար, թույլ եմ տալիս ինձ՝ իբրեւ մոտ ծանոթ տեղական պայմաններին մի քանի գործնական միջոցներ առաջարկել Ձեզ՝ թեթեւացնելու քրիստոնեից ծանր կացությունը:

ա. Բաղդադի շրջանում անգլիական զորքի մեջ մտած կան այս գաղթականներից 3000 հոգի, որոնցից 500 հոգի, առանց դժվարության Մոսուլի վրայով 10 օրում կարող էին հասնել Ուրմիա, ըստ որում Բաղդադից նավերով ու երկաթուղիով կհասնեին Մոսուլ, այնտեղից 8 օրում Ռեւանդուզով Ուրմիա ու Սալմաստ, այս 500 հոգին միանգամայն բավական էին հանգստությունը վերականգնելու այդ շրջանում:

բ. Եթե այս ամենահարմար միջոցը դժվար լինի իրականացնել, այդ դեպքում Կովկասից-Նախիջեւանից եթե ուղարկվեր անգլիական զորք 50-100 հոգի Սալմաստ, էլի միանգամայն բավարար կլիներ, նրանց ներկայությունը կզսպեր քրդերի սանձարձակությունները:

գ. Եթե այս եւս հնարավոր չլինի, այն դեպքում կխնդրեինք Թավրիզի դաշնակից հյուպատոսներին հսկողությամբ կազմակերպել քրիստոնյաներից-գաղթականներից համավորական խումբ 300 հոգուց բաղկացած, որ մնար մշտապես Սալմաստ, նույնպես եւ պարսիկներից նույնքան հոգուց բաղկացած մի ուժ անգլիական օֆիցերների գլխավորությամբ, նույն շրջանների համար: Պարսից կառավարությունը իր անզորությամբ չատ չնորհակալ կլինի այս ձեւով խաղաղությունը վերականգնելու համար՝ վտանգված տեղերում:

դ. Եթե այս եւս անհնարին լինի, այն դեպքում իրավունք տալ Անդրանիկին կամ Երեւանի հայոց կառավարությանը՝ Սալմաստում ունենալու անգլիական կամ դաշնակից պետությանց օֆիցերներով 500 հոգի հայ զորք:

ե. Եթե այս եւս հնարավոր չեղավ, կառաջարկեի Բաշկալեն, որ Վանի վիլայեթն է ու մտնում է 6 վիլայեթների մեջ, որոնք ավտոնոմիա պիտի ստանան, իրավունք տալ գրավել հայոց զորքերով: Բաշկալեն սահմանակից է Սալմաստին, եթե այնտեղ հայոց զորք գրավե, Սմկոն այնտեղից կփախչէ, ու հնար կլինի գաղթականներին բնակեցնել իրենց վայրերը:

Ահա այն միջոցները, պ. Հրամանատար, որոնք ես կառաջարկեի, հատուկ խնդրում եմ մտնել թշվառ ժողովրդի դրության մեջ ու եթե հնարավոր է շուտաթույթ կարգադրություն անեիք այս մասին. կխնդրեի բարեհաճեք պատասխանել, կամ գուցե այլ միջոցներ գործադրելով՝ մեր ցավին բավարարություն տայիք, որի համար քրիստոնյա ազգաբնակչությունը հավիտյան կմնար երախտապարտ:

Թարգմանությունը անգլերենից:
Ուղիղ է իսկականի հետ.
Քարտուղար առաջնորդարանի Ա. Ղուկասյան

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ. 5-7:

9/22 մարտ 1919 Հա.256 Համադան
Թավրիզ, Ներսես եպիսկոպոսին

Ստացել եմ Ձեր երկու հեռագրերը: Բակուեթից եկած է Մուրադը, խնդրեմ գիտցեք՝ Սաալու-Բակուեթում տասնհինգ հազար հայություն կապրե անգլիացիներու նպաստով: Պատսպարած են վեց հարյուր որբեր, երկրորդ Մոսուլում տասը հազար: Տեր Զորում հինգ հազար, Հալեպում ութսուն հազար հայեր հայտնված են կարոտ վիճակում, Մուշեղ եպիսկոպոսը եկած է օգնելու: Անգլիացիների պահանջով մեկնած է Պոլիս, ոչ թե Եվրոպա, Ձավեն պատրիարքը: Երրորդ - Բակուեթի մեր բանակը ցրված է անգլիացիների չնորհիվ, զինվորները ընկել են խիստ կարոտ վիճակում: Չորրորդ - ժողովրդի վերադարձը բոլորովին անորոշ է, քողարկված, ընդհակառակ Մոսուլեն կտանին Բակուեթա: Զինվորներուն օգնել մերժեց Թեհրանը, ժողովրդի վերադարձի, բանակին օգնելու համար կմեկնիմ Թեհրան ամսույս քսանհինգին: Դիմելով Ձեզ հատկապես կխնդրեմ ստիպել Թեհրանին անմիջապես փոխադրել տեղիս գաղթականությունը, որբանոցը Թավրիզ, երկրորդ՝ ներքին արտաքին միջամտություններով դիմել օգնելու Բակուեթա հազար զինվորներով եւ փրկելու մեր ժողովրդին: Կսպասեմ Ձեր պատասխանին մեկնելուց առաջ:

Մաքսապետյան

Հեռագրեց՝ որ անմիջապես դուրս գան դեպի Թավրիզ. նույնպես եւ Թեհրան՝ նույն բովանդակությամբ:

Ուղիղ է իսկականի հետ՝
Քարտուղար առաջնորդարանի Ա. Ղուկասյան

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ. 9:

14/27 մարտ Հա.266, Համադան
Թավրիզ
Ներսես եպիսկոպոսին

Համադանում գտնվող Վանի, Սալմաստի եւ Ուրմիայի գաղթականները թվով 6-700 չունէ մինչեւ այժմ անխնամ մնացած ազգային որեւէ օգնությունից, խնդրում ենք Ձեզանից չուտափույթ կարգադրություն գաղթականներիս ներգաղթը կազմակերպելու համար եւ հայտնել վերոհիշյալ շրջաններից դէլեգատներիս: Սպասում ենք Ձեր անմիջական կարգադրության:

Գաղթականների ներկայացուցիչներ՝ Խոսրով Շերեան, Արամ Սարոյան, Ավետիս Մարգարյան, Հարություն Մարտիրոսյան, Խոսրով Խանամիրյան, Վ. Սարգսյան

Հեռագրումից Թեհրան՝ կարգադրել, որ գան, իսկ իրենց՝ որ անմիջապես դուրս գան Թավրիզ:

Ուղիղ է իսկականի հետ՝
Քարտուղար առաջնորդարանի

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ. 8:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՑ ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ՀՀ Արտաքին գործոց Պ. նախարարին
15/28 մարտի 1919
Հա.223

Ամենահարգելի Պ.Ս.Տիգրանյանին

Օգտվելով ֆրանսիական կապիտանի եւ նրա ուղեկից պն Արմենակ Սարգսյանի ներկայությունից եւ երեւան գալուց, տալիս եմ հետեւյալ տեղեկությունները Հյուսիսային Պարսկաստանի շրջանից: Սալմաստի եւ Ուրմիո տարագրական գաղթականներից հետ են դարձել Համադանով՝ միանալով մոտ 1000 շունչ, նրանց օգնում է ամերիկյան միսիան, սրանք ցայսօր չվերադարձան Հայրենիք միմիայն ա՛՛ վազակապետ Սմկոյի պատճառով եւ անգլիացիների լռության հետեւանքով: Դիպլոմատիկական բոլոր միջոցները գործադրված են, բոլոր դաշնակից հյուպատոսները միակերպ են մտածում մեր հետ այդ մասին, խուլ է անգլիական հրամանատարությունը Կովկասում: Դիմեցինք այդ հրամանատարությանը անգլերեն գրությամբ, առաջարկելով հինգ կետերով միջոցներ: Խնդրելով դարման: Գրության պատճենը ուղարկում եմ Ձեզ, հատուկ խնդրում եմ չուտ օգնություն Թիֆլիսի Ձեր լիազորի միջոցով: Համադանից ունենք հեռագրեր, որի պատճենը ուղարկում եմ, որ Բակութե կա 15000, Մոսուլ՝ 10000, Տեր Զոր - 5000, Հալեպ - 80000 հայություն, որ Համադանից, Ղազվինից անգլիացիները չեն թողնում ետ դառնալ գաղթականներին Հայրենիք՝ Ուրմիա եւ Սալմաստ, որ նրանք զինաթափ են արել հազար հոգի Վանի-Սալմաստի զինվորներին, որ նրանք ստիպում են թողնել Ուրմիա եւ Սալմաստ, գնալ Եգիպտոս՝ աշխատելու ի փառս մեծազոր տերության, որ իբր ստիպված 15000 հայ, ասորի գնում են Եգիպտոս, որ Ուրմիա կամենում են միացնել Քրդստանի հետ, ղրկելով քրիստոնյաներին այնտեղից, ուր ապրելիս են եղել Ուրարտուի ժամանակից, այս բոլորը հաղորդեցի Հ. Մեյնարտին, ֆրանսիական փոխռավոր կապիտանին, իսկ տեղական հին պաշտոնյաները բոլորը գիտեն, լսել են:

Մենք հեռագրեցինք Թեհրան-Համադան, որ անպայման անհապաղ գաղթականությունը ետ դառնա Ուրմիա եւ Սալմաստ՝ չլսելով ոչ աջի եւ ոչ ձախի, նույն ժամանակ խնդրելով հեռագրով Պողոս Նուբարին՝ միջնորդել գրավել Բաշկալան-Խանասորը, իբրեւ 6 վիլայեթների մի սանջակ՝ հայոց զորքով, որպեսզի հնար լինի գաղթականներին բնակեցնել Սալմաստ, քշել տալով Սմկոյին իր մի քանի հարյուր ավազակներով: Երբ Ջուլֆա-Նախիջեւանը ժամանակին գրավեին հայոց զորքերով, այսօր Սմկոն չէր լինի, գաղթականներն իրենց տեղը կլինեին եւ ստիպված չէինք լինի մուրացկանի նման սրա եւ նրա դռները բախելու:

Հատուկ խնդրում եմ, հարկավ Ձեր հոգսը նույնն է, դիմել անմիջապես Նուբարին՝ Փարիզ, որ Վանի վիլայեթը, Բայազետ-Բաշկալա գրավվի հայոց զորքերով՝ դաշնակից զորքերի հետ եւ վերջ տրվի այս տաժանելի կացության: Երկրորդ անգամ եւս հիշեցնում եմ, որ Հանրապետությունը ամեն միջոց գործ պետք է դնի՝ հիշեցնելու Պողոս-Նուբարին, որ Նախիջեւան, Սյունիք, Արցախ անբաժան մասն են Երեւանի եւ Հայաստանի եւ անպայմանորեն պետք է միացնել՝ երբ Միացյալ Հայաստան կունենանք:

Առայժմ այսքան.

Միացյալ Հայաստանի անկախության եւ գործողությունների կյանքի հարատեւության համար աղոթող Ներսես արքեպիսկոպոս Մ.Թաղլյան:

Հ.Գ. Արտաքին գործոց նախարարության ընդհանուր քարտուղարի ստորագրությամբ մի թուղթ ստացանք օգնելու պարենավորման ներկայացուցիչ Պ. Շոլկովնիկյանին՝ իր միսիայի կատարման մեջ, առ այս հայտնում եմ, որ հեռագրվեց, էլի կհեռագրվի Թեհրան իրավունք խնդրելու առնասունների արտահանության համար, միայն հիշեցնում եմ, որ թե նախարարությունը, թե կոոպերատիվը մեծ աջակցություն եւ օգնություն կարող են ստանալ Մակուի սարդարից, առաջին՝ որ կիսանկախ է, առանց Թեհրանի կարգադրության արտահանում է եւ հացահատիկ, եւ անասուններ, եւ երկրորդ՝ այն մասում ավելի արտահանելու նյութ կա քան այստեղ եւ երրորդ, անգլո-ամերիկացիք այստեղից արտահանելու դեմ են, թանկություն պատճառած չլինելու համար:

Նույն

Արտաքին գործերի նախարարությունը ստացել է 1919 թ. մարտի 31-ին նո. 1855:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.4-6:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
28/3 1919 Հա. 262

Ամենահարգելի Պ.Ս.Տիգրանյան

Երեւի Շոլկովնիկովի հետ գրածներս ստացել եք. օգտվելով ամերիկացի դոկտոր Վերլոնենի գալուց՝ գրում եմ այս ավելի մանրամասն:

Մենք, ամերիկացիք եւ ֆրանսիացիք, որոնք միեւնույն չահերն ունենք Ուրմիա-Սալմաստ-Խոյ, միակերպ կմտածենք, իսկ մեր բարեկամներն՝ այլ տեսակ, նրանք հարաբերության մեջ են քրդերի եւ այս ու այն թուրքերի հետ (Նախիջեւան-Ղարաբաղ): Լսելով, սրանք կամենում են գնել դրամով, թե հողերի փոխանակությամբ Ուրմիա-Սալմաստ-Խոյ Մակու, դարձնել սեփականություն, քշել հայերին ու ասորիներին, բնակեցնել 80000 քրիստոնյաների փոխարեն քրդերի, այլ մահմեդականներ, անցկացնել երկաթուղի, որ միացնի Հնդկաստանը Բաղդադով Մոսուլով-Ուրմիով-Մակուով Շահթախտիով - մինչեւ Բաթում:

Այս հրեշային ծրագիր է քրիստոնյաների նկատմամբ, բնահան անելով 3000 տարուց բնակիչներին եւ քշելով Միջագետք եւ Եգիպտոս, բուռն դիմադրության է հանդիպում մեր, ասորոց, ամերիկացոց եւ ֆրանսիական միսիաների կողմից, խեթ է նայում եւ Պարսից անզոր կառավարությունը, մենք ամեն միջոց գործ ենք դնում հետ դարձնել գաղթականներին Համադանից, Բակուբեյից, Ղազվինից այստեղ եւ ուղարկելու Ուրմիա-Սալմաստ: Մեր բարեկամների ծրագիրն է Ղարաբաղը միացնել Բագու-Գանձակի հետ, Նախիջեւանը միացնել իրենց գալիք չերտի հետ (Ուրմիա-Սալմաստ-Խոյ Մակուի) եւ երկաթուղագիծը երասխի ափով հասցնել Բագու, իսկ մյուսն արդեն Բաթումի հետ կա, ահա այս, խնդրեմ ուշադիր լինեք:

Բայց ինչու նրանք չեն կամենում ունենալ այդ գծագրվելիք չերտի վրա քրիստոնյաներ, գերադասում են քրդերին, այդ անհասկանալի է, նույնքան, որքան եւ ռուսների

սմկոյական քաղաքականութիւնը:

Այստեղից հարաբերութիւնները կտրում են Զեզ հետ: Հայերին չեն թողնում երկաթուղով դուրս գալ Թավրիզից, այնինչ թուրքերը ահագին քանակութիւնամբ ապրանք է, որ կրում են այստեղից Նախիջեւան, Ղարաբաղ:

Շարուր-Նախիջեւան գավառից մեծ քանակութիւնամբ ցորեն բերում են Թավրիզ, ես բողոքեցի հիւպատոսներին եւ կապիտան Պուատեբարին հայտնեցի, պնդելով, որ տարագրված հայերի ցորենն է, պետք է արգելել եւ թույլ չտալ բերել Թավրիզ, թող տանեն նույն արժէքով Երեւան:

Կխնդրեմ կարգադրէք, որ Թավրիզից անասուն, ցորեն արտահանելու ոչ մի քայլ չանեն, այլ առանց դիմելու պարսից կառավարութիւնը՝ ուղղակի հարաբերութիւնն մէջ մտնեն Մակուի Սարդարի եւ խաների հետ, արդեն հաջողվեց 20-30 հազար անասուն տալու պայման կապել Մակուի խաների հետ, չատ էժան գնով՝ մինչեւ 13 փութ միս ունեցող անասունը 19-20 թումանով եւ հանձնել այն էլ Դավալու կամ Շահբախտ:

Թեհրանից ստացա նախարարապետի պատասխան հեռագիրը, որ չատ ցանկութիւն ունի օգնել Հայաստանին, բայց ցորեն թողնել արտահանել դժվարանում են թանկութեան համար, իսկ սակզա եւ նուշ՝ ուրախութեամբ, միայն չաքարի եւ նավթի փոխանակութեամբ:

Գուցե այս անգամ կգա ասորոց ներկայացուցիչ Մալիք Ցոնան, կունենա նամակ Ձեր անունով: Գնում է Փարիզ՝ մեր եւ ասորոց դատի համար, խնդրեմ ցույց տալ ամեն աջակցութիւն եւ լսել նրան:

Աղոթարար Ներսես եպիսկոպոս Մելիք Թանգյան:
Ստացվել է 17 ապրիլի 1919 թ. հա. 2369
Կատարված է 18 ապրիլի 1919 թ. համ. 1269:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.11:

ՊԱՐԵՆԱՎՈՐՄԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Պր. մինիստրի կարգադրութեամբ առաջարկում ենք սրան կից Թավրիզի եպիսկոպոս Մելիք-Թանգյանի գրութեան քաղվածքի պատճենը ի գիտութիւն Թավրիզից Հայաստան պարեն ներմուծելու մասին:

Շոլկովնիկովի միսիայի հետ կապված հարցերը, Ն. Մելիք-Թանգյանի նամակից մեջբերումով արտաքին գործերի նախարարութեան դիվանապետի ստորագրութեամբ ապրիլի 1-ին նո. 894 գրութեամբ հղվեց պարենավորման նախարարութեան դիվանապետին:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ, ԹԱՎՐԻԶ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ Պ. ՆԱԽԱՐԱՐԻՆ

Հա. 331
20/3 ապրիլի 1919

Այսօր հետեւյալ բովանդակութեամբ թուղթ ուղղեցի պարենավորման պ. նախարարին

Հետեւյալ տեղեկութիւնները կարեւոր եմ համարում հաղորդել Ձեզ: Թավրիզի ռուսական բանկում կար վաղուցվանից 17 500 հատ կաշի, ոչ ոք առնող չկար եւ բանկը նեղ դրութեան ժամանակ պատրաստ էր վաճառելու 17 500 թումանով, գնող չկար, գինը իջավ մինչեւ 12000 թումանի, էլի մոտեցող չկար, որովհետեւ կասկածներ կային, որ կաշիները փտել են: Գալիս է նախարարութեան ներկայացուցիչ պ. Շոլկովնիկյանը, նրան ասացին այդ դեպքը, վաճառականապետ Զ. Նազարբեկյանը չեչտեց, որ ամեն մի կաշին 2 թումանով չպետք է գնել, որովհետեւ նրանք մի թումանով հատը կամենում էին վաճառել եւ առնող չկար, պ. Շոլկովնիկյանը բացատրեց, որ դրանց հետ գործեր ունեն, "Շկոտ"- ին (անասուն - Հ.Ա.), գործի ինվենտարը պիտի վերցնենք նրանցից, մնաս չունի, որ համաձայնենք, կաշին մեզ հարկավոր է: Եվ ահա պարենավորման նախարարութիւնը առաջարկում է բանակին 17500-ի համար ոչ թե 17500 թուման, այլ կրկնակի 35000 թուման: Այժմ բանակը չհագեցած այդ անակնկալ ահագին գումարով, պահանջում է 45000 թուման: Ինչ հիմունքով, այդ իրեն է հայտնի:

Երբ բանակն այսպես է վարվում, չատ հարմար է այժմ պայմանը համարել խախտված բանակի կողմից, եւ հետ կանգնի նախարարութիւնը այդպիսի ահագին դրամ վճարելուց՝ փտած կաշիների համար:

Եթե այդ գործողութիւնն այլեւս չկատարվի, մենք չատ հույս ունենք, որ կաշիները կարող ենք գնել 20000 թումանով: Կարծում եմ, նախարարութիւնը, որ ահագին բանի պետք ունի, զուր տեղից միլիոնի չափ ռուբլիներ չպիտի չպրտի ավելորդ տեղն իզուր, ոչ մի բարոյական իրավունք չպիտի ունենա, այս խնդրի վրա ուշադրութիւն դարձրեք:

Արտաքին գործոց նախարարի առաջնորդ
Ներսես Մելիք-Թանգյան

ՀՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 266:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ, ԹԱՎՐԻԶ
Հա. 305
10 ապրիլի 1919

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ Պ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամենահարգելի պ. Ս. Տիգրանյան

Պատիվ ունեցա ամերիկացի դոկտոր Վենըմենի միջոցով մի քանի նամակներ ուղարկել Ձեզ, երեւի ստացած կլինեք:

Ձեր ուղարկած գումարից մենք նպաստում ենք պատգամավորական ժողովի անմիջական կարգադրութեամբ Ղարաբաղի 30 գյուղերին, Խոյի, Սուլտուզի շրջաններին: Տեղս եկած հազար հոգի գաղթականութեան օգնում է ամերիկյան նպաստամատույցը, այսօրվա Ղազվինից եկած 600 հոգու մերժեցին նպաստել, առարկելով, որ դրամ են շռայլում պարսիկներին, ուստի եւ նրանց 600 հոգու մերժումը առիթ համարեցի խիստ բողոքելու Թեհրանի ամերիկյան կենտրոնին, առարկելով, որ մեծ գումարներ վատնում եք պարսիկների վրա, իսկ քրիստոնյա բեկորներին, որոնք անգլո-ամերիկյան զոհերն են, չեք նպաստում, սպառնալով

դիմել Վիլսոնին:

Ստիպված ենք 600 հոգու, որոնց մեջ եւ ասորիք եւս կան, իրենց անասուններով կերակրել եւ պահել, մինչեւ հնար կլինի ուղարկել Սալմաստ եւ Ուրմիա: Այժմ սպասում ենք նախկին սեպահդարին՝ իբրեւ ընդհանուր նահանգապետի, տեսնենք կարող ենք նրա օգնությամբ գաղթականներին բնակեցնել իրենց տեղերը, գուցե հակառակ անգլիական անհասկանալի ցանկության:

Այսօր ստացանք Վանի մաքսապետարանից հետեւյալ հեռագիրը. "Համադանի վասպուրականցի գաղթականներին եւ որքերին իրենց ամեն պարագաներով, հետ տարան Բակուբե ամսիս 17-ին, Թեհրանը հանգիստ սրտով նայեց գործին առանց որեւէ դիմումի, հայտնեցեք Երեւան":

Մենք Սալմաստի եւ Ուրմիայի հայ գաղթականներին, հակառակ մեր բարեկամների անհասկանալի պոլիտիկայի, ժողովում ենք Թավրիզ բնակեցնելու իրենց տեղերում, իսկ Թչվառ, անտեր 60000 ասորիները գտնվում են երկաթե վանդակում, չեն թողնում ետ դառնալ...:

Խնդրում եմ, պատգամավորական ժողովի որոշման հետեւանքով, եթե կարելի է բարի լինեք Ձեր, այստեղ գտնված՝ Նուբար փաշայի փոխադրած 11000 թումանից մի գումար եւս թողնել Ատրպատականի անթիվ պետքերի համար. այս մասին գրեցի եւ Վեհափառին, նրանք էլ այստեղ փող ունեն:

Մենք չնորհակալությամբ ստացել ենք Թիֆլիսի Ձեր լիազորից ընդհանուր դեպքերի համառոտագրումը, կխնդրեի Ձեզանից չզլանալ հաջորդաբար տեղեկություններ հաղորդել անցուդարձի չուրջը:

Տաճիկ զորքերը թողել են Վանի շրջանը եւ հայտարարել, ով չի կամենում հայոց հպատակ մնալ, կարող է հեռանալ տաճկաց սահմանը: Որքան ուրախ կլինեինք, որ հայոց զորքը Բայազետ-Վան-Բաշկալե գրավեր, եւ ազատվեինք գաղթականներին բնակեցնելու հարցից:

Նամակաբերը պրոֆեսոր Տիմոֆեեւն է, եկել է պարենավորման խնդրով: Ես Ձեզ գրել էի այդ մասին, ի նկատի ունենալ միմիայն Մակու առ այժմ, գուցե որոշ ժամանակ հետո, նաեւ Թավրիզ:

Այստեղ եւ Նախիջեւանի անգլիական մեծերին բողոքեցի, որ Նախիջեւանի, Շարուրի ցորեններըը բերում են Թավրիզ-Մարանդ, փոխանակ տանելու Երեւան:

Աղոթարար Ներսես Մելիք-Թանգյան:

ԱԳՄ ստացվել է 26 ապրիլի 1919 թ., Նո.2689

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.15-16:

---

2 մայիսի 1919
Նո. 1462
Գերապատիվ Ներսես եպ. Մելիք-Թանգյան
Առաջնորդ Ատրպատականի Թեմին
Թավրիզ

Պ. Մինիստրի կարգադրությամբ պատիվ ունեմ հայտնելու, որ Ձեր 10 ապրիլի Հա. 305 գրության մեջ մատնանշված Նուբար փաշայի ուղարկած 11000 թումանը գտնվում է Պարենավորման մինիստրության տրամադրության տակ եւ ոչ թե մեր մինիստրության: Բացի այդ, կարեւոր եմ համարում Ձերդ Գերապատվության տեղեկացնել, որ Մինիստրությունս ի վիճակի չէ տեղվույդ պետքերի համար որ եւ իցե գումար բաց թողնել, քանի որ այդ նպատակով կրեդիտ չունենք:
Ֆինանս. բաժնի վարիչ
Գործավար

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 266:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ԹԵՄԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻԶ

ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պր. ՆԱԽԱԳԱՀԻՆ

30/13 ապրիլի 1919

Նախիջեւանի եւ Ջուլֆայի միացումով կավելանա Հանրապետության ելումուտների հետեւյալ գործառնությունը եւ այն ղրանով, որ ռուբլիի դիմաց մեծ արժեք ունին:

ա/ Ջուլֆայում հաստատելով մաքսատուն, որի համար պատրաստի հայ ծառայողներ կան, կամենաք Ձեր համար կուղարկենք, նրանք ծանոթ են գործին եւ մեթերքներին:

բ/ Անցաթղթերի բաշխման համար մարդ նշանակելով, որոնց համար առնելով երկու թուման, որ կանի 25 թ. եւ գ/ վիզաներով, Ջուլֆայից անցնելու համար օտարահպատակ անցաթղթերը, որոնց համար վերցվում է մի թուման /10-12 թ./:

Արդյո՞ք հարմար չեք դատի մինչեւ հյուպատոս նշանակելը այստեղ մեկին հանձնել այդ գործառնությունը:

Առաջնորդ Ատրպատականի Ներսես
Մելիք-Թանգյան

[Պատճեն 1919 թ. մայիսի 19-ին ուղարկված է Ֆինանսների նախարարություն, Նո. 1720]

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.20:

---

24 ապրիլի /7 մայիս/ 1919 թ.
Նորին Վեհափառության
Տ.Տ. Գեորգայ եւ Սրբազանագույն
Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Ատրպատականի
Հայոց առաջնորդից

Ամենախոնարհ Հայտարարություն
Վեհափառ Տեր

Ճանապարհների զբաղեցվելու պատճառով մինչեւ այսօր չկարողացա Ատրպատականի հայության կացության ընդհանուր տեղեկագիրը ներկայացնել Ձերդ Վեհափառության, որը վաղուց պատրաստ է, առաջին ապահով հաղորդակցության դեպքում պատիվ կունենամ այդ անել:

Ձերդ վեհափառության տրամադրության տակ դնելու

ուղարկված է վաղուց Պողոս Նուբար փաշայից 24000 ավելի թուման, որ այժմյան կուրսով կանի 800000 ռուբլուց էլ ավելի, Թումանյանց առեւտրական տան միջոցով այդ գումարից պատգամավորական ժողովը խնդրից որոշ մաս հանել Ղարաբաղի, Սալմաստ-Ուրմիո-Խոյի-Մակուի թշվառ հայերի համար, ամերիկացիք նպաստ տալիս են միմիայն երկու տեղ: Ամենախոնարհաբար դիմելով Ձերդ Սրբութեան պատգամավորական ժողովի կողմից, կխնդրեի չնորհ անեիք որոշ մաս այդ գումարից հատկացնել տեղական թշվառների կարիքներին:

Եվս Վեհափառ Տեր-Փեփրոնե եւ երվանդ Թեհմիրճեանների պսակալուծութեան համար վաղուց խնդրել էր Թեմական խորհուրդը Ձերդ վեհափառութեան կարգադրութիւնը նրանց պսակը լուծելու եւ կրկնամուսնութեան իրավունք տալու: Ցայսօր չստացանք ոչ մի հրաման հանգամանքների հրամայողական պահանջը զիջելու այսպիսի խնդիրներում եւ արագացնելու գործը չատ անգամ ստիպում է խնդրատուներին առանց հոգեւոր իշխանութեան թուլյատվութեան սպասելու օտար եկեղեցում պսակվել եւ խնդիրը փակել, մանավանդ այդ սոսկալի գաղթականութեան տարում կրկին ամուսնութիւններ եւ երկու կին ունեցողներ չատ ու չատ են. առաջն առնելու անկարելի է, մեզ մնում է անուշադիր թողնել ու անցնել, ուստի եւ կխնդրեի Ձերդ վեհափառութեան հրամայել արագացնել ամուսնալուծութեան խնդիրները եւ առ հարկէ ստիպյալ զիջել:

Ձերդ Վեհափառութեան խոնարհ որդի
Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

10 ապրիլ 1919 թ., Թավրիզ
Հա. 306

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.57, ց.5, գ.195, թ.6-7:

2/15 մայիսի 1919 թ.
Թավրիզ. Համ. 374

Նորին Վեհափառութեան
Տ.Տ. Գեորգայ եւ Սրբազանագույն
Կաթողիկոսի Ամենայն Հայոց

Ատրպատականի
Հայոց առաջնորդից

Ամենախոնարհ Հայտարարութիւն
Վեհափառ Տեր

Մինչեւ ընդարձակ տեղեկութիւնների ներկայացնելս, պատիվ ունեմ ամենախոնարհաբար զեկուցանել համառոտակի Ատրպատականի դրութեան մասին Ձերդ Ս. Օծութեան:

Տաճկաց հնգամյա տիրապետութեան օրով անվնաս մնացին Թավրիզ, Մարաղա եւ Ղարադաղ: Կոտորվեցին Մակուի երեք գյուղերը մոտ 500 չունչ, մնացին կանայք եւ երեխաներ, որոնք իսլամացան, Խոյում 1000 չունչ կոտորվեցին, մնացին կանայք եւ երեխաներ իսլամացած, Սալմաստ, Ուրմիա, Սուլտուզ, Սովուղ-Բուլաղ գաղթեցին Համադան-Բաքու-Ղազվին կորցնելով ճանապարհին 5000 չունչ, մնացել են 5000 հոգի, որոնց մի մասը Բակուբա-Համադան-Ղազվին են, մնացածները Թավրիզ են: Իսլամացածները համարյա բոլորը նորից տարվել են իրենց եկեղեցու ծոցը, բայց խիստ բարոյական եւ նյութական ընկած դրութեան մեջ են:

Ղարադաղի Աղաղան գյուղում տաճիկները կոտորել են 60 չունչ, իսկ խաները բռնութիւններով եւ կոտորածներով ավերել են այդ 30 գյուղերը, թողնելով սոսկալի դրութեան մեջ: Թավրիզի եւ Մարաղայի հայերը թեեւ մարդկային կորուստ չատ քիչ ունեցան, սակայն 7 միլիոն թուման պահանջը տրված է Պողոս Նուբարի միջոցով Հաշտութեան համաժողովում: Ուրմիո, Սալմաստի, Սուլտուզի հայութիւնը դեռ Թավրիզ է, դեռ չի տարված իրենց գյուղերը նույն պատճառներով, ինչ որ Նախիջեւանի եւ Կարսի գաղթականները՝ մինչեւ վերջին ժամանակներս:

Նոր ընդհանուր նահանգապետ Սիպահդարի գալով գուցե կարագացնի ներգաղթը դեպի Սալմաստ եւ Ուրմիա, բացի Ատրպատականի հայութիւնից Սալմաստ, Ուրմիա կամ Վանից 12000 չունչ, եւ Աղբակից՝ 2000, որոնք այժմ Բաղդադի մոտ գտնված Բակուբա տեղված են:

Բակուբայում նպաստ տալիս են անգլիացիք, Համադան՝ ամերիկացիք, Ղազվին հայոց գումարներից, Թավրիզ 1000 չնչին ամերիկացիք: Թավրիզ 600 չնչին մեր կոմիտեն, Ղարադաղի գյուղերին օգնում է մեր կոմիտեն, որ է պատգամավորական ժողովը, Խոյ, Մակու եղածներին օգնում է մեր ժողովը:

Մակու, Խոյ, Սալմաստ, Սուլտուզ, Միանդաք, Ղարադաղի չատ գյուղեր, Աղբակ ավերված են բոլոր եկեղեցիները, թալանված է ամեն ինչ:

Առաջնորդարանը, թեմական ժողովը եւ խորհուրդը գործում են ամեն ուղղութեամբ՝ հօգուտ իրենց թշվառ ժողովրդի:

Առաջնորդարանը նյութական անանկութեան մեջ է, ապրում է ողորմութեամբ: Մնացորդ հայոց թիվն այստեղ եւ Բաղդադի շրջանում հետեւյալն է. Թավրիզ՝ 3500 չունչ, Մարաղա՝ 1200, Միանդարի մնացորդը՝ 500, Ղարադաղում՝ 4000, Խոյի մնացորդը՝ 400, Սալմաստ-Ուրմիա մնացորդ՝ 5000, Մակուի երեք գյուղի մնացորդը՝ 350, Բակուբ՝ Վանեցի՝ 12000, Մոսուլից Բակուբե տարված 5-7 հազար չունչ:

Ավելի մանրամասն տեղեկագիր, տպված, պատիվ կունենամ ներկայացնելու մոտ ժամանակում:

Ձերդ Վեհափառության խոնարհ որդի
Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.57, ց.5, գ.198, թ.1-2 /302/:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻԶ
12/25 Հունիս 1919

ՀՀ ԱՐՏԱԴԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի լրումն նախորդ հաղորդագրության, պատիվ ունեմ զեկուցանել հաղորդվող տեղեկությունները:

ա/ Սմկոն իր 1500 քրդերով վռնդեց թուլամորթ պարսիկներին եւ տիրապետեց Ուրմիա, Սալմաստ, Խոյ՝ քշելով պարսիկ դատավորներին, քրդեր նշանակելով դատավոր եւ տեղահան անելով պարսիկներին: Ուրմիայից եկան ամերիկյան հյուպատոսը՝ իր դոքտորներով: Հայ եւ մնացած ասորիների չուրջ 650 հոգի, սպանված է 200, վիրավոր 100, որոնց մեջ սպանված 25 հոգի հայ, մնացածները ասորի են, պարսիկները գրգռվել են քրիստոնյաների եւ մասնավորապես ամերիկացիների դեմ՝ այն պատճառաբանությամբ, որ սրանք քրդերին նպաստ բաժանում են զենքի համար: Քրդերը մնացած քրիստոնյաներին բերել են, Ուրմիայից անվտանգ հանել՝ հասցրել են ծովափ: Ուրմիան 20 օր է, որ պաշարված է՝ քրդերից, եւ պարսից կառավարությունը անզոր է օգնություն ուղարկել:

Մեր սպանվածների համար խիստ բողոք ներկայացրեցի անգլիական հյուպատոսին եւ պարսիկ կառավարությանը՝ պահանջելով պատիժ եւ 1000-ական թուման ամեն սպանության համար, նույնպիսի խիստ հեռագրեր գնացել են ամերիկյան եւ ֆրանսիական հյուպատոսների կողմից, որոնց դրոշակները Ուրմիայի պարսիկների կողմից ամենախայտառակ կերպով անպատված են, քանի օր է, ոչ մի պատասխան չկա ոչ Լոնդոնից, ոչ Փարիզից, ոչ Վաշինգտոնից. ամեն բան կապում են գերմանական պայմանների ստորագրությունների հետ:

բ/ Մակվում մնում են 350 թուրքացած հայեր, որոնց համար ուղարկված է Պետրոս վարդապետը՝ խնամելու եւ 500 թուման բաժանելու համար, Սարդարը ակնածելով հանրապետությունից իրավունք էր տվել մեր պահանջի հիման վրա նրանց հայ համարել եւ ժողովել հայոց վանքում եւ Քիշմիշ-թափա գյուղում: Շուկները, թեհ տաճիկները էլի գալիս են Մակու, վախեցնում է հայերին, չեն կամենում հեռանալ Մակուից, ուր վարում են տուրկական կյանք: Արդյոք բարի չէր լինի նախարարությունը տեղափոխել նրանց Շահթախտի փոքրիկ վայրերը՝ առժամանակ մինչեւ Բայազետը կգրավվի հայոց զորքերով եւ հետ այսու հնար կլինի զետեղել նրանց իրենց բնակավայրում: Սարդարը մեծ ուրախությամբ կօգնի այդ բանում, որպեսզի անվնաս պահած լինի վերջին բեկորները՝ պատասխանատվությունից ազատ լինելու համար: Անշուշտ հետո հետ բերելու նպատակով, որովհետեւ Մակուի գիծը մեզ համար շատ կարեւոր է եւ պետք է հայացնել:

գ/ Երկաթուղու վարչությունը այսօր տոմսակները մինչեւ Երեւան վաճառում է 7 թումանով, որ բոներով կանի 1000-1200 ռուբլի, ասելով, որ ինքը Երեւանի հետ պայման ունի կապած եւ մնացորդ դրամը պիտի վճարի Հանրապետությունը:

Որովհետեւ սրանց հավատալ չի լինի, եւ նույն տարիֆով Երեւանից տոմսակի արժեք պահանջել 1200 թ. անկարելի է, ուստի եւ ամենից հարմարն է, մեր Ջուլֆայում կոնտրոլ նշանակել եւ պահանջել 35-ական դրանը ամեն մի տոմսակից հետ տալ, իսկ Երեւանից Ջուլֆա 30 թ. թողնել, որ Ջուլֆայից Թավրիզ իրանք ստանան. խնդրեմ այս մասին հազորդել համապատասխան նախարարության:

դ/ Թավրիզում ունենք հայ գաղթական 2058 շունչ, ասորի՝ 936, եթե ուշանա սրանց տեղավորել իրենց բնակավայրերում, արդյոք հարմար չէր լինի Արաքսի ափի մոտիկ գյուղերը տեղափոխել սրանց՝ աշնան վար ու ցանք անելու, քանի որ մոտ 300 տավար ունեն եւ սայլեր, եւ ձմեռն անցկացնելուց հետո ցանքսերը վերցնելուց հետո տեղափոխել դեպի Սալմաստ եւ Ուրմիա:

Անցյալ օրերը Նախիջեւանի թուրքերն ահագին քանակությամբ կաչի էին բերել Թավրիզ վաճառքի, զարմանալի է, որ մեր նախարարությունը կաչի գնելու մարդիկ էր ուղարկել Թավրիզ, այնինչ երկրից կաչի է գալիս այստեղ: Այստեղի բանակի 17500 կաշիները, որ մեր նախարարությունը կամենում էր գնել, պարսից տերությունը գրավել էր 15000 թուման պարտքի դիմաց:

Ձվճարելու դեպքում աճուրդի կդնի եւ իհարկե գնորդ չունենալու պատճառով, շատ աժան կարող է գնահատվել, խնդրեմ հիշեցնել համապատասխան նախարարության:

Առաջնորդ Այրպաւրականի
Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

Ստացվել է 1919 թ. հուլիսի 1-ին նո. 4252
Պատճեն ուղարկված է ֆինանսների նախարարություն, նո. 2504
խնամատարության նախարարություն, նո. 2506
ներքին գործերի նախարարություն, նո. 2505

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.28-29:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻԶ

.

ԱՄԵՆԱՀԱՐԳԵԼԻ Պ. ԱԼԵՔՍԱՆԴՐ
ԽԱՏԻՍՅԱՆ

17/30 Հունիսի 1919

Նամակաբերը՝ պ. Ժորժ, հայ է: Թեհրանի անգլիական դեսպանատան ծառայող. լավ հայ է, սիրով խնդրեմ ընդունեցեք, եթե էջմիածին գնալու ցանկություն ունենա, ավտոմոբիլի համար օգնեցեք:

Ձեր հեռագրերին դեռ պատասխան չկա, իսկ մեզ համար երեւանի կոնսուլի միջոցով գրված է, կարծեմ:

Ղարաբաղի համար լավ լուր չառինք, հատուկ խնդրում եմ հեռագիրը, փոստը եւ երկաթուղու կաշառակերությունը վերացնելու հրաման արձակեք, եվրոպացիք գնում գալիս են, երկաթուղու կարգերը շատ վատ տպավորություն է թողնում նրանց վրա:

Պարսիկներն ակնածանոք են նայում մեր Հանրապետության վրա:

Ցանկանալով Ձեզ անսպառ եռանդ աշխույժ գործելու հօգուտ Հանրապետության:

Աղօթարար Ներսես եպիսկոպոս
Մելիք-Թանգյան

Ստացվել է 1919 թ. հուլիսի 3-ին
նո. 4304

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.206, թ.30:

Նորին Ս. Օծութեան
Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք, Վեհափառ եւ
Սրբազանագույն կաթողիկոս
Տ.Տ. Գեւորգ Ե-րդին
Ղարաբաղի թեմի կառավարչից

Ամենախոնարհ հայտարարություն

Սույն ամսի 4-ին /ն.տ./ թուրքերը չրջապատելով Շուշին՝ սկսեցին հարձակում հայերի վրա: Հայերն ինքնապաշտպանության դիմեցին: Անընդհատ եւ սարսափահար հրացանաձգությունը երկու կողմերի դիրքերից չարունակվեց 28 ժամ, առանց ներխուժման եւ հարձակողական միջոցների դիմելու, որից հետո կռիվը դադարեց՝ անգլիական միսիայի եւ կովող կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Երկու կողմից ընկան մոտ 20 հոգի: Հայերից թուրքերի թաղում դերվեցին 40-աչափ հոգի եւ սրի քաշվեցին: Հետեւյալ օրը քրդերն ադրբեջանական զորքի մասնակցությամբ հարձակվեցին Ղայբալի գյուղի վրա եւ ժողովրդի երեք քառորդին՝ գլխավորապես տղամարդկանց, սրի քաշեցին, գյուղն ավերեցին, հրդեհեցին՝ եւ հիմնահատակ կործանեցին: Այնուհետեւ հարձակվեցին Կարկաժան, Փանլուզ եւ Ջամիլլու գյուղերի վրա եւ կողոպտեցին ամբողջ ինչքն ու հրդեհեցին առաջին երկուսին, փախուստի մատնելով ժողովրդին եւ փախչելու ժամանակ չատերին գնդակահարելով: Երրորդ օրը հարձակվեցին Քարինտակ եւ Դաշուշին գյուղերի վրա, ժողովուրդը փախավ, մի մասն ինքնապաշտպանության դիմեց, ավար ու սպանություն այդ երկու գյուղերում քիչ եղան: Պարզ էր, որ թուրքերն ուզում էին այդպիսով քաղաքի հայերին կտրել դրսի հաղորդակցությունից՝ խլելով միակ եղ ու մուտ պահպանող այդ կապերը: Այդ չարդերից ու ավիրածություններից հետո գեներալ նահանգապետ Սուլթանովի հետ իմ ունեցած տեսակցության հետեւանքն ու չանքերն այն եղան, որ մի կերպ խաղաղ դրություն ստեղծվի երկու ազգերի մեջ, եւ հրդեհը բռնկվելով լայն ծավալ ու ավելի աղետալի հետեւանք չունենա գավառում: Սուլթանովի ցանկությունը եւս այդպես էր: Ինձ մոտ ընտրվեց քաղաքի հայերից խորհրդի նման մի մարմին՝ դրությունը բարեփոխ միջոցներ մշակելու համար, որի միջոցով եւ պահպանում ենք կապ Սուլթանովի եւ գավառի հայերի հետ: Գավառի հայությունը դժվար է համաձայնում թուրքերի հետ որեւէ համաձայնության գալ հպատակության հողի վրա, այլ պնդում է խաղաղ ու չեզոք կացություն, ինչպես մինչեւ այժմ է եղել՝ մինչեւ խաղաղարար խորհրդաժողովի վերջնական որոշմամբ Ղարաբաղի հարցի լուծումը: Թուրքերը խստապահանջ չեն հպատակության հարցի մեջ եւ ցանկանում են համերաշխություն, բայց, անտարակույս եւ լռելյայն՝ կամենալով մտցնել ադրբեջանական կարգերը: Այդ առթիվ կոչ է ուղղված հայկական Ղարաբաղի բոլոր գյուղական հասարակություններին, որ յուրաքանչյուր գյուղ մի պատգամավոր տա համագումարի համար եւ իր վերջնական խոսքն ասի տիրող հեղեղուկ դրությանը վերջ տալու համար: Համագումարը նշանակված է ամսիս 28-ին /ն.տ./ Շուշիքենդ գյուղում, եւ նրա որոշումների մասին իր ժամանակին կզեկուցեմ Ձերդ վեհափառությանը:

Այս դեպքերը համառոտ կերպով զեկուցանելով Ձերդ Ս. Օծութեանը՝ հայտնում եմ ամենախոնարհաբար, որ դեռ կատարյալ ապահովություն եւ խաղաղություն չի տիրում Ղարաբաղում, խիստ լարված եւ սպառնական դրությունը եւ մասնակի կողոպուտները, հարձակումներն ու սպանությունները չարունակվում են:

Ձերդ Վեհափառության ամենախոնարհ որդի՝
Վահան եպիսկոպոս

12/25 հունիսի 1919 թ.
Նո.78 Շուշի

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.57, ց.2, գ.557, թ.26:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻԶ
հա.317
1/14 հունիսի 1919 թ.
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեծ չնորհակալությամբ ստացվեցին արտաքին եւ ներքին տեղեկություններ, որոնք անմիջապես կարդացվեցին պատգամավորական ժողովում եւ խորհրդում, որոնց կողմից հայտնվում է խորին չնորհակալություն:

Խատիսյանի երկու հեռագրերը Շահին եւ Վալիաթին, որ հասել էր մեզ մարտին, անմիջապես հեռագրվեցին ըստ պատկանելիին:

Մայիսի 24-ին Ուրմիայում եղավ ասորական ջարդ պարսիկների կողմից, հայեր թե այնտեղ եւ թե Սալմաստ շատ քիչ կան. սպանված է 200 հոգի, վիրավորված 100 հոգի, բանտարկված է ամերիկյան բժիշկը, ընտանիքը եւ մնացած հայ եւ ասորի ապաստանել են նահանգապետի տանը, որ ազատ լինեն խուժանի հարձակումից: Ասորական կոմիտեի հետ հեռագրվեց Թիֆլիս գեներալ Բիզին՝ Լոնդոն, Փարիզ, Թեհրան, Բաղդադ, իսկ Խատիսյանի անունով գրած հեռագիրը անգլիական հյուպատոսը հարմար չդատեց խփել:

Ուրմիա-Սալմաստ-Խոյի հարցը հանելուկ էր, անհասկանալի է մեզ, եւ ամերիկացոց եւ ֆրանսիական միսիայի համար, սա կապ ունի քրդական հարցի հետ: Նիհրիի շեյխը, որ նստում է Վանա վիլայեթ - Հեքիարի շրջանում, շեյխ Իբռահուլլուրի թոռը, որը խնամիացավ Սմկոյի հետ, կամենում էր տիրանալ Ուրմիա-Սալմաստ-Սուլքուլաղ մասերին մինչեւ Մոսուլ-Բիթլիս-Դիարբեքիր: Բիթլիս է հայակեր Ալի Հասան փաշան, Վանի-Սալմաստի վերջին կոտորողը տաճկական զորքով, համախմբում է քրդերին եւ պահանջում Քրդստան հրատարակել Բիթլիս, Դիարբեքիր խլելով Հայաստանից եւ բողոքել կոնֆերանսին միացնել ոչ թե Հայաստանին, այլ Քրդստանին: Սրանք սկսեցին շարժվել շեյխ Թանկական մոգական գավազանով, եկան Մոսուլից երեք հնդիկ մահմեդական օֆիցերներ - Ջհանգիր Բահաթուրի դեկավարությամբ, որոնք կարգադրություններ արին Շեյխի եւ Սմկոյի համար եւ գնացին եւ սկսվեց քրդական շարժում, քրդերը հայերի հետ լավ են, Սմկոն բացարձակ հայտարարել է, որ հայերի բարեկամ է, հայերի դեմ ոչինչ չունի եւ իր թշնամին միմիայն՝ պարսիկն է: Ո՞ւր կհանգչին

այս սադայելական խնդիրը Աստված կիմանա:

Հետեւում ենք շատ հետաքրքրությամբ: Եթե Թավրիզ եկող Հանրապետության ներկայացուցիչը ուշանալու է, ուղարկեցեք թեմական խորհրդին օրդերներ, որպեսզի ամեն մի անցագրին երկու թուման /100 ր./ եւ վիզաներին /15 ղռ/ առնենք Հօգուտ Հանրապետության, անցագրերը տալիս է առաջնորդարանը ձրի: Այսօր Երեւանի թուրքերը եկան անցաթուղթ վերցնելու համար:

Մակու ուղարկված է Հանրապետության կողմից Գարուշ Գեւորգյան, շատ ուրախ ենք, մեծ ուրախություն կլինի երբ գրավեցին Բայազետ, Վան, Բաշկալա որ մեզ համար շատ կարեւոր է եւ գաղթականության բնակեցման հարցի միակ միջոցը:

Մակուից ցորեն տանելու համար տրված է Սիպահսալարից շատ նպաստավոր հեռագիր, ամեն բան կարելի է անել Մակվում, Սարդարը շատ գոհ է Հանրապետությունից:

Անհամբեր սպասում ենք Զանգեզուրի եւ Ղարաբաղի միացման Հանրապետության հետ:

Այս րոպեիս ստացա պ. Խատիսյանի երկու հեռագրերը եւ Թեհրան անմիջապես ուղարկեցի, մեկը մինիստր նախագահին, մյուսը՝ Ալ. Թանյանին: Թեհրանում մինիստր նախագահի դեմ շատ մեծ դժգոհում կա անգլոֆիլական ուղղության դեմ, ուժեղ է այնտեղ նրա դեմ դեմոկրատ կոչված /կադետներ/ պարսկական կուսակցությունը, որը պահանջում է հեռանալ, այլապես փորձեր է անում հեռացնել: Մեր ցավոտ կողմերից մեկը փոստային, հաղորդակցության եւ հեռագրի բացակայությունն է. հեռագիրը անգլիացիներին ձեռքին է եւ գրաքննության տակ, պետք է այդ երկուսը կանոնավորել, հանկարծակի հաղորդելու պետք է լինում եւ մի միջոց բանակցելու Երեւանի հետ:

Առաջնորդ Այրպատրականի Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

Ստացված է 1919 թ. հունիսի 19-ի նո. 3853:
Կատարված է հունիսի 20-ին, նո. 2283:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.2324:

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ Երեւան 20 հունիս 1919 թ.
Հա. 2283

Գերապատիվ եպիսկոպոս Մելիք-Թանգյանին
Առաջնորդ Հայոց Այրպատականի թեմին
Թավրիզ

Մինչեւ այժմ Պարսկաստանից Հայաստան եկողները անցնում են մեր սահմանը առանց անցագրի եւ կամ օրինական "վիզե"-ի, ինչ որ վնասում է հյուպատոսական հասույթներին, առիթ տալով միանգամայն մի չարք անելանելուրյունների:

Որպեսզի վերջ դրվի այս անկանոն դրության, կառավարությունը որոշել է գործադրել անցագրային ընդունած օրենքներ, ուստի խնդրում ենք, որ կարգադրեք, որ այդ գործողությունները կատարեն Ձեր Առաջնորդարանի կողմից:

Անցագրերի համար պետք է գանձել 2 թուման, իսկ "վիզե"-ի համար՝ 15 ղռան: Հյուպատոսական սույն գործողության համար պետք է պահել Առաջնորդարանում համապատասխան հաշվեմատյաններ եւ օրդեր, որոնք խնդրում ենք պատրաստել տալ:

Ստացվել է 1919 թ. հունիսի 20-ին, նո.2283:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.206, թ.25:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
Թավրիզ
Հա.630

Ամենահարգելի պ. Ալեքսանդր Խատիսյան

Ուղարկում եմ Ձեր վերջին խփած երկու հեռագրերի պատասխանները, որոնք ստացա այժմ Թավրիզից: Խնդրեցի անգլիական հյուպատոսին թույլ տալ ինտօի գծով ուղարկել. նա կապրիզ ունի, չեմ ու չեմ է անում:

Խնդրում եմ հատուկ երկաթուղու գիծը, հեռագիրը կարգավորեք, ամենակարեւորը մեր Հանրապետության համար: Շատ հեչտ ու ձեռաց գործ էր:

Տրխկինսկին թշնամաբար է վերաբերվում, երկաթուղու գնացքը հայտարարել է Երեւան եւ Տփղիս եւ մարդ չի ընդունում, այսինքն հայի, այս ինչ բան է, չգիտեմ, նրան սպառնացի բողոքով, թե անգլիացոց եւ թե Ձեզ, որ թույլ չտրվի նրա գնացքը մեր հողով անցնելու, շահագործում է, անդադար փսփսոց է անում անգլիացիների ականջին, որ հայերն անընդունակ են երկաթուղին կանոնավորելու, պետք է ձեռքներից խլել: Նրանից դուրս է եկել խոսք, որ Հայերից երկաթուղին կխլենք եւ կհանձնվի իբր իրենց /անգլիացիներին/: Հատուկ խնդրում են պ. Յաղջյանին կարգադրվի շրջի այս գծով, եւ կարգավորի, կաշառքներին վերջ դնի, թե չէ օտարների մոտ կնսեմանանք մեր անկարողությամբ:

Սրա հետ ուղարկում եմ Համադանից ստացած հեռագիրը հայ զինվորներից, որոնք դրամական օգնություն են խնդրում, դժբախտաբար մենք դրամ չունենք:

Հատուկ խնդրում եմ ուշադրություն դարձնել Մակուի մահմեդականացած 250 չունչ հայերի վրա, որոնց փոխանորդ Պետրոս վարդապետին տրված է հրահանգ օգնելու, Ձեզ մոտ գալու. 500 թուման ուղարկել ենք նրանց, այժմ կոպեկ չունենք նրանց օգնելու:

Մակուն Երեւանին մոտ է, այստեղից հարաբերություն չկա, շատ դժվարությամբ է լինում երթեւեկումը: Խնդրեմ Տրխկինսկու հետ միանգամից հարթացրեք գծի երթեւեկությունը, գոնե շաբաթը երկու անգամ, Երեւան եկողի համար մինչեւ Տփղիս է տոմսի փող առնում, որ սոսկալի բան է, Ջուլֆայից Երեւան նա վերցնում է 4-500 ռուբլի - ի՞նչ իրավունքով:

Աղոթարար Ներսես արքեպիսկոպոս
Մելիք-Թանգյան

Ց. Գ. - Գեներալ Բիչը քանի օր է գնացել է Ուրմիա՝ մի քանի հարյուր զինվորներով, սպասվում է օրերս: Թեհրանը խառն է, վաղը Վալիաթին գնում է Թեհրան, եթե Թավրիզ

դիմում կամ գրություն ունենալու լինեք, Սիպահսալար Ազամ - ընդհանուր նահանգապետի անունով, բարի եղեք ուղարկելու:

-Գուցե պարենավորման նախարարության կարիք լինի բրինձի, որից 25000 փութ Աստարա պատրաստ կա, 16 ղառնով փութը, պրոֆ. Տիմոֆեեւը խնդրում է իմացնել, եթե կարիք լինի, կվաճառվի իր միջոցով: Կատարելով պրոֆեսորի խնդիրը՝ հարակցում եմ, որ Թավրիզում վերոհիշյալի առաջարկից ավելի արժան կարելի է ձեռք բերել բրինձ:

-Պարսկահպատակ Հայկ Տ. Հակոբյան զգվելի պարոնը 50 հակ ալյուր է բերել Երեւանից Թավրիզ եւ վաճառում եւ իբր թե ամերիկական միսիայի թույլատվությամբ, այդ պարոնի մուտքը Հայաստան պետք է արգելել, այլապես քաղցած ժողովրդի ալյուրը եւ հացը կթափվի Թավրիզ, ես նրան կանչեցի եւ սաստեցի, որ բանտարկել կտամ Թավրիզ նրան, եթե ձեռք չքաշի իր չանտաժից:

Այս բոպեիս սուրհանդակ եկավ Ղարադաղի շրջանից եւ հայտնեց, որ Զանգեզուրի գավառի հարավային շրջանում Արաքսի ափերով Մեղրու մերձակայքում հայ-թուրքական ընդհանուր կոտորած է, թուրքերը մեր հայկական ափից անցնում են պարսից ափը Ղարադաղ եւ տեղի հայերին սպառնում կոտորածով: Պարսից մասից թուրքերը չատ են անցնում Զանգեզուր յուրայիններին օգնության, այսօր դիմեցի պարսից կառավարությունն չթողնել իրանց հպատակներին անցնել Արաքս հայերին կոտորելու դիտավորությամբ եւ խառնակություն ձգել:

Ներսես Մելիք-Թանգյան

Ստացվել է 27 հունիսի 1919 հա. 4755

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266, թ.31-32:

Ատրպատականի առաջնորդ եպիսկոպոս Մելիք-Թանգյան 19 օգոստոսի 1919 թ. նո.839 գրությունը Հայաստանի Հանրապետության վարչապետ պ. Ա. Խատիսյանին

Ամենահարգելի պր. Խատիսյան

Օգտվելով ամերիկացի պարոնի գալուց, տալիս եմ հետեւյալ տեղեկությունները Նախիջեւանի վերջին դեպքերից եւ տեղվույս դրությունից:

Հունիսի 14-15-ին Ջուլֆայի փոքրաթիվ զինվորական ուժը պարուչիկ Գր. Հովհաննիսյանի հետ, միացած պարուչիկ Մ. Ջալաբյանի հետ բերին Թավրիզ Ջուղայի եւ Կարմիր Վանքի ժողովրդին. դրանք պատմեցին հետեւյալը: Նախիջեւանի զինվորական ուժի հետ նահանջելուց հետո, Ջուլֆայի զորքը, ընդամենը 56 հոգի գլխավորությամբ պարուչիկ Հովհաննսիյանի, առանց գնդացիրի եւ թնդանոթի ընդդեմ կանգնած 300-400 զինված թաթարների, հերոսական ջանքեր գործ դնելով, երեք-չորս օր խիստ կռիվ մղելով թաթարների դեմ, մանավանդ որ 56 հոգուց միայն 14 հոգի են կռիվ մղել, մնացածները հիվանդ են եղել եւ թաքնվել, պարուչիկ Հովհաննիսյանը 8 հոգով, պարուչիկ Ջալաբյանը 6 հոգով, հերոսաբար կռվել են ահագին ուժի դեմ, Արաքսի կամուրջը պահել եւ կարողացել անց կացնել Ջուղայի եւ Կարմիր Վանքի հայերին այս կողմը եւ բերել Թավրիզ: Մեր քաջ պարուչիկների արածը 14 հոգով չպիտի մոռանալ եւ պետք է վարձատրել:

Մեզ մոտ գտնվում են Ջուղայից - 516 չունչ, դարաչամբցի - 54, Կարմիր վանքից - 46, ալեքսանդրապոլցիք - 21, Նախիջեւանցի - 15, Նորաչենցի - 17, մնացածներն այլ եւ այլ տեղացի, ծառայողներ, ռուսներ, ընդամենը 787 չունչ: Իսկ վերջերս Նախիջեւանից եկան եւս 74 հոգի կին եւ երեխա՝ մի տղամարդով, որ փախել էր Ապրակունիսից: Այս Թավրիզ եկածները:

Իսկ Նախիջեւանի գավառից պատմում են հատ ու կտոր գյուղացիների մնացորդների մասին այսպես.

Նախիջեւան քաղաքի շրջապատի գյուղերի հայերը մնալով անպաշտպան, շրջապատվում են տեղական թուրքերով, կոտորվում են ոչխարի նման տղամարդիկ, իսկ կանայք եւ երեխաները մորթվում եւ թափվում երասխ, օրերով Երասխը դիակ էր, որ տանում էր իր հոսանքով: Այս շրջանի հայկական կոտորածը կազմակերպել են Սայջի, Բուլկան եւ Կարաչու գյուղերը, որոնք ժողովել են Ղարախանելկլու, Եամխանա, Կուզնուվ, Արապին, Եարմշա եւ այլ հայաբնակ անզեն գյուղերի հայերին Բալկան եւ Կարաչու գյուղեր, մորթոտել եւ թափել Արաքս: Թե ինչքա՞ն է կոտորած, չատ դժվար է ասել, պետք է իմանալ Նախիջեւանի գավառում մնացողները որքան են, համեմատել Թավրիզի եղածների հետ եւ այնուհետեւ ճիշտ թիվն իմանալ: Համենայն դեպս, Նախիջեւանի գարնիզոնին մեղադրում են նրանք այնքան ուժով եւ կապ պահելով Ջուլֆայի հետ չատ բան կարող էին անել, մանավանդ որ Գողթան եւ Զանգեզուր կողքներին էր, ես չեմ կարող մեղադրել, քանի որ փաստացի ոչինչ չգիտեմ, միայն կարող եմ թուրքերի սասածները կրկնել, որ Նախիջեւանի թուրքերը ոչ միայն չէին հավատացել, որ գարնիզոնը նահանջել է, այլեւ երեք օր չարունակ ուրախություններ էին սարքել այդ առթիվ, քանի որ իրենց փամփուշտները վերջացած էին եղել եւ մարդիկ չէին ուղարկել Մակու, Թավրիզ փամփուշտի:

Ապրակունիս եւ Նորաչեն կոտորվել են ոչխարի նման, Ապրակունիսի կոմիսարը կնոջ հետ 5 օր առաջ իմանալով կոտորածի մասին փախել էր Նախիջեւան եւ պատսպարվել Ռահիմ խանի տանը, երբ մեր գարնիզոնը կռվում էր թուրքերի դեմ, նույնպես եւ Ջուլֆայի կոմիսարը 5 օր առաջ փախչում է, ոչ ոքին ոչ մի նախազգուշական խոսք չասելով:

Եթե Նախիջեւանի կազմակերպությունը լիներ աչալուրջ, Նախիջեւանի գարնիզոնն իր բարձրության վրա կանգնած լիներ, անկարելի է, որ թուրքերը կարողանային գրավել այս շրջանը. գոնե փաստը ցույց է տալիս, որ կոմենդանտ Հովհաննիսյանը եւ պարուչիկ Ջալաբյանը 14 հոգով 300-400 հոգուն երեք օր դիմադրելուց, չարդելուց հետո առանց գնդացիրների, 1000 հոգի մարդ ազատեցին, անցկացրին Արաքս մի վագոն ալյուրի հետ, որ դժբախտաբար ամերիկացիք գրավեցին այնտեղ, չթողեցին զորքի վրա գործ ածենք, մանավանդ որ այս կողմից մեծ ուժեր թափվել էին Բեյուկ Վեդի-Շարուր, մնացել էին զինված անկարգ ամբոխ:

Եղած գաղթականներին պահում է Թելիֆ կոմիտեն, տալով չնչին մի ղռան ու կես, փոխարինաբար որ հետո Ջեղնից ստանանք վճարենք ամերիկացոց: Պարսից կառա-

վարության վերաբերմունքը ի դեմս ընդհանուր նահանգապետ Սիպահսալար Ազգամի, վեր է ամեն գնահատություններից, նրանք ամենամեծ պատրաստակամությամբ ընդունեցին գաղթականներին չթողնել ոչ մի զինված պարսիկ անցնել երասխից այն կողմ, նույնպիսի հրաման արձակելով եւ Ղարադաղի, չատ հույս ունեմ, որ բարի կլինեք չնորհակալություն հայտնելու Թեհրան պրիմիեր մինիստրին եւ Թավրիզ Սիպահսալար Ազգամին:

Թե որքան հայ է մնացել Նախիջեւանի շրջանում, դժվար է ասել, միայն գիտենք, որ Քեալբուլաղի Մուխտարի չնորհիվ Աստապատ հայ գյուղից տարվել են 7-800 հոգի Նեհիմ թուրքաբնակ գյուղը եւ ապրում են այնտեղ: Այն թուրք գյուղերը, որոնք ուժեր են ուղարկել Վեդի, Նեհրամեն, Եայջի, Օրդուբադ, Բուլկան, Կարաչու, Ջահրի, Նախիջեւան եւ այլն, բոլորի զեկավարն է Խալիլ բեյը, որ տաճկաց ժամանակ Նախիջեւան Օրդուբադի նահանգապետն էր, կոտորել է Ղարադաղի Ազգան գյուղը, եւ որի համար հեռագրել եմ դաշնակից պետությանց, նրան դատի ենթարկելու, նա ամուսնացել է Ջաֆարղոյլի խանի աղջկա հետ, որ տիրանա նրա գյուղերին:

Աղոթարար, առաջնորդ Ատրպատականի
Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

Հ.Գ. Այս րոպեիս ստացանք գնդապետ Հասկելի ճառը, ուրախությունից արտասվեցինք:

Արտաքին գործերի նախարարությունում ստացվել է 1919 թ. սեպտեմբերի 11-ին, հա. 5563

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.266:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՑՈՑ ԹԵՄԻՆ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ
ԹԱՎՐԻԶ

ԲԱՐՁՐ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Պ. ՆԱԽԱՐԱՐԱՊԵՏԻՆ

22 օգոստոսի 1920
Ձերդ Բարձր գերապատվություն ամենահարգելի
պ. Օհանջանյան

Հաղորդում եմ հետեւյալները օգտվելով ինժեներ Եվգենի Ջուլսկու // Թավրիզից Երեւան՝ Նախիջեւանով գալովը: Երկու հեռագիր եմ տված Մակուի Սարդարի միջոցով Ֆինանսների նախարարի անունով Շահթախթու մեր զորքերի հրամանատարի միջոցով՝ ա. հարցնելու մանրամասնություններ անկախության ֆինանսավորման համար եւ տոմսերի խնդիրով, հույս ունենալով Թավրիզում հանգանակել մինչեւ 10.000.000 մեր բոննաներով. բ. թե՞ իրավունք կտրվի Եվրոպա ուղարկելու Շահթախտով Հայաստանով ապրանք, գործեր եւ մինչեւ այսօր պատասխան չունեմ, թեեւ Մակուի Սարդարը հեռագրել էր ինձ, որ իմ խփած հեռագիրը հայտնել է Շահթախտ հայոց զորքերի պետին:*

Մենք վաղուց սպասում էինք Նախիջեւանի եւ Ջուլֆայի գրավման, որտեղ ոչ մի թաթար բնակիչ չի մնացել, մոտ 60 000 հոգի տեղահան են եղած եւ կոտորվում են սովից, հիվանդությունից, երասխի ափին, իսկ 20-30 հազ. անցել են Շահթախտից եւ Ջուլֆայից այն կողմը:

Պարսիկները չատ ուրախ են հայերի հարեւանությունից եւ հույս ունեն ճանապարհի բացումից հետո Մաքսատնից մեծ օգուտներ՝ ստանալ, ինչպես եւ հույս պետք է ունենա Հայոց Հանրապետությունը սպասելով ամեն ամիս առնվազն 30.000.000 ռուբլի գանձարանի եկամուտ, որքան չուտ այնքան լավ եւ ձեռնատու է Ջուլֆայի գրավումը: Օրդուբադից բոլորը փախել են Պարսկաստան: Խոսել եմ Թավրիզի կառավարության հետ միացնել անմիջապես Պարսից Ջուլֆայի հեռագրական գիծը հայոց Ջուլֆայի հետ: Նախիջեւանի կռվող զորքերը եւ սպայությունը փախած է Թավրիզ:

Խալիլ փաշան այժմ Նախիջեւան է՝ մի փութ ոսկով եւ հինգ ռադիոյով, որ բերել է բոլշեւիկ կառավարությունից, լսվեց, որ նա բերել է Մոսկվայից 20 փութ ոսկի եւ տանելու էր Մուստաֆա Քեմալին, իբր թե Շուշա-Գորիս-Նախիջեւանով անցնելիս բոլշեւիկ զորքերի հետ, մեր Դրոն հարձակվել է եւ 3 փութը գրավել:

Նախիջեւանում այժմ գտնվում են 8-900 բոլշեւիկ ռուսներ, Խալիլ փաշան 500 ասկյարով եւ մակուի քրդերը կարմիր դրոշով: Նախիջեւանի թաթարությունը ահ ու դողի մեջ է եւ չի կամենում կռվել, կռվի մղողը Խալիլ փաշան է Նախիջեւանում, Նուրի փաշան՝ Բայազետ, եւ Մակուի սարդարը՝ Մակուում: Թե ես, թե իշխանը (Հայաստանի դեսպան իշխան Արղությանը - Հ.Ա.) Թեհրանում հազար անգամ բողոքել ենք Մակուի Սարդարի դեմ, որ տաճկական զորքերի ինտրիգների բուն է, պետք է առաջն առնել, Պարսից կառավարությունը միշտ պատասխանում է. մենք անզոր ենք, ոչինչ անել չենք կարող: Թավրիզում կիսանկախ վարչություն է հաստատված դեմոկրատ տարրերից (մեր կադետների նման), ոչ զրամ ունի, ոչ զորք, մեր հարաբերությունը չատ լավ է: Նրանք երկյուղ են կրում բոլշեւիկներից: Բոլշեւիկներն այստեղ պրոպագանդիստներ են ուղարկում եւ զրամ: Եթե ճանապարհը բացվեց, անմիջապես կփոխադրենք Ջուլֆա-Նախիջեւան 65 զինվոր, 800 - Ջուլֆա նախիջեւանցի, 1000 հոգի ղարաբաղցի, մեծ քանակությամբ ծառայողներ եւ այլն:

Թերթերի տեղեկությամբ օգոստոսի 15-ին Մոսկվայում ստորագրվել է հայ-ռուսական հաշտություն՝ դաշնակիցների մասնակցությամբ եւ համաձայնությամբ, դժբախտաբար մինչեւ այսօր Նախիջեւանի խնդիրն առկախ է մնում:

Նախիջեւանում ուժ չկա, բոլոր զինված ուժերը ոչ ավելի, քան 4000 է, որոնք հայոց Շահթախտի թնդանոթներից չատ վախենում են:

Եկող ռուսների անցուդարձի վիզաներից ստանում ենք 15 ղուրուշ, իսկ անցուդարձից՝ 20 ղուրուշ: Միմիայն այս եկամուտից հանրապետությունն ահագին արդյունք կստանա:

Արտաքին գործերի նախարարության բոլոր թղթերը ստացանք եւ Իշխանին ուղարկվելիքները ճամփեցինք Թեհրան:

Պարսիկների կողմից ուղարկված է ներկայացուցիչ Նախիջեւան կես կոնսուլի պաշտոնով, Վասիլ էլ Մամալը ա-

նունով, որը Տ. Կարապետի հետ այստեղից Քաջազնունու ժամանակ եկել էր Երեւան, Հայերի բարեկամ է, երկդիմի...բայց անզոր են, ոչինչ անել չեն կարող. ամբողջ Ատրպատականը խռովության մեջ է, միջնորդը հաշտության մենք ենք դուրս գալիս, իրենց խնդրանքով՝ Ղարաբաղի Ամիր Արշարի կողմից: Բաքվի Ադրբեջանում դեր է խաղալու Նախիջեւանին Ջուլֆան միացնելը, նախկին պրոֆ. Տիմոֆեեւը, բոլշեւիկ դարձած՝ Թավրիզ էր առաջ, այժմ Բաքու է, ասում են եկել է Նախիջեւան:

Վան-Բաշկալա-Բայազետ գտնվում են ոչ ավելի, քան 200-300 ասկյարներ, քուրդ եւ թուրք չկա, Արարատի քրդերն առաջարկում են հնազանդվել Հանրապետությանը:

Տաճիկների ոգին է Մակուի Սարդարը: Ջմռուանալ, Մակվում Սալաստին եւ Ահմեդ խաներն են, որ Սարդարին եւ տաճիկներին հակառակ են եւ հայոց կողմն են:

Աղոթարար Միացյալ Հայաստանի փառավոր ապագայի,
Ձեր կաթիւնեւրի, փառապանծ զորքի հաջողությունների
Ներսես արքեպիսկոպոս Մ. Թանգյան

Արտաքին գործերի նախարարությունում ստացվել է 1920 թ. սեպտեմբերի 3-ին, հ. 3927: (Փաստաթղթի վրա կա Հ. Օհանջանյանի հանձնարարականը՝ "Խորհրդին": Պատճենը ուղարկված է ռազմական նախարարությանը 11/9 1920 հա. 5115, 4/9 1920 ֆինանսների նախարարությանը հա. 5183, 9/9 1920):

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.4:

Գերապատիվ Ներսես եպ. Մելիք-Թանգյանին

Ձեր վերջին հեռագիրը ստացանք, մեր երթալը Հայոնի չէ, բայց ամենայն հավանականությամբ այս ձմեռ հոս պիտի մնանք: Անգլիական զինվորներ պիտի երթան, որոնք ժողովրդի մեջ կվարձվեին. - անոնց պիտի փոխարինեին հայեր ու ասորիներ: Մեր առանց ընտանիքի զինվորների կովկաս երթալը Բաղդադի ազդ. առաջնորդարանի ու հաստատությունների անբարեխիղճ վերաբերմունքի երեսից դեռեւս կձգձգվի, անոնք բավական չէ, որ որեւէ կերպով չեն օժանդակել մեր գաղթականության, այլ ամեն կերպ կառավարության մոտ մուխ գործերով կխանգարեին՝ ամենայն օր թելադրանքներ անելով եւ Հայտարարություններ տալով: Սրբազան, մենք Հնարավորություն չունենք այդ բանի առաջն առնելու, Հանրապետության ներկայացուցիչն էլ կառավարության մոտ չճանաչվեց, որպեսզի նրա միջոցով կարողանայինք մեր գործերին լավ ընթացք տալ՝ այնպես որ, մեր գործերի դրությունն այժմ շատ վատ է: Դուք, եթե հնարավորություն ունեք, Հանրապետության տեղեկացրեք այս պարագան, կամ Փարիզի ազգային պատվիրակության, որպեսզի հրահանգեն Բաղդադի "պաղանեերին" ճանաչելու ներկայացուցչին:

Այստեղ ուրմիացի եւ սալմաստցի զինվորներ կան, որոնց ընտանիքներ այդ կողմն կան, մենք քանի անգամ խնդրեցինք նրանց ձեր կողմ ուղարկել, բայց չթույլատրվեց, եթե դուք հնարավորություն ունեք, այդտեղից հեռագրով կանչել տայիք, որովհետեւ շատ անմխիթար դրության մեջ են եւ կը փափագին իրենց ընտանիքներին միանալ:

Թավրիզեցի ու մարաղացի զինվորներ կան, որոնք շատ վատ օրի են, հնարավորություն չունեին օրական հաց ճարելու, ինչո՞ւ համար թավրիզեցիներ իրենց այդ մի քանի զինվորներին չեն օգնելու: Ես Թեհրանից 3000 (երեք հազար) թուման ստացած էի մայիսին, 3-4 ամսվա ընթացքում մեկնողներին ճանապարհածախս տվեցինք, մնացած գումարն էլ այստեղ մնացած զինվորներին բաժանեցի, այժմ սոսկալի դրություն է, տարիներով տանջված տղաները ժամերով կաղերսեին եւ ես հնարավորություն չունեմ նրանց մի քանի կոպեկով օգնելու, այստեղ ժողովուրդը մլթերք ստանալով կապրեր, բայց անընտանիք զինվորները պարզապես սոված կը մնան, քանի որ իրենց ստացած մլթերքը պատրաստող ձեռք չունեն, իրենք աշխատանքի կերթան:

Բախտի բերմամբ մենք հոս ընկանք միջոցներից զուրկ եւ հարաբերություններից կտրված: Հանրապետության որոշումը 2,5 միլիոնի հայտարարության արդեն ամեն բան ի կատար ըրավ, մինչդեռ մինչեւ օրս ոչ մի կոպեկ չենք ստացեր, եթե այդպես շարունակվի, շատ անախորժ դեպքեր պիտի պատահին:

Թեհրանի կոմիտեն մեզ հրահանգեր էր բոլոր զինվորացուները հավաքել ու հոս բերել, լավագույն որոշում եւ հույսեր տվին, իսկ այսօր այդ պարոնները չեն՛ բարեհաճի մեր դրության մեջ մտնել:

Սրբազան, ես վստահ եմ, որ դուք ձեր ջանքերը չէք խնայի մեր այս անտանելի կացության դարման փութացնելու:


Խորին հարգանոք Լեոն Ղալոեան
24.10.19 Բաքուբա
Արտաքին գործերի նախարարությունում ստացվել է 1920 թ. մարտի 8-ին, նո. 1326:
Մարտի 9-ին պատճեն ուղարկվել է խնամատարության նախարարություն:

ՀՀ ԿՊՊԱ, Ֆ.200, ց.1, գ.385, թ. 46: ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրատարակման մեջ ընդգրկել ենք նաեւ այլ անձանց՝ Ն.Մելիք-Թանգյանին ուղղված թղթակցություններ, քանի որ դրանք լույս են սփռում արքեպիսկոպոսի նամակներում արծարծվող իրողությունների եւ խնդիրների վրա:

1. ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 27; 2. Նույն տեղում, գ. 174, թ. 1:
3. Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 174, թ. 22; 4. Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 1; 5. Նույն տեղում:
6. ՀՀ ԿՊՊԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 13, թ. 4, 5; 7. Նույն տեղում, թ. 16; 8. Նույն տեղում, թ. 9:9. Նույն տեղում, թ. 23-24; 10. Նույն տեղում, թ. 12, 20; 11. Նույն տեղում, գ. 266, թ. 2, 9, 36:



Ամին Գոջրի Շահու.

Բիհիսթունից մինչեւ Դալահու. Թեհրան, 2000 - 326 էջ, պարսկերեն

Ամին Գոջրի Շահուի այս աշխատությունն իրենից ներկայացնում է վերլուծա-համեմատական ուսումնասիրությունների մի հետաքրքիր շրջանակ, որն ընդգրկուն է ինչպես տարածական, այնպես էլ ժամանակային չափումներով: Աքեմենյան դինաստիայի թագավորների սեպագիր արձանագրություններով պատմության թատերաբեմ իջած Բիհիսթուն լեռան լանջերից մինչև Դալահու լեռան ստորոտն ընկած տարածքում բնակվող հաստատած քուրդ և լաք ժողովուրդների հին ու նոր դարերի լավագույն բանաստեղծներն՝ իրենց թողած մնայուն արժեքներով, կենսագրական մանրամասնություններով Շահուի պրպտումների ու հետազոտությունների «թիրախն» են դարձել: Եվ հեղինակի գրիչը մեկ առ մեկ, անուն առ անուն անդրադարձ է կատարում դեպի այդ ժողովուրդների 24 ընտրյալ բանաստեղծները՝ ընթերցողի դատին ներկայացնելով նմուշներ նրանց թողած ժառանգությունից: Այս ամենին նախորդում է մի ընդարձակ առաջաբան, որտեղ բերված համեմատության եզրերը խաչաձևվում են պարսից գրականության ու մեծերին:

Ըստ Շահուի մեկնության՝ «Եթե Հաֆեզն ու Սաադին, հիրավի, համարվում են պարսից գրականության ու պոեզիայի լայնածավալ անդաստանի գլխավոր մարգարեներն ու, միաժամանակ, լիիրավ տիրակալները, որ մինչև ահեղ դատաստանի օրը փառավորապես բազմած կմնան հզոր ու անզուգական տաղերդության գահին, ապա, իրավամբ, պետք է ընդունել նաև այն ճշմարտությունը, որ Մոլա Փարիչան Դինավարին, Սեիդ Սալեհ Մահիդաշթին, Մոլա Հաղալի Սիահփուշը, Ղոլամ Ռեզա Արքվազին, Թորքեմիրը, Նաջաֆ Ազադբախտը, Մոուլավի Մադուսին, Մոլա Մանուչեհր Քուլիվանդն ու Սեիդ Նուրշադ Աբու Օլ Վաֆային քուրդ գրականության առաքյալներն են»:

Հեղինակը Միրզա Ալմասխան Քանդուլեհին համարում է քրդալեզու Ֆիրդուսի, քանզի նրա «Շահնամեն» թե՛ իր կառուցվածքով, և թե՛ մարդու վրա թողած իր ազդեցությամբ այնքան մոտ է կանգնած մեծն Ֆիրդուսու անմահ գլուխգործոցին, որ ընթերցողին թվում է, թե այդ բանաստեղծը հենց ինքը, Ֆիրդուսին է՝ այս անգամ արդեն քուրդ ժողովրդի ծոցից ելած:

Եթե Մանուչեհրի Դամղանին բնության զարթոնքի, ծառ ու ծաղկի գովերգիչն է, ապա Մանուչեհր Խան Քուլիվանդիի, Միրզա Շաֆի՝ Քոլիայիի և Սեիդ Յաղուբ Մահիդաշթիի՝ քնության ու գարնանը նվիրված ձոներն իրենց նրբաճաշակությամբ չեն զիջում Մանուչեհրիի ներբողներին:


Խանայե Ղոլադիի կախարդական ու չատ գեղեցիկ «Խոսրով ու Շիրին», Միրզա Ալմասխանի սրտառուչ «Շիրին ու Ֆարհադ» պոեմներն ու Միրզա Շաֆի՝ի զգացմունքային «Նուշաֆալ և Մաջնուն» պատմությունն իրենց խորությամբ ու արժեքավորությամբ ընթերցողին մտովի տեղափոխում են Նիզամի Գյանջևիի անրջական աշխարհը:

Հազրաթ Շեյխ Ամիրը, Խան Ալմաս Լորեսթանին, Ադա Սեիդ Ֆարզին, Շահ Թիմուր Բանիարանին իրենց ստեղծագործություններով արժանի տեղ են գրավում Մոլայե Ռումիի՝ ճշմարտության և արդարության ջատագովի, կողքին:

Հեղինակի բերած համեմատությունները չարունակվում են, փոխարինվում քնագրերով:

Գիրքն ավարտվում է քրդերեն-պարսկերեն փոքրիկ բառարանով:

Պետք է նշել, որ հեղինակը հաճախ չփոթում է բանաստեղծների լեզվական, ինչպես նաև էթնիկ պատկանելությունը՝ երբեմն չառանձնացնելով լաքերին քրդերից ու դորաններից: Լ. Ղ.



Անդրյու Սկիլթոն. *Բուդդայականության համառոտ պատմություն.* Քիրմինգհամ: "Windhorse Publications", 1997.-263 էջ, անգլերեն

Բուդդայականության՝ մարդկության պատմության մեջ ամենադրավիչ գաղափարախոսություններից մեկի, պատմությանը բազում հիմնարար աշխատություններ են նվիրված, որոնց հեղինակները ոչ միայն բուդդայագետ գիտնականներ են, այլև բուդդիստներ՝ հոգևոր ուսուցիչներ և բուդդիզմի տեսաբաններ: Սակայն, մինչ օրս, հակառակ օրավուր աճող հետաքրքրությանը հանդեպ բազմադարյան բուդդայական ավանդության, մասնագետները չեն կարողանում հանգել մի ընդհանուր եզրակացության՝ անգամ բուդդայականության քնորոշման վերաբերյալ (կարելի՞ է, օրինակ, բուդդիզմը կրոն համարել, թե՝ ոչ), էլ չխոսելով դրա փիլիսոփայական, բարոյական, հոգեբանական և այլ ուրիշ խնդիրների գնահատման մասին:

Ներկա աշխատությունը հետաքրքիր է նրանով, որ պատկանում է մի մարդու գրչին, որը միաժամանակ և բուդդայականության ակադեմիական հետազոտող է (Ա. Սկիլթոնը աստվածաբանության դծով գիտական աստիճան է ստացել Բրիստոլի Համալսարանից՝ չարունակելով իր գործունեությունը Օքսֆորդի Համալսարանում և Royal Asiatic Society-ում), և այդ ուսմունքի հետևորդը (1979 թվականից Western Buddhist Order-ի անդամ է և կրում է բուդդայական Sthiramati անունը):

Լեզուների և նյութի հիանալի իմացությունը, ուսմունքի նրբերանգների խոր ընկալումը հնարավորություն են ընձեռել հեղինակին ազատ կողմնորոշվել բուդդայական բազմաբնույթ ու խրթին քնագրերում:

Շնորհիվ այդ բոլորի, ընթերցողի առջև այս գրքի էջերից հառնում է բուդդայականության ծագման և տարածման մի գրավիչ չարադրանք՝ ինչպես իր պատմական հայրենիքում՝ Հնդկաստանում (մաս I, 1-18 գլուխները), այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ Շրի Լանկա, Հարավ-արևելյան Ասիա, Կենտրոնական Ասիա և Քաշմիր, Չինաստան, Կորեա, Ճապոնիա, Տիբեթ, Մոնղոլիա, Նեպալ և Իրան (մաս II, 19-28 գլուխները):

Գրքի ամբողջ առաջին մասը, ըստ էության բուդդայագիտության կամ այլ կերպ ասած՝ բուդդայականության, բավարար՝ թեկուզ և համառոտ, ներածություն է:

Այստեղ ներկայացվում են Բուդդայի կյանքը, նրա ուսմունքն ու առաքելությունը, բուդդայական դպրոցների առաջացումը, բուդդայականության փիլիսոփայական հիմնական հայացակետը:

Գրքին կցված մանրամասն մատենագիտությունը ոչ միայն լոկ օգտագործված գրականության ցանկ է, այլև՝ նրա խոսքերով ասած՝ "կոչված է ուղղորդելու հետագրքրքրվողին հետագա խոր ընթերցանության ընագավառում" (էջ 213): Աշխատանքը, բնական է, ունի նաև համապատասխան գիտական ապարատ՝ տարբեր ցանկեր, քարտեզներ, սանսկրիտի արտասանության ուղեցույց, ևլն:

Պ.Պ.

ԻՍԼԱՄԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ
(Թուրքիայի օրինակով)

Սուրեն Բաղդասարյան

Մինչև XX դարը իսլամական աշխարհում կրոնն ու քաղաքականությունը հանդես էին գալիս միասնաբար: Մահմեդական համայնքի՝ ումմայի մեջ ընթանում էր սոցիալական, քաղաքական ու մշակութային ընդհանրությունների սերտաճում: Պատմությունը ցույց է տալիս, որ իսլամը կարող է ստեղծել համակարգված ու կապակցված գաղափարախոսություն՝ իր սեփական բարոյագիտությամբ և քաղաքական ու սոցիալական արդարության մասին ուսմունքով: Թուրք մասնագետ Բինազ Թոփրաքն իրավացիորեն նշում է. «Իսլամը քաղաքական կրոն է, քանի որ այն հավատացյալի համար որոշում ու կազմում է նրա հոգևոր ու երկրային գոյության ամբողջությունը»:[1]

Ռազմականապես ավելի հզոր Արևմուտքի համակարգային եւ անընդհատ մրցակցության ճնշման տակ մահմեդական մի շարք երկրներ XX դարում ստիպված եղան ձեռնարկել արդիականացման միջոցառումներ՝ այդ մրցակցությանը դիմանալու և Արևմուտքից եկող ուծացման վտանգը դիմագրավելու նպատակով:

Արևմուտքի հետ կապերի ընդլայնմանը զուգընթաց սկսեցին մահմեդական երկրներ մուտք գործել արևմտյան արմատներ ունեցող ազգայնականության և սեկուլյարիզմի գաղափարները, որոնց հիմքի վրա նախ՝ Թուրքիայում, ապա՝ արևելյան այլ երկրներում սկսվեց հասարակական կառուցակարգի վերակառուցումը: Այդ գործընթացներն իրենց հակազդեցությունն ունեցան XX դարի երկրորդ կեսում իսլամական արմատականության հզոր ալիքի տեսքով: «Վերադարձն Իսլամին» կամ իսլամական «Վերածնունդը» կարելի է համարել ռեակցիա արևմտականացմանը, կամ, ինչպես ընդունված է նաև ասել ժամանակակից քաղաքագիտության և հասարակագիտության մեջ, արդիականացմանը: Արևմուտքն այս դեպքում հանդես է գալիս որպես տվյալ հասարակության բոլոր թերությունների ու ճախողումների պատասխանատու, հետևաբար, բոլոր հիմնախնդիրների լուծում է համարվում իսլամը:

Մահմեդական աշխարհում միայն Թուրքիան կարողացավ, թեկուզ և հարկադրական, ուժի միջոցով, բայց առավել ամբողջական ու համակարգված արևմտականացում իրականացնել: Ուստի, արդիականացման թուրքական փորձը հասկանալու համար կարևոր, հետաքրքրական ու անհրաժեշտ կլինի անդրադառնալ այս երկրում արդիականացման ու իսլամի փոխհարաբերությունների իրողություններին:

Մինչև քսաներորդ դարի սկիզբը իսլամը թուրքերի համար սեփական ինքնության ճանաչման միջոց էր: Սակայն Օսմանյան կայսրության փլուզման հետ միասին տեղի ունեցավ այդ ինքնության ճգնաժամը: Իսլամական հիմքին փոխարինելու եկավ ազգայնական հիմքը: Եթե Օսմանյան Կայսրությունը մահմեդականների երկիրը էր, ապա 1923թ. հռչակված Թուրքիայի Հանրապետությունը լինելու էր թուրքերի երկիր: Քեմալական արդիականացման նպատակը հենց դա էր. թուրքերին նրանց ինքնության նախկին հայտանիշից՝ վերազգային իսլամից, հետ դարձնել դեպի սեփական ազգային ինքնությունը:

Քեմալական Թուրքիան որդեգրեց իսլամը քաղաքականությունից բաժանելու սկզբունքը՝ դառնալով առաջին մահմեդական երկիրը, որտեղ իսլամն այլևս պետական կրոն չէր հանդիսանում: Աթաթյուրքն անընդհատ չեշտում էր, որ «Հարկավոր է այնպես անել, որ մեր սրբազան իսլամական հավատքը այլևս չլինի քաղաքականության գործիք, ինչպես դա եղել է դարեր շարունակ..»:[2] *1924թ. խալիֆայության վերացումով արդեն Մուստաֆա Քեմալը Թուրքիային դուրս բերեց իսլամական պետության գաղափարախոսության ոլորտից: 1928թ. Սահմանդրությունից հանվեց այն հոդվածը, որտեղ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական կրոն էր հայտարարված իսլամը, Հանրապետության նախագահի ու մեջլիսի պատգամավորների երդման կրոնական տեքստը փոխարինվեց քաղաքացիականով:*

Կարծիք կա, հատկապես արևմտյան պատմագրության մեջ, որ Քեմալ Աթաթյուրքի բարեփոխումների գլխավոր առանձնահատկությունը հարձակումն էր կրոնի, ավելի ճիշտ, կրոնական հաստատությունների վրա՝ Թուրքիայի քաղաքական իշխանության հիմքերի փոխակերպման նպատակով: Այո, լաիցիզմը՝ աշխարհիկ պետության և հասարակարգի գաղափարը, որդեգրվեց որպես Հանրապետության հիմնարար սկզբունք: Բայց լաիցիզմը եկավ ավելի շուտ կրոնական կյանքի վրա պետության քաղաքական վերահսկողությունը կարեւորելու, քան թե լիովին անջատելու կրոնն ու պետությունը: Իրականում ո՛չ 1920-1930-ն թթ., ո՛չ էլ այսօր Թուրքիայում պետությունը երբեք իսլամական ինստիտուտները իր վերահսկողությունից դուրս չի թողել: Պետությունն ինքն է կազմակերպում կրոնական որոշ միջոցառումներ, ինչպես, օրինակ, ուխտագնացությունը Մեքքա: Փաստորեն, Քեմալ Աթաթյուրքի օրոք տեղի ունեցավ անցում մի քաղաքակրթությունից դեպի մեկ այլ քաղաքակրթություն:

Արդիականացումը նշանակում է դինամիկ փոփոխություններ, ինչպես, օրինակ, կրոնի և ավանդույթների դերի նվազեցում հասարակական ու քաղաքական բնագավառում: Պետության և հասարակության վրա

իսլամի իշխանությունն ու ազդեցությունը վերացնելու նպատակով քաղաքական ու պետական իշխանության համակարգի կառույցներն ձերբազատվեցին կրոնական հաստատություններից՝ խալիֆայությունից, շեյխ-ուլ-իսլամից, շարիաթի ու վաքըֆների նախարարությունից, փակվեցին սուֆիական բոլոր կառույցները (սրբավայրերը՝ թեքեները, դերվիշական եղբայրակցություններ, հոգևոր դպրոցները), ներմուծվեց նոր՝ լատինատառ այբուբեն, արգելվեցին կրոնական և ավանդական պարագաները (չալման, ֆեսը), մահմեդական իրավունքի վրա հիմնվող օրենսդրությունը փոխարինվեց չվեյցարական քաղաքացիական օրենսգրքով:

Քեմալ Աթաթյուրքի բարեփոխումների օրինակին փորձեցին հետևել Մերձավոր ու Միջին արեւելքի չատ առաջնորդներ, ինչպես Իրանի շահ Ռեզան կամ Աֆղանստանի թագավոր Ամանուլլահը, սակայն արևմտականացման նրանց փորձերը կամ տապալվում էին, կամ իսլամը դարձնում էին իրենց քաղաքականության հենասյուներից մեկը, ինչպես Եգիպտոսի նախագահ Նասերը:

Արդիականացման գործընթացի ձեռնարկումով քեմալականները պետք է մարտահրավեր նետեին ավանդապաշտ-կրոնական հասարակության արժեքային համակարգին: 1920-1930-ն թթ. Թուրքիայում իսլամական պաշտամունքին որոշ չափով փոխարինող պաշտամունք գոնվեց. պաշտոնական քարոզչության մեջ նախագահական նստավայրը՝ Զանքայան, համազոր էր Քաաբայի տաճարին, Քեմալ Աթաթյուրքը՝ Ալլահին կամ Մուհամմադին, իսկ նրա մեծածավալ «Ճառը»՝ Ղուրանին:

Կրոնի և պետության միջև այսպիսի փոխհարաբերությունների հետևանքն այն եղավ, որ իշխանությունների դեմ որևէ բողոք հավակնում էր հասարակության մեջ վերականգնել իսլամի երբեմնի տիրապետող կարգավիճակը: Աթաթյուրքի գաղափարների և բարեփոխումների դեմ ընդդիմությունը համարյա միշտ հանդես էր գալիս կրոնական դիրքերից: «Անհավատություն», «աննաստվածություն», «գյավուրներ» արտահայտություններն ամենատարածված մեղադրանքներն էին քեմալականների հասցեին: Դրանց Քեմալը պատասխանում էր, որ «նոր Թուրքիան անաստված պետություն չէ, այլ կրիք է զգում այնպիսի մի կրոնի, որը չի հակադրվի բանականությանը կամ թշնամի չի լինի առաջընթացին»:[3] Արմատավորված քաղաքական ավանդույթների բացակայության պայմաններում բարեփոխումների քաղաքականության դեմ զայրույթն արտահայտվում էր կրոնական պահպանողականության բառապաշարի միջոցով, որովհետև դա ժողովրդի մեծամասնությանը հասու միակ լեզուն էր: Հետևաբար, թե՝ 1925թ. քրդական ապստամբությունը եւ թե՝ 1930 թ. Առաջադիմական ու լիբերալ կուսակցությունների հետ կապված իրադարձությունները, հակակառավարական ելույթները երկրի հարավում անցնում էին կրոնական կարգախոսներով ու իշխանությունների կողմից վերագրվում էին կրոնական մոլեռանդներին՝ Հանրապետությունը քայքայող գործունեության պիտակով:

Հանրապետականները հստակորեն տեսնում էին, որ պետությունը, որը հավակնում է տեղ գրավել ժամանակակից ազգերի համաշխարհային ընտանիքում, պետք է որդեգրի աշխարհիկ կարգեր ու օրենքներ: Սակայն հասարակական դիտակցությունն այդ ժամանակ դեռեւս այնքան էլ պատրաստ չէր լաիցիստական բարեփոխումներին, և այդ պատճառով քեմալականներին «չհաջողվեց լիովին սասանել ժողովրդի մեջ արմատավորված իսլամի ազդեցությունը»:[4] Աթաթյուրքից հետո իսլամը, նրա դերն ու ազդեցությունը Թուրքիայում երկրի կարևորագույն քաղաքական հիմնախնդիրներից և գործոններից մեկն էին:

Արդիականացման ընթացքում Թուրքիայում ձևավորվեց ուժեղ արևմտամետ վերնախավ, որը կենտրոնացած էր երկրի երեք գլխավոր քաղաքներում՝ Անկարայում, Ստամբուլում և Իզմիրում, իսկ Հանրապետության բնակչության հիմնական զանգվածը մնաց ավանդապաշտ և իսլամամետ: Վերջինիս շահերը քաղաքական ասպարեզում 1970-ական թվականներից սկսած արտահայտում էին «Ազգային կարգ», «Ազգային բարօրություն», իսկ 1980-1990-ն թթ.՝ «Բարօրություն» կուսակցությունը, որը մեծ հաջողությունների հասավ խորհրդարանական վերջին երկու ընտրություններում և 1996-1997թթ. նույնիսկ գլխավորում էր կառավարությունը:[5] Բայց ազգային բանակի՝ Ազգային անվտանգության խորհրդի միջոցով իրականացված ճնշումները հանդիպակայեցին իսլամիստական կառավարմանը: Զինվորականներն ուղղակի հայտարարում էին, որ «թույլ չեն տա Թուրքիան Իրան դարձնել և կկանխեն քեմալիստական սկզբունքների դեմ յուրաքանչյուր խոովություն»:[6] Իրենց ձեռքում չունենալով ուժային որեւէ այնպիսի լծակ, ինչպիսին են ԱԱԽ-ն, Գլխավոր շտաբը, ժանդարմերիան, հետախուզական կազմակերպությունը, իսլամիստներն անկարող էին երկար պահել իշխանությունը:

Ինչն է պատճառը, որ մի երկրում, որն արդեն 75 տարուց ավելի աշխարհիկ արևմտականացած պետություն է, քաղաքական իսլամն սկսեց զարթնոնք ապրել: Վերջին տարիներին իսլամի քաղաքական ազդեցության աճին նպաստեց այն հանգամանքը, որ Թուրքիայի Հանրապետության ժողովրդավարական կառավարությունները անկարող եղան լուծել երկրի ազգային ու տնտեսական հիմնախնդիրները, մասնավորապես, քրդական հարցը, բյուջեի պակասորդի (դեֆիցիտի) գոյությունը տեւական ժամանակահատվածում կամ արևելյան վիլայեթների բնակչության կենսամակարդակի բարելավումը և այլն: Թուրքերը քվեարկում էին իսլամիստների օգտին ավելի չատ ոչ թե իրենց կրոնական համոզմունքների մղումով, այլ բողոքելով իշխող կաշառաբեր վերնախավի դեմ:

Կառավարական շրջանակները ևս խրախուսում են

իսլամիստական տրամադրությունների զարգացումը. «Այսօր արդեն չկա քեմալիստական ժամանակներում կրոնի նկատմամբ իրականացվող վերահսկողությունը»:[7]

Բացի այդ, թուրքերը հուսախաբ եղան արևմտյան, եվրոպական կառույցների մեջ լիովին ինտեգրվելու իրենց ակնկալիքներում, և դա էլ նպաստեց իսլամամետ զանգվածի աճին: "Արևմուտքը հրաժարվում է ընդունել Թուրքիային: Թուրքիան չի դառնա Եվրահամայնքի անդամ, ու դրա իրական պատճառն, ինչպես նշել էր նախագահ Օզալը, այն է, որ «Մենք մահմեդականներ ենք, իսկ նրանք՝ քրիստոնյաներ, թեև նրանք դա չեն ասում»:[8]

Արդիականացման թուրքական փորձը վկայում է, որ ժողովրդավարությունն անկարող է պարտության մատնել իսլամական կրոնը:


Թուրքական հասարակությունում, չնայած գրեթե 80-ամյա արևմտականացման փորձին, շարունակվում է աշխարհիկ-արևմտամետների և իսլամիստ-պահպանողականների միջև ընթացող պայքարը: Կրոնը 1920-1930-ական թվականներից ի վեր դարձել է երկրի քաղաքական ուժերի միջև այնպիսի բաժանարար գիծ, ինչպիսին Եվրոպայում անցնում է աջերի ու ձախերի միջև: Մինչդեռ Թուրքիան շարունակում է նաև արագ փոփոխություններ ապրել, և երկու հակադիր խմբերի համար սուր անհրաժեշտություն է այդ փոփոխություններին հարմարվելը, դրանց համարժեք ուժ դառնալը:

■

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. B.Toprak. Islam and Political Development in Turkey. Leiden, 1980, p. 22.
2. К.Ататюрк. Избранные речи и выступления. Москва, 1966, с. 325.
3. Lord Kinross. Ataturk: The Rebirth of Nation. London, 1962, p.385.
4. Ataturk: Founder of a Modern State. London, 1981, p. 218.
5. 1998 թվից այդ կուսակցությունը վերանվանվեց «Առաքինություն», քանի որ Սահմանադրական դատարանը կասեցրել էր "Ռեֆահ" կուսակցության գործունեությունը:
6. "Milliyet", 11.08.1997.
7. H.Poulton. Top Hat, Grey Wolf and Crescent. London, 1997, p. 53.
8. S.Huntington. The Clash of Civilizations?. - «Foreign Affairs», vol. 72, N 3, Summer 1993, p. 42.

Նոր Եվրոպայի մուսուլմանական համայնքները . Խմբ.՝ Գերդ Նոննեման, et alia. Բերկիր: "Ithaca Press", 1997 թ,- 346 էզ, անգլերեն



Եվրոպայի մուսուլմանական համայնքները ցարդ երբևէ համապարփակ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Դա հավասարապես վերաբերվում է ինչպես Արևելյան Եվրոպայի և առհասարակ Եվրոպայի մուսուլմանական ավանդական համայնքներին, այնպես էլ վերջին երկու-երեք տասնամյակներում Եվրոպայի տարածք ներխուժած Մուհամմադ մարգարեի հետևորդներին: Վերջիններիս դինամիկ աճը, նրանց դերի զգալի բարձրացումը Եվրոպայի երկրներում տարբեր մշակույթների հատման կետում հայտնված, այսպես կոչված, նոր ազգային ինքնություններն (new identities) ու նրանց օրեցօր աճող ազդեցությունը արևմտյան մշակույթի վրա, ուսումնասիրություններին ստիպում են առավել հաճախ անդրադառնալ Եվրոպայում իսլամի վերածննդի թեմային: Սկսած պրակտիկ հարցերից՝ քաղաքացիություն, մահմեդական էմիգրանտների նկատմամբ պետական քաղաքականություն մշակում, հասարակական կարծիք, տնտեսական գործոններ և այլն, մինչև քրիստոնյա և մահմեդական մշակույթների ներդաշնակ համատեղության խնդիրը՝ մանավանդ Բալկաններում վերջին իրադարձությունների ու իսլամական գործոնի հարաճուն դերի լույսի ներքո, ներկայումս Եվրոպայում մուսուլմանական համայնքների ուսումնասիրությունը զառնում է հատուկ հրատապության առարկա՝ հատկապես իր գործնական բնույթի շնորհիվ:

Հոդվածների ներկա ժողովածուն՝ բնավ չհավակնելով հիշյալ բնագավառի լիակատար լուսաբանմանը, այնուհանդերձ, հանդիսանում է բավական հիմնավոր մի աշխատություն՝ գոնե ներածության սահմաններում: Մի շարք Եվրոպական երկրների (Մակեդոնիա, Բոսնիա, Բուլղարիա, Հունաստան, Ալբանիա, Բելգիա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեդիա, Դանիա, Իսպանիա, Իտալիա) իսլամական համայնքների կոնկրետ օրինակների վրա այս կամ այլ կերպ դիտարկվում են այս բարդ խնդրի համարյա բոլոր կողմերը:

Վիկտորյա Առաքելովա

Բաքվի անկումը եւ հայերի գաղթը Պարսկաստան

(1918 սեպտեմբեր - 1919 մարտ)

Գեւորգ Ստեփանյան

Պատմագիտության թեկնածու

Բաքվի 1918 թ. չորսամսյա հերոսական ինքնապաշտպանությունը հարուստ է ռազմական անակնկալ գործողություններով, դիվանագիտական-քաղաքական նպատակների պահային կերպարանափոխություններով: Ապա՝ հայերի ջարդը, տեղահանությունը ու գաղթը: Սակայն ինքնապաշտպանության վերջին օրը, սեպտեմբերյան գաղթն ու գաղթահայության կրած տառապանքներն իրենց էությամբ ուրույն եւ աննախադեպ էջեր են հայ ժողովրդի նոր ժամանակաշրջանի պատմության մեջ: Այն ողբերգական է թե՛ իր ծավալով, թե՛ բովանդակությամբ եւ հետեւանքներով:

Բաքվի ինքնապաշտպանության սկզբնական շրջանում Գյոքչայի մոտ, Հունիսի 27-30-ը տեղի ունեցած ծանր մարտերից հետո, Կարամարյանի՝ Հունիսի 16-17-ի ճակատամարտերում հաղթանակած Բաքվի զորքը, որը հիմնականում կազմված էր հայ սպաներից եւ զինվորներից, բանակի գերագույն հրամանատարության թույլ տված մարտավարական սխալների եւ թուրքական մեծաքանակ զորքի հակահարձակման պատճառով, ինքնապաշտպանական մարտեր մղելով՝ սկսեց նահանջել Բաքու: Սա բացասաբար անդրադարձավ ռազմական հետագա գործողությունների վրա եւ ինքնապաշտպանության ծրագրի ձախողման պատճառ դարձավ[1]: Բաքվի զորքի նահանջի հետեւանքով տեղահանվեց եւ Բաքու գաղթեց նաեւ Գյոքչա եւ Շամախի գավառների հայ բնակչությունը:[2]

Առաջնանալով դեպի Բաքու՝ համառ մարտերից հետո թուրքերը սեպտեմբերի սկզբներին գրավեցին նավթահորերով հարուստ Բալախանի, Ռամանի, Զաբրատ, Սաբունչի, Դրզայա, Սուրախան, Մահումեդլի եւ Խրդալան գյուղերը: Այսպիսով Բաքուն ամբողջությամբ շրջապատվեց ցամաքից՝ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելով միայն Կասպից ծովով:[3]

Մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին օրը՝ սեպտեմբերի 14-ը, երբ պետք է վճռվեր, ինչպես ինքնապաշտպանության, այնպես էլ քաղաքի 100 հազարի հասնող հայ բնակչության հետագա ճակատագիրը: Իրավացի էր Բ. Իշխանյանը, երբ գրում էր. "...Հայկական տարրը, ավելի քան որեւէ մի ուրիշը Բաքվում, գերազանցապես շահագրգռված էր քաղաքի պաշտպանությամբ, դա հայության համար կյանքի ու մահվան հարց էր"[4]: Սեպտեմբերի 13-ի առավոտյան թուրքական հետեւակը, նրան միացած տեղի թաթարական ջոկատները, Սուրախանիի շրջանում անցան հարձակման եւ մինչեւ կես գիշեր աշխատում էին ճեղքել Բաքվի պաշտպանների ճակատը: Գրոհը չարունակվեց նաեւ հաջորդ օրը՝ մինչեւ սեպտեմբերի 14-ի գիշերվա ժամը 3-ը:[5] Թեեւ Բաքվի ուժերը անձնազոհ դիմադրությամբ չանում էին թուրքերին թույլ չտալ առաջանալ, այդուհանդերձ, նրանց չհաջողվեց կասեցնել թվական գերակշռություն ունեցող թշնամու գրոհները եւ համառ մարտերով սկսեցին նահանջել:[6]

Դրությունը բարդացավ նաեւ նրանով, որ ցերեկը ժ. 2-ին, կովի թեժ պահին, աջ թեւում տեղակայված Գ. Բիչերախովի եւ Հյուսիսային Պարսկաստանից[7] Բաքվի ուժերին "օգնության եկած" անգլիացիների ջոկատները (հրամ.՝ կապ. Բոլլինգտոն), Բաքվի զորքերի չտաբի պետ գնդ. Ստոքսի հրամանով, առանց նախազգուշացման թողեցին իրենց դիրքերն ու հեռացան նավահանգիստ Բաքվից մեկնելու մտադրությամբ:[8] Այդ անակնկալ եւ ոչնչով չարդարացված քայլը, ինչ խոսք, բացասաբար անդրադարձավ դիրքերում գտնվող զինվորների մարտական ոգու վրա:

Բաքվի Կենտրոնական Կասպիի կառավարության (Ցենտրոկասպիի դիկտատուրա) ռազմածովային նախարար գեն. Հ. Բագրատունու վկայությամբ, անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեն. Դենստերվիլը եւ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչ գնդ. Շարղինեն դեռեւս սեպտեմբերի 1-ին նրանից պահանջում էին ներազդել Ցենտրոկասպիի դիկտատուրայի վրա՝ հանձնելու քաղաքը, պատճառաբանելով, որ "Անդրկովկասում թուրքերի եւ անդրկովկասյան մուսուլմանների դեմ գործողություններն իրենց պլանի մեջ չեն մտնում"[9]: Բաքվի պաշտպանության գործում անգլիական հրամանատարությունը առաջնորդվում էր քաղաքական եւ տնտեսական իր շահերով: Այն առաջին հերթին մտահոգված էր Միջագետքում գտնվող անգլիական բանակին էնզելիի վրայով վառելանյութ հասցնելու խնդրով:

Սեպտեմբերի 14-ի փոփոխական հաջողություններով մարտերի արդյունքում Բաքվի պաշտպաններին հաջողվեց կասեցնել քաղաքի գրավումը՝ վաստակելով այն թանկագին ժամերը, որոնք անհրաժեշտ էին հայ բնակչությանը քաղաքից էվակուացնելու համար:

Երբ Բաքվի պաշտպաններին Պարսկաստանից "օգնության եկած" անգլիական ջոկատներն ու գ. Բիչերախովը լքեցին դիրքերը եւ ժ. 5-ին սկսեցին չոգենավին բարձել իրենց իրերը՝ Պարսկաստան ուղեւորվելու նպատակով, հայ բնակչության շրջանում տագնապ, խուճապ առաջացավ:[10] Վերահաս կոտորածից փրկվելու համար հայ բնակչությունը չտապում է նավամատույց՝ չոգենավերով հարեւան շրջաններ մեկնելու մտադրությամբ:

"Այդ ամենի տեսնելը (անգլիացիների հեռանալը - Գ. Ստ.) հայկական թաղերում, կարելի է ասել, այլեւս մարդ չմնաց: Տղամարդ, կնիկկարմատ երեխայ մի կապոց չալակած չնչասպառ ծովափ էին վազում", - գրում է դեպքերի ականատես, Բաքվի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավագ քահանա Եղիշե Գեղամյանցը:[11]

Ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար, երեկոյան ժ. 8-ին, Ցենտրոկասպիի դիկտատուրայի գումարած նիստում, որին մասնակցում էր նաեւ ՀՅ Դաշնակցության հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զորյան), որոշում կայացվեց դադարեցնել դիմադրությունը եւ քաղաքը հանձնել թշնամուն: Կառավարության անդամներ Իլիվկինին, Լեոնտովիչին հանձնարարվեց Բաքվում գտնվող պարսկական ու չվեդական դեսպանների հետ ժ. 9-ին հանդիպել թշնամի կողմին եւ բանակցել քաղաքը հանձնելու պայմանների մասին: Միա-

ժամանակ որոշում ընդունվեց էվակուացնել ժողովրդին ու զինվորներին՝ այդ նպատակով տրամադրելով չոգենավ, որից 20-ը՝ զորքի, 40-ը՝ ժողովրդի համար:[12]

Օրհասական այդ պահին Դաշնակցություն կուսակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն, մտահոգված քաղաքի հայ բնակչության ֆիզիկական գոյության խնդրով, ժ. 8-ին նույնպես հրավիրել էր արտակարգ նիստ, ուր ռազմա-քաղաքական իրավիճակի մասին զեկուցողը Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանն էր: Նիստի մասնակիցները, հաշվի առնելով դիրքերում ստեղծված ծանր դրությունը եւ օգնական ուժերի բացակայությունը, միեւնույն ժամանակ հիմք ընդունելով քաղաքը հանձնելու կառավարության որոշումը, վճռեցին ժ. 12-ին ճակատից հետ քաշել հայկական բոլոր զորամասերը եւ ժողովրդի հետ միասին առանց խուճապի տեղավորվել չոգենավերում:[13] Միաժամանակ անհրաժեշտ դիտվեց մարդիկ ուղարկել քաղաքի հայկական թաղերը՝ գաղթը կազմակերպելու եւ ծագող խնդիրները տեղում կարգավորելու համար:

Էվակուացիան ղեկավարում էին Ռոստոմը եւ Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանը, որոնք ուժերի գերազույն լարումով ջանում էին հնարավորին չափ անխուճապ իրականացնել այն: Էվակուացիայի անմիջական կազմակերպման համար ՀՅ Դաշնակցության կենտրոնական կոմիտեն ընդհանուր լիազոր էր նշանակել Գ. Բալայանին, ուր տրամադրության տակ էին դրվել ծովափում գտնվող փոխադրական բոլոր միջոցները:[14] Էվակուացիայի 4-5 ժամը լավագույնս օգտագործելու եւ արդեն քաղաք մտնող թշնամու ռմբակոծություններից խույս տալու համար, Յենտրոկասպիի դիկտատուրայի ցուցումով չոգենավերը լուսաբացին պետք է հեռանային Պետրովսկ եւ Պարսկաստան:[15]

Քաղաքի հայկական բոլոր թաղամասերում շրջում էին հատուկ խմբեր, որոնք ժողովրդին տեղեկացնում էին քաղաքը հանձնելու որոշման մասին, հայտնում տվյալ թաղի բնակչության մեկնելու համար առանձնացված նավահանգստի ու նավերի անունները: Սակայն, չուտափույթ գաղթի տագնապի լուրը եւ դրան հատկացված ժամանակի սղությունն, անշուշտ, կազմալուծում էին գաղթը հնարավորինս նվազագույն կորուստներով ընթացակարգելու ջանքերը: "Քաղաքի բոլոր ծայրերից, - գրում է Բ. Իչխանյանը, - ժողովուրդը, գրեթե բացառապես հայ բնակչությունը, անվերջ քարավաններով հավաքվում եւ կուտակվում է նախամատույցներում: Էվակուացիան բնականաբար շատ անկանոն էր կազմակերպված: Եվ ինչ կարելի էր անել մի քանի ժամվա ընթացքում, նավերի անբավարար թվով, երբ, բացի մի քանի տասնյակ հազարավոր փախչող ազգաբնակչությունից, նույն նավերով պիտի տեղափոխվեին նաեւ զորքը, ռազմամթերքը եւ պետական գույքը":[16]

Դիշերվա ժ. 10-ից ծովափում խռնված գաղթող ժողովուրդն սկսեց տեղափոխվել չոգենավեր, որի ընթացքում խառնաչփոթ իրավիճակի պատճառով եղան ողբերգական եւ դրամատիկ պահեր:[17]

Դրությունը բարդանում էր նաեւ նրանով, որ այդ ժամանակ վերսկսվեց քաղաքի ռմբակոծումը: Թշնամին հրետանային կրակի տակ էր առել նավահանգիստը, որի հետեւանքով իրարանցումն էլ ավելի էր մեծանում, մինչդեռ քաղաքի ծայրամասերում հայկական փոքրաթիվ ջոկատները չարունակում էին համառ մարտեր մղել թշնամու դեմ:

Խոսելով խուճապահար գաղթի մասին՝ ժամանակակիցները նշում են հետեւյալը. "...Փախչել ցանկացողների հսկայական բազմությունը եւ նավերի սակավությունը ստեղծել էր աղիողորմ չփոթը, որը կոչվում է... գաղթականական տրագեդիա: Հարազատները կորցնում էին իրար, ծնողները՝ որդիներին, եղբայրը՝ քրոջը, ամուսինը՝ ամուսնուն, մեկը ճանապարհվում էր, մյուսը՝ մնում՝ նավում տեղ չգտնելու պատճառով":[18]

Դեպքերի անմիջական մասնակից Վարսենիկ Սահակյանն իր հուշերում նկարագրելով գաղթն իր բոլոր սրտաճմլիկ տեսարաններով՝ նշում է հետեւյալը. "...նավամատույցներում տիրող խառնաչփոթի պատճառով հնարավոր չեղավ ժողովրդին կազմակերպված ձեւով տեղավորել չոգենավերում: Խուճապն այնքան մեծ էր, որ շատերը չոգենավ նստելու պահին ընկան ծովը, որոնցից մեծ թիվ էին կազմում երեխաները":[19] Սեպտեմբերի 15-ին, առավոտյան ժ. 6-ին, բոլոր 60 չոգենավերը հեռացան նախապես որոշված իրենց ուղիներով՝ Պարսկաստան՝ Էնզելի եւ Պետրովսկ: Էնզելի մեկնած գաղթահայության հետ էին նաեւ զինվորականության մի մասը (1500 հոգի), Հայոց ազգային խորհրդի եւ ՀՅ Դաշնակցության կուսակցության Բաքվի կենտրոնական կոմիտեի անդամները, ինչպես նաեւ Ռոստոմը եւ գեներալ Հ. Բագրատունին: Բաքվի 100 հազարի հասնող հայ բնակչությունից հնարավոր եղավ էվակուացնել միայն 50 հազարին: Քաղաքում մնաց նաեւ 70.000 ռուս բնակչություն: Ժողովրդի այն մասը, որ չէր հասցրել գաղթել եւ ամբողջ գիշեր շրջել էր մի նավամատույցից մյուսը՝ չոգենավերում ազատ տեղ գտնելու մտադրությամբ, այդպես էլ մնաց քաղաքում եւ զոհ գնաց քաղաքը գրավող թուրքերի եւ տեղի թաթարների վայրագություններին:[20] Ջնայած Մուրսել փաշան "խաղաղ բնակչության անձնական եւ գույքի ապահովվածության" երաշխիքներ էր տվել, այդուհանդերձ, երեք օրվա ընթացքում (15-17-ը) թուրք-թաթարները կոտորեցին 30.000 հայերի:[21]

Թուրք ջարդարարներին էին միացել նաեւ քրդական ջոկատները: "Քաղաքում առաջին հերթին բաց էին թողել քրդական եւ թաթարական ջոկատները, որոնք երեք օր իրադրության տերերն էին", - ասված է վավերագրում:[22]

Հիշատակության արժանի է այն իրողությունը, որ կոտրածի օրերին քաղաքում ապրող պարսիկ ընտանիքներն իրենց մոտ պատսպարեցին մեծ թվով հայերի՝ փրկելով նրանց կյանքը:[23]

Էնզելի ուղեւորված չորս չոգենավերը հաջորդ օրը, սեպտեմբերի 16-ի լուսաբացին, արդեն մոտեցել էին նավահանգստին, սակայն քաղաքում հաստատված անգլիական հրամանատարությունը այս անգամ եւս ստեղծեց բարդություններ՝ հրանոթից կրակ բացելով չոգենավերի վրա՝ դրանց թույլ չտվեց մոտենալ նավահանգստին:

Անգլիական հրամանատարության անհանդուրժողական վերաբերմունքը փոխելու եւ քաղաք մտնելու թույլատվություն ստանալու նպատակով, Հայոց ազգային խորհրդի անդամներ Ա. Գյուլխանդանյանը եւ Ս. Մելիք-Յոլչյանը նավակով մեկնեցին նավահանգիստ: Գեն. Դենստերվիլի եւ գնդ. Ստոքսի հետ բանակցելուց հետո, զինվորականներին զինաթափելու պայմանով, 10.000-ի հասնող գաղթողներին թույլատրվեց մտնել քաղաք:[24]

Շրջանի նահանգապետ գնդ. Կոկերելի անմիջական ղեկավարությամբ հայ զինվորականներին զինաթափելուց հետո միայն, ժամանածներին թույլատրվեց հանգրվանել Էնզելիի "Ղազիան" անվանվող քաղաքամասում եւ ծովափնյա հրապա-

բակներում՝ բաց երկնքի տակ:[25]

Յուրօրինակ ճակատագիր էր սպասում Պետրովսկ տեղափոխված գաղթահայությանը. ռազմաքաղաքական անբարենպաստ իրադրության պատճառով, տեղի կառավարության հրահանգով, նրանց Պետրովսկից տեղափոխեցին ծովափնյա այլ շրջաններ: Այդպես, Ստարո-Տերեչնայա-Ալեքսանդրովկայա-Ղզլար գծով փոխադրվեցին 10.000, Գուբեւ՝ 5.000, Աստրախան եւ Վոլգայի ափեր՝ 5.000, Կրասնավոդսկ-Աշգաբադ գծով՝ 3.000 մարդ, իսկ մնացածներին՝ Լենքորան:[26] Պետրովսկից էնզելի փոխադրվածներին անգլիական հրամանատարությունը իբրեւ թե "ռազմական նկատառումներով" արգելեց մոտենալ նավահանգստին, որի պատճառով տարագրվածները ութ օր շարունակ մնացին բաց ծովում: Հետեւանքը եղավ այն, որ բռնկվեցին տարափոխիկ հիվանդություններ, սննդի պակասության պատճառով եղան մահացության դեպքեր: Այդ գաղթականներին հարկադրված էին կրկին տեղափոխել Պետրովսկ:[27]

Էնզելիում[28] հանգրվանած բաքվեցի գաղթականների տառապալից վիճակը թեթեւացնելու, ինչպես նաեւ անգլիական հրամանատարության եւ պարսկական իշխանություններ հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով, Բաքվի Հայոց ազգային խորհրդի՝ Էնզելի մեկնած անդամներից կազմվեց Էնզելիի ազգային խորհուրդ՝ Հակոբ Ղուվասյանի նախագահությամբ:[29]

Ստեղծվեց նաեւ գաղթականական կոմիտե, որի անդամներն էին Ս. Հովակիմյանը, Լ. Թադեւոսյանը (Պապաչա), Ա. Առաքելյանը եւ Ա. Մեհրաբյանը: Կոմիտեն սկզբնական շրջանում նախագահում էր Ա. Առաքելյանը, որին հետագայում փոխարինեց Լ. Թադեւոսյանը:[30] Կոմիտեին կից, Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ, գործում էր չինարարական հանձնաժողովը, որը զբաղվում էր գաղթականների համար բարաքներ կառուցելու աշխատանքներով: Հանձնաժողովի անդամներն էին Սերեբրակյանցը, Բեգրամբեգյանցը եւ Ստամբուլցյանը:[31]

Գաղթականական կոմիտեն ամենից առաջ զբաղվեց գաղթականների եւ շուրջ 600-ի հասնող որբերի տեղավորման ու պարենավորման գործով:[32] Գաղթականներից 1000 հոգի, որբերի հետ միասին, տեղավորվեցին Հայազգի Լիանոզյաններին պատկանող ձկնորսարանի չենքերում: Գաղթականների տեղավորման խնդիրները լուծելիս մեծ աշխատանք էր տանում Ռոստոմը, որի անմիջական նախաձեռնությամբ մաքրեցին ծովափում գտնվող բարաքները եւ այնտեղ տեղավորվեցին 2000 հոգի:[33]

Շինարարական հանձնաժողովի ջանքերով Շահի Այգում եւ Թոփխանում կառուցվեց եւս 40 բարաք, ուր կացարան տրվեց 2.500 մարդու, իսկ 1000 հոգի տեղավորվեցին Ամիր-Ամայունի չենքերում:[34] Այդ օրերին Էնզելիում էր գտնվում նաեւ հայ մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը, որը գաղթականների հետ նույնպես կրեց տառապալի օրեր:[35]

Երեք հազար գաղթական հաստատվեցին Ռեշտ քաղաքի հայկական դպրոցներում, եկեղեցու եւ թատրոնի չենքերում: Ինչպես Էնզելիում, այստեղ եւս, նրանց գործերը կարգավորելու նպատակով Մելիք-Շահնազարյանի նախագահությամբ ստեղծվեց գաղթականական կոմիտե:[36]

Հարկ է նշել, որ առաջին աշխարհամարտի տարիներին, Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի անակնկալ նահանջի հետեւանքով 1915 թ. հուլիսի վերջերից Վան-Վասպուրականի ազգաբնակչությունը նույնպես տարագրվել եւ հանգրվանել էր Պարսկաստանի հայաշատ մի շարք շրջաններում՝ Սալմաստում, Խոյում եւ այլուր: 1918 թ. գարնանը նրանց թիվը հասնում էր 60-70 հազարի[37]: Վան-Վասպուրականի ամառային իրադարձություններից հետո, երբ ռուսական բանակը նահանջեց Համադանից, թուրքական զորքերն սկսեցին կոտորել ինչպես Համադանի, այնպես էլ Քերմանշահի քրիստոնյա բնակչությանը: Վերջիններս, ի թիվս նրանց եւ հայերը, տեղահանվելով Թեհրանից, Ղազվինից, Համադանից ու Սուլթանաբադից եւ գաղթելով Ղազվին-Ռեշտ ուղղությամբ՝ հաստատվել էին Էնզելիում եւ Ռեշտում: Միայն Ռեշտում ապաստանած գաղթականների թիվը հասնում էր 15.000-ի, որոնց պարենավորումը եւ բժշկա-սանիտարական օգնությունն իրականացնում էր այս քաղաքում հիմնված գաղթականական կոմիտեն:[38]

Վերոհիշյալ վայրերում հանգրվանած արեւմտահայ եւ պարսկահայ գաղթականների մեծ մասի վերադարձի հարցը առ 1919 թ. հունվարը դեռեւս չէր կարգավորվել:[39]

Այդ ծանր փորձության օրերին Էնզելիում եւ Ռեշտում հաստատված ինչպես արեւմտահայ, պարսկահայ, այնպես էլ բաքվեցի գաղթականությանը առաջին հերթին աջակցություն ցույց տվեց տեղի հայ բնակչությունը: Նրանց նկատմամբ իրենց բարյացակամ վերաբերմունքն արտահայտեցին նաեւ պարսկական իշխանությունները:[40]

Փարիզում լույս տեսնող "Վերածնունդ" ամսագիրը այդ առիթով գրում էր. "Այդ տեղերիս (Էնզելի, Ռեշտ - Գ.Ստ.) ազգաբնակչությունը եւ իշխանությունները լավ ընդունելություն ըրած են անոնց (գաղթահայությանը - Գ. Ստ.) եւ միջոցներ ձեռք առած են անոնց թշվառությունը մեղմացնելու համար":[41]

Բաքվի անկումից հետո անգլիացիները, այլեւս չունենալով հայերի աջակցության կարիքը, հարկ չհամարեցին գաղթականությանը ցույց տալ անհրաժեշտ օգնություն: Թեեւ, սկզբնական շրջանում նրանց կողմից 2000 գաղթականի բաժանվեց հաց[42], սակայն այդ օգնությունը սեպտեմբերի 26-ից ընդհատվեց:[43] Գաղթահայության պարենավորման գործը կազմակերպելու նպատակով դեն. Բագրատունին եւ Էնզելիի ազգային խորհրդի անդամ Ա. Գյուլխանդանյանը հեռագիր հղեցին Փարիզ՝ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշային, որը խոշոր գործատեր Թումանյան եղբայրների ընկերության միջոցով փոխանցեց 1887400 ֆրանկ (պարսկական այն ժամանակվա արժեթղթերով մոտ 175000 թուման)[44]: Այս գումարներից 60.000-ը հատկացվեց Թեհրանի ազգային կենտրոնական մարմնին, 8.000-ը՝ Էնզելիի ազգային խորհրդին, իսկ մնացյալ 107.000-ը հանձնվեց Էնզելիի գաղթականական կոմիտեին՝ փախստականներին բաժանելու համար:[45]

Գաղթականների կենցաղային նվազագույն պայմաններն ապահովելու նպատակով, գաղթականական կոմիտեն երկուերեք ամիսը մեկ նրանց հատկացնում էր համապատասխան ռոճիկ:[46] Հնարավորության սահմաններում տրված այդ օգնությունը, անշուշտ, բավարար չէր աղետյալների անհրաժեշտ կարիքները հոգալու համար: Նրանց տեղաշարժերի, կուտակումների եւ հակահիգիենիկ պայմանների պատճառով Էնզելիում

եւ Ռեչտում գաղթականների շրջանում բռնկվեցին բծավոր տիֆ եւ տարափոխիկ այլ հիվանդություններ. մահացությունը օրական հասնում էր 10-20 հոգու, ընդ որում, նրանց մեծ մասը որբանոցի 1-15 տարեկան երեխաներ էին:[47] Բժիշկ-սանիտարական անհրաժեշտ օգնություն հասցնելու նպատակով գաղթականական կոմիտեի եւ բժշկապետ Ն. Տեր-Ներսիսյանի ջանքերով վրաց արդյունաբերական ընկերության շենքում բացվեց 300 մահճակալով հիվանդանոց: Միեւնույն ժամանակ, չտապ կարգով մաքրվեցին հրապարակները, այգիներն ու փողոցները: Վերոհիշյալ կանխարգելիչ միջոցների շնորհիվ մահացությունը օրեցօր սկսեց նվազել:[48] Այնուամենայնիվ, գործող միակ հիվանդանոցն ի վիճակի չէր բոլոր գաղթականներին բուժական օգնություն ապահովել: Տեսնելով, որ ստեղծված իրադրության, ինչպես եւ սննդի պակասության պատճառով գաղթականության վիճակը գնալով բարդանում է, գաղթականական կոմիտեն մի քանի անգամ դիմումներ հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ Բաքվի հայ գաղթականների վերադարձը թույլատրելու եւ կազմակերպելու համար:[49]

Բացի այդ, Ա. Գյուլխանդանյանը եւ Հ. Բագրատունին Հայոց ազգային խորհրդի անունից Էնզելիում դիմեցին գեն. Թոմսոնին, խնդրելով՝ "Պարզել հայ գաղթականության վիճակը, նրա վերադարձի հարցը, ֆիզիկական եւ տնտեսական ապահովվածության գործը եւ հայկական զորամասերի՝ զենքով Հայաստան անցնելու խնդիրը":[50]

1918 թ. հոկտեմբերի 23-ին Բաքվի թեմի առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանը, զեկուցագիր հղեց կառավարության նախագահ Ֆ. Խան-Խոյսկուն եւ, նկարագրելով հայ բնակչության ծանր վիճակը ինչպես Բաքվում, այնպես էլ Էնզելիում, խնդրեց անհապաղ միջոցներ ձեռնարկել գաղթականների վերադարձը կազմակերպելու համար: "Համաձայն քաղաքացիական իրավահավասարության հայտարարված սկզբունքի, նրանք (հայերը - Գ. Ստ.), որպես Ադրբեջանի քաղաքացիներ, թվում էր՝ պետք է օգտվեին կառավարության պաշտպանությունից: Սակայն, դժբախտաբար, կառավարությունը անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում նրանց վրա, եւ չի ձեռնարկում որեւէ միջոց հայ քաղաքացիների վերադարձը հեշտացնելու համար, չնայած այդ առթիվ փախստականների կողմից հատուկ պատգամավորների միջոցով մի քանի անգամ եղել են համոզեցուցիչ դիմումներ եւ խնդիրներ", - ասված է զեկուցագրում:[51]

Գաղթականների վերադարձը Բաքու հնարավոր եղավ միայն պատերազմի ավարտից հետո, երբ պարսկող Թուրքիան իր զորքերը դուրս հանեց Անդրկովկասից:

1918 թ. նոյեմբերի 17-ին անգլիական զորքերը գեն. Թոմսոնի գլխավորությամբ երկրորդ անգամ մտան Բաքու: Ջնայած անգլիական հրամանատարության եւ Ադրբեջանի մուսավաթական կառավարության ստեղծած արհեստական դժվարություններին, նոյեմբերի վերջերից գաղթականների առաջին խմբերը սկսեցին Էնզելիից մեկնել Բաքու:[52]

Նրանց վերադարձը եւ Էնզելիից որբերի տեղափոխման գործը կանոնավորելու նպատակով Էնզելի էր գործուղվել Բաքվի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչ Հայկ Տեր-Միքայելյանը:[53]

Բաքու վերադարձող հայ գաղթականության նկատմամբ կրկին տմարդի վերաբերմունք ցուցաբերեցին անգլիացիները, որոնք նրանց փոխադրող շոգենավերի համար վճար պահանջեցին: Բաքու փոխադրվեցին առաջին հերթին Էնզելիի հիվանդանոցում ապաքինվող հիվանդներն ու որբերը:[54]

Սեպտեմբերյան կոտորածներից հետո Բաքվում մնացած սակավաթիվ հայերը հայտնվել էին սովի եւ հիվանդության ճիրաններում: Դրությունը էլ ավելի բարդացավ, երբ գաղթականությունը Էնզելիից, Պետրովսկից եւ Աստրախանից ներգաղթեց Բաքու:[55] "Հայկական չքավորությունը Բաքվի շրջանում ողբերգական չափերի է հասել: Մինչեւ վերջին թելը կողոպտված, քաղցած ու մերկ ժողովուրդը ավելի մեծ դժբախտության գիրկը մատնվեց, երբ Բաքվի փախստականները՝ նույնքան մերկ, քաղցած եւ տարափոխիկ հիվանդություններով վարակված՝ վերադարձան Պետրովսկից եւ Էնզելիից", - ասված է վավերագրում:[56]

Բաքու վերադարձած գաղթականությանը բազմաբնույթ օգնություն էր ցույց տալիս 1918 թ. հոկտեմբերին հիմնված "Հայոց ինքնօգնության կոմիտեն" թեմական առաջնորդ Բագրատ եպս. Վարդազարյանի գլխավորությամբ:[57]

Ներգաղթը սկսելուց հետո թեեւ գաղթահայերի թիվն էնզելիում եւ Ռեչտում օրեցօր նվազում էր, այդուհանդերձ, նրանց բազում կարիքները հոգալու համար միջոցները չէին բավականացնում: Թեհրանից Բաքվի Հայոց ազգային խորհրդի արտակարգ լիազոր Ս. Արարատյանի՝ 1919 թ. հունվարի 21-ին Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպս. Մելիք-Թանգյանին ուղղված նամակում ասվում էր. "...Միջոցներ քիչ ունենք, գաղթականությանը պահում ենք մի կերպ, մինչեւ գարուն ներգաղթը դեպի Հայաստան համարում ենք վնասակար, ուստի դիմել ենք ամեն կողմ օժանդակության..."[58]:

Ներգաղթն Էնզելիից որոշ ընդհատումներով շարունակվեց մինչեւ 1919 թ. մարտի վերջերը: Բոլորից հետո Բաքու ուղեւորվեց Հայոց ազգային խորհուրդը, որը մեկնելուց առաջ չնորհակալական գրություն հղեց պարսկական կառավարությանը՝ գաղթահայությանը ցուցաբերած օժանդակության ու աջակցության համար:[59]


Բաքվի հայ գաղթականները Էնզելիում եւ Ռեչտում անցկացրին տառապանքի ամիսներ: Էնզելիի հիվանդանոցում փախստականներին խնամող բժիշկ Մելիք-Փարսադանյանի կազմած վիճակագրության համաձայն, 1918 թ. հոկտեմբերի 18-ից մինչեւ 1919 թ. մարտի 10-ը սովի, տարափոխիկ հիվանդությունների եւ զրկանքների հետեւանքով մահացածների թիվը հասել էր 1382-ի (ամսական՝ 276, օրական 9 հոգի), որոնց մեծ մասը դեռահասներ էին:[60] Ռեչտի գաղթականական մարմնի տեղեկագրի համաձայն, հոկտեմբերի սկզբներից մինչեւ դեկտեմբերի վերջը, այստեղ մահացածների թիվը հասել էր 350-ի (192 տղամարդ, 142 կին եւ 16 երեխա), որոնցից 125 հոգին եղել են չամախեցիներ: Մահացողների մեջ հարաբերականորեն փոքր թիվ են կազմել արցախցիներն ու զանգեզուրցիները՝ 86 հոգի: Այստեղ եւս, մահացողների մեծամասնությունը դեռահասներ էին[61]:

Մահացությունը շատ ավելի մեծ կլիներ, եթե չլիներ իրանահայության աջակցությունը, պարսկական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը, տարագրվածներին ցույց տրվող օգնության խելամիտ կազմակերպումը:

Այն իրականացնողների գործիմացության, եռանդի եւ նվիրվածության չնորհիվ հնարավոր եղավ կանխել մարդկային մեծաթիվ կորուստները, պահպանել հազարավոր տարագրվածների կյանքը: ■

Մատենագրություններ

1. Հայաստանի Հանրապետության պատմության պետական արխիվ (այսուհետեւ՝ ՀՀ ՊՊԿԱ) ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 5-6, նաեւ "Արեւ", հունիսի 21, 1918, թիվ 117; 2. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 278, ց. 1, գ. 8, թ. 5, նաեւ "Մշակ", մարտի 4, 1919, թիվ 48; 3. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 22; 4. Իշխանյան Բ., Բագուի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 2:
5. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 21, ց.2, գ. 94, թ. 22, նաեւ "Աշխատավոր", սեպտեմբերի 26, 1918, թիվ 141:
6. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 10, նաեւ ֆ. 199, ց. 1, գ. 253, թ. 9:
7. 1918 թ. հունվարին, անգլիական զորքերը, գեն. Դենստերվիլի գլխավորությամբ Միջագետքից անցնելով Պարսկաստան, գրավեցին այդ տարածքը՝ նպատակ ունենալով այն հենակետ դարձնել Բաքու, իսկ այնուհետեւ ամբողջ Անդրկովկաս թափանցելու համար: 1918 թ. հուլիսին անգլիացիները գրավեցին Ռեշտը, իսկ օգոստոսին՝ Էնզելին, որը վերածվեց Կասպից ծովում անգլիական ծովային հենակետի: Բաքվի պաշտպանության դժվարին օրերին, Բաքվի խորհուրդը հուլիսի 25-ի նիստում որոշեց դիմել Պարսկաստանում գտնվող անգլիացիների օգնությանը: Օգոստոսի 4-ին Էնզելիից Բաքու ժամանեց գնդ. Ստոքսը, իսկ 17-ին՝ անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեն. Դենստերվիլը (Денстервиль, Британский империализм в Баку и Персии 1917-1918 гг., Тифлисъ, 1925, стр. 184-189): Բաքու մտած անգլիական ուժերի ընդհանուր թիվը հասնում էր 1500-ի:
8. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 10; 9. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 68:
10. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց.1, գ. 120, թ. 6 (վավերագիրը ֆրանսերեն լեզվով է):
11. Գեղամյանց Ե., Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. 2, Բագու, 1919, էջ 48:
12. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., էջ 113, նաեւ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 22:
13. Ռոստոմ (մահվան 60-ամյակի առթիվ), Բեյրութ, 1979, էջ 338, 379; 14. Նույն տեղում:
15. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., էջ 113, նաեւ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց.2, գ. 94, թ. 22:
16. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 67 (ֆրանսերեն լեզվով); 17. Գեղամյանց Ե., նշվ. աշխ., էջ 49:
18. Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 5, նաեւ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):
19. Սահակյան Վ., Մի կյանքի պատմություն (ձեռագիր հուշագրություն), Սիսիան, 1982: Հուշագրի հեղինակ Վարսենիկ Սահակյանը տողերից հեղինակի հայրական տատն է: Նրա ամուսինը՝ Գեւորգ Ստեփանյանը եւ եղբայրը՝ Շամխալ Սահակյանը, լինելով 3-րդ բրիգադի 21-րդ դումարտակի զինվորներ, մասնակցել են ինքնապաշտպանական մարտերին: Բաքվի անկումից հետո գաղթել են Էնզելի, ուր չուրջ վեց ամիս ապրելով՝ վերադարձել են Բաքու, որտեղից եւ Զանգեզուր՝ Սիսիան: Հուշագրությունը պահվում է մեր անձնական արխիվում; 20. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 120, թ. 7 (ֆրանսերեն):
21. Մանուչարյան Ա., 1918 թ., Բաքվի հայկական ջարդերը (ԴՖՀ-ի արտաքին գործերի մինիստրության քաղաքական արխիվի փաստաթղթերը), ԼՀԳ, Երեւան, 1990, թիվ 6, էջ 79:
22. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձնական ֆոնդ, ց. 1, գ. 235, թ. 6:
23. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., թիվ 11, 1925, էջ 71; 24. ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 30, թ. 6:
25. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., թիվ 11, էջ 72; 26. Նույն տեղում:
27. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 8, նաեւ ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 108:
28. Էնզելիում կուտակված քաղաքահայ գաղթականության թվի վերաբերյալ պատմական գրականության մեջ եւ արխիվային վավերագրերում կան իրարամերժ տվյալներ: Այսպես, Սեպուհը իր հուշագրությունում հիշատակում է 6.000 (Սեպուհ, Էջեր իմ յուշերեն, հ.բ., Բոստոն, 1929, էջ 198): Հայկական առանձին դիվիզիայի շտաբ գործուղված կապ. Կալմանյանցի՝ 1918 թ. նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարին հղած զեկուցագրում նշվում է 5.000 (ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 21): Փարիզում լույս տեսնող "Վերածնունդ" ամսագիրը հիմք ընդունելով Փարիզի՝ Հայաստանի տեղեկատու բյուրոյի հաղորդագրությունը, նշում է 7.000 ("Վերածնունդ", հոկտեմբերի 14, 1918, թիվ 20, էջ 413), որն առավել հավանական է; 29. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 46; 30. Լազյան Գ., Հայ ազատագրական շարժումեն, Կալիֆորնիա, 1993, էջ 155:
31. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., թիվ 11, էջ 73; 32. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 2:
33. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., թիվ 11, էջ 72-73, նաեւ Սեպուհ, նշվ. աշխ., էջ 201; 34. Նույն տեղում:
35. Հր. Աճառյանը, Նոր Նախիջեւանից Բաքվի վրայով փորձելով անցնել Թավրիզ, ուր հրավիրված էր տեսչական պաշտոնով, հունիսի 14-ին քաղաքի՝ թուրքերի կողմից գրավված լինելու պատճառով առժամանակ մնում է Բաքվում եւ որպես թարգմանիչ աշխատում բանակի շտաբում: Քաղաքի անկման նախօրեին ընտանիքով անցնում է Պարսկաստան եւ ժամանակավորապես հաստատվում Էնզելիում; 36. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., թիվ 11, էջ 73; 37. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 16; 38. Арутюнян А., Первая мировая война и армянские беженцы (1914-1917 гг.), Автореф. диссертации на соиск. уч. степ. канд. ист. наук, Ереван, 1989, стр. 15; 39. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 53, նաեւ "Վեմ", 1934, Բ տարի, թիվ 3, էջ 66:
40. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 46, նաեւ գ. 74, թ. 39:
41. "Վերածնունդ", Փարիզ, հոկտեմբերի 14, 1918, թիվ 20, էջ 413:
42. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 46; 43. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 108:
44. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 38; 45. Նույն տեղում; 46. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., էջ 73:
47. Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 96; 48. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., էջ 73:
49. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 52; 50. Մելիք-Ցոլչյան Ս., նշվ. աշխ., էջ 75:
51. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 52:
52. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 3, նաեւ ֆ. 200, ց. 1, գ. 414, թ. 208:
53. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 3:54. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 10, նաեւ "Վեմ", 1934, թիվ 3, էջ 67:
55. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 57, թ. 244; 56. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 123, թ. 5:
57. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276, ց. 1, գ. 34, թ. 76; 58. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 158, թ. 53:
59. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 47; 60. Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 95-96:
61. Նույն տեղում, էջ 97:



Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, հտ.1, Երեւան, 2000, 164 էջ + 1 քարտեզ

ՀՀ անկախացումից ի վեր մեր երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների էթնիկ ինքնագիտակցության զարթոնքին զուգընթաց, աճել է նաև մասնագետ գիտնականների հետաքրքրությունը այդ հանրությունների հանդեպ: Որպես դրա արդյունք վերջերս հաճախակի են դարձել ՀՀ ազգային փոքրամասնություններին նվիրված զանազան գիտաժողովների և սեմինարների կազմակերպումը, գրքերի և հոդվածների հրատարակումները:

Նմանօրինակ նախաձեռնության արդյունք է նաև գրախոսվող աշխատությունը՝ հեղինակված մի խումբ պատմաբան-ազգագրագետների կողմից՝ խմբագրությամբ հայտնի ազգագրագետ Յու.Մկրտումյանի: Գիրքը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, վերջաբանից և ծանոթագրություններից՝ վերջում որպես հավելված ունենալով ՀՀ տարածքում ազգային փոքրամասնությունների աշխարհագրական տեղաբաշխման քարտեզը: Ինչպես նշվում է ներածությունում, գրքի հրապարակ իջնելը արդյունք է ԲՀԻ օժանդակության հիմնադրամի (Սորոսի ֆոնդի) հովանավորությամբ մեր հանրապետության տարբեր շրջաններում գիտահետազոտական խմբի կողմից կատարված դաշտային աշխատանքների:

Ներկայացվող աշխատանքը պատմական ազբադարձների, ազգագրության և հատկապես վիճակագրության ոլորտում հիրավի պարունակելով բավականին հետաքրքիր և թարմ նյութ, այդուհանդերձ զերծ չէ մի շարք աննշան թերություններից, որոնք միանգամայն բնական են նման լայն կտրվածքի հրապարակումների համար: Ելնելով մեր մասնագիտական նախասիրություններից, ստորեւ կանդրադառնանք միայն եզդիներին (աշխատության մեջ նաև՝ եզդի քրդեր) և հայ բոշաներին առնչվող բաժիններին, հատկապես ի նկատի առնելով նաև այն փաստը, որ ինքնուրույնաբար մեծածավալ դաշտային նյութեր ենք հավաքել նշված հանրությունների ազգագրության, կրոնի (եզդիների), լեզվի և մշակութային արժեքների վերաբերյալ:

Նախ կուզեինք անդրադառնալ բոշաներին, քանզի նման ընդգրկման աշխատության մեջ բոշաներին ներառնելն ինքնին արդեն ճիշտ չէ:

*Բոշաները (ինքնանվանումը՝ **լոմ, լոմավ**, հգ. **լոմավներ, լոմավդիք**) լեզվական, էթնիկ, աշխարհայացքային, մշակութային և ազգագրական որևէ չափանիշով չեն կարող դիտարկվել որպես հայերից անջատ՝ առանձին ազգային փոքրամասնություն: Նրանք չունեն առանձին լեզու, այլ միայն երբեմն՝ այն էլ ավագ սերնդի (60-70-ից բարձր) շրջանում կիրառվում է հատուկ մի գաղտնալեզու, գլխավորապես մանր առևտրական գործունեության ընթացքում, որը պարունակում է մոտ 400 բառ (մոտ 350-ը հնդարիական ծագման, իսկ մնացածը՝ հայերենից ու պարսկերենից աղճատված փոխառություններ) և հիմնված է հայերենի Կարնո բարբառի քերականության վրա: Ըստ որում, բուն հնդարիական բառապաշարն էլ խստորեն ենթարկվել է նշված բարբառի հնչյունական համակարգի ազդեցությանը: Թե միմյանց հետ, և թե արտահամայնքային չփումների ընթացքում բոշաներն օգտագործում են միմիայն հայերենը: Միեւնույն ժամանակ, Երևանում ներհամայնքային և ընտանեկան չփումների ընթացքում կիրառվում է Կարնո բարբառը:*

*Հայաստանի բոշաները զուրկ են որևէ ոչ-հայկական էթնիկ յուրահատկությունից (մարդաբանական տիպը վաղուց արդեն դադարել է էթնիկ տարանջատման չափանիշ լինելուց)՝ այդ թվում՝ նաև ոչ-հայկական էթնիկ ինքնագիտակցությունից: Հատկապես, «ոչ-հայ» բնորոշումը խիստ ցավագին է ընդունվում հենց իրենց՝ բոշաների, կողմից, մի կողմ թողած այն, որ հայերեն «բոշա» բառի կիրառությունն իսկ նրանց միջավայրում գրեթե տաբուավորված է: **Բոշա** (գաղտնալեզվում՝ **լոմ, լոմավ**) բառը և սրանից սերող «բոշայություն, բոշայական» (գաղտնալեզվում՝ **լոմավութեն, լոմավագին**) հասկացությունները թե բոշաների, և թե «բուն» հայ բնակչության շրջանում այսօր արդեն զուրկ են որևէ էթնիկ չեչտաղրումից, `կրելով զուտ սոցիալական կամ կացութաձևային նշանակյալների բնույթ: Իդեպ, հարկ է նշել նաև, որ **լոմ** բառը բոշաների գաղտնալեզվում (**լոմավրեն**), ի տարբերություն եվրոպական գնչուների **ռոմ** (հգ. **ռոմա**) ինքնանվանման, «մարդ» իմաստը չի պարունակում: Բոշաները գաղտնալեզվում «մարդ» բառի համար կիրառում են **մանուշ** ձևը:*

Պարադոքսալ է, սակայն փաստ, որ հայկական ավանդական սովորույթների, ինչպես նաև անձնանվանական համակարգի առումով բոշաները նույնիսկ ավելի պահպանողական են, քան, այսպես ասած, "մաքուր" հայերը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մի չնչին մասը այն փաստարկների, որոնք դեմ են խոսում բոշաներին որպես առանձին ազգային փոքրամասնություն դիտարկելուն, պետք է անհիմն համարել ՀՀ ազգային փոքրամասնությունների կազմում բոշաների արհեստական ընդգրկման յուրաքանչյուր փորձ:

Այսօրվա բոշաների նախնիները մ.թ. առաջին հազարամյակի սկզբներին դուրս գալով Հնդկական թերակղզու հյուսիսից և անցնելով Իրանով, ինչպես ցույց են տալիս լեզվական տվյալները, պատմական Հայաստանի տարածք են թափանցել ոչ ուշ քան XII դարը և

հայ ժողովրդի հետ չուրջ 800-ամյա համատեղ գոյակցության ընթացքում, արդեն XVII-XVIII դարերում հաղթահարելով ծագումնաբանական ջրաբաժանը փաստորեն դարձել են հայ էթնիկ տարրի անքակտելի մասը, հայ մշակույթին և գիտությանը պարգևելով այնպիսի գործիչներ ինչպիսիք են Հարություն Ալամդարյանը, Քերովբե Պատկանյանը (Патканов), Ալեքսանդր Շիրվանզադեն և Գրիգոր Վանցյանը: Այստեղ հարկ է հիշել նույն Գ.Վանցյանի՝ XIX դարավերջի հոդվածներից մեկի հետեւյալ հատվածը. «...իրենց ավանդական պարապմունքին (իմա՝ մաղագործությանը և շրջիկ առևտրին) հավատարիմ բոշաներն էլ այսօր այնպիսի տնտեսական պայմանների մեջ են դրված և հայի հարևանությունը նոցա վրա այնքան ազդել է, որ դժվար է այլևս չարունակել իրենց ավանդական կյանքը և նոքա մի քանի տասնյակ տարիներից հետո հետևելու են իրենց ավելի առաջադեմ եղբայրներին, կրթվելով և վերջնականապես կուլ գնալով հայերի մեջ ... դորա պատճառը միակն է՝ ոչ մի ազգության չի հաջողվել կրթել գնչուին, բացի հայից»:

Այժմ կուզենայինք անդրադառնալ մասնավոր բնույթի մի քանի բացթողումների: 58-րդ էջում բոշաների այժմյան բնակության վայրերի ցանկում նշվում է Կոնդ թաղամասը: Հարկ է նշել, որ ներկայիս Կոնդի տարածքում թեև պատմականորեն բոշաներ բնակվել են, այսուհանդերձ, թաղամասի հին, կավաշեն տների քանդումից հետո բոշաները հիմնականում նոր բնակարաններ են ստացել Նոր Նորքի զանգվածներում և այսօր Կոնդում բոշա բնակչության մասին խոսելն այլեւ ժամանակավրեպ է: 97-րդ էջում կարդում ենք. «..., հատկապես XVIII դարի սկզբներից առավել տարածում ստացավ թուրքերեն ծագում ունեցող «բոշա» անվանումը (boş - դատարկ. անօգուտ՝ ոչ եկամտաբեր զբաղմունք իմաստով), որն աստիճանաբար ստանալով էթնոնիմի նշանակություն, շրջանառության մեջ է նաև մեր օրերում»: Նախ, ինչպես արդեն նշեցինք, «բոշա» բառն այսօր արդեն կորցրել է իր ցեղանվանական գրեթե ողջ լիցքը և հիմնականում գործածվում է ածականական իմաստով (հմմտ. մեր գրառած՝ «Հըմի սավ կաչուտներն ալ լոմավ են փեցեր» - «Հիմա բոլոր հայերն էլ բոշա (իմա՝ թափառաշրջիկ, մուրացիկ) են դարձել»): Ինչ վերաբերում է բառի ծագումնաբանությանը, ապա Հեղինակի մեկնությունը արդյունք է ժողովրդական ստուգաբանության: Լեզվաբաններին դեռևս չի հաջողվել պարզել «բոշա» բառի արմատները, սակայն, մեր կարծիքով, այն հավանաբար պետք է դասել բնաճայնական կամ հնչահմաստային ծագման անունների շարքին (ինչպես օր.՝ «զազա» և այլն):

Այս առումով հետաքրքիր է նաեւ, որ Վալախիայի գնչուների մի խումբ կրում է **քեյաշ** կամ **քոյաշ** անունը, իսկ Իրանում գնչուական խմբերից մեկը կոչվում է **քեշավ**:

Ընդհանրացնելով ասվածը, մեկ անգամ ևս նշենք, որ բոշաների, որպես հայերից առանձին էթնիկ կամ էթնո-մշակութային խմբի մասին խոսելը՝ ու, առավել ևս, նրանց արհեստականորեն ՀՀ ազգային փոքրամասնությունների շարքին այսօր ընդգրկելը գիտականորեն չի կարելի հիմնավորել: Բոշաները պատմականորեն և ծագմամբ լինելով այլէթնիկ հանրություն, ներկայումս արդեն դարձել են արդի հայ ազգի անկապտելի բաղկացուցիչը, և նրանց հայ ժողովրդի կազմում կարելի է առանձնացնել լոկ որպես ազգագրական խումբ:


Գրքի՝ եզդիներին (ըստ Հեղինակների նաև՝ եզդի քրդեր) վերաբերող հատվածները բոշաներին նվիրված մասերի համեմատ թեեւ ունեն ավելի գիտական շարադրանք, այսուհանդերձ, սույն բաժիններում ևս չի հաջողվել խուսափել որոշակի թերություններից, որն արդյունք է, թերևս, այն բանի, որ Հեղինակները գրեթե չեն օգտագործվել հրապարակի վրա առկա բավականին հարուստ գիտական գրականությանը՝ հենվելով հիմնականում հարցազրույցների եղանակով քաղված դաշտային նյութերի վրա: Ջմանրամասնելով, անդրադառնանք միայն դրանցից մի քանիսին:

Հարկ է նշել, որ եզդիներին բնութագրելիս, պետք է գործածել «էթնիկ-դավանական խումբ» (этноконфесиональная группа, ethno-religious group) բնորոշումը եւ ոչ "ժողովուրդ" տերմինը:

Եզդիների պարագայում, փաստորեն, դավանական պատկանելությունը լիակատար կերպով ստորադասել է էթնիկ կողմնորոշման մասին գիտության մեջ առկա պատկերացումները, և դավանական պատկանելության նշանակյալը՝ «եզդի», այսօր դարձել է էթնոնիմ: Ինչ վերաբերում է եզդիների կրոնի անվանը, ապա Հեղինակների կողմից «չալֆադդինականություն» եզրը արհեստականորեն ներմուծվել է հայերեն, մինչդեռ գիտական գրականության մեջ իրավամբ ընդունված է "եզդիականություն" անվանումը: Շարաֆ աղ-Դինը (եզդ.՝ Շարֆադին), որի անունից էլ կազմվել է վերոհիշյալ եզրը եզդիականության մեջ, համարվում է դավանանքի հովանավոր և եզդի բանավոր կրոնական ավանդության մեջ հանդես է գալիս նաև որպես փրկիչ՝ մեսիա: Նման եզրի արհեստական կիրառության աղբյուր է հանդիսացել, հավանաբար, իրենց՝ եզդիների կողմից հաճախ գործածվող «Շարֆադինը իմ կրոնն է» արտահայտությունը, որի տակ սակայն ի նկատի է առնվում Շարաֆ աղ-Դինի՝ եզդիական կրոնի անաղարտության պաշտպանի և հովանավորի գործառույթը միայն:

Բերված աննշան թերություններով հանդերձ, ներկայացվող աշխատության լուսը ընծայումը հայ իրականության մեջ, ընդհանուր առմամբ, պետք է դրական երևույթ համարել, քանզի, ցավոք, մեր ժողովուրդը՝ ի տարբերություն անցյալ դարավերջի և 20-րդ դարի սկզբների, այսօր արդեն գրեթե չի ճանաչում իր հարևաններին, որոնց հետ կողք կողքի դարերով ապրել եւ ապրում է:

Վարդան Ոսկանյան



Վահագն Ղուկասյանի հիշատակին

«Իրան-Նամէ» Արեւելագիտական հանդեսի ներկա համարը տպագրան էր իջնում, երբ վրա հասավ մեր ընկեր ու բարեկամ, ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի դասախոս՝ Վահագն Ղուկասյանի եղերական մահվան գոյժը:

Կյանքից անսպասելի ու անհեթեթ հեռացավ Վահագնը: Ամբիոնի ու ֆակուլտետի ոգին էր նա, անբաժան մասնիկը համալսարանի: Դժվա՛ր, շա՛տ դժվար է այսօր հաշտվել այն մտքի հետ, որ այլեւս երբեք, առավոտ կանուխ, ամբիոնի դռները չի բացի մեր առջեւ (հենց ուղիղ իմաստով) Վահագնը, որ այլեւս երբեք չի լսվի նրա անհոգ ու լիաթոք ծիծաղը, հաճախ փոքր-ինչ գինովցած խրոխտ խոսքը, հրճվալից աղմուկը:

Ազնիվ, անաչառ, համեստ, արծաթասիրությունից իսպառ զուրկ, անձնազոհ, առատաձեռն ու... էպիտետների մի ամբողջ շարք, որոնք միայն շատ ու շատ հեռավոր կերպով կարող են բնութագրել նրան: Վահագնը, հիրավի, բյուրեղ էր՝ առանց չափազանցության, մարդկային բազում առաքինությունների խտացում: Մանկան պես պարզ ու զուլալ էր նա, մանկան հոգեբանությամբ, բայց ոչ բնավ մանկամիտ: Նա ուղղակի պահել էր նախաստեղծ, անաղարտ այն հոգին, որն արարիչը դնում է յուրաքանչյուրի մեջ, երբ աշխարհ է բերում նրան, եւ որն ավելի հաճախ աղճատվում է կյանքի հորձանուտում: Դերվիշ էր Վահագնը՝ բառիս ամենաիսկական իմաստով, մենակյաց, ժուժկալ ու սակավապետ դերվիշ:

Հայրենիք վերադառնալով 1963թ-ին Իրանից՝ նա մինչ իր կյանքի վերջը պահեց իրանական ճախ հոսանքների հետեւորդներին հատուկ ուտոպիզմը, ռոմանտիկան ու ընկերային հավասարության գաղափարները: Այդ ռոմանտիզմի ամենացայտուն դրսեւորումն էր բնապաշտությունն ու բնության հանդեպ նրա խելակորույս սերը: Եւ հենց բնության գրկում էլ՝ Լաստիվերի կուսական անտառներում, փակեց իր կյանքի վերջին էջը:

Ուղիղ 55 տարի ապրեց Վահագնը. ծնվել էր 1945թ. օգոստոսի 14-ին՝ Իսֆահան քաղաքում, մահկանացուն կնքեց ծննդյան օրը՝ 2000թ. օգոստոսի 14-ին, Լաստիվերի կիրճում:

Գ. Աս.

***

Վահագն Ղուկասյանը վայելում էր իր ուսանողների ջերմ սերը: Դրա խոսուն արտահայտությունն է նրա երբեմնի ուսանողներից մեկի՝ երիտասարդ բանաստեղծ Գագիկ Կիլիկյանի (Նալչաջյան)՝ նրա հիշատակին նվիրված բանաստեղծությունը:

Եղերերգ

Օսթադին

Ա՛յ անկումների մոլեռանդ ընկեր.
Քեզ չէ՞ի ասել, ա՛խ, չէ՞ի ասել,
Որ անդունդներում ցավերն են ծաղկում,
Որպես Ասֆոդել, ալ-պուրպուր ծաղիկ:

Ինքնակիզումը, որ կյանքդ է արդեն
Կանաչ ճյուղերով ես ինչպե՞ս ծածկեմ,
Որ չվթարվի Հուշդ-ապավեն:
Տե՛ր, քեզ ճգտողը, արդ քեզ է հասել:

Ջէ՞ որ քո խենթն է, աչքաթող չանես,
Աչքաթող չանես դու այն արդարին,
Որդուդ արյունից մի գավաթ գինի
Դու բաժին հանիր քեզ ծարավածին:

Իսկ ինձ մնում է հուշն իմ անթեղել
Քարանձավներում կաղնուտ լեռների,
Նաեւ խոնարհել դրոշը հուսո,
Այն, որ միասին ծածանել էինք:

Հայ-օսականք
(Armeno-ossetica)

Վահագի Հիշտպահկին

*Հայ-օսական լեզվական փոխառնչությունների մասին խոսելիս, հիմնականում, իհարկե, չեչոը դրվում է այդ երկու լեզուների՝ ընդհանուր կովկասյան ենթաշերտից բխող տիպաբանական համընկնումների վրա՝ գլխավորապես քերականական, հնչյունական եւ իմաստային զարգացումների առումով (Հմմտ.՝ H. Vogt, Substrat et convergence dans l'Évolution linguistique.- St. Sept. II, Oslo, 1945, pp. 213-228; В.И. Абаев. Типология армянского и осетинского языков и кавказский субстрат. - Sprache & Geselschaft, Jena, 1970, pp. 16-28; K.H. Schmidt. Ossetisch und Armenisch. - W. Eilers Festschift, 1970, pp. 391-397; G.S. Asatrian, T. Dalalian. "The Mothers of Night": An Armenian East Iranian Parallel. - Iran & Caucasus, vol.-s III-IV, pp. 171-173): "Նյութական" բառային, համընկնումների մասին քիչ է գրվել (հասկանալի է, ի նկատի չունենք հնդեվրոպական կամ ընդհանուր իրանական բառապաշարի ակնհայտ զուգահեռները): Եվ դա, ինչ խոսք, պատահական չէ, որովհետեւ հայերենի եւ օսերենի միջեւ ընդհանուր բառաճեւերի քանակը, ըստ էության, չափազանց քիչ է, մանավանդ որ ուղղակի փոխառությունները (սովորաբար՝ հայերենից օսերեն) բացառապես ընդմիջարկված բնույթ ունեն՝ վրացերենի կամ թյուրքական լեզուների ճանապարհով: Հայ-օսական անմիջական չփումներ երբեւէ չեն արձանագրվել, իսկ հայ-ալանական կապերը հնագարում կրել են չափազանց անցողիկ եւ ոչ տեւական բնույթ (այդ կապերի միակ վկայությունը հայերենում, թերեւս, **Սաթեւիկ** անձնանունն է, որը մեծ հավանականությամբ կապ ունի օսական էպիկական Satana անվան հետ. վերջինս մեծ տարածում ունի նաեւ Հյուսիսկովկասյան մյուս ժողովուրդների շրջանում, Հմմտ. ադըղ. Seteney):*

Հայերենի եւ օսերենի բառային համընկնումները դիտելի են միայն տարածքային (արեալային) բառապաշարի ոլորտում, որոնցից երեք օրինակ կքննարկվեն ստորեւ:

1. Հյ. գութան// ou. gūton, goton "գութան"

*Ակնհայտ տարածքային բառ է. վկայված է համարյա բոլոր կովկասյան լեզուներում. Հմմտ.՝ վրաց. **gutani**, աբխազ. a-k'ɔatán, ավարերեն **kutan**, դարգիներեն **gutan**, չեչեներեն եւ ինգուշերեն **gwota**, բալկարերեն **gotan**, եւլն: Ըստ Վ. Աբաեւի (В.И. Абаев. ИЭСОЯ I, с. 527), բառը ծագում է ***skutan** նախաձեւից, որն իր հերթին հանգում է ***skut-** "սկյութ" ցեղանվանը եւ նշանակում է, նրա կարծիքով, "սկյութական գութան, արոր": Անկախ այս ստուգաբանության հավաստիությունից, պետք է արձանագրել, որ քննարկվող բառն, անկասկած, մշակութային տերմին է եւ պատկանում է կովկասյան տարածաշրջանին: Պարսկերեն **kūtān**, քրդերեն **k'ōtān**, ոստիերեն **kotan**, թալիշերեն եւ ադրբեջաներեն kotan ձեւերը (բոլորն էլ "գութան" նշանակությամբ) փոխառված են հայերենից (G. Asatrian. Vām-vāžehāye armanī dar zabān-e fārsī. - Farhang, N17, Tehran, 1997, pp. 273-274):*

2. Հյ. մատպտուկ// ou. mætatyk

*Երկուսն էլ վայրի եւ սննդում օգտագործվող բույսերի անվանումներ են, ունենալով տարբեր նշանակյալներ՝ հայերենում՝ Glicyrrhiza L. (կոչվում է նաեւ **շիրին-բիան**, թրք. "քաղցր բույս"), օսերենում՝ Poa pratensis (?): Հայերեն բառի առավել տարածված տարբերակը **մատուտակ** ձեւն է, որը, սակայն, երկրորդական բնույթ ունի. նախնական ձեւը **մատպտ-ուկ**-ն է՝ **-ուկ** ածանցով. իսկ վերջինս հայերենում վայրի բույսերի կազմության հիմնական ձեւույթն է (Հմմտ.՝ **սոխուկ, սմբուկ, խրխնդուկ, պապպտուկ, սրֆիրուկ, ծղոլուկ, տրդոռուկ, գայլուկ, պաճուկ, սախտորուկ, ավելուկ, սիևդրուկ, զնջլուկ**, եւլն): Այսպիսով, սույն բառերի հիմքը **մատպտ-/mætat-** -ն է (**-yk**-ը օսերենում նույնպես ածանց է), հակառակ նրան, որ Վ. Աբաեւը օսերենի համար առանձնացնում է mæ- նախածանցը (ИЭСОЯ II, с. 108). Հայերեն ձեւը նա չի հիշատակում: Դա է ապացուցում նաեւ վրացերենում վկայված **mat'it'ela** "Polygonum aviculare" բուսանունը: Հնարավոր է, հիշյալ բառերի հիմքում ընկած **matat-** ձեւն առաջացել է ***mat-** արմատի կրկնությամբ (տես՝ սպորել), որը բնական երեւույթ է բուսանունների համար:*

3. Հյ. մանդակ// ou. mænt-æg, mont

*Նույնպես վայրի եւ սննդում օգտագործվող բույսերի անվանումներ են. հայերենը՝ Ch. bulbosum L., օսերենը՝ Lappula echinata (?): Վկայված է նաեւ կովկասյան այլ լեզուներում՝ ավաներեն mant, բալկարերեն mant: Արմատը, բնական է, mant- -ն է, որը կարող է լինել նախորդ բառի՝ ***mat-** (տես՝ վերեւում) արմատի ռնգային տարբերակը՝ ***ma(n)t-**, իսկ վերջինս, հնարավոր է, առաջավորասիական տարածքային մի ձեւույթ է: Այն կարելի է դիտել նաեւ հունարեն μίνθη եւ լատ. menta ձեւերում:*

Իրանական լեզուներից բառը վկայված է միայն քրդերենում (manda/ik), որը, անշուշտ, փոխառված է հայերենից (տես՝ Г.С. Асатрян. Контакты армянского с новоиранскими языками. АДД. 1991, сс. 264-265):

Գառնիկ Ասատրյան

ՈՒՇԱԳՐԱՎ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Վիեննայի տարբեր արխիվներից ժողոված վավերագրերի՝ Արտեմ Օհանզանյանի կազմած բազմահատոր հավաքածուի 9-րդ հատորում (Österreich-Armenien, Faksimilesammlung diplomatischer Artenstucke, Band IX, 1918 Wien, 1995, SS. 6331-6332) հանդիպեցինք ուշագրավ, արդիական հնչեղության մի վավերագրի (էզ 6331-6332), որը թարգմանությամբ ներկայացնում ենք «Իրան-Նամէի» ընթերցողներին:

Հավանաբար, սույն վավերագիրը ստեղծվել է Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությունում Իրանի դեսպանորդի արած համապատասխան հայտարարության հիման վրա:

Այն վկայում է, որ Իրանի կառավարությունը բողոքում է «Ադրբեջանի հանրապետություն» անվանման դեմ, քանի որ այդ անվանումը հանիրավի փոխառնված է Իրանին պատկանող վաղեմի Ադրբեզան (Ատրպատական) նահանգի անվանումից:

Նման անվանակոչության համար չունենալով ոչ մի հիմք, թուրք-թաթարական ցեղերի հետնորդները բնիկ ժողովուրդներին բնազնդելով կամ վտարելով՝ սեփականացնում էին ոչ միայն նրանց տարածքները, այլեւ յուրացնում պատմական անվանումները, տվյալ դեպքում՝ Ադրբեզան տեղանունը, որի ինչծու լինելը նշել է նաեւ պատմաբան-արեւելագետ Վ. Բարտոլդը:

Հետագա տասնամյակներում պատմական Ատրպատականի (Ադրբեզանի) նկատմամբ Բաքվի դրսեւորած հավակնությունները գալիս են հաստատելու, որ Իրանի այն ժամանակվա կառավարության մտահոգությունն ամենեւին անհիմն չէր:

Վահրամ Մարտիրոսյան

Թիվ 3320
Վիեննա, 12
հուլիս, 1918 թ.


Պարսկաստանի դեսպանորդն այցելել է այստեղ եւ հայտնել, թե իր կառավարությունը տեղեկացել է, որ Թուրքիան վերջերս Բաքումում Կովկասի նորաստեղծ երեք թե չորս հանրապետության հետ հաշտության պայմանագիր է կնքել:

Հաշտության սույն պայմանագրի տարածքային պայմանների առնչությամբ պարսից կառավարությունն իրեն իրավունք է վերապահում կարծիք հայտնել այնքանով, որքանով խոսքը վերաբերում է պարսկական բնիկ մի տարածքի: Ուստի եւ հենց այժմ բողոքում է այն իրողության դեմ, երբ նորաստեղծ պետական այդ կազմավորումներից մեկն իրեն «Ադրբեջանի Հանրապետություն» է անվանել:

«Ադրբեջան» անվանումը վերաբերում է պարսկական մի նահանգի, որը ներկայիս պարսից գահաժառանգի հանդեպ առանձնահատուկ պարտավորություններ ունի:

Անթույլատրելի է, որ անմիջական հարեւանությամբ նորաստեղծ պետական մի կազմավորում իրեն այն նույն անվանումով է կոչում, որը կրում է պարսկական հիշյալ նահանգը:

Պարսից կառավարությունը հույս է հայտնում, որ դուք վերը շարադրված տեսակետը կհայտնեք նաեւ կայսերական (իմա՝ Ավստրո -Հունգարիայի - Վ.Մ.) կառավարության անունից:



Օլիվեր Լիման. *Իսլամական փիլիսոփայություն (Համառոտ ներածություն)* Քեմբրիջ: "Փոլիթի-փրես", 1999. - 199 էջ, անգլերեն

Լինելով համաշխարհային փիլիսոփայական մտքի կարեւոր բաղկացուցիչ մասերից մեկը, այն, ըստ էության, մինչ այժմ անհայտ է մնում արեւմտյան լայն շրջաններին:

Նույնիսկ փիլիսոփայության պատմության ընդհանուր ձեռնարկներում մահմեդական իմաստասիրությունը ներկայացվում է միայն ի դեմս նրա մի քանի կարկառուն ներկայացուցիչների (Իբն Ռուշդ՝ Ավեռոես, եւլն): Մահմեդական փիլիսոփայության համակարգը, փաստորեն, հազվադեպ է դարձել ընդհանրական ուսումնասիրման առարկա, մանավանդ արեւմտյան գիտության կողմից (Գոլդցիերի, Անեմարի ֆոն Շիմմելի եւ մյուս խոշոր արեւմտյան գիտնականների ուսումնասիրությունը, երբ շոշափում են իսլամի փիլիսոփայության առանձին կողմեր միայն):

Այս տեսանկյունից Օ. Լիմանի գիրքը, ինչ խոսք, ողջունելու արժանի մի երեւույթ է: Այն առանց երկարաբանությունների, համապարփակ ձեւով ներկայացնում է իսլամական փիլիսոփայության համարյա բոլոր տարրերը՝ պատմությունը, արմատները, զարգացման դինամիկան, գաղափարախոսությունն ու հիմնական կատեգորիաները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել ոչ միայն մասնագետների՝ արեւելագետների եւ ուսանողության, այլեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

Մուշեղ Ասատրյան

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՐԱՖՖՈՒ "ԵՐԿՈՒ ԱՍԻՍ ԱՂՎԱՆԻՑ ԵՒ ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒՄ" ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կամո Ալեքսանյան

Րաֆֆու երրորդ ուղեւորությունը սկսվել է 1881 թ. հուլիսի 25-ին՝ Թիֆլիսից: Այս ուղեւորության առանձնահատկությունն այն է, որ ընդգրկել է պատմական Աղվանից եւ Սյունյաց աշխարհները՝ ներկայիս չափանիշներով՝ Վրաստանի, Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) տարածքները:

Անցնելով Թիֆլիս-Սալահլու-Շամքոր-Կարաեր-Գանձակ-Ելենդորֆ-Հաջի-չեն-Ազատ-Գետաչեն-Կարաբուլաղ-Թոդան-Էրքեջ-Կարաչինար-Խարխափուտ-Գյուլիստան-Թոռնուտ-Հոռեկ-Թալիչ-Մատաղիս-Դաստակիր-Տոնաշեն-Զարդախլու-Մեծ-Շեն-Հին Մոխրաթաղ-Նոր Մոխրաթաղ-Կասապատ-Մարտակերտ-Գյուլ-յաթաղ-Ջան-յաթաղ-Մեհմանա երթուղով՝ Րաֆֆին ուշագրավ, հարուստ եւ բազմաբնույթ աշխարհագրական տեղեկություններ է թողել: Ըստ այդ գրառումների՝ Մեհմանան Րաֆֆու այցելության վերջին հանգրվանն է, չնայած որ նշումներ կան Առաջաձոր, Խաչեն, Գանձասար, Ուլուբաբ, Սեխտի չեն, Խնձրիստան, Հիլիս Դաշբուլաղ, Բալլուջա, Խնածախ եւ Շուշի բնակավայրեր կատարված ուղեւորությունների մասին: Ի դեպ, Շուշին բազմաթիվ հեղինակներ հիշատակվում են որպես մշակութային կենտրոն եւ ռազմապաշտպանական ամրոց:

Րաֆֆին պատմաաշխարհագրական եւ առավելապես ազգագրական բնույթի հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում իր երթուղում հանդիպած ազգերի ու ցեղերի մասին: Հիշատակում է Կովկասի թափառական ազգերից մեկին՝ ղարաչիներին, որոնց հանդիպում է Թիֆլիս-Սարահլու ճանապարհին: Մատնանշում է թարաքամա կիսավայրենի ցեղի մարդկանց, որոնք իրենց հարեւաններից բավական հետամնաց էին թե՛ քաղաքակրթության եւ թե՛ կենցաղավարության տեսակետից: Անդրադառնում է Գոլանի թափառական ցեղի մարդկանց, որոնց հանդիպում է Թարթառ գետի ափին՝ նշելով երկրագործությունից եւ արվեստից նրանց հեռու եւ անտեղյակ լինելու մասին: Գորովանքով է խոսում Ելենդորֆում 1828 թվականից հաստատված գերմանացի շվաբների, նրանց բարեկեցիկ կյանքի մասին: Կանգ է առնում Մեհմանայի տեղաբնակ հույների համայնքի վրա, մանրամասնելով, որ նրանք հայերի հետ մեկտեղ զբաղվում են արծաթի, պղնձի եւ արճճի հանքավայրերի շահագործմամբ: Խոսելով Գետաչեն գյուղի հայերի մասին՝ Րաֆֆին հաղորդում է, որ նրանք "կռվասեր եւ խռովարար են":

Րաֆֆին տեղեկություններ է թողել իր երթուղու օգտակար հանածոների պաշարների մասին՝ հիշատակելով Մեհմանայի պղնձի, արճճի եւ արծաթի հանքերը, ինչպես նաեւ Հոռեկի կրային քարերով հարուստ բլուրը:

Գրողը ֆիզիկաաշխարհագրական բնույթի տեղեկություններ է տվել իր անցած տեղանքի առանձնահատկությունների մասին: Թիֆլիս-Սարահլու հատվածը նա բնորոշում է որպես հարթ, ընդարձակ տարածություն՝ անապատին բնորոշ հատկանիշներով: Նրա ուշադրությունը գրավել են տեղ-տեղ մարդածին ազդակի նշանները՝ ցորենի, գարու հնձած արտեր, կորեկի կանաչ ցանքեր: Նա նկարագրում է Շամքորից Գանձակ ընդարձակ տափարակները՝ իրար հաջորդող թփուտներով, ճոխ խոտածածկերով, պարարտ վարելահողերով, ճահիճներով ու ավազուտներով: Ազատից Գետաչեն հատվածը բնութագրվում է բարձրավանդակների եւ ձորերի հերթագայությամբ: Թալիչից արեւելք անտառապատ լեռներին փոխարինում են մերկ, փոքրիկ բլուրները եւ թփուտները: Րաֆֆին հաղթահարել է Դաստակիրի բարձրավանդակը, կաթղկասարը, Քյափազը, Խաչի գատուկը, Գոգթափան, Կարմիրխաչը, Ղազուն տուրմաչը, Թոռուտը եւ Մռավի մի ճյուղավորությունը:

Ուշագրավ են երթուղու ջրագրական ցանցի վերաբերյալ գրողի կատարած դիտարկումները: Նա հիշատակել է Գեոգչայ (Կանաչ լիճ) լիճը, որն առաջացել էր երկրաշարժի ժամանակ՝ Քյափազ սարի փլվածքներից, գետի հունի արգելափակման պատճառով: Գրողն անցել է բազմաթիվ գետերով՝ Ալգետ, Խրամ, Աղստաֆա, Շամքոր, Կոչկար, Գանձակ, Բալայ-քյուրակ, Գորան, Ինջա, Աղ-սու, Կուր, Թարթառ: Նկատել է Շամքոր եւ Գանձակ գետերի ջրային ռեժիմի առանձնահատկությունները՝ նշելով, որ Գանձակը ամռան ամիսներին լրիվ ցամաքում է, իսկ Շամքորը աչքի է ընկնում գարնանային հորդացումներով:

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսանկյունից հետաքրքրական են Շամքոր, Գանձակ, Ելենդորֆ, Թոռուտ, Մեծ-չեն, Գյուլիստան եւ Կարաչինար բնակավայրերին եւ դրանց բնակչությանը առնչվող՝ Րաֆֆու թողած տվյալները:

Շամքորը, ինչպես նկարագրում է Րաֆֆին, իր դիրքով շատ նման է Շարուրին: Եվ այդ իրողությունը հավաստում է այն փաստով, որ Շարուրի մոտով հոսում է Երասխը, իսկ Շամքորի մոտով՝ Կուրը: Շարուրի դաշտի բրնձի ցանքերը ոռոգվում են Արփա գետի ճյուղավորված առվակներով, իսկ Շամքորի հովիտն արբիացնում է Շամքոր գետը: Երկու վայրերում էլ, ինչպես պնդում է Րաֆֆին, բնությունն ազդել է բնակիչների կենցաղավարության վրա. ամռան անտանելի տոթին նրանք ստիպված բարձրանում են լեռները:

Գանձակի մասին նշում է, որ քաղաքն ընկած է համանուն գետի վրա եւ նրանով բաժանվում է երկու մասի. մեկում բնակվում էին հայերը, մյուսում՝ թուրքերը: Գանձակցիները զբաղվում էին խաղողագործությամբ եւ գինեգործությամբ:

Ելենդորֆում գրողի ուշադրությունը գրավել են հատկապես լայն, ընդարձակ եւ ուղիղ փողոցները՝ եզերված բարդիներով եւ չինարիներով:

Խոսելով Մեծ-չեն եւ Թոռուտ գյուղերի մասին՝ տվել է նրանց բնակչության թվերը՝ համապատասխանաբար մոտ 50 եւ 15 տուն հայեր:

Կարաչինար գյուղի վերաբերյալ գրողը հիշարժան է համարել այն, որ տեղացի հայերը զբաղվում էին երկրագործությամբ եւ ձիաբուծությամբ:

Գյուլիստան գյուղն ու համանուն բերդը Րաֆֆու վրա առանձնակի տպավորություն են թողել, եւ նա հիացած գրում է. "Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի ահագին սեպացած քարաժայռ բարձրանում է խոր ձորի միջից եւ այդ քարաժայռի գլխին չինված է բերդը: Որպես խրամատ ծառայում է նրան խոր անդունդը, որի միջով հոսող գետակը պտույտներ է գործում եւ այդ քարաժայռի երեք կողմից ոլորվելով, նրան թերակղզու ձեւ է տալիս: Մի կողմից միայն բարձր քարաժայռի ստորոտը միանում է ցամաքի հետ...":

Կենսաչխարհագրական տեսանկյունից եւս Րաֆֆին հետաքրքրական տեղեկություններ է թողել՝ թվարկելով իր երթուղում հանդիպած բուսատեսակները: Գանձակի շրջակայքում նկատել է հսկա չինարիներ, նռենիներ, թզենիներ, խաղողի տունկեր, վարսավոր միմոզաներ: Գյուլիստանի մոտակայքում հիշատակում է հոնի, զկեռի, կաղնու եւ տանձենու թփերն ու ծառերը, իսկ Գետաչենի մոտ՝ վիթխարի ընկուզենիները: Հացահատիկային մշակաբույսերի՝ ցորենի, գարու, կորեկի եւ բրնձի ցանքեր է տեսել Սալահլուի եւ Շամքորի մոտակայքում:

Ճանաչողական արժեք ունեն "Ուղեգրության" հեղինակի՝ տեղանվանական աշխարհագրության բնագավառին վերաբերող դիտարկումները: Նա ստուգաբանում է շատ բնակավայրերի անուններ, նշում նրանց առաջացման ենթադրյալ կամ ավանդության վրա հիմնված պատճառները, տալիս անվանման զուգահեռ ձեւերը, որոնցից շատերը մինչեւ այժմ էլ գործածական են:

Խոսելով Մեծ-չեն եւ Մոխրաթաղ գյուղերի մասին՝ նշում է, որ թուրքերը դրանք համապատասխանաբար անվանում էին Ուլու-Կարաբեկ եւ Քեչիկ-Ղարաբեկ: Անդրադառնալով Զարդախլու հայաբնակ գյուղին՝ հիշատակում է նրա հին անվանումը՝ Մղավուզ:


Հենվելով ժողովրդական ավանդության վրա՝ Րաֆֆին մեկնաբանում է, որ Դաստակիր գյուղն իր անունը ստացել է ի պատիվ Վաչագան Թագավորի աղջկա՝ Դաստագյուլի:

Խարխափուտ հայաբնակ գյուղի անունը գրողը կապում է համանուն ձորակի հետ՝ ենթադրելով, որ ձորով անցնող ճանապարհը խարխափելով է տանում դեպի Գյուլիստան:

Մի քանի գյուղերի մասին խոսելիս Րաֆֆին տալիս է նաեւ նրանց մյուս անվանումները: Օրինակ՝ Հին Թալիշ կամ Թարիջ, Թոռոտա-յուղակեր, Կարաչինար-Աղջակալա կամ Սպիտակ բերդ: Նշում է, որ Հաջի-քենդը եղել է հայկական Հաջի-չեն անվամբ բնակավայրը:

Ինչպես տեսնում ենք, տեղեկությունները, որ թողել է Րաֆֆին, ընդգրկում են աշխարհագրության ամենատարբեր ոլորտները՝ էթնոաշխարհագրություն, պատմական աշխարհագրություն, ֆիզիկական աշխարհագրություն եւ լանդշաֆտագիտություն, սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, կենսաշխարհագրություն, գեոմորֆոլոգիա, տեղանունների աշխարհագրություն: Դրա շնորհիվ դրանք այսօր նաեւ գործնական նշանակություն են ձեռք բերում՝ օգնելով բազմակողմանիորեն բացահայտելու եւ ճշգրտելու աշխարհագրական այն բոլոր փոփոխությունները, որ տեղի են ունեցել մեր տարածաշրջանում Րաֆֆու ժամանակներից՝ այսինքն 19-րդ դ. երկրորդ կեսից մինչեւ մեր օրերը:

Թիմոթի Նագել. *Իսլամական աստվածաբանության պատմություն. Մուհամմադից մինչեւ օրս. Փրինսթոն: «Markus Wiener Publishers», 1999. - 322 էջ, անգլերեն*



Աշխատությունը իսլամական աստվածաբանության համեմատական, ընդգրկուն մեկնության նորօրյա փորձ է: Իսլամի ծագման, Ղուրանի կազմավորման եւ հիմնական թեմատիկայի (աստվածային նախախնամությունը, մարդ էակը, մարդկային հոգու փրկության գաղափարը եւ այլն) հիմնահարցերը հանգամանորեն ներկայացնելուց հետո հեղինակը դիտարկում է իսլամի հետագա զարգացման պատմությունը՝ Մարգարեի մահից (632 թ.) մինչեւ Օմայյան հարստության անկումը:

Իսլամի հիմնական ուղղությունների լուսաբանումը գրքում չի սահմանափակված միայն դրանցից առավել տարածում ունեցող սուննիզմի եւ շիիզմի սկզբնավորմանը եւ տեղակայմանը վերաբերող ծավալուն անդրադարձներով: Այստեղ ուշագրավ են խարիջականության առաջացման գործոնների եւ գաղափարաբանության առանձնահատկությունների վերլուծությունները: Գրքի մի առանձին գլուխ նվիրված է մահմեդական աստվածաբանական գրականության երկու տեսակներին՝ *հադիսներին* Մուհամմադի եւ նրա մերձավորների կյանքի ու գործունեության մասին պատումներին, եւ *քալամին* մահմեդական աստվածաբանության մեջ ռացիոնալիստական գրականությանը: Եթե հադիսներն ունեն դոգմատիկ բնույթ, ապա քալամը զարգացնում է իր դրույթները մետաֆիզիկական մեթոդներով: Թ. Նագելը քննում է իսլամի հիմնական դրույթը հանդիսացող Աստծո եզակիության գաղափարը՝ մոնոթեիզմը, իսլամի եւ գնոստիցիզմի փոխհարաբերությունները: Չնայած հետագոտության հիմնական առարկան իսլամի վաղ զարգացումն է՝ 9-12 դդ., ցույց են տրվում նաեւ այն ուղիները, որոնցով մուսուլմանները, սերնդե սերունդ փոխանցելով իրենց կրոնը, հասցրել են մեր օրորը: Գրքում զետեղված է իսլամական փիլիսոփայության պատմության ակնարկ, ուր ներկայացվում են մահմեդական աշխարհի հիմնական մտածողներն ու նրանց հայացքները: Գրքի յուրաքանչյուր գլուխ ունի թեմային վերաբերող լրացուցիչ գրականության մանրամասն ցանկ: Աշխատության տեղեկատվական համակարգը ամբողջացնում են դեպքերի ժամանակագրությունը եւ արաբական տերմինների բառարանը:

Մ.Ա.

موسيس خوريناتسي. تاريخ الارمن، من البدايه حتى القرن الخامس، دمشق، ١٩٩٩، ٣١٢ ص.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ "ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ"-Ի ԸՐԸՆԵՐՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Միջնադարյան Հայաստանի ազգային-մշակութային նշանավոր գործիչների շարքում իր ուրույն տեղն ունի Մովսես Խորենացին: Նրա "Պատմություն Հայոց"-ը հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրելու առաջին փորձն էր, որը չերկրորդվեց մինչեւ 18-րդ դարի վերջերը: 1500 տարի է, ինչ Խորենացու երկը ծառայում է որպես պատմության ձեռնարկ. հարյուրավոր սերունդներ դաստիարակվել են նրանով: Անգամ այսօր այն ավելի քան արդիական է, այն նաեւ ապագայի գիրք է, հավերժական գիրք, միշտ թարմ ու նոր, միշտ իմաստուն եւ ուղեցույց:

Անշուշտ, սրանով պետք է բացատրել այն տեւական մեծ հետաքրքրությունը, որ ինչպես մեզանում, այնպես էլ օտար երկրներում ցուցաբերվում է Մովսես Խորենացու "Հայոց պատմության" նկատմամբ: Խորենացու անձի եւ գործի վերաբերյալ ստեղծվել է վիթխարի գրականություն: Ոչ մի հայ գործչի մասին այնքան չի գրվել, որքան նրա, ոչ մի պատմիչի երկասիրությունը այնքան չի հրատարակվել եւ թարգմանվել, որքան նրա "Պատմություն Հայոց"-ը:

Խորենացու "Պատմության" բնագիրն առաջին անգամ տպագրվել է 305 տարի առաջ՝ 1695 թ., Ամստերդամում: Այնուհետեւ այն ունեցել է եւս 17 հրատարակություն (Լոնդոն, Վենետիկ, Փարիզ, Թիֆլիս, Երեւան, Դելմար), թարգմանվել է աշխարհաբար (ունեցել է 12 հրատարակություն, այդ թվում՝ արեւմտահայերենով), ինչպես նաեւ բազմաթիվ լեզուներով՝ լատիներեն (1723, 1736), ռուսերեն (1809, 1858, 1893, 1990), ֆրանսերեն (1836, 1841, 1845, 1869, 1993), իտալերեն (1841, 1850), գերմաներեն (1869), հունգարերեն (1892), անգլերեն (1978, 1980), վրացերեն (1984), պարսկերեն (1984): Բացի վերս նշված թարգմանություններից, կատարվել են նաեւ աշխարհաբար եւ օտարալեզու (քսանչորս տարբեր լեզուներով) հատվածական թարգմանություններ: Անկասկած, Խորենացու "Հայոց պատմությունը" առաջիկայում կունենա նոր թարգմանություններ եւս, եւ էլ ավելի կընդարձակվեն Պատմահոր երկի գիտական շրջանառման սահմանները: Դրա ապացույցն է վերջերս կատարված արաբերեն թարգմանությունը, որը նշանակալից երեւույթ է խորենացիագիտության 300-ամյա պատմության մեջ, թարգմանություն, որը վաղուց էր ակնկալվում:

Սիրիայի Արաբական Հանրապետության մայրաքաղաքում անցած տարվա սեպտեմբերին "Իշբիլիա" հրատարակչությունը լույս է ընծայել Մովսես Խորենացու "Պատմության" արաբերեն լիակատար թարգմանությունը՝ 310 էջանոց գեղատիպ մի հատորով: Սա Խորենացու երկի արաբերեն առաջին ամբողջական թարգմանությունն է: Արտաքին չապիկները գունավոր են. դրանք պատրաստել է սիրիացի ճանաչված արվեստագետ Ջամալ ալ-Աբթահը: Հատորի գեղարվեստական խմբագիրներն են Աբիր Ռոստոմը եւ Ամեր Հակկին: Թարգմանությունը կատարել է վաստակաշատ թարգմանիչ եւ ուսուցիչ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Նիզար Խալիլին:

Ո՞վ է հայոց Պատմահոր երկի թարգմանիչը եւ ի՞նչ վաստակ ունի նա հայ-արաբական մշակութային առնչությունների բնագավառում:

Նիզար Խալիլին ծնվել է Հալեպում, 1925 թ., ուսուցչի ընտանիքում: Ավարտել է տեղի "ալ-Մութանաբբի" եւ "Սեյֆ ուլ-Դաուլա" վարժարանները, ապա պետության կողմից նշանակվել է Հալեպի "Զավարյան" վարժարանի արաբերեն լեզվի ուսուցիչ: Այստեղ էլ կայացել է նրա առաջին լուրջ ծանոթությունը հայկական միջավայրի, հայոց լեզվի եւ գրականության հետ: Հայ երեխաներին արաբերենը սովորեցնելու ընթացքում, ինքնակամ սովորել է հայերենը իր իսկ աշակերտներից: 1947-83 թթ. աշխատել է Սիրիայի երկաթուղու Հալեպի վարչությունում: Որոշ ժամանակ հետեւել է Հալեպի համալսարանի իրավաբանական եւ Լիբանանյան համալսարանի գրականության ֆակուլտետների դասընթացներին: Իր թարգմանական վաստակի համար արժանացել է Հալեպի, Դամասկոսի, Կամիշլիի, Բեյրութի հայկական կազմակերպությունների ու մտավորականության, ինչպես նաեւ Հայաստանի պաշտոնական շրջանների գնահատանքին: Ռուսաստանում, Հայաստանում, Վրաստանում եւ Ադրբեջանում մասնակցել է գիտական համագումարների եւ գիտաժողովների: Վրաց գրականությունից կատարած թարգմանությունների համար 1998 թ. Թբիլիսիի Ասիայի եւ Աֆրիկայի ինստիտուտը նրան շնորհել է պատվավոր պրոֆեսորի կոչում:

Խորենացու "Պատմություն Հայոցը" Նիզար Խալիլի հրատարակված գործերից թվով 35-րդն է եւ 28-րդը՝ հայ հեղինակներից նրա կատարած թարգմանություններից: Դրանք վերաբերում են ամենատարբեր բնագավառների (Հայոց պատմության սկզբնաղբյուրներ, գրականագիտություն, բժշկագիտություն, վրաց գրականություն): Սակայն Խալիլի-թարգմանչի հետաքրքրություններում հիմնական եւ առաջնային տեղ է գրավում հայ դասական եւ ժամանակակից գեղարվեստական գրականությունը:

Մովսես Խորենացու "Պատմություն Հայոց"-ի արաբերեն թարգմանության հատորը բացվում է թարգմանչի նեռածական խոսքով: Այստեղ թարգմանիչը հակիրճ տեղեկություններ է հաղորդում Խորենացու կենսագրության մասին (ծնունդը, ուսումնառությունը, գործունեությունը), ապա գնահատում է նրա վաստակը, մասնավորապես "Պատմություն Հայոց"-ը: Նա արդարացի է գտնում Խորենացուն տրված "Հայոց պատմահայր" եւ "Հայոց Հերոդոտոս" պատվանունները (էջ 5): Ապա համառոտ ներկայացնում է անցյալ դարում "Պատմության", մասնավորապես,

նրա սկզբնաղբյուրների մասին ծագած բանավեճը, որն, ինչպես Նիզար Խալիլին է նշում, ավարտվեց Խորենացու "արդարացումով", եւ պատմահայրն այս գրքով վերստին իր արժանի տեղը գրավեց իր ժամանակի պատմիչների շարքում (էջ 5): Ի դեպ, Ն. Խալիլին Խորենացուն անվերապահորեն համարում է 5-րդ դարի հեղինակ: Այնուհետեւ, երկու էջի սահմաններում, Ն.Խալիլին անդրադառնում է "Պատմության" հեղինակման, ինչպես նաեւ իր կատարած թարգմանության հանգամանքներին: Նա գրում է, որ հայերենի արդի երկու ճյուղերի առաջացումից հետո սկսվեց՝ գրաբար գրականությունը ժողովրդին հասկանալի դարձնելու մի հզոր շարժում: Այս գործընթացում Խորենացու "Պատմությունն" արժանացավ գրաբարից արեւելահայերեն ու արեւմտահայերեն բազմաթիվ վերածումների, որոնցից վերջինը Ստեփան Մալխասյանի թարգմանությունն էր, որը հրատարակվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի կողմից (էջ 9): Ն. Խալիլին հայտնում է, որ իր մեջ "Պատմությունը" թարգմանելու ցանկություն է առաջացել՝ "նրա հրաշք կարեւորության եւ նրա ու 12-րդ դարի արաբ հեղինակ Մուհամմադ բեն Ալի ալ-Ազիմի ալ-Հալապիի "Հալեպի պատմությունը Ադամից մինչեւ հիջրեթի 538 թվականը" գրքի միջեւ մեծ նմանության բերումով" (էջ 9): Նա գրում է, որ թարգմանությունը սկսել է 1997 թ.՝ ձեռքի տակ ունենալով "Պատմության" բնագրի վենետիկյան 1881 թ-ի հրատարակությունը՝ մեկդի թողնելով, սակայն, մխիթարյան հայրերի ծանոթագրությունները: Նա ավելացնում է, որ այս հրատարակությունից իր կատարած թարգմանությունը համեմատել է Մալխասյանի վերոհիշյալ թարգմանության հետ, որի մեծաթիվ ծանոթագրություններից ընտրել է միայն այն 80-ը, որոնք, իր կարծիքով, կարող են ճանաչողականությամբ օգտակար լինել արաբ ընթերցողին (էջ 9): Ն. Խալիլին հայտնում է նաեւ, որ "Պատմության" տեքստում տեղ գտած Ս. գրային հղումներն ինքը ստուգել եւ ղրանք մեջբերել է արաբական համապատասխան հրատարակություններից:

Ներածական խոսքին հաջորդում են թարգմանչի համառոտ կենսագրությունը (էջ 10) ու նրա՝ հրատարակված թարգմանությունների մատենագիտական ցանկը (էջ 11-12):

Պետք է ասել, որ թարգմանությունը կատարվել է բավականին բարձր որակով, հատկապես, եթե նկատի ունենանք, որ Պատմահոր ընդգրկած ժամանակաշրջանը շատ ընդարձակ է, եւ այնտեղ հիշատակվող բազմահազար տեղանուններն ու անձնանունների մեծ մասն անծանոթ կամ անհայտ է արաբ շարքային ընթերցողին: Թարգմանիչը, հազվադեպ, հարկ է համարել էջատակի հղումներով ներկայացնել իր կարծիքը (նույնիսկ Մալխասյանի որոշ ծանոթագրությունների վերաբերյալ): Այսպես, օրինակ, Մալխասյանի կողմից "Հրաչյա" անվան բացատրությունը ծանոթագրության տեսքով ներկայացնելը համարում է սխալ եւ ավելացնում, "...Շարադրանքը ցույց է տալիս, որ այն պատմաբան Խորենացու գրչին է պատկանում" (էջ 63): Այսինքն՝ Խալիլին ձգտել է քննադատաբար մոտենալ իր օգտագործած աղբյուրներին:

Այնուամենայնիվ, թարգմանված նյութը չարոզի եւ նույնինքն թարգմանչի մեղքով, ցավոք, թույլ են տրվել վրիպումներ ու սխալներ, որոնցից կարելի կլիներ խուսափել բարեխիղճ խմբագրի առկայության դեպքում: Համեմատաբար մեծ թիվ են կազմում տեխնիկական վրիպակները (տառերի բացթողումներ, տարընթերցումներ եւ այլն): Ներկայացնենք ղրանցից մի քանիսը միայն "Տիկատոֆ" փոխանակ "Նիկատոր"-ի (էջ 8), "Մուրացյան" փոխանակ "Մուրացան"-ի (էջ 148), "Ալկունի" փոխանակ "Սլկունի" (էջ 135), "Ոգնայր" փոխանակ "Ուռնայր"-ի, "Արշատ" փոխանակ "Արտաշատ"-ի (էջ 244), "Ագաթանգեղոս" փոխանակ "Ագաթանգեղոս"-ի (էջ 257): Թարգմանչի վրիպումներից կարելի է հիշատակել "Անտիոք" փոխանակ "Անդովկ"-ի (էջ 229), "Արտաթիոս" փոխանակ "Արտագերս"-ի (էջ 236): Անհարկի թարգմանվել է "Աղիովիտ" տեղանունը, որը դարձել է "Ուռդի աղ", այսինքն՝ "Աղի հովիտ" (էջ 228): Քիչ չեն նաեւ տարընթերցումները. այսպես, Կամսարականները մեկ ներկայացվում են "Կամսարական", մեկ այլ տեղ՝ "Կամսարիին" (էջ 236) ձեւով, "Նախջեւանը" (էջ 143) "Նախջիվան" ձեւով: Միանգամայն մերժելի են "Ատրպատական", "ատրպատականյան" ճիշտ ձեւերի "Ադրբեջյան", "ադրբեջանական" տեղանվանական նույնացումները (էջ 93, 285 եւն): (Այս նույնացումների մերժելիությունը հիմնավորված է գիտականորեն թե՛ մեր, եւ թե՛ օտար մասնագետների կողմից: Տե՛ս Энаят оллa Реза. Азербайджан и Аран, Ер., 1993. - խմբ.): Հանդիպում են նաեւ անձնանունների եւ տեղանունների թարգմանությունների՝ արաբերենում ընդունված ձեւերին չհամապատասխանող ձեւեր, ինչպես "Կրետե" (էջ 55) փոխանակ ճիշտ "Կրիտ"-ի, "մամլակատ պարթեւ" (էջ 85) փոխանակ "մամլակատ ալ-բարսիին"-ի, "Դարեհ" (բազմաթիվ էջերում) փոխանակ "Դարիուս"-ի եւն; կան նաեւ անձնանուններ՝ խոսակցական արեւմտահայերենում ընդունված հնչատարբերակով (օրինակ՝ "Դիկրան" փոխանակ "Տիգրան"-ի): Սրանից զատ, հենց ներածականում, Նիզար Խալիլին թույլ է տվել նաեւ մի էական վրիպում, առանց անդրադառնալու հայոց լեզվի զարգացման պատմության իրողություններին, բառացիորեն գրում է, որ "Սկսած 1895 թ-ից դեպի հարավ եւ արեւմուտք հայոց գաղթերից հետո, նրանք (մի խումբ հայ մտավորականներ - Պ.Հ., Գ.Ց.) հորինեցին արեւելահայերենից քիչ տարբերվող խոսակցական մի լեզու" (նկատի ունի արեւմտահայերենը - Պ.Հ., Գ.Ց.) (էջ 8): Ներածականում սխալ է թարգմանվել նաեւ "Պիտոյից գրքի" վերնագիրը (էջ 7):

Այդուհանդերձ, նման սխալները (որոնց մի մասից, թերեւս, դժվար էր խուսափել) չեն նսեմացնում այն հսկայական աշխատանքը, որը կատարել է Նիզար Խալիլին: Նրա այս թարգմանությունն, անշուշտ, իր արժանի տեղը կգտնի Խորենացու "Պատմության" մեծաթիվ թարգմանությունների եւ հրատարակությունների ընտրանիում:

Իր ծննդյան 75-ամյակը բոլորող Նիզար Խալիլին այս թարգմանությամբ պսակագործում է թարգմանչական այն ծաղկաչղթան, որով նա իր տքնաչատ խոնարհումն է բերել մեր ժողովրդի դպրությանը՝ որպես ոգեղեն առհավատչյա հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր բարեկամության:

Մեր ժողովուրդը միշտ արժանին է մատուցել իր բարեկամներին:

Պետրոս Հովհաննիսյան, *պատմ. գիտ. թեկնածու,*

Գեւորգ Յազըճյան

ՂԱՁԱՐՆԵՐ

Իրանի ղաջարյան հարստության պակաս հայտնի էջերին վերաբերող՝ ստորեւ ներկայացվող հրապարակումը իրանահայ հանգուցյալ բառարանագետ Վարդան Հարությունյանը քաղվածաբար պատրաստել է ըստ անգլիացի հայտնի պետական եւ քաղաքական գործիչ Ջորջ Քերզոնի (1859-1925) «Իրանը եւ իրանյան հարցը» երկի:

Սկանատեսի դիտողականությամբ (Քերզոնը 1889 թ. վեց ամիս եղել է Իրանում «Թայմս» լրագրի թղթակիցը) մատուցված տեղեկատվությունը, ակներեւաբար, այսօր չի կորցրել ճանաչողական արժեքը:

*Նյութը «Իրան-Նամէին» է տրամադրել իրանահայ մտավորական պրն **Էմիլ Հակոբյանը** (Թեհրան):*

Խմբ.

Անգլիացի քաղաքական գործիչ եւ պետական բարձրաստիճան պաշտոնյա Լորդ Քերզոնը 1889 թ. աշնանը, որպես «Թայմս» թերթի թղթակից այցելել է Իրան, եւ վեց ամիս շարունակ շրջել երկրի մի ծայրից մյուսը, ապա վերադառնալով Անգլիա՝ երկու տարվա ընթացքում իր ուսումնասիրությունները գրի է առել ու հրատարակել երկու հատորից բաղկացած շուրջ 1300 էջանոց գրքով՝ «Իրան եւ իրանյան հարց» վերնագրով:

Անվանի մտավորական Ալի Ջավահեր-քալամը, այդ աշխատության անգլերեն բնագիրը, որոշ հապավումներով, ինչպես ինքն է գրում, թարգմանել է պարսկերենի. թարգմանության երրորդ տպագրությունից (1347 / 1968 թ.) քաղվածաբար տալիս եմ Նասրեդդին շահին եւ նրա գերդաստանին վերաբերող մասը:

Հայ ընթերցող հասարակայնության համար հետաքրքրությունից զուրկ չի լինի ծանոթանալ 19 դ. Իրանի ներքին կյանքին ու անցուդարձերին եւ համեմատելով այսօրվա Իրանի հետ՝ ըստ արժանվույն գնահատել այն հսկա առաջադիմությունը, որը տեղի է ունեցել Իրանում, պատմության մեջ նախընթաց չունեցող արագությամբ:

Վարդան Հարությունյան

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՏՈՀՄԸ

Իրանում ղաջարյան դինաստիան իշխանության գլուխ է անցել մոտավորապես 18-րդ դարի վերջերին: Նասրեդդին շահը տոհմի չորրորդ թագավորն է: Ղաջարյան ցեղի ծագման մասին պարսիկ հեղինակները լույս են ընծայել բավականաչափ գրքեր, որոնց մեջ ծայրահեղության հասնելով՝ Ղաջար տոհմը, առանց պատմական փաստերի, հասցնում են մինչեւ Նոյ նահապետի որդուն՝ Հաբեթին: Պատմական հիմնավոր տվյալների համաձայն, ղաջարյան տոհմի պատմությունը ծանոթ է 700 տարուց ի վեր: Առաջին հիշատակությունը վերաբերում է այն իրողությանը, որ Ղաջարյան մի իշխան, Զինգիզյան թագավորներից մեկի կողմից նշանակված է լինում Ռեյի իշխանության գլուխ, որի տիրույթի սահմանները հասնում էին մինչեւ Ջեյհուն գետը:

Ամիր Թեյմուրի ժամանակ ղաջարյան տոհմը քաղաքական պատճառներով աքսորվեց Սիրիա: Կարճ ժամանակից հետո, եթե ոչ բոլորը, ապա մի մասը, վերադարձավ Իրան եւ օժանդակեց Սաֆավյան հարստության հիմնադրմանը: Իրանցի պատմիչները հաղորդում են, որ շահ Էսմայիլ Սաֆավիի մայրը ղաջարներից է եղել, ինչը ճիշտ չէ: Նրա մայրը Ուզուն Հասանի Մարթա անունով աղջիկն էր, իսկ Մարթայի մայրը՝ Դեսպոտիա անունով, Տրապիզոնի քրիստոնյա կայսրի աղջիկն է եղել:

Շահ Էսմայիլի որդի Թահմասպի ժամանակ, որպես վարձատրություն Սաֆավիների հանդեպ ղաջարների ցուցաբերած ծառայությունների, վերջիններիս իշխաններից մեկը նշանակվում է Ղանդահարի նահանգապետի պաշտոնին, իսկ մի ուրիշն ուղարկվում է Կոստանդնուպոլիս՝ որպես դեսպան:

Այնուհետեւ, ղաջարները Սաֆավիների կողմից չարունակ հովանավորվում էին, մինչեւ որ Շահ Աբբաս Մեծի օրոք Հասան Հզորության գագաթնակետին եւ իրենց բազմությամբ եւ ուժով սկսեցին լուրջ անհանգստություն պատճառել ժամանակի իշխանությանը: Դրա հետեւանքը այն եղավ, որ Շահ Աբբասի հրամանով նրանց բաժանեցին երկու խմբի. մի խումբը լեզգիների շահատակությունների առաջն առնելու պատրվակով ուղարկվեց Դաղստան, իսկ մյուսը տեղափոխվեց Մերվ եւ Խորասան՝ թաթարների դեմ կռվելու:

Գորգանում մնացած ղաջարների մի խմբից է, որ սերել է Իրանյան արքայական դինաստիան: Գորգանում հաստատված ղաջարներից Աղա Մոհամմադ խանի պապ՝ Ֆաթհալի խանը Շահ Թահմասպ երկրորդի ժամանակ հասավ սփահսալարի (սպարապետի) աստիճանի եւ քիչ էր մնացել, որ Շահ Թահմասպին վաներ ասպարեզից: Նաղեր Ղուլի խանը՝ հետագայում Նաղեր Շահ Աֆշարը, կանխեց այդ եւ Ֆաթհալի Խանին ոչնչացրեց: Նաղեր շահի սպանվելուց հետո, նրան փոխարինող Ադել Շահ Աֆշարը, որ Նաղեր Շահի եղբոր որդին էր, Աղա Մոհամմադ Խանին վտանգավոր համարեց եւ, ժամանակի սովորության համեմատ, ներքինացրեց նրան:

Այս հանգամանքը, սակայն, Ղաջար տոհմի սերնդի աճի եւ բազմանալու առաջը չառավ. ընդհակառակը, նրանց թիվն այնպես բազմապատկվեց, որ կարելի է համաշխարհային պատմության բացառիկ երեւույթներից մեկը համարել: Իրանցիներն ասում են, որ ղաջարները հինգ ցեղային առանձնահատկություններ ունեն. առաջին՝ բազմածնություն, երկրորդ՝ մարզանքի եւ նշանառության սեր, երրորդ՝ բարեձեւ մարմնակազմ, չորրորդ՝ ուշիմություն, հինգերորդ՝ ժուժկալություն եւ խնայասիրություն:

Բոլոր այս հատկությունները առավել կամ պակաս չափով առկա են արեւելյան քոչվոր ժողովուրդների մեջ:

ՆԱՍՐԵԴԴԻՆ ՇԱՀ

Նասրեդդինը ծնվել է 1831 թ. հունիսի 17-ին: Իր հայրը՝ Մոհամմադ Շահը, երբ 1834-ին բազմեց արքայական գահին, եռամյա որդուն կարգեց թագաժառանգ եւ նշանակեց Ատրպատականի նահանգապետության պաշտոնին:

1838-ին գնդապետ Ստյուարտը, որ անգլիական մի հանձնախմբի հետ եկել էր Իրան, հանդիպել է Նասրեդդինին թագաժառանգին եւ նրա մասին այսպես գրել. "Իրանի գահաժառանգ Նասրեդդինը իր հորեղբոր նման, մեզ ընդունեց հեռվից, պատուհանի առաջ նստած: Այս հանդարտ տղան, որ մի օր դառնալու է համայն Իրանի տերն ու տնօրենը, թվում է, որ շատ ամաչկոտ եւ թախծոտ է: Նա շատ սիրուն դեմք ունի. կարող եմ ասել մինչ այդ ես նման գեղեցիկ դեմք չեմ տեսել: Ծառաները սենյակ մտնելուն պես մեզ մեծարում էին մինչեւ գետին խոնարհվելով եւ թեյ, օշարակ ու քաղցրեղեններ էին բերում մեզ համար: Իրանի թագաժառանգը թեյ խմելուց հետո տեղից բարձրացավ եւ իր գեղեցիկ երեսը, որ Աստծով մի օր պիտի մազակալի, մի քանի անգամ լվաց: Ինչպես ասել են ինձ, այս սիրուն թագաժառանգը հոր համակրանքը չի վայելում: Աբբաս Միրզան՝ Նասրեդդինի մյուս եղբայրը, հոր եւ, անգամ, մոր կողմից ավելի սիրված է: Մոհամմադ շահն իր գահաժառանգի նկատմամբ այնքան անտարբեր է եղել, որ նրա ռոճիկը ուշացումներով է ուղարկել, այդ պատճառով արքայազնը ընկնելիս է եղել պարտքի տակ եւ ամեն օր իր ծառաներից փոխառություն է վերցրել":

Գնդապետ Ստյուարտի այս տեղեկությունը Մոհամմադ շահի՝ դեպի Նասրեդդինն ունեցած անտարբերության եւ Աբբաս Միրզայի նկատմամբ տածած համակրանքի մասին ճիշտ է: Մոհամմադ շահը Աբբասին այնքան է սիրում, որ նրան չնորհել էր "Նայեբ օլսալթանե" (թագավորի օգնական) տիտղոսը: Միեւնույն տիտղոսը Նասրեդդինը գահ նստելուց հետո տվել էր իր երրորդ որդի Քամերան Միրզային: Նասրեդդինը ուշի ուշով հետեւում էր հոր՝ իր նկատմամբ ցուցաբերած անտարբերությանը եւ եղբոր վերաբերմամբ ունեցած ուշադրությանը: Հենց որ հայրը մահացավ, եւ ինքը դարձավ անսահման իշխանության տեր, իր հարազատ ու դժբախտ եղբորն աքսորեց Իրան: Նրա աքսորն ու թափառական վիճակը բավական երկար տեւեց. շատ հետո մի շարք բարեխոսությունների չնորհիվ էր, որ Աբբաս Միրզային թույլատրվեց գալ Թեհրան եւ ապրել կղզիացած կյանքով:

Արեւելյան իշխանությունների այս վերաբերմունքը եղբայրների, որդիների եւ այլ հարազատների հանդեպ, ընդհանուր է եւ սովորական: Անշուշտ, Իրանում էլ, իր չափով, այդ սովորությունն ընդունված է եղել. պարզ է՝ պալատականների նենգությունները ու ազդեցիկ մարդկանց փոխադարձ շահերի բախումները պատճառ էին դառնում ամեն տեսակ անկարգությունների եւ ըմբոստությունների եւ մինչեւ անգամ նպաստավոր հող էին պատրաստում զանազան ոճիրների համար: Արեւելքի բռնակալ թագավորները, իրենց դիրքն ամրացնելու եւ ապահովելու համար, չէին տատամսում հարազատ զավակների ու արյունակիցների նկատմամբ գործադրել ծայրահեղ դաժանություններ:

Այսպես, Մոհամմադ շահը գահ բարձրանալուն պես իր դեմ տեսավ հորեղբայրների, հորեղբոր որդիների, եղբայրների, հեռու եւ մոտիկ արյունակիցների մի հսկա բանակ, ուստի իր պալատական քաղաքականությունը սեղմեց եւ շրջանակեց երեք սկզբունքներով՝ "գուր, քուր, դուր" (գերեզման, կուրություն, հեռավորություն) եւ, առաջնորդվելով այս սկզբունքով՝ հակառակորդների մի մասին թաղեց գերեզմանում, մյուս մասին կուրացրեց, մնացածներին էլ արտաքսեց երկրից:

Բինինգ անունով մի այլ անգլիացի զբոսաշրջիկ, որ 1851-ին Իրանում է եղել, տեսել է Նասրեդդին շահին իր թագավորության սկզբնական շրջանում եւ հետեւյալն է պատմում. "Նասրեդդին շահն այժմ 22 տարեկան է, սակայն արդեն ունի մի քանի զավակ: Թագավորի դեմքը շատ գունատ է եւ թառամած: Թեեւ այդ դեմքը վանող եւ տհաճ չէ, բայց գեղեցիկ էլ չէ. նա պահում է բարակ ընչացք. մորուքը բեխերի չափ չի աճել, եւ, առհասարակ, երկուսն էլ ցանցառ են":

Ինչպես պարզվում է, այս երկու զբոսաշրջիկների նկարագրությունները հակասական են, մինչդեռ նրանց ճամփորդության ժամկետները միմյանցից միայն մի քանի տարվա տարբերություն ունեն:

Նասրեդդինը թեեւ Ֆաթհալի շահի եւ Աբբաս Միրզայի նման բարեճաշ ու բարեկազմ չէ, սակայն նրա կազմվածքը եւս արքայավայել չէ: Հակառակ Մոհամմադ եւ Ֆաթհալի շահերի, նա դեմքն ածիլում է՝ հետեւելով Սաֆավի թագավորների օրինակին եւ, հակառակ իր վաթսուն տարիներին, շատ աշխույժ եւ ճապուկ է: 1889-ին Եվրոպայից վերադառնալիս, նա սաստիկ հիվանդացավ եւ բան չէր մնացել, որ Թավրիզում մահանար: Եվրոպացի մի քանի բժիշկների չնորհիվ առողջացավ եւ, տարօրինակն այն է, որ այդ ծանր հիվանդությունից հետո, այնպես կազդուրվեց, որ հետագայում սկսեց ավելի երիտասարդ տպավորություն թողնել:

Մաշհադից անցնելի տեսա նրա փոքր եղբորը՝ Ռոքնեդդօվլեին, որ Խորասանի նահանգապետն էր՝ մազերը ճերմակած եւ դեմքը թառամած: իսկ Նասրեդդինը, որ նրանից երեք տարով ավելի մեծ էր եւ գլխի ու բեխերի մազերը ներկով ու հինայով էր սեւացնում, նրանից շատ ավելի երիտասարդ էր երեւում: Նասրեդդինը արեւելյան բոլոր թագավորների, հատկապես Իրանի արքաների նման, իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում մայրաքաղաքից հեռու. Իրանի թագավորները որսորդության մեծ սեր ունեն: Սաֆավի թագավորներն իրենց կյանքը սահմանափակում էին գինարբուքներով, սիրային վայելքներով եւ այլ զվարճություններով: Նասրեդդինը հետեւում էր նրանց օրինակին: Նա Ֆաթհալի շահի եւ Աբբաս Միրզայի նման հաջողակ նետաձիգ ու ճարպիկ ձիավոր էր, որոնք մանկությունից էր սովորել եւ իր ամենօրյա զբաղմունքն են:

Նասրեդդինի բնավորության աչքի ընկնող գծերից էր եվրոպացիների նկատմամբ ունեցած արտակարգ համակրանքը եւ նրանց հյուրասիրելու մեծ հակումն ու ցանկությունը: Քիչ եվրոպացիներ կզտնվեն, որ Իրանը թողած լինեն առանց շահի սիրալիր տեսակցությունները վայելելու:

Նասրեդդինը Եվրոպայում ճամփորդությունից եւ եվրոպացիների հետ շփում ունենալուց հետո, խուսափում էր արեւելյան ճոխություններից. Եվրոպական առաջին ճամփորդության ժամանակ կրում էր ականակուռ սուր ու ադամանդե ցցունք-ուսադիրներ, մինչդեռ երկրորդ ճամփորդության ընթացքում դրանցից եւ ոչ մեկն այլեւս չկար:

Պատահում էր, որ Նասրեդդինը սովորական հագուստով, ձեռնափայտը ձեռքին քայլում էր Թեհրանի պողոտա-

ներում. ես անձամբ (Լորդ Քերզոնը - խմբ.) մի անգամ այդ պարզությամբ նրան տեսել եմ Թեհրանում:

Հանդիսավոր ու պաշտոնական օրերին, նա նստում էր ութ ձի լծված կառք, իսկ արքայական չքախումբը՝ ձիերի վրա, հետեւում էր նրան: Շքախմբի զինվորները հագնում էին կարմիր գույնի, ոսկեթել բանվածքով հագուստներ, նրանց կարճ հրացանները, վարդագույն մահուդե տոպրակների մեջ կախված էին լինում ուսերից: Շաթերներն (առաջավազներ) ու ֆարրաշները (ծառաները)՝ ձեռքերին արծաթե մահակներ, թեթեւ վազքով ընթանում էին կառքի առջեւից ու կողքերից: Հակառակ այս պերճ ու պաշտպանված երթին, որեւէ հպատակ կարող էր շաթերներին ու ֆարրաշներին մի կողմ հրել եւ շահին աղերսագիր մատուցել:

ՆԱՍՐԵԴԴԻՆԻ ՈՒՍՈՒՄՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Իրանում ուսման ընթացքը սահմանափակվում էր պարսկերեն կարդալ-գրել եւ մի քիչ էլ արաբերեն սովորելով: Նասրեդդինը եւս այս ընդհանուր օրենքից բացառություն չէր կազմում: Իրանցի ուսուցիչների մոտ պարսկերեն գրել կարդալ, մի քիչ՝ արաբերեն, մի քիչ՝ ոտանավորներ, մի քիչ՝ աղոթք եւ Ղուրանի ընթերցում սովորեց եւ տասնվեցամյա տարիքում զավակ ունեցավ. այլ խոսքով՝ նա դեռ մաքթաբում էր (իրանական հնաբնույթ դպրոց) եւ արդեն հայր էր: Մի տարի հետո, երբ 17 տարեկան էր, բազմեց Դարեհից եւ Կյուրոսից ժառանգություն հասած իրանյան արքայական գահին:

Բնականաբար, այս կրթությամբ ու դաստիարակությամբ եւ, որ ամենավատն է, արեւելքի կեղծավոր, չողոքորթ ու ստախոս պալատականների շրջանում, նրանից որեւէ բարի բան ակնկալել չէր կարելի:

Արեւելքի մարդկանց հետ ընկերակցությունն ու շփումը, որոնք թագավորների համար կատարյալ չարիք են, բավական են ամենախնամված դաստիարակությունն անգամ ի չիք դարձնելու համար: Այս բոլորով հանդերձ, Նասրեդդինը այնքան էլ վատը չի եղել: Շրջապատի նենգամիտ պալատականների չողոքորթ խոսքերին շատ էլ ակնկիռ չէր կախում: Թավրիզից Թեհրան հասնելուն պես սկսեց ֆրանսերեն սովորել, արաբերենը կատարելագործեց եւ իր ժամանակի մի մասը հատկացրեց ընթերցանության. նրա ձգտումն էր հըմտություն ձեռք բերել փիլիսոփայական գիտելիքների եւ արեւելքի պատմության մեջ: Զբաղվում էր նաեւ նկարչությամբ, Ատրպատականի թուրքերենը մանկուց գիտեր, այժմ էլ խոսում է այդ լեզվով, իսկ պարսկերենով՝ ոտանավորներ էր հորինում: Իր պապ Ֆաթհալի շահն էլ բանաստեղծություններ էր գրում: Հաճոյամիտ պալատականները Նասրեդդինին ասում էին, որ նա Սաադիից ու Հաֆեզից էլ ավելի բարձր պոետ է, սակայն հազիվ թե այս սնամեջ խոսքին նա կարեւորություն տված լինի: Պատմում են, որ մի համարձակախոս իրանցի Ֆաթհալի շահին ասել է, որ նրա բանաստեղծությունները անհաջող են: Շահն այս արտահայտությունից վիրավորվելով՝ հրամայում է նրան բանտարկել ախոռում՝ անասունների հետ: Պատժից ազատվելուց հետո, երբ մի այլ անգամ իր բանաստեղծությունների մասին նրա կարծիքն է հարցնում եւ սպասում, որ գովեստի պիտի արժանանա, համարձակախոսը լուրջ ճանապարհվում է դեպի ախոռ՝ ցանկանալով ցույց տալ, որ իր կարծիքը թագավորի ոտանավորների մասին անփոփոխ է:



Նասրեդդին շահ Ղաջար

Նասրեդդինը ծայրահեղ ծարավի է նորությունների. ամեն մարդուց եւ ամեն բանի մասին տեղեկություններ է հարցնում. "Թայմզ" եւ "Թան" թերթերը կանոնավորաբար կարդում եւ թարգմանում են նրա համար: Խոշոր իրադարձությունների մասին պահանջում է մեկնություններ եւ բացատրություններ: Նա թողել է մի քանի ուղեգրություններ եւ ճամփորդական հուշագրություններ՝ Եվրոպայի, Մաշհադի եւ Քարբալայի իր ճամփորդությունների մասին, որոնց չարահյուսությունը, եթե իրոք իրենն է, ապա արժանի է գովասանքի: Լոնդոնում եղած ժամանակ օրվա անցուդարձը թելադրում էր գրագիրներին: Հետագայում դրանք գրքի ձեւով հրատարակվել եւ դրվել են ընթերցող հասարակության տրամադրության տակ:

ՋԳՏՈՒՄ ԵՎ ՃԱՇԱԿ

Նասրեդդինի դրական կողմերից մեկը նոր բժշկության նկատմամբ ցուցաբերած վստահությունն է: Նա աշխատում է, որ բոլոր իրանցիները եւս ազատվեն հին բժշկության եւ փալչիների կապանքներից: Նրա պապը՝ Աբբաս Միրզան, այն առաջին անձնավորությունն էր, որ եվրոպացի բժիշկների հանդեպ վստահություն տածեց եւ անգլիացի դոկտոր Քորմիքին վարձեց որպես ընտանեկան բժիշկ: Նրանից հետո իր որդին՝ Մոհամմադ շահը, որն ի ծնե թույլ ու հիվանդվախ մի մարդ էր, ֆրանսիացի դոկտոր Լաբային ընտրեց որպես պալատական բժիշկ: Այժմ, թեեւ անգլիական դեսպանատան բժիշկ Դր. Դիքսընը Թեհրանի բնակչության մեջ լավ համբավ ունի, սակայն թագավորի պալատական բժիշկը ֆրան-

սիացի Դր. Թուլուզանն է:

Իրանի արքան չափազանց երաժշտասեր է եւ ամենից շատ սիրում է զինվորական նվագներ: Ամեն րոպե երկու խումբ երաժիշտներ պատրաստ են շահի սպասին՝ ֆրանսիացի եւ ավստրիացի խմբավարների ղեկավարությամբ նվագելու զինվորական քայլերգեր:

Կուպիտ ու վտանգավոր կատակներ անելու նրա խիստ հակումը, ծայրահեղ սերը դեպի ընտանի ու վայրի կենդանիները, թեթեւամտություններն ու փոփոխամտությունները, ցավոք, ստվերի տակ են առնում նրա նկարագրի մի շարք առնուրանալի դրական կողմերը:

Նրա մանկական թեթեւամտության հետեւանքով էր, որ Եվրոպա ճամփորդության ժամանակ, ամեն անգամ ավելորդ բաներ, օրինակ՝ խաղալիքներ, մեքենաներ, զենք ու զինամթերք, ջրաբաշխական ու երկրագործական մեքենաներ եւ չինանյութեր եւ այլն, եւ այլն, մեծ գումարներ վճարելով՝ գնում ու բերում էին: Ցավալին այն է, որ նախքան դրանք Իրան հասնելը, շահի ցանկությունն էլ մարում էր, ու ապրանքները լցվում էին ամբարները՝ ենթարկվելով փտելու ու ոչնչանալու ճակատագրին:

Իրանի շահը սիրահար էր նորույթների, սակայն մի ցանկություն չուտով տեղի էր տալիս մի այլ ցանկության եւ այսպես չարունակաբար՝ օրական մի քանի անգամ: Այս վերաբերմունքը ցավալիորեն դրսեւորվում էր նաեւ երկրի խոշոր գործերում եւս՝ պատճառ դառնալով երկրի ու ժողովրդի դժբախտության եւ թշվառության:

Հանկարծ որոշում են Թեհրանը լուսավորել էլեկտրականությամբ. անմիջապես արագ ու շտապ կերպով մեծամեծ ծախսերի գնով ճեռնարկում են այն. սակայն մի քանի օրից հետո գազի մասին են մտածում եւ սկսում են դրա վերաբերյալ աշխատանքները, ապա, դա էլ կիսատ թողնելով՝ գնում են նավթի ճրագների հետեւից: Շտապ ու հապճեպ կերպով համալսարանի շենք են կառուցում, հենց որ կառուցումը մոտենում է ավարտին, թողնում են համալսարանը եւ հղանում են հիվանդանոցի միտքը: Սակայն, քանի որ համալսարանի շենքը հիվանդանոցի համար հարմար չէ, ուստի, թողնելով այն՝ հիմնում են հիվանդանոցի շենք: Հիվանդանոցի պատերը վեր չբարձրացրած՝ սկսում են զորանոցի շենքը եւ այսպես չարունակ: Հետեւանքը լինում է այն, որ բոլորն էլ մնում են կիսատ ու անկատար, եւ ժողովրդի առանց այդ էլ լղարիկ գրպանը դատարկվում է ավելի եւս: Այս չաբաթ զորքը պրուսական ձեւով կազմակերպելու հերթն է, այս ամիս՝ դատարանի բարեփոխությունն է եւ օրենքների թարգմանությունն ու մշակումը, եկող ամիս դիվանագիտությունն է վերաքննության ենթարկվում, կարճ ասած՝ իրանյան պետական բոլոր հիմնարկները աղավնիների են նման, խայտաբղետ ճուտերը, դեռ ճվից դուրս չեկած, խեղդվում են, իսկ եթե հասնում են փետրավորվելուն, հենց նույն քնի մեջ էլ մեռնում են: Քիչ դեպքեր են պատահել, որ Իրանում որեւէ բարենորոգություն եռանդով սկսվի եւ նույն թափով ու հուսով ընթանա մինչեւ վերջ:

Ասացի, որ Իրանի շահն իր կատակներով երբեմն հասնում էր վտանգավոր արարքների. Եվրոպայից ստացած զանազան իրերի մեջ մի հատ ռետինե նավակ կար: Շահն իշխաններին ու ազնվականներին, նավակի տարողությունից ավելի չափով, նստեցնում է եւ ինքը ավազանի եզրին կանգնած՝ նավակը վարել է տալիս: Հենց որ նավակը հասնում է ավազանի կենտրոնին, թիավարը շահի ակնարկով բաց է անում օդի դռնակը, նավակը ծանրանում, լցվում է ջրով եւ սուզվում ջրի տակ: Իրանի նախարարներն ու ազնվականներն իրենց փեշավոր ու ծանր հագուստներով թափվում են ջրի մեջ եւ, լողալ չկարողանալով, չխեղդվելու համար օրհասական ճիգեր են անում: Շահը, նայելով նրանց կյանքի ու մահվան տագնապներին՝ քահ քահ ծիծաղում ու հրճվում է: Հայտնի չէ, թե այս տեսարանով նա որքան ժամանակ է զվարճանում եւ ազատելու հրամանը երբ է տալիս:

Ձյունոտ օրերին Իրանի ազնվականները, որոնց համար սովորական քայլելն անգամ դժվար էր, պարտավոր էին շահի ներկայությամբ հեծանիվ նստել կամ դահուկավարել: Անշուշտ, դա նրանց համար հեշտ բան չէր. ընկնում էին գետին եւ հաճախ վնասվում, ինչը շահին զվարճություն էր պատճառում:

Նասրեդդինը կենդանիներ շատ էր սիրում, եւ կատուն բոլորից գերակա էր: Նրա կատուներից մեկը, որ ծերացել էր, տարեկան 400 ստերլինգ հանգստյան թոշակ ուներ: Մի հարմար չենքում, փորձառու խնամատարների հոգածության ներքո այդ կատուն "աղոթելով" շահի արեւշատության համար՝ լիուլի ապրում էր:

Շահի սիրած կատուներից մեկը մի անգամ մտնում է նախարարապետի սենյակը եւ, նստած նրա փեշի վրա, քունը տանում է: Հենց այդ րոպեին կարեւոր գործի համար շահը կանչում է նրան... նախարարապետը ճարահատ ջորբեն (վերարկուի նման հագուստ) զգուշությամբ հանում եւ այդպես ներկայացնում է շահին՝ նրա սիրելի կատվի քունը չխանգարելով: Այս ասպետական ու վայելուչ վարմունքը հասնում է նորին վսեմության ականջին, եւ ահա, որպես արդյունք՝ ավելանում է նրա հարգանքն ու բարձրանում դիրքը:

Շահի երջանիկ կատուներից մեկը արծաթե վանդակի մեջ, հեծանելի ջորու վրա, շահի շքախմբի մաս կազմելով՝ ճամփորդում էր քաղաքից քաղաք: Այս բոլոր կատուներն արքայական խոհանոցից համեղ ուտելիքների հատկացումներ ունեին, եւ մի քանի կին ու տղամարդ ծառաներ, կատուներին հատկացված ճոխ ու առատ սեղանից ինչպես հարկն է, կուշտ ուտում ու վայելում էին կյանքը՝ առանց մտահոգությունների:

Իրանի շահը ուրիշ կենդանիներ էլ էր սիրում. երբ արքայական առյուծներից մեկը կորյուն էր ծնել, շահի նախապես արած կարգադրության համաձայն, ծննդաբերության լուրը հեռագրով տեղեկացրել էին Դովշանթափեից պալատ, ժամ առ ժամ էլ հեռագրով հայտնում էին մայր առյուծի եւ նորածին կորյունի առողջական վիճակի մասին:

ՂՈԼԱՄ ԱԼԻ ԽԱՆ, ԱԶԻԶ-ՕՍ-ՍՈԼԹԱՆ

Սա մի 12-ամյա տղա երեխա էր, որ բոլորի մեջ եւ ավելի, քան կատուները, առյուծներն ու եղջերուները, մինչեւ իսկ ավելի, քան հարազատ զավակները, սիրելի էր շահին: Ղոլամ-Ալի Խանի հորաքույրը, որ ոչ այլ ոք էր, քան մի հասարակ քուրդ աղախին, դարձել էր հարեմի չքեղաշուք կանանցից մեկը եւ արքայական գանձարանի պետը. այս պատճառով շահը նրան անվանում էր "Ամին-է աղդաս" (ամենասուրբ վստահելի):

Վերջինիս եղբայրը, այսինքն Ազիզ-օս-Սոլթանի հայրը, շահի շքախմբի հետ Լոնդոն էր գնացել: Ինչպես արտա-

քոստ, այնպես էլ ներքուստ պարզապես մի քուրդ գյուղացի էր եւ ուրիշ ոչինչ - ապա ինչպե՞ս էր եղել, որ նա ու իր որդին արժանացել էին այդպիսի մեծ ուշադրության: Դրա համար կարիք չկա որեւէ լուրջ պատճառ փնտրել. արեւելքի թագավորների պալատական կարգերին ծանոթ որեւէ մեկը նման երեւույթների առթիվ չի զարմանում: Արքայի ցուցաբերած ուշադրությունն ու անուշադրությունը, համակրանքն ու արհամարանքը որեւէ անձի նկատմամբ բավական է, որ դրա ընտանիքը, երբեմն նաեւ նրա հետ կապվող ամբողջ նահանգը, արժանանա բարեկարգության կամ ընդհակառակը՝ ենթարկվի ավերածության: Արեւելքի ժողովուրդը վարժված է այս իրողության հետ եւ երեւույթը համարում է նախախնամության կարգադրություն եւ անխուսափելի ճակատագիր:

Շահի համակրանքը Ազիզ-օս-Սոլթանի նկատմամբ այն աստիճանի էր, որ եթե նա հիվանդանում էր, շահը բոլոր գործերից ձեռք էր վերցնում ու երկիրը մատնում անտերության: Պատահում էր, որ շահն այս կամ այն պալատականին ու ազնվականին իր ողորմածությունը ցույց տալու համար, նրան իր փոխարեն ուղարկում էր այցելության: Նույնիսկ դիվանագիտական այցելությունների դեպքում Ազիզ-օս-Սոլթանն էր գնում. այսպես զանազան առիթներով մի քանի անգամ նա ներկայացել է անգլիական դեսպանատուն եւ Իրանի շահի կողմից, ըստ առիթի, շնորհավորանք կամ ցավակցություն է հայտնել: Նա թեպետ հազիվ 12 տարեկան է, բայց հասել է փելդմարշալի աստիճանի եւ օգտվում է այդ աստիճանի բոլոր առավելություններից ու պատիվներից: Շահի մեծ նկարը՝ բազմաթիվ թանկարժեք գոհարեղեններով երիզված, ոսկե շղթայով կախված է Ազիզ-օս-Սոլթանի վզից, նա կրում է փելդմարշալական թուր եւ գոտի: Ես հետաքրքրվել եւ համոզվել եմ, որ Եվրոպայում տարածված այն կարծիքը, թե շահը Ազիզ-օս-Սոլթանի նկատմամբ արվասիրական հակումներ ունի՝ անհիմն է. սա ոչ այլ ինչ է, եթե ոչ արեւելյան արքայի պարզ քմահաճույք, որով առանց որեւէ պատճառի, համակրանքով են լցվում որեւէ մեկի հանդեպ: Այլ ենթադրություն անտեղի է ու անճիշտ:

Նասրեդդինը, հակառակ այս մանր ու խոշոր մոլուցքներին, պետական գործերի մեծ մասին անձամբ է վերահասու լինում: Առավոտյան կանչում է վազիրներին ու զանազան հարցումներ անում: Վազիրները կյանքի ու գույքի ոչ մի ապահովություն չունեն. երբ ներկայանում են թագավորին, դողում են տեղեւի նման: Արքայի բերանացի մի հրամանով նրանց կյանքն ու գույքը կարող են հօդս ցնդել, միաժամանակ, մի հաջողակ խոսքով կամ հարմար մի բանաստեղծությամբ՝ ստանալ աստիճանի եւ դիրքի բարձրացում:

Ինչպես որ վազիրներն են այսպես դժբախտ եւ ամեն մի րոպե մահու վտանգի առաջ կանգնած, արեւելյան արքաները էլ ավելի երջանիկ չեն: Ոչ ոք թագավորին խորհուրդ տալ չի կարող. նա չպիտի լսի որեւէ մեկի խոսքը, դա կլինի նվաստություն իր համար: Նա լսում է միայն այն խոսքերը, որոնցով չողոքորթում են եւ որոնք նրա համար ոչ մի օգտակարություն չունեն: Պարզ է, որ նման մի թագավոր՝ չրջապատված նման վազիրներով, երբեւէ երջանիկ լինել չի կարող: Այս ծառաների նվազագույն չողոքորթությունն այն է, որ ժամ առ ժամ "մատաղ լինեն շահի ոտների հողին, որը ամեն տեսակի գոհարեղենից ավելի թանկ է": Այս արտահայտության անամեջ լինելը բացատրության կարիք չունի, եւ նրա մեջ դարանակալած վտանգները երկրի, ժողովրդի եւ իրեն՝ շահի համար, անուրանալի են:

Բոլոր դժբախտություններից բացի Իրանի թագավորը դեմ հանդիման է մի այլ մեծ դժբախտության. դա երկրի հյուսիսային եւ հարավային հարեւանների մրցակցությունն է եւ այդ երկու զորեղ պետությունների գոհունակությունն ապահովելը:

Այսպես թե այնպես, եթե Նասրեդդին շահին համեմատենք նախորդ շահերի հետ, ապա կհամոզվենք, որ նա այս երկրի՝ մատների վրա հաշվվող մի քանի լավ շահերից մեկն է: Թեպետ Քարիմ խան Զենդը Նասրեդդինից ավելի դժասիրտ էր, սակայն սա իր պապի ու հոր եւ իրանյան այլ թագավորների համեմատությամբ շատ ավելի դրական կողմեր ունի: Իր նախորդների նման չի տիղդոսավորվել արյունարբու, գլուխ պոկող, երկրային հոգեառ եւ նման կոչումներով: Բայց եւ այնպես, նա եւս սովորականի պես քիչ արյունոտ է-ջեր չի ավելացրել այս երկրի պատմության վրա. նա սպանել տվեց Իրանի արժանավոր եւ լուսամիտ զավակներից մեկին՝ Միրզա Թաղի խան Ամիր-է Քաբիրին (նա շահի քրոջ ամուսինն էր), որը կարող էր Իրանը բարձրացնել ու հասցնել կատարելության գագաթնակետին: Ասում են, որ այս հարցում դեր են խաղացել թագավորի երիտասարդ տարիքն ու անփորձությունը: Նրա բացասական գործերից մեկն էլ Բաբի աղանդին հետեւողների կոտորածն էր, որոնք շահի դեմ կատարած անհաջող մահափորձից հետո, երկրորդ անգամ ենթարկվեցին հայտնի ջարդին:

Միրզա Աղա խան Նուրի էթեմադ էդ-Դովլեն, որ նախարարապետի պաշտոն էր զբաղեցնում, իր կարծիքով քաղաքագիտական մեծ քայլ արեց, երբ բաբիների ղեկավարներին բժժանեց պալատականների ու ժողովրդի զանազան խավերի ներկայացուցիչների միջեւ, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը սպանելով բաբիներից մի քանիսին՝ ապացուցի իր հավատարմությունը շահին: Այսպես, այդ ոճրին մասնակցելու պարտադրվեցին արտաքին գործերի եւ ելեվմտական նախարարները, Թեհրանի քաղաքապետը, առեւտրականների ու դերվիշների ներկայացուցիչները՝ իրենց ձեռքով սպանելով մի կամ մի քանի բաբիներ:

1878-ին մի այլ քաոմնելի դեպք տեղի ունեցավ, որն ամենացայտուն բնորոշիչ գիծն է արեւելյան իշխանավորների կամայականությունների եւ այն օրերի՝ երկիր կառավարելու հոռի համակարգի: Սպահանի բանակի զինվորները, իրանական մյուս զորաբանակների նման, երեք տարի շարունակ առանց ռոճիկ ստանալու զենքի տակ էին՝ ոչ արձակում եւ ոչ էլ ռոճիկ էին վճարում: Շահը, երբ Շահաբդուլազիմ ուխտատեղին է գնալիս եղել, զինվորների մի խումբ, ըստ ընդունված սովորության, մոտենում են աղերսագիր մատուցելու: Ֆարրաշները հետ են մղում նրանց, զինվորները նորից են մոտենում: Այդ միջոցին մի անհայտ քար է նետում շահի կառքի վրա եւ ապահին կոտրում: Շահի բարկությունը բորբոքվում է, եւ հրամայում է ձերբակալել բոլոր զինվորներին: Այդ խառն րոպեին մի անխիղճ պալատական ասում է, որ բոլոր զինվորները բաբի են եւ եկել են շահին սպանելու: Այդ խոսքը բավական է լինում, որ րոպեապես տաս զինվորների կախաղան բարձրացնեն եւ դիակները չպրտեն Թեհրանի փողոցները: Վերջում շահը կարդում է նրանց խնդրագիրը եւ տեսնում, որ ոչ բաբիության եւ ոչ էլ սպանելու հարց կա:

Անդրադառնալով իր կատարած սխալին եւ այն դարմանելու համար, նա գործում է մի նոր անիրավություն. այն պալատականը, որ զինվորներին բաբի՛ էր ներկայացրել, ենթարկվում է ծեծի եւ պարտադրվում վճարել մի քանի հազար թուման: Դրանով փակվում են զինվորների հաշիվներն ու ամեն մեկին էլ հինգ թուման նվեր է տրվում:

Մի այլ դեպք տեղի է ունենում 1861-ին, երբ Թեհրանում հացը պակասում է, ցորեն ամբարողներից ոմանք դրդում են անպատասխանատու տարրերին քաղաքում խռովություններ առաջացնել, որպեսզի իրենց ամբարած ցորենը կարողանան ավելի թանկ արժեքով վաճառել: Թագավորն առանց խնդրի էության մեջ խորանալու՝ հրամայում է քաղաքագլխին կախել. անչուշտ պարզվում է, որ քաղաքագլուխը որեւէ մասնակցություն չի ունեցել այդ անցուդարձերին:



Շահի քրոջ որդիները

Արեւելյան երկրներում, ինչպես ասվեց, այս երեւույթները տարօրինակ չեն համարվում, քանի որ արդեն դարեր ի վեր վարժվել են եւ որպես չարիք չեն ընկալում, իսկ եթե չարիք էլ սեպեն, ասում են՝ նախասահմանությունն այդպես է կարգադրել, եւ մենք անզոր ենք նրա առաջ:

Այս ամենից հետեւում է, որ Նասրեդդինը նախորդների համեմատությամբ արդարամտության եւ ողորմածության մարմնացում է. նրա օրոք ամբողջ քաղաքներ սրի չեն քաշվել, որեւէ քաղաքի կանանց եւ երեխաներին չեն բաշխել զինվորներին, մի ամբողջ նահանգի բնակիչների չեն կուրացրել, եթե որեւէ հանցավոր ճանաչված պիտի գլխատվեր, ապա դա անպայման շահի ներկայությամբ չեն արել:

Շահի ցուցաբերած այս մեղմությունները պիտի բացատրել Եվրոպայի եւ եվրոպացիների հետ շփում ունենալով: Շրջաններում եւս նահանգապետներն իրենց, գոնե մասամբ, պատասխանատու են զգում:

Սաֆավիների ժամանակ ընդունված էր, որ երբ շահի կանանոցն անցնում էր փողոցով, պիտի կատարյալ ամայություն տիրեր: Իսկ եթե պատահեր, որ մի տղամարդ անակնկալի եկած չկարողանար որեւէ տեղ թաքնվել, ապա ներքինիներն ու ֆարրաշները վրա հասնելով, նրան դաշունահարելով՝ բզիկ-բզիկ էին անում: Այժմ այդպես չէ. հարեմն անցնելիս տղամարդկանց չեն հալածում, այլ պարտադրում են աչքերը փակել եւ դեմքով շրջվել դեպի պատը, մեջքով՝ դեպի քարավանը եւ այդպես մնալ մինչեւ վտանգավոր երթը հասնի իր ավարտին: Մի-երկու տարի առաջ մի քանի բանվոր, որ զբաղված էին ջրի ճամփան մաքրելով, հանկարծ հայտնվում են կանանոցի բակերից մեկում: Թագավորը նրանցից ոչ մեկին չի սպանում, եւ նրա այս ներողամտությունը մինչ այդ աննախադեպ է լինում:

Նասրեդդինն Իրանի առաջին թագավորն է, որ զբոսանքի եւ շրջագայելու նպատակով իր երկրից դուրս ճամփորդություն է կատարել: Այս ճամփորդությունները, որոնք տեղի են ունեցել 1873-ին, 1878-ին եւ 1889-ին, թե՛ իր՝ շահի, եւ թե՛ առհասարակ, Իրանի ժողովրդի վրա բարերար ազդեցություն չեն թողել: Հոգեւորականությունը դեմ էր շահի ճամփորդությանը, մանավանդ, որ նա իր հետ տարել էր կանանցից մեկին, Անիս էդ-դովլեին: Վերջինիս առթիվ եղած բուռն բողոքների հետեւանքով ստիպված եղան այդ տիկնոջը Մոսկվայից հետ բերել: Շահը երկրորդ ճամփորդությունից վերադարձին գնել ու իր հետ բերել էր ջահեր, կահույք, հագուստներ, խաղալիքներ եւ այլն. այս առթիվ կրոնավորները լուրջ բողոք բարձրացրին, որը սկսում էր ընդվզումների բնույթ ստանալ: Նասրեդդինը խելամտորեն կարողացավ դրանց դեմն առնել. նա իր ճամփորդությունները վերագրեց կրոնական ու քաղաքական նպատակների՝ ասելով իսլամական Իրանն ամեն տեսակ ոտնձգություններից պաշտպանելու համար, անսալով Ֆրանկ թագավորների հրավերին՝ գնացել է ի շահ երկրի զանազան դաշնադրություններ կնքելու: Եթե այդ ճամփորդություններն անմիջական արդյունք չտվեցին, այնուամենայնիվ, ինչպես քիչ առաջ նշվեց, դրանց բարերար ազդեցությունը երկրի առաջադիմության խնդրում մեծ է եղել:

Նասրեդդինի թագավորության 42-րդ տարում իրանում ի հայտ են գալիս եվրոպական քաղաքակրթության նշաններ. հեռագրալարերով շահի հրամանը հասնում է հեռավոր նահանգներ եւ գործադրության առնվում: Մարդիկ շփում ունեն եվրոպացիների հետ, թերթ են կարդում, փոխվում են հագուստի, նիստ ու կացի ձեւերը, նաեւ բարոյական հասկացությունները, ցեղախմբերը հանդարտ են, տուրքը կանոնավորաբար գանձվում է, ներքին ըմբոստ տարրերը զուսպ վիճակում են: Սըր Քամփրին գրում է, որ երբ 1843-ին Ջաֆհալի շահը վախճանվեց, ամբողջ երկիրը մատնվեց քաոսային վիճակի. գահի թեկնածուները բազմաթիվ էին, ըմբոստ ցեղախմբերը կրկին գլուխ բարձրացրին. անգլիացի մի քանի զինվորականներ Մոհամմեդ շահին Թավրիզից բերեցին Թեհրան, եւ նրանց օգնությամբ էր, որ զսպվեցին ըմբոստությունները: Նույնպես Մոհամմադ շահի մահվան ժամանակ 1848-ին Քերմանում, Խորասանում, Յազդում, Իսֆահանում, Ֆարսում տեղի ունեցավ լուրջ հուզումներ: Նասրեդդինը ռուսների եւ անգլիացիների օժանդակությամբ էր որ կարողացավ հակառակորդներին վանել եւ կացության տեր դառնալ: Այժմ, երբ երկրում որոշ աստիճանի քաղաքակրթություն ու դաստիարակություն կա, եւ գործերը կանոնավոր ձեւով են ընթանում, թվում է, թե Նասրեդդինի մահվանից հետո խառնակություններ տեղի չեն ունենա, եւ երկիրը անցյալի պես չի մատնվի ավերածության:

ԼՈՐԴ ՔԵՐԶՈՆԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՆԱԼԸ

Նասրեդդին շահը նրան ընդունում է թախթը թավուս սենյակում: Սրահում, որպես կարասի, բացի համանուն գահից այլ բան չի եղել. շահի հագուստը բաղկացած է եղել սեւ բաճկոնից եւ սեւ տաբատից, բաճկոնը՝ զարդարված ոսկեկար նախշերով, իսկ օձիքը Հալջի Թարխանի (Ատրախան) գառան մորթուց: Նույն մորթուց գլխարկի վրա պսպղում էր Փարիզում պատրաստված ադամանդակուռ "Շիր ու խորշիդը": Շահը ֆրանսերեն գիտեր, սակայն ըստ տարածված լուրերի, ամաչկոտ էր եւ քիչ դեպքերում էր խոսում այդ լեզվով, առհասարակ հաղորդակցվում էր թարգմանի միջոցով: Նորությունների ծարավի Իրանի գահակալը հնարավոր ամեն միջոցներով աշխատում էր տեղեկություններ ձեռք բերել: Իմանալով, որ Քերզոնը Ասխաբադի ու Ղուչանի ճամփով է եկել, անմիջապես սկսում է նրան հարցաքննել՝ ճամփի լայնքը որքա՞ն է, Իրանի սահմանների ո՞ր մասին է հանում, ճամփի դիմացկունությունն ինչպիսին է, ռուսական սահմաններում ի՞նչ պահականոցներ կան, Ասխաբադ քաղաքը ի՞նչպիսին է: Բարեբախտաբար, - ասում է Քերզոնը, - այդ բոլորի մասին լայն տեղեկություններ ունեի, ուստի եւ իրանյան որեւէ սպայից ավելի լավ զեկուցում տվի:

ՀԱՐԱՄՍԱՐԱ - ԿԱՆԱՆՈՑ

Արեւելյան պալատների կարեւոր բաժիններից մեկը կանանոցն է. այս խորհրդավոր խորշը չատ եվրոպացիների անծանոթ է մնացել: Պատճառը անձեռնմխելիությունն է. միայն սակավաթիվ մի քանի եվրոպացի են հաջողել թափանցել բարձրաբերձ պատերից եւ թանձր վարագույրներից ներս եւ ոտք դնել կանանց հատկացված բերդերը: Նրանք զարմանահրաշ բաներ են պատմում: Իսլամական օրենքով որեւէ տղամարդու մուտքը՝ քրիստոնյա, հրեա կամ մուսուլման, արգելված է: Միայն կնոջ հայրն ու եղբայրը կարող են մուտք գործել այնտեղ: Ֆաթհալի շահի հարեմը իր չքեղությամբ արեւելքում հայտնի է եղել:

Անգլիացի Քոլոնել Դարվիլը 1813-ին եկել է Իրան եւ Ֆաթհալի շահի կանանց թիվը 700, տղաներինը՝ 64, աղջիկներինը՝ 125 հոգի է հաղորդել: Իսկ Քոլոնել Սայուարտը 1841-ին կանանց թիվը 1000, տղաների եւ աղջիկների թիվը՝ 150 հոգի է նշել: Պ. Բինինգն ասում է՝ 1834-ին, երբ Ֆաթհալի շահը մահացավ, որպես հիշատակ թողեց 170 աղջիկ, 130 տղա, 500 թոռ եւ 800 կին: Ըստ Մադամ Դրյաֆուայի տեղեկության նույն թվին շահի կանանց թիվը 700 էր, զավակների եւ թոռներինը հասնում էր 5600-ի:

Սահեբ Նասխ-օթ-Թավարիխը պնդում է, որ Ֆաթհալի շահը ավելի քան 1000 կին է ունեցել, որոնցից ծնվել են 260 տղա ու աղջիկ զավակներ, սակայն շահը վախճանվելիս նրանցից ողջ էին միայն 110 տղա եւ աղջիկ: Ֆաթհալի շահի տղաներն էլ իրենց հոր պես բազմածին էին. նրա որդիներից Շեյխ Ալի Միրզան 60 ձիավարժ ուստր ուներ, որոնք ճամփորդության ժամանակ ուղեկցում էին հորը:

Արքայական սերնդի այս բազմությունը կատարյալ չարիք էր դժբախտ հպատակների գլխին. բոլոր արքայազարմ իշխաններն ու իշխանուհիները պետական գանձարանից ռոճիկ էին ստանում: Իրանի քաղաքները վարչականորեն են-թարկվում էին արքայազուններին, որոնք սովորաբար մորեխների նման լափում էին չարքաշ իրանցի ժողովրդի քրտնաթոր վաստակը:

Մեռած ու ամուսնալուծված կանանցից բացի, Նասրեդդին շահն իր հարեմում ուներ 60 կին. չիա մահմեդական տղամարդը կարող է ունենալ 4 օրինական (աղդի) կին եւ հազարավոր սիղեներ (հարճեր): Շահի 60 կանանցից երեքը աղդի եւ մնացածները սիղե են: Օրինական կանանցից երկուսը շահի հորեղբոր դուստրերն են (մեկը՝ Շոքուհ օս-սալթանեն, գահաժառանգ Մոզաֆերեդդին Միրզայի մայրն է): Հակառակ այս կանանց օրինական համարվելու հանգամանքին, շահի համակրանքը սիղեների հանդեպ մեծ է: Դրանցից է Անիս-էդ-Դովլեն՝ Շեմրանի ջաղացպաններից մեկի աղջիկը, որին մի օր Նորին Վսեմությունը հանդիպել ու գերվել էր նրա սիրուց, այժմ ամբողջ հարեմի տերն ու տնօրենն է: Այս Անիս-էդ-Դովլեն էր, որ հարեմի կանանց միջից ընտրվեց եվրոպայի ճամփորդության համար, որին եւ Մոսկվայից հետ դարձրին՝ լուեցնելու համար Թեհրանում այդ առթիվ բողոք եւ հուզում արտահայտած կրոնավորներին ու ախունդներին: Նասրեդդինն իր թագավորության սկզբնական տարիներին եւս մի գյուղացի աղջիկ տեսնելով՝ սիրահարվել էր նրան եւ, հակառակ պալատական ընդունված սովորության, այդ աղջկան ազդ էր արել ու նրանից ծնված տղային էլ գահաժառանգ էր կարգել: Սակայն չուտով մայր ու տղա մահացան: Մյուս աչքի ընկնող տիկիններից է եղել Էֆֆաթ-էդ-Դովլեն, Զելլ-էս-Սոլթանի՝ շահի անդրանիկ որդու մայրը: Այդ կինն Աբբաս Միրզայի որդու՝ Բահման Միրզայի ծառա Ռեզա Ղուլի Բեկի աղջիկն է եղել: Մոնիր-օս-Սալթանեն՝ Մեմար Բաշու աղջիկը, մայրն է շահի երրորդ որդու՝ Նայիբ-օս-Սալթանեի: Ամինե Աղդասը՝ մի քուրդ գյուղացու ընտանիքից, հայանի Ազիզ-օս-Սալթանի Հորաքույրն էր: Վերջինս շահի կատուների խնամատարն էր եւ հետո դարճավ շահի անձնական գանձապահը: Նա շահի մոտ այնքան հարգ ու պատիվ ուներ, որ 1890-ին մի աննշան բժշկական գործողության համար ուղարկվեց Վիեննա: Նա առաջին իրանցի տիկինն է, որ առանց ամուսնու ընկերակցության, ոտք է դրել եվրոպական հողի վրա:

Ֆաթհալի շահի ժամանակ հարեմի կանանց հագուստը բաղկացած էր մետաքսե կամ թավշե երկար ու լայն չալվարից եւ կարճ ու ոսկեթելով զարդարված բաճկոններից: Նասրեդդինի ժամանակ, շրջազգեստ, ժակետ ու կարճ չալվարներ էլ էին հագնում, կանանց գեմքի ծածկոցը Թեհրանում ավելի թանձր ու պարտադիր էր, քան Պոլսում:

ՇԱՀԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Նասրեդդինն ունեցել է քառասուն զավակ, որոնցից Լորդ Քերզոնի Իրանում եղած ժամանակ ապրում էին 9 տղա եւ 11 աղջիկ. անդրանիկ տղան 44 տարեկան, իսկ ամենափոքրը՝ 1 տարեկան աղջիկ: Շահի զավակները փայլուն անուններ ունեն. "շահի ստվեր", "շահի փոխանորդ", "երկրի արեւ", "աշխարհի լուսին", "աշխարհի կոկոն", "Իրանի վարդ" եւ այլն, եւ այլն: Շահի մեծ աղջիկն ամուսնացած է Թեհրանի իմամջոմեի (քաղաքի գլխավոր մզկիթի աղոթապետ), իսկ մյուս աղջիկներն էլ՝ այլ մեծամեծների հետ: Շահի փեսային առանձնապես բախտավոր մարդ չի կարելի համարել. նա չի կարող օգտվել իսլամի թույլատրած բազմակ-

նությունից, պիտի բավականանա միմիայն մի կնոջով: Այսուհանդերձ, մեծ ջանք ու ղրամ են հատկացնում շահին փեսայանալու համար: Ամեն մի աղջկա համար տարեկան 2000 ստեռլինգ ռոճիկ է նշանակված, որը եւ համարվում է արքայադստեր օժիտը: Շահի կանայք էլ ունեն տարեկան 200-2000 ստեռլինգ ռոճիկ, նայած թե շահի սրտում ինչ տեղ են գրավում:

ՄՈԶԱՖՖԱՐԵԴԴԻՆ

Իրանի գահաժառանգը ծնվել է 1853-ին, շահի երկրորդ արու զավակն է: Անդրանիկ որդին Սուլթան Մասուդ Միրզա Զել-է Սուլթանն է, որ ծնվել է 1850-ին: Ինչպես ասվեց, մոր աղդի չլինելու պատճառով, նա գահաժառանգության հասնել չէր կարող: Օսմանյան խալիֆաների սովորությամբ, ի տարբերություն Իրանի, անկախ թե մայրն ինչ ծագում ունի, անդրանիկ զավակը գահաժառանգ է դառնում: Նախկին թագավորների ժամանակ Իրանում եւս մոր ծագումը նկատի չի առնվել. թագավորի սիրած որդին նշանակվում էր թագաժառանգ: Թագավորն, իր զավակների վախից, չէր բացահայտում, թե որ զավակը պիտի հաջորդի իրեն, միայն մահվան անկողնում էր հայտնում, որից հետո այդուամենայնիվ տեղի էին ունենում գահակռվիվներ եւ արյունահեղություններ:

Գահաժառանգ Մոզաֆֆարեդդինի մայրը թագավորի հորեղբոր աղջիկն էր, ինչպես որ Աբբաս Միրզայի մայրն էլ Ֆաթհալի շահի հորեղբոր աղջիկն էր. հակառակ այն բանի, որ Մոհամմադ Ալի Միրզա Դովլաթշահին Աբբաս Միրզայից ավելի մեծ էր, այնուամենայնիվ, գահաժառանգությունը հասավ Աբբասին: Նասրեդդինն այս կարգը քանդեց եւ չեմբանցի մի աղջկա որդուն գահաժառանգ կարգեց: Այս մայր ու որդու մահից հետո էր, որ Մոզաֆֆարեդդինը կարգվեց գահաժառանգ:

Ղաջար թագավորներն ապրում էին Թավրիզում: Նրանց ճամփորդությունը եւ, առհասարակ, մարդկանց հետ չփումը, ընդունված կարգի համաձայն խիստ սահմանափակ է եւ կախված է շահի թույլտվությունից: Հետեւանքն այն է լինում, որ երբ թագաժառանգը դառնում է թագավոր, ոչնչից, ոչ մի տեղից, անգամ իր երկրից տեղեկություն չի ունենում ու պալատականների ձեռքին դառնում է մի խամաճիկ: Երկար տարիներ ապրելով Ատրպատականում, նրանք, բնականաբար, կրում են հյուսիսային հարեւանի ուժեղ ազդեցությունը:

Անգլիացի զբոսաշրջիկ ուսումնական դոկտ. Վիլզը, որ Քերզոնից առաջ եկած է եղել Իրան, տեսել է Մոզաֆֆարեդդին Միրզա գահաժառանգին եւ նրա մասին այսպես է գրում:

"Իրանի ապագա թագավորը մարմնապես թույլ եւ մտավոր կարողությամբ խեղճ է: Այդուամենայնիվ, խտաբարո, քինախնդիր ու անչնորհք մեկն է": Քերզոնը գրում է, որ ինքը տեսել է Մոզաֆֆարեդդինին եւ չի հաստատում դր. Վիլզի գրածները: Այն, որ նա Ատրպատականը կառավարել չի կարողանում եւ տերն ու տնօրենը նրա կառավարիչ Ամիր-ե Նեզամն է, ոչ մի կասկած չի հարուցում: Վերջինիս կամայականություններն ու ոտնձգությունները հասնում են ծայրահեղության եւ, այդ դրությանը վերջ տալու համար, կանչում են Թեհրան եւ նրա փոխարեն մի այլ կառավարի ու արյունարբու իշխան են ուղարկում գահաժառանգին օգնելու համար: Այս մարդը հիվանդագին հաճույք էր զգում մարդկանց ձեռք ու ոտքը կտրելուց եւ գլուխը պոկելուց: պալատը, արտաքին ճնշումներից ստիպված, հետ է կանչում այս դահիճին եւ կրկին ուղարկում են նույն Ամիր Նեզամին, որով եւ կյանքը մտնում է իր սովորական հունի մեջ:

Գահաժառանգ Մոզաֆֆարեդդին Միրզան միջակից բարձր հասակով, գեղեցկադեմ եւ մեղմաբարո մի մարդ է. քիչ մարդիկ նրա ցանկությունների եւ մտքերի մասին տեղեկություն ունեն, քանի որ հոր պատվերի համաձայն, ապրում է Ամիր-ե Նեզամ Գարրուսիի խիստ հսկողության տակ: Մի խումբ հատուկ ծառաներ զրուցակից կամ ճամփորդակից անվան տակ միշտ շրջապատում են նրան: Այս մարդկանցից բացի ուրիշ ոչ ոքի հետ չփում չունի, պետական գործերին չի միջամտում, թեպետ անվանապես Ատրպատականի հրամանատարն է, սակայն որեւէ անգամ չնչին գործ իր կամքով կատարել չի կարող:

Դր. Վիլզն իր "Վեց ամիս Իրանում" հայտնի գրքում, Իրանի գահաժառանգին վատաբանում է՝ նրան համարելով ոգեւ ու տխմար: Դր. Քերզոնն այդ մասին հրաժարվում է կարծիք հայտնել՝ պատճառաբանելով, որ նրա կյանքն անցնում է մենության եւ կղզիացման մեջ: Գահաժառանգը, մյուս եղբայրներին հակառակ, հոգեւորականության նկատմամբ համակրանք է տածում, հատկապես Շեյխի խմբակցության մոլլաներին շատ է համակրում: Դրանք շեյխ Ահմադ Էհսայի հետեւորդներն են եւ հանդիսանում են շիա աղանդի մի հատուկ խմբակցություն: Նրանց ղեկավարը կոչվում է Հաջի Մոհամմադ Քարիմ Խան եւ ապրում է Քերմանում: Ենթադրվում է, որ Մոզաֆֆարեդդինի գահ բարձրանալուց հետո Շեյխի կուսակցությունը ավելի մեծ ակտիվություն կստանա: Նասրեդդինն իր թագաժառանգի ապրուստի ծախսերի տեսակետից էլ բարեմտություն չի արել. նրան տարեկան վճարվում է միայն 60-70 հազար թուման, որն, անշուշտ, մի արքայազնի կարիքներին բավարարություն չի տա: Գահաժառանգն իր նախարարներից ու մերձավորներից պարտք է վերցնում: Ամենից շատ պարտք ունի Ատրպատականի կառավարիչ Ամիր-ե Նեզամ Գարրուսիին: Գահաժառանգն ունի 12 զավակ, որոնցից չորսերն ամուսնացած են: Նրա առաջին կինը Միրզա Թաղի Խան Ամիր-ե Քաբիրի աղջիկն էր: Այս տիկնոջ մայրն, ինչպես ասվել է, Նասրեդդինի քույրն էր, ըստ որում, գահաժառանգի կինը իր հորաքրոջ աղջիկն էր: Այսուհանդերձ, այս ամուսնությունը երկարատեւ չեղավ եւ մեկ-երկու երեխաների ծնունդից հետո նրանք ամուսնալուծվեցին: Գահաժառանգի ժամանակի մեծ մասն անցնում է հարեմում կամ ձիավարժությամբ ու նշանառությամբ: Նա արքայական գերդաստանի մյուս անդամների նման լավ նետաձիգ ու ձիավար է: Նրա այլ հնարքների մասին տեղեկություններ չկան:

ՍՈԼԹԱՆ ՄԱՍՈՒԴ ՄԻՐԶԱ, ԶԵԼԼ-ԷՍ-ՍՈԼԹԱՆ

Սա Նասրեդդինի անդրանիկ զավակն է, որ ծնվել է 1850-ին եւ գահաժառանգից երեք տարով մեծ է: Երիտասարդ տարիքից նշանակվեց նահանգապետության պաշտոնին, սկզբում՝ Սպահանի եւ Շիրազի: Նա հաջողությամբ գանձում էր թագավորին հասանելիք տուրքը եւ կարողացել էր ճանապարհները խաղաղ ու ապահով դարձնել, որի համար էլ դարձել էր պալատի սիրելին: Շահի համար այն, որ

իրեն հասանելիքը գանձվում էր, եւ ճանապարհներն ապահով էին, արդեն բավական էր, իսկ թե հպատակ ժողովուրդը ինչպես էր ապրում, դա կարեւորություն չէր ներկայացնում: Իր հոր մոտ Զելլ-էս-Սոլթանի ձեռք բերած համակրանքի չնորհիվ նրա կառավարչությանը վստահեցին նաեւ Քուրդստանը, Լորեստանը, Խուզեստանը, կարճ ժամանակ անց՝ ավելացան Քերմանշահը, Համադանը եւ Գոլփայեգանը: Այսպիսով, այս արքայազնին վստահված տարածքից պալատի համար տարեկան 600 հազար ստերլինգ կանխիկ դրամ եւ հազար ստերլինգի արժողությամբ բերք էր գանձվում (ստերլինգն այն օրերին արժեր 3 թուման): Այս տուրքը գանձվում էր 250 հազար քառակուսի մղոն (հարկապարտ) տարածությունից, որ հավասար է ամբողջ Իրանի 2 / 5-ին. գանձվածի մի մասը հատկացվում էր Զելլ-էս-Սոլթանի զորքին, որի զինվորների թիվը 21000 էր: Զորքը կազմակերպված էր ավստրիական համակարգով՝ գլխարկներին կրում էին երկաթյա սաղավարտ, ուսերին՝ ավստրիական հրացան: Ինքը՝ Զելլ-էս-Սոլթանը, հագնում էր բանակի գեներալի հագուստ (նրա նկարները մեծ մասամբ այս հագուստով են): 21000 զինվորներից 7000-ը ձիավոր էին, մնացյալը՝ հետեւակ: Զորքն ուներ նաեւ մի քանի թնդանոթ: Նա ենթադրելիս է եղել, որ իր գահաժառանգ եղբոր հետ մրցակցելը նպատակային կլինի, թերեւս, մի օր կբազմի Իրանի գահին, եւ կազմակերպած զորաբանակն էլ այդ նպատակի համար է: Ամեն պարագայում, Զելլ-էս-Սոլթանն ի հակադրություն իր եղբոր՝ Մոզաֆֆարեդդինի, մեծ ակտիվություն եւ պետական ապարատում էլ ազդեցիկ ու ակնառու դեր ունի: Շփվում է եվրոպացիների հետ, միշտ խոսում է անգլիացիների բարեկամության մասին, իրեն համարում է լուսամիտ եւ նոր քաղաքակրթության կողմնակից: Այսուամենայնիվ, նա կատարյալ արեւելյան տիրակալ է եւ չի խուսափում զանազան սպանություններից եւ արյունահեղություններից հեղինակ դառնալուց: Նրա արյունաթաթախ գործերի մասին շատ պատմություններ են հյուսել: 1882-ին բախտիարցի իշխան՝ Հուսեյն Ղուլի Խանը, Սպահանում մահապատժի ենթարկվեց: Նա հավատարիմ հպատակ էր եւ զոհ գնաց պալատականների սադրանքներին: Նրան բնականաբար հրավիրեցին Սպահան եւ ստիպեցին խմել թունավորված սուրճը: Երբ բախտիարցի իշխանը հրաժարվեց, դահիճները հարձակվեցին վրան ու խեղդեցին: Այս դեպքից քիչ հետո Սպահանում սկսվեց բաբիների կոտորածը: Երկու աչքի ընկնող վաճառականներ, որոնք բաբի էին դարձել, Զելլ-էս-Սոլթանի հրամանով վայրագորեն սպանվեցին: Այս խստություններն այնպիսի չափերի հասան, որ տանջահար ժողովուրդը համբերությունը կորցնելով՝ ապստամբեց արքայազնի դեմ: Որպես հետեւանք այս երեւույթի, Նասրեդդինը նրան 1888-ին կանչում է Թեհրան եւ զրկում բոլոր աստիճաններից ու պաշտոնից: Բավական ժամանակ անցնելուց հետո նրան նորից ուղարկում են Սպահան՝ որպես նահանգապետ-կառավարիչ: Սակայն այս անգամ նա փափկում ու մեղմաբարո է դառնում, մարդկանց հետ վարվում է քաղցրությամբ, զորքը ցրում է եւ պահում միայն սահմանափակ թվով զինվորներ:

ՔԱՄՐԱՆ ՄԻՐԶԱ

Շահի երրորդ զավակն է, շահի տեղապահ մեծ իշխան, առաջին լորդ, Թեհրանի նահանգապետ, ռազմական նախարար, զորահրամանատար եւ փոխարքա: Նա գիտե եւ առանց թարգմանչի խոսում է ֆրանսերեն: Ջնայած իր վերոհիշյալ բազմաթիվ տիտղոսներին ու աստիճաններին, արքայական պալատում ոչ մի ազդեցություն չունի: Գործունյա մարդ էլ չի թվում. իր օրերն անց է կացնում Թեհրանի ու Շեմրանի պալատներում: Փոխարքայի նշանավոր գործերից է այն, որ Նասրեդդինի ծննդյան օրը Թեհրանաբնակ բոլոր եվրոպացիներին ճաշի է հրավիրում իր մոտ:

Ահա սրանք են Իրանի մեծ արքայազունները, որ հանդիսանում են շահի անմիջական որդիները, իսկ մյուսները օրորոցներում են կամ դայակների թեւերի վրա:

ՇԱՀԻ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Իրանի արքայազունների այս խմբին եթե մի կարեւորություն է տրվում, ապա դա միայն շահի եղբայր լինելու հանգամանքն է, այլապես քաղաքական եւ վարչական տեսակետից ոչ մի, թեկուզ աննշան, դեր չեն խաղում:

Շահի անդրանիկ եղբայր Աբբաս Միրզան՝ Մելքարա տիտղոսով, Նասրեդդինի գահակալության սկզբնական տարիներին թագավորելու միտք է ունեցել կամ թերեւս նրան նման հանցանքի մեջ մեղադրել են: Նա մոտ 30 տարի Իրաքում աքսորված ու լքված վիճակի մեջ էր, որից հետո եկել է Թեհրան եւ անվանապես կարգվել պետական խորհրդի նախագահ եւ առեւտրական նախարար: Որեւէ ակտիվություն չունի եւ աքսորի ու լքվածության հետեւանքով շատ խեղճացած է:

Շահի երկրորդ եղբայրը՝ Աբդոլ Սամադ Միրզա Էզզ-էդ-Դովլեն, արդարադատության նախարարն է: Շահի՝ դեպի Եվրոպա առաջին ճամփորդության ժամանակ ընկերակցել էր եղբորը. ժամանակի ռուսական կայսրի թագադրության հանդիսությանը Իրանի ներկայացուցիչն էր: Հմուտ է ֆրանսերենի եւ անգլերենի մեջ. նախկիններում եղել է Ղազվինի նահանգապետը:

Շահի երրորդ եղբայրը՝ Մոհամմադ Թաղի Միրզա Ռոքն-էդ-Դովլեն, Խորասանի նահանգապետը, հայտնի է որպես ռուսոֆիլ: Իրենից որեւէ գործ չի ակնկալվում, ղեկավարվում է իր ստորադաս կառավարիչների կողմից:

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Եվրոպական առաջին ճամփորդությունից վերադառնալուց հետո շահը մտադրվեց խորհրդաժողով հաստատել՝ "Պետական խորհուրդ" անունով: Այս առթիվ նա ստորագրեց համապատասխան հրամանագիր՝ բաղկացած 6 հոդվածներից, որը սակայն հենց իր գրված օրվանից մոռացության մատնվեց: Հրամանագրի 5-րդ հոդվածի համաձայն նահանգների ու գավառների պետերը պիտի նշանակի Խորհուրդը եւ ապա՝ հաստատվի շահի կողմից: Կարիք չկա ասելու, որ այս որոշումը ոչ մի անգամ չգործադրվեց, որովհետեւ Իրանի պետական Խորհուրդը ո՛չ օրենսդիր, ո՛չ գործադիր եւ ոչ էլ դատական ազդեցիկ ուժ չէր ներկայացնում իրենից: Երբ շահի կողմից որեւէ կարգադրություն է արվում, խորհրդի անդամներն ամենայն սիրով ու հպատակությամբ կատարում են այն եւ մնացյալ ժամանակը անց են կացնում իրենց ամենաողորմած տիրոջ արեւշատության համար աղոթելով: Իրանը մղոններով հեռու է սահմանադրական կարգերից եւ

դժվար թե մոտ ժամանակներում կարողանա հասնել նման վարչակարգի: Ստեղծված Պետական Խորհուրդը անվանապես եւ էապես օրինակված է ռուսական Պետական Դումայից: Խորհրդի անդամները նշանակվում են շահի կողմից: Թեեւ նրանց թիվը ժամ առ ժամ փոխվում է, սակայն 30-ից ավելի չէ: Վազիրները եւս մտնում են Խորհրդի մեջ, եւ նրանց եւ մյուս խորհրդակիցների իրավասության սահմանները հավասար են: Պետական Խորհուրդ ունենալով հանդերձ, Իրանի վարչական համակարգը պիտի համարել բացարձակ միապետական:

ԻՐԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

Սըր Ջոն Մալքոլմը ժամանակին Իրանի վազիրների մասին այսպես է գրել. "Մի խումբ մարդիկ, որոնք արտաքուստ շատ քաղաքավարի եւ լեզվագարուհյան մեջ առաջնակարգ վարպետներ են եւ որոնք իրենց ապրուստի միջոցները հայթայթում են ամենաստոր միջոցներով, Իրանում ներկայանում են Վազիր անվան տակ: Սրանք բացի իրար դեմ բանսարկություն եւ դավադրություն նյութելը, այլ անելիք չունեն. միակ նպատակն է հակառակորդին ոչնչացնել եւ առաջ գնալ: Պետք է թագավորին չողոքորթեն ու կեղծավորվեն եւ այս հատու զենքերով փոխադարձ հակամարտություններով ու շահին հաճոյանալով՝ երկրի գործերը բարեկարգեն":

Դժբախտաբար նույնը համընկնում է նաեւ Նասրեդդինի նախարարների հանգամանքին, այն տարբերությամբ, որ եվրոպական ճամփորդություններից շահի եւ վազիրների վարքի սաստկություն արտաքնապես մեղմացել է, իսկ էությունը մնացել է նույնը:

Ստորեւ ներկայացնում եմ Նասրեդդինի նախարարների եւ քաղաքական այլ դեմքերի նկարագրերը:

ԱՄԻՆ-ԷՍ-ՍՈԼԹԱՆ ՄԻՐԶԱ ԱԼԻ ԱՍՂԱՐ ԽԱՆ ՍԱԴՐ-Է ԱԱԶԱՄ (ՎԱՐՋԱՊԵՏ)

Եվրոպացիները սադր-է աազամ հասկացությունը նույնացնում են վարչապետ գաղափարի հետ, ինչը ճիշտ չէ: Վարչապետ հասկացությունը սահմանադրական կարգերում է, որ ստանում է իր իսկական իմաստը: Մինչդեռ բացարձակ բռնապետական իշխանության մեջ այն տեղ չունի: Ըստ այսմ, սադր-է աազամ ասելով պետք է հասկանալ պարզապես նախարարապետ, ինչը որ իրականության հետ համընկնում է: Ուրեմն, Միրզա Ալի Ասղար Խանը Նասրեդդինի նախարարների պետն է հանդիսանում: Թեպետ նա 34 տարեկան է, սակայն քաղաքական գործերի մեծ մասը կատարվում է նրա ձեռքով: Հայրը՝ Միրզա Էբրահիմ Աբդարն (թեյատանատեր) էր, իսկ վերջինիս հայրը հայ է եղել: Ամինոսոլթանի անհատական նկարագիրն ու արժանապատվություններն են, որ նրան այս բարձր դիրքին են հասցրել: Բացի նախարարապետի պաշտոնից, նա գրավում է նաեւ ներքին գործերի, պալատի, մաքսատան, զանճարանի գրամահատության եւ արտաքին գործերի նախարարության պաշտոնները: Պարսից ծոցի նավահանգիստները եւս գտնվում են այս անձնավորության հսկողության տակ: Նրա սադր-է ազամական պալատը արքայական պալատից հետ չի մնում: Ըստ երեւույթին, Ամինեսոլթանը հորից բավական խոշոր կայք է ժառանգել եւ իր սադրաազամական դիրքի ընձեռած հնարավորություններից էլ ստանում է ավելի մեծ եկամուտներ, ուստի եւ համարվում է Իրանի եւ Արեւելքի մեծահարուստներից մեկը: Հարստությունից բացի, նա անսահման ուշիմություն եւ արտասովոր ճարպկություն ունի: 1889-ին Նասրեդդինի հետ Եվրոպա ճամփորդեց: Վերադարձին նա գովաբանում էր Անգլիան՝ ասելով, որ Անգլիայում երեք բան չատ է գրավել իր ուշադրությունը. առաջին՝ լորդերի հարստությունները, որոնցից յուրաքանչյուրը մի թագավոր է իր համար, երկրորդ՝ ուսումն ու ժողովրդական խավերի մտավոր զարգացումը, որոնցից ամեն մեկը կարող է մի մի փիլիսոփա համարվել, երրորդ՝ բնակչության մեծ թիվը, որով ամեն մի գյուղ մի քաղաքի եւ ամեն մի քաղաք մի երկրի չափ բնակչություն ունի: "Տեսնելով այս ամենը, - ասում է նա, - արտասվեցի ղառնորեն Իրանի վիճակի վրա եւ եկա այն համոզման, որ որեւէ երկրի առաջադիմության համար պիտի չինել ճանապարհներ եւ երկաթգծեր":

ՄԻՐԶԱ ԱԼԻ ԽԱՆ ԱՄԻՆ-Է-ԴՈՎԼԷ

Փոստի եւ հրիտակ (օուղաֆ, կտակված) կալվածների վազիրը, ազատասեր եւ լուսամիտ անձնավորություն է: Նասրեդդինի առաջին ճամփորդության ժամանակ գնացել է Եվրոպա, սակայն Ամինոսոլթանի սադրանքների հետեւանքով գերմանական սահմանագլխից վերադարձել: Խոսում է սահուն ֆրանսերեն, Իրանի եւ արտաքին աշխարհի մասին լայն տեղեկություններ ունի, հայրենիքի նկատմամբ լցված է մեծ սիրով: Ներկա պայմաններում (Քերզոնի ժամանակվա) երկրի բարեկարգության ու առաջադիմության նկատմամբ շատ հոռետես է:

ԵԱՀՅԱ ԽԱՆ ՄՈՇԻՐ-Է-ԴՈՎԼԷ

Միրզա Հոսեյն Խան սփահսալարի կրտսեր եղբայրն է եւ Նասրեդդին շահի դատեր՝ Էզաթ-Է-Դովլեի չորրորդ ամուսինը: Գիլանի ու Մազանդարանի, որոշ ժամանակ էլ՝ Ֆարսի նահանգապետ է եղել: Շահի բացակայության ժամանակ արտաքին գործերի վազիր եղավ եւ ապա ստանձնեց դատական եւ առեւտրական նախարարությունները: Եահյա Խանը բոլոր վազիրներից ավելի քաղաքակիրթ է. դիտե մի քանի լեզուներ, ուսումը ստացել է Եվրոպայում, իր ճաշակն ու հայացքները հակված են դեպի եվրոպականը:

Սփահսալարի տունը գտնվում է նույնանուն մզկիթի հետեւում, որտեղ նրա որդու եւ Մոզաֆեր-Է-Դին Միրզայի աղջկա ամուսնության առթիվ կայացած հանդեսին առաջին օրը ճաշի էին հրավիրված վազիրները, երկրորդ օրը՝ եվրոպացիները, երրորդ օրը՝ դերվիշները, չորրորդ օրը՝ հոգեւորականները:

Նրա կարծիքով, եթե Աֆղանստանում անգլիացիների ծախսած դրամի կեսը ծախսվեր Իրանում, ապա Հնդկաստանի ճանապարհը շատ ավելի վտահելի կդառնար: Նա ռուսոֆիլ է համարվում. մի քանի անգամ ուղեւորվել է Պետերբուրգ: Այս բոլորը, սակայն, չեն խանգարում, որ նա ճանաչվի երկրի լավագույն վազիրներից մեկը:

ՄԻՐԶԱ ԱԲԲԱՍ ԽԱՆ ՂԱՎԱՄ-Է-ԴՈՎԼԷ

Անվանապես արտաքին գործերի վազիր է: Ո՛չ նոր, եւ ո՛չ

էլ հին կրթություն ունի: Քաղաքական գործերում զրո է. բոլոր աշխատանքները կատարվում են Սաղր-է Ազամի միջոցով: Իրանի հին պալատականներից է, որ բացի սովորական ճանապարհներով ձեռք բերած խոշոր հարստությունից, ուրիշ ոչ մի չնորհ կամ բարեմասնություն չունի:

ՀԱՍԱՆ ԱԼԻ ԽԱՆ ԱՄԻՐ-Է ՆԵԶԱՄ

Սա Սանանդաջի եւ Քերմանշահի միջեւ գտնված քրդական Բիջար գյուղից է: Գահաժառանգի վեզիրն է եւ Ատրպատականի նահանգապետը: Դիտե լավ ֆրանսերեն, Փարիզում դեսպանի պաշտոն է ունեցել, որոշ ժամանակ էլ բնակվել է Լոնդոնում: Հակառակ իր յոթանասուն եւ հինգ տարիներին, իրեն հանձնված գործերը կատարում է լավագույնս: Բանիմացության եւ վարչական կարողությունների չնորհիվ, Ատրպատականի նահանգը բարեկարգել է եւ զսպել քրդերի ըմբոստությունները: Արեւելքցիների մեջ դժվար է կազմակերպական ընդունակություններով մարդ գտնելը: Եթե ամբողջ Իրանում եվրոպական իմաստով որեւէ կազմակերպիչ գտնվի, ապա դա կլինի միայն եւ միայն Ամիր Նեզամ Գարրուսին: Ենթադրվում է, որ գահ բարձրանալուց հետո գահաժառանգը նախարարության պաշտոնը կտա Ամիր-ե Նեզամին: Դա Իրանի ժողովրդին երջանկություն կբերի:


ԱԼԻ ՂՈԼԻ ԽԱՆ ՄՈՀԲԵՐ-Է-ԴՈՎԼԵ

Հեռագրի եւ հանքերի վազիր: Նրա որդին՝ Սանիը-է-Դովլեն, թագաժառանգի փեսան է: Հնդեվրոպական հեռագրալարի հաստատման օրից սերտ կապեր է ունեցել անգլիացիների հետ, նրանցից ստացել է չքանչան, քաղաքական ասպարեզում դեր չունի, գործարար մարդ է:

ԱՅԼ ՎԱԶԻՐՆԵՐ

Հայազգի Ջհանգիր Խան՝ արհեստների վազիր Մոհամմադ Հասան Խան Էթեմադ-օս-Սալթանեն մամուլի վազիրն եւ թագավորի համար թերթ կարդացողն ու թարգմանողը: Սահեբ Դիվան ֆաթհոլլահ Խան Շիրազին գահաժառանգի երկրորդ վազիրն է:

Այս բոլոր վազիրները եվրոպական դիրքի մարդիկ են եւ համարվում են մյուս վազիրների օգնականները:




Ֆաթհալիշահ

ՎԵՐՋԱԲԱՆ

Նասրեդդին շահի գահակալության ամբողջ ընթացքում պետական պաշտոններ է վարել Հայազգի պրենս (մեծ իշխան) Միրզա Մելքոմ Խան Նազեմ-էդ-Դովլեն, որի բազմաթիվ եւ բազմապիսի ծառայությունների մասին կան ստվարածավալ արխիվներ եւ փաստաթղթեր: Ցավոք, այս մեծ մարդու մասին Ջավահեր Քալամի թարգմանության մեջ մի բառ անգամ չկա: Եթե ընագրում է բացակայում, ապա պիտի դիտել, որ այս խոշոր աշխատանքն իր արժեքից մի մեծ մաս կորցնում է՝ նման կարեւոր անձնավորության մասին լռություն պահելով: Իսկ եթե թարգմանության մեջ է անտես առնվել (ինչպես թարգմանիչ պ. Ալի Ջավահեր Քալամն է իր առաջաբանում ակնարկում, ինքը կատարել է որոշ կրճատումներ), ապա համապատասխանաբար որոշակիորեն արժեզրկվում է գրքի պարսկերեն թարգմանությունը:

■

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ - 50



Լրացավ ճանաչված վրացագետ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Գեւորգի Մարգարյանի 50 տարին:

Իր երկրորդ 50-ամյակը Հայրապետ Մարգարյանը թեւակոխում է ծանրակշիռ վաստակով, որի խոսուն վկայությունը նրա աշխատությունների այսու հրատարակվող մատենագիտությունն է, Հայաստանի մայր բուհի պրոֆեսորի պաշտոնը, անդամակցությունը մի քանի, այդ թվում Իկկ, Գիտական խորհուրդներին:

Սիրով եւ ջերմորեն շնորհավորելով մեր ընկերոջը՝ մաղթում ենք նրան գիտական նոր բարձունքների նվաճում, անձնական եւ ստեղծագործական երջանկությամբ լուսաշող շատ ու շատ տարիներ:

Գիտական աշխատությունների մատենագիտություն

Մենագրություններ

1. Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր. Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1980. - 254 էջ:
2. Մխիթար Անեցի. Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց. Աշխատասիրությամբ Հ.Գ.Մարգարյանի. երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1983. -139 էջ:
3. Զաքարյանները Հայոց և վրաց պատմության մեջ. Երևան, "Իրանագիտական Կովկասյան Կենտրոն" (հրատարակության ընթացքում է). - 9 մամուլ:

Հոդվածներ

4. Մխիթար Անեցու Պատմության աղբյուրների մասին. - ՀՀ ԳԱ "Լրաբեր" (հաս. գիտ.), 1972, N1, էջ 86-91:
5. К хронологии восстания, возглавленного Иванэ Орбели.- "Историко-филологический журнал" (ИФЖ), 1975, N 4, сс. 147-153.
6. რამდენიმე ეპიზოდი XII საუკუნის მეორე მეოთხედის საქართველოს ისტორიიდან. "თბილისის უნივერსიტეტის შრომები", ტ. 165, თბ., 1975, გვ. 81-89. *Մի քանի դրվագ XII դարի երկրորդ քառորդի Վրաստանի պատմությունից. - "Թբիլիսիի պետական համալսարանի աշխատություններ", հ. 165., Թբիլիսի, 1975, էջ 81-89 (վրացերեն):*
7. Մինգֆեոդալական պայքարը Գեորգի III-ի ժամանակ և Քուրդ ամիրապետը . - ՀՀ ԳԱ "Լրաբեր" (հաս. գիտ.), 1975, N 11, էջ 48-60:
8. К истории и хронологии внутриклассовой борьбы в Грузии и Северной Армении в 30-50-х гг. XII в. - "Кавказ и Византия", вып. 1, Ереван, 1979, сс. 56-66.
9. К датировке и интерпретации "Типика" Ваханского пещерного монастыря.- "Кавказ и Византия", вып. 2, Ереван,1980, сс. 81-86.
10. Ջալալ ադ-Դինի դեպի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ.- "Պատմա-բանասիրական հանդես", 1981, N 4, էջ 125-139:
11. Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ.- ՀՀ ԳԱ "Լրաբեր" (հաս. գիտ.), 1982, N3, էջ 72-81:
12. К вопросу о личности и деятельности "некоего Шадина". - "Кавказ и Византия", вып. 3, Ереван, 1982, сс. 64-72.
13. Հերզ գավառի և Հերք (Հերքան) բերդի տեղորոշման շուրջը .- "Բանբեր Երևանի համալսարանի", 1984, N 3, էջ 123-129:
14. Феодальный иммунитет и процесс закрепощения крестьян в Армении и Грузии в XI-XIII вв. - "Кавказ и Византия", вып. 4, Ереван, 1984, сс. 5-20.
15. Մուհթասիբության ինստիտուտը Հայաստանի քաղաքներում XI-XIII դդ. - "Պատմա-բանասիրական հանդես", 1985, N 1, էջ 114-122:
16. Վիպական տարրերը X-XII դարերի հայ պատմագրության մեջ.- "Պատմա-բանասիրական հանդես", 1987, N 4, էջ 41-47:
17. Об участии армян и грузин в Химсской битве 1281 года. - "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, сс. 14-21.
18. К переводу и пояснению одного отрывка "Истории и восхваления венценосцев". - "Кавказ и Византия", вып. 6, Ереван, 1988, сс. 50-52.
19. Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի ազատագրման հեռանկարները (XII-XIII դդ.). - "Պատմա-բանասիրական հանդես", 1989, N 1, էջ 35-49:
20. Տիրապետող դասակարգը Հայաստանում XII-XIII դարերում, . - "Պատմա-բանասիրական հանդես", 1990, N 4, էջ 39-46:
21. "Хроника страни Алуанк" Мхитара Гоша (состояние изученности памятника). - "К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении", Ереван, 1991, сс. 214-224.
22. Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան Հայ պատմագրության մեջ .- "Պատմա-բանասիրական հանդես", 1992, N 2-3, էջ 139-151:
23. Անին ուշ միջնադարյան չափածո ստեղծագործություններում .- "Անի", 1992, N 2, էջ 9-11:
24. Աշխարհաքաղաքական կացությունը և Հայ պետականության զարգացման միտումները (XI-XIVդդ.). - "Ազատա-

մարտ"-ի "Միտք" գիտատեսական հավելված, 1994 թ. հունվար, թ. Է, էջ ԻԳ-ԻԵ:

25. Զաքարյանների ծագումը. - "Պատմա-բանասիրական հանդես", 1994, N 1-2, էջ 156-175:

26. Վաչուտեանների իշխանական տան պատմութիւնից, "Շողակաթ" (Եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս), Ստանպուլ, 1995, էջ 29-54:

27. Autour des hypothèses de l'origine Kurde de la maison princière arménienne des Zakarides. - In: "Iran & Caucasus", vol. I. Yerevan-Tehran, 1997, pp. 25-46.

28. Մահկանաբերդցիների (Սաղունեաննների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում.- "Հայկազեան հայագիտական հանդէս", հ. ԺԸ, Պէյրութ,1998, էջ 9-39:

29. L'Arménie du XIIe à la première moitie du XIVe siècle: Un parallèle avec l'Italie. - In: "Roma-Armenia", Edizioni de Luca, Roma, 1999, pp. 145-148.

30. Հրեաները Վրաստանում.- "Իրան-նամէ ", N 32,33,34, 1999, էջ 57-58:

31. Khoshak-Khatun: An Armenian Princess in Iran .- In : "Iran & Caucasus", vol-s III-IV. Yerevan-Tehran, 1999-2000, p. 157-158.

Գրախոսություններ

32. Հ.Մ. Մխիթարյան, Հայերենի կետադրության համառոտ պատմություն, Երևան, 1972 .- ՀՀ ԳԱ "Լրաբեր" (հաս. գիտ.), 1973, N 5, էջ 108:

33. La Chronique attribuée au Connetable Smbat. Introduction, traduction et notes par Gérard Dédéyan, Paris, 1980. - *"Պատմա-բանասիրական հանդես", 1981, N 2, էջ 284-287 (հեղինակակից՝ Ա.Ա. Բոգոյան):*

34. Պ.Ա. Զոբանյան, Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին.- "Պատմա-բանասիրական հանդես", 1982, N 2, էջ 218-220:

35. П.М. Мурадян, Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети), Ереван, 1984, ИФЖ, 1985, N 2, сс. 243-245 (соавтор - П.А. Чобанян).

Ատենախոսությունների սեղմագրեր

36. Северная Армения и Грузия в 20-70-х годах XII в. (автореферат кандидатской диссертации), Ереван, 1979, с 19.

37. Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և հայ ավատատիրական ավագանին ԺԲ դարում - ԺԴ դարի առաջին կեսում, Պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 1996, 34 էջ:

Վանական համալիրների և եկեղեցիների թեզեր (պրոյեկտներ)

38. К датировке и интерпретации "Типика" Ваханского пещерного монастыря. - Конференция по истории средневековой письменности и книги. Тезисы докладов, Ереван, 1979, с. 54.

39. Феодальный иммунитет и процесс закрепощения крестьян в Армении и Грузии в XI - XIII вв. - Тезисы докладов и сообщений XVIII сессии Симпозиума по изучению проблем аграрной истории, ч. II, М.,1980, сс. 242-244.

40. Монашество и монастырское хозяйство в Армении и Грузии в XI-XIII вв. - "Бартольдовские чтения. 1982", М., 1982, сс. 39-40.

41. Հիմսի 1281 թ. ճակատամարտի պատմության չուրջ. - Ս. Աբովյանի ծննդյան 175-ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի և երիտասարդ գիտնականների ու մասնագետների գիտական կոնֆերանսի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1984, էջ 49-50:

42.. Ժողովրդական վեպի արձագանքները XI-XII դարերի հայ պատմագրության մեջ. - Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով: Զեկուցումների դրույթներ, Երևան, 1986, էջ 125-126:

43. Իշխանական տոհմերի ծագման խորենացիական տեսությունների արձագանքները ԺԲ-ԺԳ դարերի հայ մատենագրության մեջ .- Մովսես Խորենացու "Հայոց պատմության" 1500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի դրույթներ, Երևան, 1991, էջ 48-50:

44. Մովսէս Խորենացին որպէս հայ նախարարութեան պատմաբան .- Միջազգային գիտաժողով՝ Մովսէս Խորենացին եւ միջնադարեան հայ պատմագրութիւնը, Նիւ Եորք, 1992, էջ 11-12:

45. "Հայաստանը և իր անմիջական հարևանները" գիտական նստաշրջանի նյութերը, Երևան, 1992, էջ 79-84:

46. L'arrivée des nomades en Arménie aux XIe - XIVe siècles. Processus et conséquences. - In: "VIIe Congrès de l'Association Internationale des Etudes arméniennes", Louvain-la-Neuve. 1996, p.10.

47. Հայկական ռազմական ուժերը XII-XIII դարերում. - Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հրատարակչություն, Հանրապետական գիտաժողովի թեզիսներ, Երևան, 1997, էջ 31-32:

48. Նորավանքի հետ կապված իշխանական տները 12-14-րդ դարերում. - "Նորավանք-99" գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 1999, էջ 11:

49. "Ирано-кавказская контактная зона", Россия-Армения-Иран: диалог цивилизаций" (Доклады и тезиси докладов международной конференции), Ереван, 1999, сс. 21-24.

Դասագրքեր, ձեռնարկներ


50. Վրաստանը հնագույն ժամանակներից մինչև մ.թ. IV դարը, Վրաստանը վաղ ավատատիրական ժամանակաշրջանում, Վրաստանը զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում. - "Հայաստանի հարակից երկրների պատմություն", Ձեռնարկ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի համար, Երևան, 1992, էջ 122-145:

51. Ազատագրական պայքարը V դարում, Հայաստանը VI-VII դարերում, Պայքարը արաբական խալիֆայության լծի դեմ, Հայոց եկեղեցին և աղանդավորական, ժողովրդական շարժումները V-XI դարերում, Հայ-վրացական համագործակցությունը և հայկական երկրամասերի ազատագրումը, Հայոց պետությունը Կիլիկիայում, Կիլիկյան Հայաստանը թագավորության ժամանակաշրջանում, Հայաստանի քաղաքական ու տնտեսական անկման սկիզբը, Հայկական մշակույթը X-XIV դարերում, "Հայոց պատմություն", Դասագիրք Հանրակրթական դպրոցի V-VI դասարանների համար, Երևան, 1993, էջ 126-160, 211-283 /2-5-րդ հրատարակություն՝ Երևան, 1997-2000/:

Գիտական խմբագրումներ

52. Ակակի Շանիժե, Հին վրացերենի քերականություն, Վրացերենից թարգմանեցին Հ.Գ. Մարգարյանը, Պ.Ա. Զոբանյանը, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1983. - 224 էջ:

Ն.Է. Գալլագեր. Միջին Արեւելքի պատմության գնահատումներ *(Հարցազրույցներ Միջին Արեւելքի մասնագետ առաջատար պատմաբանների հետ). Լոնդոն, 1994. - 197 էջ, անգլերեն:*



Ներկայացվող աշխատությունը բաղկացած է ևախաբանից, ևերածությունից, ութ բաժիններից եւ առարկայական ցանկից: Հեղինակը Միջին Արեւելքի պատմության ժամանակակից մի շարք մասնագետների՝ Ա. Հուրմանիի, Ե. Իսավիի, Ա. Ռայմոնդի, Ա. Մարսոքի, Մ. Ռոբինսոնի, Ն. Քեդդիի, Հ. Ինալջիքի եւ Ա. Ռաֆեղի հետ վարած հարցազրույցների միջոցով փորձում է ևերկայացնել բեժ հակամարտություններով բռնված այս տարածաշրջանի արդիական իևնդիրները եւ փոխադարձ թշնամանքի տեւականության պատճառներն ու արմատները: Ուշագրավ է, որ միեւնույն հիմնահարցի վերաբերյալ տարբեր երկրների ևերկայացնող գիտնականների կարծիքները հաճախ միմյանց հակասում են: Սակայն, միեւնույն ժամանակ, ինչպես հեղինակն է նշում, այդ տարակարծության հիմքերի բացահայտումն ու վերլուծությունն է, որ հնարավորություն կտա հեռագայում հասնել փոխըմբռնման: Գրախոսվող աշխատանքը հիմնականում ուղղված է Մերձավոր Արեւելքի արդի պատմության իևնդիրներով հետաքրքրվողներին, ինչպես նաեւ քաղաքագետների լայն շրջանակներին:

Գրքի վերջում ընթերցանության համար հանձնարարելի գրականության ցանկն է, որտեղ ընդգրկված մի շարք հիմնարար աշխատանքներն իսկ խոսում են հեղինակի՝ ուսումնասիրության առարկային քաջատեղյակ լինելու մասին:

Գրքի հրատարակումը եւ ձեւավորումը իրականացված է բարձր մակարդակով:

Վ. Ոսկ.

Ֆարհադ Դաֆթարի. *Ասասինյան լեգենդներ (Իսմայիլականների առասպելները).* Լոնդոն-Նյու-Յորք: "I.B.Tauris", 1995. - 213 էջ, անգլերեն



Ասասինները կամ նիզարիները իսմայիլականության (շիիզմի յոթ-իմամական ուղղության) մի ճյուղավորում էին եւ պատմության մեջ հայտնի են որպես իրենց քաղաքական հակառակորդներին սպանությամբ վերացնող գաղտնի մի եղբայրակցություն: Դոգմատիկ հիմքով ասասինները շատ քիչ էին զանազանվում իսմաիլական մյուս հոսանքներից, սակայն ունեին քաղաքական միանգամայն ուրույն ռազմավարություն: Քաղաքական պայքարի հիմնական ձեւը նրանք համարում էին ահաբեկչությունը եւ այդ ուղղությամբ հասել էին մեծ հաջողությունների՝ մինչ այն աստիճան, որ, շնորհիվ իրենց մոլեռանդ մահապարտների, ի զորու էին հաշվեհարդար տեսնել ցանկացած անձի հետ: Նույնիսկ ժամանակի թագավորները, վեզիրներն ու իշխանական ամենաբարձր դիրքեր գրավող գործիչները ասասինների ոտնձգություններից ապահովագրված չէին զգում իրենց:

Ասասինների եղբայրակցությունը հիմնականում կազմված էր պարսիկներից: Այն հիմնադրել է Հասան իբն Սաբբահը, որը 1090-91 թթ. գրավելով դժվարամատչելի Ալամութ բերդը (Համադանի մոտ), այն դարձրեց իր մայրաքաղաքը:

Ասասին եզրը հանգում է ֆրանսերեն assassin բառին (խաչակրաց արշավանքների մասին 12-րդ դարից վկայված ֆրանսիական տարեգրություններում), որը արաբերեն haššīšī (haššīšīyūn) ձեւի աղավաղված տարբերակն է: Իսկ վերջինս նշանակում է "թմրամոլ", հաշիշ (Cannabis indica) օգտագործող: Ասասինները եւ, ընդհանրապես, սուֆիական աղանդների մեծ մասը, ճիճաճեսի (*զիքր*) ճամանակ՝ էքստատիկ վիճակի հասնելու համար, հիրավի օգտագործում էին թմրեցնող նյութեր, որոնց թվում՝ հաշիշ: Ընդ որում, ասասինները "գործուղման" մեկնելիս, առավել համարձակ լինելու համար պարտավոր էին հաշիշ ընդունել: Այնքան խորն է եղել ասասինների թողած հետքը պատմության մեջ, որ նրանց անվանումն այսօր դարձել է "մարդասպանի", "քիլլերի" հոմանիշ համարյա բոլոր եւրոպական լեզուներում: Ասասինների ուխտը գոյատեւեց մինչեւ 13-րդ դարի կեսը՝ 1256 թ.-ը, երբ Հուլագու խանը գրավեց Ալամութը եւ գերեւարեց վերջին "Լեռան ծերուկին" ("le Vieux de la montagne"), Ռուքն ադ-Դին բեն-Մուհամմադին, ու մահապատժի ենթարկեց նրան:

Բնական է, որ երկու դար տեւած ասասինների ռազմա-կրոնական համայնքի գոյությունը խաչակրաց ժամանակաշրջանում հիմք է դարձել եվրոպական ավանդության մեջ բազում առասպելների ու հեքիաթախառն պատումների առաջացման: Հենց այս ֆանտաստիկ հեքիաթները մոլեռանդ մարդասպանների ու նրանց նույնքան մոլեգին ու դաժան առաջնորդի՝ "Լեռան ծերուկի" (ըստ երեվույթին, արաբերեն šeyx al-jabal անվանման փոխադրությունն է) մասին են, որ կազմում են ներկայացվող ուսումնասիրության առարկան: Հեղինակը՝ Ֆարհադ Դաֆթարին, ինքը, հավանաբար, եվրոպաբնակ իսմայիլական, խնամքով կարգադասել է դրանք, վեր հանել իրականը առասպելական հավելումներից ու փորձել պարզել դրանց ծագման ու ձեւավորման պատմությունը:

Գրքում, որպես հավելված, բերվում է 19-րդ դարի ֆրանսիացի խոշոր արեւելագետ բարոն Սիլվեստր դե Սասիի՝ Memoire sur la dynastie des Assassins, et sur l'étimologie de leur nom դասական ուսումնասիրության անգլերեն թարգմանությունը (131-188 էջերը)՝ համառոտ առաջաբանով:

Մ.Ա.

ՍՊԵՐ ԳԱՎԱՌԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16-ՐԴ ԴԱՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԹԱՓՐԻՐ ԴԱՖԹԱՐՆԵՐՈՒՄ

Լուսինե Սահակյան

Բաբերդ գավառին նվիրված մեր մի հրապարակման մեջ արդեն նշել ենք, որ վերջերս Թուրքիայում հրապարակված դիվանական նյութերը, հատկապես՝ Թաբու-Թահիրի դաֆթարները (աշխարհագիր-հաշվառման մատյանները) արժեքավոր տեղեկություններ են պարունակում նվաճված տարածքների պատմա-աշխարհագրության եւ ժողովրդագրության մասին[1]:

Նմանօրինակ հրապարակումների թվին է պատկանում թուրք պատմաբան Իսմեթ Միրօղլուի «Բաբերդի սանջակը 16-րդ դարում (XVI yüzyılda Bayburt sancağı, Istanbul, 1975)» գիրքը, ուր քաղվածաբար զետեղված են Անկարայում գտնվող՝ Թուրքիայի Գլխավոր արխիվի եւ Tabu-Kadastro Genel Müdürlüğü Kuyûd-ı Kadîme դիվանների նյութերը:

Ի. Միրօղլուն ներկայացրել է 16-րդ դարում Բաբերդի սանջակում եւ հարակից գյուղախմբերում (նահիեներում)՝ Սպեր, Վերին Դերջան, Ներքին Դերջան, Քելքիք, Քովանս, Յաղմուրդերեսի, Շոգայն (Շաղագոմ), կատարված հաշվառումները (*թահրիրները*):

Դաֆթարներում հիշատակված հարկերի ու տուրքերի անվանումներից եւ զանազան այլ եզրերից կարելի է մակաբերել, որ Օսմանյան Կայսրությունը իր կազմավորման սկզբնական շրջանից ի վեր ներբորեն յուրացրել է պարսկական, հայկական, բյուզանդական եւ արաբական պետությունների սահմանած իրավական ու տնտեսական կարգերը՝ կատարելով նրանց վրա նոր ծանրացումներ ու հավելումներ: Համաձայն մի թուրք հեղինակի՝ «Նոր երկրներ եւ շրջաններ գրավելուց անմիջապես հետո, տեղի էր ունենում գրանցում (*թահրիր*), որով որոշվում էր ամեն գյուղի տասանորդի եկամուտը եւ բնակչությունը, ըստ տների (*խանեի*), ինչպես նաեւ ամեն *կազայի* առանձին կամ կոլեկտիվ օգտագործված անտառների եւ արոտատեղիների քանակը: Այսպես, եթե մի սանջակ հարյուր բեռ *ակչեի* տասանորդի եկամուտ ունենար, նկատի առնելով, որ տվյալ շրջանը ունի դիրլիքների բոլոր տեսակները, վերոհիշյալ հարյուր բեռից 20 բեռը համարվում էր *խաս*, 10-ը՝ *զեամեթ*, 40-ը *թիմար*, 20-ը՝ *էվկաֆ*, 10-ը *օջաքլըլ* եւ *յուրթլուք*»[2]:

Այս աշխարհագրերը սովորաբար անցկացնում էին 30-40 տարին մեկ՝ պետության կողմից հավատարմագրված պաշտոնյաները[3]: Իրավասու պաշտոնյաները պարտադիր կերպով լինում էին բոլոր բնակավայրերում, արձանագրում հարկ վճարողների հողային տիրույթները (*խաս, թիմար, զեամեթ*)՝ ներառելով անգամ հարկերից ազատվածներին, հողատիրոջն ու հողագուրկին, ընտանիքավորին ու ամուրիին, տարիքավորին ու այրիին, արհեստավորին, *իմամին* (մոլլա, կրոնապետ), *փաւհազին* (քահանային), նույնիսկ հաշմանդամին: Սրանց կողքին արձանագրում էին *քշլաղները* (ձմեռանոցներ) եւ *յայլաղները* (ամառանոցներ), ածեցվող բերքի տեսակները, դրանց տարեկան քանակությունը, ջրաղացները, տարեկան եկամտահարկի քանակը[4]: Ապա մանրամասն տեղեկություններ են տրվում ցանքատարածությունների ու արոտավայրերի մասին: Բացի այդ, ծառայողին ու զինվորին վճարվող աշխատավարձի ապահովումը եւ պետության ընդհանուր ծախսերի ծածկումն ու լրացումը իրականացվում էին ի հաշիվ հողից գոյացած եկամուտներից գանձվող պարտադիր հարկերի միջոցով: Լ. Բարքանը խոստովանում է, որ վիճակագրական եւ հողային թահրիրների անցկացումը Օսմանյան Կայսրությունում պարտադիր էր՝ երկրում վարչատնտեսական-ֆինանսական իշխանությունն իրականացնելու եւ այն աստիճանաբար ամրապնդելու համար[5]: Անկասկած, այդ աշխատանքներին անմիջականորեն մասնակցել են նաեւ հայկական գյուղական համայնքների ներկայացուցիչները:

Գրանցումներից հետո կազմված դաֆթարները լինում են երկու տեսակ՝ ընդարձակ (*mufasal*) եւ համառոտ (*icmal*): Ընդարձակ դաֆթարը արձանագրում է հարկերն ու հարկատու վայրերը, իսկ համառոտը՝ թիմարի, զեյամեթի, ու խասի տերերին եւ այդ հողատիրույթների տարեկան եկամուտները[6]:

Կային նաեւ առանձին մատյաններ՝ *բաբու-թահիրիր դավթարներ* (Tabu-Tahrir-Defterler), որոնցում ամփոփում էին թահրիրների արդյունքները, պետական հողերին ու անշարժ գույքին տիրելու վկայագրերը: Յուրաքանչյուր թահրիր դաֆթար ունի «ներածական» բաժին, որտեղ ներկայացված են պետության հարկային քաղաքականության հիմնական սկզբունքները: Դրանք հայտնի են «*Կանուննամեներ*» (օրինագրեր) անունով, որոնց վրա նկատելի ազդեցություն են գործել ակկոյունլու Ուզուն Հասան փաղիշահի սահմանած օրենքները: Կանուննամեն արտացոլում է բնակչության սովորույթները, հարկերի ու տուրքերի տեսակները՝ ըստ վարչատարածքային եւ տեղական առանձնահատկությունների: Գրանցման դաֆթարները ցույց են տվել Թուրքիայի բոլոր գյուղերի եւ գավառների հարկատու (mükellef) բնակիչները, զինվորների թիվը, տարեկան եկամտի եւ բերքի քանակը, բոլոր արհեստներն ու ծառայությունները[7]:

Թահրիր դաֆթարների փաստական հարուստ նյութը վկայում է, որ 16-րդ դարում Բաբերդը, Սպերը, Դերջանը եւ հարակից շրջանները խիտ բնակչություն ունեցող վարչական միավորներ էին եւ մտնում էին Օսմանյան կայսրության հարկային համակարգի մեջ:

ՍՊԵՐԸ XV-XVI ԴԱՐԵՐՈՒՄ

Սպերը, ըստ «Աշխարհացոյց»ի, պատմական Հայաստանի՝ Բարձր Հայքի 11 գավառներից մեկն էր, որի տարածքը հիմնականում համապատասխանում է Թուրքիայի այժմյան Իսփիր գավառին՝ 6360 քառ. կմ[8]: Գավառն ընկած է Ճորոխ գետի վերին հոսանքի շրջանում, կենտրոնն Սպեր բերդաքաղաքն է[9]: Սպերի սանջակը արեւմտյան կողմից սահմանակից է Բաբերդին, արեւելքից՝ Կիսկիմի եւ Թորթումի գավառներին, հյուսիսից՝ Վրաստանին եւ Լազիստանին (Համշեն), հարավ արեւելքից՝ Էրզրումի հարթավայրին[10]: Վերջին ուսումնասիրությունները հաստատում են, որ վաղնջական ժամանակներից՝ առնվազն մ.թ.ա. 7-6-րդ դարերից Սպերը եղել է հայաբնակ[11]:

Սպերն իր ոսկու հանքերով հնագույն ժամանակներում գայթակղել է նաեւ հույն եւ հռոմեացի նվաճողներին: Հույն աշ-

խարհագրագետ Ստրաբոնի մի հաղորդման համաձայն՝ «Ոսկու հանքեր կան Սյուսպիրիտիսի (=Սպերի) մեջ, Կաբալայում, որտեղ Ալեքսանդրը ուղարկեց Մենոնին զինվորներով. սա խեղդամահ արվեց տեղաբնիկների կողմից: Կան նաեւ այլ հանքեր, հատկապես սանդիկս (sandix) կոչվածը, որը կոչվում է նաեւ «հայկական գույն» եւ նման է կալքեի (ծիրանի ներկին)»[12]: Այդ հանքերից հնուց ի վեր ոսկի է արդյունահանվել:

Խորենացու վկայությամբ, Սպերը Երվանդունիների օրոք Բագրատունյաց ժառանգական կալվածքն էր[13]: Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո Սպերը Հայաստանի հռոմեական մասի սահմանային վարչատարածք էր:

Մեր հետագա քննության համար կարեւոր է սկզբից ելեք նկատել, որ տարբեր ժամանակներում Սպերում հաստատվել են Հայաստանի այլ նահանգներից տեղաշարժված հոծ զանգվածներ, որոնց բարբառների ազդեցությունն արտացոլված է նաեւ գավառի տեղանունների մեջ (տե՛ս Չոփուրգենս-Ճողպուրկենց-ի ստորեւ կատարված ստուգաբանությունը): Այսպես, հայտնի է, որ, 789 - 790 թթ. Արաբատյան նահանգից մոտ ավելի քան 12 հազար մարդ, չկարողանալով այլեւս դիմակայել արաբ նվաճողների բռնություններին, տեղաշարժվում են դեպի Հունաց աշխարհ. «Սրանց առաջնորդներն էին Շապուհը՝ Ամատունյաց տոհմից, նրա որդի Համամը եւ ուրիշներ հայ նախարարներից ու նրանց հեծյալներից, - գրում է Ղեւոնդ պատմագիրը, - Եվ անօրեն ու ժանտ թշնամին, իր զորքով հետամուտ լինելով փախչողներին, հասնում է նրանց Վրաստանի սահմանում գտնվող Կող գավառում, որտեղ ճակատամարտ տալով (արաբներին) փախուստի են մատնում եւ ոմանց էլ սպանում, իսկ իրենք անցնում են Ակամսիս (Ճորոխ) գետը, որ բխելով Տայքի կողմերում՝ հոսում է հյուսիս-արեւմուտքով, անցնելով Եգերով, թափվում է Պոնտոս (Սեւ ծով): Եվ երբ անցան գետը, հունաց կայսր Կոստանդինը, շտապ լուր ստանալով, կանչեց նրանց, պատիվներ տվեց նախարարներին ու նրանց հեծյալներին, իսկ հասարակ ժողովրդին բնակեցրեց գեղեցիկ ու արգավանդ մի երկրում»[14]:

Այնուհետեւ Սպեր գավառի հարեւանությամբ՝ ավերված Տամբուր քաղաքի տեղում Համամ Ամատունի իշխանը կառուցում է նոր քաղաք՝ իր անունով կոչելով Համամաշեն, որ հնչյունական ամփոփմամբ դարձել է Համշեն կամ Հեմշին[15]: Արաբական նվաճումներից հետո Սպերը մտնում է Արմենիա ոստիկանության կազմում:

Սպեր տեղանունը հիշատակում է 8-րդ դարի հայ մատենագիր Ստեփանոս Սյունեցին. «Եւ դարձեալ քո լեզուիդ գիտելի զբովանդակ բառսն զեզերականս, որպէս զԿորճայն եւ զՏայեցին եւ զԽութացինն եւ զՉորրորդ Հայեցին եւ **զՍպերացին** (ընդգծումը՝ Լ.Ս.) եւ զՍիւնին եւ զԱրցախացինն. այլ մի՛ միայն զՍիջերկրեայսն եւ զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիք են ի տաղաչափութեան. այլեւ աւգտակարք ի պատմութիւնս, զի մի՛ վրիպեսցի անընդել գոլով լեզուայն»: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Սյունեցին Սպերը դրել է հայերենի եզերական բարբառ կրող ծայրաբեւեռային տարածքների ցանկում՝ Կորճայք եւ Տայք, Խութ եւ Չորրորդ Հայք, Սպեր եւ Սյունիք -Արցախ[16]:

885 թվականին Սպերը մտել է հայ Բագրատունյաց թագավորության սահմանների մեջ, իսկ 11-րդ դարի վերջերին այն նվաճել են սելջուկ-թուրքերը[17]: 1207 թ. Զաքարյանները ազատագրել են Սպերը, իսկ 1242 թ. այն ընկնում է մոնղոլների տիրապետության տակ:

1404 թ. իսպանացի ճանապարհորդ Ռուի Գոնսալես Կլավիխոն, Սամարղանդից հայրենիք վերադարձի ճանապարհին, անցնում է Սպերով: Այնտեղ հյուրընկալվում է մահմեդական տիրակալի (իմա՝ Պիահակաբեյի) մոտ: Կլավիխոն հատուկ նշում է նաեւ, որ «թեեւ երկիրը լեռնային էր եւ դժվարամատույց, սակայն հարուստ էր սննդամթերքով»[18]:

15-րդ դարում Սպերը հարակից գավառներով դառնում է պատերազմական գործողությունների ասպարեզ կարակյունլու եւ ակկոյունլու թուրքմենական ցեղերի, իսկ հետագայում՝ նաեւ Օսմանյան եւ Սեֆյան տերությունների միջեւ: 1473 թ. օգոստոսին Դերջանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ակկոյունլու սուլթան Ուզուն Հասանը, ծանր պարտություն կրելով թուրքերից, նահանջում է Թավրիզ: Դերջանի ճակատամարտից հետո Սպերի գավառը որոշ ժամանակ գտնվում է ակկոյունլու Յաղուբ փադիշահի (1478-1490) իշխանության տակ[19]: Սպերը՝ Մեծ Հայքի հյուսիս-արեւմտյան գավառների (Էրզրում, Կամախ, Դերջան, Բաբերդ, Սպեր եւ այլն) հետ միասին, Օսմանյան Կայսրությանն է անցնում միայն 16-րդ դարի սկզբում:

16-րդ դարից սկսած՝ թուրք-պարսկական պատերազմների պատճառով Բարձր Հայքը բազմիցս ենթարկվել է ասպատակությունների ու ավերածությունների. «Ի թվականիս մերոյ Ջծ (1501) զօրացաւ ազգն Պարսից, որ Սօֆի ասեն, որ է Ղզըլպաշ, որոյ անուն թագաւորին շահ Իսմայիլ ելեալ ի Սպահանայ եւ եկեալ էառ զԹարվէզ: Եւ առաքեաց զօրս բազումս երկիրս Հայոց՝ գերեաց. աւերեաց եւ ասպատակեաց բազում գիւղ եւ գաւառ: Եկն եւ եհաս ի գաւառն Խախտեաց, որ է Բաբերդ եւ պաշարեաց զամուր բերդն նորա եւ արար խսար Ջ(6) ամիս եւ ոչ կարաց առնուլ զնա, եւ եւ կորեաւ. եւ անուն Ղարաճայ Էլիազ»[20]: Մեկ այլ հիշատակարանում վկայվում է, որ «յայս օրերս (1503) էառ չիթախն (իմա՝ օսմանցին) զԲաբերդ ի Սոֆոյն եւ զՍպերու բերդն»[21]:

1508-1509 թթ. Բայազետ Բ-ի որդի Սելիմը դեպի Վրաստան կատարած իր երեք արշավանքներից ամենահայտնի՝ Քութայիսի արշավանքի ժամանակ գրավում է Կարսը, Էրզրումը, Արդվինը, ընդհանուր առմամբ՝ շուրջ 15 գավառ: Թուրք պատմաբան Յըլմազ Օզթունայը, առանց աղբյուրները հիշատակելու, գրում է, որ Սելիմը, «նվաճելով այդ տարածքները վրացիներից՝ միացնում է դրանք Օսմանյան Կայսրությանը: Դրանք են՝ *Հանաք, Արդահան, Փոսոֆ, Չըլդըր, Գյոլե, Իսփիր, Թորթում, Նարման, Օլթի, Օլուր, Շենքայա, Շավշաթ, Արդանուչ, Յուսուֆելի* գավառները, *Արդվինի կենտրոնը,* այդ թվում այժմյան Վրաստանի տարածքում գտնվող *Ախըսկա (Ախլցխա) եւ Ախըլքելեք (Ախալքալաք)* բնակավայրերը: Այստեղ ապրող վրացիները ամբողջությամբ ընդունեցին մահմեդականություն»[22]: Ակներեւ է, որ թուրք պատմաբանը միտումնավոր լռում է այդ տարածքներում ապրող հայ բնակչության մասին, մինչդեռ նշված տարածքների հիմնական բնակչությունը հայերն էին: Դա փաստում են ոչ միայն հայկական աղբյուրները, այլեւ, ինչպես ստորեւ կտեսնենք, օսմանյան թահրիր դավթարները:

Հետագայում ակկոյունլուների պետության կործանումից հետո Սելիմը գրավում է Բաբերդը, Երզնկան, Քեմախը, Սպերը, Գյումուշհանեն, Դերսիմը (Թունջելին) եւ միացնում իր սանջակին[23]: Այդ ժամանակ Սելիմը Տրապիզոնի կառավարիչն էր[24]:

Գրիգոր Կամախեցու ժամանակագրությունից (17-րդ դար) տեղեկանում ենք, որ «Թվին ՋՂԷ (1548) Ալխասն[25] երեկ (եւ) հանեց տարաւ զխոնքքարն (իմա՝ սուլթանը) ի Թարւէզ, ի վերայ եղբօրն, որ աւիրեց զԹարւէզ, իսկ տէրն Թարւիզու շահ Թա-

մազն եկեալ աւիրեց զԽնուս, զԲասէն, զԱրզրում, զԴերջանն, զԿեղի, զԲաբերթ, զԷրզնկան, **զՍպեր**[26]: Նոյնն է հաստատում նաեւ տվյալ դարաշրջանի մեկ այլ ժամանակագիր Դավիթ Բաղիշեցին. «Թվին ՋՂԷ (1548) Ալխաս եկն տարաւ զթագաւորն ի Թարւէզ յեղբօրն վերա եւ աւերեց զԹաւրէզ, զԽնուս: Իսկ տէրն Թարւիզու շահ Թամասն եկեալ աւերեաց զԹարւէզ, զԽնուս, զԲասէն, զԱրզուրօմ, զԿեղի, զԴերջան, զԲաբերդ, զԵզընկան, **զԽապեր**[27]: 17-րդ դարի հեղինակ Երեմիա Քյոմուրճյանը նախ հաղորդում է, որ Շահ Թահմասպը արշավում է «ի Բերկրի եւ ի Արճէշ եւ ի Խրնուս եւ ի Բասէն այլ, Կարնոյ գաւառ դիմէ, Դերջան, Կէղիւ ի Բաբերդ այլ: Եւ զըՍպերըն գաւառօքդ, մինչեւ յԵզընկան եկեալ հասեալ»: Քյոմուրճյանը նաեւ նշում է, որ դրանք հայկական եւ հայաբնակ գավառներ էին՝ **«ընդա, որ բընակիչք էին Հայ ազգ»,** եւ սրտի կսկիծով պատմում հայ բնակչության գերեվարության ու տարագրության մասին[28]:

1604 թ. Սպերի բնակչության մի մասը եւս ենթարկվում է Շահ Աբասի կազմակերպած մեծ բռնագաղթին[40]: Սակայն Հակոբ Կարնեցու 1668 թ. գրառած արժեքավոր վկայությունը հաստատում է, որ 17-րդ դարի երկրորդ կեսի դրությամբ գավառը լիովին պահպանել էր իր հայաբնակ մեծամասնությունն ու հայկական դիմագիծը.

Եւ անտի հասանէ ի ձորն մեծ ու անհուն, որ **ունի դղեակ մի պարսպաւոր շինել ի վերայ Ճորոխ գետոյն, որ այժմ Ըսպիր ասեն,** եւ է սա պարոնանիստ, եւ ունի գիւղս եւ մաղրայս ԳՃ (300). եւ մայրիս հոտով. է եւ ձորն այգիք անթիւ եւ ծառոյ պտուղք յոյով հոտով եւ համով. եւ ունի վանք մի հրաշալի անուն սրբոյն Յովհաննու Սկրտչին կառուցեալ, որ է այժմ միաբնակեցաց տեղիք. եւ ամենայն տարի սուրբ Խաչվերացնի տօնին գնան անդ ուխտաւորք բազումք: Եվ ունի ի գլուխս լերանցն յեայլաներ յոյժ խոտաւէտ եւ ջրաբուխ, որք բազում հօտք ոչխարաց եւ անասնոց ճարակաւորեալ. լինի յոյն եւ մեղր անթիւ. **եւ բնակիչք երկրին բովանդակ Հայք. որ գնացեալ հասն է մինչեւ ի գիւղն Խոտեւջուր** եւ ունի վանք երկու, եւ այլ եկեղեցիք բազում, որ այժմ աւերեալ եւ ամայի կան ի ձեռս Տաճկաց (ընդգծումն իմն է՝ Լ. Ս.)[41]:

16-17-րդ դարի դրությամբ գավառի հայաբնակ մեծամասնությունը փաստում են նաեւ Ի. Միրոօղլուի հրապարակած օսմանյան գրանցման դաֆթարների արձանագրությունները:

Սպերը Օսմանյան Կայսրության վարչական համակարգում (XVI-XVII դդ .)

1555 եւ 1639 թթ. թուրք-պարսկական պայմանագրերով Սպերը դառնում է Օսմանյան Կայսրության մաս՝ Էրզրումի կուսակալության գավառ: Այսպիսով՝ Մեծ Հայքի նահանգները, ամբողջությամբ կամ մասամբ մտնելով Օսմանյան Կայսրության վարչատարածքային կազմի մեջ, բաժանվում են զանազան **էյալեթների** կամ **վիլայեթների** (կուսակալությունների), դրանք էլ իրենց հերթին՝ **սանջակների** կամ **լիվաների** (գավառների), դրանք էլ՝ **կազաների** (գավառակների), իսկ կազաները՝ **նահիեների** (գյուղախմբերի):

Ի. Միրօղլուն, թահրիր դաֆթարների գրանցումների փաստական նյութի օգտագործումով, ներկայացրել է 16-րդ դարի առաջին կեսերին Բաբերդի, Սպերի եւ հարակից շրջաններում անընդհատ փոփոխվող վարչական բաժանումները[29]:

Օսմանյան կառավարման սկզբնական ժամանակաշրջանում ընդունված էր երկու կամ երեք առանձին շրջաններից ստեղծել մեկ վարչական միավոր: Այդպես եղավ եւ Բաբերդի պարագայում:

Վերադառնալով Իրան կատարած արշավանքից՝ Սուլթան Սելիմ Ահեղը 1514 թ. հոկտեմբերին գրավում է Բաբերդը եւ, միացնելով Երզնկային (էրզինջանին), այն դարձնում մեկ վարչական միավոր ու հանձնում Էմիր-ի Ահուր Բոյքըլը Մեհմեդ փաշային: Վերջինիս Տրապիզոն տեղափոխվելուց հետո, Բաբերդի եւ Երզնկայի կառավարումը՝ Տրապիզոնի հետ մեկտեղ, ստանձնում է Քըզըլ Ահմեդի որդի Միրզա բեյը: Սրա մահից որոշ ժամանակ անց Բաբերդի սանջակին եւ Երզնկային իշխելու պատասխանատվությունը կրում է Նահսու Բեյը: Վերջին երկու կառավարիչները Հայդար Չելեբիի Ռուզնամեյում (իմա՝ «Օրագրում») հիշվում են որպես «Բայբուրդի սանջակի բեյ», իսկ Բաբերդը դառնում է նրանց նստավայրն ու կենտրոնը[30]:

Բաբերդը, որպես հյուսիս-արեւելյան սահմանային շրջան, առանձին վարչական միավոր էր: Այն ռազմավարական կարեւոր դիրք էր գրավում Տրապիզոնի ու Էրզրումի միջեւ, եւ դա էր պատճառը, որ որոշ ժամանակ էյալեթի կարգավիճակ ունեցող սանջակ էր: Թեեւ կարճ մի ժամանակահատվածում այն կոչվել է Էրզինջան-Բայբուրդի սանջակ, սակայն սանջակի կառավարչի մշտական նստավայրը եղել է Բաբերդը: Սակայն, երբ Էրզրումը եւս վերջնականապես անցավ օսմանյան տիրապետության տակ, Բաբերդն աստիճանաբար կորցրեց սանջակի կարգավիճակը եւ վերածվեց կազայի[31]:

Մինչեւ Էրզրումի բեյլերբեյության (կուսակալության) հիմնումը, Բաբերդի սանջակը միացվել է մերթ Դիարբեքիրի, մերթ էլ՝ Ռումի (Rum-Hadis) բեյլերբեյությանը[32]: 1517 թվականին կազմված եւ օսմանյան վարչական համակարգը ներկայացնող մի դաֆթարում Բաբերդի սանջակը Քեմահի (Կամախ), Քիղիի (Քղի), Չեմիշկեզեքի (Չմշկածագի) եւ Իսփիր (Սպեր) սանջակների հետ միասին միացվել է Դիարբեքիրի բեյլերբեյությանը, իսկ 1520 թվականի՝ Քարաման-Ռում Թահրիր դաֆթարի համաձայն՝ այդ սանջակները միավորվել են Ռումի բեյլերբեյությանը[33]: 1535 թվականի հուլիսի 22-ին (հիջրեթի 942 թ., 21 մուհարրեմի) Բաբերդի եւ Կամախի սանջակները կրկին միացվել են Դիարբեքիրի կուսակալությանը: Սուլթան Սուլեյման Քանունիի Իրաքյան արշավանքի ընթացքում (1534 թ.) Բաբերդի եւ Կամախի սանջակները միավորվելով տրվում են Դուլքադրցի տնից Ալաուդդովլե Բեյի թոռ եւ Շահրուն Բեյի որդի Մեհմեդ Խանին: Մեկ տարի անց, երբ սուլթանը վերադառնում է այս արշավանքից, նոր կազմվող Էրզրումի բեյլերբեյությունը (1535թ. սեպ. 26) հանձնում է Մեհմեդ Խանին: Նրա վերահսկողության տակ գտնվող Բայբուրդ-Քեմահ (Կամախ) սանջակը սկսում է կոչվել **«Փաշայի սանջակ»**: Քանի որ Էրզրումի բեյլերբեյության հիմնման պահին ավերված Էրզրում քաղաքը վերակառուցման ընթացքում էր, առաջին բեյլերբեյերի նստավայրը մնում էր Բաբերդը: Սակայն սկսած 1548 թվականից **«Փաշայի սանջակ»** (այն է՝ կուսակալի մշտական նստավայր եւ էյալեթի կենտրոն) է դառնում Էրզրումը: Բաբերդը, որպես առանձին սանջակ, Էրզրումի էյալեթի կազմում էր մինչեւ 1551 թվականը: 1568 թվականից հետո այն դարձել է Էրզրումի սանջակի կազա, իսկ XVII դարի դրությամբ (1631)՝ էյալեթի լիվա[34]:

Այնուհետեւ թուրք հեղինակը ներկայացնում է Բաբերդի սանջակը՝ իր նահիեներով հանդերձ.

1. 1516-1518 (հիջրեթի 922-924) թվականին կազմված դաֆթարի համաձայն՝ Բաբերդի սանջակը իր մեջ ընդգրկում էր **Քելքիթ-Սադաքի, Քովանսի, Վերին Դերջանի (Tercan-ı ulyâ) եւ Ներքին Դերջանի (Tercan-ı süfla)** նահիեները: Նույն դաֆթարից պարզվում է նաեւ, որ **Քելքիթ-Սադաքի եւ Քովանսի** նահիեները անմիջականորեն **Բաբերդի** սանջակի մաս են եղել, իսկ **Դերջանի** նահիեները՝ **Բաբերդ-Էրզինջանի** սանջակների մաս: Սակայն ավելի ուշ շրջանի դաֆթարներից հայտնի է դառնում, որ սրանք էլ հետագայում մտել են Բաբերդի սանջակի մեջ: Դրանցից մեկը՝ **Մանսի (Չայրլը) եւ Մամախաթունի (Մամախաթունի),** իսկ մյուսը՝ **Չաթի** շրջակայքն է ընդգրկում: Պարզ չէ, թե ո՞ր սանջակին է պատկանել դաֆթարում արձանագրված **Շոգայն (Շաղագոմ)** անունը կրող անմարդաբնակ ու արվերված նահիեն: Որոշ ժամանակ անց այս նահիեն եւս, վերածվելով կազայի, մտել է Բաբերդի սանջակի մեջ:

2. 1520 (հիջրեթի 926) թ. Քարաման-Ռում թահրիր դաֆթարից պարզվում է, որ մի ընդարձակ հարթավայր զբաղեցնող Բաբերդի սանջակը համարվել է Ռումի էյալեթի վարչատարածքային միավոր: Սանջակը կազմված է եղել հետեւյալ կազաներից ու նահիեներից՝

ա) Բաբերդի կազա.

բ) Քելքիթի կազա.

գ) Քովանսի կազա (ներառյալ Յաղմուրդերեսիի նահիան).

դ) Խսփիրի կազա (ներառյալ Չերեմլու կամ Չերմելու, Օվաջքի եւ Քաբահոր նահիեները).

ե) Դերջանի կազա (Վերին եւ Ներքին Դերջան).

զ) Շոգայնի կազա:

Հայդար Չելեբիի «Ռուզ-նամե»-ի (Օրագրության) համաձայն՝ Բաբերդի գրավումից ուղիղ մեկ տարի անց, Սպերը եւս անցնում է օսմանցիներին, եւ 1515 թվականի նոյեմբերի 4-ին (հիջրեթի 921 թ., ռամազանի 27) որպես սանջակ հանձնվում Տրապիզոնի Ալայի բեյ[35]՝ Բայրաքի որդուն: (Սակայն Միրօղլուն նշում է, որ թուրքական արխիվներում պահպանված Խսփիրի սանջակին վերաբերող թահրիր դաֆթարները սկսում են 1520 թվականից): Ռումի դաֆթարին կցված է **«Էրզրումի նահիեն»** ներկայացնող մեկ այլ դաֆթար, ըստ որի՝ **Էրզրումի, Սերչեմեյի, Քարաշ-Քուլի, Էրզրում-Աբադի, Գեչիկի, Թեքմանի, Չերեմլուի, Օվաջքի** նահիեները համարվել են **Շոգայնի** կազայի վարչատարածքային միավորներ:

1530 (937) թվականին կազմված ընդարձակ թաբու-թահրիր դաֆթարի համաձայն սանջակի վարչական դրությունը մնացել էր անփոփոխ, եւ նրան պատկանող շրջանները հետեւյալներն են՝

ա) Վերին Դերջանի նահիե.

բ) Ներքին Դերջանի նահիե.

գ) Շոգայնի նահիե.

ե) Էրզրումի կազա (ներառյալ Էրզրումի, Սերչեմեյի, Ջինիսի, Քարաշ-Քուլի) Էրզրում-Աբադի, Գեչիկի, Թեքմանի, Չերեմլուի եւ Օվաջք նահիեները).

զ) Բաբերդի նահիե.

է) Քովանսի նահիե (ներառյալ Յաղմուրդերեսիի նահիե).

ը) Խսփիրի նահիե.

Նույն դաֆթարը հաղորդում է, որ սկսած 1530 թվականից Էրզրումը եղել է կազա, իսկ Շոգայնը՝ նահիե: Բնականաբար, 1520 թվականից հետո կազայի կենտրոնը Շոգայնից տեղափոխվել է Էրզրում: 1535 թ. Էրզրումի բեյլերբեյության հիմնումից հետո կազմվում են Էրզրումի եւ Սպերի առանձին սանջակներ:

3. Մինչեւ 1541-1542 (հիջրեթի 948-949) թթ. վերոհիշյալ շրջանների վարչական փոփոխություններին վերաբերող որեւէ վկայություն դաֆթարում չի արձանագրվել, սակայն նույն թվականին կազմված թիմարները գրանցող դաֆթարում Բաբերդը կրկին հիշվում է իբրեւ սանջակ՝ Քելքիթի, Քովանսի,Դերջանի նահիեներով: Իսկ 1568 (հիջրեթի 968) թ. Էրզրումի ընդարձակ թահրիր-դաֆթարում Բաբերդը նշվում է Էրզրումի կազա՝ կազմված Քելքիթի, Քովանսի եւ Յաղմուրդերեսիի նահիեներից: Մուրադ III-ի ժամանակաշրջանի (1574-1595) ընդարձակ ու 1591 (հիջրեթի 1000) թ. Բաբերդի համառոտ դաֆթարներից երեւում է, որ Բաբերդի եւ Սպերի կարգավիճակը մնացել է անփոփոխ[36]:

Հ. Ադոնցը, հենվելով Պոլ Ռայկոտի եւ օսմանյան սկզբնաղբյուրների վրա, ներկայացրել է 17-րդ դարի 60-70-ական թվականների՝ Մեծ Հայքում կատարված վարչական բաժանումների ցուցակը, որի համաձայն Էրզրումի կուսակալությունը կազմված էր պատմական Հայաստանի Բարձր Հայք, Տուրուբերան, Այրարատ, Տայք նահանգների ու Փոքր Հայքի մասերից: Այն ուներ 12 սանջակ եւ 13 բերդ[37]: 17-րդ դարի թուրք ուղեւոր Էվլիյա Չելեբին իր ուղեգրության մեջ եւս վկայում է, որ Էրզրումի էյալեթը կազմված է եղել 12 սանջակից՝ Կարահրսար-ի Շարքի, Քղի, Բասեն, Իսփիր, Խնուս, Մանազկերտ, Թեքման, Կուզիջան, Թորթում, Մժնկերտ, Մամրվան, Էրզրում[38]: Զուլալյանը նշում է, որ Յոզեֆ Համմերը, հիմք ընդունելով 17-րդ դարի թուրքական աղբյուրների տվյալները, Էրզրումի կուսակալությունում արձանագրում է 14 սանջակ, իսկ, ըստ Ղ. Ինճիճյանի՝ 18-րդ դարի վեջին դրանց թիվը հասնում է 12-ի[39]:

Սպերի բնակավայրերը, տեղանուններն ու ժողովրդագրությունը՝ պատմաժամանակագրական քննությամբ եւ ծանոթագրություններով

Սպեր գավառի թահրիր դաֆթարները կազմվել են 1520 եւ 1530 թթ..

1) Բնակավայրերն արձանագրվել են ըստ այբբենական կարգի: Գրանցումների լեզուն օսմաներենն է, որը հայերենի համեմատությամբ չունի հնչյունական (հատկապես՝ բաղաձայնների) այդքան հարուստ համակարգ: Բնականաբար, օսմաներենը չի կարողացել ճշտորեն արտացոլել հայկական տեղանուններում առկա մի շարք բաղաձայն հնչյուններ (*ջ-ծ-ց, ջ-ճ-չ*): Ուստի ցանկացած տեղանուն, որի հնչյունակազմը լիովին չի տառադարձվում օսմաներենով, աղավաղված է, խա-

բարված, ամբողջապես կամ մասնակիորեն բնաւունից հեռացած՝ *Քարչորը* դարձել է *Քարսոր (չ < ս)*, *Աղբյուրիկը՝ Սիբիրիր*, *Ճանճըարը՝ Ջանքեր*, *Ընկուզենը՝ Էնկյուջեր* եւ այլն: Նշենք նաեւ, որ տեղանուններում առկա է տարածագոտու բարբառի ազդեցությունը, որը նույնպես հուշում է գրանցման աշխատանքներին տեղացիների մասնակցությունը:

2) Այնուհետեւ, Սիրօղլուի հրապարակած նյութերի համաձայն, բնակչությունը հաշվառվել է ըստ տների (*hane*)՝ առանց ազգային պատկանելության նշումի, ընդամենը՝ քրիստոնյա եւ մահմեդական անորոշացնող հղումներով: Սակայն տարօրինակն այն է, որ վրացիները իբրեւ էթնիկ միավոր հիշվում են Բաբերդի սանջակի Աբուսթա գյուղում[42]: Ուստի՝ դաֆթարներն այլ բնակավայրերում էլ պետք է գրանցած լինեն նաեւ բնակչության էթնիկ պատկանելությունը, որը թուրք պատմաբանը միտումնավոր կերպով փորձել է լռության մատնել: Այս փաստը հետագայում հաստատել է ինքը Սիրօղլուն. իր ավելի ուշ հրատարակված՝ Խարբերդի սանջակին վերաբերող նույն՝ XVI դարի թահրիր դաֆթարները ներկայացնող աշխատության մեջ նա դժկամորեն խոստովանել է, որ դաֆթարներն արձանագրել են հայերին (...tahrirlerde Eramine kaydedilmis..) որպես առանձին էթնիկ միավոր (*XVI Yüzylda Harput Sancağı.* 1518-1566. Ankara, 1989, s. 63, 70): Այս աղճատված պատկերը կշտկվեր, եթե Սիրօղլուն, իբրեւ հավելված, հրապարակեր դաֆթարների օսմաներեն բնագրերն ամբողջությամբ կամ գոնե մասամբ:

Պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրներ փաստում են, որ XVI դարում Սպերի բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմել են հայերը: Իսկ *մահմեդական* ազգանիշ-հղումի տակ չպետք է ուղղակիորեն հասկանալ «թուրք», քանի որ Սպերի ու նրան հարակից գավառների բնակչության որոշ հատվածներ բռնի դավանափոխվել են[43]: Առանձին գյուղերի՝ հայ, հույն, վրացի, լազ համայնքները մահմեդականացել են: Թուրքերն այս վայրերում հաստատվել են ավելի ուշ՝ ամենայն հավանականությամբ XVIII-XIX դարերում: Հետեւապես՝ թե՛ օսմանյան թահրիր դաֆթարները, եւ թե՛ դրանց մերօրյա թուրքավարի «նուրբ» խմբագրումներով հրապարակումները, փաստորեն, խճճում են Օսմանյան Կայսրության ազգերի, ազգությունների ու ցեղերի ժողովրդագրությունը:

3) Թահրիր դաֆթարներում հրապարակված տեղանունները, իբրեւ զորեղ կռվաններ, ի չիք են դարձնում ազգային պատկանելությունը «մահմեդական» եւ «քրիստոնյա» անորոշացնող հղումներով սվաղելու փորձերը եւ հրապարակ բերում ճշմարտությունը: Դրանք, ինչպես ցույց են տալիս պատմաբանասիրական նյութերը եւ մեր տեղանվանական բառաքննությունների արդյունքները, հաստատում են, որ Սպերի գավառի գրեթե բոլոր բնակավայրերը եղել են բնիկ հայկական եւ այդպես էլ պահպանվել մինչեւ XVI-XVIII դդ.: Տեղանուններն ունեն իրենց բառիմաստները, որոնք կազմվել են տվյալ բնակավայրի գրաված դիրքը, հանքային եւ բնական ու տարածքային հարստությունը, բնակչության զբաղմունքը հատկանշող՝ արմատական կամ բաղադրյալ բառերով, մի երեւույթ, որ յուրահատուկ է հայկական տեղանուններին առհասարակ: Սպերի եւ հարակից գավառների տեղանունների թահրիր-դաֆթարյան գրանցումներն ունեն բացառիկ արժեք, քանի որ ներկայացնում են XVI դարում այդ ողջ տարածագոտու բոլոր բնակավայրերը՝ անուն առ անուն:

4) Դաֆթարներում ամուրիները գրանցվել են առանձին: Համաձայն Բաբերդի վիլայեթի կանուննամեի՝ գոյություն է ունեցել ամուրիության (*մյուջերրեդ*) հարկ: «Ոչ-մահմեդական ամուրի աղջիկներից գանձվում էր 30 ակչե, իսկ որբեւայրիներից 15 *ակչե*» (կանուն 15)[44]: «Ռայաթի աշխատունակ մահմեդական տղաներից որպես մյուջերրեդի հարկ գանձվում է 50 *ակչե:* Ոչ-մահմեդականների ամուսնացած զավակներից 25 *ակչե իսպենջի*[45] հարկ էր գանձվում: Մահմեդական ռայայի որդին եթե ամուսնանա, նրանից որպես *բեննաքի*[46] հարկ գանձվում է 12 ակչե: Ամուրի մահմեդականները եթե իր տրամադրության տակ ստրկուհի պահի, պարտավոր է մյուջերրեդի հարկ վճարել» (կանուն 16)[47]:

5) Միաժամանակ, թահրիր դաֆթարները կարող են դառնալ կարեւոր եզրահիմք՝ XVI-XIX դդ. հայկական աղբյուրներում եղած գրանցումները, վիճակագրական տվյալները, տեղանունները համեմատելու, ճշտելու եւ վերականգնելու համար: Դրանք նաեւ մեծապես օգնում են օսմանյան բռնատիրության կողմից քրիստոնյա ազգաբնակչության աստիճական մահմեդականացման եւ ուծացման պատմության կնճռոտ հարցերի լուսաբանմանը: Այսպես, օրինակ, Հ. Ղ. Ինճիճյանը իր «Աշխարհագրության» առաջին հատորում բազմաթիվ փաստերով ցույց է տալիս օսմանյան քաղաքականության աղետաբեր հետեւանքները՝ նշելով, որ եթե Մանազկերտի սանջակում XVII-XVIII դդ. հայկական գյուղերի թիվը 350 էր, ապա XVIII դ. 60-ական թվականներին կազմում էր 100, իսկ նույն դարի վերջում՝ 20[48]: Համեմատական վերլուծության արդյունքում հնարավորին չափով պարզվեց Սպերի ազգային կազմի շարժը XVI-XIX դարերում: Մասնավորապես, դասակարգել ենք գյուղերը, որտեղ. **ա)** XVI դարում թահրիր դաֆթարներն արձանագրել են քրիստոնյա բնակչություն, եւ XIX դ. վերջերին պահպանվել է ազգային նույն կազմը. **բ)** XVI դարում բնակչությունը քրիստոնյա է, XIX դ. վերջին՝ օտարազգի կամ խառն ազգային կազմով (Աբրանս, Աքնդոս, Բաղրիգենս, Չափանս, Դանգիս, Էնգյուջեք, Քոսքսոր, Քոբլաք, Մեգեհրեք, Սալաչոր, Թարփունի եւ այլն). **գ)** XVI դ. տեղավայրի բնակչության ազգային պատկանելությունը չի նշված, իսկ XIX դ. դրությամբ այն արձանագրվել է հայ կամ մահմեդական (Աիքիրիք, Դիտանոց, Դիշանս, Հոնթուս, Քընդրս /Գնդոց/ եւ այլն):

6) Աղյուսակ Ա-ն կազմել ենք՝ օգտագործելով Սիրօղլուի՝ հրապարակած Սպերի կազայի 41 գյուղի վիճակագրական տվյալները, որոնք թերի են եւ լիովին չեն ընդգրկում այդ տարածքի բոլոր բնակավայրերը: Հարկ է նշել, որ հեղինակը, ամենայն հավանականությամբ, մասամբ է հրապարակել Սպերի բնակավայրերի մասին թահրիր դաֆթարներում եղած տվյալները: Դա հաստատում է գրքում զետեղված քարտեզը, որով Սիրօղլուն, հենվելով նույն դաֆթարների վրա, փորձել է վերականգնել 1516-1530 թթ. Բաբերդի սանջակի, այդ թվում եւ Սպերի կազայի ամբողջական սահմաններն ու բնակավայրերը: Արդյունքում՝ Սպերի կազայի շուրջ 23 գյուղ, որ նշված են քարտեզի վրա, տարօրինակ կերպով բացակայում են նրա հրապարակած ցանկերում: Դրանք են ՝ ***Օրսոր (Օրչոր), Մողիլսոր (Մոլիկ չոր), Հոզահփուր (Խոզաղբյուր), Դեբերիք (Տաճարիկ), Գենդեհրեք (Գնդագրակ), Արևաս (Արևաց), Սյունեչլի, Քըլըչըջ, Շեյհիմսա, Էշքենես (Իշխանաց), Վակչեն (Վանքշեն),Քոսոկդոր (Քոսոկչոր), Վանք ,Սոր (Չոր), Նշանոր (Նշենուր), Վերին Քան, Ներքին Քան (Վերին- Ներքին Աղբյուր), Միքենս (Մբանց), Իքսոր (Այգեչոր), Հանքեք, Չիրքին, Քեբան (Կապան), Խասսոր (Խծաչոր):***

Իսկ այդ բնակավայրերը դժվար թե դաֆթարից դուրս մնացած լինեին, քանի որ, ինչպես արդեն Բաբերդի առիթով նշել ենք, թահրիր դաֆթարներում արձանագրվել էին անգամ **«անմարդաբնակ եւ ավերված»** բնակավայրերը: Սիրօղլուի՝ հայկական բնակչության քվակազմը նվազեցրած ներկայացնելու միտումնավորությունը եւ դրանք փաստող օրինակներ ցույց

էինք տվել նաեւ Բաբերդին նվիրված ուսումնասիրության մեջ. 1516 թ. ավերակ եւ անմարդաբնակ հայտարարված Ալագուղ, Ալմշկա, Անբահսա, Արուսկա եւ մի շարք այլ գյուղեր ունեցել են եկամուտներ, որ կնշանակի այդ գյուղերը ամենեւին էլ անմարդաբնակ չեն եղել[49]: Սակայն, Սպերի պարագայում Միրօղլուի աղավաղումն այլ սկզբունքով է տարվել. ա) բնակավայրերի մի մասը պարզապես դուրս է թողնվել ցանկերից, եւ բ) 17 գյուղերի բնակչության էթնոդավանաբանական պատկանելությունը չի նշվել, պետք է ենթադրել՝ այդ բոլոր գյուղերի հայաբնակ լինելու պատճառով (տե՛ս Աղյուսակ Ա):

Հավաստի հաղորդումների համաձայն, Էրզրումի նահանգի հայ տան (մեկ ընտանիքի) անդամների միջին թիվը եղել է 10 մարդ, իսկ մահմեդական տան՝ 6 մարդ[50]: Այս թվերը հիմք ընդունելով էլ՝ աղյուսակ 2-ում հաշվել ենք Սպերի 41 գյուղերի բնակչությունը ըստ ազգային-կրոնական պատկանելության (տե՛ս Աղյուսակ 2-րդ): Հայ տան անդամների միջին թիվը 10 մարդով հաշվելու հիմնավորությունը հաստատում է, օրինակ, Հունութ գյուղին վերաբերող՝ Սրվանձտյանցի գրանցած փաստը՝ 25 տուն (260 շունչ) հայ:

Ի. Միրօղլուն իր հաշվարկը կատարել է այլ սկզբունքով. որպես մահմեդական եւ քրիստոնյա մեկ տան միջին թիվը ընդունել է 5 շունչ, որով էլ առաջնորդվելով հաշվել է ամբողջ Բաբերդի սանջակի (ներառյալ՝ *Բաբերդի, Քելքիթի, Իսփիրի, Քուվանսի, Դերջանի եւ Շոգայնի* կազաները) բնակչությունը՝ համաձայն 1516, 1520 եւ 1530 թթ. թահրիր-դաֆթարների[51]: Այդ աղյուսակը, որը, մեր կարծիքով, թերի է, եւս զետեղել ենք այս հոդվածի մեջ (տե՛ս Աղյուսակ 3-րդ): Նույնիսկ Միրօղլուի հրապարակած տվյալներով՝ քրիստոնյաները (իմա՝ չնչին բացառությամբ, հայերը) կազմել են Սպերի բնակչության մեծամասնությունը:

1. Աբրանս(Abrans) - *1520 թվին ուներ 14 տուն, 13 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա: Եկամուտը՝ 4900 ակչա: Այժմ՝ Քույմպըլը:***

Սրվանձտյանցը գրանցել է *Ապրանս*, համաձայն 1878 թ. վիճակագրության՝ բնակչությունն այլազգի է[52]: Աբրանսը հայարմատ է, *ապարանք* բառի հնչյունափոխված ձեւն է, ընդ որում՝ բառամիջի *-պ* խուլ հնչյունը ձայնեղացել է տարածագործոտու բարբառի հնչյունական օրինաչափությամբ, վերջին *-ք*-ն՝ գրաբարյան հոգնակերտը, հայցական հոլովում հերթագայվել է *-ս*-ի: *Աբրանիսի, Աբրանիս, Ապրանք-Ապարանք* տեղանունը տարածված է եղել պատմական Հայաստանի տարբեր շրջաններում: Կովկասյան ռազմական շրջանի գլխավոր շտաբի գեն. Դենետի 1887-1888 թթ. կազմած վիճակագրական ցանկերում այս բնակավայրը արձանագրվել է **Աբրանիս**՝ 177 շնչով[53]: Թահրիր դաֆթարում Աբրանս տեղանունն է գրանցվել նաեւ Բաբերդի սանջակում[54]:

2. Ահբիրիք (Ahbirik) - *1520-ին՝ 15 տուն, 12 ամուրի, եկամուտը՝ 5700 ակչա: Այժմ՝ Յեշիլյուրթ:*

Բնակչության ազգային պատկանելությունը չի նշվում: Գ. Սրվանձտյանցը հիշում է Աղբյուրիկ, 1879 թ. վիճակագրությամբ՝ 15 տուն, 120 հայ բնակիչ, 150 այլազգի[55]: Դենետի աղյուսակում՝ Ագպերիկ՝ 471 շնչով[56]:

3. Աքնդոս (Akındos) - *1520-ին՝ 15 տուն, 13 ամուրի, եկամուտը՝ 3800 ակչա: **Բնակչությունը՝ քրիստոնյա:** Այժմ՝ Փնարլը:*

Ակնդոց, *«ակն-դ-ոց»*, որից թահրիր դաֆթարում է մտել *g < u* հետընթաց հնչյունափոխությամբ: Ըստ Սրվանձտյանցի աղյուսակի՝ *Ակնդոս*, բնակչությունը այլազգի[57]: Դենետի վիճակագրական ցանկում գրանցվել է Ակինդուս (էկենդուս)[58] :

4. Բադիրգենս (Badirgens) - *1520 թ. ուներ 12 տուն, 4 ամուրի, 3 սիւհահիզադե, **բնակչությունը՝ քրիստոնյա**, եկամուտը՝ 4020 ակչա: Այժմ՝ Չիվքեփնար:*

Պատրիկենց տեղանունն է՝ բառասկզբի *պ > բ* փոփոխությամբ՝ կազմված *պատրիկ-ենց* բաղադրիչներից: Ըստ Աճառյանի՝ «Պատրիկ, հունական իշխանական մի տիտղոս, այսպես էին կոչվում հատկապես արաբների կողմից Հայաստանի կառավարիչ կարգված հայազգի իշխանները: Բառը հունարենին է անցել լատիներենից՝ patricius, Կոստանդին կայսեր ձեռքով հաստատված իշխանական մի աստիճան»[59]: Գ. Սրվանձտյանցի աղյուսակում դրվել է «բոլորովին օտար ազգ բնակիչ ունեցող գյուղերի» ցանկում՝ **Պատըրկենց** տարբերակով[60]: Դենետի աղյուսակում՝ Բադիրկնիս՝ 289 շունչ բնակիչ[61]:

5. Ջանքեր (Canker) - 1530 թվին՝ 25 տուն, 18 ամուրի, ***բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 4831 ակչա: Այժմ՝ Դուզքոյ:*

Հավանաբար, բնիկ ձեւը եղել է *ճանճքար*, դավթարում արձանագրվել է աղավաղումով: Ճանճ արմատով սկսվող տեղանուններ տարածված են եղել Հայաստանի տարբեր շրջաններում՝ **Ճանջըգ, Ճանճի, Ճանճի բերդ, ճանճիկ, ճանճձոր, Ճանճկու սար, Ճանճուռ**[62]: Տեղանունը հատկանշական է Սպերի գավառին, քանի որ եւ թահրիր դաֆթարում (այսուհետեւ բ/դ-ում) եւ թե թուրքական աղբյուրներում Սպերը, ինչպես նաեւ Բաբերդը, հիշվում են իբրեւ մեղվաբուծության կենտրոններ[63]:

6.Չափանս (Çapans) - *1520 թվին՝ 28 տուն, 18 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 7150 ակչա: Այժմ՝ Չայրյոզու:*

Գ. Սրվանձտյանցը գրանցել է ***Չափանց,*** բնակչությունը՝ այլազգի: Դենետի աղյուսակում՝ ***Չափանիս (Չափանս)*** :

7. Չոփուրգենս (Çöpürgens) - *1520 թվին՝ 3 տուն, 1 ամուրի, Եկամուտը՝ 3015 ակչա: Այժմ՝ Չեվիզիլդերե:*

Բնակչության էթնիկ կազմը դավթարում չի նշվում:

«Չոփուրկենս» տեղանունը հայկական է՝ հավանաբար կազմված *«ճղոպուր (ընկույզ) եւ կ+ենց»* բաղադրիչներից՝ ***ճղոպուրկենց***: «Ճողոպուրտ-ընկույզ» բառը վկայված է որոշ գրական աղբյուրներում եւ հայերենի արեւելյան խմբակցության բարբառներում: Աճառյանը բառի ծագումը կապում է հին վրացերենի *ճուրզուրի*, լազերենի *ճուպուլի, ճուրքի (շագանակ)*

բառի հետ[64]: Աճառյանը արձանագրել է *ճողոպուրտ*, Ջահուկյանը -*պ*-ն առել է փակագծերի մեջ: Ուշագրավ է Ջահուկյանի տված բացատրությունը՝ ըստ որի, պետք է Աճառյանի նշած քարքվելական ծագման բառերի ցանկից հանել *ճողոպուրտը* «ընկույզ», որ «հանդիպում է Երեմիայի բառարանում, ուստի այն պետք է հանել հայերենի՝ քարքվելականից կատարած հին փոխառությունների թվից»[65]:

Ճողոպուրտ բառը, որ այժմ էլ առկա է Սյունիք եւ Արցախյան բարբառախմբում *ճղոպուր* ձեւով, հնարավոր է, որ գործածական է եղել նաեւ Սպերի բարբառում: Իբրեւ փաստ՝ թ/դաֆթարում արձանագրված *Չոկուրգևին* տեղանունը, որի մեջ բաղարկությունը այլակերպել է եւ «*ճղոպուր(պ)*»-ը դարձել է «*չուխուր-գ*»: Ըստ երեւույթին, այս բնակավայրը հարուստ է եղել ընկույզով, դա է հաստատում նաեւ նրա այժմյան անունը *Ջեվիզիլդերե* (Cevizildere), նշանակում է «*ընկույզի ձոր*»: «*Չոփուր*» բառը իր հնչյունակազմով գրեթե ամբողջությամբ կլանել է հայերենի *ճողոպուրտ-ճղոպուրտը*, բացի այդ՝ բառի հայերեն ծագումն հաստատում է նաեւ արձանագրված տեղանվան «*ևնց*» վերջածանցը:

Դեմետի վիճակագրական աղյուսակում հիշվում է *Չոկուրգիս* տարբերակով եւ 19- րդ դարի վերջի դրությամբ ուներ 111 շունչ բնակիչ[66]:

8. Դանզուտ-ը Ուլյա (Danzut-ı Ulyâ) - *1530-ին՝ 58 տուն, 23 ամուրի: **Բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 8370 ակչա, ուներ մեկ ջրաղաց:*

Թարգմանաբար՝ Վերին Տանձուտ. Սրվանձտյանցի գրանցմամբ Տանձուտ, 1879 թվականի տվյալներով՝ բնակչությունը եղել է այլազգի [67]:

9. Դանզուտ-ը Ֆըսըրըք (Danzut-ı-fısırık) - *1520-ին՝35 տուն, 17 ամուրի: Եկամուտը կազմում է 9680 ակչա: Այժմ՝ Սիլաթլը:*

Ազգաբնակչության կազմը չի նշվում: Դեմետի աղյուսակի համաձայն, 19-րդ դարի վերջին ուներ 337 շունչ բնակիչ[68]:

10. Դանգիս (Dangis) - *1520թվին՝ 8 տուն, 3 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը կազմում է 2860 ակչա: Այժմ՝ Գյունդողդու:*

Հավանաբար Տանկես տեղանունն է. 1879 թ. Սրվանձտյանցի վիճակագրության համաձայն, այն դասվում է այլազգի բնակչություն ունեցող բնակավայրերի ցանկում[69]: Ըստ Դեմետի՝ Դանգիս՝ 145 շունչ բնակչությամբ[70]:

11. Դիտանոս (Ditanos) - *1530 թվականին՝ 17 տուն, 5 ամուրի: Եկամուտը 4500 ակչա, ուներ մեկ ջրաղաց:*

Բնակչության կազմը չի նշված:

Դիտանոց կամ կարելի է վերականգնել Թթանոց, Սրվանձտյանցը գրանցել է Իտանոս՝ -դ-ի անկումով, 19-րդ դարի վերջում ունեցել է այլազգի բնակչություն[71]: Դեմետը արձանագրել է Դիդանուս՝ 362 բնակիչով[72]:

12. Դիշանս (Dişans) - *1520թ.՝ 10 տուն, 10 ամուրի: Եկամուտը՝ 4500 ակչա: Այժմ՝Բաշչեմեն:*

Բնակչության կազմը չի նշված: Դիշանս, «Այն Սպեր քաղաքից մոտ 15 կմ հս-արմ մի փոքրիկ գետակի անտառապատ հովտում է գտնվում: Կովկասի 5 վերստանոց քարտեզում նշանակված է *Դիշանս* տարբերակով»[73]: Հայկական աղբյուրներում հիշվում է *Թշանց, Հըշանց, Դիշանս*: Այն, ըստ երեւույթին, Սրվանձտյանցի նշած *Հըշանց* տեղանունն է: Վերջինիս աղյուսակի համաձայն, 19-րդ դարի վերջին այս բնակավայրն ուներ խառը բնակչություն՝ 20 տուն (180 շունչ) հայ, 60 շունչ թուրք: Սակայն, կարծում ենք, որ նախնական տարբերակը եղել է «*Թշանց*», քանի որ *թ* > *դ* հնչյունափոխությունը, որ առկա է դաֆթարում արձանագրված տեղանվան մեջ, ավելի համոզիչ է:

13. Էնգյուջեք (Engücek) -*1520 թվին՝ 9 տուն, 4 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 2500 ակչա: Այժմ՝ Քարաթաշ:*

Ընկուզեք տեղանունն է, որ դավթարում արձանագրվել է ամբողջությամբ աղավաղված եւ հնչյունափոխված տեսքով: Այն հետագայում է՛լ ավելի է հեռացել նախնական տարբերակից՝ *Ընկուզեք-Էնգյուջեք-Անկեմիկ:*

Գ. Սրվանձտյանցի տեղանվանական ցանկում՝ *Անկեմիկ*, որը 19-րդ դարի վերջի դրությամբ արդեն հայաթափ էր եղել[74]:

Դեմետի աղյուսակում՝ Էնկիջեկ (Անկիջեկ): 19-րդ դարի վերջին ունեցել է 385 շունչ բնակիչ[75]: Ընկուզեք տեղանունը պատահական չէ Սպերում, քանի որ՝ «Տրապիզոնի եւ առհասարակ Սեւ ծովի այդ շրջաններում կաղինի եւ ընկույզի մշակությունը տարածված ու զարգացած լինելով, Տրապիզոնի իշխողների եկամտի մեջ ընկույզի (եւ կաղինի) եկամուտը կարեւոր տեղ էր գրավում»[76]:

14. Էքերգեր (Ekerger) - *1530 թվականին՝ 2 տուն մահմեդական եւ 7 տուն, 3 **ամուրի քրիստոնյա:** Եկամուտը՝ 2055 ակչա:Այժմ՝ Շահիքլիք:*

Տեղանվան մեջ առկա են ագարակ կամ ագռավաքար բաղադրական կազմությունները:Դեմետի աղյուսակում արձանագրվել է **Էկրեքիր**[77]:

15. Հըրդամուշ (Hırdamuş) - *1520 թվին՝ 9 տուն, 4 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 4950 ակչա: Այժմ ՝Էսենյուրթ:*

Համաձայն Դեմետի աղյուսյակի՝ **Խերդամուս**, ունեցել է 299 բնակիչ[78]:

16. Հոնթուս (Hontus) - *1520 թվին՝ 3 տուն, 7 ամուրի, 2 ոռջար, 2 ոռջարզադե, 2 զավիյեղարզադ: Այժմ՝ Գյոլյանը:*

Բնակչության կազմը չի նշված:

Հիշեցնում է հայերենի Խոտնոց-ը *ն/պ*-ի դրափոխությամբ: Ա. Երիցովի կազմած վիճակագրական ցանկում հիշվում է ***Խոնքուս*** տարբերակով՝ թուրք բնակչությամբ[79], իսկ Դեմետի աղյուսակում՝ Խոնքուս-Խունքուս, բնակչությունը՝ 288 շունչ:

17. Հունուբ (Hunut) - *1520 թվին՝ 99 տուն, 33 ամուրի, 30 տուն դերեբենջի[80], բնակչությունը՝ քրիստոնյա: Եկամուտը՝ 31. 999 ակչե: Այժմ՝ Չամլըքայա:*

Դաֆթարում արձանագրվել է իբրեւ քրիստոնյա բնակչություն ունեցող մեծ գյուղ: Հայկական աղբյուրներում նույնպես հիշվում է ***Հունուբ*** տարբերակով (հավանաբար Հուն-ուտ *պ>բ)*: Ինճիճյանը նշում է, որ Սպերին հաճախ անվանել են Հունուբ[81]: Գ. Սրվանձտյանցի փաստարկումների համաձայն, 19-րդ դարի վերջին Հունուբում կար 25 տուն (260 շունչ) հայ եւ 1200 թուրք բնակիչով, ունեցել է Ս. Աստվածածին եկեղեցի, Աշոտյան Ծաղկոց վարժարան՝ 30 ուսանողով[82]:

18. Հոթիար (Hothar) - *1530՝3 տուն, 7 ամուրի, 2 ոռջար, 2 ոռջարզադե, 2 զավիյեդերեզադե: Բերքը՝ ցորեն, գարի, ինչպես նաեւ բանջարաբոստանային մշակումներ: Եկամուտը՝6050 ակչա: Այժմ՝ Յըլդըզթեփե:*

Էթնիկ կազմը չի նշվում: *Հոթար* տեղանունը վերականգնում ենք **Խոտիարք** տարբերակով: Հայերենի բարբառներում *հ>խ, խ>հ* հնչյունների փոփոխությունները ոչ առնմանական եւ առնմանական հնչյունական փոփոխության արդյունք են: Տեղանվան մեջ առկա է նաեւ *-իթ-* հնչյունափոխությունը *բ-ի*, ինչպես նաեւ բառավերջի *-բ-ի* անկում: Խոթիար անունով հարթավայր է հիշվում նաեւ Արեւմտյան Հայաստանում՝ Ակն քաղաքի մոտակայքում[83]:

19. Քոսքըսոր (Kosıkısor) - *1530 թվին՝ 13 տուն, 7 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Բերքը՝ ցորեն, գարի, սպիտակ կորեկ եւ բանջարաբոստանային մշակումներ: Եկամուտը՝ 6000 ակչա: Այժմ Ըրմաքքոյ :*

Հավանաբար այս տեղանունը Միրօղլու քարտեզում նշանակված **Քոսոքդոր** տեղանունն է:

20. Քոսքոր (Koskor) - *1530 թվին՝ 3 տուն, 2 ամուրի, 7 ոռջար, 10 ոռջարզադե, 16 սիպահիզադե: Եկամուտը կազմում է 2198 ակչա: Այժմ՝ Քոնակկերի:*

Բնակավայրի էթնիկ կազմը չի հիշվում: Առաջարկում ենք վերականգնել **Գոցքար**:

21. Լյաքուբար (Lâkübar) - *1520 թվականին՝ 3 տուն, 3 ամուրի, **բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը՝ 1399: Այժմ՝ Թաշջա:*

Տեղանունների բառարանում Լագուբար անունով գետ է հիշվում Ճորոխի ավազանում, որի ձախակողմյան վտակը կոչվել է Լագուպար: Նույն անունը կրող գյուղ է արձանագրվել էրզրումի նահանգի Կիսկիմի գավառակի Խոտրջրի շրջանում[84]: Դեմետի աղյուսակում (1887-1888 թթ.) գրանցվել է 133 շունչ բնակիչ[85]:

22. Մուհշեմ (Muhşem) - *1530 թվին՝ **23 տուն, 6 ամուրի քրիստոնյա,** 1 տուն մահմեդական: Եկամուտը՝ 4200 ակչա: Այժմ՝ Օզքուիրակ:*

Թվում է, որ այն **Մուշեղաշեն տեղանունն է**: Լեզվական արագաբանության եւ ամփոփման օրենքով տեղանվան բառամիջյան նմանավանկերը ձուլվել են եւ, ինչպես նկատել ենք, հայկական տեղանունների բառամիջյան դիրքի ***-ղ-*** հնչյունը դաֆթարում գրանցվել է ***-հ-*** (օրինակ՝ *Աղբյուրիկը՝Ահբիրիք*), իսկ վերջի վանկի /շեն/ ***-ն*** հնչյունափոխվել է ***մ-ի***: Այս անունով բնակավայր է եղել Բիթլիսի նահանգում[86]: Գ. Սրվանձտյանցի աղյուսակում գրանցվել է Մողոշեն տարբերակով եւ ունեցել այլազգի բնակչություն[87]: Դեմետի աղյուսակում գրանցվել է Մոխշինիս տարբերակով եւ ունցել է 184 բնակիչ[88]:

23. Քալկոնս (Kalkouns) - *1520 թվին՝ 33 տուն , 11 ամուրի: Եկամուտը կազմում է 10. 964 ակչա: Այժմ՝ Դեմիրմենլի:*

Բնակչության կազմը չի հիշատակվում: Ըստ Սրվանձտյանցի՝ ***Քալկունց*** օտար բնակչությամբ[89]: Կարծում ենք, որ նախնական տարբերակը եղել է ***Քաղկունք // Քաղկունս*** (ղ // լ զուգահեռ գործառությամբ): Դեմետի աղյուսակի համաձայն՝ **Կարկունս** (*Կարկունիս*), ունեցել է 261 բնակիչ[90]:

24. Քընդրս (Kındıs) - *1520-ին՝ 2 ոռջար, 6 ոռջարզադե, 4 սիպահիզադե: Եկամուտը կազմում է 1755 ակչա: Այժմ՝ Լյալելի:*

Գնդոց տեղանունն է, որն բ/դ-ում արձանագրվել է ձայնավորների հնչյունափոխությամբ: Հավանաբար սա նույն ***Քունդուսն*** է՝ հիշատակված Ա. Երիցովի բնակավայրերի վիճակագրության մեջ: 19-րդ դարի վերջում ունեցել է թուրք բնակչություն[91]:

25. Քադմիր (Kadmir) - *1520 թվին՝ 4 տուն, 5 ամուրի, 4 սիպահիզադե: Եկամուտը՝ 2250 ակչա: Այժմ՝ Չաթաքբահչե:*

Բնակչության կազմը չի հիշատակվում: Դեմետի աղյուսակում գրանցվել է ***Քադմի*** -ր-ի անկումով: 19-րդ դարի վերջին ունեցել է 175 բնակիչ [92]:

26. Քոբլաթ (Koblat) - *1520 թվին՝ 19 տուն, 11 ամուրի: Եկամուտը՝ 4000 ակչա: Այժմ՝ Արմուբլու:*

Կոբլաթ, Ա. Երիցովի գրանցումների համաձայն 19-րդ վերջին ունեցել է թուրք բնակչություն[93]:

27. Քարսոր (Karsor) - *1520 թ. 19 տուն, 11 ամուրի, **բնակչությունը քրիստոնյա,** եկամուտը՝4000 ակչա: Այժմ՝ Փեթեք-*

լի:

Քարձոր տեղանունն է: Ըստ Հ. Տաշյանի՝ «Ձեռագիր Յայսմաւուրք մը, որ Սպերի ***Այգեձոր*** գիւղը կը գտնուի, գրուած է 1687 «ի Սպեր գաւառ, յանապատս որ կոչի ***Քարձորու Վանք***»: Այս վանքն ի հարկէ նոյն է Սպերի նշանաւոր վանքին՝ Ս. Յովհաննու հետ. վանքը բնականապէս մնացած է, բայց ***Քարձոր*** արդէն մահմեդական եղած է: Վանքին մերձաւոր արծաթի հանքերը, զորոնք Կիպերտ ալ քարտիսին վրայ կը նշանակէ, ի հարկէ շատոնց լքուած էին Քոխի անցած ատեն, որուն ըսած էին թէ անոնց շահագործողները յառաջ եղած էին մերձակայ ***Քարձորի*** եւ ***Տշաձորի*** գիւղերու հայերը»[94]:

Դենետի աղյուսյակում արձանագրվել է Քարսոր եւ ունեցել 224 բնակիչ[95]:

28. Քողուցս (Koğuns) - 1520 թվին՝ 15 տուն, 3 ամուրի, 2 սիփահիզադե: Եկամուտը՝ 3500 ակչա: Այժմ՝ Չաքմաքլը:

Բնակչության կազմը չի հիշատակվում: Գ. Սրվանձտյանցի աղյուսակում նշված **Կողանց, Գողոնս, Քաղոնս** տեղանունները[96], որոնք իրենց հնչյունակազմով մոտ են թ/դ-ում արձանագրված **Քողուցս**-ին: Կարելի է վերականգնել՝ ***Քողունք // Քողուն*** *քող-ունք* իմաստով:

29. Քոմփուր (Kompur)- *1520 թվին՝* ***33 տուն, 11 ամուրի քրիստոնյա:*** *Եկամուտը՝ 10. 964 ակչա: Այժմ՝ Դուրուքոյ:*

Գոմփոր տեղանունն է: Ա. Երիցովի գրանցումների համաձայն, 1878 թ. Գոմփորի բնակիչները լազ էին[97]: Այս տեղանունը հիշվում է *Կոմպոր, Կոմփոր ,Քոմբոր* ձեւերով[98]:

30. Մադուր (Madur) - *1520 թվին՝ 8 տուն, 3 ամուրի: Եկամուտը՝ 2650 ակչա: Այժմ՝ Մորյալա:*

Բնակչության կազմը չի հիշատակվում: **Մատուր**-ը հայերենի *մատուռ* բառն է՝ *ռ>դ* եւ *ր>ն* հնչյունափոխությամբ: Սրվանձտյանցը գրանցել է Մատոր, գյուղը 19-րդ դարի վերջում արդեն ուներ այլազգի բնակչություն[99]: Տեղանունների բառարանում հիշվում է **Մատուռք** գյուղակ (ագարակ) Սպերի գավառակում, Խոտրջրի գավառախմբում, Մեծ սարի մոտակայքում, որն ավերվել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին[100]:

31. Մեզեհրեք (Mezehrek) - *1520 թվականին՝ 53 տուն, 28 ամուրի: Եկամուտը՝ 10. 4700 ակչա: Բնակչությունը՝ քրիստոնյա: Այժմ՝ Գյոզքեփե:*

Առաջարկում ենք վերականգնել **Մեծ Ագարակ**: Լեզվի արագաբանությամբ հեռացել է իր նախնական տարբերակից եւ դարձել *Մեզեհրեք* կամ *Մազկակրակ:* Սրվանձտյանցի գրանցմամբ *Մազկակրակ*՝ «ունեցել է Աստվածածին եկեղեցի, վարժարան, հայերի թիվը կազմել է 230, օտար ազգացն 300[101]: Ա. Երիցովի վիճակագրական աղյուսակի համաձայն՝ *Մեզեհրեք:* Ուներ 16 տուն թուրք, 15 տուն հայ[102]: Դենետի աղյուսյակում գրանցվել է Մեզակերկ (Մեզակրեկ), որն ունեցել է 484 բնակիչ[103]:

32. Մումանս (Mumans) - *1520 թվին՝ 23 տուն, 3 ամուրի : Եկամուտը՝ 5670 ակչա: Բնակչությունը՝ քրիստոնյա:Այժմ՝ Դեմիրքեվէք :*

Ա-Դո-ի 1909 թվականին կազմած Սպեր գավառի վիճակագրական աղյուսակում արձանագրվել է հայաբնակ 18 գյուղ, «որոնք աչքի են ընկնում իրենց սակավամարդությամբ, դրացիից ամենամեծն է Մանցը, որն ունի ընդամենը 45 տուն բնակիչ, մյուս գյուղերն ավելի փոքր են»[104]: Անկասկած, Ա-Դո-ի նշած *Մանց*-ը նույն թ/դ-ում արձանագրված ***Մումանս*** տեղանունն է, որն աստիճանաբար կորցրել է իր առաջին բաղաղրիչը՝ *մում* կամ *մում-ը:*

33. Նահիզեր (Nahizer) - *1520 թվին՝ 7 տուն, 1 ամուրի, 4 սիփահիզադե: Եկամուտը՝ 1330 ակչա:*

Թ/դ-ում բնակչության կազմը չի նշվում: Գ. Սրվանձտյանցի վիճակագրական ցանկերում տեղանունը հիշվում է *Նախրնձեր* տարբերակով, որը 19-րդ դարի վերջին ունեցել է այլազգի բնակչություն[105]: Բնակավայրի անվանումը բնիկ հայկական *նախրնձա* բառն է: «Ընձա, ձոն, նվեր նաեւ նախրնձա» ձեւերով գործածական է եղել հին հայերենում[106]: *Ընձայից չոր* գավառ է հիշվում նաեւ «Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում: Ծագումը՝ Ընձայից նախարարական տոհմանունից»[107]: Թեեւ թ/դաֆթարում, ինչպես նաեւ Սրվանձտյանցի աղյուսակում հիշվում է՝ որպես այլազգի բնակչություն ունեցող բնակավայր, սակայն տեղանունն արդեն իսկ ընդգծում է նրա՝ երբեմնի հայկական բնակավայր լինելը:

34. Սալաչոր (Salaçor) - *1530 թվականին՝ 1 տուն եւ 1 ամուրի մահմեդական, 59 տուն եւ 23 ամուրի* ***քրիստոնյա:*** *Եկամուտը՝ 11. 682 ակչա: Այժմ՝ Աքսու:*

Սալաձոր տեղանունն է: Գ. Սրվանձտյանցի աղյուսակի համաձայն՝ *Սալաչոր* եւ դրվել է «բոլորովին օտար ազգ» ունեցող գյուղերի ցանկում[108]: Տեղանվան վերջին բաղաղրիչի մեջ *ձ < զ* փոփոխությունը բարբառային հետընթաց դրափոխության արդյունք է: Սալաձոր անունը կրող բնակավայր է հիշվում նաեւ Կարնո դաշտում:

35. Սեմեհրեք-ի Ֆըսըրըք (Semehrek-i Fısırk) - *1530 իճ՝ 20 տուն, 10 ամուրի: Եկամուտը՝ 8.850 ակչա: Ունեցել է մեկ ջրաղաց: Այժմ՝ Շենքոյ:*

Եթե վերը նշված **Մեզեհրեքը** ընդունենք որպես **Մեծ Ագարակ**, ապա թ/դ-ում արձանագրված Սեմեհրեքը՝ կարելի է վերականգնել որպես **Սեւ Ագարակ**: Չի բացառվում, որ տեղանվան առաջին բաղաղրիչը՝ «*սեմ*»-ը, «*շեն*» բառի աղավաղումը լինի, ուստի կարող է լինել նաեւ **Շեն Ագարակ**:

36. Թափսոր (Tapsor) - *1530 իվ՝ 33 տուն, 20 ամուրի: Եկամուտը՝ 10. 990 ակչա: Ուներ մեկ ջրաղաց: Այժմ՝ Բաշքոյ:*

Գ. Սրվանձտյանցի աղյուսակում արձանագրված է *Թափչոր*՝ օտար բնակչությամբ[109]: Թափձոր անունը կրող բնակավայր է հիշվում նաեւ «Էրզրումի նահանգի Էրզրում գավառում, Խոտրջրի շրջանում: Բնակիչները բոնությամբ մահմադականացված հայեր են»[110]:

37. Թարփունի-ի Սյուֆլյա (Tarpuni-i Süfla) - *1520 իվ՝ 10 տուն, 2 ամուրի: **Բնակչությունը՝ քրիստոնյա:** Եկամուտը կազմում էր 4070 ակչա: Այժմ՝ Ներքին Ջրնդրքլը: Մեկ ջրաղաց: Այժմ՝ Բաշքոյ:*

Ներքին Դարբնի:

38. Թարփունի-ի Ուլյա (Tarpuni - i Ulyâ) - *1520 իվ՝ 2 տուն, 1 ամուրի մահմեդ. եւ **12 տուն, 5 ամուրի քրիստոնյա:** Եկամուտը կազմում է 2500 ակչա: Այժմ՝ Քրնդրքլը:*

Վերին Դարբնի տեղանունն է: Սրվանձտյանցի աղյուսակում՝ Դարբնի, 19-րդ դարի վերջում ունեցել է «օտար բնակչություն»[111]:

39. Թիրաիհ (Tiraht) - *1520 - իվ՝ 2 տուն, 9 ամուրի: Եկամուտը՝ 2700 ակչա: Այժմ՝ Քոզլու:*

Դրախտ տեղանունն է:

Դենետի աղյուսակի համաձայն՝ **Դիրեխտ,** ունեցել է 169 բնակիչ[112]:


40. Վարզենս (Varzens) - *1520-իվ 39 տուն, 35 ամուրի: Եկամուտը՝ 11000 ակչա: Այժմ՝ Գյոզիմեն:*

Բնակչության կազմը չի նշված: ***Վարիզոն*** կամ ***Վարիզոնց*** *տեղանունն* է: 19-րդ դարի վերջում ունեցել է 3 տուն թուրք, 16 տուն հայ եւ մեկ եկեղեցի[113]: Ա-Դո-ն այս բնակավայրը դնում է Սպերի հայաբնակ գյուղերի ցանկում, որը Կարնո առաջնորդարանի տեղեկատվության համաձայն 20-րդ դարի սկզբին ուներ 17 տուն հայ բնակիչ[114]:

41. Վարթինիկ (Vartinik) - *1520- իվ՝ 22 տուն, 10 ամուրի: Եկամուտը՝ 7270 ակչա: Այժմ՝ Մեսջիքլի:*

Բնակչության կազմը նշված չէ:

Վարդենիկ տեղանունն է՝ 19-րդ դարի վերջում արդեն հայտնի էր «օտար բնակչությամբ»[115]:



Աղյուսակ Ա

	Գյուղեր	Բնիկ բնակչություն	Ներհոսող ազգ	Ելքահոսող	Գյուղեր, որոնց բնակչության էթնիկ կազմը չի հայտնի
1	Արտաշ	14 տուն, 3 ամուրի	-	4980 անձ	
2	Արծրունք / Արծրունիկ/		-	5780 անձ	15 տուն, 12 ամ.
3	Ակնդար /Ակնդոց/	15 տուն, 13 ամուրի	-	3890 անձ	-
4	Բագրեվանդ /Պատրիկիոց/	12 տուն, 4 ամուրի	-	4020 անձ	-
5	Գառնիկ /Գառնիթոց/	25 ս., 18 ամ./1530թ./	-	4831 անձ	-
6	Դաիաան /Դայիոց/	28 տուն, 18 ամուրի	-	7150 անձ	
7	Դեխուրգենս/Ընդարարիկոց	-	-	3015 անձ	3 տուն, 1ամուրի
8	Գառգուդ-ը ալյս /Վերին Տանճաուտ/	58 տուն,23 ամ./1530թ./	-	8370 անձ	
	Գառգուդ-ը Ներքոյրեր			9680 անձ	35 տուն, 17 ամ.
10	Գառգիս /Տանկես/	8 տուն, 3 ամուրի	-	2862 անձ	
11	Գերտաս /Քրտոց/		-	2860 անձ	17 տուն, 15 ամ.
12	Գիշաս / Քշտաց, Տշտաց/			4580 անձ	10 տուն, 10 ամ.
13	Էրկրքեր	7 տուն, 3 ամ. /1530թ/	2 տուն	2055 անձ	
14	Էնգլուխք /Ընկուզեր/	9 տուն, 4 ամուրի		2500 անձ	
15	Հրոմոս2	17 տուն, 10 ամուրի	-	4950 անձ	
16	Հոթրաս /Խոթրաս/	-	-	1549 անձ	3 տուն, 7 ամուրի
17	Հուսաք	99 տուն, 33 ամ, 30 տուն գերբնիկոչի	-	31.999անձ.	
18	Հոթաղ /Խոտհարք/	-	-	6050 անձ	3 տուն, 7 ամուրի
19	Մաղրաղ /Գոգոցաձոր/	13 տուն, 7ամ. /1530թ./	-	6800 անձ	-
20	Մաղրաղ /Գոգրաձոր/		3տ.,7ամ, /1530 թ./	2198 անձ	
21	Նյաբերդ	3 տուն, 3 ամուրի	-	1399 անձ	
22	Մանիկամ	23 տուն, 6 ամ./1530թ./	1 տուն	4200 անձ	
23	Քաղքի	-	-	2250 անձ	4 տուն, 5 ամուրի
24	Քալկաս /Քալկասս,Քազկասս/	-	-	10.964անձ.	33 տուն,11ամուրի
25	Քարաղ /Քարձոր/	19 տուն, 11 ամուրի	-	400 անձ	-
26	Քեղդա /Գեղոց/	-	-	1755 անձ	-
27	Քարտաք	19 տուն, 11 ամուրի	-	4000 անձ	
28	Մաղասս /Քաղասիք կամ Կաղասիք/	-	-	3508 անձ	15 տուն, 3 ամուրի
29	Քանկուղ /Գոմփոր/	33 տուն, 11ամուրի	-	10.964անձ.	
30	Մաղաղ /Մաստոց/		-	2650 անձ	8 տուն, 3 ամուրի
31	Մեգհերք /Մեծ Ագարակ/	53 տուն, 28 ամուրի		10.700անձ	
32	Մամաճա	23 տուն, 6 ամուրի	-	5678 անձ	-
33	Նահիգեր /Նախրիձոր/	-	-	1330 անձ	7 տուն, 1 ամուրի
34	Սաղալար /Մալամձոր/	59 տուն, 23 ամուրի /1530 թ./	1 տուն, 1տ	11.682	
35	Մեմհերքեր-ի ֆերդերը /Մեծ Ագարակ/			8.850անձ	20 տուն, 10 ամ.
36	Թափաղ /Թափձոր/			10.990անձ.	33 տուն, 20 ամ.
37	Թաղիաւեք-ի ալյս /Վերին Գաղբեր/	12 տուն, 5 ամուրի	2 տուն, 1տ.	2500 անձ	
38	Թաղիաւեք-ի առնյս /Ներքին Գաղբեր/	10 տուն, 2 ամուրի	-	4874անձ	
39	Թերահ /Դաշտոց/	-	-	2700 անձ	2 տուն, 9 ամուրի
40	Վաղգեմս /Վաղրագոմ/			11.000անձ.	39 տուն, 35 ամ
41	Վաղրիկիկ /Վաղրեկիկ/	-	-	7270 անձ	22 տուն, 10 ամ.
	Ընդամենը	589 տուն, 245 ամուրի	9 տուն, 9տ.	237.837անձ.	269 տուն, 176 ամ.

Աղյուսակ Բ

Սպերի կազայի բնակչության վիճակագրությունը (1520-1530 թթ.)

Բնակչության կազմը՝ ըստ շնչերի	Բնակչությունը ըստ տների
Քրիստոնյա ---------6135 մարդ------67,6%	Քրիստոնյա----------589 տուն----68%
Մահմեդական------63 մարդ------0,7 %	Մահմեդական---------9 տուն--------1%
Մնացածը* ---------2866 մարդ------31,5%	Մնացածը՝----------269 տուն----31%
Ընդամենը----------9064 մարդ------100%	Ընդամենը----------867 տուն

Աղյուսակ Գ

Բաբերդի սանջակի բնակչության վիճակագրությունը ըստ Միրողլուի

	մահմեդական	քրիստոնյա
1516 թ.	5585	16391
1520 թ.	32277	30665
1530 թ.	19866	22928

*Նկատի ունենք այն գյուղերի բնակիչներին, որոնց էթնոդավանաբանական պատկանելությունը չի նշված: Դրանք, ինչպես վերը արդեն ասվեց, չնչին բացառությամբ հայաբնակ բնակավայրեր են եղել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս՝ Լ. Սահակյան. Բաբերդի գավառի տեղանուններն ու էթնիկ կազմը 16-րդ. դարի օսմանյան Թահրիր դաֆթարներում. - *Իրան-Նամէ (Արեւելագիտական հանդես).* Երեւան,1996-1997, No. 22-23, էջ 21-30:
2. *Թուրքական աղբյուներ. Էվլիյա Չելեբի.* Թարգմանությունը բնագրից, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա. Խ. Սաֆրաստյանի. հ. Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 301:
3. I. Miroğlu. XI *Yüzyılda Baburt sancağı.* Istanbul, 1975, ss.17-18.
4. I. Miroğlu, նշվ. աշխ., էջ 18, տե՛ս նաեւ Ի. Միրոլլու. *Kemah Sancağı ve Erzincan Kazası(1520-1566).* Ankara, 1990, s. 11-12: (Միրոլլուի գիրքը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Մ.Մ. Կարապետյանին):
5. Ö. L. Barkan. *Türkiye'de Imparatorluk devrinin büyük nüfus ve arazi tahrirler ve hakana mahsus istatistik defterleri.* IFM, 2/1 (Istanbul 1940), s.20-21. 6. Ա. Փափազյան. *Թուրքական վավերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր.* Երեւան, 1999, էջ 81:
7. Ա. Խ. Սաֆրաստյան, Մ. Կ. Զուլալյան. *Օսմանյան օրենքները Արեւմտյան Հայաստանում (16-17 դարերի կանուննամեներ).* Երեւան, Գ. Ա. Հրատ.,1964, էջ 5: 8. Ա. Երեմյան. *Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի».* Երեւան, 1963, էջ 81
9. Ճորոխը հայկական աղբյուրներում հիշվում է կամ «Չօրագ, Չօրուգսույի `ի բուրքաց ճոյրուխ սույի ի հնից Ճորոխ կոչի եւ Ճորոխ: Միակ գետ Մեծին Հայոց `ի Սեավ ծով: Բղխի ի լերանցն, որք անկանին յարեւմտեան կողմանս սահմանացն Բաբերդու ի սկզբան անդ կոչի Մասատ տէրէսի, ապա ընդունի զանունս Չօրուգ. ընթանայ ը Բաբերդ, ը Սպեր, ը խոտրջուր, ը Բերդագրակ, ը Արդվին, ապա առ պաթում եւ կիւնեէ քաղաքօք թափի `ի սեավ ծով» (Ղ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն Չորխ Մասանց աշխարհի,* հ Ա, Վենետիկ,1806,էջ 29): Ադոնցը Ճորոխը նույնացնում է Բոա կամ Վոա գետին.«Բոան համապատասխանում Աշխարհացոյցի Voh-Վոհ-ին, որ Ճորոխն է կամ ավելի ճիշտ, նրա վերին հոսանքը. Ճորոխի ակունքները սկիզբ են առնում Սպերի շրջակայքում» (Ն. Ադոնց. *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում.* Երեւան, 1987, էջ 36):
10. *А. Ерицов. Список населенных пунктов бывшей Эрзрумской области, находившейся во временном управлении России, Составлен в майе месяце 1878 году, Приложение к 1-му выпуску VIII тома. "Известия Кавказского Отдела Императорского Русского Географического Общества", Тифлис, 1883, с. 85.*
11. *В. Арутюнян. К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в XII-IV вв. До н. Э. - Պատմաբանասիրական հանդես.* ՀՀ ԳԱ հրատ., Երեւան, 1998, էջ 233-246:
12. Պ. Հ. Հովաննիսյան, Ա.Գ. Աբրահամյան (կազմող). *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա.* հ.1, Երեւան, 1981, էջ 197:
13. Մովսես Խորենացի. *Հայոց Պատմություն.* Աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանի, Երեւան, «Հայաստան» հրատ., 1990, էջ 102, 127:
14. Ղեւոնդ. *Պատմութիւն Ղեւոնդայ մեծի վարդապետի հայոց,* Ս. Պետերբուրգ, գլ. ԽԲ, էջ 168-169, 1887, «Տեղեկագիր», 1956, N 8, էջ 114: Աշխարհաբար թարգմանությունը տե՛ս Լ. Խաչիկյան. *Էջեր համշինահայ պատմութիւնից.* Աշխատութիւններ. հ. Բ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 123: 15. Լ. Խաչիկյան. *Էջեր համշինահայ պատմութիւնից,* էջ 123:
16. Հյուբշմանը եւ Աճառյանը սխալ ընթերցումով լուրջ թյուրակարծության տեղիք են տվել՝ իբր հիշյալ տարածքների բնակչությունը եղել է այլազգի: Ակադ. Գ. Ջահուկյանը այս հարցին տվել է հետեւյալ հիմնարար բացատրությունը. «Հ. Հյուբշմանը եւ Հ. Աճառյանը հակված են այստեղ հիշատակած անունների տակ հասկանալու Հայաստանի տերիտորիայում խոսված լեզուներ. հմմտ. H. Hubschmann. Armenishe Grammatik. 1895, էջ 519. եւ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն. հ. 2, Երեւան, էջ 128-132: Այս հեղինակները հաշվի չեն առնում Սյունեցու երկի մեկնողական բնույթը եւ դրանից անհրաժեշտ եզրակացություններ չեն անում: Մասնավորապես, պետք է նշել Հ. Աճառյանի ապացուցման մեջ թույլ տրված հետեւյալ վրիպումները, խո-

սելով տվյալ տեքստում «զՄիջերկրեայսն» եւ « զՈստանիկսն» ձեւերի հոգնակիության մասին՝ Հ. Աճառյանը մոռանում է, որ նախ՝ տվյալ դեպքում խոսքը բառերի մասին է եւ ոչ բարբառների, երկրորդ՝ Սյունեցին շատ լավ տարբերում է շրջակա լեզուների եւ սեփական լեզվի բարբառների իմացությունը. նշված հատվածից առաջ Սյունեցին գրում է հենց շրջակա լեզուների մասին» (Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն. Երեւան, 1972, էջ 17):

17. *Պատմութիւն Արիստակես Լաստիվերտցւո.* Աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի. Երեւան, ՀՍ ԳԱ հրատ., 1963, էջ 67:

18. *Руи Гонсалес де Клавихо. Дневник путешествия в Самарканд ко двору Тимура,* 1403-1406. Москва, 1990, ст 159-160. Տե՛ս նաեւ Յ. Յակոբյան. *Ուղեգրութիւններ.* հ Ա, Երեւան, 1932, էջ 142-143: 19. Լ. Խաչիկյան. *Էջեր համշինահայ պատմութիւնից.* էջ 136:

20. *Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII).* կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, հ. Ա, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1951, էջ 239:

21. Լ. Խաչիկյան, *Էջեր համշինահայ պատմութիւնից,* էջ 136, տե՛ս նաեւ Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 186:

22. Yılmaz Öztuna. *Osmanlı Devlet Tarihi.* c. 1, Istanbul, 1986, s.146; 23. Yılmaz Öztuna, նշվ. աշխ., c.1, էջ 146:

24. Մ.Կ Ջուլալյան. *Արեւմտյան Հայաստանը XVI-XVIII դդ..* Հ ՍՍՀ ԳԱ հրատ, Երեւան, 1980, էջ 31:

25. 1548-1549 թթ. Ալխաս Միրզան՝ շահ Թահմասպի եղբայրը, ապստամբում է վերջինիս դեմ եւ Շիրվանն ու Վրաստանը ասպատակելուց հետո, Սեւ ծովով գալիս է Ստամբուլ, ապավինում սուլթան Սուլեյմանին: Ալխաս Միրզան սուլթանին դիմում է Իրանի դեմ արշավանք կազմակերպելու: Ալխասի ու Սուլեյմանի համատեղ իրանական արշավանքը թուրքական աղբյուրների համաձայն տեղի է ունեցել 1548-1550թթ. (տե՛ս Մ. Կ. Ջուլալյան, նշվ. աշխ., էջ 39-40): «Նոր արշավանքի հիմնական պատճառը Իրանի շահի գործակալների միջոցով հարավային Կովկասում եւ թուրմենների մեջ շիա աղանդի տարածելն էր: Սեֆյանները Շիրվանում այդ գործը հաջողացնելով, ձգտում էին շիա դարձնել հյուսիսային Կովկասի արեւելքում ընկած Դաղստանը...» (Yılmaz Öztuna. Osmanlı Devlet Tarihi. c.1, s.243-244):

26. *Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.).* հ.Բ, էջ 266-267; 27. Նույն տեղում, էջ 355:

28. Երեմիա Քեօմիւրճեան. *Պատմութիւն համառօտ Դ-ի դարիոյ օսմանցոց թագաւորացն.* Աշխատասիրությամբ՝ Ժ. Ավետիսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1982, էջ 147-148:

29. Ավելի ուշ շրջանում՝ հատկապես 19-րդ դարի վերջին քառորդում, Արեւմտյան Հայաստանում իրականացված վարչական սահմանների փոփոխություններն ունեին հստակ նպատակ՝ յուրաքանչյուր վիլայեթում հայերին դարձնել փոքրամասնություն, իսկ մահմեդականներին՝ մեծամասնություն (այս մասին մանրամասն տե՛ս Vahakn N. Dadrian. Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict (New Brunswick and London: Transaction Publishers, 1999), pp. 139-144; Levon Marashlian. Politics and Demography: Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire (Cambridge, MA: Zoryan Institute, 1991), pp. 1-37).

30. I. Miroğlu. XI *Yüzyılda Baburt sancağı. s. 23-Տե՛ս նաեւ Haydar Celebi. Ruz-Name (FeridumBey). I, s. 160:*

31. I. Miroglu, նշվ., աշխ., էջ 23-24:

32. Ռումի վիլայեթի կենտրոնը եղել է Սվազը (Սեբաստիա): Այն կազմված էր Սվազի, Ամասիայի, Չորումի, Բոզոքի, Դիվրիկի, Ջանիկի Արաբկիրի սանջակներից (տե՛ս Ա. Փափազյան, նշվ. աշխ., էջ 165):

33. I. Miroğlu, նույն տեղում: Այս դաֆթարը պահպանվում է Թոփքափը Սարայի բանգարանի արխիվում, D. 9772 համարի տակ: Տե՛ս նաեւ Dundar Aydın. *Erzurum Beylerbeyiliği ve Teskilâti, Kuruluş ve Gelisme devri.* Erzurum, 1972, s 5; 34. I. Miroğlu, նշվ., աշխ., էջ 24-25:

35. **Ալայի բեյ** - այսպես էր կոչվում ամբողջ էյալեթի սիպահիների պետը: Պատերազմի ժամանակ էյալեթի զորքերը հավաքվում էին ալայի բեյի դրոշի տակ եւ գործում նրա հրամանով: (Տե՛ս *Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի,* էջ 297; 36. I. Miroglu, նշվ. աշխ., էջ 27-28:

37. Հ. Ս. Անասյան. *17-րդ դարի ազատագրական շարժումները Արեւմտյան Հայաստանում.* ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երեւան, 1961, էջ 14 -17; 38. *Թուրքական աղբյուրներ. Էվլիյա Չելեբի,* էջ 26 -27:

39. Մ. Կ. Ջուլալյան, նշվ. աշխ., էջ 177-178: Հմմտ. Ղ. Ինճիճյան. *Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի.* Վենետիկ, 1806, էջ 65:

40. *Հայերեն Ձեռագրերի Հիշատակարան. Ժէ դար.* հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան,էջ 412: Տե՛ս նաեւ Առաքել Դավրիժեցի. *Գիրք Պատմութեանց.* Աշխատասիրությամբ՝ Լ. Ա. Խանլարյանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ, Երեւան, 1990, էջ 352:

41. *Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ..* հ. II. Կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 553: Հ. Կարնեցի. *Տեղագիր վերին Հայոց.* Հիշատակարան ԺԷ դարու. Վաղարշապատ, 1903, էջ 16-17: 42. I. Miroğlu, նշվ., աշխ., էջ 35:

43. «Սպեր ու Բաբերդ ուրեմն երկար ժամանակ ունէին մահմետական բռնութիւն կրելու, եւ կրած են ամէն տեսակ՝ ինչպես ամէն ուրիշ կողման Հայերը». - Հ. Յակովբոս Վ Տաշեան. *Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին,* Վիեննա, Մխիթարեան տպարան, 1921, էջ 46-47:

44. Ա. Փափազյան. *Թուրքական վավերագրերը Հայաստանի եւ հայերի մասին (16-19-րդ դարեր).* էջ 159:

45. Իսպենջ - գլխահարկի տեսակ, գանձվում էր քրիստոնյաններից, հավասար է եղել 25 ակչեի: Հաստատվել է սուլթան Մուրադ I-ի (1360-1389) օրոք եւ վերացվել է 18-րդ դարում (Ա. Փափազյան, նշվ. աշխ., էջ 272):


46. Բեննաք - հարկատեսակ: Կար երկու տեսակի բեննաք՝ էքինլու բեննաք եւ ջաբա բեննաք: Էքինլու բեննաքի հարկ էին վճարում ամուսնացած ռայանները, որոնք ունեին կես չիֆթից պակաս հողակտոր, իսկ ջաբբա բեննաքի հարկ՝ այն գյուղացիները, որոնք չունեին ինքնուրույն մշակվող հողակտոր (տե՛ս Ա. Փափազյան, նշվ. աշխ., էջ 269) (օսմաներեն մի շարք տերմինների ճշտումների համար շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ Թուրքագիտության ամբիոնի վարիչ Ալ. Սաֆարյանին):

47. Ա. Փափազյան, նույն տեղում, էջ 160; 48. Հ. Ղ. Ինճիճեան. Աշխարհագրութիւն..., հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 111:

49. Լ. Սահակյան. Բաբերդի գավառի տեղանուններն ու էթնիկ կազմը 16-րդ. դարի օսմանյան Թահրիր դաֆթարներում, էջ 23-24:

50. *Сборникъ маршрутовъ въ раіонъ Олты-Саганлукъ*-Эрзерумъ, выпускъ III, 1) Статистические таблицы санджаков

Эрзерумскаго, Байбуртскаго и Эрзингянскаго. А. Р. Деннетъ. Перевелъ съ турецкаго и составилъ М. Ш. Мирзаевъ. 2) Маршрутъ отъ сел. Кепри-кей до с. Нориман. Л. К. Артамоновъ. Тифлисъ, 1881, сс. 70-71. Թեեւ այս տեղեկութիւնը վերաբերում է 19-րդ դարի վերջին, սակայն դրութիւնը պետք է ենթադրել նաեւ 16-րդ դարում, քանզի սոցիալ-տնտեսական պայմանները որեւէ լուրջ բարելավում չէին կրել, իսկ հայ ընտանիքի ազգագրական ավանդոյթները դեռեւս ամուր պահպանված էին:
17-րդ դարի հեղինակ Զաքարիա Քանաքեռցու մի հաղորդում եւս հաստատում է, որ Հայաստանում ընտանիքի անդամների միջին թիվը բավական բարձր է եղել: Ըստ նրա հաղորդման՝ Բուրսայում մահացած Կարբի գյուղաքաղաքի բնակիչ Հակոբջանի երեք որդիների ընտանիքները «ամենեքեան կաք միաբան աւելի քան է՝ (30) ի միում տան, արու եւ էգ: Եւ աւագ որդի Տօլվաթ-բեկին պարոն Այվազ էր գլխաւոր ամենեցուցն» *(Զաքարիա սարկաւագի պատմագրութիւն.* հ. 2, Վաղարշապատ, 1870, էջ 132): Պետրոս Պետիկը Նախիջեւանի հայ կաթոլիկ համայնքի եպիսկոպոսանիստ Ապարաներ գյուղում յուրաքանչյուր տանը հաշվում էր «քսան, տասնհինգ, տաս, իսկ ամենաքիչը՝ հինգ հոգի» (Bedik Petrus. *Cehil Sutun.* Viennae. 1678, p. 379): Հղումը տե՛ս՝ Մ. Մ. Կարապետյան. Երեւանի բնակչության էթնիկական կազմը եւ թվաքանակի փոփոխությունները 1600-1624 թթ. *"Պատմա-բանասիրական հանդես"*, 1986, N2, էջ 103; 51. I. Miroğlu. Bayburt sancağı... s.119:
52. Գ. Սրվանձտյանց. *Երկեր,* Երեւան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. Բ, 1982, էջ 509:
53. *Сборникъ маршрутовъ...*, с. 30. Ցավոք այս աղյուսակներում չի տարբերակված բնակչության ազգային պատկանելությունը; 54. I. Miroğlu. Bayburt sancağı... s. 35; 55. Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ.,էջ 505:
56. *Сборникъ маршрутовъ...*, с. 28; 57. Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 508; 58. *Сборникъ маршрутовъ...*, с. *30.*
59. Հր.Աճառյան, *Հայերենի արմատական բառարան,* հ.Դ,՝Երեւան,1979, էջ 53:
60. Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ, էջ 509; 61. *Сборникъ маршрутовъ...*, с. 29:
62. *Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան.* Կազմեց՝ Թ. Խ Հակոբյան, ՍՏ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Երեւան, ԵՊՀ հրատ.,հ. 3 (Կ-Ն), էջ 601-602:
63. « ... Խսփիրը հարուստ է մրգերով: Սեւ ծովի մոտ գտնվող գյուղերում ապրում են անհավատ հույն վիմմիներ, որոնք ամեն տարի պետությանն են հանձնում 600 դանդար մեղրամոմ, այս վայրերը անտառոտ են, այնտեղ շատ ծաղիկներ կան: Այդ իսկ պատճառով այստեղ բավական շատ է վայրի մեղրը: Այն հավաքում են լեռնային վայրերում: Շրջակայքի բնակիչները մեղրից ու կաթի սերից պատրաստում են բաստուրմա. փոքրիկ տակառիկների մեջ լցնում են շերտ-շերտ կաթի սերն ու մեղրը եւ այդ վիճակով թողնում մինչեւ ձմեռ: Շատ զարմանալի համով կերակուր է: Մեղրը պահպանում է կաթի սերը եւ թույլ չի տալիս, որ այն փչանա: Ստացվում է չորացած կաթի սերի ու քաղցր մեղրի խառնուրդ» (*«Джихан-нюма» и «Фезлеке»* Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.). Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, АН Арм. ССР, Ереван, 1973, с. 85). Հմմտ. Ղ. Ինճիճեան. *«Աշխարհագրութիւն».* Վենետիկ, հ. Ա, 1806, էջ 96՝ «Ընդ Սպեր անցանէ գետն Ճորոխ, առ որոյ լի են այգեստանեաց եւ պարտէզք տողալիցք: Ունի անտառախիտ տեղիս, եւ ինս ի փապարեալ փորոքս ծառոց մեղր եւ մեղրէմոմ: Ճիհանննիմայն դնէ թէ ամի ամի տայ այս գաւառ յարքունիս 600 դանդար մեղրէմոմ»:
64. Հ. Աճառյան. *Հայերենի արմատական բառարան.* հ. 3, Երեւան, ԵՊՀ հրատ, 1977, էջ 211:
65. Գ. Ջահուկյան. *Հայոց լեզվի պատմություն* (Նախագրային ժամանակաշրջան). Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1987, էջ 593:
66. *Сборникъ маршрутовъ...*, էջ 30; 67. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508; 68. *Сборникъ маршрутовъ...*, էջ 25:
69. Սրվանձտյանց, նշվ.աշխ., էջ 508; 70. *Сборникъ маршрутовъ...*, էջ 30; 71. Սրվանձտյանց, նշվ. աշխ. էջ 509:
72. *Сборникъ маршрутовъ...*, էջ 34:
73.*Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան.* հ.2 (Դ-Կ), էջ 169:
74. Սրվանձտյաց, նշվ.աշխ. էջ 508-509; 75. *Сборникъ маршрутовъ...*, էջ 25:
76. *Թուրքական աղբյուրներ, Էվլիյա Չելեբի,* էջ 300; 77. *Сборникъ маршрутовъ...*, էջ 32; 78. Նույն տեղում:
79. *А. Ерицов.Список населенных пунктов бывшей Эрзрумской области.* էջ 87:
80. **Դերբենդջի** /derbendci/ - սահմանային լեռնանցքները հսկող, մաքսավոր: Քրիստոնյա բնակչություն ունեցող հունուր գյուղում, որը գտնվում է Սպերի հյուսիսային սահմանում, բացի 99 տնից, եւ 30 ամուրիներից, արձանագրվել է նաեւ 30 տուն դերբենդջիներ: Նրանք պաշտպանում եւ հսկում էին գյուղի շրջակայքում գտնված վեց դաղարատեղ լեռնանցքները, ինչպես նաեւ Ճորոխի հարթավայրում վեց կամուրջի նորոգման պարտականությունը իրականացնելու համար, ազատված էին սահմանված հարկերից ու տուրքերից; 81. Ինճիճյան. նշվ. աշխ., հ Ա, էջ 96; 82. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 505:
83. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ 2, էջ 763:
84. Հայաստանի եւ հարակից շրջանների բառարան. հ. 2, էջ 553; 85. *Сборникъ маршрутовъ...*, էջ 30:
86. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ 2, էջ 895:
87. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508;.88. *Сборникъ маршрутовъ...*, էջ 36; 89. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508:
90. *Сборникъ маршрутовъ...*, էջ 32; 91. *А. Ерицов.* նշվ. աշխ., 87; 92. *Сборникъ маршрутовъ...*, էջ 32-33:
93. *А. Ерицов.* նշվ. աշխ., էջ 87; 94. Հ. Յակովբոս Վ Տաշեան. *Հայ բնակչութիւնը Սեւ ծովէն մինչեւ Կարին.* էջ 50:
95. *Сборникъ маршрутовъ...*, էջ 22; 96. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508-509; 97. *А. Ерицов.* նշվ. աշխ., էջ 86:
98. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ 1, էջ 942; 99. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 509:
100. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 3 էջ 716:
101. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 504; 102. *А. Ерицов.* նշվ. աշխ., էջ 87; 103. *Сборникъ маршрутовъ...*, էջ 22:
104. Ա-դո. *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները.* 1912, էջ 196; 105. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508:
106. Հր. Աճառյան. Հայերենի արմատական բառարան. հ. 4, էջ 127-128:
107. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ 2, էջ 378:
108. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508; 109. Նույն տեղում:
110. Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան. հ 2, էջ 426:
111. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 508; 112. *Сборникъ маршрутовъ...*, էջ 22; 113. *А. Ерицов.* նշվ. աշխ., էջ 87:
114. Ա-դո. *Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները.* 1912, էջ 197; 115. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 509:



Jose Maria Satrustegui, *El rostro oculto de la muerte.* *Խոսե Մարիա Սատրուստեգի, Մահվան թաքնված դեմքը. Թարգմ. իսպաներենից՝ Ղ. Սարգսյանի. Երեւան, 1999. - 62 էջ*

Նշանավոր բասկագետ Սատրուստեգիի գրախոսվող աշխատությունը ներառնում է հետեւյալ խնդիրների քննարկումը.

ա) մահվան հանդեպ բասկերի վերաբերմունքը եւ դրա արտացոլումն ավանդական մշակույթում,

բ) մահվանը վերագրվող անդրաշխարհի մասին պատկերացումները,

գ) մահն իբրեւ գործող անձ:

Աշխատությունը բաղկացած է չորս բաժնից՝ «Մահվան հանդեպ կենսական կեցվածք», «Հանգստի ճանապարհը», «Հայտնություններ» եւ «Մահվան ստվերը»: Հեղինակի առաջնահերթ նպատակն է հիմնվելով ավագ սերնդի ուղղակի, ոչ միջնորդավորված վկայությունների վրա, խորամուխ լինել բասկ ժողովրդի նախնիների ավանդույթների մեջ եւ քննության առնել դրանք: Նա չի բավարարվում իր բազմամյա ազգագրական գործունեության ընթացքում թաղման ծեսերի վերաբերյալ իր հավաքած նյութերի սոսկական նկարագրությամբ, այլ փորձում է պարզաբանել այս ծիսակարգի կազմավորման պատմությունը՝ միաժամանակ ընթերցողին ներկայացնելով բասկյան բանահյուսության դժվարագյուտ նմուշներ:

Աշխատության առաջին մասը նվիրված է մահվան հանդեպ բասկ ժողովրդի կենսընկալմանը: Անտարբերությունը բառը լավագույնս է բնորոշում մահվանը վերաբերվելու բասկի տաղանդը: Վալկառլոսում շատ տարածված է «Ծնունդն իր հետ մահ է բերում» արտահայտությունը: Գրքում զետեղված՝ մահվան մասին հիշատակությունները եւ ապագա կյանքի նկատմամբ հավատով լի աղոթքները գալիս են հաստատելու մահվան գաղափարի բասկյան ընկալումն իբրեւ բնության կողմից նախասահմանված գոյության, կյանքի մի տեսակ, չնայած այդ երկու բեւեռների միջեւ արտաքուստ գոյություն ունեցող հակասությանը:

Այնուհետեւ, մանրամասն քննության են առնվում կյանքի հիմնական փուլերին առնչվող ծեսերը՝ ամուսնական ծեսից հետո հարազատների գերեզմանին այցելելն ու հատուկ աղոթք կարդալը, հաջորդ կիրակի՝ հանուն հանգուցյալների պատարագ պատվիրելը, ամուսնության օրից թաղման պատանք նախապատրաստելը, կնունքի կապակցությամբ վերջին օծման մոմ վառելը եւ մահվան հուշը թարմացնող մի շարք ավանդական այլ ծեսեր: Եւ այսպիսով, աննկատելիորեն ապագան կապվում է անցյալին: «Ողջերի մոռացությունը՝ հանգուցյալների իսկական գերեզմանն է», - ավանդում է բասկյան ասացվածքը:

Հեղինակը յուրահատուկ ոգեւորվածությամբ է անդրադառնում բասկի՝ մահվանը սեւ հումորով վերաբերվելու եւ սեփական մահը երգով դիմավորելու իրողությանը: Հռոմեացիները *Paean Cantabrico* էին կոչում այն երգը, որը, Հորացիոսի վկայությամբ, երգում էին գերի ընկած կանտաբրացիները՝ բասկերը:

Առաջին բաժինն ամփոփվում է Ուիլյամ Դուգլասի հետեւյալ եզրահանգմամբ. «Հիմնական տպավորությունն այն է, որ մեռնելիս բասկը չի կորցնում իր անխռովությունը»:

Երկրորդ բաժնի հիմնահարցն է՝ մահը ոչ թե իրադարձություն, այլ ընթացք դիտելու բասկի ընկալումը: Բազմազան տապանաքարերը, կրոմլեխները, դամբարանաթմբերը, սկավառակաձեւ կոթողները համարվում են բասկ ժողովրդի մեծագույն ներդրումն արդի մշակույթում: Բասկի համար, ըստ էության, գերեզմանն ու տունը մեկ անքակտելի միասնություն են կազմում:

Ըստ գրքում զետեղված մեծաթիվ վկայությունների՝ բասկը հավատում է մեռնողի համար սկսվող երկու՝ հոգու եւ մարմնի ճամփորդությանը, որին էլ համապատասխանում է դարերի խորքից ավանդված ծիսակարգը: Շատ անսովոր են որպես հոգու ճանապարհ տանիքի վրա անցք բանալու սովորույթը եւ ննջեցյալի վերջին ճանապարհը ուղեկցող մի շարք պապենական ծեսեր, որոնք են՝ դիակի հսկումը, հանգուցյալի բարի գործերի գովերգումը, հանդիսավոր երաժշտությունը, խաչմերուկներում թաղման թափորի ժամանակավոր դադարը՝ աղոթելու, ներքնակի ծղոտը այրելու, խարույկ սարքելու եւ այդպիսի մի շարք արարողություններ, որոնք հեղինակը ամենայն մանրամասներով ներկայացնում է ընթերցողին՝ ավելի պատկերավոր դարձնելով նյութը:

Երրորդ՝ «Հայտնություններ» բաժինը նվիրված է հանգուցյալների երկրային կյանքի հայտնությանը, տարբեր կերպարանքներով՝ թափառող կամ անշարժ լույսի, մարդու մարմնի ձեւ ունեցող ստվերների, աղավնու, սեւ գնդի եւ այլն... Նրանց ներկայությունը երբեմն մատնում են տարօրինակ ձայները, տեղաշարժվող ծանր կահույքը, աղմուկով շրջվող հացահատիկի ծանր արկղերը: Հեղինակն, ըստ ժողովրդական բանահյուսության մեջ տարածված հավատալիքների եւ կենդանի վկայությունների, նշում է հանգուցյալների վերադարձը հարուցող գործոնները, պատճառները, ինչպես նաեւ տառապող հոգիներին օգնելու ավանդական ձեւերը: Վերը չարադրվածից բացի, գոյություն ունի նաեւ ենթադրյալ սեւ ստվերը կամ մահվան թաքնված ձեռքը, որը դիտարկվում է գրքի եզրափակիչ բաժնում: Հեղինակը բերում է «մահ» բառի երկատվելը բասկերենում, որոնք ստացել են իմաստաբանական տարբեր երանգներ՝ *Heriotza*-ն մեռնելու գործողությունն է, իսկ *Heriota*-ն, այն ենթադրյալ գործչի մարմնավորումն է, որ իր հետեւից թողնում է հանգուցյալներ:

Այդ մարմնավորման ճշտումը դժվար է ու տարբեր դեպքերում դրան վերագրվում են տարբեր իմաստներ՝ կապված գործող անձի անորոշության հետ:

Սույն աշխատությունը բասկ ժողովրդի՝ մինչեւ մեր ժամանակները նախնիների ավանդներին հավատարիմ մնալու առհավատչյան է: Այն մոռացության ճիրաններից փրկում է նրա ավանդական մշակույթի մի շատ կարեւոր շերտ:

Լուսինե Ղազարյան

ՄԵԻԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՐԱՅԻ ՏԱՐԵԹԻՎԸ

Սուրեն Սաղումյան

Անիի Կաթողիկե՝ Մայր տաճարի չինարարական արձանագրությունը քանիցս արժանացել է տեղագրողների եւ բանասերների սեւեռուն ուշադրությանը:[1]

Նախապես նկատենք, որ այս ծավալուն տարեգրությունը վերաբերում է ոչ թե եկեղեցու հիմնարկությանը, այլ, 11 տարվա ընդմիջումից հետո "Աստծո ապավինութեամբ, առն իմո", Հայոց եւ Վրաց չահնչահ Գագիկ Ա թագավորի հրամանով եւ նրա կնոջ՝ Կատրանիդե թագուհու ջանքերով թերավարտ շինարարության վերսկսմանն ու ավարտմանը:[2] Անվանի գիտնականների շարքում, խնդրո առարկա վավերագրին, յուրահատուկ բծախնդրությամբ ու մանրակրկիտությամբ, անդրադարձել է Սուրեն Ավագյանը՝ Տաճարի շինարարության տարեթվերի ստուգաբանման-վերաճառման շարժառիթով գրած հոդվածում: Մեծանուն վիմագրագետն իրավացիորեն նկատել է, որ սույն "Ինագիրը բազմիցս վերծանվել ու գիտականորեն հրատարակվել է, նրա հիմնական բովանդակությունը լիովին բացահայտված է, նրանում մութ կամ անորոշ կետեր չկան, եթե չհաշվենք տարեթվերի առեղծվածը":[3]

Առեղծվածները լուծող, երկմտանքները փարատող քննախույզ տեսաբան Ս. Ավագյանը վիմագրի առաջին տողի երեք տարեթվերը ընդունում է համաժամանակյա, որոնցից Ի:Ն:Ծ:Թ. ՀԱՅՈՑ..., բոլոր հետազոտողները (բացառությամբ Ա. Աբրահամյանի) աներկբա վերծանել են ստույգ՝ նծ թուին Հայոց, այսինքն 1001 թ.[4]: Երկրորդ՝ :Մ:ժ:Թ:Թ ՀՈՒՈՄՈՑ տարեթիվը "Հանդես ամսօրեայում" հրատարակած հոդվածում, հայտնի չէ ինչու, Ն. Ակինյանը համարել է վրաց քրոնիկոնի թվական[5] եւ այն վերծանել է 999-1000 թ.:5 Ա. Աբրահամյանը "տվյալ տարաշարքը սրբագրում է ՄԻԹ թուին Հռոմոց":[6] Այսու Ս. Ավագյանը հստակել եւ հիմնավորել է, որ տվյալ դեպքում կիրառված է ոչ թե նկատառված քրոնիկոնը, այլ Հռոմի հիմնադրման՝ ավանդական հոռոմոց տարեթիվը (մ.թ.ա. 753), որով ստացվում է հայկական տարեթվին համահունչ նույն՝ 1001 թիվը:[6] Առաջին տողի վերջում կա մի երրորդ տարեթիվ եւս՝ փորագրված հստակ, ընկալելի եռատառ խրթին վակագրերով /գծ. 1/, "որոնց վերծանությունն ու մեկնաբանությունը ցայժմ պարզված չեն":[7] Վակագրերը վերծանելու առաջին փորձը կատարել է Կ. Բասմաջյանը 1931 թ.՝ Անիի, Բագնայրի եւ Մարմաշենի արձանագրություններին նվիրած աշխատության մեջ (ֆրանսերեն). նա առաջարկել է հանելուկը բացել ԲԵՆԻԱՄԻՆ ԳՐԲ (ԲԵՆԻ, ԱՄԻՆ, ԳՐԲ)՝ այն վերագրելով տեքստը փորագրող գրչին,[8] որին հիմնավորապես առարկել է Ն. Ակինյանը: Ա. Մանուչարյանի կարծիքով, "կցագրերը պետք է կարդալ ԲԵՆԲ ԱՄԵՆ ԳՐԲ". եւ այն երկմտանքով ("Հավանաբար") համարում է գրչի՝ ԲԵՆԲ-ի կողմից կատարված հավելում, իսկ տողը՝ կիսատ:[9] "Այս ընթերցումը, - իրավացի դիտում է Ս.Ավագյանը, - չի հիմնավորված, եւ բնավ պարզ չեն վերականգնված բառերի իմաստն ու շարահյուսական կապը"[10]: Անմիջապես հարկ է ավելացնել, որ տողն ամենեւին էլ կիսատ չէ, հավասարազոր է մնացյալ շարքերին, մտքի առումով՝ ավարտուն է, գրչությամբ ու տառաչափերով՝ միասեռ եւ հարազատ ամբողջ տեքստին: Բացի այդ, չի բերված տողը, որպես հավելում ընկալելու հիմք տվող որեւէ կռվան, իսկ վակագրերի նման տառանշաւոտումը (ԲԵՆԲ ամէն գրէ) չի հաստատվում քարի վրա լիովին անեղծ պահպանվող գծապատկերներով: Կարծում եմ, վակագրերի ներքո գրչի անվան ընթերցումը տեղին ու հիմնավոր չէ:

Ի դեպ, վակագրերի այս խումբը ոչ թե անձնանուն, այլ հիշրայի տարեթիվ է համարել Ն. Ակինյանը եւ այն "վերծանել ՅՂ ԱՄՒ ՀԱԳԱՐԱՅՒՈՅ, այսինքն՝ հիշրայի 390 թ., որ համապատասխանում է արդի տոմարի 999-1000 թ.": Նա ՅՂ-ն նկատում է իբրեւ աղից ձախ գրություն, որը, ինչպես եւ հազարացոց բառի վերծանգնումը, Ս.Ավագյանը համարում է անհամոզիչ:[11] Ա. Աբրահամյանը նորովի անդրադառնալով սույն խնդրին՝ աներկբա ընդունում է Ն.Ակինյանի հնարամիտ-սրամիտ կռահումը փակագրի տակ հիշրայի թվականի նպատակադրության վերաբերյալ եւ առաջարկում է վերջից երրորդ փակագիրը բանալ ՆԲ (402)՝ նախորդի ՅՂ (390) փոխարեն, հաջորդը՝ ԱՄՒՆ, վերջինը՝ հազարացոցի դիմաց (որպիսի բառ հնարավոր չէ ստեղծել եղած կցագրերով)՝ ԳԷԲՐ (ԳԱԲՐ)՝ այն համարելով պարսկերեն անհավատ, հեթանոս բառը,[12] որն, ի վերջո, հիրավի կրում է հազարացոցի (=մահմեդական, անհավատ) փոխաբերյալ իմաստը: "Այսպիսով, հեղինակն ամբողջ փակագիրը վերծանում է ՆԲ ԱՄՒՆ ԳԷԲՐ (անհավատների թվականի ՆԲ-ին (402), որ արդի թվականով կլինի 1010/1011 թ.":[13] Փակագիրը հանդամանալից ստուգաբանած Ս. Ավագյանը, համեմատելով պրոֆեսորի ամբին գծերը վերծանությունը, որոշ պատճառաբանություններով երկբայելի է համարում "առաջին կցագրի ընթերցումը" (ՆԲ) ու եզրափակում, որ "Բուն տարեթիվը՝ առաջին կցագիրը մնում է անորոշ եւ կարոտ նոր քննության":[14] Այսպիսով, չնայած տարակարծություններին, էականն այն է, որ ականավոր բանասեր-պատմաբաններ Ն.Ակինյանը, Ա. Աբրահամյանը եւ Ս. Ավագյանը սկզբունքորեն ընդունում են փակագրի տակ տարեթվի առկայությունը: Այս առումով որոշակի կարեւորություն ունի նաեւ արձանագրության վերջի երեք տոմարահաշիվների ստույգ վերծանումը: Այն, կարծում եմ, անվիճարկելի համոզչությամբ ու հավաստի պլուս է բերել Ս. Ավագյանը՝ Մայր տաճարի կառուցման-ավարտման տարեթվի վերաբերմամբ: Նա, այլ հեղինակների տարընթերցումներն ու երկմտանքները համադրելով՝ հստակ բացահայտել է, որ տեքստում վկայված արարչության Աղեքսանդրյան (Ադամից 6433 տարի հետո), Քրիստոսի ծննդյան (մ.թ.ա. 2 թ.), հայերիս կողմից քրիստոնեության ընդունման (301 թ.) տոմարական երեք թվականներն էլ մատնանշում են շինարարության ավարտը նույն՝ 1010 թվականին: Պետք է ակնկալել, որ գիտնականի ճշգրտումներն ի վերջո, հաստատապես լուծել են Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցման ժամանակին առնչվող վեճն ու փնտրտուքը:

Այսպիսով՝ չլուծված է մնում միայն հիշրայի տարեթվի առեղծվածը, որի վերաբերյալ ենթադրություններն ու տարակուսանքը չեն փարատված: Անվերապահորեն ընդունելով բնագրի առաջին տողի փակագրի տակ արաբական (հիշրայի) թվի գաղտնագրության մասին Ն. Ակինյանի կռահումը, կարծում եմ, մասնակի վերաճառման-լրացման կարիք ունի կցագրերի բացման-վերծանման նրա տարբերակը՝ ՅՂ-390:

Կանխավ նկատենք, որ ինչպես արձանագրության վերջում երեք տոմարահաշիվներով ցուցված է Տաճարի ավարտի նույն՝ 1010 թ., այնպես էլ, ինչն ինքնին ընկալելի է, առաջին տողում պետք է որ երեք թվականներով տրված լիներ շինարարության վերսկսման միեւնույն տարեթիվը: Հետեւաբար՝ վիմագրի առաջին տողի երեք տոմարահաշիվները պետք է վկայեն միեւնույն՝ 1001 թիվը: Նման հավանականությունից զատ, կարծում եմ, վիճարկվող կցագիր-փակագիրը պետք է բացել ոչ թե ՅՂ (ոչ երբեք ՆԲ), այլ ՅՂԱ՝ ընդամենը մեկ տարի հավելելով Ա. Ակինյանի առաջարկած թվին: Ըստ ամենայնի նախավերջին կցա-

գիրը հատակ վերծանվում է Ա.ՄԻՆ (=տարին), վերջինը, Ա. Աբրահամյանի վստահեցմամբ, պարսկերեն է՝ ԳԷՐՐ (=անհավատ), իսկ առաջինը թվագիրն է, ուր ակնհայտաբար որոշակի կանխամտորեն հարմարեցված (ձախից աջ շրջագիր Յ-ն), գլխիկործ, վերից վար շրջագիր Ղ-ն է: Իսկ տառամայրին ձախից կցված, դեպի ցած հակված եռանկյունաձեւ ելունը (որի ընթերցումը Ս. Ավագյանը դժվարանում է որոշել) համարում եմ միաստեղն Ա (գծ.2), որպիսիք կան ե՛ւ վիմագրերում (Զուղա, Կոթավանք, Տավուշ), ե՛ւ ձեռագրերում:


Այսպիսով՝ առաջարկում եմ Անիի Մայր տաճարի առաջին տողի հիշյալ փակագիրը բացել (վերաբացել) ՅՂԱ ԱՄՆ ԳԷՐՐ՝ այն համարելով հիշրայի 391 ամին: ՅՂԱ-391 հիշրայի լուսնային տարեթիվը հայկական մեծ թվականի վերածելու համար պետք է կատարել ոչ այնքան բարդ հետեւյալ հաշվարկը:

Այսպես՝ 391-ը բաժանելով 33-ի (արաբական հիշրայի լուսնային տարին մեր՝ արեգակնային տարու վերածելու, նահանջ տարիների թիվը որոշելու համար՝ կստանանք 11 նահանջ տարի, որին, մնացորդի պատճառով (391: 33 = 11.11), պետք է գումարել մեկ տարի եւս (11 + 1 = 12): Հավելվիր տարիները դուրս են հանվում ստացած թվից՝ 391-12 = 379 եւ վերջինիս ավելացնելով հիշրայի թիվը (379 + 622 = 1001) ստանում ենք հայոց 1001 թվականը:

Հետեւաբար՝ Անիի Կաթողիկե տաճարի շինարարական արձանագրության առաջին տողի տոմարական երեք հաշվարկներում շինարարության վերսկսումը վկայագրված է միեւնույն՝ 1001 թ.,[15] որով լուծվում են հիշրայի առեղծվաց ու երեք տոմարագրերի միջեւ կարծեցյալ տարբերությունների վարկածները:

Ուրեմն՝ մատենագիրների վստահելի հաղորդումներից եւ վիմագիր արձանագրության տվյալներից ելնելով, անտարակուսելի պետք է համարել, որ Համաշխարհային ճարտարապետության թագ ու պսակներից մեկը՝ Անիի Կաթողիկե Մայր տաճարը հիմնարկվել է 989 թ., Սմբատ Թագավորի եւ Տրդատի կողմից, շինարարությունն ընդհատվել է 11 տարի, աշխատանքները վերսկսվել են 1001 եւ ավարտվել են 1010 թվին՝ Կատրանիդե թագուհու սատարությամբ եւ, ամենայն հավանականությամբ, հանճարով լեցուն ճարտարապետ Տրդատի նախանձախնդրությամբ:


■



Գծ. 1



Գծ. 2 →



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհ. եպ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 353-354, N 594; Սարգիս վարդ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 5; Ներսես Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 117-118; Ղ.Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 70; Ն.Ակինեան, Անիի Մայր եկեղեցւոյ եւ միջնաբերդի եկեղեցւոյ արձանագրությունների մասին, "Հանդես ամսօրյա", 1932, էջ 539-541; 1934, էջ 12; Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք, կազմեց Հ.Օրբելի, Երեւան, 1966, էջ 35; Ա.Մանուչարյան, Քննություն Հայաստանի 4-11-րդ դարերի շինարարական վկայագրերի, Երեւան, 1977, էջ 207-209; Ա.Աբրահամյան, Հայոց գիր եւ գրչություն, Երեւան, 1973, էջ 123 եւ այլք:


2. Տաճարը հիմնարկել է Սմբատ Տիեզերակալը (977-990) 989 թ., Տրդատ ճարտարապետի ձեռքով, սակայն, թագավորի մահից հետո, դադարեցվում է կառուցումը եւ, ապա, ասեք արձանագրությունից քաղելով հավաստում է Անեցի պատմիչը, սխրատեսիլ Կաթողիկեի ընդհատված շինարարությունը "աստանօր գլխաւորեցաւ Հրամանաւ եւ արդեամբք" Կատրանիդեի (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104-105):

3. Ս. Ավագյան, Անիի Մայր տաճարի շինարարական արձանագրության տարեթիվը (Վիմագրական պրպտումներ), Երեւան, 1986, էջ 16); 4. Նույն տեղում, էջ 17; 5. Նույն տեղում; 6. Նույն տեղում, էջ 20; 7. Նույն տեղում:

8. Նույն տեղում: Գրչի անունը՝ Բենէ գրված է տեքստի վերջում, որի թվացյալ նմանությամբ փակագրի անստույգ վերծանումը (Բենիամին, Բենէ) տեղիք է տվել ակնբախ սպրդումի; 9. Ա. Մանուչարյան, նշվ.աշխ., էջ 208; 10. Ս. Ավագյան, նշվ.աշխ., էջ 20; 11. Նույն տեղում, էջ 21; 12. Ա.Աբրահամյան, նշվ.աշխ.; 13. Ս. Ավագյան, նշվ.աշխ., էջ 21; 14. Նույն տեղում, էջ 22:

15. Համրանքը կատարված է Ա. Աբրահամյանի տոմարական հաշվարկների հետեւողությամբ (տե՛ս նրա՝ Հայ գրի եւ գրչության պատմություն, Երեւան, 1959, էջ 257):

Ռիչարդ Ֆոլց. Մետաքսի ճանապարհի կրոնները. Նյու-Յորք: "St. Martin's Press", 1999. - 186 էջ, անգլերեն



"Մետաքսի ճանապարհ" արտահայտությունն այսօր, ըստ էության, Արևելքի, այնտեղ բնակվող ժողովուրդների, խայտաբղետ մշակույթների ու հնագույն կրոնների մասին ամենախիզախ և էկզոտիկ գաղափարների ու պատկերացումների համակարգի խորհրդանիշ է:

Դառնալով այդ եռացող կաթսայի մի մասը, ոչինչ չէր կարող աննկատելի մնալ, քանզի ամեն ինչ այս ճանապարհին իր մի մասնիկն է թողել այստեղ: Եվ, մանավանդ, ոչինչ չէր կարող մնալ անփոփոխ՝ խտացնելով իր մեջ շրջակա կոլորիտը:

Ռ. Ֆոլցի գիրքը բաղկացած է 7 գլխից, որոնք գլխավորապես նվիրված են "Մետաքսի ճանապարհի" հատման տարածքներում երբեմն գոյություն ունեցած կրոնների՝ բուդդիզմի, մանիքեականության, նեստորականության ու իսլամի տեղայնացման պատմությանը: Ուսումնասիրությունը բնավ չի սահմանափակվում իր անվան գաղափարով, քանզի հնարավոր չէ պատմել "Մետաքսի ճանապարհի" կրոնական հոսանքների հետևորդների մասին՝ առանց անդրադառնալու առևտրին, երևույթ, որին հենց իր գոյությամբ պարտական է "Մետաքսի ճանապարհը":


"Մետաքսի ճանապարհի" պատմությունը, հեղինակի ասելով՝ "մշտական չարժման, ընդհարումների, փոխադարձ ազդեցության, ադապտացիայի ու փոփոխության պատմություն է": Լինելով առավել լայն պատմական դինամիկայի ու մշակույթների փոխազդեցության մասը, "Մետաքսի ճանապարհի" թեմատիկան չի կարող անտարբեր թողնել ոչ մասնագետին, ոչ էլ շարքային ընթերցողին:

Գիրքը օժտված է քարտեզներով, տեղանունների և առարկայական ցանկով:

Վ. Ա.

Ռուդիգեր Շմիտ: *Իրանական լեզուները պատմական եւ ժամանակակից փուլերում*: Վիսբադեն, "Dr. Ludwig Reichert Verlag" հրատ., 2000. - 106 էջ + 1 քարտեզ:

Rüdiger Schmitt. *Die Iranischen Sprachen in Geschichte und Gegenwart*: "Dr. Ludwig Reichert Verlag, 2000 - 106 pp. + 1 map.



Գրախոսվող գիրքը պատկանում է գերմանացի հայտնի իրանագետ Ռ. Շմիտի գրչին: Այն կարելի է բնութագրել որպես համապարփակ ներածական ձեռնարկ՝ իրանական լեզուների ուսումնասիրությամբ զբաղվողների համար: Կարելի է ասել, որ գիրքը սխեմատիկ ձևով բաժանված է վեց գլխի, որոնցից յուրաքանչյուրի վերջում բերվում է օգտագործված գրականության ցանկը, ունի նախաբան:

Իրանական լեզուներով այսօր խոսում են ոչ միայն Իրանի Իսլամական Հանրապետությունում, այլև Եփրատի վերին հոսանքից մինչև Պամիր ու Հինդուքուշ, Կովկասից ու Ուզբեկստանից մինչև Պարսից ծոց ու Ինդոսի ներքին հոսանքներն ընկած հսկայական տարածքներում: Իսկ ավելի վաղ ժամանակաշրջանում նրանք, թերևս, էլ ավելի մեծ տարածական ընդգրկում են ունեցել:


Հեղինակն առաջին գլխում (Name und Begriff "iranische Sprachen") անդրադառնում է "իրանական լեզուներ" հասկացությանը և այդ եզրի հակիրճ մեկնաբանմանը՝ առանձին-առանձին մատնանշելով հին, միջին և նոր իրանական լեզվադարաշրջանների հիմնական բնութագրականները:

Հետագա հինգ գլուխները համապատասխանաբար կրում են "Vorgeschichte" (Նախապատմություն), "Die Sprachen der altiranischen Periode" (Հին իրանական դարաշրջանի լեզուներ), "Die Sprachen der mitteliranischen Periode" (Միջին իրանական դարաշրջանի լեզուներ), "Die westiranischen Sprachen der neuiranischen Periode" (Նոր իրանական դարաշրջանի արևմտյան խմբի լեզուներ) և "Die ostiranischen Sprachen der neuiranischen Periode" (Նոր իրանական դարաշրջանի արևելյան խմբի լեզուներ) վերնագրերը:

Հեղինակը համեմատաբար մատչելի ձևով, միևնույն ժամանակ նաև համառոտակիորեն, ներկայացնում է իրանական բոլոր լեզուները, նրանց ազգակցական կապը, զուգահեռներ անցկացնում հին, միջին և նոր դարաշրջանների իրանական լեզուների միջև: Առանձնահատուկ չեշտված են հնչյունական զարգացումները տարբեր լեզուներում, քիչ տեղ չի հատկացված նաև անհրաժեշտ ստուգաբանական նոթերին: Որպես հավելված գրքին կցված է ներկայումս իրանական լեզուների աշխարհագրական տարածումը պատկերող քարտեզ:

Գիրքն, անկասկած, կարող է օգտակար լինել ինչպես զուտ իրանագետների, այնպես էլ ընդհանուր լեզվաբանությամբ զբաղվողների համար:

Վահե Բոյաջյան



Իրեն Մելիքոֆ. Հաջի Բեքթաշ. Առասպելը եւ նրա ավատարները (ժողովրդական սուֆիզմի ծագումն ու զարգացումը Թուրքիայում). - Islamic History & Civilization (Studies & Texts), vol. 20, "BRILL", 1998. - 317 էջ, ֆրանսերեն

Սույն գիրքը սուֆիական հոսանքների եւ ծայրահեղ շիիզմի ու ընդհանրապես հետերոդոքս իսլամի (զգլբաշականություն, բեքթաշիզմ, եւ այլն) խոշորագույն մասնագետ՝ Փարիզի Համալսարանի պրոֆեսոր Ի. Մելիքոֆի ուսումնասիրությունների ամփոփումն է:

Ուսումնասիրության մեջ մանրամասն քննարկվում են Թուրքիայում ժողովրդական կրոնի ծագման պատմությունը՝ ձեւավորումից ի վեր (13-րդ դ.), իրենց դավանական հանդուրժողականությամբ ու սինկրետիզմով հայտնի բեքթաշականության եւ ալեւիզմի առաջացումը եւ մի շարք այլ կարեւոր հարցեր: Ներկայացվում են դրանց կրոնական պրակտիկան եւ հավատալիքները, հարուստ դրականությունը եւ այդ հոսանքների ներկայիս պատկերը, դրանց զարգացման հեռանկարները, եւ այլն:

Մ. Ա.

Մուհամմադի գիշերային ճամփորդությունը

Սոնա Տոնիկյան

Ժամանակակից ղուրանագիտության ամենաուշագրավ թեմաներից մեկը Մուհամմադ մարգարեի գիշերային ճամփորդության մասին առասպելն է, որը իսլամական ավանդության մեջ հայտնի է որպես գիշերային ճամփորդություն եւ երկնային այցելություն (Ալ-իսրա ուա ալ-միըրաջ): Այն հիմնված է սուրբ ավանդության (Հադիսներ, սիրա եւ այլն), ինչպես նաեւ Ղուրանի որոշ այաթների վրա: Առկա են առասպելի բազմաթիվ տարբերակներ, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից, ընդ որում ոչ միայն առանձին մանրամասներով, այլեւ, երբեմն, բուն էությամբ. մասնավորապես, որոշ տարբերակներ հիշատակում են միայն գիշերային ճամփորդությունը, մյուսները՝ միայն երկնային այցելությունը, սակայն, հիմնականում, այս երկու իրադարձությունները միավորվում են մեկ առասպելի շրջանակներում:

Ներկա հոդվածում փորձ է արվում պարզել այդ տարբերությունների պատճառները, վերականգնել առասպելի նախնական տարբերակը եւ այն տարանջատել հետագա հավելումներից:

Երկնային այցելությունների թեման տարածված էր Հին Արեւելքում: Նման սյուժեներ հանդիպում են ինչպես իրանական, հնդկական, հունական առասպելներում, այնպես էլ սեմական ծագում ունեցող ավանդություններում: Դրանք հատկապես լայն տարածում են գտել հրեական ու քրիստոնեական կատարածաբանական եւ միստիկ ուղղվածության գրականության մեջ: Այդ սյուժեների մի մասն ընդգրկվել է Աստվածաշնչի մեջ (Եզեկիելի, Դանիելի, Զաքարիայի տեսիլները, Հովհաննու Հայտնությունը):

Արաբական ցեղերը նույնպես ծանոթ էին այդ թեմային, որը գալիս էր կրոնական ավանդապատումներից եւ քրմերի շամանական տեսիլներից:

Երկնային այցելությունների մասին ավանդություններում մշտապես առկա է հրաշագործության դրվագը, որը իսլամին բավականին խորթ է. Ղուրանում հաճախակի են հիշատակումներն այն մասին, որ Մուհամմադը հրաժարվում էր հրաշքներ գործելուց՝ մի կողմից նշելով, որ ինքը սովորական մահկանացու է, ոչ թե հրաշագործ, մյուս կողմից, որ, միեւնույն է, մարդիկ չեն հավատացել իր նախորդների գործած հրաշքներին: Սակայն նրա համար շատ կարեւոր էր ցույց տալ իր կապը նախորդ մարգարեների հետ եւ, հատկապես, իր գերազանցությունը նրանց նկատմամբ՝ որպես «մարգարեների կնիք»:

Ղուրանում Մուհամմադի անձի հետ կապված հրաշագործության միակ դրվագը գիշերային ճամփորդությունն է, ընդ որում, պետք է նշել, որ այս դեպքում եւս մարգարեն հանդես է գալիս ոչ թե որպես հրաշագործ, այլ որպես հրաշքի մասնակից: Այս ճամփորդությունը Ղուրանում ամբողջական եւ ավարտուն չարադրանքի տեսք չունի, քանի որ նրա մասին ընդամենը մի քանի հիշատակում կա: Սակայն հադիսների հիման վրա իսլամական ավանդույթում ստեղծվել է «Գիշերային ճամփորդության եւ երկնային այցելության» (Ալ-իսրա ուա ալ-միըրաջ) մասին առասպելը, որը դարերի ընթացքում մեծ փոփոխություններ կրելով՝ լրացվել է նոր տարրերով եւ բավականին հեռացել իր բնօրինակից: Այդ իսկ պատճառով, Մուհամմադի երկնային այցելության մասին ներկայումս առկա է երկու հիմնական աղբյուր՝ ավանդության մեջ լայն տարածում ստացած առասպելը եւ վերջինիս սակավաթիվ հիշատակումները Ղուրանում: Վերլուծելով դրանք, փորձենք վերականգնել առասպելի նախնական այն տարբերակը, որը բացակայում է Ղուրանում: Նախ անդրադառնանք իսլամական ավանդույթում ընդունված պատումին[1], որի հիմնական տարբերակն ունի հետեւյալ տեսքը:

621թ. ռաջաբ ամսվա 27-ին կամ ռաբի ամսվա 17-ին, երբ մարգարեն քնած էր Մեքքայում, իր կնոջ՝ Ումմ Հանիի տանը, հանկարծ փեղկվեց տանիքը, եւ Ջիբրիլը (Գաբրիելը): Նա ճեղքեց Մուհամմադի կուրծքը, հրամայեց Միքայիլին (Միքայել) երեք անգամ թասով ջուր բերել Զամզամ սուրբ աղբյուրից եւ, հանելով մարգարեի սիրտը, երեք անգամ լվաց այն: Այնուհետեւ Միքայիլը բերեց մի ոսկյա թաս՝ հավատով եւ իմաստնությամբ լի, եւ դատարկեց այն Մուհամմադի կրծքի մեջ, հետո փակեց այն եւ կնքեց մարգարեության կնիքով: Այնուհետեւ բերեց ալ-Բուրակին՝ ավանակից մեծ, ջորուց փոքր, թամբված եւ սանձված մի հեքիաթային կենդանու: Երբ Մուհամմադը փորձեց հեծնել, ալ-Բուրակը ետ ցատկեց, սակայն Ջիբրիլը հանգստացրեց նրան՝ ասելով, որ Ալլահի աչքում ավելի արժանավորը, քան Մուհամմադն է, դրան դեռ երբեք չի հեծել: Ալ-Բուրակը թույլ տվեց, որ մարգարեն հեծնի իրեն, եւ նրանք միասին ուղեւորվեցին դեպի Ամենահեռավոր մզկիթը[2]: Երբ հասան մի վայր, ուր արմավենիներ կային, Ջիբրիլը պատվիրեց Մուհամմադին, որ իջնի եւ աղոթի, քանի որ դա այն տեղն է, ուր նա պիտի զաղթի չուտով: Հետո նույնը կրկնվեց Սինա լեռան մոտ, ուր Մուսան(Մովսեսը) խոսել էր Աստծո հետ, այնուհետեւ՝ Բեթղեհեմում, ուր ծնվել էր Իսան (Հիսուսը): Ճանապարհին մարգարեն մի ձայն է լսում աջ կողմից, որը խնդրում էր նրան կանգ առնել եւ խոսել իր հետ, քանի որ Մուհամմադին ամենանվիրվածը ինքն է: Սակայն ալ–Բուրակն առաջ է նետվում, եւ մարգարեն կանգ չի առնում՝ զգալով, որ իր ճանապարհը ոչ թե նրա, այլ ամենազոր եւ փառավոր Աստծո հետ է: Քիչ անց լսվում է մեկ ուրիշ ձայն, այս անգամ՝ ձախ կողմից: Սակայն ալ–Բուրակը կրկին առաջ է նետվում, եւ Մուհամմադը կանգ չի առնում: Այնուհետեւ նա տեսնում է մի չքնաղ աղջիկ՝ զարդարված աշխարհի ողջ պերճանքով ու հարստությամբ: Նա գայթակղիչ ժպիտով նշան է անում մարգարեին, սակայն Մուհամմադը, հասկանալով, որ իր

ճանապարհը նրա հետ չէ, առաջ է չարժվում առանց կանգ առնելու: Այդ ամենից հետո Ջիբրիլը բացատրում է նրան, որ առաջին ձայնը հրեայի ձայն էր, եւ եթե Մուհամմադը կանգ առներ ու խոսեր նրա հետ, ապա իր ժողովուրդը հուդայականություն կընդուներ: Երկրորդը՝ քրիստոնյայի ձայն էր, իսկ նշան անող չքնաղ աղջիկն աշխարհն էր՝ իր բոլոր հարստություններով, փառամոլությամբ ու հրապույրներով, եւ եթե մարգարեն լսեր նրան, ապա իր ժողովուրդն այս կյանքի հաճույքները կգերադասեր հավերժ երանությանը եւ կդատապարտվեր նզովքի:



Մուհամմադի գիշերային ճամփորդությունը

Երբ հասան Ամենահեռավոր մզկիթին, այստեղ նրանց արդեն սպասում էին նախորդ մարգարեները՝ Մուսան (Մովսես), Դաուդը (Դավիթ), Սուլայմանը (Սողոմոն), Իսան (Հիսուսը), Իբրահիմը (Աբրահամ) եւ այլք: Այստեղ նրանք բոլորը միասին աղոթեցին՝ Մուհամմադի գլխավորությամբ[3]: Հետո Մուհամմադին առաջարկեցին երեք անոթ՝ ջրով, կաթով եւ գինով լի: Մարգարեն ընտրում է կաթով անոթը, եւ Ջիբրիլը բացատրում է, որ նա ընտրել է բնությունը, հետեւաբար իր ժողովուրդը կգնա ճշմարիտ ճանապարհով:

Ամենահեռավոր մզկիթում աղոթելուց հետո Մուհամմադը Ջիբրիլի հետ երկինք տանող աստիճաններով բարձրացավ երկինք, որի տարբեր չերտերում կրկին հանդիպեց մարգարեներին. առաջինում՝ Ադամին, երկրորդում՝ Իսային եւ Յահյային (Հովհաննես Մկրտիչ), երրորդում՝ Յուսուֆին (Հովսեփ), չորրորդում՝ Իդրիսին (Ենոք), հինգերորդում՝ Հարունին (Ահարոն), վեցերորդում՝ Մուսային, յոթերորդում՝ Իբրահիմին (Աբրահամ): Ընդ որում այդ հանդիպումները կատարվում էին միեւնույն կերպով. երբ Մուհամմադն ու Ջիբրիլը հասնում էին երկնքի հերթական չերտի մուտքին, Ջիբրիլը խնդրում էր բացել այն: Դրան հաջորդում էր հետեւյալ երկխոսությունը.

- Ո՞վ ես դու:
- Ես Ջիբրիլն եմ:
- Ո՞վ կա քեզ հետ:
- Մուհամմադը:
- (Ալլահն) ուղարկե՞լ է(քեզ)նրա մոտ:
- Ուղարկել է նրա մոտ:

Եվ նրանց ներս էին թողնում: Յոթ երկինքներն անցնելուց հետո հասնում են "Ծայրագույն սահմանի լոտոսին", որի արմատների տակից հոսում էին կաթի, մեղրի եւ գինու գետեր: Հետո բարձրանում են այնքան, մինչեւ հասնում են այն սահմանին, ուր լսվում է գրիչների ճռճռոց: Այստեղ մարգարեն հանդիպում է Ալլահին՝ լույսի մեջ ողողված: Բարձրյալը Մուհամմադի ժողովրդին օրական 50 աղոթք է պարտադրում: Սակայն, երբ մարգարեն վերադառնում է Մուսայի մոտ, վերջինս զգուշացնում է, որ դա անհնար է, եւ որ նրա ժողովուրդը չի կարողանա կատարել այն եւ խորհուրդ է տալիս վերադառնալ ու աստծուց մեղմացում խնդրել: Մուհամմադը մի քանի անգամ վերադառնում է Ալլահի մոտ, որն ամեն անգամ հինգով պակասեցնում է աղոթքների թիվը՝ հասցնելով օրական հինգի:

Այդ ամենից հետո Ջիբրիլը Մուհամմադին ցույց է տալիս դրախտի բարիքներն ու դժոխքի սարսափները եւ վերադարձնում նրան Ամենահեռավոր մզկիթ, ուր մարգարեին սպասում էր ալ-Բուրակը, որն էլ նրան Մեքքա է տանում:

Այս ամբողջ ճամփորդությունը տեղի է ունենում այնքան կարճ ժամանակում, որ երբ Մուհամմադը վերադառնում է տուն՝ անկողինը դեռ սառած չի լինում: Հաջորդ օրը նա իր ցեղակիցներին պատմում է այդ հրաշքի մասին, սակայն վերջիններս նրան չեն հավատում եւ պահանջում են, որ նկարագրի Երուսաղեմը: Մարգարեն կատարում է նրանց պահանջը, եւ Աբու Բաքրը, որը եղել էր Երուսաղեմում, հաստատում է նրա խոսքերը, ինչի համար էլ նրան կոչում են Հաստատող Աբու Բաքր (Աբու Բաքր աս-Սիդդիկ):

Հադիսների տարբեր ժողովածուներում արձանագրված այս տարբերակի կողքին հանդիպում է նաեւ մեկ ուրիշը: Վերջինիս գլխավոր տարբերությունն ավանդականից այն է, որ այստեղ Երուսաղեմի մասին ոչ մի խոսք չկա, իսկ Ամենահեռավոր մզկիթը ներկայացվում է որպես երկնային թագավորություն (մասնավորապես իմամ ալ-Բուխարիի թվարկած հադիսներում): Թերեւս, հենց

այս տարբերությունից ելնելով է, որ իսլամական ավանդույթն այս առասպելը բաժանում է երկու մասի՝ Գիչերային ճամփորդություն (Ալ-իսրա) եւ Երկնային ճամփորդություն (Ալ- միըրաջ), որոնք, հաճախ, իրարից զատվում են նաեւ ժամանակային առումով: Առաջինն ընդգրկում է Երուսաղեմ կատարած ճամփորդությունը եւ մարգարեների հետ համատեղ աղոթքը, իսկ երկրորդը՝ այցելությունը երկինք ու աղոթքների պարտադրումը: Այս առանձնացումն ավելի է հիմնավորվում, երբ, համադրելով Ղուրանում առկա, տվյալ առասպելին առնչվող, ցրված ու կցկտուր հիշատակումները, փորձում ենք համաբերել դրանք ամբողջական առասպելի տեսքով: Սակայն, նախ անդրադառնանք բուն հիշատակումներին:

Բնականաբար, մարգարեի կյանքի այդպիսի կարեւոր իրադարձությունը չէր կարող իր արտացոլումը չգտնել Ղուրանում: Ավանդությունը Գիչերային ճամփորդության հետ է կապում 17-րդ սուրայի[4] առաջին այաթը[5], ուր ասվում է. «Փառք նրան, ով գիշերով տեղափոխեց իր ծառային Անձեռնմխելի մզկիթից[6] Ամենահեռավոր մզկիթը, որի շրջակայքը մենք օրհնել էինք, որպեսզի ցույց տանք նրան մեր նշանները: Նա (Ալլահը) իսկապես ամենատես է եւ ամենալուր»: Երկնային այցելության մասին Ղուրանում ընդհանրապես ոչ մի անմիջական հիշատակում չկա, սակայն որոշ այաթներ այդ մասին ակնարկներ են պարունակում եւ կարող են կապվել դրա հետ: Կարելի է նշել, մասնավորապես 17-րդ սուրայի 62-րդ այաթը[7]. «Եվ ահա մենք քեզ ասացինք. «Քո տերը շրջապատում է մարդկանց», եւ մենք քեզ ցույց տվեցինք մի տեսիլ, որը միայն փորձություն էր մարդկանց համար, ինչպես եւ Ղուրանում արգելված ծառը, եւ մենք վախեցնում ենք նրանց, բայց դա միայն ավելացնում է նրանց անհնազանդությունը», 94–րդ սուրայի 1-3-րդ[8] այաթները՝ «Մի՞թե մենք չենք բացել քո կուրծքը (1) եւ չենք հանել քո բեռը (2), որը ծանրացնում էր քո մեջքը (3)»: Այդ այցելությանն են վերագրվում նաեւ 53-րդ սուրայի 13-18-րդ այաթները. «Եվ նա (Մուհամմադը) տեսավ նրան[9] մեկ ուրիշ իջման ժամանակ (13), ծայրահեղ սահմանի լոտոսի մոտ (14), այնտեղ կա այգի-թաքստոց (15), երբ լոտոսը թաքցնում էր իր թաքուցելին (16), եւ չշեղվեց նրա հայացքը եւ չանցավ սահմանից (17), նա իսկապես տեսել է իր Ամենամեծ Աստծո նշաններից (18)»: Ինչպես նաեւ 81-րդ սուրայի 22-24-րդ այաթները. «Եվ ձեր ընկերը մոլագար չէ (22), նա իսկապես տեսել է նրան պարզ հորիզոնին (23), եւ նա չի խնայի թաքնվածը (24)»:

Վերը նշված այաթները միավորելով, կարելի է վերականգնել գիչերային ճամփորդության մասին Ղուրանում բացակայող տեքստը, ինչի արդյունքում ստանում ենք հետեւյալ պատկերը. «Ալլահն ուզում է ցույց տալ Մուհամմադին այն, ինչ անհայտ է սովորական մահկանացուներին, եւ որպեսզի նախապատրաստի մարգարեին այդ այցելությանը, ճեղքում է նրա կուրծքը՝ ազատելով նրան մեջքը ճնշող բեռից, հետո տեղափոխում է Ամենահեռավոր մզկիթ, ուր ցույց է տալիս նրան դրախտը (այգի-թաքստոց), դժոխքը (զաքռումի ծառը, որի պտուղներով սնվում են մեղսագործները), ծայրագույն սահմանի լոտոսը, ուր հանդիպում է Ալլահին, եւ վերջինս պատվիրում է նրան մնացյալին պատմել երկնային կյանքի մասին՝ «Պատմիր նրանց առակ այստեղի կյանքի մասին ...» (18-43): Ինչպես տեսնում ենք, տեքստի այս տարբերակը զգալիորեն զանազանվում է ավանդական պատումից, ավելի ճիշտ, առասպելի մի մասն է կազմում: Այստեղ բաց են թողնված բոլոր այն կենցաղային մանրամասները, որոնք այդքան մեծ տեղ են գրավում ավանդական առասպելում, չի նշվում Ամենահեռավոր Մզկիթի գտնվելու վայրը, չկա ոչ մի հիշատակում ճամփորդության ժամանակի մասին:

Փորձենք ավելի մանրամասն անդրադառնալ առասպելի այս երկու տարբերակների ընդհանրություններին եւ տարբերություններին: Այդ նպատակով, նախ եւ առաջ, առանձնացնենք այն հիմնական դրվագները, որոնցից դրանք կազմված են:

Ղուրանյան տեքստի հիմքում ընկած դրվագները հետեւյալն են. 1.Կրծքի ճեղքում եւ ազատում մեղքերից, 2.Ճամփորդություն դեպի Ամենահեռավոր մզկիթ, 3.Այցելություն դրախտ, 4.Այցելություն դժոխք, 5.Ծայրագույն սահմանի լոտոս, 6.Հանդիպում Ալլահի հետ:

Առասպելի ավանդական տարբերակում առանձնանում են հետեւյալ հիմնական դրվագները. 1.Կրծքի ճեղքում եւ ազատում մեղքերից, 2.Ալ-Բուրակ, 3.Ճամփորդություն դեպի Ամենահեռավոր մզկիթ, 4.Աղոթք Մադինայում, Սինայում, Բեթղեհեմում, 5.Գայթակղության փորձ, 6.Մարգարեների հետ համատեղ աղոթք Երուսաղեմում, 7.Կաթով անոթի ընտրություն, 8.Այցելություն երկինք, 9.Հանդիպում մարգարեների հետ, 10.Ծայրագույն սահմանի լոտոս, 11.Հանդիպում Ալլահի հետ, 12.Աղոթքների պարտադրում, 13.Այցելություն դրախտ, 14.Այցելություն դժոխք, 15.Երուսաղեմի նկարագրությունը մեքքացիներին:

Համեմատության արդյունքում տեսնում ենք, որ պատումի ավանդական տարբերակը պարունակում է բոլոր այն տարրերը, որոնք առկա են Ղուրանի վերականգնված տեքստում, սակայն դրանց կողքին ընդգրկված են նաեւ մի շարք դրվագներ, որոնց մասին Ղուրանում ոչ մի հիշատակում չկա: Դրանք են. 1.Ալ–Բուրակ, 2.Աղոթք Մադինայում, Սինայում, Բեթղեհեմում, 3.Գայթակղության փորձ, 4.Մարգարեների հետ համատեղ աղոթք Երուսաղեմում, 5.Կաթով անոթի ընտրություն, 6.Հանդիպում մարգարեների հետ, 7.Աղոթքների պարտադրում, 8. Երուսաղեմի նկարագրությունը մեքքացիներին:

Այս տարրերը միավորելիս, ստացվում է, որ առասպելից դուրս են մնում ալ-Բուրակի օգնությամբ դեպի Երուսաղեմ կատարած ողջ ճամփորդությունը, մարգարեների հետ նրա հանդիպումն ու համատեղ աղոթքը, աղոթքների պարտադրումը: Այս բոլոր դրվագները առասպելից հանելու դեպքում ստանում ենք ղուրանյան տարբերակի կրկնօրինակը, մի պարզ վերապահումով, որ Ա-

մենահեռավոր մզկիթը ուղղակի երկնային թագավորությունն է: Ընդամին հարկ է նշել նաեւ, որ Երուսաղեմը որպես Ամենահեռավոր մզկիթ ընդունելու տարբերակը չի հիմնավորվում նաեւ այն միակ այաթով, որի վրա իսկ այն հիմնված է: Խոսքը 17-րդ սուրայի առաջին այաթի մասին է, ուր նշվում է, որ Ալլահն իր ծառային գիշերով Ամենահեռավոր մզկիթ է տեղափոխել իր հրաշքները ցույց տալու նպատակով: Ակնհայտ է, որ մարգարեների հետ համատեղ աղոթքը որպես հրաշք չի կարող մրցակցել այն ամենի հետ, ինչ մարգարեն տեսել էր երկնքում: Ավելի հիմնավորված տարբերակ կատանանք, եթե ընդունենք, որ Ալլահն իր ծառային տեղափոխել է երկինք, ուր գտնվում է Ամենահեռավոր մզկիթը, եւ որտեղ մարգարեն ծանոթացել էր այն ամենին, ինչն անմատչելի է սովորական մահկանացուների համար եւ հայտնվում է միայն ընտրյալներին:

Այսպիսի արդյունքի է բերում Մուհամմադի գիշերային ճամփորդության մասին Ղուրանում բացակայող ամբողջական տեքստի վերականգման փորձը, տեքստ, որը քաջ հայտնի էր մարգարեի ժամանակակիցներին, սակայն դուրս էր մնացել Ղուրանի գրավոր բնագրից: Վերականգնված տեքստի եւ ավանդությամբ տարածված տարբերակի տարրերի համեմատության հիման վրա գալիս ենք այն եզրակացության, որ նրանց միջեւ սկզբունքային տարբերությունների հիմնական պատճառը Ամենահեռավոր Մզկիթի գտնվելու վայրի վերաբերյալ եղած տարաձայնություններն են: Դա էլ հանգեցրել է նախնական երկնային այցելության դրվագին Երուսաղեմ կատարած ճամփորդության հետագա հավելմանը, եւ այդպիսի առասպելի՝ միմյանցից էականորեն զանազանվող տարբերակների, գոյացմանը: Դրան զուգահեռ, ժամանակի ընթացքում առասպելը լրացվել է հնքիաթային եւ բանահյուսական տարրերով, որոնք, կրելով դիցաբանական իմաստային լիցք՝ սկզբունքային ազդեցություն չեն գոր-

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ավանդության մեջ տարբեր կարծիքներ կան ճամփորդության տեղի եւ ժամանակի վերաբերյալ: Սա, թերեւս, ամենատարածված եւ ընդունված տարբերակն է: Այն, ամենայն հավանականությամբ, բխում է 17-րդ սուրայի թվագրումից (ըստ Բլաշերի այն 74-րդն է), որի առաջին այաթը այս ճամփորդության մասին լեգենդի համար հիմնաքարային է: Սակայն նման թվագրումը անհիմն է թվում, քանի որ Ղուրանի տեքստի վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ վերոհիշյալ այաթը այս սուրա է տեղափոխվել մեկ այլ սուրայից (տես՝ Коран. Перевод и комментарии И.Ю. Крачковского), որը, մեծ հավանականությամբ, վաղ մեքքայական շրջանի է:

2. Ամենահեռավոր մզկիթի չուրջ կան տարբեր կարծիքներ: Մինչեւ 7-րդ դարի վերջը ենթադրվում էր, որ խոսքը երկնքի մասին է (տես՝ И.М.Фильштинский.,,Представление о потустороннем мире,, в арабской мифологии и литературе. Восток-Запад, вып. 4, М., 1989 г., с.57): Ներկայումս մուսուլմանական ավանդության եւ եվրոպական արեւելագիտության մեջ գերակշռող վարկածի համաձայն, դա երուսաղեմն է (դրա օգտին է խոսում հաջորդող «որի չուրջը մենք օրհնել էինք» արտահայտությունը, որը Ղուրանում օգտագործվում է «ավետյաց երկիր», այսինքն՝ Պաղեստին իմաստով): Որոշ ժամանակակից մեկնաբանություններում պնդվում է, որ խոսքը Մեքքայի շրջակայքում ինչ-որ մի տեղի մասին է (տես՝ М.Б. Пиотровский. Коранические сказания. М., 1991 г., с.162):

3. Նախորդ մարգարեների մասին ավանդապատումները մեծ տեղ են գրավում Ղուրանում, հատկապես մեքքայական շրջանի սուրաներում: Սակայն, որպես կանոն, դրանք անմիջականորեն չեն կապվում Մուհամմադի անվան հետ, այլ միայն անուղղակիորեն հիշեցնում են նույնատիպ իրավիճակներ, որոնցում հայտնվել էր նաեւ «մարգարեների կնիքը»: Այս համատեղ աղոթքը կոչված էր վկայելու քարոզվող նոր կրոնի կապը Արաբիայում արդեն իսկ տարածում գտած հրեականության եւ քրիստոնեության հետ, ցույց տալու, որ իսլամը ոչ թե վերջիններիս աղավաղված տարբերակն է, այլ Արեւելքում միաստվածություն քարոզող կրոնների տրամաբանական շարունակությունը:

4. Սուրան ունի երկակի անվանում՝ «Գիշերային ճամփորդություն» (ալ-իսրա) կամ «Հրեաներ» (բանու իսրա'իլ): Այն մեքքայական է, սակայն հնարավոր է, որ որոշակի վերանայումների է ենթարկվել Մադինայում:

5. Ըստ Ուեյլի, առաջին այաթը ավելացվել է Մուհամմադի մահվանից հետո: Գրիմմեն այն կարծիքին է, որ այդ այաթը պարունակել է որոշ մանրամասներ, որոնք հետագայում բաց են թողնվել: Կարծիք կա նաեւ, որ առասպելը ժամանակային առումով նախորդել է Ղուրանում վերոհիշյալ այաթի արտացոլմանը:

6. Անձեռնմխելի մզկիթը Քաաբան է՝ Մեքքայում գտնվող խորանարդաձեւ սուրբ տաճարը:

7. Կրաչկովսկին պնդում է, որ այս այաթները չի կարելի կապել նույն սուրայի առաջին այաթի հետ (տես՝ Коран. Перевод и комментарии И.Ю. Крачковского):

8. Ավանդությունը այս այաթները կապում է այն լեգենդի հետ, որի համաձայն մանուկ հասակում հրեշտակները ճեղքել են մարգարեի կուրծքը եւ մաքրել այն: Սակայն այս եւ նման առասպելները բացահայտորեն ստեղծվել են մարգարեի մահվանից հետո՝ Քրիստոսի հրաշագործություններ մասին պատմող պատմություններ ազդեցությամբ:

9. Որոշ մեկնաբաններ այն կարծիքին են, որ խոսքն այստեղ Գաբրիելի մասին է, սակայն նախորդող այաթները հակասում են դրան՝ «Սովորեցրել է նրան ուժով ահեղը (5), տերը հզորության, ահա նա կանգնեց (6) բարձր հորիզոնին (7), հետո մոտեցավ եւ ցած իջավ (8), եւ նա երկու նետի հեռավորության վրա էր, կամ ավելի մոտ (9), եւ հայտնեց իր ծառային այն, ինչ հայտնեց (10), սիրտը չխաբեց նրան այնում, ինչ նա տեսավ (11): Արդյոք դուք պիտի վիճե՞ք նրա հետ այն մասին, ինչ նա տեսնում է (12)»: Մուհամմադը չի կարող Ջիբրիլի ծառան լինել, քանի որ, երբ Ալլահը ստեղծեց Ադամին, բոլոր հրեշտակներին հրամայեց խոնարհվել նրա առաջ եւ ոչ թե հակառակը:

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ԻՍՊԻՐՅԱՆ
Պրոֆեսոր

Հին աշխարհի պետությունների շարքում Պարսկաստանը ուրույն տեղ էր գրավում մարզական խաղերի, ֆիզիկական տարբեր վարժաձեւերի մրցումների կազմակերպման, ֆիզիկական դաստիարակության հստակ համակարգի մշակման և գործադրման առումով:

Այդ մասին, մշակույթի հուշարձանների վկայություններից, ինչպես նաև բազմաթիվ այլ աղբյուրներից բացի, տեղեկություններ են հաղորդել նաև հին հույն պատմիչներ Հերոդոտոսը և Քսենոփոնը:

Հենվելով վերջիններիս հիշատակած փաստերի վրա՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանրահայտ պատմաբան, հունգարացի Լ.Կունը գրում է, որ Պարսկաստանում գործում էին «դաստիարակչական տներ», որտեղ ֆիզիկական դաստիարակություն էին ստանում 7-16 տարեկան երեխաները: Այստեղ նրանք պարապում էին ըմբշամարտով, վազքով, ձիավարությամբ, նիզականետությամբ, նետաձգությամբ:

Ավելի ուշ, այդ հաստատությունների հիման վրա ստեղծվեցին, այսպես կոչված, ուժի զարգացման տները (*զուրխանե*), որոնք ընդհուպ մինչև ժամանակակից դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգին անցնելը պահպանել էին իրենց նշանակությունն ու դերը՝ որպես Պարսկաստանի ֆիզիկական կուլտուրայի կենտրոններ:[1]

Այս ամենից զատ, երկրում մեծ տարածում ունեին որսորդությունը, ձիագնդակախաղը, որը կոչվում էր *չաուգան*, շախմատը և այլն:

Հին Պարսկաստանում ֆիզիկական վարժություններով և տարբեր մարզաձևերով զբաղվում և սիստեմատիկաբար մարզվում էին ոչ միայն երեխաները, երիտասարդները և զինվորները, այլև՝ բոլոր զորավարները և, նույնիսկ, թագավորները: Պատահական չէ, որ Պարսկաստանի թագավոր Դարեհ I-ի դամբարանի վրա գրված են հետևյալ խոսքերը. «Իմ ձեռքերը և ոտքերը մարզված են: Որպես հեծյալ՝ ես լավ հեծյալ եմ: Որպես նետաձիգ՝ ես լավ նետաձիգ եմ և նետահարում եմ և՛ հետիոտն, և՛ հեծյալ»:[2]

Պարսկաստանը (1935 թվականից՝ Իրանը) մ.թ.ա IV-III հազարամյակում արդեն իսկ համարվում էր համաշխարհային քաղաքակրթության հնագույն կենտրոններից՝ իր զարգացած մշակույթով և ֆիզիկական դաստիարակության համակարգով:[3]

Հայտնի է, որ սկսած մ.թ.ա VI դարից Իրանում բնակվում և երկրի առօրյա կյանքին, այդ թվում և մարզական ու մշակութային միջոցառումներին մասնակցում էին նաև հայերը:[4]

385 թ. կայացած հին հունական 291-րդ օլիմպիական խաղերի բոնցքամարտիկների մրցումների հաղթող, հայոց թագավոր Վարազդատ Արշակունին, մինչև օլիմպիական այդ խաղերը մարզվել էր Պարսկաստանում, ուր գտնվում էր որպես պատանդ: «Շապուհից փախչելով նա գնացել էր իր կայսր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել»:[5]

Միջնադարյան Պարսկաստանում անցկացված խաղերին և մրցումներին գործուն առնչություն են ունեցել նաև հայերը: Գ.Բուտաևը և Յ.Սիմոնյանը գրում են, որ «Հայերը մասնակցել են պարսից Շապուհ և Հազկերտ արքաների կազմակերպած ձիամրցումներին, զինամրցումներին և հաճախ դուրս եկել հաղթանակով»:[6]

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից օլիմպիական խաղերին, որոնք վերականգնվեցին 1894 թ. Սորբոնում կայացած Միջազգային մարզական կոնգրեսի որոշմամբ, մասնակցել են 24 տարբեր պետություններից 58 հայ մարզիկներ և մարզուհիներ:

1896 թ. առաջին օլիմպիական խաղերից (Աթենք) մինչև 1996 թ. Ատլանտայում (ԱՄՆ) կայացած 27-րդ խաղերը Հայաստանից մասնակցել են 71, նախկին Խորհրդային Միության հանրապետություններից՝ 22 և սփյուռքահայությունից, ինչպես ասվեց՝ 58 աթլետներ: Ուշագրավ է, որ ժամանակակից օլիմպիական խաղերի նշված 58 մասնակիցներց 12-ը իրանահայեր են և օլիմպիական խաղերի են ներկայացել Իրանի հավաքական թիմերի կազմում: Համեմատության համար ասենք, որ ժամանակակից օլիմպիական խաղերին Ֆրանսիայից ընդգրկված են եղել 8, Հունաստանից՝ 5, ԱՄՆ-ից և Բուլղարիայից՝ 4-ական, Ռուսաստանից՝ 3, Բրազիլիայից, Գերմանիայից, Լիբանանից՝ 2-ական մարզիկ: Բազմամարդ սփյուռքահայ գաղթօջախներ ունեցող պետություններից (Ավստրալիա, Կանադա, Կիպրոս և այլն) օլիմպիական խաղերի մասնակցել են մեկական մարզիկ կամ ընդհանրապես չեն մասնակցել: Թուրքահայությունից օլիմպիական խաղերի մասնակցել են միայն երկու պոլսահայ մարզիկ (Սկրտիչ Սկրյան, Վահան Փափազյան)՝ 1912 թ.: 1912 թ. Հելսինկիի 5-րդ օլիմպիական խաղերից հետո, մինչև 1948 թ. հայազգի մարզիկներ չեն մասնակցել: Հայաստանի Հանրապետությունը այդ տարիներին գտնվում էր ԽՍՀՄ կազմում և հայաստանցի մարզիկները նույնպես օլիմպիական խաղերում չէին կարող ընդգրկված լինել, քանի որ ԽՍՀՄ-ը չէր անդամակցում Միջազգային օլիմպիական կոմիտեին:

1948 թ. հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 14-ը Լոնդոնում կայացած 14-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին միայն երեք հայազգի մարզիկ՝ իրանահայ բոնցքամարտիկներ Մանվել Աղասին (Աղասյանը) և Աղանուր Հարությունյանը, ինչպես նաև բրազիլահայ լողորդ Արամ Պողոսյանը: Լոնդոնի օլիմպիադայում Ա.Պողոսյանը ազատ ոճի լողի 4x200 մետր փոխանցալողի մրցումներում գրավեց 8-րդ տեղը:[7]

Իրանահայ բոնցքամարտիկ Ա.Հարությունյանը մինչև կիսաեզրափակիչ մրցումներ չհասավ, պարտվեց և դուրս մնաց մրցումներից: Իրանահայ մյուս բոնցքամարտիկը՝ Մանվել Աղասին չկարողացավ մրցանակային տեղ շահել, սակայն մասնակցեց ոչ միայն Լոնդոնի, այլև հաջորդ՝ 15-րդ օլիմպիական խաղերին, որոնք կայացան 1952 թ. հուլիսի 19-ից մինչև օգոստոսի 3-ը Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում: Այս խաղերում Մ.Աղասյանն նույնպես չհաջողվեց օլիմպիական մրցանակ շահել:[8] Ամենայն հավանականությամբ բոնցքամարտի ամերիկյան և եվրոպական դպրոցները գերազանցում էին ասիական, իրանական դպրոցին:

1952 թ. Հելսինկիի օլիմպիական խաղերին մասնակցեցին 6 սփյուռքահայ մարզիկներ: Իրանի բոնցքամարտի հավաքական թիմում ընդգրկված 6 մարզիկներից երեքը հայեր էին: Փորձառու Մանվել Աղասու հետ մեկտեղ բոնցքամարտիկների օլիմպիական մրցաշարին մասնակցող իրանահայ մարզիկներ Պետրոս Նազարբեկյանը և Արտաշես Սարգսյանը մրցանակային տեղեր չգրավեցին:[9] Այս խաղերում սփյուռքահայ մարզիկներից ամենահաջողը ելույթ ունեցավ լողորդուհի Մերիլի Ստեփանյանը (ԱՄՆ), որը 4x100 մ. ազատ ոճի փոխանցալողի մրցումներում գրավեց 3-րդ տեղը և արժանացավ բրոնզե մեդալի: Նույն լողատարածության անհատական մրցումներում նա գրավեց 7-րդ տեղը:[10]

1956 թ. իտալական Կորտինա դե Ամպեցցո քաղաքում կայացած ձմեռային օլիմպիական խաղերին առաջին անգամ մասնակցեցին երկու հայազգի մարզիկներ, Իրանից՝ լեռնադահուկորդ Բենիկ Ամիրյանը[11] և Խորհրդային Միությունից՝ մոսկվացի տափօղակով հոկեյիստ Գրիգոր Մկրտչյանը: Լեռնադահուկորդների մրցումներում Բ.Ամիրյանը առաջին վե-

ցյակում տեղ չգրավեց: Խորհրդային Միության տափօղակով հոկեյի թիմի դարպասապահ Գ.Մկրտչյանը դարձավ առաջին հայ մարզիկը, որը նվաճեց օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչում ձմեռային մարզաձևերից:[12]

1960 թ. օգոստոսի 8-ից - սեպտեմբերի 11-ը Հռոմում կայացած 17-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին երկու իրանահայ մարզիկ՝ բոնցքամարտիկ Վազրիկ Ղազարյանը և ծանրորդ Հենրիկ Թամրազը (Թամրազյանը): Վ.Ղազարյանը 63,5 կգ քաշային կարգի բոնցքամարտիկների մրցումներում մրցանակային տեղ չգրավեց, մինչդեռ ծանրամարտիկ Հ.Թամրազյանը գրավեց պարտավոր 4-րդ տեղը և արժանացավ օլիմպիական խաղերի դիպլոմի[13]:

Իրանի մարզական պատվիրակության կազմում 1964 թ. Տոկիոյի 18-րդ օլիմպիական խաղերում առաջին անգամ հանդես եկավ իրանահայ մարզուհի Ջուլիեթ Գևորգյանը: Ջ.Գևորգյանը առաջին սփյուռքահայ թեթև աթլետուհին է, որ մասնակցում էր այդ խաղերի՝ սկավառակի նետման և գնդի հրման մրցաշարերին, սակայն մրցանակային տեղ չշահեց:[14]

1964 թ. Ինսբրուկի ձմեռային օլիմպիական 9-րդ խաղերի հայազգի միակ մասնակից, իրանահայ մարզիկ Հովհաննես Սկրտումյանը ուժերը չափելով լեռնադահուկորդների սրընթաց վայրէջքի և հսկա ոլորասահքի մրցումներին, առաջին վեցյակում տեղ չգրավեց:[15] Նա չորս տարի անց ելույթ ունեցավ նաև Գրենոբլի 1968 թվականի ձմեռային 10-րդ օլիմպիական խաղերին, սակայն մրցանակ ձեռք բերել չկարողացավ:

1972 թ. օգոստոսի 26-ից - սեպտեմբերի 11-ը Մյունխենում կայացած 20-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին բուլղարահայ ծանրորդ Նորայր Նուրիկյանը, լիբանահայ աթլետուհի Արդա Կալպակյանը և իրանահայ բոնցքամարտիկ Վարդգես Պարսամյանը:[16] Վերջինս պարտվեց և չկարողացավ պայքարել մրցանակային տեղերի համար, մինչդեռ Նորայր Նուրիկյանը նվաճեց օլիմպիական չեմպիոնի կոչումը:[17]

Հաջորդ՝ 21-րդ օլիմպիական խաղերին (1976 թ. Մոնրեալ, Կանադա), Իրանի հավաքական թիմերի կազմում ընդգրկված էին ֆուտբոլիստ Անդրանիկ Իսկանդարյանը և սուսերամարտիկ Սերժիկ Ասատուրյանը:[18] Իրանի ֆուտբոլի հավաքական թիմի կիսապաշտպան Ա. Իսկանդարյանը և խոցասուսերորդ Ս. Ասատուրյանը մրցանակային տեղեր չգրավեցին:

Այսպիսով՝ Իրանի հավաքական թիմերի կազմում 6 ամառային և 3 ձմեռային օլիմպիական խաղերի մասնակցել են իրանահայ 12 մարզիկ, որոնցից մեկը՝ կին (6 բոնցքամարտիկ, 2 լեռնադահուկորդ և մեկական՝ թեթև աթլետուհի, ծանրամարտիկ, սուսերամարտիկ և ֆուտբոլիստ):

Ամենաբարձր մարզական արդյունքը ցույց է տվել Հենրիկ Թամրազյանը՝ 1960թ. 17-րդ օլիմպիական խաղերի ծանրորդների մրցումներում գրավելով 4-րդ տեղը:

Օլիմպիական խաղերի մասնակից իրանահայ մարզիկների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

■

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐ

Ազգանուն, անուն	*Մարզաձևը*	*Օլիմպիական խաղեր*	*Գրաված տեղերը*	*Տեղ չի գրավել*
Հարությունյան Աղնուր	բոնցքամարտ	1948, 14-րդ	-	1
Աղասի Մանվել	բոնցքամարտ	1948, 14-րդ 1952, 15-րդ	-	1
Նազարբեկյան Պետրոս	բոնցքամարտ	1952, 15-րդ	-	1
Սարգսյան Արտաշես	բոնցքամարտ	1952, 15-րդ	-	1
Ամիրյան Բենիկ	լեռնադահուկ	1956, 7-րդ, ձմ.	-	1
Թամրազյան Հենրիկ	ծանրամարտ	1960, 17-րդ	4-րդ	-
Ղազարյան Վազրիկ	բոնցքամարտ	1960, 17-րդ	-	1
Գևորգյան Ջուլիեթ	թեթև աթլետիկա	1964, 18-րդ	-	1
Սկրտումյան Հովհաննես	լեռնադահուկ	1964, 9-րդ, ձմ. 1968,10-րդ, ձմ.	-	1
Բարսամյան Վարդգես	բոնցքամարտ	1972, 20-րդ	-	1
Ասատուրյան Սերժիկ	սուսերամարտ	1976, 21-րդ	-	1
Իսկանդարյան Անդրանիկ	ֆուտբոլ	1976, 21-րդ	-	1

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Л.Кун. Всеобщая история физической культуры и спорта, М., 1982, сс.40-41.
2. F.Hancar. Das Pferd in prähistorischer und frühhistoricher Zeit, Wien-Münshen, 1956, s. 414, 551.
3. Հայկական Սովետական Հանրագիտարան, Երևան, 1978, հ. 4, էջ 442-445: 4. Նույն տեղում, էջ 450-451:
5. Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 308:
6. Գ.Բուտան, Տ.Սիմոնյան. Ֆիզիկական կուլտուրայի պատմություն, Մասն Ա: Երևան, 1956, էջ 110:
7. Olympiamangud, Tallinn, 1981, p. 377.
8. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, 1996, Atlanta Media Guide Book, 1996, p. 32-33.

Սակայն Մանվել Աղասին մինչև օրս հարազատ է մնացել ֆիզիկական կուլտուրային, սպորտին: Իրանից տեղափոխվելով ԱՄՆ և հիմնավորվելով Լաս Վեգաս քաղաքում, Մ.Աղասին սկսեց լրջորեն զբաղվել որդու՝ Անդրե Աղասու մարզական ճակատագրով, եւ որդին, ինչպես հայտնի է, լավագույնս իրականացրեց հոր ակնկալիքները: Անդրե Աղասին առաջին և միակ հայ մարզիկն է, որը նվաճել է Ատլանտայի օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչումը և տարիներ շարունակ իր ձեռքում է պահում պրոֆեսիոնալ բիվ 1 բենիսխատի տիտղոսը:

9. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, p.33. 10. «Մարզիկ», ամսագիր, Գահիրե, 1951-1952, էջ 178:
11. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, p. 35. 12. Советские спортсмены - чемпионы олимпийских игр. М.,1991, с. 39. 13. Спорт за рубежом. М.,1960, N6:
14. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, ibid, p. 35.
15. Спорт за рубежом, М., 1964, N3-4, 1968, N4.
16. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, p. 37.
17. Մ.Իսպիրյան, Ռ.Գալստյան. Հայաստանցի և հայազգի օլիմպիականները. Երևան, 1996, էջ 84-86:
18. Sports delegation of the Islamic Republic of Iran, XXVI Olympiad, 1996, p. 39.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՁՈՂ

Արմենակ Սաֆուկյան

Պատմագիտության թեկնածու

1930-ական թթ. Խորհրդային Միությունում աղետալի չափերի հասած ստալինյան բռնությունների ալիքը տարածվեց նաեւ Հայաստանում: 1936 թ. կեսերից, երբ "ինքնասպանությամբ" հանրապետության քաղաքական ասպարեզից դուրս բերվեց ՀԿ/բ/Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Խանջյանը[1], այն իր մեջ առավ Հայաստանի մտավորական ընտրանիին՝ գիտնականներին, գրականության եւ արվեստի ներկայացուցիչներին: Նրա մահվանից (1936 թ. հուլիսի 9-ը) մոտ մեկ ամիս առաջ, Խանջյանի երկար դիմադրությունից հետո, ձերբակալվել էր հանրապետության ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ եւ գիտնական Ներսիկ Ստեփանյանի գլխավորած "Հակախորհրդային, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական խումբը", որով հայ մտավորականների նկատմամբ բռնությունների սկիզբը դրվեց:

Ըստ մեր ուսումնասիրությունների, 1930-38 թթ. Հայաստանում բնաջատվածներից 27-ը՝ գրականության եւ լրատվության, 9-ը՝ թատրոնի եւ կինոյի, 11-ը՝ նկարչության եւ ճարտարապետության, 11-ը՝ երաժշտության բնագավառի ներկայացուցիչներ էին: Եթե նրանց ավելացնենք նաեւ այդ տարիներին բռնությունների ենթարկված 6 լուսանկարիչներին, ապա ավելի ամբողջական կդառնա հանրապետության արվեստի եւ գրականության գործիչների պատուհասած ողբերգության ընդհանուր պատկերը[2]:

Ավելորդ չէ նշել, որ հետագա հետազոտությունները կարող են սոսկ որոշ, մեր կարծիքով ոչ էական, ճշգրտումներ մացնել տվյալ թվերի մեջ: Թյուրիմացություններից խուսափելու համար պարզաբանենք, որ մտավորականների ընդհանուր թվի մեջ չեն ընդգրկված բժիշկները, ուսուցիչները, իրավաբանները եւ "մաքուր" գիտությամբ զբաղվող մտավորականները:

Մինչ բռնադատված արվեստագետների գործերին անդրադառնալը՝ համառոտ՝ հասարակական-քաղաքական եւ բարոյահոգեբանական այն մթնոլորտի մասին, որ տիրում էր ԽՍՀՄ-ում, բնականաբար եւ Հայաստանում, 30-ական թվականներին: Արդեն ձեւավորված ստալինյան մենիշխանական համակարգն իր պայմաններն էր պարտադրում, որից խուսափելը գրեթե անհնար էր: 1920-ական թթ. վերջին ԽՍՀՄ-ում նկատելի էին դառնում տնտեսական դժվարությունները, հատկապես գյուղում: Դրանք տնտեսական միջոցներով լուծելու փորձերն որդեգրվում է վարչա-հրամայական մոտեցումը, եւ գյուղը սոցիալիստականացնելու նպատակով՝ սկսվում է համատարած բռնի կոլեկտիվացումը: Հենց այդ ժամանակ էլ երկրի առաջնորդը շրջանառության մեջ է դնում սոցիալիզմի դասակարգային թշնամիների ակտիվացման դրույթը: Գյուղերում ծայր առած բռնությունների հորձանքն հասնում է քաղաքներին՝ իր մեջ առնելով մտավորականներին, հասարակական-քաղաքական գործիչներին: Մենիշխանություն հաստատելու նպատակով Ստալինն ասպարեզից առաջին հերթին հանում է իր քաղաքական հակառակորդներին՝ Տրոցկուն, Ռիկովին, Կամենեւին, Զինովեւին, Բուխարինին եւ մյուսներին:

Ստեղծված իրադրության տրամաբանությամբ, միաժամանակ ծավալվում էին երկրի գործուն, ճանաչված մտավորականների ու արվեստագետների նկատմամբ բռնությունները:

1920-40 թթ. Հայաստանի մշակութային կյանքում նկատելի էր առաջընթացը[3]: Գրականության բնագավառում գեղարվեստական մնայուն արժեքներ էին ստեղծում Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Վ. Թոթովենցը եւ ուրիշներ, կերպարվեստում՝ Մ. Սարյանը, Հ. Կոջոյանը, թատրոնում՝ Հ. Աբելյանը, Վ. Փափազյանը, Հր. Ներսիսյանը, Մ. Չանանը, ճարտարապետության մեջ՝ Ա. Թամանյանը, Թ. Թորոմանյանը, Կ. Հալաբյանը եւ այլոք:

Հայտնի է, որ 20-ական թթ., մասնավորապես Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ, Հայաստան հրավիրվեցին արտասահմանում ստեղծագործող մշակույթի մի շարք հայտնի գործիչներ: Դրանց մեջ էր նաեւ Կոստանդնուպոլսից հայրենիք վերադարձած դերասանների մի խումբ, որն, անկասկած, մեծապես հարստացրեց ոչ միայն թատրոնի խաղացանկը, այլեւ նոր աստիճանի բարձրացրեց թատերական մշակույթը: Դերասանների այդ համաստեղության մեջ իր ուրույն տեղն ուներ Մկրտիչ Չանանը (Չանանյան), որն աչքի էր ընկնում իր խաղացանկով եւ թատրոնաստեղծ գործունեությամբ: Նա ղեկավարել է Երեւանի պատանի հանդիսատեսի, տղրբեջանական, քրդական թատրոնների ստեղծման աշխատանքները, միեւնույն ժամանակ զբաղվել գրական գործունեությամբ: Չանանի 1935 թ. լույս տեսած "Շահնամե" թատերգությունն արժանացել էր Միութենական մրցանակի եւ թարգմանվել մի շարք լեզուներով:

Սակայն դաժան ճակատագիրը չչրջանցեց նաեւ նրան: Կ.Պոլսից Փարիզով Հայաստան տեղափոխված դերասանին 1937-ին "հիշեցին" ՆԳԺԿ մարմիններում, եւ նա ձերբակալվեց հակախորհրդային, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական եւ լրտեսական աշխատանք կատարելու մեղադրանքով: Նրա գործում մասնավորապես նշվում են կապերը "հակախորհրդային, ազգայնամոլական խմբի" անդամներ Վ. Ալազանի, Գ. Մահարու հետ եւ այդ խմբի անդամ լինելը: ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Կոլեգիայի դռնփակ նիստի դատավճռում հատկապես չեչտվում է նրա "լրտեսական կապը սփյուռքահայ անվանի հասարակական-քաղաքական գործիչ, մտավորական Արշակ Զոպանյանի հետ": "Ռամկավար" կուսակցության ճանաչված ղեկավարներից մեկը՝ Ա. Զոպանյանը, ՆԳԺԿ մարմիններում հավաքված տվյալներով, իբր թե, անգլիական եւ ֆրանսիական հետախուզությունների գործակալ էր, իսկ Մ. Չանանը նրան լրտեսական տեղեկություններ էր հաղորդում: Այդ հերյուրանքը հետագայում հերքվել է հենց Հայաստանի ՊԱԿ-ի կողմից[4]:

1955 թ. արդարացված Մ. Չանանին զնդակահարել էին 1938 թ. հուլիսի 18-ին[5]:

Բռնությունների մեքենան չէր խնայել նաեւ ճանաչված դերասանի կնոջը՝ Ժաննային, ում նույնպես ձերբակալել էին: Ահա, թե ինչ տողեր էր գրում մեծ դերասանը կնոջը Երե-

տանի բանտում, որտեղ ինչ-որ ճանապարհով, կարողացել էր կազմակերպել երկտողերի փոխանցումը. "Սիրելի՛ս, դատ կլինի թե ոչ՝ չգիտեմ: Գիտեմ, որ ես անմեղ եմ: Դրա համար էլ ամեն տեսակ գալիքի վրա նայում եմ հանդարտ հոգով: Չնայած ծանր պայմաններին՝ առողջ եմ եւ սիրում եմ քեզ, ապրում եմ քեզանով, ցավդ տանեմ: Իմ նախազգացումը լավ է: Ուրեմն վերջը լավ կլինի: ...Առողջութիւնդ պահպանիր - արիութիւն, մեզնից դժբախտներ չատ կան":

1937 թ. դեկտեմբերին եւ 1938 թ. հունվարին ձերբակալվում են Վաղարշապատի պետական թատրոնի դերասան Լյուդվիգ Փիլիփոսյանը եւ նույն թատրոնի սիրող դերասան Աշոտ Հովհաննիսյանը: Ինչպես նշված է մեղադրական եզրակացությունում, Փարպի գյուղի բնակիչ Լ. Փիլիփոսյանը՝ "դժգոհություն է հայտնել Խորհրդային իշխանության քաղաքականությունից, որը ռեգրեսիվ միջոցներ է ձեռք առել ժողովրդի թշնամիների նկատմամբ", հակախորհրդային բովանդակության թռուցիկի տեքստ է թելադրել Ա. Հովհաննիսյանին, որը դրանք տարածել է Փարպի գյուղում, դերասանների հետ զրույցներում "ապացուցել է, թե այլեւս խելոք գլուխներ չեն թողել, այսինքն՝ խելոք մարդկանց ձերբակալել են" եւ այլն[6]:

Երկու "մեղադրյալներին" 1938 թ. փետրվարին Եռյակի որոշմամբ դատապարտում են 8-ական տարի ազատազրկման: Նրանք արդարացվել են 1989 թ.:

1931 թ. հակախորհրդային գործունեության համար ձերբակալվում է Լենինականի (Գյումրի) Կարմիր Բանակի տան դերասան Ալեքսանդր Կուզմինը, որին դատապարտում են 2 տարվա ազատազրկման: Ինչպես նշված է նրա մեղադրական եզրակացությունում, Կուզմինը հակախորհրդային զրույցներ էր վարում դերասանների եւ կարմիրբանակայինների հետ: Այսպես, զրույցներից մեկում նա կարմիրբանակայիններին ասում է, թե. "...ձեզ լավ կերակրում են եւ հագցնում, ուստի Դուք պաշտպանում եք Խորհրդային իշխանությունը, իսկ թե ի՞նչ է կատարվում ձեր շուրջը՝ Դուք չգիտեք" եւ այլն[7]:

Բռնությունները զգալի հարված հասցրին նաեւ Հայաստանի կինոարվեստի գործիչներին, որոնց ակնառու ներկայացուցիչներից մեկն էր կինոդործիչ, 1917 թ-ից կոմկուսի անդամ, Հայկինոյի տնօրեն Դանիել Դզնունին: Ինչպես այդ տարիներին ձերբակալված հայ մյուս հայտնի արվեստագետները, այնպես էլ 1938 թ. փետրվարին ձերբակալված Դ. Դզնունին, մեղադրվում է ալ-տրոցկիստական, ազգայնամոլական, ահաբեկչական խմբին անդամակցելու եւ Հայկինոյում վնասարարություն կատարելու մեջ: Իհարկե, չէին մոռացել նշել նաեւ այն մասին, որ նա "Հայաստանի կինոարտադրության մեջ վարում էր հակախորհրդային-ազգայնամոլական գաղափարախոսություն..."[8]: Նրան վերագրվում էր ավելի քան 30 ֆիլմերում նման գիծ անցկացնելը (օրինակ, "Հալածյալը", "Ստրկուհին", "Կիկոսը" եւ այլն): Ասվում էր, որ լինելով սցենարական բաժնի ղեկավար՝ նա կինոսցենարներ գրելու համար "ներգրավում էր մի շարք ազգայնամոլների, հետագայում՝ որպես ժողովրդի թշնամիներ բացահայտված Բակունցին, Զուբարին, Ալազանին, Սյունեցուն, Թոթովենցին, Արմենին, Մահարուն եւ ուր...", որոնց առատորեն վարձատրում էր: Կարծում ենք, որ մեր օրերում հասկանալի է, թե ինչպիսի մոտեցում կարող էր լինել ՆԳԺԿ մարմինների կողմից Դզնունուն՝ վերոհիշյալ բռնադատված գրողներին օժանդակելու համար: Երկարատեւ քննությունից հետո, 1941 թ. օգոստոսին, Հայաստանի ճանաչված կինոդործիչը դատապարտվում է 15 տարի ազատազրկման:

Գործը վերանայելու չնորհիվ, բարեբախտաբար, մեկ տարի երկու ամիս ազատազրկումից հետո բանտից ազատ է արձակվում հայ կինոյի հայտնի ռեժիսոր Ամասիա Տեր-Մարտիրոսյանը: Նա ձերբակալվել էր 1938 թ. փետրվարի 21-ին որպես "ցարական եւ դաշնակցական բանակների նախկին սպա՝ պողպորուչիկ", 1921 թ. Ռյազան աքսորված, որը սերտ կապեր էր պահպանում իր քրոջ, Իրանի նախկին քաղաքացի Արուսյակ Պողոսյանի հետ, իսկ վերջինս 1937 թ. ձերբակալվել էր՝ մեղադրվելով լրտեսության մեջ, եւ այլն[9]: Նրա գործը վերանայելիս հերքվում է թե՛ քրոջ, թե՛ իր հատկապես վերջին մեղադրանքը: Նշենք, որ Հայկինոյի ռեժիսորը ձերբակալվել էր այն ժամանակ, երբ ավարտել էր "Սեւանի ձկնորսները" ֆիլմի նախապատրաստական աշխատանքները: Ա. Տեր-Մարտիրոսյանը 1930 թ-ից աշխատել է Հայկինոյում, նկարահանել "Կոլտնտեսային գարուն", "Միշտ պատրաստ", "Մեքսիկական դիպլոմատները", "Գիքորը" եւ այլ ֆիլմեր:

Հատկապես հետաքրքիր է 1939 թ. մարտի 15-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը Ա. Տեր-Մարտիրոսյանի ներկայացրած դիմումի բովանդակությունը: Այստեղ նա մանրամասն ներկայացնում է իր կենսագրությունը եւ, մեր կարծիքով, բավականին հավաստի տեղեկություններ՝ այդ տարիներին հայ կինեմատոգրաֆիստների միջավայրում տիրող անառողջ բարքերի մասին՝ բանսարկություններ, խարդավանք, նախանձ: Պարսավելի այս հարաբերությունները, ավերներ գործելով մարդկանց հոգիներում, կարող էին ողբերգական եզք ունենալ:

Մասնավորապես այդ է վկայում դերասանուհի Մարիա (Մաշիկ) Զրպետյան-Խանոյանի ցուցմունքներում պահպանված հետեւյալ փաստը: Անկողնուն գամված նրա ամուսնուն՝ ՀԽՍՀ-ի նախկին գլխավոր դատախազ, հնագույն բոլշեւիկ Սերգեյ Խանոյանին (մահացել է 1937 թ. հունվարի 5-ին, որից հետո հայտարարվել է "Հայ ազգայնամոլ եւ հակահեղափոխական"), մոռացել էին երկրի մեծերը, եւ ճանաչված մարդկանցից միայն գրող Ա. Վշտունին էր հիշում եւ այցելում: Իսկ Մ. Զրպետյան-Խանոյանը 1937 թ. օգոստոսին հակախորհրդային քարոզչություն վարելու մեղադրանքով՝ դատապարտվում է 5 տարի ազատազրկման ՈՒԱՃ-ում: 1942 թ. օգոստոսին ազատվելով ճամբարից՝ մնում է Մագադանում եւ աշխատում որպես վաճառող պետպարենատեղում, ապա՝ 1948 թ. կրկին ձերբակալվում է նույն մեղադրանքով, սակայն մեկ ամիս անց ազատվում, եւ գործը կարճվում է: 1954 թ. նա արդարացվում է[10]:

Այժմ ծանոթանանք մեր ժողովրդի ճանաչված պարուսույցներից մեկի՝ Վահրամ Արիստակեսյանի քննչական գործին, որը եւս ձերբակալվել է 1938 թ. փետրվարի 5-ին: Ինչպես նշված է գործում, մինչեւ ձերբակալվելը նա աշխատում էր որպես բալետմեյստեր՝ Պետօպերայում եւ բժիշկ՝ Երեւանի 1-ին կլինիկական հիվանդանոցում: Այնուհետեւ մեղադրական եզրակացության մեջ գրված է, թե Վ. Արիստակեսյանը "պտտվելով հակախորհրդային փաչխատական տարրերի մեջ, վարում է հակահեղափոխական ագիտացիա, տարածելով պրովոկացիոն լուրեր Համկ(բ)Կ-ի եւ խորհրդային իշխանության մասին: Սերտ կապեր էր պահպանում իրանական հյուպատոսի հետ..."[11]: Դրան ավելացվում են նաեւ կա-

պերը թուրքական հյուպատոսի հետ: Վ. Արիստակեսյանը ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցության որոշմամբ դատապարտվում է 5 տարի ազատազրկման:

Հասկանալի է, որ այս գործը եւս վերանայվում է եւ 1957 թ-ին՝ մեղադրանքներն ապացուցված չլինելու պատճառով կարճվում, իսկ պարուսույցը արդարացվում է:

Նրա գործում է գտնվում մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի ստորագրությամբ 1955 թ. հոկտեմբերի 16-ին գրված՝ Վ. Արիստակեսյանի բնութագիրը, որից բերենք մի քանի հատված.

"Վահրամ Ավագի Արիստակեսյանին ես ճանաչում եմ 1924 թվականից: Հանձինս Վահրամ Ավագի Արիստակեսյանի ես տեսա հայ հնագույն արվեստը փլատակներից վերածնող մի տաղանդավոր եւ ոգեշնչված էնտուզիաստի: Այն ինչ գարերով ստեղծել է ժողովուրդը, Վահրամ Ավագին մեծ ունակությամբ եւ գեղարվեստական էֆեկտով վերաստեղծում է, եւ նորից վերադարձնում ժողովրդին, որը դարձել է իր ճակատագրի տերը: Վահրամ Արիստակեսյանի ղեկավարությամբ հայ ժողովրդական պարերի անսամբլի ամեն մի ելույթը իրական ազգային տոն էր: ...Առաջին օրերից մինչեւ այսօր Վահրամ Արիստակեսյանին գիտեմ որպես կրիստալի ազնվության մարդ":

Նույն գնահատականներն են տրվում նաեւ Հայաստանի վաստակավոր պարուսույց Էդ. Մանուկյանի տված բնութագրում, որտեղ, մասնավորապես, ասված է. "Վահրամ Ավագին հայ ժողովրդական պարի ուսումնասիրման հիմնադիրն է եւ հայկական ժողովրդական պարի պետական անսամբլի առաջին կազմակերպիչը..."[12]:

Կարծում ենք, որ այս բնութագրերին ոչինչ ավելացնելու հարկ չկա, եւ ի բարեբախտություն մեր պարարվեստի, Վ. Արիստակեսյանը շարունակեց իր ստեղծագործական կյանքը՝ առավել հարստացնելով այն եւ թողնելով հրաշալի հետեւորդներ:

30-ականների բռնությունները Հայաստանում չշրջանցեցին նաեւ նկարիչներին ու ճարտարապետներին: 1936 թ. նոյեմբերի 17-ին ձերբակալվում է Հայաստանի նկարիչների միության քարտուղար Աշոտ Հախումյանը, իսկ 1937 թ. հոկտեմբերի 19-ին՝ ճարտարապետների միության նախագահ Գեւորգ Քոչարը (Քոչարյանը)[13]:

Աշոտ Հախումյանը ավելի շատ հայտնի էր որպես հասարակական-քաղաքական գործիչ, եւ մեղադրականում առաջին հերթին նշվում են նրա "հակահեղափոխական" կապերը ժողովրդի թշնամիներ հայտարարված Արամայիս Երզնկյանի, Արսեն Եսայանի, Արտավազդ (Արտո) Եղիազարյանի, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի հետ: Նախ հիշատակվում է, թե նա 1908 թ-ից հարել է "Դաշնակցություն" կուսակցությանը, 1916-1917 թթ. Շուշիում որպես այդ կուսակցության ղեկավարներից մեկը՝ խմբագրել "Ապառաժ" թերթը, լինելով Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքի Կ/Բ/Կ տեսուչ՝ գրավոր կոչ է արել "պատրաստ լինել ազգբնջնական բնակչության դեմ զինված ելույթի...":

Նման մեղադրանքի դեպքում ակնհայտ է, որ Եսայիը պետք է գնդակահարություն որոշեր, որը եւ Ա. Հախումյանի նկատմամբ ի կատար է ածվում 1938 թ. փետրվարի 20-ին:

1938 թ. հուլիսի 20-ին 15 տարի ազատազրկման դատապարտվեց ավագ սերնդի ճանաչված ճարտարապետ Գեւորգ Քոչարը, որը մեծ երախտիք ունի 20-30-ական թթ. Հայաստանում բնակարանային ճարտարապետության եւ բնակարանաշինության իրագործման բնագավառում[14]: Նա մեղադրվում էր "հակախորհրդային, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական" գործունեություն վարելու մեջ:

Ինչպես կարդում ենք Գ. Քոչարի գործում, ղեկավարելով Երեւանի թիվ 2 ճարտարապետական արվեստանոցը՝ 1931-1932 թթ. ճարտարապետ Երկանյանի հետ նախագծել է "Մոսկվա" կինոթատրոնի շենքը, որի սկզբնական նախահաշիվը եղել է 1,5 մլն. ռուբլի: Շինարարության ընթացքում այդ գումարն ավելանում է 4 մլն. ռուբլով, ուստի այդ հարցը համաձայնեցվում է Ա. Խանջյանի հետ, եւ գումարներ են գտնում այն կառուցելու համար: Միայն սա բավական էր, որ ճարտարապետին կապեին "ազգայնամոլ, դավաճան" Խանջյանի հետ:

Հետաքրքիր է, որ Գ. Քոչարը չինարարությամբ է զբաղվել նաեւ աքսորավայրում, որտեղ նախագծել եւ կառուցել է պիոներական ճամբար, մի շարք պաշտպանական նշանակության, լեռնային ձեռնարկություններ եւ բնակելի շենքեր եւ այլն, բացի այդ Նորիլսկ եւ Դուդինկա բեւեռային քաղաքները: Այդ աշխատանքները զուր չեն անցնում, քանի որ 1948 թ. մայիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն Դատարանը նրա դատավճռից հանում է քաղաքական իրավունքներից զրկելու մասը, իսկ 1954 թ. սեպտեմբերին՝ արդարացնում է:

Հար եւ նման ճակատագիր էր վերապահված նաեւ մեկ այլ անվանի ճարտարապետի՝ Միքայել Մազմանյանին, Երեւան քաղաքի ճարտարապետական-նախագծային թիվ 3 արվեստանոցի ղեկավարին, որի նախագծած եւ կառուցած շենքերն այսօր էլ լավագույնների թվում են Հայաստանում:

Նա եւս իր աշխատանքները շարունակել է աքսորավայրում:

Ինչպես նշվում է 1954 թ-ին Նորիլսկի լեռնամետալուրգիական կոմբինատի նախագծային գրասենյակի ղեկավարի տված բնութագրում "Ընկ. Մազմանյանը գեղարվեստական զարգացած ճաշակի տեր է, լավ է կողմնորոշվում ընդհանուր ճարտարապետական կոմպոզիցիաներում եւ իր մասնագիտությամբ աշխատանքներ կատարելու համար ունի բավարար տեխնիկական աշխարհայացք: ...Ընկ. Մազմանյանի մասնակցությամբ մշակվել է բեւեռային խոշոր քաղաք Նորիլսկի գլխավոր նախագծային պլանը... Բացի այդ, նրա կողմից նախագծվել են զգալի թվով բնակելի, հասարակական եւ գերատեսչական շենքեր..."[15]:

Բնականաբար, Մ. Մազմանյանի, այսպես կոչված, հակախորհրդային գործունեությունը կապում էին Գ. Քոչարի հետ, եւ մեղադրանքները կրում էին նույն բնույթը:

Հարցաքննությունների ժամանակ նա նույնիսկ "խոստովանում է", որ ինքը դեռ 1934 թ. կազմել է Փարաքար գյուղի, Պուշկինի՝ Գրիբոյեդովի դիակին հանդիպելու վայրում Բզովդալի լեռնանցքի հուշարձանի, Գրքերի տան, Հայէներգոյի շենքերի վիսասարար նախագծերը: Այդպես են "որակվում" նաեւ Լենինական եւ Կիրովական քաղաքների՝ նրա կազմած նախագծերը: Նման, մեղմ ասած, տարօրինակ մեղադրանքներով՝ 1938 թ. հուլիսին Մազմանյանը դատապարտվում է 15 տարի ազատազրկման, իսկ 1954 թ-ին՝ արդարացվում[16]:

1938 թ. բռնադատվածների մեջ էր նաեւ ճարտարապետ Միքայել (Մանվել) Կապուտիկյանը, որին մեղադրում էին հակախորհրդային, լրտեսական գործունեություն վարելու մեջ: Ծնունդով վանեցի Մ. Կապուտիկյանը գործում անցնում

է որպես դաշնակցության խոշոր գործիչ, որն իր գործունեությունը սկսել է 1905 թ.՝ ծննդավայրում, ապա՝ 1915-1933 թթ. չարունակել Հունգարիայում, Ֆրանսիայում: Նա 1933 թ. ստանալով իրանահպատակի անձնագիր՝ Իրան գնալու ճանապարհին գալիս է Հայաստան եւ Ս. Տեր-Գաբրիելյանի օգնությամբ մնում մշտական բնակության:

1938 թ. ապրիլին Մ. Կապուտիկյանը դատապարտվում է 8 տարի ազատազրկման եւ իր մահկանացուն կնքում աքսորավայրում՝ 1941 թ. սեպտեմբերի 11-ին:

Մ. Կապուտիկյանը մեր ճանաչված բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հորեղբայրն էր. բանաստեղծուհին 1958 թ. դիմել է ՀԽՍՀ դատախազություն՝ նրա գործը վերանայելու խնդրանքով: 1959 թ. փետրվարին Մ. Կապուտիկյանն արդարացվել է[17]:

1936 թ. հուլիսի 14-ին խմբական գործով ձերբակալվում են կերպարվեստի թանգարանի աշխատակից Կարեն Կամսարականը, նախագծող-տեխնիկ Մուշեղ Աղբալյանը, պատմության թանգարանի աշխատակից Սուրեն Սահարունին, ջրինժեներ Իոսիֆ Վարդանյանը, ինժեներ-ճարտարապետ Արթիվ (Արտավազդ) Կանայանը, քիմիկոս-տեխնոլոգ Լեւոն Հովհաննիսյանը, որոնք մեղադրվում են շրջապատում քարոզչություն վարելու մեջ: Նրանց խմբի ղեկավարն է համարվում Կ. Կամսարականը: Նույն թվականի դեկտեմբերին փակ դատավարությամբ "հակախորհրդային խմբի" անդամները դատապարտվում են 2-6 տարի ազատազրկման, սակայն, 1939 թ. հունիսին նրանց կրկին կանգնեցնում են դատարանի առաջ եւ այս անգամ Կ. Կամսարականին դատապարտում են 10, Լ. Հովհաննիսյանին՝ 7, Ի. Վարդանյանին՝ 5, Մ. Աղաբալյանին՝ 3, Ա. Կանայանին՝ 2,5 եւ Ս. Սահարունուն 2 տարի ազատազրկման: 1991 թ. նրանք բոլորն էլ արդարացվել են[18]:

1937 թ. գործ է հարուցվել նաեւ ճարտարապետ, Լենինականի (Գյումրի) բնակիչ Միլիցա Մեյերի նկատմամբ, որին մեղադրում էին ամուսնու՝ ազգայնամոլական, ջ-տրոցկիստական կազմակերպության անդամ Ռ. Մեյերի հակախորհրդային գործունեության մասին չհայտնելու պատճառով: Նրա ամուսնուն, որը ազգությամբ գերմանացի էր, մեղադրել են նաեւ որպես ճապոնական ու իտալական հետախուզությունների գործակալի:

Այս անգամ քննիչները, բարեբախտաբար, ապացույցներ չեն գտնում, ուստի ճարտարապետ Մ. Մեյերին 1939 թ. հունվարին ազատ են արձակում[19]:

Անդրադառնալով բռնադատված նկարիչներին՝ ներկայացնենք 1936 թ. հուլիսի 14-ին ձերբակալված Կարապետ (Կարո) Ղազարյանին: Նա հիշատակվում է որպես "Դաշնակցություն" կուսակցության անդամ, ապա նշվում է, որ ՀԿ/բ/Կ ԿԿ նախկին առաջին քարտուղար Խանջյանի ինքնասպանության կապակցությամբ նա հերյուրանքներ, սադրիչ լուրեր է տարածել՝ բորբոքելով հակամարտություն հայերի եւ "եղբայրական Վրաստանի ժողովրդի մեջ":

Օրինակներ են բերվում, թե, որ նկարչի մոտ ինչ է ասել Կ. Ղազարյանը: Այսպես, գործում կարդում ենք, որ նկարիչ Արարատ Ղարիբյանի մոտ հյուրընկալվելիս, երբ խոսակցություն է բացվել կուսակցության առաջնորդ Ստալինի հանճարեղության մասին, նա վարկաբեկիչ արտահայտություններ է թույլ տվել վերջինիս հասցեին, իսկ Ա. Խանջյանի ինքնասպանության մասին տեղեկանալով՝ 1936 թ. հուլիսի 10-ին ասել է. "Խանջյանը չի մեռել, այլ նրա գլուխը կերել են վրացիները, այնպես ինչպես կերել են Մյասնիկյանի գլուխը եւ այլն":

Կ. Ղազարյանը դատապարտվում է 3 տարի ազատազրկման[20]:

Ժամանակի հայտնի գրող Վ. Ալազանի եղբայրը՝ նկարիչ Եղիազար (Դանչո) Գաբուզյանը, որն աշխատում էր Պետհրատում, 1937 թ. ապրիլի 28-ին ձերբակալվում է այն բանի համար, որ նախկինում եղել է ռամկավար, հակահեղափոխական, ազգայնամոլական քարոզ է կատարել, սակայն ինչ-ինչ հրաշքով՝ հունիսի 22-ին ազատ է արձակվել՝ բավարար փաստեր չլինելու պատճառաբանությամբ: Դա իսկապես հրաշք էր այդ տարիների համար, սակայն համապատասխան մարմինները չեն մոռանում նկարչին եւ մեկ տարի անց կրկին ձերբակալում են, փաստորեն նույն մեղադրանքներով: Այս անգամ Դանչո Գաբուզյանը դատապարտվում է 10 տարի ազատազրկման[21]:

Վահրամ Ալազանը իր հուշերում պատմում է, թե ինչպես, մի բանտից մյուսը տեղափոխվելիս մեքենայի թափքում հայտնվում է եղբոր կողքին, եւ վերջինս նրան ասում է, որ իրեն սաստիկ ծեծում են, 10 օր մենախուց են նստեցրել եւ մեղադրում են, թե անցյալում ռամկավար է եղել[22]:

1937 թ. օգոստոսին ՆԳԺԿ մարմինները կրկին 11 հոգուց կազմված հակախորհրդային խումբ են "հայտնաբերում" եւ ձերբակալում: Նրանց մեղադրում են որպես Լենինականում գործող դաշնակցական կազմակերպության անդամների: Գեղանկարիչ Մուկուչ Մուրադյանը այդ խմբում էր[23]:

Նույն տարվա հոկտեմբերի 3-ին՝ ՆԳԺԿ Եռյակը նրանց բոլորին դատապարտում է գնդակահարության:

Դաշնակցական գաղտնի կազմակերպության անդամ լինելու մեղադրանքով 1938 թ. ապրիլին ձերբակալվում է նկարիչ Տաճատ Խաչվանքյանը: Նրան կապում են Երեւանի համալսարանում իբրեւ թե գործող ուսանողական դաշնակցական կազմակերպության հետ, որի նպատակն էր "Խորհրդային իշխանության դեմ զինված ելույթի նախապատրաստումը" եւ այլն[24]:

Նկարչին, այդ "անհերքելի փաստերով" դատապարտում են 8 տարի ազատազրկման, իսկ 1956 թ.՝ գործը վերանայելով եւ Տ. Խաչվանքյանին արդարացնելով՝ որոշման մեջ գրում են. "...գործը կարճել հանցանքը ապացուցված չլինելու հետեւանքով"[25]:

1937 թ. դեկտեմբերին ձերբակալվում է Լենինականի բնակիչ, քանդակագործ Միլիտոս Ռաչոյանը, որը մեղադրվելով ընդհատակյա դաշնակցական գործունեություն վարելու մեջ՝ դատապարտվում է 10 տարի ազատազրկման: 1939 թ. հուլիսին գրված բողոքում Մ. Ռաչոյանը նկարագրում է, թե ինչպիսի սարսափելի ծեծի էին ենթարկվում ինքը եւ Լենինականի բանտում գտնվողները, մասնավորապես նշելով, թե իրեն այնքան էին ծեծել, որ առանց իմանալու բովանդակությունը՝ ստորագրել է նրանց ներկայացրած թղթերը[26]:

Նշենք նաեւ, որ նույնպիսի մեղադրանքներով արվեստագետները ձերբակալվում էին նաեւ Հայրենական պատերազմի տարիներին: Այդ ժամանակների բռնադատվածների մեջ էին մեր ժողովրդի հրաշալի արվեստագետներից մեկը, անմահ "Սասունցի Դավիթ" կերտողը՝ Երվանդ Քոչարը, նկարիչ, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Գե-

տրգ Հովսեփյանը եւ ուրիշներ:

Հայաստանի երաժշտական աշխարհը եւս զերծ չմնաց 30-ականների ստալինյան հալածանքներից: Բարեբախտաբար, ճանաչված կոմպոզիտորների եւ երաժշտագետների անունները բացակայում են: Նրանցից կարելի է նշել միայն Ռոբերտ Աթայանին, որն իր ձերբակալման ժամանակ (3 հոկտեմբերի 1934 թ.) Մոսկվայի Ջրային տնտեսության ինստիտուտի 1-ին կուրսի ուսանող էր, այսինքն՝ դեռ չէր ներկայացնում երաժշտական ոլորտը: Ուշագրավ է, որ հակախորհրդային կազմակերպության անդամության մեջ մեղադրվող Ռ. Աթայանը քննության ժամանակ խոստովանում է, թե իրոք, չրջապատում ինքը խոսել է նման կազմակերպության գոյության մասին, սակայն դա իր հորինվածքն է եղել, քանի որ "1933 թ. իր մեջ ցանկություն է առաջացել իրեն համարել խորհրդային հակահեղափոխական կազմակերպության մասնակից, ինչում նա փորձել է համոզել եւ ուրիշներին": Այդ խոստովանությունն, իհարկե, չօգնեց երիտասարդ ուսանողին, քանի որ ԽՍՀՄ ՆԳԺԿ Հատուկ Խորհրդակցությունը 1935 թ. փետրվարի 25-ին որոշեց, որ Ռ. Աթայանը թույլ է տվել սադրիչ գործունեություն եւ 3 տարի հսկողություն սահմանեց նրա նկատմամբ:

1961 թ. Աթայանի գործը վերանայվեց, եւ նա արդարացվեց:

Այդ կապակցությամբ Հայաստանի կոմպոզիտորների միությունը մեր ճանաչված կոմպոզիտոր էդ. Միրզոյանի եւ այդ կազմակերպության քարտուղար է. Աբրահամյանի ստորագրություններով բնութագիր է ներկայացրել դատախազությանը, որտեղ մասնավորապես նշվում է. "Ռոբերտ Արշակի Աթայանը հանրապետության առաջնակարգ երաժշտագետներից մեկն է", արվեստագիտության թեկնածու, մի շարք հետազոտական աշխատությունների եւ տեսական դասագրքերի հեղինակ, որոնք արժեքավոր ներդրում են հայ երաժշտագիտության մեջ[27]:

30-ականների բռնադատված երաժիշտների մեծ մասը սիրող-նվագարկուներ են եղել:

Այսպես, 1937 թ. հոկտեմբերին եւ 1938 թ. փետրվարին ձերբակալված Գեւորգ Բաբիկյանի-Պապիկյանի եւ Արտավազդ Շառուկյանի գործերում նշված է, որ նրանք երաժիշտ են, եւ կարելի է ենթադրել, որ նրանք դրանով ապրուստ էին վաստակում՝ նվագելով եւ երգելով տարբեր միջոցառումների ժամանակ (հարսանիք, ծնունդ եւ այլն):

Նրանք երկուսն էլ մեղադրվել են դաշնակցական գործունեության մեջ: Գ. Պապիկյանը գնդակահարվել է, իսկ Ա. Շառուկյանը դատապարտվել է 8 տարի ազատազրկման[28]:

1937-ի մարտին ձերբակալված Զավեն Ավետիսյանը դափ է խփել եւ երգել հայ աշուղների համույթում:

Նրա մեղադրանքում մասնավորապես նշվում է, որ Զ. Ավետիսյանը "1936-1937 թթ. աշխատելով հայ աշուղների համույթում, շրջագայել է ԽՍՀՄ-ի քաղաքներով եւ երաժիշտների շրջանում վարել է հակախորհրդային քարոզչություն, թույլ է տվել զրպարտիչ արտահայտություններ կուսակցության եւ Խորհրդային իշխանության առաջնորդի հասցեին...":

Զ. Ավետիսյանը դատապարտվել է 10 տարի ազատազրկման[29]:

Ուշագրավ է նաեւ Ծրանսիայից ներգաղթած, Երեւանի չինարարների ակումբի ջազ-նվագախմբի անդամ Ստեփան Թամգաջյանի գործը, որին 1937 թ. նոյեմբերին ձերբակալում են "բանվորների եւ հայրենադարձների մեջ պարբերաբար հակախորհրդային սադրիչ լուրեր տարածելու եւ հակախորհրդային քարոզչություն վարելու" համար:

Բերենք նրա արտահայտություններից մեկը, որը նշված է մեղադրականում: Այսպես, Ս. Թամգաջյանը ասել է, թե "Այնտեղ (արտասահմանում - Ա.Մ.) բանվորները եւ նույնիսկ գործազուրկները ավելի լավ են ապրում, քան Խորհրդային Միությունում: Ի՞նչ հավասարություն է այստեղ, եթե գոյություն ունի հացի երեք տեսակ: Ծրանսիայում բոլորը սպիտակ հաց են ուտում... Խանջյանին սպանել են վրացիները եւ ոչ թե ինքնասպանություն է գործել..."[30]:

Ս. Թամգաջյանին ՀԽՍՀ Եռյակը դատապարտում է 10 տարի ազատազրկման:

Հիշեցնենք, որ ինչպես այդ տարիներին բռնադատվածների ճնշող մեծամասնությունը, այնպես էլ վերոհիշատակված երաժիշտները հետագայում արդարացվում էին՝ հանցանքներն ապացուցված չլինելու պատճառով:

Այդ առումով ուշագրավ է նաեւ 1937 թ. փետրվարին ձերբակալված, 226-րդ հայկական զնդի երաժիշտներ Ֆեոդոր Մինասյանի, Գագիկ Շառուկյանի, Գեորգի Դավթյանի, Հակոբ Խաչատրյանի, Միքայել Մելիքսեթյանի եւ Գեւորգ Աթայանի խմբական գործը[31], որով անցնողները՝ Ֆ. Մինասյանի գլխավորությամբ, մեղադրվում էին ՀԿ/բ/Կ քարտուղարի եւ անձամբ՝ Լ. Բերիայի դեմ ահաբեկչական գործողություն ծրագրելու մեջ: Մասնավորապես նշվում է, թե այդ նպատակով Խաչատրյանը եւ Աթոյանը Թբիլիսի են ուղարկվել՝ ընդունվելու միլիցիայի նվագախումբը, որպեսզի որեւէ հանդիսավոր արարողության ժամանակ ահաբեկեն Լ. Բերիային, իսկ Երեւանում, հակախորհրդային խմբի ղեկավարը, նույնիսկ զենք է բաժանել, Հայաստանի ղեկավարների դեմ գործադրելու համար: Այս սարսափազդու մեղադրանքներով, նրանց դատապարտում են 3 տարի ժամկետով ազատազրկման:

Սակայն քրեական գործը բողոքարկվում է, եւ 1938 թ. դեկտեմբերի 23-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիան որոշում է, որ "երաժշտախմբի տղաների" մեղադրանքներն ապացուցված չեն, գործը կարճում են հանցակազմի բացակայության պատճառով, իսկ երաժիշտներին՝ ազատում կալանքից:

Հայաստանում բռնադատված արվեստագետների մասին տեղեկություններն, անշուշտ, ամբողջական չեն լինի, եթե չանդրադառնանք նաեւ 30-ական թթ. բռնությունների ենթարկված լուսանկարիչներին:

Հայֆոտոյի լուսանկարիչ, Արեւմտահայաստանի Խարբերդ քաղաքում ծնված Տիրան Կյուպելյանի՝ իր գործը վերանայելու խնդրանքով ՀԽՍՀ դատախազին 1956 թ. գրած դիմումը. "1925-ին Սիրիայի Հալեպ քաղաքից ընտանիքով հանդերձ ներգաղթեցինք Սովետական Հայաստան, մասնագիտությամբ լինելով լուսանկարիչ սկսեցի աշխատել Երեւանում: 1936-ին աշխատում էի Երեւանի քաղաքային Սովետի տեղարդ բաժնին կից Հայֆոտոյում, որպես լուսանկարիչ: 1936-ի օգոստոսի 7-ին, ՆԳԺԿ-ի կողմից ձերբակալվեցի եւ ՀԽՍՀ Գերագույն դատարանի Հատուկ կոլեգիայի կողմից մեղադրվելով քր. օրենսգրքի 67 հոդվածի, "Ա." մասով: "Հայաստանի կենտկոմի նախկին քարտուղար Ա. Խանջյանի ինքնասպանության կապակցությամբ, արտահայտության համար" դատապարտվեցի 3 տարվա ազատազրկման եւ աքսորվեցի Ուզբեկիստան"[32]:

Նույն համակարգում աշխատող Եգոր Միրզոյանը 1937-ի դեկտեմբերին ձերբակալվում է Հոկտեմբերյանի շրջանում գործող "գաղտնի դաշնակցական կազմակերպության անդամ" լինելու մեղադրանքով եւ դատապարտվում 10 տարի ազատազրկման[33]:

Ֆրանսիայից հայրենադարձված լուսանկարիչ Գեւորգ Հյուսյանը "շրջապատում պարբերաբար հակահեղափոխական քարոզչություն" վարելու համար նույնպես դատապարտվում է 10 տարի ազատազրկման եւ մահանում աքսորավայրում[34]:

ՀԽՍՀ ՆԳԺԿ եզրակի որոշմամբ 1937 թ. դեկտեմբերին գնդակահարվում են Մեղրու շրջանում բնակվող լուսանկարիչ Մինաս Հովհաննիսյանը եւ Գորիցի լուսանկարիչ Ռուբեն Խուրշուդյան-Պարոնյանը[35]: Վերջինիս առնչությամբ նշենք, որ նրա մեղադրանքն արժանի է ուշադրության այն առումով, որ Ռ. Խուրշուդյան-Պարոնյանի գործը վերանայելիս՝ 1989 թ. ՀԽՍՀ դատախազությունը նրան չի արդարացնում: Դա բացատրվում է նրանով, որ Ռ. Խուրշուդյանը 20-ական թվերի սկզբին լինելով դաշնակցական կառավարության հակահետախուզության աշխատակից, առանց դատարանի վճռի, բանտում գնդակահարել էր մի քանի կոմունիստների: Այսինքն՝ կատարել էր սպանություն:

Համեմատաբար թեթեւ է անցնում ձերբակալությունը Վեդիի շրջանի լուսանկարիչ Պետրոս Շատվորյանի համար, որին կալանավորել են 1930 թ. մարտին, սակայն մայիսին ազատել են՝ գտնելով, որ նրա դեմ հարուցված մեղադրանքները չեն ապացուցվում[36]:

Այսպիսով, 1930-1938 թթ. Հայաստանում արվեստի ներկայացուցիչների նկատմամբ կատարված բռնությունների ուսումնասիրությունից կարելի է կատարել մի քանի ընդհանրացումներ:

Ակնհայտ է, որ հալածանքները նրանց նկատմամբ հիմնականում սկսվել էին 1936 թ. կեսերից, երբ ձերբակալվեց Ներսիկ Ստեփանյանի "խումբը", եւ քաղաքական ասպարեզից, մեղմ ասած, հեռացվեց ազգային նկարագիր ունեցող Ա. Խանջյանը:

ՆԳԺԿ մարմիններում կազմված մեղադրականներում գլխավորապես օգտագործվում էին "հաստատված" տվյալներն այն մասին, որ մեր հանրապետության բռնադատված արվեստագետները եղել են հակախորհրդային, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական, դաշնակցական կազմակերպությունների անդամներ (երբեմն հիշատակվում են նաեւ հայ ավանդական ռամկավար ու հնչակյան կուսակցությունները), վարել են հակախորհրդային քարոզչություն, ահաբեկչություններ են ծրագրել երկրի (ԽՍՀՄ-ի) ղեկավարության նկատմամբ: Այս եւ, ավելի հազվադեպ, այլ մեղադրանքներն այդ գործիչների գործերը վերանայելիս ամբողջապես հերքվել են:

30-ական թթ. քննությունները վարել են կոտանքների օգտագործմամբ, որը, ցավոք, թույլատրված էր ներգեբատեսչական նորմերով: Դրա հետեւանքով, մարդկայնորեն հասկանալի պատճառներով, քիչ թիվ չէին կազմում "ինքնամերկացումները": Իսկ՝ "մեղքի" խոստովանությունը լրիվ բավարար էր տվյալ ժամանակների օրենսդրին՝ դատավճիռ կայացնելու համար:

Առաջին հայացքից թվում է, թե այնքան էլ մեծ չէ 1930-1938 թթ. բռնադատված արվեստագետների ընդհանուր թիվը: Հիշելով, որ ամեն մի անօրինական պատիժ ինքնըստինքյան անթույլատրելի է ցանկացած երկրում եւ հասարակարգում, նշենք, որ այդ ժամանակաշրջանում այնքան էլ ստվար չէր Հայաստանի բնակչությունը, արվեստի բնագավառի գործիչների թիվը: Առավելեւս նոր էր վերելք ապրում մշակույթը, եւ այդ ասպարեզի ամեն մի ներկայացուցչի կորուստ՝ զգալի հարված էր նրա հետագա զարգացման համար:

Բռնությունների հետեւանքով առաջացած բարոյա-հոգեբանական մթնոլորտը արվեստի ոլորտում, բնականաբար, դժվարություններ էր հարուցելու հետագա տարիների ստեղծագործողների համար: Այսինքն՝ բռնության ճեռքը խանգարելու էր եւ, անկասկած, մինչեւ 50-ական թթ. կեսերը խանգարեց մշակույթի լիարժեք զարգացմանը: ■

ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Մանրամասն տե՛ս "Республика Армения", 9 июля 1996, *"Նժար" 2 հոկտեմբերի 1996:*
2. Տվյալները բերվում են ըստ ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվի ԿԳԲ-ի մեր ուսումնասիրության արդյունքների:
3. Մանրամասն տե՛ս "Искусство Советской Армении за 60 лет", *Ընդ., ժՐ., 1980.*
4. Տե՛ս ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 3741, թթ. 49-50, 146:
5. Նույն տեղում, գ. 1163, թ. 26: 6. Նույն տեղում, գ. 8415, թ. 36-38: 7. Նույն տեղում, գ. 98, թ. 46:
8. Նույն տեղում, գ. 13127, հ. 5, թ. 59: 9. Նույն տեղում, գ. 2330, թ. 20:
10. Նույն տեղում, գ. 966, թ. 146-169: 11. Նույն տեղում, գ. 4058, թ. 21:
12. Նույն տեղում, գ. 4058, թթ. 68-69: Նրա մասին մանրամասն տե՛ս Է. Սադոյան, Վահրամ Արիստակեսյան, Եր., 1979: 13. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 1969 եւ գ. 2820:
14. Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, ԳԱ, 1967, էջ 523:
15. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 964, թ. 165: 16. Մանրամասն տե՛ս "Հայություն", 1-10 հուլիսի 1993: 17. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 5080: 18. Նույն տեղում, գ. 12439:
19. Նույն տեղում, գ. 987: 20. Նույն տեղում, գ. 1088: 21. Նույն տեղում, գ. 1369:
22. Վ. Ալազան, Տառապանքի ուղիներով (Հուշեր), Եր., 1990, էջ 55-56:
23. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 5194, թ. 696: 24. Նույն տեղում, գ. 2220, թ. 84:
25. Մանրամասն տե՛ս "Հայություն", 20-30 հունիսի 1993:
26. ՀՀ ԱԱՆ ԱԱ արխիվ, ԿԳԲ, գ. 11014, թ. 35: 27. Տե՛ս նույն տեղում, գ. 7517:
28. Նույն տեղում, գ.գ. 3974, 10845: 29. Նույն տեղում, գ. 6047: 30. Նույն տեղում, գ. 10789, թ. 11:
31. Տե՛ս նույն տեղում, գ. 1533; 32. Նույն տեղում, գ. 1794, թ. 67-68; 33. Նույն տեղում, գ. 6424, թ. 12:
34. Նույն տեղում, գ. 3860, թ. 8; 35. Տե՛ս նույն տեղում, գ.գ. 6443, 1563; 36. Նույն տեղում, գ. 10796, թ.46:

Շախմատի անվան, նրա ծագման ու պատմության հարցի շուրջ

Պրոֆ. Վերներ Զունդերման

Բեռլին

Հայտնի է, որ շախմատի եվրոպական անվանումների մեծ մասը (նշենք սոսկ գերմաներեն **Schach**, *անգլերեն* **chess**, *ֆրանսերեն* **échec**, *իտալերեն* **scacchi**, *ռուսերեն* **шахматы**), *անկասկած հանգում է պարսկերեն* **šāh** *"արքա" բառին, սակայն չի բխեցվում խաղի՝ Արևելքում տարածված անվանումից: Մի շարք այլ անվանումներ, մասնավորապես իսպաներեն* **ajedrez** *և պորտուգալերեն* **xadrez**, *ծագում են արաբերեն* **šaṭranǧ** *"շախմատ" բառից,[1] և այս երկուսն էլ կարող են հանգեցվել արաբերենում խաղի բուն անվանմանը:*



Արաբերեն **šaṭranǧ** *բառը (նաև* **šiṭranǧ**) *"շախմատ" չի կարող հանգեցվել երեք հիմք հնչյուններով բաղաձայնական արմատին, ինչպես ընդունված է բուն արաբերեն բառերի դեպքում: Սա փոխառություն է արաբերենում, որն այս լեզվին է անցել միջին պարսկերենից և պահվավական գրավոր աղբյուրներում վկայված է* **ctlng** *ձևով[2], ինչն էլ, հետեւելով արաբական ձևին, ձայնաղարձվում է որպես* **čatrang**: *Հաշվի առնելով արաբերենի հնչյունական առանձնահատկությունները, պետք է նշել, որ պարսկերեն* **č** *և* **g** *հնչյունները արաբերենում փոխարինվում են այստեղ համապատասխանաբար* **š** *և* **ǧ** *հնչյուններով, քանի որ դասական արաբերենում բացակայում են* **č** *և* **g** *հնչյունները:[3] Պարսկերեն* **t**-*ի փոխակերպումը էմֆատիկ* **ṭ**-*ի պետք է որ բացատրվի այս հնչյունի պայթականությամբ:[4] Սա մի ուղղագրական յուրահատկություն է, ինչը մատնանշում է սասրական միջնորդությունը միջին պարսկերենից փոխառյալ բառերի վրա:*

Սակայն միջին պարսկերեն (այսինքն՝ մինչև մ.թ. 7-8 դդ.) Իրանում գործածվող **čatrang**-*ն էլ իր հերթին փոխառյալ բառ է: Այն չի կարող բնիկ լինել, քանի որ միջին պարսկերենին* **tr** *հնչյունախումբն օտար է: Այն ձևույթները, որոնք պարունակում են* **tr** *հերթագայությունը, ինչը պետք է կարդացվի* **tar** *(օր.՝ մանիքեական գրում* **trs** */tars/ "վախ"), *կամ բառաբարդման արդյունք են (օր.՝* **raxtranz** *"ջանք, ճիգ"), կամ էլ առակա են եղել ավելի վաղ փոխառյալ բառերում (օր.՝ մանիքեական գրում* **"trwn** */ātrōn/ "հոգևորական"* < *ավ.* **āϑrauuan-**, *պարթևերեն* **Mētrag** < *սկր.* **Maitreya, pytrws** < *հուն.* **Petros** *"Պետրոս"):*

Եթե **čatrang**-*ը փոխառություն է, ապա այն պետք է բխեցվի ոչ այլ լեզվից, քան հին հնդկերենից՝ սանսկրիտում վկայված* **caturanga** *"չորս կողմ ունեցող, քառակողմ" եզրից, որը որպես* **bala** *"բանակ"-ի որոշիչ նշանակում է չորս մասից (փղեր, ռազմակառքեր, հեծելազոր և հետևակ) բաղկացած զորախումբ:[5]* **Anga** *"կողմ, մաս" ձևույթը հնդկական բառ է, որը իրանական որևէ լեզվում իր համարժեքը չունի:[6] "Զորս" բառի իրանական համարժեքների թվում, որպես կանոն,* **catur-** *ձևը վկայված չէ: Այստեղ փոփոխության է ենթարկվում հատկապես հին (համմտ. լատ.* **quat(t)uor**, *ռուս.* **четыре**) **t** *հնչյունը՝ ավ.* **čaϑβārō**, *հ. պրսկ. *čaçušva-* *("քառորդ"), պրթ.* **čafār**, *մ. և ն. պրսկ.* **čahār**:[7] *Բացատրություն կազմող սողդ.* **čtfār** *ձևը բացատրվում է որպես *čaϑwār-ի արտացոլում:[8]* **Caturanga** *բառն, այսպիսով, միևնույն ժամանակ չի կարող նաև հավակնել հնդկերենին մոտ որևէ իրանական լեզվում ներկայացված լինելու: Այս բացատրությունը համընդհանուր ձևով ընդունված է իրանագիտական գրականության մեջ:[9]*


Այսպիսով, շախմատի անվանումը ցույց է տալիս, որ այն Հնդկաստանից Իրան է անցել նախաիսլամական շրջանում, և ոչ մի դեպքում հնարավոր չէ հակառակ ուղին՝ Իրանից Հնդկաստան:

ՏԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. J. Corominas. *Diccionario crítico etimológico de la lengua castellana I,* Bern 1954, SS. 68b-69a; A.G. de Gunha. *Dicionário etimológico nova fronteira da lingua portugesa*, Rio de Janeiro 1987, S. 831a.
2. *Միջին պարսկերեն* **Wizārišn ī čatrang, Kārnāmag ī Ardasīr ī Pābakān** (H.S.Nyberg, *A Manual of Pahlavi II*, Wiesbaden 1974, S. 54a) *և* **Xusraw ī Kawādān ud rēdag** (§15, ed. D. Monchi-Zadeh in: *Monumentum Georg Morgenstierne II, Acta Iranica 22*, Leiden 1982, SS.51,65) *պահվավական տեքստերում:*
3. *Համմտ.* A. Siddiqi. *Studien über die persischen Fremdwörter im klassischen Arabisch.* Göttingen 1919, SS.72,74.
4. Siddiqi, ibid., SS.69-70.
5. *Համմտ.* M. Monier-Williams. *A Sanskrit-English Dictionary*. Oxford 1899, S.384a.
6. *Բացառությամբ օսերեն* **ong, iong** *"մաս"* (M. Mayrhofer. *Etymologisches Wörterbuch des Altindischen I*, Heidelberg 1986, S.48).
7. *Համմտ.* Mayrhofer, ibid., SS.526-527.
8. I. Gershevitch. *A Grammar of Manichean Sogdian*, Oxford 1954, §173.
9. *Համմտ.* J.M. Unvala. *The Pahlavi-text King Husrav and his Boy*, Paris 1920, S.16, Nr.15, *ծնթ.* a, Nyberg *ծնթ.* 2.

© W. Sundermann. *Eine Bemerkung zum Namen des Schachspiels, seiner Herkunft und Geschichte.* - Arbeitspapiere zum Privatissimum "Indien", München 13. und 14 März 1999, SS.1-3.

Թարգմ.՝ Վահե Բոյաջյանի



Իրանի հայերը. *Փոքրամասնության զարմանահարույց դերը գերական մշակույթում* *(հոդվածներ եւ փաստաթղթեր), խմբ. Ք. Չաքերի. Քեմբրիջ, 1998. - 409 էջ (անգլ.):*

Վաղեմությամբ ամենահին եւ ստեղծած մշակութային ժառանգությամբ ամենահարուստ իրանահայ գաղթօջախի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները, թերեւս, ամբողջ մի գրադարան կարող են կազմել:

Ներկա ժողովածուն կարելի էր համարել, այդ ուսումնասիրությունների արդյունքների համաքերման ու ընդհանրացման յուրօրինակ փորձ, եթե չլիներին հատորում ընդգրկված վավերագրական ուշագրավ նյութերը, որոնց մի մասը, գոնե օտարալեզու գրականության մեջ, առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում:

Գրքի ենթավերնագիրը հուշում է, որ ժողովածուն կազմելիս առաջնայնությունը տրվել է քաղաքական մտքի զարգացումների եւ սոցիալ-քաղաքական շարժումների լուսաբանմանը: Այս պարագայում, ինչպես եւ պետք էր սպասել, ավելի թռուցիկ, ակնարկային բնույթ են կրում առաջին բաժնում զետեղված՝ իրանահայ համայնքի սկզբնավորման եւ կազմավորման պատմությանը նվիրված հրապարակումները (Բրաունի համալսարանի նախկին ռեկտոր Վ. Դրիգորյանի՝ "Սպահանի փոքրամասնությունները. Սպահանի հայ համայնքը 1587-1722 թթ.", Իոնայի քոլեջի պրոֆեսոր Ջորջ Բուտնությանի "Հայերը 19 դ. Իրանում" (էջ 27-54) հոդվածները):

Նույն բաժնում վերլուծության մենագրական խորքայնությամբ առանձնանում են ժողովածուի խմբագիր, ֆրանսաբնակ պատմաբան, փիլիսոփայության դոկտոր Ք. Չաքերիի "Իրանահայերը եւ իրանական սոցիալիզմի ծնունդը 1905-1911 թթ." եւ "Իրանահայ մտավորականությունը եւ իրանական ոչ-հայ վերնախավը նոր ժամանակներում" միմյանց ամբողջացնող ուսումնասիրությունները:

Այդտեղ հեղինակը ցույց է տալիս իրանահայերի նշանակալից ներդրումը Իրանում նորագույն քաղաքական գաղափարների եւ կառույցների զարգացման գործում եւ, մասնավորապես, լուսաբանում երկրի քաղաքական մտքի առաջընթացում իրանահայ "այն մտավորականների դերը, որոնք գրեթե լիովին մոռացված են" (էջ 77):

Ընդգրկած նյութերով ու աղբյուրներով, ցարդ անհայտ եւ քիչ հայտնի փաստերով, հայ եւ ոչ-հայ մասնագետների համար ուշագրավ է ժողովածուի երկրորդ՝ "Հայերը եւ հեղափոխական շարժումն Իրանում 1909-1921 թթ." բաժինը, որտեղ հիմնավոր անդրադարձներ կան սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության խնդրո՝ առաջիկա շրջանի գործունեությանը, վերջինիս՝ իրանական հեղափոխական նշանավոր գործիչների հետ համագործակցությանը, ինչպես նաեւ երկու հոդված՝ արտատպված կուսակցության "Զանգ" (Թավրիզ) պարբերականից: Ճանաչողական արժեք ունեն երրորդ՝ "Թղթակցություն եվրոպական մտավորականության հետ" եւ չորրորդ՝ "Դիվանագիտական զեկույցներ" բաժինները: Դրանցից առաջինում զետեղված են հայ հեղափոխականներ Ժ. Կարախանյանի, Ա. Ջիլինկիրյանի, Տ. Դերվիշի, Վ. Խաչատրյանի նամակները Գ. Պլեխանովին, Կ. Կաուցկուն, վերջինիս պատասխանը Ա. Ջիլինկիրյանին, ինչպես նաեւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1908 թ. նոյեմբերի կոնֆերանսի արձանագրության պատճենը՝ հղված Գ. Պլեխանովին (ընդ որում, վերջին փաստաթղթում արծարծված են այդ կուսակցության կազմակերպման սկզբունքների հիմնախնդիրները):

Չորրորդ գլուխն ընդգրկում է Փահլավյան տոհմի առաջին երկու շահերի գահակալման տարիներին Իրանում հավատարմագրված ամերիկյան դիվանագետների զեկույցները իրանահայ համայնքի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական իրավիճակի, քաղաքական կողմնորոշումների եւ տրամադրությունների մասին:

Հարկ է նշել, որ ընդգրկված ուսումնասիրությունների նպատակահարմար ընտրության շնորհիվ ժողովածուն մենագրական կառուցվածքություն ունի եւ գրեթե ամբողջացնող պատկերացում է տալիս նոր եւ նորագույն (որոշ դեպքերում, ընդհուպ մեր օրերը) ժամանակաշրջանում Իրանի հասարակական եւ քաղաքական կյանքում իրանահայ մտավորականության խաղացած դերի մասին:

Ասում ենք գրեթե, քանի որ նախ՝ ոչ հարկ եղած եւ արժանի չափով եւ անկողմնակալ շեշտադրումներով է լուսաբանվում Հայ Հեղափոխական Դաշնակցության կուսակցության դերն ու գործունեությունը Իրանի տվյալ ժամանակաշրջանի քաղաքական կյանքում:

Բացի այդ, Հայ համայնքը նշված ժամանակահատվածում նշանակալի ներդրում է ունեցել Իրանի գեղարվեստական (այդ թվում գրական) մշակույթի եւ կրթա-լուսավորական գործի զարգացումներում ի տարբերություն իրանական քաղաքական մշակույթի, որտեղ հայկական ազդեցությունը վճռորոշ չի եղել: Եվ այդ ներդրումն այնքան շոշափելի է, որ արժանի է ներկա, ըստ ամենայնի արժեքավոր ժողովածուի ընդգրկումներով մի առանձին հատորով լուսաբանվելու:

Եկատերինա Խաչատրյան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմագիտության թեկնածու

Մ.թ.ա. 95թ. Արտաշիսյան Հայաստանում գահ բարձրացավ հին աշխարհի խոշորագույն պետական և ռազմաքաղաքական գործիչներից մեկը՝ Տիգրան Բ Մեծը (իշխեց մինչև մ.թ.ա. 55թ.): Տիգրանը շատ արագ կարողացավ ստեղծել աշխարհակալ տերություն՝ գրավելով Հայաստանի մերձակա և հեռավոր մի շարք երկրներ՝ Ատրպատականը, Մարաստանը, Միջագետքը, Սելևկյան պետությունը, Փյունիկիան, Կիլիկիան և այլն: Տիգրանի աշխարհակալ պետության սահմանները հարավում հասնում էին մինչև Եգիպտոս, արևելքում՝ Կասպից ծով, արևմուտքում՝ Եփրատի ընդլան, իսկ հյուսիսում՝ Վիրք: Բնականաբար, նման աշխարհակալ տերության առկայության պայմաններում Արտաշատ մայրաքաղաքը չէր կարող կենսականորեն իրագործել իրեն չնորհված առանձնահատուկ դերը, ըստ ամենայնի իրականացնել մայրաքաղաքի գործառույթները: Այսպիսով, հայոց արքան պետք է մտածեր նաև նոր մայրաքաղաք հիմնելու մասին, որը, ի տարբերություն առաջինի, պետք է գտնվեր պետության կենտրոնում և լիովին ապահովեր կապը բոլոր ծայրամասերի հետ:

Նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի տեղադրության հարցն այսօր էլ պատմագիտության մութ և վերջնականորեն լուծում չստացած խնդիրներից մեկն է: Ոիսումնասիրողների մեծ մասն այս հարցում համամիտ են գերմանացի պատմաբան Լեհման-Հաուպտի հետ: Ըստ նրա, Տիգրանակերտ մայրաքաղաքը տեղակայված է եղել Աղձնիք նահանգում, Տիգրիսի հյուսիսում՝ Նիմփիոս գետի ափին, որտեղ այժմ գտնվում է Ֆարկին քաղաքը:[1] Այս կարծիքին են, օրինակ, Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը և ուրիշներ:[2] Գ. Կիպերտի կարծիքով, մայրաքաղաքը կառուցվել է Արզնիի մոտակայքում, որտեղ ներկայումս գտնվում է Սղերդը:[3] Վերջին տեսակետը, մեր կարծիքով, ավելի մոտ է իրականությանը:

II դարի հույն պատմիչ Ապպիանոսը վկայում է, որ Տիգրանը "... հպատակեցնելով Կապադովկիան գերեց 300 հազար հոգու և նրանց մյուսների հետ միասին (այսինքն՝ այլ վայրերից գերվածների - Հ.Հ.) բնակեցրեց այնտեղ, որտեղ ինքը թագադրվել էր (այսինքն՝ Տիգրան Բ-ը - Հ.Հ.) և որն իր անունով կոչեց Տիգրանակերտ, այսինքն՝ Տիգրանի քաղաք":[4] Մի կողմից այս վկայությունը խիստ անորոշ է և հեղհեղուկ, իսկ հակառակ եզրից՝ Ապպիանոսը լուրջ մտայնությունների տեղիք է տալիս: Ինչու՞ պետք է Տիգրանը գնար այդ վայրը, որն այժմ մատնացույց է անում ուսումնասիրողների ճնշող մասը և այնտեղ թագադրվեր: Պարթևական պատանդությունից Հայաստան վերադարձող Տիգրանը պետք է երկրի տարածք մտներ ավելի շուտ Գանձակի վրայով և ոչ թե այժմյան Ֆարկինի: Պատմագիտության մեջ մինչև այժմ ընդունված կարծիքի համաձայն Տիգրանակերտ մայրաքաղաքը գտնվել է Հայկական Արևելյան Տավրոսի հարավային փեշերին, մի խուլ և կղզիացած վայրում: Այդպիսի տեղում թագադրվել կարող էր ոչ թե գահի օրինական հավակնորդը, այլ ոչ ավելի, ոչ պակաս՝ բռնապետողը: Ինչ վերաբերում էր Տիգրանին, ապա նա Հայոց գահի օրինական ժառանգորդն էր և ոչ մի դեպքում կարիք չէր զգում դիմելու նման քայլերի:

Ընդհանրապես, անդրադառնալով Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրությանը՝ հարկ է նշել, որ խնդրին առնչվող մեր ձեռքի տակ եղած աղբյուրների վկայությունները խիստ հակասական և իրարամերժ են: Այս ամենը բերելով ընդհանուր հայտարարի՝ ակադ. Հ. Մանանդյանը գրում է. "Տիգրանակերտ քաղաքի համար տեղի այդ ընտրությունը կարելի է համարել հաջող և նպատակահարմար ոչ միայն քաղաքական, այլ նաև ռազմավարական ու տնտեսական տեսակետներից: Եվ հիրավի, այժմյան Ֆարկինը ընկնում է Տիգրանի հիմնած աշխարհակալության ճիշտ մեջտեղում և գտնվելով Տավրոսյան լեռների հարավային ստորոտներում՝ բավականաչափ պաշտպանված է և պատսպարված: Առևտրական հաղորդակցությունների տեսակետից եւս Տիգրանակերտի տեղադրությունը խիստ հարմար էր, որովհետև նա գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի արքունական մեծ ճանապարհի մոտ և զանազան ուղղություններով կապված էր առևտրական խոշոր կենտրոնների հետ":[5] Լիովին համաձայնվելով հեղինակի վերոհիշյալ փաստարկների հետ՝ այնուամենայնիվ պետք է խոստովանել և պնդել, որ աղբյուրները և տոպոնիմիան երբեք չեն խոսում այդ տեղադրության օգտին: Եթե Տիգրանակերտը գտնվեր Հայկական Արևելյան Տավրոսի հարավային փեշերի կենտրոնական գոտում, որը ներկայումս մատնացույց է արվում, ապա ամբողջապես կտրված կլիներ Արտաշիսյան Հայաստանի կենտրոնական շրջաններից և, հատկապես, զրկված երկրորդ մայրաքաղաքի՝ Արտաշատի հետ կենսական կապից: Կ. Լեհման-Հաուպտը տեղադրության հարցում մեծ նշանակություն է տալիս Քսենոփոնի "Անաբասիս" աշխատության պարունակած վկայություններին և Հ. Լինչի՝ Հայաստանում կատարած ճանապարհորդական ուղեգրություններին:[6] "Անաբասիսում" Կյունաքսայից-Տրապիզունդ նահանջող հունական բանակն անցնում է Կարդուխների երկրով և Արևմտյան Արմենիայով: Սակայն, չպետք է մոռանալ, թե ինչպիսի դժվարություններ կրեցին հույները Արևելյան Տավրոսն անցնելիս՝ հարկադրված լեռները մագլցելիս տալով բավականին զոհեր: Այս անցումը, մինչև Արևելյան Եփրատ կամ Արածանի գետը, նրանց ճանապարհի ամենատաժանակիր հատվածն էր:[7] Երկրի առաջին մայրաքաղաքը ահա այսպիսի մեկուսացված և անանցանելի վայրում հիմնելը լիովին անիմաստ էր, որ, անկասկած, քաջ գիտակցում էր նաև Տիգրանի նման խոհեմ անձը:

Այս առումով բավական է հիշել Մովսես Խորենացու մոտ պահպանված մի ուշագրավ վկայություն: Պատմահայրը նշում է, որ IV դարի հայ-պարսկական պատերազմների ժամանակ պարսից Շապուհ Բ արքան երկիցս պաշարել է Տիգրանակերտը: Քաջ հայտնի է, որ պարսիկ-

ների համար Արշակունյաց Հայաստանի կենտրոնական շրջաններ տանող երթուղու սկիզբը Բաղեշի անցքն է եղել, որն այն ժամանակ կոչվում էր Ձորայ պահակ: Ընդունված տեղադրության պայմաններում, Շապուհը պետք է Բաղեշից թեքվեր դեպի Հարավ-արևմուտք և աննպատակ երթ կատարեր՝ Տիգրանակերտը գրավելու համար: Նույն քայլին, համաձայն Պատմահոր, պարսից արքան դիմել է նաև Հայաստանի կենտրոնական շրջաններից վերադառնալիս, երբ գնացել է Սասանյան Պարսկաստան:[8] Նմանօրինակ ռազմարշավը IV դարում լիովին անիմաստ էր, քանզի այդ ժամանակաշրջանում Տիգրանակերտը երկրի ներքին կյանքում չուներ այն դերն ու նշանակությունը, ինչ մ.թ.ա. I դարում՝ Տիգրան Բ Մեծի օրոք: Այսպիսով, Շապուհին ոչինչ չէր կարող հարկադրել, որ Հայաստանի կենտրոնական շրջաններ արշավելու և մայրաքաղաքը գրավելու փոխարեն՝ ուժերը վատնի իր նախկին դերը կորցրած և մեկուսացած Տիգրանակերտը գրավելուն: Ուրեմն, Տիգրանակերտը գտնվել է ոչ թե Ծարկինի տեղում, այլ նրանից արևելք՝ Վանա լճի արևմտյան ափին, դեպի Հայաստանի կենտրոնական շրջաններ տանող ճանապարհի վրա:

Տիգրանակերտն Աղձնիքի կազմում դիտելը հետևանք է Փավստոս Բուզանդի հետևյալ վկայության. "Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ (խոսքը վերաբերում է պարսից զորքին - Հ.Հ.), որ է ի գաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ զայն նոյնհետայն ի գերութիւն խաղացուցին. և ինքեանք ի ծոփս մեծ արշաւեցին...":[9] Հետագայում նրանք չարժվում են Անգղ տուն, Դարանաղի, այսինքն՝ Հայաստանի հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք: Փավստոսի այս վկայությունն ուշագրավ է երկու իմաստով: Նախ, որ Տիգրանակերտի Աղձնեաց բդեշխին ենթարկվելը երբեք էլ չի նշանակում, որ այն վարչականորեն գտնվել է վերոհիշյալ նահանգի կազմում: Հայաստանի պատմության ցանկացած ժամանակահատվածի վերաբերյալ կարելի է բերել բազմաթիվ փաստեր, երբ որևէ գավառ կամ շրջան վարչականորեն ենթարկվելով մի նահանգի՝ գտնվել է այդ նահանգի հետ կապ չունեցող այլ նահանգի ենթակայության ներքո: Հենց իրենց՝ Արշակունիներին էին ենթարկվում, բացի Ատանից, նաև Աղիհովիտ և Առբերան գավառները, որտեղ բնակվում էին նրանց ընտանիքի կրտսեր անդամները:[10] Նույնը կարող էր տեղի ունենալ նաև Տիգրանակերտի պարագայում, որը գտնվում էր Աղձնիքի անմիջական հարևանությամբ, այսինքն՝ նրա արևելքում: Վերջապես, խիստ կասկածելի է թվում Փավստոսի վկայությունը պարսկական զորքի անցած երթուղու վերաբերյալ: Նրանք դեպի կենտրոնական Հայաստան ներխուժելու փոխարեն արշավում են դեպի հյուսիս-արևմուտք՝ Հռոմեական կայսրության ուղղությամբ:

Տիգրանակերտի տեղադրության վերաբերյալ առաջացած վերոհիշյալ խառնաշփոթն առաջին հերթին հետևանք է հունա-հռոմեական և մասամբ բյուզանդական (խոսքը վերաբերում է Պրոկոպիոս Կեսարացուն) պատմագրության մեջ պահպանված հակասական վկայություններին: Սկսենք Տակիտոսից (մ.թ. I-II դարեր): Նա իր "Տարեգրություններում" նշում է, որ Տասնամյա հռոմեա-պարթևական պատերազմի ժամանակ (մ.թ. 54-64 թթ.), 58-59 թթ. զորավար Կորբուլոնը գրավեց Արտաշատը, ապա արշավանք կազմակերպեց դեպի Տիգրանակերտ:[11] Այս կապակցությամբ Ս. Տ. Երեմյանը գրում է. "Բագրեւանդից և Աղիովիտից հռոմեական զորքն իջնում է Հարքի (Բուլանխ) և Տարոնի (Մշո դաշտ) բարեբեր հովիտները, որոնք մշակված վայրեր էին և որտեղ ցանքերը հնձված էին: Ճանապարհին ամեն ինչ հրի ու սրի մատնելով, Կորբուլոնն իր բանակով հասնում է Տարոն և Հայկական Տավրոս, որտեղից լեռնանցքները տանում էին ուղիղ դեպի Տիգրանակերտ...":[12] Արտաշատից-Տիգրանակերտ կարելի էր գնալ երկու ճանապարհով. առաջին՝ Բաղեշով, երկրորդ՝ Մանազակերտով: Սրանցից առավել կարճը և դյուրինը առաջինն էր: Կորբուլոնը Տիգրանակերտ էր շտապում ինչպես այն գրավելու, այնպես էլ պարթևների մուտքը դեպի Հայաստան փակելու համար: Ուրեմն, նա հապաղելու կարիք չուներ: Բացի այդ, ի տարբերություն Քսենոփոնի պարտված և մազապուրծ փախչող 10 հազար հույների, հաղթանակած Կորբուլոնը չէր կարող դիմել նման աննպատակ քայլի և անտեղի կորուստներ կրել: Հայկական Արևելյան Տավրոսի այդ հատվածը, որ կոչվում է Բիթլիսի լեռներ, ունի ընդամենը մեկ լեռնանցք (խոսքը Կղեսուրքի մասին է), որով երբեք զորք չէին անցկացնում: Բիթլիսի լեռների հետևում պատսպարված և կենտրոնական ճանապարհներից հեռու գտնվող Տիգրանակերտը ոչ մի էական նշանակություն չէր կարող ունենալ հռոմեացի զորավարի համար:

Տակիտոսի վկայության մեջ խիստ կասկած է հարուցում նաև հետևյալը. "...քաղաքի (Տիգրանակերտի - Հ.Հ.) ամրությունների մի մասի մոտով հոսում է բավականին լայն Նիկեփորիոս գետը, իսկ այնտեղ, որտեղ նրա հոսքը չի ապահովում հուսալի պաշտպանություն, փորված են մեծ խանդակներ":[13] Նիկեփորիոսը կամ Ծարկին-Սուն Քաղերթ կամ Շիթիթմա գետի վտակներից է, որը թափվում է Արևմտյան Տիգրիս գետը: Այսպիսով, ըստ Տակիտոսի, քաղաքը գտնվել է Արևելյան Տավրոսի ստորոտում և Նիկեփորիոսի ակունքների մոտ, որը նույնիսկ երբեմն-երբեմն չորանում էր: Այս պարագայում խոսել այդ գետի աղետավտանգ լինելու մասին անիմաստ է: Տակիտոսի ասածից կարելի է եզրակացնել, որ պատմիչը միևնույն տեղում վկայում է երկու իրարից էապես տարբեր գետերի մասին: Նրանցից մեկը բավականին ջրառատ է, իսկ մյուսը՝ սակավաջուր:

Բացի այդ Տակիտոսը չեշտում է, որ Տիգրանակերտը գտնվում էր Մծբինից 37 հազար քայլ հեռավորության վրա: Եթե այդ հեռավորությունը տեղափոխենք դեպի հյուսիս-արևելք, այսինքն՝ Բաղեշի ուղղությամբ, ապա կստանանք աննշան տարբերություն, որն այն ժամանակների համար, երևի, մեծ սխալ չի կարելի համարել:[14] Այստեղ Տակիտոսին մեծապես օգնում և լրացնում է Պլուտարքոսը: Վերջինս Տիգրանակերտի կործեցյալ ճակատամարտի նկարագրության ժամանակ վկայում է,[15] որ քաղաքի մոտ գետը (այսինքն՝ ինչպես ընդունված է մեզանում Նիկեփորիոսը)

''...շրջվում է դեպի արևմուտք *(ընդգծումը իմն է - Հ.Հ.)*, որտեղ և գտնվում է գետանցի ամենահարմար տեղը''։[16] Հետևելով Նիկեփորիոսի կամ Ֆարկին-Սուի ընթացքին՝ տեսնում ենք, որ այն երբեք չի թեքվում դեպի արևմուտք, այլ անընդհատ հոսում է դեպի հարավ-արևելք՝ թափվելով Քաղիրթ (Շիթիթմա) գետի մեջ: Պլուտարքոսի նկարագրած գետի ընթացքը Աղձնիքին հարակից շրջանում հավասարապես կարող է վերաբերվել Տատիկ, Բաղաղեչ և Սալնայ Ջուր գետերին: Այս երեք գետերն էլ գտնվում են Բաղեչի անցքի շրջանում, Հայկական Արևելյան Տավրոսի ծայրակետում և համարյա իրենց ողջ ընթացքում հոսում են հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ընկած ուղղությամբ:

Վկայության մեջ առկա Պլուտարքոսի երկրորդ հակասությունն այն է, որ գոյություն ունի մոտ այն է, որ Տիգրանակերտը Լուկուլլոսի կողմից պաշարված գտնելուց հետո Տիգրանը նահանջել է դեպի Տավրոս:[17] Ընդունված տեղադրության դեպքում հայոց արքան անկարող էր նահանջել դեպի Տավրոս, քանզի քաղաքը գտնվում էր լեռների ստորոտի անմիջական հարևանությամբ: Այս դեպքում Տիգրանն իր փոքրաթիվ ուժերի հետ միասին պետք է ընկներ ծուղակը և շրջափակվեր հռոմեացիների կողմից: Համաձայն Պլուտարքոսի վկայության, Լուկուլլոսը Սևքստիլիոսին ուղարկել է Տիգրանին օգնության եկող արաբների դեմ, իսկ Մուրենան հարձակվել է Տիգրան Բ-ի վրա, երբ վերջինս անցել է ''...նեղ և կիպ լեռնանցքով...''։[18] Ընդունված տեղադրության դեպքում Տիգրանը պետք է մայրաքաղաքից նահանջեր Արզան, իսկ այնտեղից Ջորայ պահակով չտապեր երկրի կենտրոն՝ զորքը կարգի բերելու և հռոմեացիների դեմ պայքարը շարունակելու համար: Այսպիսով, նահանջելով Տիգրանակերտից, հայոց արքան դուրս է եկել բաց տարածք և ստացել ազատ մանևրելու հնարավորություն: Այս պատճառով էլ հռոմեացի զորավարը հրամայել է Տիգրանին կտրել օգնության եկող ուժերից, որպեսզի շրջափակի նրան՝ իր փոքրաթիվ բանակով հանդերձ: Այս ամենից հետո Տիգրանը նահանջել է դեպի Արտաշիսյան Հայաստանի կենտրոնական շրջաններ և իր զորքով վերադարձել Տիգրանակերտ՝ այն Լուկուլլոսից ազատագրելու համար:

Հայկական Արևելյան Տավրոսը, որ ձգվում է Եփրատից մինչև Աղբակ (Մեծ Զաբ) գետը, մեզ համար վիճելի հատվածում (Բիթլիսի լեռների շրջանում) ունի երկու լեռնանցք, Կղերսուքը արևմուտքում և Ջորայ պահակը՝ արևելքում: Նախկին տեղադրությամբ Տիգրանակերտը գտնվել է այս երկու լեռնանցքների համարյա կենտրոնում: Սակայն իր անցանելիությամբ Ջորայ պահակն ավելի հարմար էր զորքերի համար, որը մշտապես օգտագործվել է հարավից Հայաստան ներխուժած թշնամիների կողմից: Այն գործիք է եղել նաև թագավորական իշխանության դեմ պայքարի ելած կենտրոնական ուժերի համար:[19] Ինչ վերաբերում է երկրորդին, այսինքն՝ Կղերսուքին, ապա այն կարծես թե կրկնորդի կամ փոխարինողի դեր է խաղացել կամ օգտագործվել է Փոքր Հայքից և Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան շրջաններից դեպի Տիգրանակերտ և հարավային գոտու կենտրոնական շրջաններ գնալու համար: Կղերսուքի լեռնանցքի օգտակարության գործակիցն այնքան փոքր է եղել, որ համարյա չի արձանագրվել մատենագիրների կողմից: Ամենայն հավանականությամբ, այն օգտագործվել է միայն առևտրական նպատակներով, իսկ զորքերի համար եղել է խիստ անհարմար:

Ակներև է, որ Տիգրանը, զորքը համալրելուց հետո, առաջնային խնդիր պետք է համարեր պաշարված Տիգրանակերտ մայրաքաղաքը Լուկուլլոսի զորքերից ազատագրելը: Հայաստանի կենտրոնից իջնելով Բաղեչ, մինչև Տիգրանակերտ դուրս գալը, Տիգրանը պետք է կտրեր-անցներ նաև Հայկական Արևելյան Տավրոսին ուղղահայաց ձգված Սասնա լեռները: Այն տարածվում է հարավային Հայաստանում՝ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք ուղղությամբ: Վերջինս յուրատեսակ արգելափակոցի դեր է խաղում Ջորայ պահակից-Նիկեփորիոս գնացողի համար: Սասնա լեռներին համարյա զուգահեռ, Բաղեչի հարևանությամբ՝ սկիզբ են առնում Սալնա լեռները:

Վերոհիշյալ երկու լեռնաշղթաների միջև գտնվում է մի հարթ և տափարակ տարածք, որը խլաթի վրայով (այսինքն Վանա լճի հյուսիսային ափով) այս շրջանն անմիջականորեն միացնում է Հայաստանի կենտրոնի հետ: Այստեղ է գտնվում Պլուտարքոսի նկարագրած այն գետը, որը գալարվում է արևելքից դեպի արևմուտք (Սալնայ Ջուրը կամ Ռոն իր վտակներով հանդերձ, Բաղաղեչը և այլն) և որոնք, ի տարբերություն սակավաջուր կամ երբեմն-երբեմն չորացող Բաումանի, բավականին ջրառատ են: Ահա այս տարածքում է, որ պետք է փնտրել Տիգրանակերտ մայրաքաղաքը: Վերջապես, ճշմարտության դեմ չմեղանչելու համար անհրաժեշտ է խոստովանել, որ հիմնելով նոր մայրաքաղաք՝ Տիգրանը առաջին հերթին պետք է մտածեր այն մասին, որ այն կենսականորեն կապված լինի Հայաստանի կենտրոնական շրջանների հետ, չգտնվի մեկուսացված վայրում և ''բարենորոգիչ'' դեր խաղա երկրի համար:

Տիգրանակերտի տեղադրության վերաբերյալ ուշագրավ վկայություններ է հաղորդում նաև Ստրաբոնը (մ.թ.ա. I - մ.թ. I դդ.), որոնք մեծապես խառնում են խաղաթղթերը, քանի որ, ըստ էության, պարունակում են խորը հակասություններ: Ստրաբոնը վկայում է. ''Եփրատը սկիզբ է առնում հյուսիսային Տավրոսում և նախապես Հայաստանի միջով հոսում է դեպի արևմուտք, այնուհետև թեքվում է հարավ անցնելով Տավրոսով՝ Հայաստանի, Կապադովկիայի և Կոմմագենի միջով ...''։[20] Ստրաբոնի վկայության այս հատվածում ոչինչ հակասական չէ: Վերջինս ակնհայտորեն առկա է միայն հետագա չարադրանքում: Աչխարհագրագետ-պատմիչը շարունակում է. ''Բայց, քանի որ վերևում հիշատակված Տավրոսը կրկին շարունակվում է Եփրատի մյուս ափին՝ Կոմմագենի և Միլիտենայի դիմաց, որոնք կազմավորվում են Եփրատով, ապա Մասիս լեռը բարձրանում է հարավում՝ Միջագետքում Միգդոնիայի վրա: Այս շրջանում է գտնվում Մծբինը, այն դեպքում, երբ Տոփքը սփռված է հյուսիսային շրջաններում՝ Մասիսի և Անտիտավրոսի միջև''։[21] Այստեղ Ստրաբոնը չփոթում է երկու Տավրոսները՝ Հայկական Արևելյանը, որ գտնվում է Հայաստանի հարավում և Հայկական Ներքին Տավրոսը, որը ձգվում է Մեծ Հայքի միջնամասում և զուգահեռ է առա-

ջինին: Այս չփոթմունքն ու թյուրիմացությունը չարունակվում է նաև հեղինակի հետագա շարադրանքում, երբ նա նշում է, որ. ''Գորդիենեյի (այսինքն՝ Կորդուքի - Հ.Հ.) դիմաց արևելքում և Մասիս լեռան վերևում բարձրանում է Նպատ լեռը: Այնուհետև գալիս է Աբոս լեռը, որտեղից սկիզբ են առնում Եփրատը և Արաքսը, առաջինը հոսելով արևմուտք, իսկ երկրորդը՝ արևելք...'':[22] Նախ, անհրաժեշտ է նշել, որ Եփրատը և Արաքսը սկիզբ են առնում տարբեր վայրերից: Առաջինի ակունքները գտնվում են Փոքր Հայքում, իսկ երկրորդինը՝ Բյուրակնյան լեռների և Խնուսի դաշտի շրջանում: Այս պատճառով էլ Ստրաբոնի մոտ առաջացել է երկու ազաղակող թյուրիմացություն, երբ նա ոչ մի տարբերություն չի տեսնում Տավրոսների (Արևելյան, Ներքին և Հյուսիսային) և Հայկական Պար լեռնաշղթաների միջև: Ըստ նրա, մեկ Տավրոս և վերջինիս հակադիր՝ Անտիտավրոս: Այս պատճառով էլ Հայոց Միջագետքում՝ Բնաբեղի և Մծբինի միջև գտնվող լեռը, թյուրիմացաբար շփոթվել է Հայկական Պարի Մասիս լեռնագագաթի հետ և կոչվել Մասիոն լերինք:

Այսպիսի խառնաշփոթ է առաջացել նաև Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցում: Ստրաբոնը վկայում է. ''Հաճնելով իր հզորության գագաթնակետին՝ Տիգրանը հիմնեց քաղաք Իբերիայից ոչ հեռու՝ նրա և Եփրատի վրա գտնվող Զևգմայի միջև: Այնուհետև այստեղ հավաքելով տասներկու կործանված քաղաքների բնակչությանը՝ նա այդ քաղաքը անվանեց Տիգրանակերտ'':[23] Զևգմայից-Իբերիա ընկած ճանապարհի վրա են գտնվում Ջորրորդ Հայքը, Բարձր Հայքը, Տայքը և Գուգարքը: Հավանաբար այստեղ էա հիմնվել է մեկ ուրիշ Տիգրանակերտ, որը Ստրաբոնը չփոթում է առաջինի՝ մայրաքաղաք Տիգրանակերտի հետ: Շփոթմունքը բացահայտ է, քանզի նա նշում է, որ այս Տիգրանակերտը դեռ չկառուցված ավերվեց Լուկուլլոսի կողմից, իսկ բնակչությունը ետ դարձվեց դեպի իր հայրենի վայրերը:[24] Իրականությանը մոտ է նրա վկայությունը մեկ այլ Տիգրանակերտի մասին: ''Ոմանք այդ լեռները կոչում են Գորդիենյան: Դրանց մեջ է մտնում և Մասիսը, որ վեր է հառնում Մծբինի և Տիգրանակերտի միջև'':[25] Իսկապես, Գորդիենյան կամ, ավելի ճիշտ, Կորդուքի լեռների չարունակությունն արևմուտքում Տուռ-Աբդինի և Մասիոն լեռներն են: Ինչ վերաբերում է Տիգրանակերտին, ապա այն գտնվել է Կորդվաց լեռներից մի փոքր հյուսիս-արևմուտք, իսկ Մծբինը տեղակայված է եղել Մասիոն կամ Մարդինի լեռների հարավային լանջին: Մծբինից-Տիգրանակերտ գնալու համար անհրաժեշտ էր անցնել Կորդվաց և Տուռ-Աբդինի լեռների միջև գտնվող լեռնանցքը և բարձրանալ ուղիղ հյուսիս:

Տիգրանակերտի տեղադրության վերաբերյալ՝ Կ. Լեհման-Հաուպտի տեսակետի համաձայն, Մծբին-Տիգրանակերտ ճանապարհն ունի կիսաշրջանաձև տեսք, որը մոտ երկու-երեք անգամ գերազանցում է ուղիղ գծով ճանապարհին, չհաշված, որ այն տանում է փակուղի: Բացի այդ, Նիկեփորիոսը Տիգրանակերտին ավելի մոտ է գտնվել, ի տարբերություն Մծբինի նշանավոր Բնաբեղ ամրոցի: Այս պատճառով էլ վերջինս, իբրև նրան հարևան բնակավայր, պատմիչների մոտ երբեք չի արձանագրվել:

Խնդրո առարկա հարցին բյուզանդացի պատմիչներից բոլորից առավել մանրամասն և հանգամանալից է անդրադարձել Պրոկոպիոս Կեսարացին: Վաղ և զարգացած միջնադարյան աղբյուրներում հաղորդվող Նիփրկերտ, Նիփետ, Մարտիրոպոլիս, Մայաֆարկին և այլ ձևերը ուսումնասիրողներն ընդունում են որպես նախկին Տիգրանակերտ: Սակայն նրանցից և ոչ մեկը (Պրոկոպիոս, Թեոփանես Խոստովանող, Մենանդրոս Բյուզանդացի, Հովհաննես Սկիլիցես, Անանուն Եդեսացի և այլն) գեթ մեկ անգամ չի հիշատում, որ վերոհիշյալ քաղաքը նախկին Տիգրանակերտն է: Եթե բոլոր պատմիչների համար դա ինչ-որ տեղ ներելի է, ապա Պրոկոպիոսի վերաբերմամբ հակասական և տարօրինակ երևույթ է: Հարցի էությունն այն է, որ Պրոկոպիոսն, ի տարբերություն մյուսների, պատմության մատուցման իր յուրահատուկ ձևն ունի: Ցանկացած խնդիր քննարկելիս նա նախապես անդրադառնում է հարցի նախապատմությանը կամ հնագույն ժամանակաշրջանին: Սակայն այս կապակցությամբ նա համառորեն լռում է, այն դեպքում, երբ V դարի առաջին կեսի հայ մատենագիրները խոսում են Տիգրանակերտի վերաբերյալ, իսկ Պրոկոպիոսը մոտավորապես մեկ դար անց ոչինչ չգիտե այդ մասին: Ի դեպ, ուշագրավ է, որ Ամմիանոսը ևս, որը IV դարի կեսերին անձամբ ակտիվորեն մասնակցել է Հայ-Հռոմեա-պարսկական պատերազմին, ոչ մի անգամ չի հիշատակում Տիգրանակերտը:

Ըստ Պրոկոպիոս Կեսարացու՝ Մարտիրոպոլիսը գտնվել է Սոփանենե կոչված երկրում, Ամիդ քաղաքից մոտ 300 ասպարեզ հեռավորության վրա: Սա ակնհայտ չփոթմունք է, քանզի Սոփանենեն համապատասխանում է Փավստոս Բուզանդի Շահունյաց Ծոփքին, որը գտնվել է Ջորրորդ Հայքում: Հավանաբար պատմիչը Սոփանենեն չփոթել է Սոփենեի հետ, որը համապատասխանում է Մեծ Ծոփքին: Սոփենեն 387թ. Մեծ Հայքի թագավորության առաջին բաժանման ժամանակ անցել էր Հռոմեական կայսրությանը և դարձել սահմանային նահանգ վերջինիս և Սասանյան Պարսկաստանի միջև: Վերլուծելով Մարտիրոսուպոլիսի վերաբերյալ Պրոկոպիոսի վկայությունները՝ Ն. Ադոնցն իրավացիորեն եզրակացնում է. ''Բանմանը՝ Տիգրիսի կարևոր վտակներից մեկը, պետք է ենթադրել, որ Մարտիրոսուպոլիսի մոտով հոսող հին Նիմփիոսն է: Մարտիրոսուպոլիսը գտնվում էր Ամիդից 240 ստադիոն, իսկ Նիմփիոս գետը՝ 300 ստադիոն հեռավորության վրա, որից երևում է, որ քաղաքը, չնայած հեղինակի արտահայտության, անմիջապես գետի ափին չի եղել, այլ նրանից 60 ստադիոն՝ մոտավորապես 10 վերստ հեռավորության վրա'':[26]

Վերոհիշյալ փաստարկներից զատ, Պրոկոպիոսը նշում է նաև, որ Մարտիրոսուպոլիսը եղել է անպաշտպան: Որքան էլ Տիգրանակերտի պարիսպները քանդված կամ ավերված լինեին, այնուամենայնիվ, գոնե որևէ հատված պահպանված կլիներ: Պատմությանը պարսպի ամբողջապես կործանման մի դեպք է հայտնի: Դա տեղի է ունեցել հին Հունաստանում Պելոպոնեսյան պատերազմից հետո (431-404թթ.), երբ հաղթանակած Սպարտան, իր ռազմական գերիշխանությունը ապահովելու համար, քանդեց Աթենքի երկար պարիսպները:

Մարտիրոսուպոլիսը VI դ. գրավվել է պարսից Կավատ արքայի կողմից, իսկ այնուհետև կրկին անցել բյուզանդացիներին, այսինքն՝ վերականգնվել է 387թ. հաստատված Մծբին-Կարին սահմանագիծը: Միայն VI դ. Հուստինիանոս կայսրը (527-565թթ.) այն պարսպապատել է՝ հաշվի առնելով նրա սահմանային տեղադրությունը:


Այսպիսով, Պրոկոպիոսի հաղորդած մի շարք վկայությունները (գետից 60 ասպարեզ կամ 10 վերստ հեռու լինելը, Մեծ Ծոփքում գտնվելը, պարիսպների բացակայությունը և այլն) խոսում են այն մասին, որ ոչինչ ընդհանուր չէր կարող լինել Մարտիրոսուպոլիսի և Տիգրանակերտ մայրաքաղաքի միջև:

Մինչնաղարյան երկու աղբյուրներում՝ Եփեսոսի Հովհան եպիսկոպոսի "Եկեղեցիական պատմությունում" և Անանուն Եդեսացու "Քաղաքական ժամանակագրությունում" կան հատուկենտ հետաքրքիր տեղեկություններ: Նրանք Մայփերկաթը[27] կամ Նփրկերտը[28] հիշատակում են Սասնո լեռների հարևանությամբ, Խլաթի երկրում, Արգունի շրջակայքում և այլն: Սա խոսում է այն մասին, որ դեռևս մարդկանց հիշողության մեջ պահպանվել էր Բաղեշի շրջակայքում կառուցված Տիգրանակերտի մասին վկայությունը, որը և հետագայում նույնացվել է Մարտիրոսուպոլսի հետ: ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. C.F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt. I, SS. 381-382, Berlin, 1910.
2. Տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Զ, էջ 52-59, Երևան, 1985, նաև նույնի՝ հ. Ա, էջ 461-465, Երևան, 1977, Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 15-21: 3. Տե՛ս Հ. Մանանդյան, հ. Զ, էջ 57-58:
4. Appiani Alexandrini, Historia Romana, Mithr, 67, London, 1961. 5. Հ. Մանանդյան, հ. Ա, էջ 464-465:
6. C.F. Lehmann-Haupt, նշվ.աշխ., էջ 381-382, եւ հաջորդ էջերը:
7. Տե՛ս Քաենոփոն, Անաբասիս, թարգմ. հին հունարենից Ս.Մ. Կրկյաշարյանի, էջ 81-83, 89, 91-93:
8. Տե՛ս Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Գ, ԻԶ, ԻԸ:
9. Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, Դ, ԻԴ, ի լոյս ած Ք.Պ.:
10. Տե՛ս Խորենացի, Բ, ԻԲ, Բ, ԿԱ, Բ, ԿԲ, Գ, ԻԴ: 11. Tacitus, Annales, Cambridge, 1956, XIV, 24, 25:
12. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս. Տ. Երեմյանի, Երևան, 1971, հ. I, էջ 740: 13. Tacitus, XV, 4.
14. Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ "Աշխարհացոյց"-ի աշխատության նույնանուն ներդիր քարտեզը, Երևան, 1963: 15. Տե՛ս А. П. Акопян, Тигранакертская битва в новом освещении, ԼՀԳ, 1983, N9, сс. 65-79. *16. Plutarchi, Vitae parallelae, Lucul, XXVII, New-York, Washington, 1964: 17. Նույն տեղում:*
18. Plut, Lucul, XXV: 19. Տե՛ս, օրինակ, Փավստոս, Դ, ծ: 20. Strabo, Geographica, XI, 14, 2, London, 1960.
21. Նույն տեղում: 22. Նույն տեղում: 23. Նույն տեղում, XI, 14, 15: 24. Նույն տեղում, նաև XII, 2, 9 :
25. Նույն տեղում, XI, 12, 4: 26. Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 16:
27. Տե՛ս օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8, Ասորական աղբյուրներ, Երևան, 1976, Ա, թարգ. Հ. Գ. Մելքոնյանի, էջ 458:
28. Տե՛ս օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 12, Անանուն Եդեսացի, Քաղաքական ժամանակագրություն, Երևան, 1982, թարգ. Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, էջ 132-133, 169-170, 172-173, 201:

Հայկ Ֆեհնրիշ. Վրաց առասպելաբանության բառարան. Վիսբադեն: "Ludwig Reichert Verlag", 1999. - 359 էջ, գերմաներեն



Ներկա աշխատությունը՝ 1986 թ. լույս տեսած Götter & Mythen der Kaukasischen und iranischen Volker գրքի հրատարակությունից ի վեր, ուր հատուկ գլուխ նվիրված էր կովկասյան ժողովուրդների առասպելներին, փաստորեն, առաջին լիակատար ուսումնասիրությունն է, նվիրված վրացիների հոգևոր մշակույթի այս բնագավառին: Ընդ որում, եթե նախորդում վրացական իրակույթները հանդես էին գալիս համակովկասյան ենթատեքստում, ապա այստեղ ի մի է բերված վրացական ժողովրդական հավատալիքների, սրբերի ու սրբավայրերի, դիվաբանության և առասպելների ողջ անվանացանկը՝ մոտ երկուս ու կես հազար բառահոդված, որոնք համակարգված են ըստ լատինական այբուբենի (փակագծում տրվում է վրացերեն տառերով համարժեքը):

Բառահոդվածների ծավալը տատանվում է մի քանի տողից մինչև երկու-երեք էջ. յուրաքանչյուրի վերջում տրված է համապատասխան գրականության մատենագիտությունը:

Նյութը նախորդվում է ընդարձակ նախաբանով, որտեղ համառոտ ներկայացվում են Վրաստանի պատմության ու աշխարհագրության հիմնահարցերը, տրվում է առարկայի ուսումնասիրության պատմությունը:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով այս աշխատությունը, նշելի է միայն, որ վրացական անվանումները տրվում են անհեթեթ լատինական տառադարձությամբ (և ոչ ավանդական գիտական տրանսկրիբցիայով), ինչը վրացական այբուբենին անծանոթ ընթերցողի համար դժվարություն է հարուցում բառաձևերի իրական պատկերը ընկալելիս: Մանավանդ չփականների և կիսաչփականների տառադարձությունը. օրինակ՝ չ=tsch, ջ=dsch, ճ=tschch ևլն (համապատասխան գերմաներենի ավանդության):

Գ. Ա.

Նահջ ուլ-բալաղա


نهج البلاغه

(Արվեստ ճարտասանության)

Ճառ 165

"Նահջ ուլ-բալաղան" մուսուլմանների չորրորդ խալիֆ եւ Մուհամմադ մարգարեի հորեղբորորդի ու փեսա Ալի իբն Աբի Տալիբի (600-661) ճառերի, քարոզների ու ասույթների ժողովածուն է, որը 10-րդ դարի վերջում հավաքել ու գրի է առել շիա բանաստեղծ ու բանասեր աշ-Շարիֆ առ-Ռադին:

Ճառերի ու քարոզների բովանդակությունը բավական բազմազան է: Դրանց մի մասը վերաբերում է կրոնական ու բարոյագիտական խնդիրների, մյուսն իրենից ներկայացնում է քաղաքական ելույթներ: Իր կրոնական ճառերում Ալին փառաբանում է Աստծուն, Ղուրանը: Նա քարոզում է աշխարհի անցողիկությունը, գտնում է, որ անիմաստ է սիրել երկրային վայելքներն ու կյանքի նյութական բարիքները: Պոետիկ ու մարտաշունչ են Ալիի քաղաքական ճառերը: Կան նաեւ նրա դիմումները սեփական զորքին, գրավված տարածքների բնակիչներին:



Որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ շիա բանաստեղծն ինքն է գրել այս ժողովածուն՝ շիական սրբին նաեւ սեփական "գրքով" օժտելու ձգտումով: Սակայն բավարար հիմքեր կան առ այն, որ ճառերի գոնե մի մասն իսկապես պատկանում է Ալիին:

Ստորեւ ներկայացվում է հիշյալ ժողովածուի 165-րդ "Ճառը", որը նվիրված է սիրամարգի արարմանը:

Ինչո՞ւ ենք ընտրել "Գրքի" հատկապես այդ հատվածը: Արեւելքում սիրամարգը համարվել է գեղեցկության եւ վեհության խորհրդանիշ: Նրա կերպարը հանդիպում է սուֆիական շատ աղանդների տերմինաբանության մեջ՝ որպես իմաստնության եւ շուքի արտահայտություն: Ուղղափառ իսլամում սիրամարգը համարվել է դրախտային թռչուն, սակայն՝ մեծամտության ու գոռոզության մարմնավորում: Սիրամարգը մեծ դեր է խաղում եզդիների կրոնական համակարգում՝ համարվելով եզդիական պանթեոնի առաջին դեմքը: Աստված, ըստ եզդիների, տիեզերքն ստեղծեց սիրամարգի՝ Մալաք-թավուսի (սիրամարգհրեշտակի) օգնությամբ: Իսկ եզդիական որոշ լեգենդներում էլ հենց Մալաք-թավուսն է արարել աշխարհը: Սակայն երբեմն նա հանդես է գալիս որպես նախկինում աստծո մերձավոր եւ ապա՝ դրախտից վտարված հրեշտակ: Սիրամարգի՝ որպես պաշտամունքային ակնհայտ լիցք կրող թռչունի, առավել հյութեղ եւ ամբողջական պատկերը տրված է Ալիի, կամ նրան վերագրվող, գրքի հենց 165-րդ ճառում:

Որքան մեզ հայտնի է, սիրամարգին նվիրված հսկայածավալ գրականության մեջ (*մատենագիտությունը տես՝ Գ.Ս. Ասատրյան, Ա.Պ. Փոլադյան. Եզդիների դավանանքը. - ՊԲՀ, N4, 1989, էջ 131-150; K.E. Müller. Kulturhistorische Studien zur Genese pseudo-islamischer Sektengebilde in Vorderasien. Wiesbaden, 1961, pp. 368-373*) շիաների իմամի այս ճառը երբեւէ չի շրջանառվել, չնայած այս կենդանու վերաբերյալ մի քանի կարեւոր դրույթներ առաջին անգամ հենց այստեղ են հիշատակվում (*տես, օրինակ, ստորեւ՝ ծան. N 4*):

"Նահջ ուլ-բալաղան" թարգմանված է պարսկերենի եւ անգլերենի՝

(نهج البلاغه. ترجمه فارسی از:سید جعفر شهیدی. تهران. ۱۳۷۲؛ Imam Ali. ˙Nahjulbalagha: Sermons, Letters and Sayings. Qum, s.a.), որոնք, սակայն, բավական ազատ փոխադրություններ են:

Հիշյալ գլխի հայերեն թարգմանությունը կատարել ենք արաբերեն բնագրից (տես՝

(و من خطبه له عليه السلام يذكر فيها عجيب خلق الطاووس) եւ ձգտել ենք, հնարավորինս, հարազատ մնալ տեքստին, ինչը հայերեն շարադրանքում, բնականաբար, տեղի է տվել ոճային որոշ անհարթությունների: Թարգմանելիս նկատի են առնվել նաեւ պարսկերեն եւ անգլերեն տարբերակների բնագրային մեկնությունները:

Մուշեղ Ասպրյան

Ճառ 165, որտեղ նկարագրվում է սիրամարգի կարմանահրաշ արարումը

Նա (Աստված.- Մ.Ա.) ստեղծեց հրաշալի արարածներին՝ կենդանի ու անկենդան, անշարժ ու շարժուն: Եւ ստեղծեց իր Հմուտ արարչության ու անսահման զորության այնպիսի ապացույցներ, որոնք Իրեն հավատացող ու ապավինող մտքերին (այսինքն՝ մարդկանց. - Մ.Ա.) տարան դեպ Իրեն: Եւ մեր ականջներում հնչում է վկայությունը Նրա եզակիության եւ այն բանի, որ արարել է թռչուններ՝ տարբեր տեսակի, եւ բնակեցրել նրանց երկրի խորշերում, հարթավայրերի անցքերում եւ լեռների գագաթներին: Եվ նրանք ունեն տարբեր տեսակի թեւեր, զանազանվում են տեսքով ու դեկավարվում Աստծո իշխանության սանձով եւ թեւածում ընդարձակ երկնակամարում: Ստեղծեց նրանց անգոյությունից՝ զարմանահրաշ տեսքով, եւ օժտեց մսով պատված հոդերով: Եվ արգելեց նրանցից ոմանց թռչել բարձր, իրենց մեծամարմին լինելու պատճառով, այլ ստիպեց թռչել երկրին մոտիկ: Եվ իր Հրաշալի կարողությամբ ու հոյակապ արարմամբ տարբերակեց նրանց գույները: Եվ նրանց մեջ կային այնպիսիները, որոնք միայն մեկ գույնով են պատված, եւ այլ գույն չի խառնվում դրան: Եվ այնպիսիներն էլ՝ որոնց պարանոցն ունի այլ գույն, քան մարմինը: Նրանցից առավել զարմանալին սիրամարգն է, որին ստեղծեց Հմտագույնս եւ լավագույն կերպով դասավորեց նրա գույները, կապակցեց նրա թեւերի հոդերը եւ օժտեց երկար պոչով: Եվ երբ սիրամարգը մոտենում է էգին, բացում է իր պոչը եւ պարզում գլխավերեւում, կարծես այն լինի Դարինայից[1] [եկող նավի] առագաստ[2], որը նավաստին բռնել է: Նա հպարտանում է իր գույներով եւ զոռոզաբար քայլելով՝ պոչը սեթեւեթանքով չարժում է: Բեղմնավորում է աքաղաղների պես, էգի վրա է նետվում ինչպես ցանկասեր արուները: Եվ այս պատմածիս հիմքում այն է, ինչ տեսել եմ, ի տարբերություն նրանց ասածի, ովքեր խոսում են թռչուլ հիմնավորում ունենալով: Եվ եթե անգամ ճշմարտություն լիներ նրանց ասածը, ով պնդում է, թե սիրամարգը բեղմնավորում է էգին արցունքով, որը, դուրս հոսելով, կանգ է առնում աչքի անկյունում, եւ որը էգը կլլում է ու ձվադրում՝ ոչ արուի բեղմնավորումից, այլ դուրս հոսած արցունքից, այս ամենը ավելի զամանալի չէր լինի, քան ագռավների կերակրումը[3]: Նրա թեւերի ոսկրերը կթվան քեզ արծաթի ճողեր, դրանց վրայի սքանչելի լուսավոր օղակներն ու արեւները՝ մաքուր ոսկի ու քրիզոլիթներ, եւ դու, նմանեցնելով դրանք երկրի վրա աճածին, կասես. "Ամեն գարուն աճող ծաղիկների մի փունջ է սա": Եւ եթե համեմատես դա Հագուստի հետ, ապա նա նման է նկարազարդ շորի կամ եմենյան սքանչելի թաշկինակի: Իսկ եթե համեմատես զարդի հետ, ապա նման է գույնզգույն թանկարժեք քարի՝ արծաթե շրջանակի մեջ առնված:



Ալի իբն Աբի Տալիբ

Նա քայլում է զվարթ ու զոռոզ քայլվածքով, զննելով իր պոչն ու թեւերը եւ ծիծաղում՝ հրճվելով իր հագուստի գեղեցկությամբ ու ապարանջանի գույներով: Իսկ եթե նայում է իր ոտքերին, ճիչ է արձակում՝ նման օգնություն կանչողի ձայնի, որը վկայում է իր տառապանքի մասին, քանի որ իր ոտքերը բարակ են խառնածին աքաղաղների ոտքերի նման, եւ սրունքի ներքեւում երեւում է փոքրիկ մի սեպ[4]: Եվ կատարի վրա ունի կանաչ մազերի մի փունջ: Պարանոցի սկզբնամասը նման է կժի, մինչեւ պարանոցը ընկած հատվածը եմենյան բասմայի[5] գույնի է կամ նման է մետաքսի՝ փայլեցված հայելու վրա գցված, եւ այն, կարծես, ծածկված լինի սեւ կտորով: Բացի առատ երկնագույնից եւ ուժեղ փայլից, նրա գույներին խառնված է նաեւ մուգ կանաչը: Եվ ականջի անցքի մոտով անցնում է մի գիծ՝ ինչպես գրչի ծայրը՝ պարզ, սպիտակ մանուշակի գույնի: Եվ այս սպիտակությունը փայլում է սեւ գույնի վրա: Եվ քիչ են գույները, որանցից չի վերցրել մի մաս ու այն ծածկել փայլով ու լույսով եւ դիպակի պայծառությամբ ու հոյակապությամբ: Եվ նա նման է չաղ տված ծաղիկների, որոնք ոչ զարնան անձրեւն է ցողել եւ ոչ էլ ջերմացրել է արեւի տապը: Ու նա զրկվում է իր փետուրներից եւ մերկանում, եւ ընկնում են փե-

տուրները մեկը մյուսի հետեւից, ու մեկը մյուսի հետեւից աճում, պոկվում են նրա ոսկրերից, ինչպես տերեւները՝ ճյուղերից: Ապա·նորից սկսում են հերթով աճել, մինչեւ որ գալիս են այն տեսքին, ինչպիսին էին թափվելուց առաջ: Գույների դասավորությունը չի խախտվում, եւ ոչ մի գույն չի հայտնվում ոչ իր տեղում: Իսկ եթե ուշադիր զննես նրա թեւսոսկրի վրայի [որեւէ] մի մազը, ապա կտեսնես, որ այն մեկ վարդի պես կարմիր է, մեկ՝ քրիզոլիթի պես կանաչ, մեկ էլ՝ ոսկու պես դեղին: Եվ ինչպե՞ս կարող է ըմբռնել այս ամենը մտքի խորությունը, ընկալել խելքի զորությունը, նկարագրել պատմողների խոսքերը: Նույնիսկ նրա ամենափոքր մասերը միտքն անկարող է ճանաչել, եւ լեզուներն անկարող են նկարագրել: Եվ փառք Նրան, ով մտքի համար անհնար դարձրեց արարածին նկարագրելը եւ այն տեսանելի արեց աչքերին, որոնք այն տեսան ձեւավորված ու կառուցված, կազմավորված ու գունազարդված: Անհասու դարձրեց լեզուների համար՝ նկարագրել այն, դարձնելով անհնար դրա բնութագրումը: Փառք Նրան, ով ոտքեր տվեց մրջյունին ու մոծակին եւ ստեղծեց նրանցից մեծ արարածներին՝ փղին ու կետին: Եվ իր համար որոշեց, որ ոչ մի մարմին, որի մեջ նա հոգի է դրել, իրար չի խառնվի, եւ նրա ժամկետը կլինի մահը, եւ վախճանը՝ ոչնչացումը:

Դրախտի նկարագրությունը. հատված նույն ճառից

Եթե մտովի մի հայացք ձգես դեպ այն, ինչը պատմվում է քեզ Նրա մասին, ապա կատես այս աշխարհում ամեն ստեղծված բան, նրա ցանկությունները, հաճույքներն ու հոյակապ տեսարանները: Եվ կշփոթվես ծառերի խշշոցից, որոնց արմատները ծածկված են մուշկի տակ՝ նրա գետերի ափերին, եւ հյութեղ մարգարիտների խրճերում դրանց ճյուղերի վրա եւ իրենց ծածկող բողբոջների տակից աճող զանազան պտուղներում: Դրանք առանց դժվարության ցած են իջեցվում ու քաղվում. նրա պալատների բակերում բնակիչներին բաժանվում է անարատ մեղր ու վճիտ գինի: Նրանք մարդիկ են, որոնց պատիվը երբեք չի լքել իրենց, մինչեւ որ բնակություն են հաստատել Հանգստի տանը եւ վերջացրել տեղաշարժերն ու ճամփորդությունները: Եվ եթե դու, ո՛վ ունկնդիր, սրտիդ մեջ ցանկություն արթնացնես՝ հասնելու այն հոյակապ տեսարաններին, որոնք հառնում են քո առջեւ, ապա կկսես նեղվել դրանց կարոտից եւ չտապ կերպով կելնես այս տեղից՝ հարեւան դառնալու գարեզմաններում հանգչողներին: Եվ Աստված իր գթառատությամբ մեզ եւ ձեզ ստիպեց սրտով ձգտել դեպի բարեպաշտների բնակատեղին:

■

Ծանոթագրություններ

1. *Դարինա* - Ծովափնյա քաղաք, որտեղից անուշահոտություններ էին արտահանվում:
2. Ըստ պարսկերեն թարգմանչի՝ արաբերեն ﻋﻠﻰ բառն այստեղ օգտագործվում է "նավաստի" իմաստով: Արաբերեն բնագրում, սակայն, սրա վերաբերյալ որեւէ ճշգրտում չկա:
3. Այսինքն՝ արու ագռավը կերակրում է էգին, որից, իբր, վերջինս բեղմնավորվում է:
   Արաբերեն բնագրում այս հավելումը բացակայում է:
4. Համմ.՝ XII-XIII դդ. պարսիկ բանաստեղծ Ֆարիդադդին Աթթարի հետեւյալ տողերը իր "Մանթեղ օթ-թեյր" գրքից.

طاووس را برنگ و نگاری که هست همه تحسین کنند و او خجل از پای زشت خویش

"Սիրամարգին բոլորը գովում են նրա նախշուն (տեսքի) համար
Իսկ նա ամոթահար է իր տգեղ ոտքերի պատճառով":

5. Բուսական ներկ, որով ներկում էին մազերը:
6. Նկատի ունի արմավը (ըստ պարսկերեն թարգմանության ծանոթագրության, էջ 490):

Եփուասարդ արեւելագետի ամբիոն

Շան պաշտամունքը իրանական ժողովուրդների թաղման ծեսերում

(Համառոտ ակնարկ)

Համլիկ Եղոյան

Շունը կարևոր տեղ է ունեցել հնդեվրոպական, այդ թվում և իրանական ժողովուրդների թաղման ծեսի և մահվան հետ կապված հավատալիքների ողջ համալիրում: Իրանական ժողովուրդների թաղման ծեսերի ուսումնասիրությունը մեկ անգամ ևս վեր է հանում այդ ծիսակատարությունների արդի և նախկինում եղած ընդհանրություններն ու տարբերությունները, այդ թվում չան հետ կապված դրվագներում, չնայած, հարկ է նշել, որ մահմեդական տարբերը, ներթափանցելով նաև թաղման ծես՝ առաջ են բերել ծիսակատարությունների առանձին տարրերի ունիֆիկացիա՝ միաժամանակ ըստ հնարավորին մաքրագերծելով դրանք մինչիսլամական սովորույթներից, իհարկե, ինչը չի կարելի ասել զրադաշտականների թաղման ծեսի վերաբերյալ: (Ինչպես հայտնի է, շունը մահմեդականության մեջ ծիսականորեն պիղծ կենդանի է համարվում):

Շան պաշտամունքը ինչպես իրանական, այնպես էլ հնդեվրոպական մյուս ժողովուրդների միջավայրում հազարամյակների պատմություն ունի: Ըստ եղած ուսումնասիրությունների՝ ընդհանուր առմամբ շունը մահվան և անդրշիրիմյան աշխարհի հետ կապված ծեսերում և հավատալիքներում հանդես է գալիս երեք կարգավիճակով՝ մահվան մունետիկի, պահապանի և չար ուժեր վանողի: Որոշ ժողովուրդների թաղման ծեսերում երբեմն չան այս երեք գործառույթները սինկրետիկ ձեւ են ստանում:

Շունն, ընդհանրապես, պոլիվալենտ կենդանի է. լինելով ընդհանուր առմամբ դրական լիցքի կրող, այն բազում մշակույթներում նաեւ չարի ակնհայտ մեդիում է համարվում (ինչպես կատուն, մորենին, եւլն):

Հայտնի փաստ է, որ Բակտրիայում հայտնաբերվել են դեռևս քուշանական ժամանակաշրջանից գերեզմաններ, որոնցում շները թաղված են եղել միայնակ, խմբակային և հանգուցյալի հետ միասին: Դրա ծիսական նշանակությունն ակնհայտ է և կասկած չի հարուցում:

Ալանական ժայռերի վրա պատկերված են շներ, որոնք, ըստ Վ. Կուզնեցովի, կատարում են պահապանի իրենց դերը՝ հսկելով հանգուցյալների անդորրը:

Ըստ Բ. Շլերաութ՝ հնդեվրոպացիները հավատում էին, որ վերջնական հանգստություն չգտած հոգիները չեն ընկնում այնկողմնային աշխարհ, այլ մնում են երկրի վրա՝ չան կերպարանքով և կարող են այս կամ այն կերպ ազդել երկրաբնակների վրա: Երբ շները մոտենում են տանը, նշանակում է այդ ընտանիքում մոտալուտ մահ է սպասվում: Այս պատկերացումն ունեն իռլանդացիները, ուելսցիները, հայերը և այլ ժողովուրդներ:

Ֆայազաբադի տաջիկներն այն հավատալիքն ունեն, որ եթե շունը երեկոյան սկսում է ոռնալ, ապա այդ տանը դժբախտություն է գալու. բոլորը զգուշանում են, իսկ չանը՝ նախատում: Այսինքն՝ չան ոռնոցը տաջիկների մոտ դիտվում է որպես մահվան գույժ. իբր թե շունը նախազգում է իր տիրոջ տան վերահաս դժբախտությունը և խնդրում է աստծուն, որ այն փոխանցվի իրեն՝ չանը: Այս դեպքում տաջիկներն աշխատում են չանը լռեցնել՝ հարվածում են նրա մռութին, ապա՝ տալիս մի ամբողջ քաղցրաբլիթ: Այս դեպքում ակնհայտորեն սինթեզված են չանը վերագրվող երկու գործառույթ՝ նա հանդես է գալիս միաժամանակ և՛ բոթաբերի, և՛ դժբախտությունը կանխարգելողի՝ պահապանի դերում:

Ռիգվեդայում՝ Հուղարկավորության հիմնում հիշատակվում է, որ մեռյալների թագավորության արքա Յամայի քառաչյա (Կ. Գելդները գտնում է, որ չորս աչքերը աչխարհի չորս կողմերը հսկելու համար են) բծավոր երկու շները շրջում են մարդկանց չարքերում, "խլում նրանց կյանքը"[1] և հսկում անդրշիրիմյան աշխարհ տանող ճանապարհը, որով պետք է անցնի հոգին: Սարամեան (այսպես են կոչվում շները՝ saramea- չուն) Ինդրայի՝ որոտի և կայծակի աստծո, չան՝ Սարամայի զարմից էր[2] (sarama-արագ, համմ.՝ sarama-saramea. մարդու հոգին ավանդելու կամ՝ հանկարծահաս մահը կարելի է համեմատել չան վազքի արագության հետ): Նշենք, որ Հադեսին՝ հունական դիցաբանության ստորգետնյա աշխարհի արքային, ուղեկցում էր երեքգլխանի, օձերով ծածկված մի հրեշավոր չուն՝ Կերբերոսը, որը Հադեսի պահապանն էր:

Ինչպես վերն արդեն նշվեց, չան վերաբերյալ պատկերացումները համեմատաբար ավելի լավ են պահպանվել զրադաշտականների մոտ: Դրա մասին հիշատակվում է Ավեստայում՝ Վիդևդատում[3], որտեղ ասվում է, թե՝ զրադաշտականի տունը երկրի վրա ամուր հիմք չի ունենա, եթե նա իր տանը հովվի կամ ընտանի չուն չունենա: Ահուրա Մազդան ասել է. "Եթե չուն կամ մարդ մահանա, դիակը պետք է տանից դուրս հանել և դամբե պատրաստել": Այսինքն՝ չան մահը դիտվել է որպես մարդու մահվանը հավասար իրողություն: Վիդևդատում չները հիշատակվում են որպես այնկողմնային աշխարհում ամենատարբեր չրջանների պահապաններ: Երկու չուն հսկում են Զինվաթի կամուրջը, որը իրանական առասպելաբանության մեջ անդրշիրիմյան և երկրային աշխարհների սահմանագիծն է: Ըստ մեկ այլ տեղեկության՝ երկու չուն ուղեկցում են երկնային կույսին, որը Զինվաթի մոտ դիմավորում է միայն առաքինիներին[4]: Վիդևդատի պահլավական մեկնաբանության մեջ հիշատակվում են երկնային 14 մինոլորտները և երկրային չրջանները հսկող չները:

Բ. Լիտվինսկին իր հոդվածում զրադաշտական հին մի աղբյուրից մեջբերում է[5] մի պատվիրան, որի համաձայն երկրի վրա մարդ պետք է չանը կերակրի և լավ վերաբերվի, քանի որ այն ոչ միայն վախեցնում և հեռացնում է վայրի կենդանիներին, գողերին ու դևերին, այլև գալիս է Զինվաթի մոտ, որպեսզի օգնի իր երբեմնի հովանավորի հոգուն դրախտ ընկնելու:

Ժամանակակից Իրանում ամեն մի զրադաշտականի պարտքն է ամեն օր գոնե մեկ անգամ մի չուն կերակրել, ընդ

որում պետք է նշել, որ կերակրում են ոչ թե սննդի մնացուկներով, այլ կազմակերպում են կերակրման ծիսակատարություն. օրհնված հացի երեք կտոր թրջում են սուրբ ջրի մեջ և դնում մետաղյա ծիսական գավի մեջ, ավելացնում թանձր կերակրի մեջ թաթախված հացի կտորներ, ապա՝ եփած ձու և այլն: Քուրմը կամ ընտանիքի այն անդամը, որը ծիսակատարն է մաքուր է, գավը դնում է չան առաջ (կարող է լինել և՛ ընտանի, և՛ թափառական): Մինչ չունը կվայելի իր ծիսական հյուրասիրությունը, կերակրողը պետք աղոթի: Միայն աղոթքից հետո ընտանիքի անդամներն իրավունք ունեն նստելու ճաշկերույթի: Այս սովորույթը՝ *čom-e šwa-* "ուտելիք չան համար", տարածված է եղել նաև փարսերի մոտ, բայց այլ անվամբ՝ *kutra-no buk* "չան բաժին"[6]: Մ. Բոյսը ենթադրում է, որ այս սովորույթի արմատները անքակտելիորեն կապված են մեռյալների աշխարհի հետ, իսկ "չան հացկերույթի" արարողությունը կատարում են նախապես այնկողմնային աշխարհում նրա դուրը չարժելու նկատառումով՝ հաշվի առնելով չան ունեցած ազդեցությունը մեռյալների և դևերի վրա:

Զրադաշտականների պատկերացումներում չունը, հովանավոր լինելուց բացի, հանդես է գալիս նաև դևեր և չար ուժեր վանողի, ծիսական մաքրությունը պահպանողի կարգավիճակով: Հետևաբար, չունը պարբերաբար ներկա է լինում մաքրագործման ծեսերին՝ *barašnom*: Ինչպես վերն արդեն նշվեց, Զինվաթի մոտ հանգուցյալների հոգիներին դիմավորում է երկու չուն: Այստեղ են հավաքվում բարի և չար հոգիները՝ հանգուցյալներին հափշտակելու նպատակով: Երկնային շները պաշտպանում են վերջիններիս՝ չար հոգիների ձեռքն ընկնելուց, իսկ երկրի վրա՝ ողջ մարդկանց հոգիները՝ չար հոգիների ազդեցությունից:

Զրադաշտական մի հին առասպելում հիշատակվում է *Zarrin-goš* (Դեղին ականջ) չունը, որին ստեղծել էր Հորմոզդը՝ Գայոմարտ նախամարդուն Ահրիմանից պաշտպանելու համար: Շունը հսկում էր Զինվաթի մոտ. այնքան հուժկու ձայնով էր հաչում, որ բոլոր դևերը վախենում էին և առաքինիներին հանգիստ թողնում: Այն հոգիներին, որոնց վերապահված էր խոշտանգվել դժոխքում, բայց իրենց երկրային կյանքում շներին կերակրել և չէին վնասել, Դեղնականջը թույլ չէր տալիս դժոխք ուղարկել:

Վերոհիշյալ առասպելում ակնառու է չան երկու ոլորտի գործառույթ՝ երկրային (Գայոմարտի պաշտպան) և երկնային (Զինվաթի մոտ) պահապանի:

Ժամանակակից զրադաշտականների միջավայրում, երբ որևէ մեկն իր հոգին ավանդում է, նրա ընտանիքի անդամներից մեկն այդ մասին հայտնում է քրմին՝ այսինչ մարդը "ճանապարհ է ընկել": Նա իր հետ ձու է տանում և հանձնում քրմին: Վերջինս այն եփում է օջախի կարմրածածուխների վրա՝ արտասանելով համապատասխան աղոթք, այնուհետև օծված ձուն, որպես կերակուր, տալիս է չանը (Մ. Բոյսը ձուն դիտում է որպես հանգուցյալի հոգի, որին այնկողմնային աշխարհում կպաշտպանի չունը):

Ավելի վաղ շրջանում հանգուցյալի մոտ ճանապարհվող քրմին եւս ուղեկցում էր չունը: Հոգևորականի տեղ հանելուն պես կատարվում էր *sagdīd* (տեսակցություն չան հետ) ծեսը: Հանգուցյալի կրծքին դնում էին հացի երեք կտոր՝ չան ավանդական բաժինը, որից հետո նրան մոտեցնում էին դիակին: Զրադաշտականները հավատում էին, որ այս ծեսի ժամանակ չունը չար ուժերից պաշտպանում է հանգուցյալի հոգին, որը դեռ գտնվում էր երկրի վրա: *Sagdīd*-ի ծեսը կրկնվում է երեք անգամ մինչև հանգուցյալի աճյունը կհասցվեր դախմե:

Պարսկական *sagdīd*-ի ծեսը սկզբունքորեն նույնն է, բայց առանձին մանրամասներով տարբերվում է: Պարսիկներն այս ծիսակատարության ժամանակ նախընտրում են "չորսաչքանի" *čatračašma*-չան, այսինքն՝ մի չուն, որն աչքերի վերին կամ ստորին մասում ունի աչքեր հիշեցնող սև բծեր (Համմ. Ցամայի Սարամեայի հետ):

Մ. Անդրեևը հիշատակում է, որ առայսօր Խուճի տաջիկների թաղման թափորը մինչև գերեզմանատուն ուղեկցում է չունը:[7]

Ցալգարի տաջիկները, ըստ Ա. Բոբրինսկու, "չանը համարում են մաքուր կենդանի. նրան սիրում են, պահում տանը": Հարավային Տաջիկստանի բնակիչները հավատում են, որ ճաշկերույթի ժամանակ սեղանին մոտեցող չանը ով չկերակրի՝ կհիվանդանա: Իր հերթին Բ. Լիտվինսկին նշում է, որ Միջին Ասիայի մյուս ժողովուրդների, ինչպես նաև որոշ տաջիկների մոտ նկատվում է չան ճիշտ հակառակ ընկալումը. նրանք չանը դիտում են պիղծ կենդանի:


Ինչպես վերը նշվեց, հնդեվրոպական ժողովուրդների մոտ չունը ներկայանում է որպես մահվան և անդրշիրիմյան աշխարհի մուննետիկ: Չարքերի վրա չան ունեցած ազդեցությունը քուրդ հեքիմներն օգտագործում են որպես բժշկման միջոց:[8]

Ձեռավալվելով՝ նշենք, որ իրանական ժողովուրդներից չատերի միջավայրում, եթե անգամ թաղման ծեսում ինչ-ինչ պատճառներով չան պաշտամունքը մոռացվել է, ապա մյուս ծեսերում այն առանձին մանրամասներով պահպանվել է: ■

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ригведа. Избранные гимны. пер. Т. Я. Елизаренковой. Похоронный гимн. М. 1972 г.,с. 202, так же 353.
2. Мифы народов мира. 2 ч. Сарамеа. М. 1988 г., с. 409.
3. Б. Литвинский, А. Седов. Культ и ритуал Кушанской Бактрии, сс. 165-166.
4. Moubed Ardeshir Goshasb. Aine kafn o dafne zartoshtian, s.s. 14-16.
5. *Տե՛ս 3:*
6. М. Бойс. Зороастрийцы, верования и обряды. М. 1987 г., сс. 21-22.
7. М. Андреев. Таджики долины Хуфа. Кн 1. Сталинабад, 1953 г., с. 191.
8. Мела Махмуд Баязиди. Нравы и обычаи курдов. М. 1963 г., с. 26.

Հայ ժողովրդական տոներ



Հրանուշ Խառատյան-Առաքելյանի՝ այս աշխատությունը (եր., 2000, - 207 էջ) մի յուրօրինակ նվեր է հայ ժողովրդին, քանզի նվերն այդ, իր իսկ՝ ժողովրդի ստեղծածն է, որն հեղինակը վերադարձնում է նրան:

Մեծապես առիթքնող, անգերագնահատելի են ազգագրագետ Հրանուշ Խառատյան-Առաքելյանի ջանքերը՝ հայ ժողովրդական տոները հենց արարողին վերադարձնելու, դրանք կրկին ժողովրդականացնելու փորձերը: Առավել եւս, որ ըստ հեղինակի, այդ տոները գարեր շարունակ ոչ թե սոսկ ներկայացումների տեսքով են կայացել, թեպետ իրենց մեջ կրել են հանդիսանքի տարրեր, այլ հակառակը՝ իրենց խելահեղ շրջանի մեջ են ներքաշել ժողովրդի բոլոր խավերին՝ նրանց գործնեությամբ այդ տոնական գունագեղ շղթայի գործուն օղակներ, մշակույթի ազգային արժեքների կրողներ:

Այս իմաստով, տոնը բոլոր մանակիցների պարբերական անդրադարձ է մշակութային արժեքներին, որից էլ զրկվել էր մեր ժողովուրդը տասնյակ տարիներ: Սա է, որ ժողովրդական տոնը տարբերում է պաշտոնական այլ արարողակարգերից:

Տոները, որ հայ ժողովուրդը նշել է մինչեւ մեր դարաշրջանի սկիզբը, սերում են նրա ձեւավորման վաղնջական ժամանակներից՝ մարմնավորելով արեւի ու կրակի, ջրի ու հողի, ինչպես նաեւ հեթանոս շրջանի աստվածությունների պաշտամունքը:

Քրիստոնեությունն ըստ իր աշխարհայացքի վերաճեւից հայ ժողովրդի ավանդական տոնացույցը, որն էլ համակարգված կազապարով շարունակեց իր ավելի քան մեկուկես հազարամյա ուղին՝ մեր պապենական տոները հասցնելով մինչեւ 19-20դդ սկիզբը:

Հեղինակն իր առջեւ, առաջին հայացքից բավականին պարզ, սակայն ըստ էության՝ ազգի համար խիստ կարեւոր խնդիր է դրել. այն է՝ վերածանոթացնել ժողովրդին ի՛ր տոներին, ի՛ր ծեսերին, որոնց նա հավատարիմ է եղել մինչեւ իր կյանքում տեղի ունեցած կտրուկ, ավերիչ փոփոխությունները՝ մինչեւ1915-1920թթ. Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում ապրող հայերի բնաջնջման եւ աշխարհատիպուռ լինելու շրջանը: Եւ այսօր արդեն հույժ արդիական է ազգային մշակույթի գիտակցված ընկալումը, որն, անկասկած, ազգային գոյությունը շարունակելու երաշխիքներից մեկն է:

Քննության առնվող գիրքն իրենից ներկայացնում է 16 տոնախմբություններից հյուսված մի ամբողջական զարմանահրաշ տոնացույց:

Նավասարդ, Տրնդեզ

«Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառավօտն նաւասարդի»:

Նավասարդ ամսին (օգոստոսին) հեթանոս հայերը մեծագույն շուքով, զվարճախաղեցողներով, ձիարշավներով եւ խաղերով նշել են Նոր տարին, որին մասնակցում էին անխտիր բոլորը՝ հայոց թագավորից մինչեւ ռամիկը: Դրանք ընդունված էին հատկապես Բագրեւանդ գավառի Բագավան ավանում, որտեղ մի չարք պաշտելի աստվածությունների կողքին մեծագոր աստվածուհու՝ Անահիտին նվիրված տաճարն էր:

Այս չատ սիրված տոնի շուրջ ժամանակին հյուսված բազմաթիվ ավանդազրույցներից են հենց նավասարդին մեր նախահայր Հայկի հաղթանակն ընդդեմ Բելի, Նոյյան տապանի՝ Արարատի գագաթին իջնելը եւ ջրեղեղից մարդկության փրկելը: Այսպիսով, Նավասարդին նշվող Նոր տարվա տոնը պարբերաբար վերահաստատում էր մարդկության նոր պատմության սկիզբը:

Հեղինակը մանրամասն նկարագրում է տոնն իր բազմակողմանի դրսեւորումներով, տոնին մարդկանց հոգեբանորեն նախապատրաստվելու ջանքերը՝ մոռանալ վիրավորանքները, վճարել պարտքերը եւ մաքուր խղճով դիմավորել այն: Տոնական սեղանը խորհրդանշող ուտեստներն էին թարմ ու չոր մրգեղենը, ընդեղենները, թխվածքները. իսկ տոնի ծիսական պլխավոր ուտելիքը «կորկոտը» կամ «քյաշկան», երեւանում եւ Նախիջեւանում՝ «Հարիսան» էին, որոնք այնքան զորավոր էին համարվում, որ անմաքուր խղճով մարդկանց անարժան էին տեսնում այդ ուտելիքները ճաշակելուն:

Հեղինակը չի չրջանցում նաեւ տարվա առաստաւթյան ու հաջողության ապահովությանն ուղղված միջոցառումները. դրան վրա՝ մի կտոր կարմիր շոր, որպեսզի տարին «կարմիր օրերով» անցնի, կժերն անպայման թարմ ջրերով լցնելը, դասարկ ձեռքով տուն չմտնելը, առատաձեռն առատ կերակրելը, դաշտերում գարի ու ցորեն շաղ տալը եւ այլն...

Նավասարդին վերակսվում էին նաեւ ընդհատված հարաբնդեքները:

Հեղինակն անդրադառնում է նաեւ այն խաղերին, որոնք ոչ վաղ անցյալում մեր ժողովրդի տոնական կյանքի անքակտելի մասն էին կազմում՝ կրաձի թոփի, հալի-հալի, կրնգափեսի եւ այլն:

Քրիստոնեությունը նավասարդ-օգոստոս ամսից պաշտոնապես վտարեց այս տոնը, բայց նոր տարուն բնորոշ արարողակարգով ու Նավասարդի տոն անունով այն դարեր շարունակ նշվում էր նոյեմբերի երկրորդ կեսին: Հայ գյուղերում այդ տոնը տոացավ նաեւ Նախրաթոռի տոն անվանումը՝ կապված հայերի անտեսական աշխատանքների հերթական փուլի հետ:

Այսպիսով, հայոց որոշ ազգագավառներում մինչեւ մեր հարյուրամյակի սկիզբը փաստորեն նշվում էր երկու նոր տարի, ազգային Նավասարդը՝ նոյեմբերին եւ քաղաքական-պաշտոնականը՝ հունվարի մեկին:

Նոր տարի

Տարին հունվարի 1-ին սկսելու եւ որպես Նոր տարվա տոն նշելու սովորույթը հայոց մեջ ընդհանրացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Նոր տարվա համահայկական սովորույթների շղթայից առավել վառ ու տպավորիչ է 10-12 տարեկան տղաների խմբերի շրջայցը գյուղերում, որոնք երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ տոնական մթերք պահանջում եւ ավետում հին տարվա ավարտն ու Նոր տարվա գալուստը: Ըստ երգի տեքստի, կարելի է որոշել, թե ինչպիսի մթերքներ ու բարեմաղթանքներ էին ընդունված տարբեր շրջաններում: Գրքում մեծ խնամքով ներկայացված երգերից ծանոթանում ենք, որ Լոռում մաղթում էին «չարի անհետացում, բարու գալուստ». ալյուրի, ցորենի, կրեմի, հաճարի առատությունը մաղթվում էր ամենուր. կիլիկիահայերը հնի ու նորի սահմանագծում սպասելիքների մի ամբողջություն էին ակնկալում՝ եւ՛ խելք, եւ՛ կյանք, եւ՛ մալ:

Հեղինակը մեզ մտովի տեղափոխում է մի այլ՝ գրեթե հեքիաթային աշխարհ, ուր ընթերցողները Հյուսիսային Կովկասում, Նոր Նախիջեւանում, Վանում տեղի ունեցած ամանորյա երբեմնի չքեղ տոնահանդեսների մասնակիցներն են դառնում:

Քանի որ հունվարի 1-ն ընկնում էր հայոց ծննդյան տոնի շաբաթի մեջ եւ պատ օր էր, ուստի ամանորյա կերակուրները պատրաստած էին լինում, հիմնականում,պասին թույլատրելի ուտելիքներից: Հեղինակն ընդգծելով իր չարադրանքը՝ Բալուի ամանորյա ճաշատեսակներից ականատեսի նկարագրությամբ, մեզ է ներկայացնում, հիմնականում, լոբուց, սիսեռից, ոսպից, բրնձից ու ձավարեղենից պատրաստված ուտեստների բաղադրատոմսեր:

Զոր ու թարմ մրգերը, չամիչի, ընդեղենի եւ թխվածքների հետ միասին կազմում էին ամանորյա ընթրիքի հիմնական տեսականին: Նոր տարին սկսվում էր Նոր հացով, իսկ տոնի ծիսական հացը «Տարվա հաց»-ն էր, իր զանազան՝ մարդակերպ ու կենդանակերպ ձեւերով, որն իր մեջ պետք է այդ տարվա խորհրդանիշ-նշանը կրեր:

Հեղինակը բավականին հետաքրքրաշարժ է ներկայացնում թիֆլիսահայերի միջավայրում թխվող հացի երկու՝ «էգ» եւ Զիք» տեսակների խորհուրդը, այն է՝ առաջինը պահվում էր ալյուրի մեջ եւ առատության էր խոստանում, իսկ երկրորդը գյուղ էին հասցնում ջուրը, որ անցնող գետի պես չարիքը չքանա:

«Հացի» խորհուրդին անմիջապես հաջորդում էր եւ իր կարեւորությամբ նրան ամենեւին չէր զիջում զորավոր «Ջրի» խորհրդանիշը: Հատկապես մեծ զորություն էր վերագրվում տոնի կեսգիշերյա ջրի առաջին ուժին: Ջուրն անձնավորելով՝ չնորհավորում էին նրա Ամանորը եւ հաստուկ թխված հացիկներ, ցորեն-գարու հատիկներ գցելով նրա մեջ, ասում՝

«Ամ քեզ գարի

Տուր մեզ բարի»:

Ջրից ու հացից զատ, հայը նորոգում էր նաեւ կրակը: Օջախը տան սրբազան անկյուններից էր, եւ նրան նվիրված սովորույթները օջախի բարոյական ու առարկայական անձեռնմխելիության ապահովման գրավականն էին: Իր մեջ մեծ խորհուրդ էր պարունակում Նոր տարվա գիշերվա եւ հաջորդ օրվա՝ հունվարի 1-ի՝ օջախի կրակն անմար պահելու փափագը:

Գրքում անդրադարձն այս տոնին այնքան համապարփակ է եւ ընդգրկուն, որ ուշադրությունից դուրս չի մնացել ոչ մի ասպարեզ՝ ո՛չ նոր տարվա տոնի անբաժան մասը կազմող գուշակությունները, ո՛չ հաջողություն ապահովող միջոցառումները՝ այդ օրը փոխ տալուց խուսափելը, հատկապես թթխմոր, դրամ չտալն ու ծախս չանելը, ջուրը տան անկյուններում հեղելը, վաղորդայնին տան մեծի կողմից ընտանիքի անդամներին հաց, գինի, մեղր եւ խնճոր բաժանելը:

Բաժինն ավարտվում է Նոր տարվա ավանդական բարեմաղթանքների հիշատակմամբ:

Սուրբ Ծնունդ. Տյառնընդառաջ

Մինչ այս տոնի բուն հանդիսությանն անդրադառնալը, հեղինակը հարկ է համարել մի հայացք նետել նրա պատմությանը՝ 451թ. Քաղկեդոնի ժողովին, որի որոշմանը չենթարկվելով՝ հայոց եկեղեցին շարունակեց հավատարիմ մնալ Քրիստոսի ծնունդն ու մկրտությունը հունվարի 6-ին նշելու ավանդույթին: Այս տոնը ժողովրդին հայտնի է գլխավորապես «Ջրօրհնեք» կամ «փոքր Զատիկ» անունով:

Չնայած այս տոնի հանդիսությունները հիմնականում եկեղեցական ծեսեր են, սակայն նրանց միահյուսված ժողովրդական սովորույթները տոնին հաղորդում են ժողովրդական բնույթ:

Հեղինակի կողմից Ծննդյան տոնի բուն ժողովրդական հանդիսակարգի նկարագրությունը կենտրոնանում է թաթախման երեկոյի ընթրիքի սեղանի չուրջը, որտեղ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի մոտ վառվում էր ժամերգությունից բերված մոմը, իսկ սեղանի գլխավոր զարդը՝ ձկնեղենից պատրաստված խորտիկներն էին, «Մայրամա ճաշ» անունով ապուրը, Ծննդյան հռչակավոր «փախլավան»:

Այս տոնի «չարժիչ ուժը» սպիտակ չափիկ հագած պատանիների խմբերն էին, որոնք շրջայց էին կատարում, «Ավետիս» երգում, իսկ փոխարենը՝ յուղ, ձու, ընկույզ եւ այլ մթերքներ տանում: Բոլոր երգերը ավարտվում են այս տոնի սուրբ բարեմաղթանքով՝ «Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ, մեզի ձեզի մեծ ավետիս»:

Այստ մանրամասնորեն նկարագրվում է Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող արարողությունը՝ հնչյը ջուրը գցելը, որն ուղեկցվում էր հրացանների կրակոցներով, աղավնիներ թուցնելով, որոշ տեղերում՝ նույնիսկ ձիարշավներ ու այլ մրցախաղեր անցկացնելով: Վաղ անցյալում Ծննդյան տոնը հայոց մեջ շատ ավելի մեծ հանդիսություններ է ունեցել:

Տյառնընդառաջ

Թեպետ այս տոնի բացատրությունը կապված է Քրիստոսի կենսագրության հետ, սակայն հեղինակի պրպտող հայացքը թափանցել է դարերի խորքը եւ հանելով տոնի ավանդական ակունքներին՝ պեղել նրա առնչությունը կրակի մաքրագործող զորության հանդեպ երբեմնի գոյություն ունեցած հավատի հետ:

Տյառնընդառաջի հիմնական ծեսը խարույկ վառելն է, իսկ վառվող խարույկը՝ գարնան ավետաբերի խորհրդանիշը: «Տըրնդեզի կրակն իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն եւ ամուսինների օրհնություն»: Խարույկին այդ, նախագուշակն էր ողջ համայնքի ընթացիկ տարվա կյանքի եւ ազատում էր բոլոր չարիքներից, կտրում քառասունքները, բուժում հիվանդությունը, ապահովում օձի ու կարիճի խայթոցներից եւ կայծակի հարվածներից:

Ահա սա է այն հիմնաքարը, որի վրա կառուցվել է ծեսերի մի ամբողջ վերնաշենք եւ որի չուրջ հյուսվել է երգերի մի ամբողջ ընտրանի, որոնք առավելապես տնտեսական կյանքի հաջողությունների հետ ունեցած նրա կապի վկաններն են:

Տյառնընդառաջը այնքան սրբացված էր, որ նրանով նույնիսկ երդվում էին:

Սուրբ Սարգիս

Ինչպես եւ ակնհայտ է տոնի անվանումից, այն նվիրված է տան սիրված սուրբ Սարգսին, որի անվան չուրջ հյուսված ավանդություններով սկսվում եւ նրան հղված աղոթքներով ու երգերով շարունակվում է տոնի նկարագիրը:

Սա գլխավորապես ընտանեկան շրջանակներում նշվող տոն էր, ուղեկցվում էր պասով, որը տարածվում էր ոչ միայն ուտելիքների, այլեւ աշխատանքի որոշ տեսակների եւ մարմնի խնամքի վրա:Սուրբ Սարգսի գիշերվա կրակը պետք է վառվեր մինչեւ լույս: Մինչ այժմ պահպանված է աղի բլիթի հետ կապված ավանդույթը: Այս տոնը չի ուղեկցվել խնջույքներով եւ տոնահանդեսներով:

Բաբեկենդան

Հեղինակը մի առանձնահատուկ ոգեշնչվածությամբ եւ մասնակցին հատուկ իրազեկությամբ է ընթերցողին հրամցնում այս տոնի պերճ գունագեղությունը, որից, ցավոք, մեր օրերում գրեթե ոչինչ չի պահպանվել, չնայած հայ ժողովրդի կողմից այն ընկալվել է որպես ամենաազգային, ինչպես նաեւ ամենաերջանկաբեր տոն: «Հայոց ազգի օրերը» տեւում էր երկու շաբաթ՝ անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսի տոնին եւ ավարտվելով Մեծ պասով: Պարերի, խաղերի, զվարճահանդեսների եւ մասներախաղերի երկու շաբաթ, որի ժամանակ հասարակական հարաբերությունների, ընտանեկան բարքերի մինչ այդ ընդունված նորմերը գլխիվայր էին շրջվում:

Բարեկենդանի երկշաբաթյա տոնական ուտելիքների մեջ նախապատվությունը տրվում էր մսեղենի, կաթնեղենի, յուղի առատությանը: Սակայն պարտադիր էր խաշլը, որով սկսվում եւ ուղեկցվում էր տոնը: Տոնի վերջին օրը հավաքվում էին գերդաստանի գլխավորի տանը՝ վերջին խնջույքի, որը շատ տեղերում ընդում էր բոլոր տարբերությունները:

Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին ուրախ պարերը, որոնք վերջին չաբաթ-կիրակի օրերին դառնում էին համընդհանուր, համապղուղական, համաթաղական: Սակայն նրա գլխավոր զվարճությունը խաղերն ու թատերական ներկայացումներն էին, որոնք իրենցից ժողովրդական բանահյուսության գողտրիկ ու ինքնատիպ նմուշներ էին ներկայացնում:

Բարեկենդանին թեւառնում էր ամենաթողության իրավունքը: Հանդիսությունների ժամանակ «փակ» թեմաներ եւ անձեռնմխելի անձեր չկային: Հոգեւորականները նույնքան, որքան աշխարհիկները, տրվում էին բարեկենդանյան ընդհանուր սրամտությանը: Վանքերում այս օրերը կոչվում էին Աբեղաթողի օրեր եւ ուղեկցվում էին հատուկ ծեսերով:

Բարեկենդանի վերջին օրը խնջույքները, պարերն ու խաղերը խելահեղության էին հասնում:

Ավարտվում է Բարեկենդանը, կյանքը մտնում է ոչ թե առօրեական, այլ չափազանց խստակեցության շրջանը:

Գրքի՝ այս տոնը ներկայացնող բաժինն ավարտվում է նրան հատուկ խաղերի մանրամասն նկարագրությամբ:

Մեծ պասը

Ինքնամաքրման, ինքնազոհաբերման, ապաշխարության, մաքրակենցաղության ու ժուժկալության, պահեցողության յոթշաբաթյա շրջանը՝ տարեկան պասերից ամենաերկարատեւը: Առաջին օրը Հաղթության եւ Համերաշխության օր էր, ընդ որում առարկայական մաքրության սովորույթին ուղեկցում էր Հոգեւոր մաքրությանը: Հեղինակը տալիս է ոչ միայն տոնի սոսկական նկարագիրը, սահմանափակվում նրան բնորոշ ուտեստեղենի թվարկումով, անդրադառնում երգերին ու խաղիկներին, այլեւ կատարում է նրա հոգեբանա-բարոյական արժեքների վերլուծությունը, նշում նրա կարեւորությունն ու դերը մարդու կյանքում: Այն, որ պասը խախտելը ծանր ու լուրջ մեղք էր համարվում, վկայում են նույնիսկ ավանդությունները: Ակլատիզին՝ Պաս պահին ամենուր վերապահվում էր այն հսկողի դեր:

Պասի այս շրջանը խիստ խորհրդանշական է՝ Բարեկենդանի՝ ավանդական կարգի խախտումներին փոխարինելու եկած հասարակական ու ընտանեկան հարաբերությունների դարերով մշակված նորմերին վերադառնալու տեսակետից: Եւ դա էր պատճառը, որ այս խորհրդանշական ու անցումային շրջանում հասարակության սրբավանդ հո-

գետը արժէքները դրսեւորւում էին ըստ ամենայնի խտացված ձեւերով:

Բարեկենդանին անմիջապես հաջորդող պասի այս շրջանը բոլորովին էլ պատահական չէր, այլ ընդհակառակը՝ լիովին հիմնավորված ու պատճառաբանված այնքանով, որ հասարակական խախտված նորմերն արդեն վճռական համակարգման կարիք էին զգում:

Մեծ պասի տոնակատարութիւնն առաջին չաքաթով չէր սահմանափակւում: Բառասունիներն օրերի ուղիղ կեսը, չորեքշաբթին հայտնի էր «Միջինք» անունով եւ ուներ արարողութիւնների իր շղթան: Պասը կիսող «Միջինքը» նաեւ զարնան գալստյան ավետաբերն էր: Ուստի նրան հաջորդում էին բազմաթիվ ծիսական դաշտագնացութիւններ:

Մեծ պասի մարմնական ու հոգեւոր ժուժկալութիւնն անձկագին սպասումներ էր առաջացնում փրկարար Զատկի շուրջ, կարոտներ, որոնք երգերի հիմք էին դառնում:

Ծաղկազարդ

Ծաղկազարդի տոնը՝ մեծ պասի վերջին կիրակին, սկսվում է կեսգիշերին՝ ուռենու ճյուղերն օրհնելու ծեսով, որին վերագրվում էր չարխափան եւ առաստաբեր զորութիւն: Հետաքրքիր է, որ այս տոնին, հենց եկեղեցում, կեսգիշերին, տեղի էին ունենում հանպատրաստից նշանադրութիւններ: Մեծ պասի վերջին չաքաթը հագեցած էր լինում առնականութիւններով, թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական արարողութիւնների պարտադիր կարգով, ապա՝ պասի խստակենցաղութիւնը տեղի էր տալիս տոնական հուզումներին: Օրերից յուրաքանչյուրն ուներ իր անունը եւ ըստ այդմ՝ իր բնորոշ կենսավարութիւնը: Ավագ հինգշաբթին Զատկի ձվերը ներկելու օրն էր, ուրբաթը՝ Քրիստոսի խաչվելու օրը, իսկ չաքաթ օրը՝ «Զատկի չաքաթ, կարմիր արեւ, կանաչ են սար ու ձորեր»:

Զատիկ

Զատիկ անունով հայանի տոնը համապատասխանում է եկեղեցական Սուրբ Հարութեան տոնին: Զատիկը տնօրհնէքի օր է, հաջորդ օրը՝ Զատկի մեանդց:

Վերջանում է Մեծ պասը, եւ սկսվում է մեծ ուտիսի շրջանը: Զատիկին հաջորդող երկու կիրակիները զատկական տոնական հանդիսութիւնների շարունակութիւնն են՝ իրենց հատուկ կանաչ եւ կարմիր անվանումներով եւ հատուկ արարողութիւններով:

Համբարձում, Վահան, կամ Աստուածածնի տոն

Սա քրիստոնեական տոնացույցում Քրիստոսի երկինք համբարձվելու պարբերականացումն է:

Հեղինակը հոգածու մանրամասնումով ներկայացնում է հանդիսութիւնների հերթականութիւնը՝ խստորեն կանոնակարգված ու փուլերի վերածած: Զորեքշաբթի վաղ առավոտյան «Վիճակի» նախապատրաստութիւնն էր: Համբարձման երգերում գերիշխողը յոթ աղբյուրների հիշատակութիւնն է, որաեղից աղջիկները ջուր էին վերցնում:Համբարձման չորեքշաբթի, լույս հինգշաբթի գիշերը մեկը մյուսից խորհրդավոր ու զարմանալի գուշակութիւնների, հրաշալիքների ու հմայութիւնների գիշերվան նվիրված ավանդութիւնները ընթերցողին մի պահ տեղափոխում են Արագի ափ, Վարդհեր վանքի մոտ: Համբարձման գիշերվա խորհուրդն է իր մեջ կրում Էջմիի ու Մենուանի հանդիպման առասպելը, երկնքի ու երկրի որջազուրման, Մհերի փակված այրի դռան բացվելու, լեբերաի՝ կախարդ պառավի չուրջ հյուսված առասպելները, ինչպես նաեւ ընդունված համապատասխան ծեսերն ու երգերը:

Երեկոյան տունդարձի երգն ազդարարում էր տոնի ավարտն ու աշխատանքով հագեցած օրերի սկիզբը: Իսկ այս բաժնի ավարտն ազդարարում են տարբեր ազգագրավառներում տարածում գտած պարերգերի տեքստերն ու համապատասխան նկարները:

Վարդավառ, Յիսնակաց, Վարդեվառ

Ինչպես գրքում ներկայացված յուրաքանչյուր տոնի, այնպես էլ վերջինիս նկարագրութիւնն սկսվում է նրա պատմական ակունքներից եւ, դրանով իսկ, ավելի շոշափելի է դառնում գրքի ճանաչողական արժեքը, իսկ հեղինակի կատարած աշխատանքն, անտարակույս, արժանանում է «ազգաշահ» համարվելու՝ այստեղ միանգամայն տեղին ու ոչ փքուն որակմանը:

Շատ հետազոտողներ այն տեսակետին են, որ այս տոնը հայոց մեջ արմատավորվել է ի հիշատակ Նոյյան Տապանի՝ Արարատի լեռան գագաթին հանգրվանելուն: Ավելի ուշ այս տոնը հայտարարվել է Թարգր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպութեան երեւույթին նվիրված տոն, ինչու եւ այն պաշտոնապես կոչվում է Պայծառակերպութեան կամ Այլակերպութեան տոն: Սա ուխտագնացութիւնների տոն էր, եւ ամենասիրված ուխտատեղը՝ Մշո Ս. Կարապետի վանքը:

Ըստ Բասենի տոնը նկարագրողի՝ «տոներից ոչ մեկն էլ չունի սրա զանգվածային բնոյթն ու գրավչութիւնը»: Թերեւս դա է պատճառը, որ հենց մեր օրերում էլ, Վարդավառից մի քանի օր առաջ, գյուղերում նախատոնական եռուզեռ է սկսվում: Այս տոնի առավել ընդհանրական ու բնորոշ ծեսերն են՝ միմյանց վրա ջուր ցողելու, աղավնիներ թռցնելու, ծաղիկներ նվիրելու, նկեղեցի հատկր տանելու եւ օրհնել տալու սովորույթները, ինչպես նաեւ ուխտագնացութեան, զոհաբերութեան, գիշերային հանգեստների կազմակերպման եւ այլ նմանատիպ միջոցառումները:

Ի դեպ, Վարդավառի «Խաչբուռի»՝ դեղնագույն ծաղկի խաչաձեւ փնջվածքի պատկերը զարդարում է նաեւ գրքի շապիկը:

Փաքր ինչ հուսադրող է, որ հանդիսութիւնների այս ամբողջ շքերթից, թեպետ քիչ, բայց այնուամենայնիվ պահպանվել են որոշ պատառիկներ, որոնց թվում է Վարդավառը հուլիսի 22-ին հաջորդող կիրակի օրը նշելու կայունացած սովորույթը:

Խտրտզհնէք, Վերափոխում Ս. Աստվածածնի

Աշխարհի շատ ժողովուրդների մեջ պահպանված ավանդույթ կա՝ հատուկացած առաջին բերքը զոհաբերել ուխտավայրում, որից հետո միայն, այն կարելի է ճաշակել:

Քրիստոնեութեան ընթացքում ընդհանրացված սովորույթ էր դարձել առաջին խաղողի ողկույզները քահանային օրհնել տալը, ինչն, անշուշտ, շարունակութիւնն էր նախկինում տաճարներին նվիրաբերելու կանոնակարգի: Ամենուրեք մարդիկ օրերով պատրաստվում էին օգոստոսի այս ուխտագնացութեանը, իսկ բուն տոնի օրը վերածում ուրախ, անվերջանալի զվարճահանդեսի, որն էլ իր արտացոլումն է գտել գրքի էջերում լիաբուռն ու անկաշկանդ ուրախութեան ու ցնծութեան դրսեւորումների նկարագրութեամբ: Այս են վկայում նաեւ ուխտի վայրերում տարածում գտած եւ գրքի էջերով եւս մեզ հասած սիրային երգերը:

Սուրբ Խաչ (Սրբոյն, Ուխտ)

Պայծառակերպ տոնը նվիրված է Քրիստոսի խաչելութեան խաչի գերեզարձին: Իրականում, այն աշնան սկզբի եւ տնտեսական տարվա մի փուլից մյուսին անցնելու խորհրդանշական եւ ուրախ տոն էր, որն ավարտվում էր մեռելոցով, երբ տոնական բարիքներից «մաս» էր հանվում հանգուցյալներին: Տոնը լիարժեք լինել չէր կարող առանց ուլի մսի, որն այդ օրվա առանձնահատուկ ու ծիսական անհրաժեշտ ուտելիքն էր համարվում:

Սուրբ Գեւորգ, Սուրբ Հակոբ

Այս տոները բնորոշվում էին ուխտագնացութեամբ եւ հատուկ ծեսերով: Հոկտեմբերի վերջին կիրակին, այգիների բերքը հավաքելուց հետո, նշվում էր Ս. Գեւորգի տոնը, որի ժամանակ կատարվող ուխտագնացութեանը տեւում էր երեք օր: Ճանապարհ ընկնելու շաբաթ երեկոյան տոնը սկսվում էր հարիսա դնելու արարողութեամբ:

Սուրբ Հակոբի տոնը հաջորդում էր Ս. Գեւորգի պասին, եւ տոնի առանցքը աքաղաղների զոհաբերութեանն էր:

Հեղինակն ընթերցողների հիշողութեան մեջ թարմացնելով մեր ժողովրդի տոնացույցն ու տոնական հանդիսութիւնների ընթացքն ու կարգը, անկասկած, ակնկալում է, որ յուրաքանչյուր Հայ՝ ծանոթանալով իր ինքնութեան այս շատ արժեքավոր դրսեւորումներին, կփորձի գտնել դրանք մեր նորօրյա կյանքի պայմաններին ու գեղագիտական ընկալումներին համապատասխանեցնելու կերպն ու բանալին:

Մնում է հուսալ, որ կովկասագետ-ազգագրագետ Հրանուշ Խառատյան-Առաքելյանի այս աշխատութիւնը մեզ ոչ միայն առավել ինքնաճանաչ կդարձնի, այլեւ կմտածեցնի մեր ճշմարիտ ակունքներին՝ արթնացնելով մեր մեջ վերջին շրջանում նիրհած ազգայինը:

Լուսինե Պապոյան



ՖՈՐՈՒՂ ՖԱՐՐՈՒԽԶԱԴԸ՝ ՀԱՅԵՐԵՆ

Վարդուհի Սարոյան

Իրանի ժամանակակից պոեզիան գրեթե անհայտ է հայ ընթերցողին, և այս առումով, կատարված որևէ թարգմանություն ողջունելի է, մանավանդ, երբ խոսքն այնպիսի մեծության մասին է, ինչպիսին Ֆորուղ Ֆարրոխզադն է: Ծնվել է 1934թ., Թեհրանում, զինվորականի ընտանիքում: Ունի հրատարակված չորս ժողովածու՝ առաջինը 1952թ.,,Ասիր,,(Գերի), երկրորդը՝ 1958թ. "Դիվար" (Պատ), այնուհետև,1960թ.,,Օսիան,, (Ընդվզում) և վերջինը՝ 1965 թ. "Թավալոդե դիգյար" (Մի այլ ծնունդ):Մահացել է 1966թ.,ավտովթարի ժամանակ՝ 32 տարեկան հասակում: Հատակ, լակոնիկ, չոր տողեր, իսկ նրանց հետևում՝ մի ամբողջ կյանք...

Ֆորուղ (լույս, փայլ) Ֆարրոխզադ (երջանիկ,բախտավոր): Աստղերն այս կնոջն ուղարկել էին երկիր, որպեսզի նա իր բացառիկ տաղանդի ուժով կարողանար հաղթահարել խավարամոլությունը և երջանկության ու լույսի խորհրդանիշ դառնար մարդկանց հավատաբեկ հոգիներում:Սակայն երկիրը նրա համար ուրիշ ճակատագիր էր նախապատրաստել: Դա մի երկրային խաչելություն էր՝ կյանք լի դժվարությունների, հիասթափություններով, դավաճանություններ ու բաժանման թանձր ու մռայլ գույներով:Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանից տեղափոխվել է արվեստի ուսումնարան՝ նկարչական բաժին: Թերևս այս հանգամանքն էլ նպաստել է նրա ստեղծագործության պատկերային հստակ ու ներդաշնակ համակարգի ձևավորմանը: Գունային աշխարհի հոյակապ զգացողությունը և, ամենակարևորը, առօրեական թվացող իրերի, տեսարանների, իրադարձությունների մեկնաբանման արտասովոր ձևերը ստիպում էին նրան որոնել նոր արտահայտչամիջոցներ:Ֆորուղը օգտագործում էր իրեն հասու բոլոր հնարավորությունները՝ պոեզիան, թատրոնը, կինոն: "Եթե ես բանաստեղծություններ չգրեի, ապա անպայման կխաղայի թատրոնում,իսկ եթե թատրոնն էլ չլիներ, ապա ֆիլմեր կնկարահանեի"[1]: Նա հավատարիմ մնաց ինքնահատուցման այս ձգտմանը և կարողացավ իր կարճատև կյանքի ընթացքում ոչ միայն նկարահանել, խաղալ թատրոնում, այլև գտնել բանաստեղծական ուրույն, սեփական ոճը: 22 տարեկանում կայացավ նրա առաջին մուտքը կինոյի աշխարհ: Նկարահանեց կարճամետրաժ վավերագրական ֆիլմ, որ կոչվում էր "Ցեք աթաչ" (Մի կրակ): Այն արժանացավ Իտալիայում վավերագրական կինոնկարների փառատոնի ոսկե մեդալին: Սրան հաջորդեցին իրանական ամուսնական ծիսակարգի,այնուհետև "Աբ վա գյալմա" (Ջուր և ջերմություն), "Մոլ վա մարյան վա խարա" (Ալիքը,մարջանը և քարը)",Դարյա" (Ծովը) 1962 թ. "Խանե սիահ բուդ" (Սև տունը - բորոտների մասին) և 1964թ.՝ "Խեյթ վա աինե" (Աղյուս և հայելի) վավերագրական ֆիլմերը:Այս կինոնկարները նրան ճանաչում բերեցին կինոյի բնագավառում: Սակայն ճանաչումը չէր նրա նպատակը, այլ այդ գործընթացին մասնակցելու հնարավորությունը, իսկ մրցանակների վերաբերյալ նա այսպես է արտահայտվել."Հնարավոր է, որ ինձ տիկնիկ նվիրեն: Այն ինչ արժեք ունի: Մրցանակը նույնպես տիկնիկ է:"[2] Կինոֆիլմեր նկարահանելու տարիներին իրեն փորձեց նաև թատրոնում:1963թ. նա փայլուն կերպով հանդես եկավ իտալացի գրող Լուիջի Փիրանդելոյի "Վեց գործող անձինք որոնում են հեղինակին" թատերգությունում:

Ֆորուղի մուտքը պոեզիա եղել էր ավելի վաղ, երբ նա դեռատի աղջնակ էր: "Ես 13 կամ 14 տարեկան էի, երբ սկսեցի գրել: Զգիտեմ ՝ դրանք բանաստեղծություններ էին, թե ոչ, բայց հաստատ գիտեմ, որ դա իմ այդ օրերի "ես"-ն էր"[3]: Առաջին անգամ նա տպագրվել էր 18 տարեկանում "Ռոշան ֆեքր" (Լուսավոր միտք) ամսագրում և արժանացել ոչ միայն բարձր գնահատականի, այլև ձեռք էր բերել բազմաթիվ երկրպագուներ: Ժամանակի հայտնի բանաստեղծներից մեկը գրել է. "Այս միօրինակության քողի պատռումը, նոր մտքերի ու գաղափարների բացահայտումը մեզ հույս է ներշնչում, որ մի նոր Հաֆեզ ենք ունենալու": Սակայն փառքի ճանապարհին նրան վիճակված էր զոհաբերել իր անձնական կյանքը՝ հրաժարվել ընտանիքից: Բաժանումից հետո նա այլևս երբեք չէր հանդիպելու իր միակ զավակին՝ Քամիարին,բայց կարոտը սրտում չարունակելու էր ստեղծագործել... Այդ օրերի մասին նա գրել է. "Սա մի քնածին համառություն էր, որ իմ մեջ գոյություն ուներ: Ես այն մարդկանցից չեմ, երբ պլուխը դիպչում է քարին ու ջարդվում ՝ նահանջում են: Ես պետք է ջարդեի քարը՝ իմ էությունը հասկանալու համար, և դա էր պատճառը, որ բաժանվեցի" (Գ. էջ 8): "Գիշերվա սառը փողոցներում" բանաստեղծության մեջ նա նույնպես կանդրադառնա իր ֆնցյալին."Ես չեմ զղջում, II Ես խորհում եմ այս հպատակման,II Այս ցավագար հպատակման մասին:II Ես ճակատագրիս խաչը համբուրել եմ II Իմ գողգոթայի բարձունքներում: (Թ. "Գիշերվա սառը փողոցներում", էջ 48): Այժմ նրա զուգընկերը լռությունն էր՝ բանաստեղծությունը: Մի զուգընկեր, որ բավարարում ու լրացնում էր նրան՝ առանց տանջելու: "Բանաստեղծությունը ինձ համար նման է լուսամուտի: Նստում եմ այնտեղ, նայում եմ, երազում, լալիս, ձուլվում եմ ծառերի պատկերներին և գիտեմ, որ լուսամուտի այն կողմում տարածություն կա և մի հոգի, որ ինձ լսում է"[4]: Ֆորուղի համոզմամբ մարդը նախ պետք է կարողանա իր մտքերի, գաղափարների տեղը գտնել մտահորիզոնի անսահմանության մեջ և նոր այդ ամենից հետո միայն, սկսել գրել: Մարդը հաճախ է ընկերանում մենության, որպեսզի պատասխաններ գտնի իրեն հուզող հարցերին, պաշտպանվի շրջապատից և ազատության պատրանք ունենա: Սակայն ,եթե չատերի համար լռությունն ու մենությունն ինքնամփոփման և շրջապատից փախչելու միջոց էին, ապա Ֆորուղի համար դա վերածնման շրջան էր, որից հետո նա իրեն կրկին հա-

կադրելու էր տիրող բարքերին,մարդկային հոգիների կործանմանը և արժեքների փլուզմանը:1963թ. բանաստեղծուհին ևս մեկ անգամ փորձ արեց ինքնահաստատվելու, ինչպես նաև քննադատներին ապացուցելու,որ գտել է իր յուրօրինակ ոճը: Նա վերջին՝ "Մի այլ ծնունդ" գրքում ճգտում էր տարիների շղարշի հետևից կրկին վերապրել մանկության և երիտասարդության անհոգ տարիները, հասունացած ու կազմավորված մարդու և, հատկապես, կնոջ աչքերով նայել ներկային, արտահայտել դարի մտավորականի խոհերը ժողովրդի ապագայի վերաբերյալ: Այս գրքի անվանումը պատահական չէր: Ըստ նրա՝ արվեստի գործը մի տեսակ գոյատևման պայքար է կյանքի իմաստը հասկանալու և մահվան իմաստը բացատրելու համար: "Երբեմն մտածում եմ. ճիշտ է, որ մահը բնության օրենքներից մեկն է, սակայն դա այն միակ օրենքն է, ուր մարդն իրեն անզոր, նվաստ է զգում: Այն պետք է լինի, նրա դեմ պայքարելը նույնիսկ անիմաստ է" (Թ., էջ 149): Եվ բանաստեղծուհին չարունակում էր ստեղծագործել՝ մեռնել ու վերածնվել իր բանաստեղծությունների յուրաքանչյուր տողի մեջ: Այս պատճառով է, որ նա չէր ընդունում, երբ ծաղրանքով կամ հեգնանքով էին վերաբերվում իր աշխատանքին: ,,Երկար ժամանակ պետք եղավ, որ այդ վայրի օտարականին հնազանդեցնեմ և երկար ժամանակ՝ իմ մեջ տեղավորելու և կենսատևելու նրա հետ: Այնպես , որ բաժանումը անհնար դառնա ,, (Գ., էջ 20): Ծորուղը իր բացառիկ տաղանդի ուժով կարողացել էր տեսնել այն ամենը, ինչը վրիպել էր մյուս բանաստեղծների ուշադրությունից: Սակայն ունենալով ինքնատիպ մոտեցում և պատկերելու ձիրք, այնուամենայնիվ, գրելու պահին նա դժվարությունների էր հանդիպում, որոնցից ամենաէականը նոր բառերի բացակայությունն էր :Այս իրավիճակը օրինաչափ էր, քանի որ լեզվի զարգացման տարբեր փուլերում բառերը փոփոխվում և համապատասխանեցվում են տվյալ ժամանակաշրջանի պահանջներին:Հաճախ այնպես է պատահում ,որ գործածվող բառերը չեն իմաստազրկվում, բայց կորցնում են իրենց արդիական հնչողությունը: Ծորուղի բանաստեղծությունների անկրկնելի և չափազանց տպավորիչ լինելու գրավականներից մեկն էլ հենց այն բառերն են, որոնք մինչև այդ չեն գործածվել բանաստեղծության մեջ: "Ինձ բացարձակապես չի հետաքրքրում այն,որ ոչ մի պարսկալեզու բանաստեղծ դեռ չի օգտագործել "էնֆեյար" (պայթյուն) բառը: Իմ չուրջը առավոտից իրիկուն ինչ-որ մի բան պայթում է , և ես չեմ կարող չօգտագործել այն միայն այն պատճառով, որ բանաստեղծական չէ: Եթե մտահորիզոնը և ընկալումը այսօրվանն են,լեզուն կգտնի իր բառերը և այդ բառերի ներդաշնակությունը" (Թ., էջ 14): Ծորուղ Ֆարրոխզադի նախորդ երեք ժողովածուները կազմված էին տունային ոտանավորներից՝ հստակ հանգավորմամբ ու չափով, սակայն վերջինը՝ "Մի այլ ծնունդը" գրված էր ազատ արուզի հիմունքներով: Այստեղ զետեղված բանաստեղծությունները կանոնիկ հանգավորում չունեին, բայց չափաբերված էին:Ծորուղի համար չափի հասկացողությունը ավելի շատ զգայական էր, բայց պարտադիր, քանի որ այն, ինչից ստեղծվում էր չափը, ինքն էլ թելադրում էր լեզուն, բառերի ընտրությունը և նրանց արտահայտման ձևերը: "Ես ինչպես կառուցում եմ տողերը իմ ուղեղում՝ այնպես էլ թղթին եմ հանձնում, իսկ չափը այն աներևույթ թելն է, որ անցնում է այդ բառերի միջով և պահում նրանց (Թ., էջ148): Առաջին հայացքից Ծորուղ Ֆարրոխզադի բանաստեղծությունները ամբողջացած, ավարտուն չեն: Տողերը չարունակ զատվում են, փախուստ տալիս դեպի անցյալ, մի պահ կանգ առնում ներկայում, թռչում դեպի ապագայի անսահման եզերքները՝ ստեղծելով մի տեսակ խոնություն:Սակայն ավելի խորը ընթերցելիս ի հայտ են գալիս թե՛ բովանդակության, և թե՛ պատկերների անտեսանելի կուռ կառույցի ուրվագծերը: Նա չէր ընդունում այն բանաստեղծությունները, որոնք չունեին նպատակ, ասելիք, ցավ, այլ միայն գեղեցիկ պատկերների միասնություն էին, ինչը ոչ հազվադեպ էր այդ շրջանի պոեզիայում: Ծորուղի բանաստեղծությունները նաև դարի մտավորական կնոջ բողոքի ու մտահոգության արտահայտությունն էին ժամանակի և իրականության վերաբերյալ:,,Ես գալիս եմ անտարբեր մտքերի II Ջայների ու խոսքերի աշխարհից II Եվ այս աշխարհը նման է օձերի բներին II Եվ այս աշխարհը լիքն է,II Այն մարդկանց ոտնաձայներով,II Որոնք միաժամանակ համբուրելով քեզ, II Իրենց մտքում քեզ կախաղան հանելու II Պարանն են հյուսում,,: (Թ., ,,Մի այլ ծնունդ,, , (էջ13): Սակայն նրա բանաստեղծությունների հիմնական թեման սերն էր: ,,...արվեստագետ կնոջ համար ստեղծագործելու պահին պետք է վերանա սեռի հասկացությունը, միայն այդ դեպքում է հնարավոր խուսափել միօրինակությունից և դիմանալ ժամանակի քննությանը,,(Գ.,էջ21): Այն, ինչը Ծորուղն անվանում էր կանացի, իրականում իր անձնական սիրո զգացմունքի, թե՛ հոգևոր, թե՛ մարմնական խորը ապրումների վերարտադրումն էր: ,,Այժմ, երբ հասել ենք բարձունքներին, II Ինձ լողացրու գինու քաղցր ալիքներով:II Ինձ փաթաթիր II Քո համբույրի մետաքսներում, II Ինձ տենչա երկարատև գիշերներին II Ինձ մի՛ լքիր,II Մի՛ անջատիր II Այս աստղերից ինձ երբեք,,: (Թ., ,,Արև է լինում,, (էջ 132) կամ ,,Ես մերկ եմ, մերկ եմ, մերկ եմ II Ինչպես մերկ լուսինը՝ քնքուշ բառերի միջև II Եվ իմ բոլոր վերքերը սիրուց են II Սիրուց, սիրուց, սիրուց,, (նույն տեղում,,Հավատք ընծայենք...,, էջ137): Վերը նշված բանաստեղծություններից հատվածները 1997թ. ԱՄՆ-ի Գլենդել քաղաքում լույս տեսած,,Մի այլ ծնունդ,,ժողովածուից էին, որի թարգմանիչն է Էդուարդ Հախվերդյանը:Գրքի նախաբանի հեղինակն է ժամանակակից հայ տաղանդավոր բանաստեղծներից մեկը՝Խաչիկ Մանուկյանը: Ըստ նրա Ծորուղ Ֆարրոխզադի նման բանաստեղծների ստեղծագործությունների հետ հաղորդվելուց հետո, այլևս անհնար է դառնում ապրել այդ հոգևոր աշխարհի սահմաններից հեռու:,,Դրանք զորավոր, երազային մեծ թռիչքներով հագեցած հոգիներ են, որոնց տեսածի, ապրածի, զգացածի կարոտը բոլորն ունեն,,/Թ., էջ 6/: Սա 50-60-ական թվականների իրանական պոեզիայի ամենաակնառու ներկայացուցիչներից մեկի՝ Ծորուղ Ֆարրոխզադի գրական ժառանգությանը հայ ընթերցողին ծանոթացնելու առաջին փորձն է[5]: Է.Հախվերդյանի այս նախաձեռնությունը իրաիսուսելի է, քանզի նման լայն մտահորիզոնով և ինքնատիպ բանաստեղծուհու ստեղծագործությունների թարգմանությունը բավականին բարդ և առանձնահատուկ խորաթափանցություն պահանջող աշխատանք է: Ակներև է, որ Է. Հախվերդյանը այդ պահանջների զգացողությամբ է մոտեցել գործին, և այդ մոտեցումը հաճախ արգասավոր է եղել: Դրա վկայությունն են ,,Տեսակցություն գի-

չերվա մէջ,, և մի քանի այլ բանաստեղծութիւնների թարգմանութիւնները: Սակայն, այսուհանդերձ, կարելի է ասել, որ այսպիսի հաջողութիւնը միշտ չէ, որ ուղեկցել է թարգմանչին: Այստեղ պատճառը բոլոր թարգմանիչներին խանգարող՝ բնագրին անպայման հավատարիմ մնալու ձգտումն է, երբեմն էլ՝ դրանից անհարկի չեղումները: Այն երբեմն թարգմանչին խանգարել է հնարավոր հոմանիշներից ընտրել բնագրի ոգուն առավել մոտ, բայց բառարանային նշանակութիւնամբ ոչ առաջնային տարբերակները:Այսպիսով, ոչ հազվադեպ իմաստազրկվել է ամբողջ տողը:

Օրինակ՝ کلوچ *(փուլաք) բառը նշանակում է թեփուկ, փայլուն վահանակ և զարդ:*

آن آسمان پر از پولک (Գ., ،۱۳۹ "آن روزها")

Այս տողը բառացի թարգմանված է. ,,Այն երկինքները թեփուկներով լեցուն,, (Թ.,,Այն օրերը,,, էջ 26):

Այստեղ տեղին կլիներ ,,աստղ,, ,,երազ,, կամ ,,փայլ,, բառերի օգտագործումը, որոնք ավելի համահունչ են բովանդակութեանը: Մինչդեռ նույն բանաստեղծութեան մեջ شگیزایی *(բազիգուշ)-ը բառացի նշանակում է ժիր, ուրախ, որը համահունչ է բովանդակութեանը թարգմանված է "քմահաճ". "Այն տանիքները քմահաճ օդապարուկների,,: (Թ. , "Այն օրերը,, ,էջ26)*

آن بامهای بادبادکهای بازیگوش (Գ., ۱۳۹ ,"آن روزها")

Քանի որ ,,օդապարիկները,, խորհրդանշում են մանկութիւն, ապա ,,բազիգուշ,,-ը կարող է լինել անհոգ, բայց ոչ ,,քմահաճ,,:Այս բանաստեղծութեանում Ֆորուղ Ֆարրոխզադը վերհիշում է անցյալը՝ մանկութեան անհոգ օրերը, առաջին զգայութիւնները : Դրա հետևյալ հատվածում چم *(ջեմ) - մարմին) բառը հանգուցյալին է:*

آن روزهای خیرگی در رازهای جسم
آن روزهای آشنایی های محتاطانه با
زیبایی رگهای آبی رنگ (Գ., ۱۴۳ ,"آن روزها")

Թարգմանութիւնը.,,Այն օրերը՝ II Իրերի գաղտնիքներում սևեռվելուII Այն օրերը, II Կապույտ երակների զգեցկութեան հետ՝ II Զգուշավոր ծանոթութեան (Թ.,էջ29): Բառացի թարգմանութիւնը, առանց այլ իմաստների օգնութեան, ամբողջական կղարձներ ասելիքը:Կլիներ այսպես. ,,Այն օրերը, II Մարմնի գաղտնիքներին սևեռվելուII Կապույտ երակների զգեցկութեան հետ:IIՎախվորած ծանոթութեան այն օրերը,,: Ճիշտ նույնպես, ,,Այգու նվաճումը,,բանաստեղծութեան մեջ սխալ է թարգմանված حقیقت *(հաղիղաթ)- ճշմարտութիւն բառը:*

ما حقیقت را در باغچه پیدا کردیم
در نگاه شرم آگین گلی گمنام (Գ., ۲.۱ ,"فتح باغ")

Թարգմ. ,,Մենք իրականութիւնը գտանք պարտեզումII Անհայտ ծաղկի հայացքի մեջ ամոթխած ,,(Գ. ,,Այգու նվաճումը,, ,էջ22): Թարգմանվելով որպես ,,իրականութիւն,,այն անհամատեղելի է դարձել ,,պարտեզ ,, ,,անանուն ծաղիկ,, բառերի հետ, որոնք այստեղ սիրո խորհրդանիշներ են:

Ոչ հազվադեպ, թարգմանիչը նկատի չի առնում բառերի երկակի իմաստը: Որպես օրինակ կարելի է բերել ,,Երկրային պատգամներ,,բանաստեղծութիւնը,որտեղ Ֆորուղ Ֆարրոխզադը պատկերում է մարդկութեան ապագան՝ նախազգուշացնելով, որ եթե մարդը չարունակի անտեսել երկնային պատվիրաններն ու բնութեան օրենքները, ապա իրեն կդատապարտի կործանման:

در دیدگاه آینه ها گویی
حرکات و رنگها و تصاویر
وارونه منعکس میگشت
و بر فراز سر دلقکان پست
و چهره وقیح فواهش
یک هالهٔ مقدس نورانی
مانند چتر مشتعلی میسوخت
"آیه های زمینی" (Գ., ۱۸۰)

Բոլոր չարժումները
Պատկերն ու գույները՝
Ասես հայելիների հայացքի մեջ
Արտացոլվում էին գլխիվար,
Եվ ստոր խեղկատակների
Եվ լրբերի լպիրշ դեմքերին
Բոցավառվում էր սուրբ լուսապսակ:
(Թ. , ,,Երկրային պատգամներ,, ,էջ 65)

Թարգմանութիւնում բացակայում է չեթր (չաթր) բառը, որը արքայական ամպհովանի և անձրևանոց լինելուց բացի նշանակում է նաև իշխանութեան լուսապսակ (Ամիդ, էջ448):Այդ տողով հեղինակի ասելիքն ամբողջանում է.,, Բոլոր չարժումները IIՊատկերն ու գույները՝ IIԱսես հայելիների հայացքի մեջ IIԱրտացոլվում էին գլխիվար, II Եվ ստոր խեղկատակների II Եվ լրբերի լպիրշ դեմքերինII Բոցավառվում էր լուսապսակը սուրբ՝ II Որպես խորհրդանիշ իշխանութեան:

Վրիպումի մի այլ օրինակ կա ,,Երկիր գոհարների,, բանաստեղծութեան մեջ, որտեղ Ֆարրոխզադը նկարագրում է անձնագիր ստանալու պահը և երկրի լիիրավ քաղաքացու առաջին զգացողութիւնները:Հպարտութեան փոխարեն, նա միայն ցավով ու հեգնանքով նշում է,որ իր հայրենիքում հրապարակը մնացել է ոտանավոր թխող ապաշնորհներին:

با اولین نگاه رسمیم از لای پرده // که حقه بازها، همه در هیئت غریب گدایان
ششصد و هفتاد و هشت شاعر را میبینم // در لای خاکروبه به دنبال وزن و قافیه میگردند
"ای مرزپر گوهر" (Ա., ՅԴՅ)

Թարգմանությունը. ,,Մի տեղ, ուր ես IIՎարագույրի արանքիցII իմ պաշտոնական հայացքով II Նկատում եմ II Օտար մուրացկանների կազմումII Վեց հարյուր յոթանասունութ բանաստեղծի,II Որոնք որպես խաբեբաներ,II Աղբակույտի մեջII Որոնում էին հանգ ու վանկ ,,: (Թ. ,,Երկիր գոհարների,, ,էջ24)

Նախ պետք է նշել, որ առաջին և վերջին տողերում հանդիպող ی (լայ) բառերը, բոլորովին տարբեր են իրենց նշանակությամբ: Առաջին ,,լայը,,՝ ی (լա) -չերտ, ծալք) բառից է,իսկ երկրորդ ,,լայը,,՝ նշանակում է տիղմ, մրուր: Սակայն իմաստի առումով ամենակարևորը حیاهقه (հողեբազ),,խաբեբա,, , ,,ձեռնածու,, բառն է (Ամիդ, էջ448): Նկատի առնելով վերը նշվածը, թերևս գերադասելի կլինի թարգմանության այս տարբերակը.,,Մի վայր, ուր արանքից վարագույրիII ես իրավասու հայացքով II Օտարական մուրացկաններին խառնվածII Վեց հարյուր յոթանասունութ բանաստեղծ նկատեցի,II Որոնք ձեռնածուների նմանII Հանգ ու վանկ էին որոնումII Ցեխաշերտում աղբակույտի,,: ,,Արևին կողջունեմ կրկին անգամ,, բանաստեղծությունում խոսքը կորսված, անպատասխան սիրո մասին է,որի հետ հանդիպելուն չի կարող խանգարել անգամ մահը:

میایم میایم میایم
و آستانه پر از عشق میشود
و من در آستانه به آنها که دوست میدارند
و دختری که هنوز در آنجا
در آستانه پر عشق ایستاده
سلام دوباره خواهم داد.
"به آفتاب سلامی دوباره خواهم داد" (Ա., ՀՕՑ)

Կգամ, կգամ, կգամ
Եվ մուտքը կլցվի սիրով
Եվ ես մուտքում, նրանց ովքեր սիրում են,
Եվ այն աղջկան, որ դեռ այնտեղ սիրով լի կանգնած է,
Կողջունեմ կրկին անգամ
(Թ. ,,Արևին կողջունեմ կրկին անգամ,, , էջ 47)

آستانه (ասթանե) բառը ,,մուտք,, իմաստից բացի ունի նաև ,,գերեզման,, ,,,դամբարան,, , ,,պալատ,, նշանակությունները(Ամիդ,28): Եթե երկրորդ տողում ,,ասթանե,, բառը, որպես ,,մուտք,, համապատասխանում է բովանդակությանը, ապա մյուս տողերում ավելի տեղին կլինի,,գերեզման,,: Նա պետք է տեսնի իր սիրեցյալին որտեղ էլ որ նա լինի, անգամ անդրաշխարհում և կրկին վերադառնալով՝ ողջունի այն աղջկան՝ իրեն ու արևին՝ կյանքը:Նույն տրամադրությամբ ստեղծված "Միացում" բանաստեղծության մեջ, նա նկարագրում է իր սիրեցյալին, բայց այս անգամ ընության տարերքային երևույթների միջոցով, որպեսզի դրանով իսկ արտահայտի իր զգացմունքի անչափելիությունը:

دیدم که بر سراسر من موج میزدند
چون هرم سرخگونهٔ آتش
چون انعکاس آب ("وصل"، ՀՁՁ ,Ա.)

"Տեսա որ, II Ինչպես կարմրավուն կրակե մի տապII Ինչպես անդրադարձը ջրի: (Թ. ,,Միացում,, էջ 111) Ակներև է, որ هرم (հորմ)՝տապ բառը, պետք է փոխարինվեր هرم (հարամ)-բուրգ բառով:Կատացվեր ահաճնացող տարերքի պատկերը, որը հարիր է բանաստեղծուհու ասելիքին.I ,,Իսկ իմ գլխավերևումII Տեսա հորձանքն ալիքների II Ինչպես բոսոր կրակե մի բուրգ, II Ինչպես անդրադարձը ջրի":

Ասվածն, անշուշտ, նպատակ չունի նսեմացնել կատարված աշխատանքի նշանակությունը:Է.Հախվերդյանը թարգմանել և հայ ընթերցողին է նվիրել մի գիրք, որի պակասն ու կարիքը վաղուց էր զգացվում մեզանում,քանզի այժմ մատների վրա կարելի է հաշվել պարսից արդի պոեզիայի թարգմանությունները:

Թեև Ֆորուղ Ֆարրոխզադի մահվանից անցել է ավելի քան երեսուն տարի, սակայն նրա բանաստեղծությունները արդիական են և այսօր: Նա կարծես կանխատեսելով դարավերջին տեղի ունեցող արհավիրքները, իր ,,Երկրային պատգամներ,, բանաստեղծությունում գրել էր. Մարգարեները ավերածության առաքելությունըII Իրենց հետ մեր դարը բերին:II Արդյո՞ք այս կրկնվող պալթյունները, II Եվ թունավոր ամպերըII Այն սուրբ պատգամների II Արժագանքը չե՞ն (Թ. "Լուսամուտ", էջ70): Իրականում շատ քչերին էր հայտնի, որ այս տողերի հեղինակը՝ Ֆորուղ Ֆարրոխզադը, կարող էր շաբաթներ շարունակ դուրս չգալ տանից, ժամերով լաց լինել, և կամ իր վերջին գումարը տրամադրել մի բորոտ երեխայի բուժման համար: Նրա կյանքում, կարծես, ամեն ինչը վաղօրոք էր կանխորոշված: Սկզբում բաժանումն իր միակ զավակից, իսկ վերջում՝ երեխաներին փրկելու համար զոհվելը: Ֆորուղը մահացավ 32 տարեկան հասակում, իսկ նրա "Մի այլ ծնունդ" ժողովածուի էջերում տեղ էին գտել ուղիղ 32 բանաստեղծություն:

Պոեզիայի, վարդի, սոխակի երկրում
Մեծ չնորհ է ապրել այն էլ
Երբ քո լինելիության հավաստիքը
Տարիներ հետո է ընդունվում:

1.Այսուհետև այս ժողովածուից ,,Մալմուեե աշարե Ֆորուղ Ֆարրոխզադ,,(Թ. 1377թ., էջ) բերված քաղվածքների էջերը կնշվեն անմիջապես քաղվածքից հետո, (Ա) հավելումով:

2.,,Փարիշադախտ է չեեր,, (Թ.1376թ., էջ 39) ժողովածուից բերված քաղվածքների էջերը կնշվեն անմիջապես քաղվածքից հետո, (Բ) հավելումով:

3.,,Գոզինեե աշարե Ֆորուղ Ֆարրոխզադ,, (Թ. 1372թ.,էջ 7) ժողովածուից քաղվածքների էջերը կնշվեն անմիջապես քաղվածքից հետո, (Գ)հավելումով:

4.,,Մի այլ ծնունդ,, (ԱՄՆ.1997թ., էջ 149) ժողովածուից քաղվածքների էջերը կնշվեն անմիջապես քաղվածքից հետո, (Թ) հավելումով:

Պարսկերեն լեզվով բոլոր քաղվածքները կնշվեն համապատասխան հավելումներով:

5.Վերջերս է. Հախվերդյանը հայ ընթերցողի սեղանին դրեց արդի պարսից պոեզիայի ամենաուրույն դեմքերից մեկի՝ Սոհրաբ Սեփեհրիի ստեղծագործությունների ընտրանին. Սոհրաբ Սեփեհրի, Կանաչ ծավալ, բանաստեղծություններ եւ պոեմներ, ,,Վան Արյան,, , Երեւան, 2000:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Hasan Javadi and Susan Sallee, Another birth, California, 1981

سعید قانعی، مجموعهٔ اشعار فروغ فرخزاد، تهران، ۱۳۷۷.

گزینهٔ اشعار فروغ فرخزاد، تهران، ۱۳۷۲.

پریشادخت شعر زندگی و شعر فروغ فرخزاد، تهران، ۱۳۷۶.

محمد جعفر یاحقی، چون سبوی تشنه ادبیات معاصر فارسی، تهران، ۱۳۷۶.

حسن عمید، فرهنگ فارسی، تهران، ۱۳۷۳.

فروغ فرخزاد، گزینهٔ شعرها و یک گفتگو، اهوان، ۱۳۷۵.

***Armen V. Aivazian**. The Armenian Rebellion of the 1720s and the Treat of Genocidal Reprisal, Yerevan, 1997, 87p.*

***Արմեն Վ. Այվազյան.** 1720-ական թթ. Հայոց ապստամբությունը եւ ցեղասպանական ճնշամիջոցների ենթարկվելու վտանգը, Երեւան, 1997, 87 էջ:*

Պատմական անցյալի փորձի ու դասերի համակողմանի ընկալումն ու թերացումներից խուսանավումը միշտ էլ հանդիսացել է գոյատևման համար պայքարող յուրաքանչյուր ազգի գաղափարական և հոգեբանական կռվանի ստեղծման լավագույն հենքը և ապագային ու ապաքաղաքական արկածախնդիրներին հակազդման և պատնեշման լավագույն միջոցն ու հակափաստարկը: Այս առումով գիտապատմական և արդիական հնչեղություն ունի պատմական գիտությունների թեկնածու Արմեն Այվազյանի «1720-ական թթ. Հայոց ապստամբությունը և ցեղասպանական ճնշամիջոցների ենթարկվելու վտանգը» վերնագրով 1997թ. Երևանում, անգլերեն լեզվով լույս տեսած աշխատությունը: Հեղինակի ուսումնասիրության հենքը 1720-ական թթ.ն են, երբ հայ ազգային-ազատագրական շրջանները՝ խրախուսված Անդրկովկասում Ռուսական կայսրության վարած գործուն արտաքին քաղաքականությունից, թուրք-պարսկական լծից ազատագրվելու հույսը կապել էին օրեցօր հզորացող հավատախոհ այս տերության հետ: Սյունիքում և Արցախում 1720-ականներին ծավալված աննախընթաց ազատագրական շարժումները փաստորեն Իսրայել Օրու ծրագրի գործնական իրականացման արտահայտությունն էին՝ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրումը: Այդ նպատակի համար նպաստավոր էին ինչպես 1722 թ. Իրանում սկսված ներքին խռովությունները, հատկապես աֆղանների ապստամբությունը, որի հետևանքով գրավվեց Սպահանը, և վերացվեց Սեֆյանների պետությունը, այնպես էլ Պետրոս Մեծի կասպիական արշավանքը և հայ-վրացական զինակցային դաշինքը: Պատմական աղբյուրները Ղարաբաղի և Կապանի մելիքությունների զինված ուժերը հաշվում էին 30 000-60 000, որոնց ռազմա-նյութական ապահովումը կատարվում էր գրեթե ամբողջապես ներքին միջոցների հաշվին:

1722թ. Վրաստանից Սյունիք ժամանած Դավիթ Բեկի գլխավորությամբ տեղի հայկական ուժերը հաղթական մարտեր մղեցին ինչպես պարսկական, այնպես էլ չրջակա մահմեդական իշխանությունների դեմ: 1722-1724թթ. ընթացքում ողջ Սյունիքն արդեն ազատագրվել էր օտարի լծից: Իրադրությունը սկսեց փոխվել 1724 թվականից: Զգտելով ամրապնդվել Կասպիականի ափերին, բայց միաժամանակ խուսափելով Թուրքիայի դեմ պատերազմից՝ Ռուսաստանը 1724թ. հունիսին Կ.Պոլսում Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր, որով Կասպիականի առափնյա չերտը (Դարբանդից մինչև Մազանդարան) ճանաչվում էր ռուսական, իսկ Անդրկովկասի մնացած չրջանները՝ թուրքական տիրապետություն: Այդ պայմանագիրը ծանր հարված հասցրեց Արցախում և Սյունիքում հայերի ծավալած ազատագրական շարժմանը: Դա, հարկավ, կանխամտածված դիտավորություն չէր: Ոչ միայն այդ պահին, այլև չուրջ մեկ հարյուրամյակ, ստեղծված միջազգային անբարենպաստ հանգամանքների հետևանքով Ռուսաստանը չէր կարողանում լիովին իրականացնել դեպի հարավ առաջխաղացման իր ձգտումները, հետևաբար և անկատար էին մնում հայերի ակնկալությունները:

1725թ. գրեթե ողջ Անդրկովկասը գրաված օսմանյան զորքերին հաջողությամբ դիմադրում էին միայն հայկական այս երկու չրջանների զորամիավորումները, դիմադրություն, որն ընդմիջումներով տևեց ընդհուպ մինչև 1735թ.:

Իր աշխատության մեջ Արմեն Այվազյանը, հենվելով ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրների վրա, 1723-1727 թթ. ընթացքում թշնամու կրած կորուստների վերաբերյալ տվյալներ մեջբերելով՝ ցույց է տալիս, թե որքան հաջող է եղել թուրքական զորքերի դեմ հայերի հերոսական ինքնապաշտպանությունը (60 000 սպանված, ըստ որում 20 000-ը միայն Երևանի գրավման ժամանակ, 1727 թ.՝ 13 000 Հալիճորի ճակատամարտում, Ղարաբաղում 10 000-11 000՝ 1725-1727 թթ. ընթացքում) (Ա. Ա., էջ 20): Ռազմա-հոգեբանական այս հարվածն էլ, հեղինակի կարծիքով,

տակավին 18-րդ դարի 20-ական և 30-ական թվականներին պայմանավորեց հայ տարրը ցեղասպանական ճնշամիջոցների ենթարկելու նախնական ծրագրերի ուրվագծումը:

Ընդունելով, որ ցեղասպանության ժամանակաշրջանն ընդգրկում է 1870-1923թթ., հեղինակը միաժամանակ արտահայտում է այն համոզմունքը, որ ցեղասպանության համատարած իրականացման և դրա գաղափարական չարժիչի՝ պանթուրքիզմի լիցքերը առկա էին Օսմանյան պետության ավելի վաղ ձեւավորված բյուրոկրատական, վարչական և ռազմական ավանդույթներում, որոնք հատկապես դրսեւորվում էին նվաճված ազգերի կառավարման եւ նրանց ապստամբությունների ճնշման մեթոդների մեջ: Ահա այս մոտեցումն է, որը հեղինակը դրել է հայոց ցեղասպանության ուսումնասիրության իր մեկնակետի հիմքում՝ այն դիտարկելով 1720-ական թթ. հայոց ազգային վերածննդի չարժումների պատմության հետ հարաբերության համատեքստում: Իր այս համարձակ տեսակետը հեղինակը հիմնավորում է փաստա-վավերագրական համոզիչ նյութերով, նյութեր, որոնք նախորդ ուսումնասիրողների համար հենք չեն ծառայել: Ահա այդ նյութերից մի քանիսը:

1723թ. ռուսական կասպիական արշավախմբի հայկական հեծելազումարտակի հրամանատար Սարգիս Դիլսենեցն արքեպիսկոպոս Մինաս Տիգրանյանին գրում է.«Ասվում է, որ մեր հավաքագրած հայ զինվորականությունը բաղկացած է 60 000 մարդուց՝ երեք զորաբանակներով՝ տեղակայված երեք վայրերում....Ձերդ պայծառափայլությունը պետք է մտածի և հոգ տանի նրանց մասին. բոլոր զղջաբները և օսմանյան թուրքերը հետապնդում են նրանց արյունը և նրանց պատճառով (իմա - հայկական ապստամբությունների), հայերն սոսկալի տառապում են.... ասում են, որ բոլոր հայերին պետք է կոտորեն » (էջ 24): Ազգազբնաջնջման վերահաս սպառնալիքի գիտակցությամբ տոգորված նաև Եսայի Հասան Ջալալեանի, Ավան Յուզբաշու և Ղարաբաղի ութ այլ հրամանատարների նամակը 1723թ. նոյեմբերի 1-ի Պետրոս Մեծին.«...Այժմ, եթե մեկ կամ երկու ամսվա ընթացքում ոչ մի հրամանատար կամ զորք Ձերդ հեղինակությամբ չժամանի (մեզ օգնության), Ձերդ պայծառափայլությունը կարող է վստահ լինել, որ Քրիստոսի խաչի թշնամիները կբնաջնջեն մեզ որպես ազգ .... և, դուք պատասխանատու կլինեք Աստծո առջև մեր արյան համար» (էջ 25):

Ուշագրավն այն է, որ 1725թ. թուրքական բանակների կրած մի շարք պարտություններից հետո, հայերի համընդհանուր բնաջնջում իրականացնելու որոշումն արդեն քննարկվում էր Թուրքիայի Ահմեդ 3-րդ սուլթանի պալատում: Դա հաստատվում է 1725թ. Կ.Պոլսից Մխիթար Սեբաստացուն Յեղիա Վարդապետ Մարտիրոսյանի հղած գրագրության մեջ.«Թագավորը (իմա - սուլթան Ահմեդ 3-րդը), բացառապես անհանգստացած լինելով հայերով, Պարսկաստանի իրադարձությունների հետ կապված, մի չարք անգամներ կարգադրել է հայերի բնաջնջումը» (էջ 28): Բանն այն է, որ սուլթանական կառավարության լիիրավ անդամ հանդիսացող մուֆթին, որը ենթօրինում էր իրավական ուժ ունեցող հրամանների (ֆաթվայի) արձակման իրավունքը, այդ պահին մերժեց բնաջնջման իրավա-համապատասխան փաստաթղթային տեսքի բերելու որոշման ընդունումը: Սակայն նույն կրոնական առաջնորդը (Աբդուլլահը) 1726թ. սուլթանի պալատում կայացած քննարկման ժամանակ, այն հարցին, թե՝ ինչպե՞ս պետք է վարվել հայ քրիստոնյաների հետ, պատասխանեց.«Ինչ վերաբերում է անհավատներին՝ կանայք և երեխաները պետք է ստրկացվեն, նրանց ունեցվածքը պետք է հանձնվի նվաճողներին: Նրանց կանայք ու երեխաները չպետք է հարկադրվեն ընդունել մահմեդականություն, բայց թույլատրելի է կենակցել կանանց հետ, անգամ եթե նրանք չեն ցանկանում մահմեդական դառնալ» (էջ 34): Չնայած մուֆթին իր խոսքում չմեկնաբանեց տղամարդկանց ճակատագիրը, բայց գործնականում զրքերին տրված հրամաններում պատվիրվում էր կոտորել, բնաջնջել բոլորին, առաջին հերթին՝ տղամարդկանց: Այս ամենի հետևանքն այն եղավ, որ 1720-ական թթ. Ղարաբաղում առկա 100 000 հայ ընտանիքներից, 1797թ. մնացել էին ընդամենը 11 000-ը:

Հեղինակը հայ ազգաբնակչության հանդեպ ցեղասպանական ճնշամիջոցների գործադրման պատճառները տեսնում է երեք հիմնագործոնների մեջ՝ 1. աշխարհագրական-ռազմավարական, 2. հանրակարգային և 3. ռազմաբարոյական: Հեղինակի կարծիքով հայերի համընդհանուր բնաջնջման ծրագրերի մշակումը սկսեց քննարկվել աշխարհա-ռազմավարական նպատակահարմարության տեսանկյունից, քանզի Արեւելյան Հայաստանը (հետագայում նաև Արևմտյանը) օսմանյան իշխանությունների կողմից սկսեց դիտվել որպես Ռուսաստանի հնարավոր դաշնակից: Ի լրումն դրա, հայկական սղնախները զբաղեցնելով ռազմավարական կարևոր դիրքեր, ցանկացած պահի կարող էին կտրել կապը թուրքերի և նրանց սունէն հավատակիցների՝ կովկասյան մահմեդականների միջև: Դա հաստատվում է Ղարաբաղում հայերի գերեվարած Սալլահ փաշայի՝ հարցաքննման ժամանակ տված ցուցմունքներով. «...մեր թագավորը հրամայել է մեզ, որ հայերը չպետք է գոնվեն մեր միջև, և այս երկրամասերը պետք է ապաբնակեցվեն, որպեսզի ազատեն մեր անցուդարձին» (էջ 39-40):

Արմեն Այվազյանը հայերին ցեղասպանական ճնշամիջոցների ենթարկելու հաջորդ հիմնապատճառ է համարում հանրակարգային տարբերությունները, այն է՝ հայոց սղնախները համառորեն արհամարհում էին չարիաթի սկզբունքային պահանջը՝ ոչ մահմեդականների հնազանդությունը մահմեդականներին:

1720-ական թթ. ապստամբ հայ բնակչությունը ենթարկվեց համընդհանուր բնաջնջման: Մարտնչող մահմեդականության և թուրքական ռազմավարության այս վաղեմի գործոնն իր լայն դրսեւորությունը ստացավ Արլ. Հայաստանում (ներառյալ Սյունիքն ու Ղարաբաղը): Ի հաստատումն դրա, բավական է միայն մեջ բերել Սյունյաց հայ հրամանատարների՝ 1726թ. մարտի 24-ի ռուսական կառավարությանն ուղղած նամակը. «Թուրքերն եկան հոծ զորքով... գերեցին բազում քաղաքներ, վանքեր, կուսանոցներ ու գյուղեր և անգթորեն կոտորեցին քրիստոնյաներին: Այնքան անիրավ գտնվեցին, որ անգամ, մեկ կամ երկու տարեկան, վեց ամսական աղջիկ երեխաներին խլեցին իրենց մայրերի ձեռքից և մորթեցին նրանց՝ մայրերի աչքերի առջև, իսկ մայրերին տարան գերության, և թալանեցին, և իրենց ձիերը կանգնեցնելով մեր եկեղեցիներում դրանք վերածեցին ախոռների, փչրեցին մեր խաչքարերը և պղծեցին իրերը, լկեցին կույսերին եկեղեցիների մեջ և այնքան չփացան, որ չպետք է պատմենք այդ, քանզի քրիստոնյաներին վայել չէ նման կարգի բաներ լսելը» (էջ 42):

Տարօրինակ չէ, որ այս վայրագությունները գրեթե անփոփոխ հետագայում կրկնվեցին հայոց 1894-96 թթ. և 1915-1923թթ. ցեղասպանության ողջ ընթացքում: Պատմական այդ փորձն ավելի կատարելագործված կերպով գործադրվեցին գրեթե երկու դար անց՝ Օսմանյան կայսրությունը և Արեւմտյան Հայաստանը ամբողջապես մաքրելով անհնազանդ տարրից: Նույն մոտեցումներն ու մեթոդները կիրառվեցին նաեւ ղարաբաղյան վերջին հակամարտության ընթացքում՝ Ադրբեջանի քաղաքների և հայկական Ղարաբաղի հայ ազգաբնակչությունից ազատվելու նկրտումներն իրականացնելիս:

Ա. Այվազյանի «1720-ական թթ. հայոց ապստամբությունը և ցեղասպանական ճնշամիջոցների ենթարկվելու վտանգը» պատմա-քաղաքագիտական աշխատությունը շարադրված է հարուստ փաստագրական նյութի և խորը վերլուծությունների համադրությամբ: Պատմական անցյալի այսպիսի խոր վերլուծությունը կարեւորելի է նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության արդի աշխարհաքաղաքական խնդիրներին պատմահայաց մոտեցումներ եւ լուծումներ մշակելու առումով: Գիտնականն իր այս մենագրության մեջ նոր լույս է սփռում հայ ազգային-ազատագրական չարժումների, հայոց ցեղասպանության և նրա իրականացման նախապատմության վրա՝ գիտական շրջանառության մեջ դնելով նոր փաստարկներ և եզրահանգումներ:

Տիգրան Սարուխանյան

ایران نامه

مؤسس و سردبیر – پروفسور دکتر گارنیک آساطوریان

فهرست مندرجات

(شماره ۳۵، سال هفتم)

- فهرست مندرجات جلد سوم و چهارم سالنامه بین المللی مرکز ایرانشناسی در قفقاز "Iran & Caucasus" – ص. ۱
- دکتر لئون شیرینیان. *نخجوان: اهمیت سیاسی و استراتژیکی آن* – ۲
- ویکتوریا آراکلوا. *وقایعیت: تاریخ، اصول و برنامه های سیاسی آن* – ۷
- دکتر یعقوب چاکریان. *سیاست ضد ارمنی ترکیه بمثابه فاکتور غیر ثبات در ماوراء قفقاز* – ۱۴
- دکتر آرمناك مانوکیان. *دانشمندان ارمنی در دوره تضیقات استالینی* – ۱۷
- پروفسور دکتر روبن آواکیان و دکتر آلکساندر صفریان. *مدارکی از پرونده سیاسی استاد گریگور چوباریان (از آرشیو سازمان امنیت جمهوریه ارمنستان)* – ۲۴
- خبرهایی از مرکز ایرانشناسی در قفقاز – ۳۷
- استاد سیمون هاخومیان – ۷۰ – ص. ۳۹
- آکادمیسین هرانت آوتیسیان. *نامه های اسقف نرسیس ملك-تانگیان به دولت جمهوری ارمنستان (سال ۱۹۱۹)* – ۴۰
- سورن باغداساریان. *اسلام و نوگرایی در ترکیه* – ۵۵
- گیورگ استپانیان. *سقوط باکو و مهاجرت ارامنه به ایران از ماه سپتامبر ۱۹۱۸ تا ماه مارس ۱۹۱۹* – ۵۸
- به یاد دوست از دست رفته: واهاگن قوکاسیان – ۶۵
- پروفسور دکتر گارنیك آساطوریان. *واژه های مشترك در ارمنی و زبان آسی* – ۶۶
- دکتر بهرام مارتیروسیان. *یك مدرك مهم* – ۶۷
- کامو آلکسانیان. *داده های جغرافیایی در سیاحت نامه رافی* – ۶۸
- دکتر پتروس هوانیسیان و گیورگ یازچیان. *ترجمه عربی "تاریخ ارمنستان" موسی خورنی* – ۷۰
- سلسله قاجار – ۷۲
- پروفسور هایرابت مارکاریان – ۵۰ (فهرست آثار) – ۸۳
- لوسینه ساهاکیان. *اماکن و دموگرافی استان اِسپِر بر اساس تحریردفترهای عثمانی* – ۸۶
- سورن ساغومیان. *تاریخ هجری کلیسای مرکزی آنی* – ۱۰۱
- سونا تونیکیان. *معراج حضرت محمّد* – ۱۰۴
- پروفسور میکاییل اسپیریان. *از تاریخ شرکت ارامنه ایران در بازی های المپیك* – ۱۰۸
- آرمناك مانوکیان. *هنرمندان ارمنی در دوره تضیقات استالینی* – ۱۱۰
- پروفسور دکتر ورنر زوندرمان. *پیرامون نام و تاریخ بازی شطرنج (ترجمه از آلمانی – واهه بویاجیان)* – ۱۱۶
- دکتر یعقوب هاروتیونیان. *درباره جای شهر تاریخی تیگراناکِرد* – ۱۱۸
- نهج البلاغه: خطبه شماره ۱۶۵: وَ مِنْ خُطْبَةٍ لَهُ عَلَيْهِ السَّلامُ يَذْكُرُ فِيهَا عَجِيبَ خِلْقَةِ الطَّاوُسِ *(ترجمه از عربی با حواشی و مقدمه از موشیغ آساطوریان)* – ۱۲۳
- هاسمیك یغویان. *نقش سگ در رسوم کفن و دفن اقوام ایرانی* – ۱۲۶
- واردوهی سارویان. *فروغ فرخزاد به زبان ارمنی* – ۱۳۱
- نقد کُتُب - ص.ص. ۳۸، ۵۴، ۵۷، ۶۳، ۶۷، ۶۹، ۸۵، ۱۰۰، ۱۰۳، ۱۱۷، ۱۲۲، ۱۲۸، ۱۳۵

ایران نامه

مجله پژوهشی خاورشناسان جمهوری ارمنستان

Иран - намэ
Том 35, 2000

Содержание

- Iran & Caucasus - III-IV *"Содержание"* 1
- Левон Ширинян (канд. филос. наук). *Нахиджеван (Политологический анализ)* 2
- Виктория Аракелова. *Ваххабизм (Краткий обзор)* 7
- Акоп Чакрян (канд. ист. наук). *Антиармянская политика Турции как фактор дестабилизации в Закавказье* 14
- Арменак Манукян (канд. ист. наук). *Ученые Армении и сталинские репрессии* 17
- Рубен Авакян (доктор правоведения), Александр Сафарян (канд. ист. наук). *Документы из "дел" репрессированного Григора Чубаряна* 24
- *Вести из КЦИ* 37
- *Юбилей*: Семену Ахумяну - 70 39
- Грант Аветисян (академик НАН). *Письма архиепископа И. Мелик-Тангяна к правительству Республики Армения (1919 г.)* 40
- Сурен Багдасарян. *Ислам и модернизация (На примере Турции)* 55
- Геворг Степанян (канд. ист. наук). *Падение Баку и переселение армян в Персию (1918 сентябрь-1919 март)* 58
- *Памяти Ваагна Гукасяна* 65
- Гарник Асатрян (докт. фил. наук). *Armeno-Ossetica* 66
- Ваграм Мартиросян. *Примечательный документ* 67
- Камо Алексанян. *Географические сведения в путевых записях Раффи "Два месяца в краях Агванк и Сюник"* 68
- Петрос Оганнисян (канд.ист.наук), Геворг Язечян. *Арабский перевод "Истории Армении" Movсеса Хоренаци* 70
- Каджары *(Компиляция Вардана Арутюняна)* 72
- Айрапету Маркаряну - 50 *(Библиография)* 83
- Лусине Саакян. *Поселения и демография уезда Спер в османских тахрир-дефтерах 16 в.* 86
- Сурен Сагумян. *Датировка возведения патриаршей церкви Ани* 101
- Сона Тоникян. *Ночное путешествие Мухаммада* 104
- Микаэл Испирян (проф.) *Участие иранских армян в Олимпийских играх* 108
- Арменак Манукян (канд. ист. наук). *Работники искусства Армении - жертвы репрессий 30-х гг.* 110
- Вернер Зундерман (проф., Берлин). *Название шахмат и история этой игры (перевод с немецкого)* 116
- Акоп Арутюнян (канд. ист. наук). *К вопросу о локализации города Тигранакерт* 118
- *Нахдж ул-балага. Глава 165: "О сотворении павлина"* 123
- Асмик Егоян. *Культ собаки в похоронных обрядах иранских народов* 126
- Вардуи Сароян. *Форуг Фаррохзад на армянском* 131
- ***Заметки о новых книгах*** *38, 54, 57, 63, 67, 69, 85, 100, 103, 117, 122, 128, 135*

Iran - Nameh
Vol. 35, 2000

Contents

- Iran & Caucasus - III-IV, vol. III-IV: Contents 1
- Levon Shirinian. *Nakhidjevan: A Politological Survey* 2
- Victoria Arakelova. *Wahhabism (A short Essay)* 7
- Dr. Hakob Chakerian. *Anti-Armenian Policy of Turkey as a destabilizing factor in the Transcaucasian Region* 14
- Dr. Armenak Manoukian. *Scientists of Armenia and the Stalinist Persecutions* 17
- Prof. Dr. Ruben Avagian, Dr. Alexander Safarian. *The "Case" of Prof. Grigor Chubarian (From the History of Stalinist Persecutions in Armenia)* 24
- *News from the Caucasian Centre for Iranian Studies* 37
- *Prof. Semyon Hakhumian - 70* 39
- Academician Hrant Avetisian. *The unpublished letters of Archimandrit N.Melik-Tangian to the Government of the Armenian Republic (1919)* 40
- Suren Baghdasarian. *Islam and the Modernization in Turkey* 55
- Dr. Gevorg Stepanian. *The Fall of Baku and replecement of the Armenians to Persia (September, 1918-March, 1919)* 58
- *Obituary:* Vahagn Ghukasian 65
- Prof. Dr. Garnik Asatrian. *Armeno-Ossetica* 66
- Dr. Vahram Martirosian. *An interesting Document* 67
- Kamo Alexanian. *Geograplic Data in the Travel-notes of Raffi "Two months in Alwank and Syunik"* 68
- Dr. Petros Hovhannisian, Gevorg Yazechian. *The Arab Translation of M. Khorenatsi's "History of Armenia"* 70
- The Qajars *(Compilation by Vardan Haroutyunian)* 72
- *Prof. Hayrapet Margarian - 50 (Bibliography)* 83
- Lusine Sahakian. *Dwelling places and Demography of the Sper region in the Osmanic Tahrir-Defters (XVI century)* 86
- Suren Saghumian. *Dating of the Cathedral Church in Ani* 101
- Sona Tonikian. *The Mi'raj of Prophet Muhammad* 104
- Prof. Michael Ispirian. *Participation of the Iranian Armenians in the Olympic games* 108
- Dr. Armenak Manoukian. *The Art workers of Armenia during the Stalinist Repressions in the 30-s* 110
- Prof. Dr. Werner Sundermann *(Berlin). Eine Bemerkung zum Namen des Schachspiels, seiner Herkunft und Geschichte (Arm. translation)* 116
- Dr. Hakob Harutyunian. *On the Localization of Tigranakert* 118
- *Nahj ul-balagha. Chapter 165: "The Creation of Peacock".* 123
- Hasmik Yeghoyan. *Dog in the Funeral Customs of the Iranian peoples* 126
- Varduhi Saroyan. *Foroukh Farrokhzad in Armenian* 131
- *Reviews & Book notes* *38, 54, 57, 63, 67, 69, 85, 100, 103, 117, 122, 128, 135*

Խմբագրություններ, արտադպություններ եւ բարգմանություններ անելիս, յղումը «Իրան-Նամէի» վրայ պարտադիր է:
Yerevan-10, Khorenatsi Str. 26, Armenia
Caucasian Centre for Iranian Studies
Tel/fax: (3742) 56 72 07

Official Distibutor of "Iran - Nameh"
In Iran: HOOR Institute
(The Armenian Research Center),
Tehran
Tel.: 67 62 53

Գրանցման թիվ՝ 246
դասիչ՝ 77750
4 տպ. մամուլ
Հիմնադիր՝
"Վէրածնունդ" Համաժողովրդական խորհուրդ